ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԵԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ 2

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երաշխավորված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից

ԵՐԵՎԱՆ

2023

ՀՏԴ 373.

ԳՄԴ 81.

Մ 239

Մ 239 **Սարգսյան Վ. և ուրիշներ**

Մայրենի-2. Մեթոդական ձեռնարկ / Նկարիչ՝ Խ. Հակոբյան.–

Երևան, 2023 թ. – 716 էջ:

***Ձեռնարկը բաղկացած է երեք մասից***

**Առաջին մասում** ներկայացվում է. ա. Դասագրքի կառուցվածքը, բ. Թեմատիկ պլանավորում, գ. Մեթոդական ցանց, դ. Հանրակրթական կարողությունների արտացոլումը ՄԱՅՐԵՆԻ – 2 դասագրքում, ե. Տարբեր հնարավորություններ և կարիքներ ունեցող երեխաների կրթության կազմակերպման արտացոլումը դասագրքում, զ. Վերջնարդյունքներ, է. գնահատման տեսակներ,ը. Տարբեր տեսակի դասերի օրինակելի պլաններ, թ. Տարբեր տեսակի հումորային նյութերը դասագրքում, ժ. Դասագրքի չափածո դասանյութերի մասին, Ժա. Ուսումնաօժանդակ նյութեր, ժբ. 46 տեսահոլովակ և 9 էլեկտրոնային խաղ պարունակող կայք:

**Երկրորդ մասում** ներկայացվում են դասագրքի բոլոր 45 դասերի օրինակելի մեթոդական մանրակրկիտ մշակումները: Ինչպես նաև ԳՐԱԴԱՐԱԿ խորագրով ներկայացվում է տվյալ դասին վերաբերող ուսունաօժանդակ որևէ նյութ (ընդամենը 92 նյութ):

**Երրորդ մասում** ներկայացված են 46 տեսահոլովակ և 9 էլեկտրոնային խաղ պարունակող կայք, դասագրքում առկա առաջադրանքներին լրացնող լեզվական առաջադրանքներ, ինչպես նաև գրական և ոչ գրական ստեղծագործություններ, տեսանյութեր, ձայնագրություններ, հետաքրքրաշարժ առաջադրանքներ, ուսումնական խաղեր: Այս նյութերը դասակարգված են ըստ թեմաների և դասանյութերի:

**ԳՄԴ 81…..**

**ISBN 978-9939-….**

**© Վաչագան Ա. Սարգսյան և ուրիշներ, 2023**

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Մայրենի» ուսումնական առարկայի նպատակները, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները սահմանված են հանրակրթության պետական չափորոշչով:

«Մայրենի» ուսումնական առարկայի հիմնական նպատակը բանավոր և գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է: Բանավոր և գրավոր խոսքով հաղորդակցվելու կարողության զարգացումը և՛ սովորողի, և՛ դասավանդողի հիմնական նպատակադրումն է:

Մայրենիի ուսումնառությունը ուղղված է սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը: Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, դրանց համակողմանի վերլուծությունը քննադատական և պատկերավոր մտածողության զարգացման նպատակ ունեն:

Տեքստերի վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական ուսումնասիրությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենիի հանդեպ, սովորեցնում են հարգել սեփական մշակույթն ու արժեքները:

Երկրորդ դասարանում մայրենիի ուսուցման հիմնական **նպատակներն են.**

1. հաղորդակցական և համագործակցային կարողությունների ամրակայում,
2. ինքնակազմակերպման հմտությունների և կամային որակների ձևավորում,
3. բառապաշարի հարստացում, բանավոր և գրավոր խոսքի զարգացում,
4. կարդալու և գրելու կարողությունների զարգացում,
5. հոգեկան գործընթացների զարգացում,
6. աշխարհաճանաչողական գիտելիքների ընդլայնում:

Երկրորդ դասարանում, ըստ մայրենիի ուսուցման **վերջնարդյունքների,** սովորողը կկարողանա.

✓ մտքերն արտահայտել պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային, ընդհանրացնել ասելիքը,

✓ լսել հրահանգները, իրեն ուղղված խոսքը և համապատասխան արձագանք տալ, լսել և հասկանալ ստացած տեղեկությունը,

✓ ձևակերպել հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանել տրված հարցերին,

✓ ունկնդրել գրական և ոչ գրական տեքստեր, պատասխանել հիմնական գաղափարի վերաբերյալ հարցերին, վերարտադրել դրանք,

✓ արտահայտիչ արտասանել մանկական բանաստեղծություններ, պատմել պատմություններ, հեքիաթներ՝ ներկայացնելով հիմնական գաղափարը,

✓ հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցել արձակ և չափածո գրական տեքստեր, բացատրել որոշ բառերի իմաստը համատեքստում,

✓ ընթերցել տեքստեր՝ տեղեկություն ձեռք բերելու և ժամանցի համար, խոսել ընթերցածի բովանդակության մասին,

✓ վերլուծել ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ,

✓ ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը արտահայտել խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, համապատասխան վերաբերմունք դրսևորել ուրիշների հույզերի նկատմամբ,

✓ խոսքի մեջ առանձնացնել հոմանիշ և հականիշ բառերը,

✓ խոսքում տարբերել գործողություն, առարկա, առարկայի որակական և քանակական հատկանիշ ցույց տվող բառերը,

✓ համագործակցել ընկերների հետ՝ ստանձնելով որոշակի պատասխանատվություն, դրսևորելով համբերատար և բարեհամբույր վերաբերմունք,

✓ սիրել ինքն իրեն, իր ընտանիքը, հարգել ընկերներին, ուսուցիչներին, սիրել ընթերցանությունը,

✓ հոգատարություն ցուցաբերել սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:

Ժամանակակից աշխարհում այսօր առաջնահերթ է դառնում համերաշխության և համագործակցության մանկավարժության վրա հիմնված կրթության կազմակերպումը, կրթություն, որը հնարավորություն է տալիս սովորողներին և ուսուցիչներին **վերափոխելու աշխարհը**՝ միասին աշխատելով փոխվստահության մթնոլորտում: Այն ենթադրում է մասնակցային, համագործակցային, խնդիրները վեր հանող, միջառարկայական, միջսերնդային և միջմշակութային ուսումնառություն, ուսումնառություն՝ հիմնված իրական կյանքի խնդիրների և դրանց ուսումնասիրության վրա:

Վերահիմաստավորելով մեր համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության. ՅՈՒՆԵՍԿՕ, էջ 80:

**«Մայրենի-2» ուսումնամեթոդական փաթեթի** հիմքում դրված են մի շարք առանցքային գաղափարներ՝ թելադրված մեր երկրի կրթական քաղաքականությամբ և տեսլականով, մանկավարժության, ուսուցման, տարիքային և մանկավարժական հոգեբանության հիմնարար մոտեցումներով, ժամանակակից աշխարհում առկա առաջնահերթություններով և մարտահրավերներով, 21-րդ դարի սովորողներին, մասնագետներին ներկայացվող պահանջներով:

Այդ գաղափարներն ու առաջնահերթություններն իրենց արտացոլումն են գտել ՀՀ Հանրակրթության նոր չափորոշչում: Այն սահմանում է միջնակարգ կրթության կարողունակությունները և ձևակերպում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները յուրաքանչյուր կրթական աստիճանի համար:

(https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788):

«Մայրենի-2» ուսումնամեթոդական փաթեթը ստեղծելիս մենք առաջնորդվել ենք **կարողունակությունների վրա հիմնված կրթության կազմակերպման և իրականացման գաղափարով և պահանջներով:**

Կարողունակությունների վրա հիմնված ուսուցման հիմնական նպատակը ամբողջական մարդու ձևավորումն է, որը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համադրումով կկարողանա հասկանալ և գնահատել տարբեր իրավիճակներ, լուծել խնդիրներ, դրսևորել քաղաքացիական դիրքորոշում և վերաբերմունք:

Կարողունակությունների վրա հիմնվող դասավանդման սկզբունքներն են.

1. Ուսումնական գործընթացում ձևավորել ապահով, աջակցող և զարգացնող միջավայր,
2. Ուսուցումը կառուցել առանցքային և մնայուն գաղափարների վրա,
3. Ապահովել առանցքային և մնայուն գաղափարների շարունակական և պարուրաձև ուսուցումը կրթության բոլոր աստիճաններում,
4. Ցանկացած նյութի ուսուցումը մշտապես իրականացնել մեծ պատկերի համատեքստում: Կապակցել նյութը առանցքային գաղափարների հետ,
5. Առանցքային գաղափարները ուսուցանել օրինակներով և դրանք առավելագույնս կապակցել սովորողի կենսափորձի հետ,
6. Ուսուցումն իրականացնել աստիճանակառուցման սկզբունքով՝ սովորողին հասցնելով ինքնուրույն ուսումնառության և նյութի տիրապետման աստիճանի,
7. Աշակերտներին ընձեռել սովորածը կիրառելու բավարար ժամանակ և հնարավորություններ,
8. Ձևավորող գնահատման միջոցով ապահովել աջակցություն՝ սխալը շտկելու և առաջընթաց ունենալու համար,
9. Դասավանդումը պլանավորելիս և իրականացնելիս դրսևորել դատողունակություն և ստեղծագործականություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դասարանի և դասի եզակիության հանգամանքը,
10. Օգտագործել սովորողների՝ միմյանց սովորեցնելու հնարավորությունը՝ ձևավորելով սովորողների համայնք,
11. Դասավանդման գործընթացում ներառել հետազոտական տարրեր՝ հասկանալու համար, թե ինչ է տեղի ունենում աշակերտների հետ ուսումնառության արդյունքում, ինչն է հաջողվում, ինչն է ձախողվում, ինչը կարելի է վերանայել ապագայում:

[Heghine Khachatryan, Serob Khachatryan, Naira Movsisyan - ELEMENTS OF CRITICAL THINKING IN THE SCHOOL STANDARDS OF "CHESS" SUBJECT International Journal Scientia Paedagogica Experimentalis (SPE), 2021, LVIII, 1, 105-118, ISBN 0582-2351 spe@lotuswebtec.com]

Ինչպես նշեցինք, մանկավարժական գործընթացը հաղորդակցում է, երկխոսություն, ինտերակցիա: Այս համատեքստում Մայրենիի ուսումնական նյութերը և մասնավորաբար դասագիրքը «կենդանի» են, խոսուն, դասագիրքը «երկխոսում» է սովորողի հետ: Ստեղծվել է ինքնաբավ դասագիրք, որը հնարավորություն է ընձեռում սովորողին ինքնուրույն հաղորդակցվելու գրքին առանց կողմնակի միջամտությունների՝ ժամանակակից կյանքում այդքան կարևոր ինքնուրույնությունն ու ինքնակազմակերպվածությունը խթանելու համար:

Դասագիրքն ապահովում է նաև մասնակցային և ներառական կրթություն բոլոր սովորողների, կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար: Այս խնդրի լուծման նպատակով առաջնորդվել ենք ՈՒՉՀ հիմնական սկզբունքներով.

1. նյութի ներկայացման բազմազանություն,
2. գիտելիքի արտահայտման բազմազանություն,
3. ներգրավման ձևերի բազմազանություն:

Այս հարցին մանրամասն անդրադարձել ենք «Կարողունակությունների արտացոլումը «Մայրենի-2» դասագրքում» գլխում:

ՍՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է ԵՐԵՔ ՄԱՍԻՑ

**Առաջին մասում** ներկայացվում է.

**ա. Դասագրքի կառուցվածքը**

Այս բաժնում մանրամասն ներկայացվում են դասագրքի 9 մշտական խորագրերը, ներառված ցանկերը, վեց թեմատիկ խմբում ընդգրկված տեքստերի մանրամասն վերլուծությունները:

**բ. Թեմատիկ պլանավորում**

Թեմատիկ պլանավորումը ներառում է մայրենիի առարկայական ծրագրով նախատեսված թեմաները, այդ թեմաներում ընդգրկված դասանյութերի վերնագրերը, դրանց հատկացված ժամաքանակը, դասագրքի համապատասխան էջը:

**գ. Մեթոդական ցանց**

Այս բաժնում ներկայացված են յուրաքանչյուր թեմայի ծրագրային և ուսումնական նպատակները, յուրաքանչյուր դասնյութի ակնկալվող վերջնարդյունքները, խաչվող հասկացությունները, միջառարկայական կապերը, կարողունակությունները:

**դ. Հանրակրթական կարողությունների արտացոլումը ՄԱՅՐԵՆԻ – 2 դասագրքում**

Այս բաժնում մանրամասն ներկայացվում են (համապատասխան վերլուծություններով և էջերի նշումով), թե որ տեքստերի, որ մշտական խորագրերի, որ առաջադրանքների, որ հարցերի, որ նկարաշարերի, որ տեսահոլովակների, որ էլեկտրոնային խաղերի միջոցով են ապահովվում տվյալ կարողունակության ձևավորումն ու զարգացումը:

**ե. Տարբեր հնարավորություններ և կարիքներ ունեցող երեխաների կրթության կազմակերպման արտացոլումը դասագրքում**

Դասագրքի մեթոդական մշակումների, առաջադրանքների բազմազանությամբ հաշվի են առնվում է սովորողների անհատական կարիքները, պահանջները և ուսումնառության ոճերը:

Այս բաժնում մանրամասն ներկայացված են տարաբնույթ առաջադրանքներ և խորագրեր, որոնց շուրջ ուսուցիչը կարող է աշխատանքներ կազմակերպել կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների համար:

**զ. Վերջնարդյունքներ**

Այս բաժնում մանրամասն ներկայացվում են (համապատասխան վերլուծություններով և էջերի նշումով), թե որ տեքստերի, որ մշտական խորագրերի, որ առաջադրանքների, որ հարցերի, որ նկարաշարերի, որ տեսահոլովակների, որ էլեկտրոնային խաղերի միջոցով են ապահովվում տվյալ վերջնարդյունքի ձևավորումն ու զարգացումը:

### Է. գնահատման տեսակներ

Այստեղ ներկայացված են հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման նմուշ-օրինակներ, ինչպես նաև թեմաների վերջնարդյունքների գնահատման հարցաշարեր: Գնահատման նմուշօրինակները ստեղծվել են գնահատման նոր մեթոդաբանության հիման վրա:

### Ը. Տարբեր տեսակի դասերի օրինակելի պլաններ

Այս բաժնում ներկայացված են տարբեր տիպի դասերի տարատեսակ դասապլան-ներ: Դասապլանների նմուշօրինակներում արտացոլված են դասի նպատակներն ու վերջնարդյունքները, ներկայացված են դասի փուլերի նկարագրությունները, ուսուցչի և սովորողների գործողությունները, դասի ամփոփումն ու գնահատումը, անդրադարձը:

### Թ. Տարբեր տեսակի հումորային նյութերը դասագրքում

Այս գլխում դիտարկվում են դասագրքի այն միջոցները (տեքստեր, նկարազարդումներ, բեմականացումներ, մնջախաղ, խնդուկներ, շուտասելուկներ, երգեր, հանելուկներ, գլխագրեր, մուտքի պատուհանիկներ, փոխակերպումներ, դարձ-վածներ, հարցեր, զվարթ առաջադրանքներ), որոնք անմիջականորեն նպաստում են երեխաների մեջ հումորի զգացումը զարգացնելուն:

### Ժ. Դասագրքի չափածո դասանյութերի մասին

Դասագրքում՝ բացի չափածո տեքստերից, այլ չափածո նյութերը տրված են ավելի փոքր չափաբաժիններով, և երեխաները առավել հեշտությամբ դրանց մի մասը կցան-կանա և կսովորի անգիր: Դրանք լավ հանգավորված, համառոտ, երբեմն ընդամենը մի քառյակով ներկայացված դիպուկ, հումորով լի, կատակային մանրամասներով հանե-լուկներ են, շուտասելուկներ, մուտքի և ամփոփման պատուհանիկների գրառումներ, որոշ առաջադրանքներ ու երգեր:

**Երկրորդ մասում** ներկայացվում են դասագրքի բոլոր 46 դասերի օրինակելի մեթոդական մանրակրկիտ մշակումները: Ինչպես նաև ԳՐԱԴԱՐԱԿ խորագրով ներկայացվում է ուսումնաօժանդակ նյութ տվյալ դասի վերաբերյալ (ընդամենը 92 նյութ):

**Երրորդ մասում** ներկայացված են 46 տեսահոլովակ և 9 էլեկտրոնային խաղ պարունակող կայք, դասագրքում առկա առաջադրանքներին լրացնող լեզվական առաջադրանքներ, ինչպես նաև գրական և ոչ գրական ստեղծագործություններ, տեսա-նյութեր, ձայնագրություններ, հետաքրքրաշարժ առաջադրանքներ, ուսումնական խաղեր: Այս նյութերը դասակարգված են ըստ թեմաների և դասանյութերի:

# ՄԱՍ 1

## Գլուխ 1. ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ներկայացվող դասագիրքը բաղկացած է երկու մասից. ՄԱՍ 1, որն ընդգրկում է «Ով ենք մենք», «Ինչպես ենք մենք ինքնարտահայտվում», «Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» թեմատիկ խմբերը, և ՄԱՍ 2, որն ընդգրկում է «Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում», «Ինչպես է աշխատում աշխարհը» և «Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում» թեմատիկ խմբերը:

Դասագիրքն ստեղծվել է պետական չափորոշչի և առարկայական ծրագրի պահանջների հիման վրա:

**Ա. Դասագրքի երկու մասն էլ ունեն 9 մշտական խորագրեր.**

1. Սկզբնանկար,
2. Գլխագիր,
3. Մուտքի պատուհանիկ,
4. Աչքի առաջ,
5. Հարցեր,
6. Առաջադրանքներ,
7. Դասից քաղած իմ պտուղները,
8. Ամփոփման պատուհանիկ,
9. Թեմայի ամփոփում:

Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

### 1. ՍԿԶԲՆԱՆԿԱՐ

Ամեն թեմա ունի դասագրքի կենտ էջում զետեղված ՍԿԶԲՆԱՆԿԱՐ՝ մի յուրատեսակ ճանապարհային քարտեզ, յուրատեսակ մուտքի պատուհան՝ տվյալ թեմայի դասանյութերին ծանոթանալու համար:

Դրանք դասագրքում «ճամփորդելու» համար յուրատեսակ նկարազարդ ուղեցույցներ են, որոնք դասագիրքը բաժանում են ըստ թեմատիկ շարքերի, հեշտ կողմնորոշվելու հնարավորություն են ընձեռում դասագրքից օգտվողին:

Սկզբնանկարը հնարավորություն է ընձեռում, որ սովորողը նախնական պատկերացում ունենա, ինքնուրույն ծանոթանա թեմայի բովանդակությանը, կանխագուշակումներ անի, հորինի պատմություններ տվյալ թեմայի դասանյութերից ընտրված նկարներով՝ դրանք հետագայում համեմատելով համապատասխան պատմությունների հետ:

Սկզբնանկարը պարունակում է ուսումնասիրվող թեմատիկ խմբի անվանումը: Հնարավոր է, որ սկզբնանկարում լինի որևէ կարգախոս, հրահանգ, ուղերձ:

Սկզբնանկարը երեխաների ուշադրությունը տվյալ թեմայի դասանյութերի վրա սևեռելու, նրանց հետաքրքրասիրությունը խթանելու, կռահումներ անելու, ստեղծարար մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու համար հիանալի միջոց է, նախապայման:

## 2. ԳԼԽԱԳԻՐ

Յուրաքանչյուր նոր դաս սկսվում է Գլխագրի «Այս դասին դու...» բառերով: Արդյունավետ ուսուցումը ենթադրում է, որ սովորողը նախապես իմանա, թե ինքն ինչ է ուսումնասիրելու, ինչ արդյունքի է հասնելու: Գլխագրերում ներկայացվում են դասի նպատակները, այն, թե ինչ է սպասում սովորողին դասը ուսումնասիրելիս: Այդտեղ գրվում է, թե ինչ են սովորելու, կրկնելու և ամրապնդելու սովորողները, ինչ են անելու և կատարելու, ինչ կարևոր արժեքների շուրջն են խոսելու և իրենց կարծիքներն արտահայտելու: Դրանք պարզ և կարճ ձևակերպումներ են՝ նկատի ունենալով տարրական դասարանների սովորողի տարիքային առանձնահատկությունները: Գլխագրերը հաճախ անակնկալ, «ինտրիգ» (սադրանք) են պարունակում՝ ստեղծելով նախնական դրական դիրքորոշում, սովորելու ցանկություն ուսումնասիրվող դասի նկատմամբ:

Գլխագրերում մտքերը ձևակերպված են՝ հիմքում ունենալով կարողունակության գիտելիք, կարողություններ, հմտություններ, արժեքներ և դիրքորոշումներ բաղադրիչները: Այն կառուցված է Բ. Բլումի ուսումնական նպատակների ձևակերպման աստիճանակարգի ակտիվ բայերով:

## 3. ՄՈՒՏՔԻ ՊԱՏՈՒՀԱՆԻԿ

Յուրաքանչյուր դասի սկզբում կա գունավորված շրջանակ՝ համապատասխան գրառմամբ: Այն կոչվում է «Մուտքի պատուհանիկ»: «Մուտքի պատուհանիկում» ներկայացվող գրառումը դասանյութի նկատմամբ սովորողի հետաքրքրությունը, ինչպես նաև երևակայությունը խթանելուն ուղղված մտքեր են, հարցադրումներ, երկխոսություններ, կարճ պատմություններ, հանելուկներ, չափածո դիմումներ և այլն: Այն նախապատրաստում է սովորողին, ակտիվացնում, վեր հանում նրա ունեցած նախնական պատկերացումներն ուսումնասիրվելիք դասանյութի, երևույթների և հարցերի մասին: «Մուտքի պատուհանիկի» գրառումները նույնպես ունեն հետաքրքիր, արտասովոր և արտառոց ձևակերպումներ, ինչը խթանում է սովորողների հետաքրքրությունը, նպաստում, որ նրանք մտածեն տվյալ խնդրի մասին ու երևակայեն:

## 4. «ԱՉՔԻ ԱՌԱՋ» ԽՈՐԱԳԻՐ

Յուրաքանչյուր դասանյութում հանդիպում են գրությամբ ու արտասանությամբ տարբերվող, ուղղագրական դժվարություններ ունեցող բառեր: Այդպիսի բառերը ձեռագիր տառատեսակով ներկայացվում են հատուկ շրջանակի մեջ՝ «Աչքի առաջ» խորագրով: Դասագրքում դրանք ութսունութն են:

«Աչքի առաջ» խորագրի բառերի ուսուցանման համար դասագրքում առկա են բազմաբնույթ առաջադրանքներ՝ *արտագրություններ, նախադասությունների կազմում,*

*աղյուսակային առաջադրանքների կատարում, նկարելուկների կազմում և լուծում, խաչբառերի լուծում, վերհիշում ինքնաթելադրությամբ, փոքրիկ պատմությունների հորինում, բաց թողած տառերի լրացում, խառնագրերի վերծանում, հանելուկների գուշակում, բառքամոցի խաղեր, բառակապակցությունների կազմում, աուդիոտեքստերի ունկնդրում, բազմազան երգերի ունկնդրում, տեսահոլովակների դիտում,* և այլն:

## 5. ՀԱՐՑԵՐ

Յուրաքանչյուր տեքստին կից սովորողներին տրվում են բազմազան հարցեր: Դրանց մի մասը վերաբերում է տեքստի բովանդակության վերհանմանը, մի մասն ունի ստեղծագործական բնույթ:

Հարցերի օգնությամբ կարելի է աշակերտների մեջ ձևավորել ուշադիր կարդալու կարողություն, ընդլայնել նրանց մտահորիզոնը, սովորեցնել արդյունավետ աշխատել տեղեկույթի հետ, բարենպաստ պայմաններ ստեղծել ուսումնական հաջող գործունեության ձևավորման համար: Հարցերի ձևակերպման հիմքում ևս Բ. Բլումի ուսումնական նպատակների ձևակերպման աստիճանակարգի սկզբունքներն են:

## 6. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Դասագրքում ներկայացված առաջադրանքները հետաքրքրաշարժ են, դրանք բազմաբնույթ են և բազմաբովանդակ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը. *Աղյուսակային առաջադրանքներ, առարկաների ընդհանուր անվանումը գտնելու առաջադրանքներ, առարկաները խմբերի բաժանելու առաջադրանքներ, հանելուկներ, առածներ, դարձվածքներ, ուրախ պատմության հորինում, մնջախաղ, բեմականացում, հետազոտական աշխատանքներ, մրցույթներ, նկարների պատմում, ՈՒԽ առաջադրանքներ, խնդրուկներ, բառախաղեր՝ բառքամոցի, փոխակերպում, խառնագիր, նկարելուկ, շուտասելուկ, սուտասելուկ, ո՞րն է ավելորդ, վանկախաղ*, և այլն:

Առաջադրանքները տարբերակված են, դրանք ստեղծելիս հաշվի են առնվել սովորողների կրթական կարիքներն ու հնարավորությունները, ուսումնառության ոճերը: Առկա են անհատական և խմբային աշխատանքների համար նախատեսված առաջադրանքներ, ըստ ուսումնական նպատակների և վերջնարդյունքների՝ աստիճանակարգված առաջադրանքներ, միևնույն նյութին, թեմային առնչվող տարբեր առաջադրանքներ և այլն:

## 7. ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Դասի ավարտին ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներին հետահայաց վերլուծություն կատարելու, վերհիշելու և գնահատելու իրենց կատարած քայլե-

ը: **«Դասից քաղած իմ պտուղները»** խորագրով ներկայացվող հարցաշարի միջոցով երեխան ինքն է պարզում, թե ինչ սովորեց (**գիտելիք**), ինչ է կարողանում անել (**կարողություն**), վերլուծում է իր վերաբերմունքը (**դիրքորոշում**):

Նման աշխատանքների պարբերական կազմակերպումը նպատակաուղղված է այն բանին, որ երեխաները սովորեն վերլուծելու և գնահատելու իրենց ձեռքբերումները յուրաքանչյուր դասից:

## 8. ԱՄՓՈՓՄԱՆ ՊԱՏՈՒՀԱՆԻԿ

Ամփոփման պատուհանիկում երեխաները կարդում են դասագրքի ընդհանրացնող խոսքը և դատողություններ անում դրա վերաբերյալ:

Ամբողջ ուսումնառության ընթացքում երեխան պետք է կարողանա ազատորեն արտահայտել իր կարծիքը: Դա վերաբերում է յուրաքանչյուր դասին: Նա կարող է համաձայն չլինել տվյալ երևույթին տրված ամենաընդունված գնահատականին, համակարծիք չլինել ընդունված ընդհանրական եզրակացությանը: Ուսուցիչը չպետք է սահմանափակի նրա այդ իրավունքը: Սակայն դասի վերջում անհրաժեշտ է տալ որևէ ընդհանրացնող եզրակացություն, որը հիմնված է մարդկության դարավոր ձեռքբերումների վրա: Սովորողը կարող է համեմատել իր կարծիքը, նկատառումներն ու մտքերը այդ եզրակացության հետ և անել համապատասխան հետևություններ:

Ամփոփման պատուհանիկում տրվում են դասագրքի ընդհանրացնող եզրակացությունները, որոնց շուրջ կազմակերպվում է քննարկում, և երբեք չի պարտադրվում այդ եզրակացությունը:

## 9. ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Յուրաքանչյուր թեմայի վերջում նախատեսված է ամփոփիչ դաս: Դասագրքի բոլոր 44 դասերը ներկայացված են այդ ուրվագծով:

**Ա. Դասագրքի ՄԱՍ 1-ի վերջում կա մեկ ցանկ.**

1. Որոշ առաջադրանքների պատասխաններ:

**ՄԱՍ 2-ի վերջում կա երկու ցանկ.**

1. Որոշ առաջադրանքների պատասխաններ,
2. Լեզվական տարրական գիտելիքների ընդգրկումը դասագրքում:

**Բ. Դասագրքում ներկայացված վեց թեմատիկ խմբերում ընդգրկված տեքստերի մասին**

Տեքստերին կից բազմաբնույթ հարցերն ու առաջադրանքները, տեսալսողական հոլովակները, տեսախաղերը մանրամասն նկարագրված են այս ձեռնարկի երկրորդ մասում՝ «Դասերի մեթոդական մշակումներ» բաժնում:

## 1. ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ

Ուսումնասիրում են սեփական ներաշխարհը, արժեքները, անձնական, ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սոցիալական ձեռքբերումները, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերների միջև, հասկանում են՝ ինչ է նշանակում մարդ:

ա. **«Ո՞վ եմ ես»** բանաստեղծությունը թեմատիկ խմբում ընդգրկված դասանյութերից առաջինն է: Ներկայացված է երեք մասով. «Ես սիրում եմ», «Ես մանուկ եմ», «Ես քաջ եմ»: Բանաստեղծության հերոսը երկրորդ դասարանցի աշակերտ է, որը ներկայանում է իր ուրախություններով ու անհանգստություններով, բացահայտում է իր ներաշխարհը, պատմում է, թե ով է ինքը, ինչ գիտի, ում և ինչ է սիրում, ինչի վրա է զարմանում, ինչով է ուրախանում, ինչից է վախենում, ինչից՝ ամաչում, ում է պաշտպանում, ինչից է զայրանում և ինչից՝ տխրում: Այս ամենը նա ասում է մի դեպքում հումորով, մեկ այլ դեպքում՝ ամենայն պատասխանատվությամբ, մեկ այլ դեպքում՝ հպարտությամբ:

Բանաստեղծությունը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

բ. **«Ընկերները»** պատմությունը երկու ընկերոջ, նրանց փոխհարաբերությունների, փոխօգնության, ընկերասիրության մասին է: Թե ինչպես ընկերներից մեկը մյուսին օգնում է, որ նա հետաքրքրությամբ ու սիրով սկսի կարդալ ու գրել:

գ. **«Քո խոսքի ուժը»** պատմությունը փոքրիկ աղջկա և նրա մայրիկի սրտառուչ փոխհարաբերության մասին է: Մատչելի ձևով ներկայացվում է, թե ինչպիսի հոգատարություն, ուշադրություն ու խնամք է ցուցաբերում փոքրիկ աղջիկը իր հիվանդ մոր նկատմամբ:

դ. **«Մի հեքիաթ ոզնու մասին»** հեքիաթն այն մասին է, թե ինչպես է ոզնիների ընտանիքում փոքր եղբայրը հիվանդանում, և ինչպես մեծ եղբայրը, ոչ մի խոչընդոտի առջև կանգ չառնելով, կարողանում է բուժել փոքր եղբորը:

Ամբողջ հեքիաթում իշխում են ընտանեկան սերը, բարությունը, նպատակին հասնելու համառ ցանկությունը, ուշադրությունը ընտանիքի անդամի նկատմամբ:

Բնականաբար, հեքիաթային ընտանիքը մարդկային ընտանիքի մի փոքրիկ մոդել է: Եվ ինչպես ոզնուն օգնում են բժիշկ Այբոլիտը, ծառը և քամին, այնպես էլ մարդկային ընտանիքի դեպքում օգնության են հասնում բարի մարդիկ և համապատասխան ծառայությունները:

Հեքիաթը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

## 2. ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ

Ուսումնասիրում են այն միջոցները, որոնց օգնությամբ մենք արտահայտում ենք մեր մտքերն ու զգացումները, ճանաչում ենք բնությունն ու մշակույթը և արժեքները, այն միջոցները, որոնց օգնությամբ մենք վերլուծում ենք, ընդարձակում մեր մտահորիզոնը, բավականություն ստանում ստեղծագործելուց:

**ա. «Ես»:** Մարդային մտքերի ու զգացումների արտահայտման հզոր միջոց է խոսքը: Վիլյամ Սարոյանը իր հանճարին հատուկ հումորով ներկայացնում է բառեր ստեղծելու և դրանով աշխարհը ճանաչելու մարդու ձգտումը:

**բ. «Տա՞ռն էլ գլխարկ ունենա»** պատմությունն այն մասին է, թե ինչպես հանճարեղ մի հայ՝ Մեսրոպ Մաշտոցը, հայոց այբուբենը ստեղծելիս, չմոռացավ նաև Ը հնչյունին: Ինչպես հայ մարդը իր մտքերն ու զգացումները արդեն կարողացավ արտահայտել գրության միջոցով:

Հեքիաթը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

**գ. «Նկարչություն»** բանաստեղծության միջոցով երեխաները բացահայտում են, որ նկարչության միջոցով ևս հնարավոր է ներկայացնել մարդկային հույզերը, մտքերը, զգացումները:

Բանաստեղծությունը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

**դ. «Կաքավի գովքը»** երգ-բանաստեղծությունում ցույց է տրվում, որ ինչպես կաքավիկն է երգով իր սերն արտահայտում շրջապատի և մարդկանց նկատմամբ, այնպես էլ մարդն իր զգացմունքներն ու մտքերը, հույզերն ու զգացումները կարող է արտահայտել երգով ու երաժշտությամբ:

**ե. «Փոքրիկ պարուհին»** պատմվածքում աղջնակը ուզում է պարուհի դառնալ, որովհետև, երբ երաժշտություն է լսում, չի կարողանում հանգիստ մնալ, սիրտը թրթռում է, ուզում է պարել, ցույց տալ, թե ինչ է զգում:

Դասագրքի 5-րդ էջում **«Գիտե՞ս, որ…»** խորագրով ներկայացվում են աշխարհի ժողովուրդների մի շարք պարեր: Երեխաները հնարավորություն ունեն QR կոդի միջոցով դիտելու այդ պարերից հատվածներ, տեսնելու, զգալու, թե ինչպես են տարբեր ժողովուրդներ պարի միջոցով արտահայտում իրենց հույզերն ու ապրումները:

Այսինքն, պարով ևս մարդը կարողանում է ցույց տալ իր մտքերն ու զգացումները, հույզերն ու ապրումները:

Նշենք, որ պատմվածքը ներկայացվում է նաև տեսալսողական հոլովակով:

## 3. ՈՐՏԵՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ուսումնասիրում են ժամանակի և տարածության մեջ կողմնորոշումը, նշանավոր մարդկանց և նշանավոր տոհմերի անձնական պատմությունները, միջանձնային փոխհարաբերություններն ու կապերը:

**ա. «Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը»:** Ամենանշանավոր տոհմը և նշանավոր անձը Հայկ Նահապետն է և նրա տոհմը, այսինքն՝ հայ ժողովուրդը: Այդ նշանավոր անձի, նրա կատարած գործերի մասին է պապիկի և թոռան զրույցը:

Զրույցը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

**բ. «Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ»:** Այս փոքրիկ զրույցը մեկ այլ նշանավոր անձի՝ դյուցազնական Դավթի, նրա քաջագործության ու մարդասիրության մասին է:

**գ. «Երևան»:** Երևան քաղաքը նույնպես մեծ ճանապարհ է անցել ժամանակի մեջ, մինչև հասել է մեզ: Զրույց-պամության մեջ խոսվում է Երևանի հիմնադիր նշանավոր Արգիշտի արքայի, հին Էրեբունու և նոր Երևանի մասին: Խոսվում է, թե ինչ է եղել Էրեբունիում, և ժամանակի ընթացքում ինչպես է այն դարձել Երևան, ու ինչեր կան Երևանում:

Զրույց-պատմությունը ներկայացված է տեսալսողական հոլովակով:

**դ. «Գիրքը»** գեղարվեստավավերական մի պատմություն է ժամանակի և տարածության մեջ ամենաանխոնջ ճամփորդներից մեկի՝ գրքի մասին: Եռամաս՝ «Գիրքը համոզում է Արային», «Հայոց այբուբենը», «Այսօրվա գիրքը»:

Ներկայացված են գրքի ստեղծման պատմությունը, նրա կրած փոփոխությունները ժամանակի մեջ և այսօրվա գիրքը:

**ե. «Իմ հայրենիքը»** բանաստեղծությունը եզրափակում է թեման: Բանաստեղծության մեջ շատ մատչելի, երեխայի համար հասկանալի ու սրտամոտ կերպով ներկայացված է, թե ինչ է հայրենիքը:

## 4. ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ

Ուսումնասիրում են մարդու և հանրության ստեղծած համակարգերի փոխհարաբերությունները, կազմակերպությունների կառուցվածքն ու գործառույթները, ինչպես է հանրությունը որոշումներ ընդունում, տնտեսական գործունեությունը և դրա ազդեցությունը մարդու և շրջակա միջավայրի վրա:

**ա. «Չարաճճին»** հեքիաթում տառերի, որոնք հանրությունն են, և Չ տառի, որը անհատն է, փոխհարաբերության պատմությունն է:

Հեքիաթում առաջնային է այն գաղափարը, որ հանրության և անհատի փոխհարաբերությունը պետք է ներդաշնակ լինի, որովհետև այդ հարաբերությունը փոխներգործուն է և փոխլրացնող:

Հեքիաթի վերջում բոլորը եզրակացնում են, որ առանց համագործակցելու, առանց բարի գործեր կատարելու չեն կարող ապրել:

Հեքիաթը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

**բ. «Ե'վ նման ենք, և' տարբեր»** պատմությունը երկվորյակ քույրերի մասին է: Նրանցից յուրաքանչյուրը հանրության մի բջջի՝ ընտանիքի մաս է: Եվ նրանցից յուրաքանչյուրը պարտականություններ ունի, քանզի մասն է հանրության:

Գեղեցիկ հարցադրումով և լուծումով պատմության փոքրիկ հերոսուհին հասկանում է, որ ինքը ևս պետք է իր գործերով մասնակցի հանրության ընդհանուր գործերին, հանձն առնի որոշակի պարտականություններ:

**գ. «Ով աշխատի, նա կուտի»** հեքիաթը դարձյալ հանրության մի փոքրիկ բջջի, որն այս դեպքում նույն խրճիթում ապրող ընկերներն են, և այդ ընկերների միջև փոխհարաբերության մասին է: Տվյալ հանրության բոլոր անդամները պետք է կատարեն որոշակի պարտականություններ հանրային բարիքներից օգտվելու համար:

Հեքիաթի տարբերակը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

**դ. «Ո՞ւմ ծառն է»** բանաստեղծության մուտքի պատուհանիկում գրված է, որ մենք պատասխանատու ենք նրանց համար, ում ընտելացրել ենք:

Փոքրիկ Իշխանի այս խոսքերը բնաբան են բանաստեղծության համար: Այստեղ ևս անհատի և հանրության փոխհարաբերությունն է ներկայացված: Ինչպես նաև քննարկվում է շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության մի շատ կոնկրետ՝ երեխաների աշխարհընկալմանը հասանելի խնդիր: Որևէ գործ ձեռնարկելիս, մանավանդ, եթե այդ գործը պահանջում է մշտական ջանք, անհրաժեշտ են հետևողականություն և գործը մինչև վերջ հասցնելու կամք ու համառություն:

**ե. «Կորած օրը»** փոքրիկ զրույցը վերաբերում է ժամանակը ճիշտ օգտագործելուն, իր և հանրության համար որևէ օգտակար գործ կատարելուն: «Այսօրվա գործը վաղվան մի՛ թող»,-ասում է առածը: Գործը կարող ես անել քեզ համար, կարող ես անել շրջապատի համար: Դա էական չէ: Կարևորը, որ գործը չհետաձգես, չծուլանաս, և օրդ իզուր չկորչի առանց որևէ բան սովորելու, առանց որևէ գործ կատարելու:

**5. ԻՆՉՊԵՍ Է «ԱՇԽԱՏՈՒՄ» ԱՇԽԱՐՀԸ**

Ուսումնասիրում են բնությունը, նրա օրենքները, բնության աշխարհի (ֆիզիկական և կենսաբանական) և մարդկային հասարակության փոխհարաբերությունները, ինչպես են մարդիկ կիրառում գիտական հայտնագործությունները, գիտության և տեխնիկայի ազդեցությունը մարդու և շրջակա միջավայրի վրա:

**ա. «Ջուրը»** բանաստեղծությունը բնության մեջ ջրի շրջապտույտի մասին է: Փոքր չափի մեջ ներկայացված է, թե ինչպես է արևը գոլորշացնում ջուրը, դարձնում ամպ, ինչպես է ամպի ջուրը անձրևի տեսքով նորից թափվում ներքև և գետերով հոսում օվկիանոս:

**բ. «Արևն ու ծիածանը»** բնության զարմանալի երևույթներից մեկի՝ ծիածանի մասին է: Հեքիաթի ձևով կառուցված պատմության միջոցով, հետաքրքրաշարժ ձևով ներկայացվում են ծիածանի տեսանելի յոթ գույները և տրվում է դրանք ճիշտ հերթակա-

նությամբ հիշելու մի նախադասություն. *«Կարմրաթևիկը նստեց դեղնած կանաչին, երազեց կապույտ մանուշակներ»:*

**գ. Սառույցի բյուրեղը, Ամպի փաթիլը և Ծովի կաթիլը:** Ջրի երեք վիճակի (պինդ, հեղուկ, գազային) մասին է բանաստեղծությունը:

**դ. «Աստղեր»** պատմությունը մի փոքրիկ զրույց է աստղերի, Բյուրականի աստղադիտարանի մասին:

**ե. «Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին»** գիտագեղարվեստական մի պատմություն է հայ մեծ գյուտարար Հովհաննես Ադամյանի, նրա նշանավոր գյուտի մասին: Գունավոր հեռուստատեսության մասին նրա գյուտը մեծ ազդեցություն է ունեցել հեռուստատեսության զարգացման գործում՝ առաջընթաց ապահովելով նրա հետագա զարգացման համար:

## 6. ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՊՐՈՒՄ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ

Ուսումնասիրում են մարդկանց և կենդանի էակների փոխհարաբերությունները, մարդկանց իրավունքներն ու պարտականությունները:

**ա. «Էլմերը»** հեքիաթ է փղերի մի ընտանիքի մասին: Երեխաները ծանոթանում են այդ ընտանիքի անդամներին, որոնցից մեկը արտաքինով նման չէ մյուսներին: Հասկանում են, որ կենդանական աշխարհն էլ մարդկային աշխարհի նման հետաքրքիր է ու բազմագույն, որ փղերի ընտանիքում էլ կարող է լինել մեկը, որ թեև արտաքինով, բնավորությամբ նման չէ մյուսներին, բայց, միևնույն է, հարազատ է բոլորին ու բոլորի համար սիրելի:

Հեքիաթը ինչպես փղերի ընտանիքի մասին է, այնպես էլ մարդկային ընտանիքի, հանրության: Հեքիաթում ցույց է տրվում, որ մյուսերին նման չլինելը դժբախտություն չէ և կարող է նույնիսկ ուրախություն բերել բոլորին:

***Մարդկանց և կենդանիների մտերմիկ փոխհարաբերությունները առկայծում են դասագրքի մի շարք տեքստերում և այլ դասանյութերում: Իսկ ռեսուրսների համար մղվող պայքարի մասին կխոսվի ավելի բարձր դասարաններում:***

Օրինակ՝ «Ո՞վ եմ ես» բանաստեղծության մեջ փոքրիկ հերոսը պաշտպանում է իր շնիկին: «Մի հեքիաթ ոզնու մասին» հեքիաթում մտերմություն է հաստատվում ոզնիների ընտանիքի հետ, որի անդամները խնամում են իրար, հոգ են տանում միմյանց: «Կաքավի գովքը» բանաստեղծությամբ ներկայացվում է թռչունների մի ընտանիք, որն իր երգով ուրախություն է բերում բոլորին: «Չարաճճին» հեքիաթում տառերի ընտանիքն է, որոնց անդամները որսորդից պաշտպանում են որսին:

**բ. «Փոքրիկի մեծ զարմանքը»** չափածո ստեղծագործության մեջ հնարավորինս ներկայացվում են երեխաների իրավունքները:

**գ. «Իրավունքն է ծնում պարտականություն»** ստեղծագործությամբ, թեթևակի հումորով, երեխաների համար մատչելի լեզվով ներկայացված են նրանց պարտականությունները, որոնք բխում են իրավունք ունենալուց:

**դ. «Տունը»** երգիծական բանաստեղծության մեջ կենդանիների օրինակով ցույց է տրվում, որ պետք չէ դիմացինի արարքը գնահատել միայն քեզ հարմար լինելու տեսանկյունից:

Հեքիաթը ներկայացված է նաև տեսալսողական հոլովակով:

**ե. «Նախադասության սաները»** կետադրական նշանների բանակի մասին է, որը երկրորդ դասարանցի աշակերտին ուղեկցում է դասագրքի առաջին էջից մինչև վերջին էջը: Հումորով, կատակով ներկայացվում են կետադրական նշանները, բացահայտվում է երեխաների իմացությունը այս կամ այն նշանի մասին: Ի մի է բերվում ուսումնական տարվա ընթացքում երեխաների թե՛ կարդալու ընթացքում տեսած, թե՛ գրելու կամ արտագրելու ընթացքում հանդիպած կետադրական նշանների իմացությունը:

## Գլուխ 2. ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Թեմատիկ պլանավորումը կազմված է առարկայական ծրագրի և ուսպլանի համաձայն՝ տարեկան 256 ժ, 32 շաբաթ, շաբաթական 8 ժամ: Այն ներառում է մայրենիի առարկայական ծրագրով նախատեսված թեմաները, այդ թեմաներում ընդգրկված դասանյութերի վերնագրերը, դրանց հատկացված ժամաքանակը, դասագրքի համապատասխան էջը: Ժամաքանակը համապատասխանում է դասերից յուրաքանչյուրի կրթական նպատակներին, ակնկալվող արդյունքներին և բովանդակային նյութին:

Թեմատիկ պլանավորումով նախատեսված են նաև պահուստային ժամեր, որոնք ուսուցչի ազատորեն տնօրինելու համար են, այդ թվում նաև ուսումնական էքսկուրսիաների կազմակերպման համար:

Ուսումնառության գործընթացում կարևորելով գրելու հմտությունը, ինչպես նաև հաշվի առնելով գրավոր խոսք կառուցելու դժվարությունները, թեմատիկ պլանավորմամբ շաբաթական երկու ժամ նախատեսված է գրավոր աշխատանքների համար, որոնց կազմակերպման ձևի և բովանդակության ընտրության հարցում ուսուցիչն ազատ է:

Թեմատիկ պլանավորման մեջ ժամեր են հատկացված նաև դասանյութի բովանդակությունից և նպատակներից բխող գործնական աշխատանքներին:

| Թեմայի անվանումը | Թեմայի բովանդակությունը | Ժամաքանակը | Էջը դա-սագրքում |
|---|---|---|---|
| | I շաբաթ | | |
| Թեմա 1<br>«Ով ենք մենք» | Ճանապարհային քարտեզ | 1 | 2 |
| | Դասագրքի ողջույնը | 1 | 3 |
| | Պայմանանշաններ | 2 | 4 |
| | Բարի գալուստ «Ով ենք մենք» մոլորակ թեմայի մուտք | 2 | 5 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | II շաբաթ | | |
| | «Բարև՛, ես եմ» | 2 | 6 |
| | **Ով եմ ես:** Ես մանուկ եմ | 3 | 7 |
| | **Ով եմ ես:** Ես սիրում եմ | 1 | 11 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | III շաբաթ | | |
| | **Ով եմ ես:** Ես սիրում եմ | 2 | 11 |
| | **Ով եմ ես:** Ես քաջ եմ | 4 | 14 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | IV շաբաթ | | |
| | **Ընկերները** | 3 | 18 |
| | **Խոսքի ուժը** | 3 | 22 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | V շաբաթ | | |
| | **Մի հեքիաթ ոգնու մասին** | 4 | 25 |
| | Գիտելիքների ամրապնդում | 2 | |
| | Թեմատիկ գրավոր աշխատանք | 1 | |
| | Գրավոր աշխատանք | 1 | |
| | VI շաբաթ | | |
| | «Ով ենք մենք» թեմայի ամփոփում | 3 | 31 |
| | «Ինչպես ենք մենք ինքնարտահայտվում» թեմայի մուտք | 2 | 33 |
| | Ես | 1 | 34 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | VII շաբաթ | | |
| | Ես | 2 | 34 |

| | | | |
|---|---|---|---|
| **Թեմա 2 «Ինչպես ենք մենք ինքնարտահայտվում»** | Տա՞ռն էլ գլխարկ ունենա | 4 | 38 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | VIII շաբաթ | | |
| | Նկարչություն | 3 | 42 |
| | Կաքավի գովքը | 3 | 45 |
| | Թեմատիկ գրավոր աշ-խատանք | 1 | |
| | Գրավոր աշխատանք | 1 | |
| | IX շաբաթ | | |
| | Փոքրիկ պարուհին | 4 | 48 |
| | Գիտելիքների ամրա-պնդում | 2 | |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | X շաբաթ | | |
| | «Ինչպես ենք մենք ինք-նակազմակերպվում» թեմայի ամփոփում | 2 | 52 |
| | «Որտեղ ենք մենք ժա-մանակի և տարածու-թյան մեջ» թեմայի մուտք | 2 | 55 |
| | Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը | 2 | 56 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XI շաբաթ | | |
| | Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը | 2 | 56 |
| | Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ | 4 | 61 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XII շաբաթ | | |
| | Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ | 4 | 61 |
| | Երևան | 2 | 66 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XIII շաբաթ | | |
| | Երևան | 2 | 66 |
| | Գիտելիքների ամրակայում | 2 | |
| | Գիրքը: Գիրքը համոզում է Արային | 2 | 73 |
| | Գրավոր | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| **Թեմա 3 «Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ»** | աշխատանք | | |
| | Թեմատիկ աշխատանք | 1 | |
| | XIV շաբաթ | | |
| | Գիրքը։ Գիրքը համոզում է Արային | 2 | 73 |
| | Գիրքը։ Հայոց այբուբենը | 4 | 76 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XV շաբաթ | | |
| | Գիրքը։ Այսօրվա գիրքը | 4 | 79 |
| | Գիտելիքների ամրակայում | 2 | |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XVI շաբաթ | | |
| | Իմ հայրենիքը | 3 | 82 |
| | Իմ հայրենիքը | 1 | Գործնական աշխատանք |
| | «Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» թեմայի ամփոփում | 2 | 88 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| **Թեմա 4 «Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում»** | XVII շաբաթ | | |
| | «Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում» թեմայի մուտք | 2 | 91 |
| | Չարաճճին Ընկերների հետ | 3 | 92 |
| | Չարաճճին Մենակության մեջ | 1 | 94 |
| | Գրավոր աշխատանք | 1 | |
| | Թեմատիկ աշխատանք | 1 | |
| | XVIII շաբաթ | | |
| | Չարաճճին Մենակության մեջ | 3 | 94 |
| | Ե՛վ նման ենք, և՛ տարբեր | 3 | 98 |

| | | | |
|---|---|---|---|
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XIX շաբաթ | | |
| | Ե՛վ նման ենք, և՛ տարբեր | 1 | 98 |
| | Ով աշխատի, նա կուտի | 4 | 101 |
| | Ո՞ւմ ծառն է | 1 | 107 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XX շաբաթ | | |
| | Ո՞ւմ ծառն է | 3 | 107 |
| | Կորած օրը | 3 | 111 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXI շաբաթ | | |
| | Կորած օրը | 1 | 111 |
| | Գիտելիքների ամրապնդում | 1 | |
| | «Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում» թեմայի ամփոփում | 2 | 114 |
| **Թեմա 5 «Ինչպես է «աշխատում» աշխարհը»** | «Ինչպես է աշխատում աշխարհը» թեմայի մուտք | 2 | 117 |
| | Գրավոր աշխատանք | 1 | |
| | Թեմատիկ աշխատանք | 1 | |
| | XXII շաբաթ | | |
| | Ջուրը | 3 | 118 |
| | Արևն ու ծիածանը | 3 | 121 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXIII շաբաթ | | |
| | Սառույցի բյուրեղը, ամպի փաթիլն ու ծովի կաթիլը | 4 | 126 |
| | Գործնական աշխատանք | 1 | |
| | Աստղեր | 1 | 130 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXIV շաբաթ | | |

| | | | |
|---|---|---|---|
| | Աստղեր | 3 | 130 |
| | Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին Պապն ու թոռնիկը | 3 | 135 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXV շաբաթ | | |
| | Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին Երազողը | 4 | 138 |
| | «Ինչպես է աշխատում աշխարհը» թեմայի ամփոփում | 2 | 142 |
| | Գրավոր աշխատանք | 1 | |
| | Թեմատիկ աշխատանք | 1 | |
| **Թեմա 6 «Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում»** | XXVI շաբաթ | | |
| | «Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում» թեմայի մուտք | 2 | 145 |
| | Էլմերը։ Ինչպես դառնալ փղագույն | 2 | 146 |
| | Էլմերը։ Թե ինչպես Էլմերը ջունգլիում կորցրեց իր անունը | 2 | 149 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXVII շաբաթ | | |
| | Էլմերը։ Թե ինչպես Էլմերը ջունգլիում կորցրեց իր անունը | 2 | 149 |
| | Փոքրիկի մեծ զարմանքը | 4 | 154 |
| | Գրավոր | 2 | |

| | | | |
|---|---|---|---|
| | աշխատանք | | |
| | XXVIII շաբաթ | | |
| | Իրավունքն է ծնում պարտականություն | 4 | 158 |
| | Տունը | 2 | 161 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXIX շաբաթ | | |
| | Տունը | 2 | 161 |
| | Նախադասության սաները | 4 | 164 |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXX շաբաթ | | |
| | Գիտելիքների ամրապնդում | 2 | |
| | «Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում» թեմայի ամփոփում | 4 | 169 |
| | Գրավոր աշխատանք | 1 | |
| | Թեմատիկ աշխատանք | 1 | |
| | XXXI շաբաթ | | |
| | Դասագրքի հրաժեշտը | 2 | 173 |
| | Գիտելիքների ամրապնդում | 4 | |
| | Գրավոր աշխատանք | 2 | |
| | XXXII շաբաթ | | |
| | Պահուստային ժամ* | 8 | |

Ուսուցիչը պահուստային ժամերը կարող է օգտագործել դաս-էքսկուրսիաների, դասարանական և արտադասարանական տարբեր միջոցառումների համար, ինչպես նաև, ըստ դասարանի առանձնահատկությունների, հատկացնել թեմաների տարբեր ենթաթեմաների յուրացմանը, տրամադրել ընթերցանությանը և այլն:

## Գլուխ 3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑԱՆՑ

Մեթոդական ցանցը հետաքրքիր նորամուծություն է, որը հեշտացնում է ուսուցչի աշխատանքը ուսումնական ողջ գործընթացը պլանավորելիս: Այն տեսանելի է դարձնում յուրաքանչյուր թեմայի ծրագրային և ուսումնական նպատակները, յուրաքանչյուր դասանյութի ակնկալվող վերջնարդյունքները, խաչվող հասկացությունները, միջառարկայական կապերը, կարողունակությունները:

| **Թեմա 1**<br>**«Ով ենք մենք»** |
|---|
| **Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններ (Տե՛ս ՀՊՉ)**<br>1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>2. Սովորել սովորելու կարողունակություն<br>3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>4. Թվային և մեդիա կարողունակություն |
| *Կապը Հանրակրթական պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ*<br>*S1, S7, S8, S10, S12, S14, S22, S24, S25, S26, S28* |
| **Առարկայական ծրագրի հիմնական նպատակները** |
| • ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները<br>• ձևավորել ինքնակազմակերպման հմտություններ<br>• զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները<br>• հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը<br>• զարգացնել կարդալու և գրելու կարողությունները |
| **Թեմայի նպատակները** |
| • Ծանոթացնել դասագրքի ճանապարհային քարտեզին և կիրառված պայմանանշաններին<br>• Ձևավորել իրեն և շրջապատողներին ճանաչելու, բնութագրելու և գնահատելու կարողություններ<br>• Ձևավորել ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով արտահայտելու կարողություններ<br>• Զարգացնել հասկանալով կարդալու կարողությունը |

- Ձևավորել ընթերցածի, լսածի, տեսածի, զգացածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին հարցեր տալու կարողություններ
- Զարգացնել հարցը հասկանալու և պատասխանելու կարողությունները
- Զարգացնել տեքստի բովանդակության և նկարազարդման կապը տեսնելու կարողությունը
- Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը, հարստացնել բառապաշարը
- Խորացնել է-ե, օ-ո ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության մասին ունեցած գիտելիքները
- Ձևավորել անսովոր հարցերում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ
- Խրախուսել և խթանել մարդկանց և շրջապատի նկատմամբ ուշադիր և հոգատար վերաբերմունքը
- Նպաստել խմբում աշխատելու, համագործակցելու կարողությունների զարգացմանը

| Դասանյութի վերնագիր | Ժամա-քանակ 33 + 10 | Էջ | Թեմայի վերջնարդյունքներն ըստ դասանյութերի | Միջառարկայական կապեր | Խաչվող հասկա-ցություններ |
|---|---|---|---|---|---|
| **Ճանապար-հային քարտեզ** | 1 | **2** | • թվարկի դասագրքի ճանա-պարհային քարտեզում նշված թեմաների ան-վանումները | **Մանկական և գիտահանրա-մատչելի գրա-կանություն** Բանաստեղ-ծությունների, հեքիաթների ընթերցում (տե՛ս ՈՒԽ)<br><br>**Կերպարվեստ** էջ 5,6, էջ 8, հարց 7, էջ 28, առաջ. 5, էջ 31, առաջ.1 Տեքստերի և | **Անհատներ և հարաբերու-թյուններ** էջ 8, առաջ.1<br><br>Աշխատանք օրագրում. էջ 6 էջ 10 էջ 13 էջ 17 էջ 21 |
| **Դասագրքի ողջույն** | 1 | **3** | • դրսևորի հետաքրքրու-թյուն դասագրքի և դասանյութերի նկատմամբ | | |
| **Պայմանա-նշաններ** | 2 | **4** | • ճանաչի դասագրքում կիրառված պայմանա-նշանները<br>• բացատրի որոշ պայմանանշաններ | | |
| **«Ով ենք մենք» թեմայի մուտք** | 2 | **5** | • հորինի պատմություն սկզբնանկարում պատ-կերված նկարների շուրջ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • անկաշկանդ արտահայտի մտքերը | նկարագրադումների կապերի բացահայտմանն ուղղված առաջադրանքներ<br>• տեքստի և նկարագրդման համեմատում երևակայության, դիտողականության, ուշադրության զարգացում<br>• իր և ընկերների աշխատանքների մեկնաբանում, վերլուծում<br><br>**Երաժշտություն**<br>էջ 8, առաջ. 3<br>էջ 20, առաջ. 4,<br>էջ 27, առաջ. 3<br>• Երգի ունկնդրում, կատարում, | **Պատճառ և հետևանք**<br>Պատճառահետևանքային կապերը կյանքում.<br>էջ16, առաջ. 4, 6<br>էջ 21, առաջ.7<br>էջ 24, առաջ 4, էջ 25, 26<br>հարցեր 4,5,6 |
| **«Բարև՛, ես եմ»** | 2 | **6** | • պարզի Արևիկի դերերը նկարների մեջ<br>• պատմի իր դերերի մասին<br>• ստեղծի «Բարև՛, ես եմ» օրագիրը | | |
| **Ով եմ ես: Ես մանուկ եմ** | 3 | **7** | • հասկանալով և վարժ ընթերցի բանաստեղծությունը<br>• ճանաչի բանաստեղծության հերոսին, ներկայացնի նրան<br>• բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>• ներկայացնի իրեն և պատմի, թե ինչ է կարողանում անել<br>• պատմի իր ցանկությունների և հետաքրքրությունների մասին<br>• տարբերի տառերն ու հնչյունները, բառերի մեջ հաշվի դրանց քանակը<br>• արտագրի գրավոր ոչ մեծ տեքստեր, կատարի տրված առաջադրանքները<br>• առանձնացնի բառերն ըստ խմբերի<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | սովորում<br>• ստեղծագործական ունակությունների ու հմտությունների կիրառում<br>**Ես և շրջակա աշխարհը.**<br>էջ 8, առաջ. 1, էջ 10 առաջ. 8 էջ 13 առաջ. 6, էջ 17 առաջ. 8, էջ 22, էջ 25<br><br>• Ինքնաճանաչում.<br>սեփական կարողությունների ու հնարավորությունների, նախասիրությունների ու հետաքրքրությունների ներկայացում<br>• Ինքնարտահայտման և ինքնադրսևորման տարբեր եղա- | |
| **Ով եմ ես: Ես սիրում եմ** | 3 | **11** | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի բանաստեղծությունը<br>• ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը արտահայտի խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով:<br>• առանձնացնի ձայնավոր և բաղաձայն հնչյունները<br>• ճիշտ գրի նոր սովորած բառերը<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Ով եմ ես: Ես քաջ եմ** | 4 | **14** | • հասկանալով և վարժ ընթերցի բանաստեղծությունը<br>• հասկանա տեքստի բովանդակության և նկարազարդման կապը, տեքստի բառերի և նկարազարդման միջոցով ներկայացնի հերոսին<br>• բացատրի տեքստի հերոսի հույզերը<br>• ձևակերպի հարցեր դրվագանկարներում պատկերված հերոսի արարքների վերաբերյալ, գտնի սխալ- | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ները շտկելու իր տարբերակը<br>• մեջբերումներ ներկայացնի ընթերցածի բովանդակությունը՝ զարգացնելով երևակայությունը<br>• նորածանոթ բառերը կիրառի նախադասությունների մեջ<br>• շուտասելուկի միջոցով եզրակացություններ անի հերոսի քաջության մասին<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | նակների ներկայացում<br><br>**Մաթեմատիկա**<br>էջ 9, առաջ. 5,<br>էջ 15, առաջ. 3<br>էջ 23, առաջ. 2,<br>էջ 29, առաջ. 10<br>էջ 32, առաջ. 4<br><br>• Թվաբանական գործողություններ կատարելու հմտությունների զարգացում<br>• սեփական ուժերի նկատմամբ վստահության սերմանում<br>**Թատրոն**<br>էջ13, առաջ. 5,<br>էջ 16, առաջ. 5<br>էջ 28, առաջ. 6<br>• մարմնի լեզվի, | |
| **Ընկերները** | 3 | **18** | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի տեքստը<br>• խաղի միջոցով զարգացնի կարդալու կարողությունները<br>• Ճիշտ արտասանի և գրի **ե**–ով սկսվող բառերը<br>• մեկնաբանի տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը<br>• բացատրի և հիմնավորի, թե ինչպես չսիրած գործը կարելի է սիրով կատարել<br>• գնահատի տեքստի հերոսի վերաբերմունքը սովորելու նկատմամբ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | բեմական խոսքի, դիմախաղի ներկայա-ցում | |
| **Խոսքի ուժը** | 3 | **22** | • հասկանալով և համա-պատասխան արագու-թյամբ ընթերցի տեքստը<br>• վերարտադրի տեքստը հերոսների անունից՝ դրսևորելով ստեղծարար մտածողություն<br>• Ճիշտ արտասանի և գրի **է**–ով , **ե**–ով սկսվող բառերը<br>• հասկանա առածը և կիրառի խոսքում<br>• գնահատի տեքստի հերոսուհու հոգատար վերաբերմունքը<br>• ցուցաբերի հոգատարու-թյուն շրջապատող մարդ-կանց նկատմամբ՝ գրելով համապատասխան բառեր<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Մի հեքիաթ ոզնու մասի** | 4 | **25** | • հասկանալով և համապա-տասխան արագությամբ ընթերցի տեքստը<br>• մտքերն արտահայտի ան-կաշկանդ, պարզ, հասկա-նալի՝ հավատարիմ մնալով թեմային, ընդհանրացնի ասելիքը<br>• պատմի տեքստի բովան-դակությունը՝կարևորելով բարությունն ու հոգատա-րությունը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • տրված առաջադրանքների կատարման միջոցով պարզի, թե ինչը օգնեց հերոսին առողջանալ<br>• Ճիշտ արտասանի և գրի **օ**–ով, **ռ**–ով սկսվող բառերը<br>• վերարտադրի տեքստը հերոսների անունից՝ դրսևորելով ստեղծարար մտածողություն<br>• ստեղծի դեղատոմս սիրելի կենդանու համար՝ համագործակցելով ընկերների հետ<br>• սովորի հարցեր տալ, առաջադրված պատասխանների համար ձևակերպի հարցեր<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• գնահատի հեքիաթի հերոսների կատարած բարի գործերը<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Բարև՛, ես եմ» թեմայի ամփոփում** | 3 | **31** | • թվարկի թեմատիկ շարքի հերոսներին<br>• առանձնացնի հերոսների խոսքերը<br>• բառաղյուսակում գտնի թեմատիկ շարքում սովորած բառերը<br>• ձևակերպի հարցեր հերոսներին<br>• հորինի պատմություն թեմատիկ շարքի հերոսներով<br>• ճանաչի և բնութագրի իրեն և իր ընկերներին<br>• արժևորի ուշադրությունն ու հոգատարությունը իր և իրեն շրջապատող մարդ-կանց ու երևույթների նկատմամբ<br>• գնահատի իր ձեռքբերումները թեմայի ավարտին | | |
| **Թեմա 2**<br>**ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ** | | | | | |

| |
|---|
| **Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններ (Տե՛ս ՀՊՉ)**<br>1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>2. Սովորել, սովորելու կարողունակություն<br>3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>4. Թվային և մեդիա կարողունակություն<br>**5.** Մշակութային կարողունակություն |
| ***Կապը Հանրակրթական պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ***<br>**S1, S7, S8, S9, S14, S22, S23, S24, S25, S26, S 30** |
| **Առարկայական ծրագրի հիմնական նպատակները** |
| • ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները<br>• հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը<br>• զարգացնել կարդալու և գրելու կարողությունները<br>• զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները<br>• ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները |
| **Թեմայի նպատակները** |
| • Զևավորել չափածո գրական ստեղծագործությունները անգիր արտասանելու կարողությունը<br>• Զևավորել հասկանալով կարդալու կարողությունը<br>• Զարգացնել հարցը հասկանալու և դրան ճշգրիտ պատասխանելու կարողությունները<br>• Զարգացնել տեքստի բովանդակության և նկարազարդման կապը տեսնելու կարողությունը<br>• Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը<br>• Զարգացնել և-ի գրության կարողությունը<br>• Խորացնել վանկի մասին ունեցած գիտելիքները<br>• Հարստացնել շրջապատող աշխարհի մասին գիտելիքները<br>• Խթանել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները<br>• Զևավորել անսովոր հարցերում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ<br>• Զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները<br>• Զևավորել մտքերն ու հույզերը ճանաչելու, հասկանալու և տարբեր միջոցներով արտահայտելու կարողություններ<br>• Զարգացնել խմբում աշխատելու, համագործակցելու կարողությունը |

| Դասանյութի վերնագիր | Ժամա-քանակ | Էջ | Թեմայի վերջնարդյունքներն ըստ դասանյութերի | Միջառարկա-յական կապեր | Խաչվող հասկա -ցություններ |
|---|---|---|---|---|---|
| **«Ինչպես ենք մենք ինքնարտա-հայտվում»** թեմայի մուտք | **2** | 33 | • հորինի պատմություն սկզբնանկարում պատկերված նկարների շուրջ, զարգացնի երևակայությունը<br>• անկաշկանդ արտահայտի մտքերը | **Մանկական և գիտահանրա-մատչելի գրականու-թյուն**<br>էջ 37, առաջ. 5, էջ 51<br>Բանաստեղ-ծությունների, հեքիաթի, Շուտասելուկ-ների ընթերցում (տե՛ս ՈՒՆ)<br><br>**Կերպարվեստ**<br>էջ 33, էջ 35, առաջ. 1<br>էջ 43, հարց 3, էջ 46 առաջ. 1<br>Տեքստերի և նկարազար-դումների կա-պերի բացա-հայտմանն ուղղված | **Պատճառ և հետևանք**<br>էջ 35, հարց 2<br>էջ 49, հարց 3, էջ 50, առաջ1<br><br>**Ժամանակ և տարածու-թյուն**<br>էջ 34, 38<br><br>**Անհատա-կան և մշա-կութային արժեհամա-կարգ**<br><br>էջ 51, առաջ. 5 |
| **Ես** | **3** | 34 | • հասկանալով և համա-պատասխան արագու-թյամբ ընթերցի տեքստը<br>• արտահայտի իր հույզերն ու մտքերը ժեստերի և դիմախաղի միջոցով<br>• իմանա վանկատման պարզագույն կանոնները<br>• տարբերի վանկը, միա-վանկ և բազմավանկ բառերը<br>• ճիշտ գրի նոր սովորած բառերը<br>• ընթերցի տեղեկատվա-կան տեքստեր և ներկա-յացնի դրանց բովան-դակությունը<br>• ձևակերպի հարցեր տեղեկություններ ձեռք բերելու նպատակով<br>• կարևորի մայրենի լեզվի, խոսքի դերը հաղորդակցվելիս<br>• գնահատի դասի արդյունքում իր | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ձեռքբերումները | առաջա-դրանքներ<br>• տեքստի և նկարազարդման համեմա-տում<br>• դիտողական ու-թյան, ուշադրու-թյան և երևա-կայության զար-գացում<br>• Ստեղծա-գործու-թյան մեջ դուր եկած հատված-ների նկարա-զարդում<br>• գեղեցիկը և ներդաշնա-կը տեսնե-լու, զգալու, գնահատե-լու կարողու-թյուն | |
| **Տա՞ռն էլ գլխարկ ունենա** | **4** | 38 | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի տեքստը<br>• ներկայացնի կարդացածի բովանդակությունը<br>• բացատրի հերոսների վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• իմանա Ը–ի վանկարարդերի մասին<br>• սովորած բառերը կիրառի նախադասությունների մեջ<br>• բառերը բաժանի խմբերի ըստ տարբեր հատկա-նիշների<br>• գրավոր պատասխանի կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ հարցերին<br>• պատմի տեքստը տարբեր հերոսների անունից՝ դրսևորելով ստեղծարար մտածողություն<br>• ստեղծի գրավոր շարադրանք նկարի շուրջ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • կարևորի շրջապատող-ների համար օգտակար գործեր կատարելը<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | **Երաժշտու-թյուն**<br>էջ 40, առաջ. 1, էջ 45<br>էջ 50, առաջ. 3, էջ 51, առաջ. 5 | |
| **Նկարչու-թյուն** | **3** | 42 | • արտահայտիչ արտասանի բանաստեղծությունը<br>• հասկանա տեքստի բո-վանդակության և նկարա-զարդման կապը, տեքստի բառերի և նկարազարդ-ման միջոցով ներկայացնի հերոսին<br>• տրված նախադասություն-ներում պարզ նշաններով պատկերի հուզերը<br>• բառերով և բառակա-պակցություններով գրավոր կամ բանավոր արտահայտի իր հույզերը իրադարձությունների և երևույթների նկատմամբ<br>• ստեղծի շնորհավորական բացիկ<br>• կարևորի ուշադիր վերա-բերմունքը մտերիմ մարդ-կանց նկատմամբ<br>• որոշի դասի արդյունքում իր ձեռքբերումները | • մեղեդու տրամա-դրության, բնույթի ընկալում<br>• երգելով, պարելով, պարային շարժում-ներով հույզերը արտահայ տելու կարողու-թյուն<br>• ստեղծագոր-ծությունը գրագետ խոսքով նկարա-գրելու կարողու-թյուն | |
| **Կաքավի գովքը** | **3** | 45 | • հասկանալով և վարժ ընթերցի բանաստեղծու-թյունը<br>• ներկայացնի կարդա-ցածի բովանդակությունը<br>• հասկանա բանա-ստեղծության բո- | **Մաթեմատի-կա**<br>էջ 36, առաջ. 3<br>էջ 46, առաջ. 3<br>էջ 50, առաջ. 3 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վանդակության և նկարա-<br>զարդման կապը<br>• ճանաչի և անվանի ծաղիկներ<br>• բացատրի որոշակի քա-նակի բառեր համա-տեքստում<br>• պատմի տեքստը Արևի անունից՝ դրսևորելով ստեղծարար մտածո-ղություն<br>• գրավոր պատասխանի կարդացածի, լսածի վերաբերյալ հարցերին<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• կարևորի ուշադիր և հոգատար վերաբեր-մունքն ու սերը շրջա-պատի նկատմամբ<br>• պարզի դասի ավարտին իր ձեռքբերումները | • թվաբանա-կան գործողու-թյուններ կատարելու բանավոր և գրավոր հմտություն ների զար-գացում<br>• սեփական ուժերի նկատմամբ վստահու-թյան սերմանում<br><br>**Թատրոն**<br>էջ 36, առաջ. 4<br>• բեմական խոսքի, մարմնի լեզվի, շարժման ներկայա-ցում | |
| **Փոքրիկ պարուհին** | **4** | 48 | • հասկանալով և համա-պատասխան արագու-թյամբ ընթերցի տեքստը<br>• ներկայացնի կարդացածի բովանդակությունը<br>• նկարագրի մարդկանց, ներկայացնի իրադար-ձություններ՝ պարզ արտահայտելով մտքերն ու զգացումները<br>• առանձնացնի **և** պարունակող բառերը | **Պար**<br>էջ 51, առաջ. 5<br>• տարբեր ազգերի պարերի ծանոթացում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • բառերով և բառակապակցություններով գրավոր արտահայտի իր հույզերը կարդացած ստեղծագործության, ունկնդրած երաժշտության, դիտած պարերի մասին<br>• շարունակի և ավարտի պատմությունը՝ դրսևորելով ստեղծարար մտածողություն<br>• երկխոսի դասընկերների հետ և կատարի գրառումներ<br>• հասկանա երազանքներին հասնելու ճանապարհները<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **«Ինչպես ենք մենք ինքնարտահայտվում» թեմայի ամփոփում** | **2** | 52 | • ցույց տա առաջադրանքի բովանդակության և նկարների կապը<br>• ներկայացնի թեմատիկ շարքի հերոսներին<br>• սովորած բառերը կիրառի առաջադրանքները կատարելիս<br>• համագործակցի ընկերների հետ, դրսևորի պատասխանատու և բարեհամբույր վերաբերմունք, պահպանի սահմանված կանոնները<br>• իր հույզերն ու մտքերը արտահայտի ժեստերի, դիմա-խաղի, մարմնի լեզվի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | միջոցով, զգա դիմացինի հույզերը և դրսևորի համապատասխան վերաբերմունք<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• գնահատի իր ձեռքբերումները թեմայի ավարտին<br>• վերաբերմունք | | |
| **Թեմա 3**<br>**Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ** | | | | | |
| **Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններ (Տե՛ս ՀՊՉ)**<br>1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>2. Սովորել, սովորելու կարողունակություն<br>**3.** Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն<br>**4.** Թվային և մեդիա կարողունակություն | | | | | |
| **Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**<br>S1, S7, S8, S9, S14, S16, S17, S18, S22, S23, S25, | | | | | |
| **Առարկայական ծրագրի հիմնական նպատակները** | | | | | |
| • ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները<br>• հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը<br>• զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները<br>• զարգացնել կարդալու և գրելու կարողությունները<br>• ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները | | | | | |
| **Թեմայի նպատակները** | | | | | |

- Զարգացնել կարդալու և տեքստը դեպքերի տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրելու կարողությունները
- Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը
- Հարստացնել բառապաշարը
- Զարգացնել տեքստը ընթերցելիս առանձին բառակապակցությունների և բառախմբերի իմաստների վրա կենտրոնանալու կարողությունը
- եզակի թվով առարկաները հոգնակի դարձնելու կարողություն
- Ձևավորել անձ և իր ցույց տվող բառերը ճանաչելու կարողություն
- Զարգացնել որոշ պատկերացումներ ժողովրդի պատմության, մշակույթի վերաբերյալ
- Հարստացնել հայրենիքի և շրջապատող աշխարհի մասին գիտելիքները
- Ձևավորել հարցեր տալու կարողությունը
- Զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները
- Ձևավորել անսովոր հարցերում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ
- Ձևավորել ժամանակի և տարածության մեջ կատարված փոփոխությունները տեսնելու և գնահատելու կարողությունները
- Խրախուսել և խթանել հայրենիքի նկատմամբ սերն ու հոգատարությունը
- Ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները

| **Դասանյութ** | **Ժամա-քանակ** | էջ | **Թեմայի վերջնարդյունքները** | **Միջառարկայական կապեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|---|---|---|---|
| **« Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ»** թեմայի մուտք | **2** | 55 | • հորինի պատմություն սկզբնանկարում պատկերված նկարների շուրջ, զարգացնի երևակայությունը<br>• անկաշկանդ արտահայտի մտքերը | **Մանկական և գիտահանրամատչելի գրականություն** Գիտահանրամատչելի տեքստերի ընթերցում (էջ 70, 72) **Կերպարվեստ** էջ 63, առաջ. 3, էջ 82, առաջ.1, | **Պատճառ և հետևանք** էջ 57 հարցեր 2. 3 էջ 62, հարց. 9 **Ժամանակ և տարածություն** էջ 66, էջ 85, առաջ. 38, էջ 86. առաջ. 6 էջ 80, հարց 2 **Կառուցվածք և գործառույթ** |
| **Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը** | **4** | 56 | • հասկանալով և վարժ ընթերցի տեքստը, բացատրի տեքստի բառերի և բառակապակցությունների իմաստները<br>• պատմի տեքստը՝ պատասխանելով հարցերին | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • առանձնացնի հակառակ իմաստ ունեցող բառազույգեր<br>• համեմատի տեքստի բովանդակությունը նկարազարդման հետ<br>• տեքստի բովանդակության, բառերի ու արտահայտությունների և նկարազարդման միջոցով ներկայացնի հերոսներին<br>• ձևակերպի հարցեր ընթերցածի վերաբերյալ<br>• ընտրի գիրք կամ այլ ռեսուրսներ, կատարի փոքրիկ հետազոտական աշխատանք<br>• բացատրի, թե ինչու է մեր երկիրը կոչվել Հայաստան<br>• ճանաչի ու գնահատի հայրենիքն ու Հայկ Նահապետին<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | տեքստերի և նկարազարդումների կապերի բացահայտմանն ուղղված առաջադրանքներ<br>• նկարների նկարազարդումների մեկնաբանություն և ներկայացում<br>• կերպարվեստային գործունեության իրականացում<br><br>**Երաժշտություն**<br>էջ 70<br>• երգի, օրհներգի ունկնդրում, կատարում, սովորում<br><br>**Ես և շրջակա աշխարհը.**<br>էջ 56, 57, առաջ. 1, էջ 70, էջ 90 | էջ 73, 76, 79<br>էջ 80, առաջ. 3 |
| **Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ** | **8** | 61 | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի տեքստը<br>• պատմի տեքստը՝ պատասխանելով հարցերին,<br>• հասկանա տեքստի բովանդակության և նկարազարդման կապը, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • տեքստի բառերի և նկարազարդման միջոցով ներկայացնի հերոսին,<br>• ճանաչի առարկա ցույց տվող բառերը և առանձնացնի դրանք, ամբողջացնի նախադասությունները առարկա ցույց տվող բառերով<br>• սովորած բառերով գրի փոքրիկ զվարթ պատմություն՝ զարգացնելով երևակայությունը<br>• բացահայտի, որ արարքները բնութագրում են մարդկանց<br>• ճանաչի Սասունցի Դավթին, գնահատի նրա արարքները<br>• ընտրի գիրք կամ այլ ռեսուրսներ,<br>• կատարի փոքրիկ հետազոտական աշխատանք<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | • ազգային ինքնությունը սահմանող խորհրդանիշների նկարագրում<br>• իր բնակավայրի, հայրենի բնության և պատմամշակութային արժեքների ճանաչում, գնահատում, հոգատար վերաբերմունքի ցուցաբերում<br>**Մաթեմատիկա**<br>էջ 60, առաջ. 8, էջ 90, առաջ. 8<br>• Օրինաչափությունների բացահայտում, մեկնաբանում, տվյալների լրացում աղյուսակնե- | |
| **Երևան** | **4** | 66 | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի տեքստը, պատասխանի հարցերին<br>• իմանա ով է կառուցել Էրեբունին<br>• պատմի ինչպես է Էրեբունին դարձել Երևան | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • հասկանա տեքստի բովանդակության և նկարազարդման կապը<br>• տեքստի բառերի և նկա-բազարդման միջոցով ներկայացնի հերոսների<br>• սովորի հարցեր տալ<br>• ձևակերպի հարցեր առաջադրված պատաս-խանների համար<br>• սովորած բառերով գրի փոքրիկ զվարթ պատ-մություն՝ զարգացնելով երևակայությունը<br>• տարբերի անձ և իր ցույց տվող բառերը<br>• հարցերի միջոցով առանձնացի անձ և իր ցույց տվող բառերը<br>• մեկնաբանի հերոսների վերաբերմունքը Երևանի նկատմամբ<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | ռում, խաչ-բառերում | |
| **Գիրքը Գիրքը համոզում է Արային** | **4** | 73 | • հասկանալով և համապատասխան հնչերանգով ընթերցի տեքստը<br>• պատմի տեքստի բովանդակությունը<br>• բացատրի որոշակի քանակի բառեր | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • համատեքստում սովո-<br>րած բառերը կիրառի<br>առաջադրանքի մեջ<br>• եզակի թվով առարկաները<br>դարձնի հոգնակի և գրի<br>• գնահատի<br>գիրքը որպես<br>խելացի<br>ընկերոջ և<br>զրուցակցի<br>• գնահատի դասի<br>արդյունքում իր<br>ձեռքբերումները | | |
| **Գիրքը Հայոց այբուբենը** | **4** | 76 | • հասկանալով և<br>համապատասխան<br>արագությամբ ընթերցի<br>տեքստը<br>• պատմի կարդացածի<br>բովանդակությունը<br>• ներկայացնի գրքի անցած<br>ճանապարհը<br>• բացատրի որոշակի<br>քանակի բառեր<br>• համատեքստում<br>• սովորած բառերը կիրառի<br>առաջադրանքում<br>• իմանա և գրի եզակի և<br>հոգնակի թվով առար-<br>կաներին տրվող հարցերը<br>• գնահատի հայոց այբու-<br>բենի դերն ու նշանա-<br>կությունը<br>• գնահատի դասի<br>արդյունքում իր ձեռք-<br>բերումները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Գիրքը Այսօրվա գիրքը** | **4** | 79 | • հասկանալով ընթերցի տեքստը<br>• պատմի կարդացածի բովանդակությունը<br>• իմանա ինչով և ինչի վրա են գրել մարդիկ<br>• ներկայացնի գրքի տեսակները<br>• գրավոր և բանավոր արտահայտի իր հույզերը գրքի նկատմամբ<br>• սովորի հարցեր տալ, ձևակերպի հարցեր առաջադրված քառատողի համար<br>• արտահայտի իր վերաբերմունքը ժամանակակից գրքերի նկատմամբ<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Իմ հայրենիքը** | **4** | 82 | • համապատասխան ինչերանգով ընթերցի բանաստեղծությունը<br>• արտասանի դուր եկած քառատողը<br>• ներկայացնի բանաստեղծության բովանդակությունը՝ պատասխանելով հարցերին<br>• ճանաչի հայրենիքը բանաստեղծության և նկարների միջոցով<br>• նկարագրի մարդկանց, վայրեր՝ պարզ արտահայտելով մտքերն ու զգացմունքները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • իրականացնի հարցումներ ծնողների, հասակակից-ների հետ և գրառի<br>• տրված տեքստից ընտրի և դուրս գրի անձ և իր ցույց տվող բառերը<br>• գրավոր արտահայտի իր վերաբերմունքը հայրենիքի, սիրած վայրերի նկատմամբ<br>• ստեղծի Հայրենիքի մասին նկարազարդ գիրք կամ ալբոմ՝ցուցաբերի ստեղծարար մոտեցում<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **« Որտեղ ենք մենք ժամանակի և տարածու-թյան մեջ» թեմայի ամփոփում** | 2 | 88 | • վերհիշի թեմատիկ շարքի հերոսներին և տրված խոսքերը վերագրի նրանց<br>• համապատասխանեցնի դասանյութերից ընտրված տողերն ու նկարները<br>• սովորած բառերը կիրառի առաջադրանքներում<br>• կատարի տրված առա-ջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողու-թյուն<br>• լրացնի հարցարանը, բացահայտի և գնահատի հայրենիքի նկատմամբ իր սերն ու վերաբերմունքը<br>• գնահատի դասի արդյուն-քում իր ձեռքբերումները | | |

| Թեմա 4.<br>«ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ» |
|---|
| **Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններ (Տե՛ս ՀՊՉ)**<br>• Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>• Սովորել, սովորելու կարողունակություն<br>• Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>• Ժողովրդական և քաղաքացիական կարողունակություն<br>• Թվային և մեդիա կարողունակություն |
| **Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**<br>S1, S7, S14, S8, S9, S22, S24, S26, |
| **Առարկայական ծրագրի հիմնական նպատակները** |
| • ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները<br>• հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը<br>• զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները<br>• զարգացնել կարդալու և գրելու կարողությունները<br>• ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները |
| **Թեմայի նպատակները** |
| • Զարգացնել կարդալու և տեքստը դեպքերի տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրելու կարողությունները<br>▪ Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը, հարստացնել բառապաշարը<br>• Զարգացնել տեքստը ընթերցելիս առանձին բառակապակցությունների և բառախմբերի իմաստների վրա կենտրոնանալու կարողությունը<br>• Ձևավորել առարկա և գործողություն ցույց տվող բառերը տարբերելու կարողությունը<br>• Զարգացնել հարցեր տալու կարողությունները<br>▪ Ձևավորել անսովոր հարցերում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ<br>• Զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները<br>• Նպաստել մարդկանց հետ շփվելու, համագործակցելու, համատեղ նպատակներ իրագործելու կարողությունների ձևավորմանը<br>• Ձևավորել ժամանակը կառավարելու կարողություն<br>• Խրախուսել համատեղ աշխատանքն ու աշխատասիրությունը |

| Դասանյութեր | Ժամաքանակ | էջ | Թեմայի վերջնարդյունքները | Միջառարկայական կապեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|---|---|---|---|
| **«Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում»** թեմայի մուտք | **2** | 91 | • հորինի պատմություն սկզբնանկարում պատկերված նկարների շուրջ, զարգացնի երևակայությունը<br>• արտահայտի մտքերն ազատ ու անկաշկանդ | **Մանկական և գիտահանրամատչելի գրականություն**<br><br>Հեքիաթների, պատմվածքների, հանելուկների ունկընդրում, ընթերցում<br><br>**Կերպարվեստ**<br>էջ 93, առաջ. 2, էջ 97 առաջ. 9<br>էջ 99, առաջ. 2, էջ 100 առաջ. 8<br>էջ 105, առաջ. 8, էջ 108, առաջ. 2<br>• տեքստի և նկարազարդման համեմատում, երևակայության, դիտողական- | **Պատճառ և հետևանք**<br>էջ 93, հարց 3<br>էջ 95, հարց 3<br>էջ 99, հարց 5<br>էջ101, հարց 3<br>Էջ102,հարց 4<br>էջ115,առաջ.2<br><br>**Համակարգ և մոդել**<br><br>էջ 112, առաջ. 1 |
| **Չարաճճին ընկերների հետ** | **3** | 92 | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի տեքստը<br>• բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>• պատմի տեքստը<br>• առանձնացնի և գրի հակառակ իմաստ ունեցող բառազույգեր<br>• արտագրի քառատողը անսխալ, զարգացնի ուշադրությունը<br>• նկարի քառատողի բովանդակությունը և ներկայացնի<br>• արտահայտի իր վերաբերմունքը տեքստի հերոսի նկատմամբ<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Չարաճճին մենակության մեջ** | **4** | 94 | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի տեքստը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • պատմի տեսքստը՝ պահպանելով դեպքերի հաջորդա-կանությունը<br>• բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>• ճանաչի կետադրական նշաններից չակերտը<br>• տարբերի և գրի գոր-ծողություն ցույց տվող բառերը<br>• լրացնի նախադասություն-ները ըստ տեքստի, զար-գացնի ուշադրությունը<br>• բացատրի տեքստի հերոսի վարքը, գնահատի այն<br>• կատարի տրված առաջա-դրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողու-թյուն<br>• կարևորի իր և շրջապա-տող մարդկանց կյանքում համագործակցությունը և բարի գործեր անելը<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | ության, ուշա-դրության զարգացում<br><br>**Երաժշտու-թյուն**<br>էջ 93, առաջ. 2, էջ 100, առաջ. 3,<br>• երգի ունկնդրում կատարում, սովորում<br><br>**Ես և շրջակա աշխարհը**<br>էջ 110, առաջ. 11,<br>էջ 112, առաջ. 1,<br>էջ 115, առաջ. 2<br>• ժամանակի արդյունա-վետ տնօ-րինում<br><br>• իր և ուրիշների արարք-ների հնա-րավոր հետևան-քների կանխա- | |
| **Ե՛վ նման ենք, և՛ տարբեր** | **4** | 98 | • հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի տեքստը<br>• բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>• առանձնացնի և գրի գործողություն ցույց տվող բառեր<br>• պատմի տեքստը տարբեր հերոսների անունից՝ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դրսևորելով ստեղծարար մտածողություն<br>• ներկայացնի և գնահատի հերոսների արարքները<br>• գրի ընտանիքում իր կատարած գործերի մասին<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• արտահայտի վերաբեր-մունք աշխատանքի նկատմամբ<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | տեսում և սեփական դիրքորոշ-ման ներկայա-ցում<br><br>• ինչպես է ազդում մարդու գործու-նեությունը շրջակա միջավայրի վրա | |
| **Ով աշխատի, նա կուտի** | **4** | 101 | • հասկանալով և համապա-տասխան արագությամբ ընթերցի տեքստը<br>• բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում<br>• հասկանա տեքստի բովանդակության և նկարագրման կապը<br>• պատմի տեքստը տարբեր հերոսների անունից՝ դրսևորելով ստեղծարար մտածողություն<br>• առարկա ցույց տվող բառերից կազմի և գրի գործողություն ցույց տվող բառեր<br>• ձևակերպի հարցեր առաջադրված պատաս-խանների համար<br>• գնահատի հերոսների արարքները, կարևորի | **Մաթեմատի-կա**<br>էջ 106, առաջ. 9<br>էջ 108, առաջ. 1<br>էջ109, առաջ. 8<br><br>• օրինաչափու-թյունների բացահայ-տում, մեկնա-բանում, տվյալների լրացում խաչբառերում<br>• թվաբանա-կան գործո-ղություններ կատարելու | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատանքն ու աշխատասիրությունը<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | բանավոր և գրավոր հմտությունների զարգացում<br>• սեփական ուժերի նկատմամբ վստահության սերմանում<br><br>***Թատրոն***<br>էջ 106, առաջ. 10<br>էջ 110, առաջ. 10<br><br>• համապատասխան արտահայտիչ խոսքի ձևավորում | |
| **Ո՞ւմ ծառն է** | **4** | 107 | • հասկանալով և համապատասխան հնչերանգով ընթերցի բանաստեղծությունը<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• լրացնի նախադասությունները գործողություն ցույց տվող բառերով<br>• արտագրի քառատողն անսխալ, զարգացնի ուշադրությունը<br>• գնահատի տեքստի հերոսների արար-քները<br>• կարևորի պատասխանատվությունն ու հետևողականությունը<br>• կատարի փոքրիկ հետազոտական աշխատանք<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Կորած օրը** | **4** | 111 | • հասկանալով ընթերցի տեքստը<br>• արտահայտի մտքերը բանավոր և գրավոր<br>• գրի օրվա ընթացքում կատարած իր գործերը<br>• գրի գործողություն ցույց տվող բառեր՝ օգտվելով նկարազարդումից | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • հասկանա առածների իմաստը, որպես բանաստեղծության վերնագիր ընտրի համապատասխան առածը<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• համագործակցի ընկերների հետ, պահպանի խմբային աշխատանքի սահմանված կանոնները<br>• գնահատի ժամանակը և օրվա ընթացքում իր կա-տարած աշխատանքները<br>• որոշի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **«Ինչպես ենք մենք ինքնա-կազմակերպ-վում» թեմայի ամփոփում** | **2** | 114 | • վերհիշի և գրի, թե թեմատիկ շարքի հերոսնե-րը ինչ են սովորել միմյան-ցից<br>• կիրառի սովորած բառերը առաջադրանքի մեջ<br>• գրի նամակ թեմատիկ շարքի հերոսներից մեկին, զարգացնի երևակայու-թյունը<br>• վերլուծի նկարներում պատկերված տարբեր իրավիճակներն ու առկա խնդիրները, առաջարկի դրանց լուծման ուղիներ<br>• եզրակացնի, որ արարք-ները բնութագրում են մարդկանց<br>• գնահատի դասի արդյուն-քում իր ձեռքբերումները | | |
| **Թեմա 5.**<br>**«Ինչպես է աշխատում աշխարհը»** | | | | | |
| **Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններ (տե՛ս ՀՊՉ)**<br>• Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>• Սովորել, սովորելու կարողունակություն<br>• Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>• Մշակութային կարողունակություն<br>• Թվային և մեդիա կարողունակություն | | | | | |
| **Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**<br>S1, S7, S8, S9, S11, S14, S16, S22 | | | | | |
| **Առարկայական ծրագրի հիմնական նպատակները** | | | | | |

- ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները
- հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը
- զարգացնել կարդալու և գրելու կարողությունները
- զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները
- ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները

**Թեմայի նպատակները**

- Զարգացնել կարդալու և տեքստը դեպքերի տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրելու կարողությունները
- Զարգացնել փոքրածավալ տեքստ հորինելու կարողությունները
- Զարգացնել տեքստը ընթերցելիս առանձին բառակապակցությունների և բառախմբերի իմաստների վրա կենտրոնանալու կարողությունը
- Զարգացնել հարցը հասկանալու և դրան ճշգրիտ պատասխանելու կարողությունը
- Զարգացնել հարցեր տալու կարողությունները
- Հարստացնել բառապաշարը
- Զարգացնել բանավոր խոսքում նորածանոթ բառերն օգտագործելու կարողությունը
- Զարգացնել բառերն ըստ տարբեր հատկանիշների խմբավորելու կարողությունը
- Ձևավորել բառի մեջ արմատը տարբերելու կարողություն
- Զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները
- Ձևավորել անսովոր հարցերում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ
- Ձևավորել բնության մեջ և մարդկանց կյանքում փոփոխությունները տեսնելու, բացատրելու և գնահատելու կարողություններ
- Ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները

| **Դասանյութեր** | **Ժամանակ ժամ** | էջ | **Թեմայի վերջնարդյունքները** | **Միջառարկայական կապեր** ըստ առարկայական չափորոշիչների | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|---|---|---|---|
| **«Ինչպես է աշխատում աշխարհը» թեմայի մուտք** | **2** | 117 | • հորինի պատմություն սկզբնանկարում պատկերված նկարների շուրջ, զարգացնի երևակայությունը | **Մանկական և գիտահանրամատչելի գրականություն** | **Պատճառ և հետևանք** էջ120,առաջ.5<br><br>էջ 122, հարց. 3,4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • արտահայտի մտքերն ազատ ու անկաշկանդ | • Հեքիաթների, պատմվածքների, Գիտահանրամատչելի փոքրիկ տեքստերի, հանելուկների, շուտասելուկների ունկնդրում, ընթերցում<br><br>**Կերպարվեստ**<br><br>էջ 122, առաջ. 1<br>էջ 123, առաջ. 3<br>էջ 124, առաջ. 5<br>էջ 133, առաջ. 5 | էջ 129, առաջ. 8<br>էջ136, հարց 2<br><br>**Օրինաչափություն**<br>էջ 123, առ. 3<br>էջ 137, առ. 5<br>էջ 140, առ. 2<br>**Համակարգ և մոդել**<br>էջ 119, առ. 4<br>էջ 128, առ. 5<br>էջ 131, առ. 4 |
| **Ջուրը** | **3** | 118 | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի բանաստեղծությունը<br>• հասկանա տեքստի բովանդակության և նկարագրման կապը<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• ճանաչի հատկանիշ ցույց տվող բառերը<br>• արտագրի բանաստեղծության քառատողը, զարգացնի հիշողությունը<br>• պատմի ջրի ճամփորդության մասին<br>• կարևորի ջրի դերը բնության մեջ և մարդկանց կյանքում, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Արևն ու ծիածանը** | **3** | 121 | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի տեքստը<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• վերարտադրի տեքստի բովանդակությունը<br>• ասի ծիածանի գույները<br>• կազմի և գրի հատկանիշ ցույց տվող բառեր<br>• կիրառի սովորած բառերը գրավոր խոսքում | • Երևակայության, դիտողականության, ուշադրության զարգացում<br>• երևակայական աշխատանքի ստեղծում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • ստեղծի իր ծիածանը, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• հորինի փոքրիկ պատ-մություն տրված բառերով, զարգացնի երևակայու-թյունը<br>• կարևորի բնության երևույթները ուշադիր դիտելը<br>• գնահատի դասի արդյուն-քում իր ձեռքբերումները | **Ես և շրջակա աշխարհը**<br>էջ 119, առաջ. 2,<br>էջ 120, առաջ. 5,<br>էջ 122, հարց. 3<br><br>• բնության մեջ տեղի ունեցող պար-բերական երևույ-թների նկարագրում<br><br>**Մաթեմատի-կա**<br>էջ 134, առաջ. 8<br>էջ 125, առաջ. 11<br>էջ 141, առաջ. 6<br><br>• Թվաբանա-կան գործողու-թյուններ կատարելու բանավոր և գրավոր հմտություն- | |
| **Սառույցի բյուրեղը, Ամպի փաթիլն ու Ծովի կաթիլը** | **4** | 126 | • հասկանալով ըն-թերցի բանաստեղ-ծությունը<br>• Ճանաչի բանաստեղ-ծության հերոսներին<br>• բացատրի որոշակի քանա-կի բառեր համատեքստում<br>• հասկանա նկարագրդ-ման իմաստը<br>• սովորած բառերով կազմի և գրի բառակապակցու-թյուններ<br>• խմբավորի բառերն ըստ տարբեր հատ-կանիշների<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• ձևակերպի հարցեր տեքս-տի հիմնական գաղափարի վերաբերյալ<br>• կատարի փոքրիկ փոր-ձարարական աշխատանք | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • գնահատի շրջապատող աշխարհի բազմազանությունն ու գեղեցկությունը<br>• պարզի դասի արդյունքում իր ձեռքբերումները | ների զարգացում<br>• սեփական ուժերի նկատմամբ վստահության սերմանում<br><br>**Թատրոն**<br>էջ 133, առաջ. 7<br>էջ 142, առաջ. 1<br><br>• համապատասխան արտահայտիչ խոսքի ձևավորում<br>• մեջբերումով բովանդակության ներկայացում | |
| **Աստղեր** | **4** | 130 | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի տեքստը<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• պատմի աստղադիտարանի մասին<br>• ճանաչի բառի ընդհանուր մասը<br>• արտագրի նախադասությունները, ճիշտ տեղադրի հա-մապատասխան բառերը<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• ձևակերպի գրավոր հարցեր, լրացնի «Երազանքի աղյուսակը»<br>• արտահայտի իր վերաբերմունքը երազելու նկատմամբ<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին** | **3** | 135 | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի տեքստը<br>• պատմի տեքստը<br>• ճանաչի և բառի մեջ գտնի արմատը<br>• կազմի և գրի նոր | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Պապիկն ու թռռնիկը** | | | բառեր տրված արմատով<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• վարի երկխոսություն ծնողների հետ, թե ինչն է փոփոխվել ժամանակի ընթացքում, կատարի գրառումներ<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին Երազողը** | **4** | 138 | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի տեքստը<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• պատմի տեքստը<br>• բանավոր և գրավոր խոսքում կիրառի նորածանոթ բառերը<br>• բառերի մեջ գտնի արմատը և գրի<br>• լրացնի անավարտ նախադասությունները՝ օգտվելով տեքստից<br>• կարդա ոչ գրական պարզ տեքստ և առանձնացնի կարևոր մտքերը<br>• մեկնաբանի սովորելու կարևորությունը և դրա ազդեցությունը կյանքի վրա<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **«Ինչպես է աշխատում աշխարհը» թեմայի ամփոփում** | **2** | 142 | • հիշի թեմատիկ շարքի հերոսներին<br>• թվարկի և ներկա-յացնի թեմատիկ շարքում հան-դիպած բնության երևույթները<br>• կազմի և գրի ածանցավոր բառեր<br>• լրացնի խաչբառը սովորած բառերով<br>• գրավոր նկարագրի բնության երևույթներից մեկը, դրսևորի ստեղծա-րար մտածողություն<br>• պատմի, թե ինքն ինչ է երազում ստեղծել<br>• արտահայտի իր վերաբերմունքը բնության մեջ փո-փոխությունների և գյուտերի նկատ-մամբ<br>• մասնակցի խմբային աշխատանքի՝ զարգացնի երևակայությունը<br>• գնահատի թեմայի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Թեմա 6**<br>**«Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում»** | | | | | |
| **Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններ (Տե՛ս ՀՊՉ)**<br>1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>2. Սովորել սովորելու կարողունակություն<br>3. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն | | | | | |

4. Թվային և մեդիա կարողունակություն

**Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**

**S1, S7, S8, S9, S13 , S14, S25, S26, S28,**

**Առարկայական ծրագրի հիմնական նպատակները**

- ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները
- զարգացնել հոգեկան գործընթացները և կամային որակները
- հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը
- զարգացնել կարդալու և գրելու կարողությունները
- ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները

**Թեմայի նպատակները**

- Խորացնել կարդալու և տեքստը դեպքերի տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրելու կարողությունները
- Զարգացնել փոքրածավալ տեքստ հորինելու կարողությունները
- Զարգացնել հարցը հասկանալու և դրան ճշգրիտ պատասխանելու կարողությունը
- Զարգացնել հարցեր տալու կարողությունները
- Ընդլայնել բառապաշարը
- Զարգացնել բանավոր խոսքում նորածանոթ բառերը օգտագործելու կարողությունը
- Զարգացնել նախադասության մասին ունեցած գիտելիքները
- Ձևավորել նախադասությունը հարցերի միջոցով ընդարձակելու կարողությունը
- Զարգացնել հոգեկան գործընթացներն ու կամային որակները
- Ձևավորել անսովոր հարցերում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ
- Խրախուսել իրավունքների ու պարտականությունների կարևորությունը, նմանությունների և տարբերությունների գիտակցումը համատեղ և համերաշխ ապրելու գործում
- Ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները

| **Դասանյութեր** | **Ժամաքանակ** | էջ | **Թեմայի վերջնարդյունքները** | **Միջառարկայական կապեր** ըստ առարկայական չափորոշիչների | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **«Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում»** թեմայի մուտք | **2** | 145 | • հորինի պատմություն սկզբնանկարում պատկերված նկարների շուրջ՝ զարգացնելով երևակայությունը<br>• արտահայտի մտքերն ազատ ու անկաշկանդ | **Մանկական և գիտահանրամատչելի գրականություն**<br>Հեքիաթների, պատմվածքների, փոքրիկ տեքստերի, հանելուկների ունկնդրում, ընթերցում<br>**Կերպարվեստ**<br>էջ 154, առաջ. 1<br>էջ162, առաջ. 2<br>էջ 169, առաջ. 1<br>էջ 171, առաջ. 6<br>Երևակայության, դիտողականության, ուշադրության զարգացում<br><br>**Ես և շրջակա աշխարհը**<br>էջ 155, 159<br>էջ 170, առաջ. 2<br><br>• Իրավունքների և քաղաքա- | **Պատճառ և հետևանք**<br>էջ147 հարցեր,<br>էջ 152, առաջ. 8<br>էջ 171, առաջ. 6<br>**Օրինաչափություն**<br>էջ 158 առաջ. 1<br>էջ162, հարց 4<br><br>**Կառուցվածք և գործառույթ** |
| **Էլմերը: Ինչպես դառնալ փղագույն** | **2** | 146 | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի տեքստը<br>• պատասխանի առաջադրված հարցերին<br>• ճանաչի պարզ բառերը<br>• առանձնացնի բառի մեջ արմատը<br>• նկարագրի փղերի ընտանիքը<br>• կարևորի համերաշխությունը նաև կենդանիների ընտանիքում<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Էլմերը Թե ինչպես Էլմերը ջունգլիում կորցրեց իր անունը և նորից գտավ** | **4** | 149 | • հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի տեքստը՝ պատասխանելով հարցերին<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• արտագրի նախադասությունները, ճիշտ տեղադրի համապատասխան բառերը<br>• արտագրի հանելուկը, զարգացնի ուշադրությունը<br>• Ճանաչի ածանցները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • առանձնացնի բառերի արմատներն ու ածանցները<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• կարևորի, որ նմանություններն ու տարբերությունները հետաքրքիր են դարձնում մեր առօրյան<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | ցիական պատասխան ատվության հիմնական բաղադրիչների նկարագրում<br>• իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքների կանխատեսում, գնահատում, անձնական դիրքորոշման արտահայտում<br>**Մաթեմատիկա**<br>էջ 146<br>էջ 172, առաջ. 9<br>• Թվաբանական գործողություններ կատարելու բանավոր և գրավոր հմտությունների զարգացում<br>• Սեփական ուժերի | |
| **Փոքրիկի մեծ զարմանքը** | **4** | 154 | • հասկանալով ընթերցի բանաստեղծությունը<br>• Ճանաչի բանաստեղծության հերոսին, իմանա իր իրավունքները<br>• պատմի նկարների բովանդակությունը՝ անկաշկանդ արտահայտելով մտքերը<br>• Ճանաչի և կազմի բարդ բառեր<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• կարևորի մարդկանց իրավունքները<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | | |
| **Իրավունքն է ծնում պարտականություն** | **4** | 158 | • հասկանալով ընթեր-ցի բանաստեղծությունը<br>• Ճանաչի բանաստեղծության հերոսին, իմանա իր պարտականությունները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • հասկանա տեքստի բովանդակության և նկարագրման կապը, կարդա համապատասխան տողերը<br>• գրի և պատմի իր պարտականությունների մասին<br>• կատարի տրված առաջադրանքները, դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• եզրակացնի, որ մարդիկ ունեն և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ<br>• գնահատի դասի արդյունքում իր ձեռքբերումները | նկատմամբ վստահության սերմանում<br>**Թատրոն**<br>էջ 155, առաջ 2<br>• Համապատասխան արտահայտիչ խոսքի ձևավորում<br>• Մնջախաղով բովանդակության ներկայացում<br>**Տեխնոլոգիա**<br>էջ 162, առաջ. 5<br>• երևակայական աշխատանքի ստեղծում | |
| **Տունը** | **4** | 161 | • հասկանալով և արտահայտիչ ընթերցի բանաստեղծությունը<br>• անգիր արտասանի բանաստեղծությունը<br>• հասկանա տեքստի բովանդակության և նկարագրման կապը<br>• ազատ ու անկաշկանդ պատասխանի կարդացածի վերաբերյալ հարցերին<br>• վերարտադրի տեքստը ստեղծագործության հերոսների անունից՝ դրսևորելով ստեղծարար մտածողություն<br>• ընդարձակի և գրի տրված նախադասությունները հարցերի օգնությամբ<br>• կատարի տրված առաջադրանքները, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դրսևորի ոչ ստանդարտ մտածողություն<br>• եզրակացնի, որ կարծիք-ները կարող են լինել տար-բեր, լսի դրանք և կայացնի ճիշտ որոշում<br>• գնահատի դասի արդյուն-քում իր ձեռքբերումները | | |
| **Նախադա-սության սա-ները** | **4** | 169 | • հասկանալով և պահանջ-վող արագությամբ ընթեր-ցի տեքստը<br>• թվարկի տեքստում հանդի-պած կետադրական նշան-ները<br>• ձևակերպի հարցեր տրված պատասխանների համար<br>• կարևորի կետադրական նշանների դերը տեքստերն ընթերցելու և ընկալման գործում<br>• գնահատի դասի արդյուն-քում իր ձեռքբերումները | | |
| **«Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում»** թեմայի ամփոփում | **2** | | • վերհիշի թեմատիկ շարքի հերոսներին<br>• պատասխանի առաջադր-ված հարցերին, լրացնի հարցարանը<br>• պատմի դրվագանկարնե-րը՝ պահպանելով տրամա-բանական հաջորդակա-նությունը<br>• սովորած բառերը գրի տրված առաջադրանքում<br>• վերլուծի տրված իրավի-ճակները և առաջարկի լուծման իր տարբերակ-ները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • ձևակերպի և գրի, թե ինչ է իրավունքը, և ինչ է պարտականությունը<br>• կարևորի բնական պա-շարները խնայողաբար օգտագործելը | | |
| **Դասագրքի հրաժեշտը** | **2** | 173 | • ընթերցի դասագրքի հրաժեշտը<br>• ձևակերպի հարցեր դասագրքի հերոսներին՝ «փոքրիկ տիեզերա-գնացներին»<br>• պատասխանի դաս-ընկերների առաջադրած հարցերին | | |

## Գլուխ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ-2» ԴԱՍԱԳՐՔՈՒՄ

Այստեղ մանրամասնորեն ներկայացված են այն կարողունակությունները և այդ կարողունակությունների այն բաղադրիչները, որոնց ձևավորմանն ու զարգացմանը նպաստում են «Մայրենի-2» դասագրքի դասանյութերն ու առաջադրանքները։

Կարողունակությունների բաղադրիչներն ընտրված են՝ հաշվի առնելով երկրորդ դասարանցիների տարիքային և անհատական առանձնահատկությունները։

Յուրաքանչյուր կարողունակության ձևավորմանը նպաստող առաջադրանքները նշված են հստակ էջերով և առաջադրանքների համարներով, ինչը բավականին հեշտացնում է ուսուցչի գործը՝ համապատասխան կարողունակության ձևավորման և զարգացման գործում։

Այստեղ մանրամասն նշված են «ինչն» ու «ինչպեսը». ի՞նչ է կարողունակությունը և ինչպե՞ս ձևավորել տվյալ կարողունակությունը առանձին առաջադրանքի օգնությամբ։

«Մայրենի-2» դասագրքի հիմքում դրված են մի շարք առանցքային գաղափարներ՝ թելադրված մեր երկրի կրթական քաղաքականությամբ և տեսլականով, մանկավարժության, ուսուցման, տարիքային և մանկավարժական հոգեբանության հիմնարար մոտեցումներով, ժամանակակից աշխարհում առկա առաջնահերթություններով և մարտահրավերներով, 21-րդ դարի սովորողներին, մասնագետներին ներկայացվող պահանջներով: Այդ գաղափարներն ու առաջնահերթություններն իրենց արտացոլումն են գտել ՀՀ Հանրակրթության նոր չափորոշչում: Այն սահմանում է միջնակարգ կրթության կարողունակությունները և ձևակերպում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները յուրաքանչյուր կրթական աստիճանի համար:

(https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788):

Այդ կարողունակություններն են.

1. Լեզվական կարողունակություն և գրագիտություն
2. Սովորել սովորելու կարողունակություն
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակություն
6. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
7. Մշակութային կարողունակություն
8. Տնտեսական կարողունակություն

Կարողունակությունների վրա հիմնված ուսուցման հիմնական նպատակը ամբողջական մարդու ձևավորումն է, որը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների համադրումով կկարողանա հասկանալ և գնահատել տարբեր իրավիճակներ, լուծել խնդիրներ, դրսևորել քաղաքացիական դիրքորոշում:

Կարողունակությունների վրա հիմնվող դասավանդման սկզբունքներն են.

1. Ուսումնական գործընթացում ձևավորել ապահով, աջակցող և զարգացնող միջավայր:
2. Ուսուցումը կառուցել առանցքային և մնայուն գաղափարների վրա:
3. Ապահովել առանցքային և մնայուն գաղափարների շարունակական և պարուրաձև ուսուցումը կրթության բոլոր աստիճաններում:
4. Ցանկացած նյութի ուսուցումը մշտապես իրականացնել մեծ պատկերի համատեքստում: Կապակցել նյութը առանցքային գաղափարների հետ:
5. Առանցքային գաղափարները ուսուցանել օրինակներով և առավելագույնս դրանք կապակցել սովորողի կենսափորձի հետ:
6. Ուսուցումն իրականացնել աստիճանակառուցման սկզբունքով՝ սովորողին հասցնելով ինքնուրույն ուսումնառության և նյութի տիրապետման աստիճանի:
7. Աշակերտներին ընձեռել սովորածը կիրառելու բավարար ժամանակ և հնարավորություններ:
8. Ձևավորող գնահատման միջոցով ապահովել աջակցություն սխալը շտկելու և առաջընթաց ունենալու համար:
9. Դասավանդումը պլանավորելիս և իրականացնելիս դրսևորել դատողունակություն և ստեղծագործականություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դասարանի և դասի եզակիության հանգամանքը:
10. Օգտագործել սովորողների միմյանց սովորեցնելու հնարավորությունը՝ ձևավորելով սովորողների համայնք:

11. Դասավանդման գործընթացում ներառել հետազոտական տարրեր՝ հասկանալու համար, թե ինչ է տեղի ունենում աշակերտների հետ ուսումնառության արդյունքում, ինչն է հաջողվում, ինչն է ձախողվում, ինչը կարելի է վերանայել ապագայում։ *

ՀՀ հանրակրթության 2021թ. հաստատված նոր չափորոշիչները հիմնվում են **կարողունակությունների** վրա։†

Կրթության համակարգի պատմության տարբեր փուլերում բովանդակային հարցերին ներկայացվել են տարբեր պահանջներ։ Նախկինում կարևորվում էր միայն գիտելիքը։ Այնուհետև պարզ դարձավ, որ միայն գիտելիքը բավարար չէ։ Կարևոր է ոչ միայն այն, թե ինչ գիտես, այլև այն, թե ինչ կարող ես անել քո իմացածով։ Այդ փուլում ավելի կարևորվեցին նաև հմտությունները։ Բայց աստիճանաբար պարզ դարձավ, որ դա էլ բավարար չէ, քանզի կարևոր է, թե ինչ նպատակով է մարդն օգտագործում իր գիտելիքներն ու հմտությունները, ինչ ձևով է արձագանքում տարբեր զարգացումներին։ Այս փուլում կարևորվեցին նաև դիրքորոշումները։ Գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ինտեգրման հիման վրա այսօր աշխարհում մեծ տարածում են ստանում կարողունակությունները (կոմպետենցիաները)։ Կարողունակությունների վրա հիմնվող կրթության համար մեծ դեր խաղաց 1996թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին ղեկավար Ժակ Դելորի զեկույցը,‡ որում նա ներկայացրեց կրթության 4 հիմնասյուները.

1. Սովորել իմանալ։
2. Սովորել անել։
3. Սովորել լինել։
4. Սովորել ապրել միասին։

Այս զեկույցով Դելորն ընդլայնեց կրթությանը ներկայացվող պահանջների տիրույթը։ Դա կարևոր էր այն առումով, որ 21-րդ դարի մարդուց ավելի ունիվերսալ պատրաստվածություն է պահանջվում։ Ժամանակակից մարդը ստանում է գործելու մեծ հնարավորություններ։ Հետևաբար, շատ կարևոր է, որ կրթության համակարգը ունենա գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումները գործողությունների վերածելու տեսլական։ Այս միտքը կարելի է ցույց տալ հետևյալ բանաձևով.

Կարողունակությունը = Գիտելիքներ+Հմտություններ+Դիրքորոշումներ = Գործողություն։ Կարողունակությունը գիտելիքների և արժեքների հմուտ կիրառումն է սեփական գործունեության մեջ։

---

* [Heghine Khachatryan, Serob Khachatryan, Naira Movsisyan - ELEMENTS OF CRITICAL THINKING IN THE SCHOOL STANDARDS OF "CHESS" SUBJECT International Journal Scientia Paedagogica Experimentalis (SPE), 2021, LVIII, 1, 105-118, ISBN 0582-2351 spe@lotuswebtec.com]

† https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

‡Delors J. et al. (1996). Learning: The Treasure Within / UNESCO. http://www.unesco.org/new/en/education/themes/leading-the-international-agenda/rethinking-education/resources/

Ըստ Մյուլդերի սահմանման, կարողունակությունը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ինտեգրված հավաքածու է, որոնք միավորվում են որոշակի համատեքստում որոշակի խնդիրներ լուծելու համար:

1. **Գիտելիքները** ներառում են փաստեր, թվեր, գաղափարներ, տեսություններ, որոնք նպաստում են տվյալ առարկայի և խնդրի հասկացմանը:

2. **Հմտությունները** կոնկրետ գործողություններ կատարելու և ունեցած գիտելիքները արդյունքների հասնելու համար օգտագործելու ունակություն են:

3. **Դիրքորոշումները** սկզբունքներ են, որոնց հիման վրա մարդը արձագանքում է գաղափարներին, այլ մարդկանց և իրավիճակներին: Որոշ մասնագետներ կարողունակությունների կազմում ընդգրկում են նաև արժեքները և մոտիվացիան:

## 1. ԼԵԶՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

*Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչելու, ըմբռնելու, արտահայտելու, ստեղծելու և մեկնաբանելու տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:*
*Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021:*
*https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788*

ՀՊՉ-ում ամրագրված լեզվական գրագիտությունը և կարողունակությունը «Մայրենի-2» դասագրքում առավելապես դիտարկվել է որպես՝ «Սովորողները տիրապետում են հայոց լեզվին. գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով»:

Երկրորդ դասարանում հայոց լեզվին տիրապետել, կարողանալ գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվել մայրենի լեզվով՝ նշանակում է կարողանալ **լսել, կարդալ, խոսել (պատմել), գրել** և ունենալ **լեզվական որոշակի գիտելիքներ:**

Դասագրքում մեծ տեղ է հատկացված այս կարողունակության ձևավորմանը և զարգացմանը: Դրան հասնելու համար կիրառվել են բազմաթիվ հնարներ, ստեղծվել են

առաջադրանքների համակարգեր, ներդրվել են բազմաթիվ խորագրեր, գրվել են տեքստեր և այլն:

Առանձին-առանձին անդրադառնանք յուրաքանչյուր բաղադրիչին:

**Ա. Լսելու կարողություն**

Սա ենթադրում է «լսել և հասկանալ փոխանցվող տեղեկույթը, քննողաբար վերաբերվել իր և ուրիշների ենթադրություններին, ակտիվորեն լսել և հարգանքով վերաբերվել այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին» (Մայրենիի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար)։

Աշակերտների լսելու կարողությունը զարգացնելուն նպաստում են դասագրքի տարաբնույթ աշխատանքները.

- դասանյութերի բարձրաձայն ընթերցումը ուսուցչի և ընկերների կողմից,
- տեքստերին կից հարցերն ու հարցադրումները,
- ընկերների հետ մտքերի, կարծիքների, գաղափարների փոխանակումը,
- զույգային և խմբային քննարկումները,
- տարաբնույթ առաջադրանքների կատարումը տեսաձայնային նյութերի դիտման և ունկնդրման միջոցով,
- հարցազրույցների և երկխոսությունների իրականացումը և այլն:

**Բ. Կարդալու կարողություն**

Սա ենթադրում է հայերենի ուղղախոսությանը հատուկ ճիշտ արտասանությամբ և հնչերանգով, հասկանալով կարդալ տարբեր ոճերի տեքստեր, հաղորդել կարդացածի իմաստը, տրամադրությունը (Մայրենիի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար)։

Կարդալը տարրական դասարաններում այն հիմնական կարողությունն է, որի վրա խարսխվում են մնացած ունակությունները: Կարդալու ունակությունը մտային կարևորագույն գործունեություն է, որի ընթացքում ակտիվանում են երեխայի կամային որակները, ուշադրությունը, երևակայությունը:

Կրտսեր դպրոցականի համար կարդալը բարդ և դժվարին գործողություն է, որը պահանջում է կամային ճիգեր և ուշադրության գերկենտրոնացում: Կարդալն ունի մի շարք որակական հատկանիշներ.

- ճիշտ կամ անսխալ կարդալ
- հասկանալով և գիտակցորեն կարդալ
- վարժ կամ սահուն կարդալ
- արտահայտիչ կամ գեղարվեստականորեն կարդալ
- արագ կարդալ

Այս ամենին երեխաները հասնում են աստիճանաբար՝ տարրական դպրոցի ուսումնառության ընթացքում:

Կարդալը ենթադրում է **ընդունել** գրավոր ներկայացված տեղեկույթը, **մշակել** հիշողության մեջ, **պահպանել** և **վերարտադրել**: Իմաստավորել կարդացածը նշանակում է նախ և առաջ հասկանալ կարդացածը, հասկանալ տեքստի բառերը, նախադասությունները, դրանց իմաստային կապերը, ընկալել նկարագրված իրադարձությունները, կարողանալ առանձնացնել հերոսներին և գնահատել նրանց վարքը և վերջում բացահայտել, թե ինչի համար է այդ ամենը նկարագրված և ներկայացված: Սրան հասնելու համար անհրաժեշտ է զարգացնել երեխայի ուշադրությունը, անընդհատ հարստացնել բառապաշարը, հասնել այն բանին, որ երեխան կարողանա հստակորեն պատասխանել կարդացածի վերաբերյալ նախ պարզ, վերարտադրողական, ապա նաև վերլուծական, գնահատողական, ստեղծագործական բնույթի հարցերին:

Երբեմն երեխան տեքստը կարդում է վստահ, առանց սխալների, արտահայտիչ, արագ, սակայն գործնականում բացարձակորեն չի հասկանում, թե ինչ է կարդում: Գրեթե չի օգնում նաև «մի անգամ էլ կարդա, բայց՝ ուշադիր» հորդորը: Վերընթերցումն իմաստավորվում է, եթե երեխան հայտնաբերում է այնպիսի փաստեր, որոնք չէր նկատել առաջին ընթերցման ժամանակ: Օրինակ՝կերպարային մանրամասներ, պատկերման արտահայտչականություն, լեզվական բառապաշար, հերոսների արտաքին նկարագրությունից մինչև արարքների գնահատականներ:

Շատ կարևոր է, որ երեխան ոչ միայն ուշադիր կարդա, այլև կարողանա ուշադիր լսել:

Այսօրվա երեխային շրջապատել են բազմաթիվ էլեկտրոնային սարքեր: Ի թիվս այլ բացասական հետևանքների, դրանք երեխային զրկում են ինքնուրույնությունից, ինքնուրույն որոշումներ կայացնելուց: Երեխան տուն է գալիս, որտեղ նրան դիմավորում են հեռուստացույցը, հեռախոսը, պլանշետը, համակարգիչը, զանազան էլեկտրոնային խաղերը: Սա իրողություն է, որից չենք կարող հրաժարվել: Ուշադրությունը շեղվում է կամա, թե ակամա: Սա իրոք մեծ խնդիր է, որն ազդում է կարդալու կարողությունների զարգացման վրա: Երեխան գիրք է կարդում, դաս է սովորում ու միաժամանակ մտածում դրանցից մեկի կամ մի քանիսի մասին: Ինչն էլ կարող է ազդել երեխայի մտքի, ուշադրության սևեռման վրա:

Այս ամենին հասնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է երեխային սովորեցնել տեքստի բովանդակության ընկալման արդյունավետ միջոցներ.

- կարդալ տեքստը՝ ուշադրություն դարձնելով տեքստի մանրամասներին,
- պատասխանել բովանդակությանը վերաբերող հարցերին,
- տրված արտահայտություններից մեկն ընտրել որպես տեքստի վերնագիր,
- գտնել և բացատրել անծանոթ բառերը,
- գտնել տեքստում ամփոփված տեղեկույթի էական և ոչ էական մասերը,
- բնութագրել հերոսներին, կարդալ տեքստի համապատասխան տողերը,

- գտնել նկարազարդման կապը տեսքստի հետ և կարդալ համապատասխան տողերը,
- գտնել և կարդալ հարցերի պատասխանը տեքստերում,
- կարդացածը համադրել սեփական փորձի հետ։

Դասագրքում բազմաթիվ են կարդալու կարողությունների զարգացմանը նպատակաուղղված միջոցներն ու ձևերը։ Ներկայացնենք դրանցից մի քանիսը։

1. Դասանյութերի, տարաբնույթ տեքստերի ընթերցումը՝ բարձրաձայն, լուռ, դադարներով, ուղղորդող հարցերով, դերերով, շարունակելով, ընտրողաբար։

Նշելի է, որ տեքստերն իրենց բնույթով համապատասխանում են երեխաների հետաքրքրություններին ու նախասիրություններին, լի են հումորով, զվարճալի պատմություններով, աշխույժ երկխոսություններով, անսպասելի իրադարձություններով և անսովոր լուծումներով, հետաքրքիր տեղեկություններով և գիտահանրամատչելի նյութերով։ Այս ամենը նպաստում է, որ երեխաները կարդան սիրով և հաճույքով։

2. Դասանյութերի, տեքստերի ընթերցմանը, վերընթերցմանը և ընկալմանը ուղղված հարցերն ու առաջադրանքները։ Այստեղ հարցերն ու առաջադրանքները տրվում են այն նպատակներով, որպեսզի երեխաները մի քանի անգամ անդրադառնան տեքստին տարբեր ձևերով։ Տեքստերի վերաբերյալ հարցերը կազմված են Բլյումի սանդղակին համապատասխան՝ պարզից բարդ սկզբունքով։

3. Յուրաքանչյուր դասի ԳԼԽԱԳՐԵՐԻ կետերի ուշադիր կարդալը և դասի նպատակները պարզելը, դրանց շուրջ քննարկումները։ Վերջիններս խթանում և հետաքրքրություն են առաջացնում դասանյութը կարդալու և կարդացածն ընկալելու նկատմամբ։ Հատկանշական է, որ այդ գլխագրերում անպայման կան հումորով գրված կետեր, որոնք երեխաները սիրով կկարդան և, ամենակարևորը, կցանկանան «գնալ կարդացածի հետևից»։ Նույնը վերաբերում է նաև ՄՈՒՏՔԻ ՊԱՏՈՒՀԱՆԻԿՆԵՐԻ գրառումներին։

Այդպիսի խորագրեր կան դասագրքի հետևյալ էջերում.

էջ՝ 7, 11, 14, 18, 22, 25, 31, 34, 38, 42, 45, 48, 52, 56, 61, 66, 73, 76, 79, 82, 88, 92, 94, 98, 101, 107, 111, 114, 118, 121, 126, 130, 135, 138, 142, 146, 149, 154, 158, 161, 164, 169։

4. Որոշ տեքստեր ներկայացված են տեսահոլովակներով և ուղեկցող նկարներով, որոնք նպաստում են, որ երեխան ընկալի և հասկանա կարդացածը, հետաքրքրություն դրսևորի կարդալու նկատմամբ և ցանկանա ինքը ևս կարդա, հասկանալով և արտահայտիչ։

Գեղեցիկ տեսահոլովակներ կան դասագրքում ներկայացված լեզվական գիտելիքների ուսուցման և շուտասելուկները սովորելու համար։ Երեխաները կարդում են շուտասելուկները, ապա, ինչպես ներկայացված է տեսահոլովակում, կարդում են միջին արագությամբ, ապա՝ գերարագ։ Այս ամենը նպաստում է թե՛ բազմաթիվ բարդույթների

հաղթահարմանը, թե՛ վարժ կարդալուն, թե՛ այդ ամենից հաճույք ու բավականություն ստանալուն, թե՛ դասարանում մտերմիկ, ուրախ մթնոլորտ ստեղծելուն:

Նման միջոցների կիրառումը ավելի մատչելի և դյուրին է դարձնում տվյալ լեզվական գիտելիքի ընկալումը, առաջացնում են մեծ հետաքրքրություն և մոտիվացիա:

Յուրաքանչյուր տեքստ, երգ, շուտասելուկ մանրամասն քննարկվում են, վերլուծվում համապատասխան հարցերի և առաջադրանքների միջոցով:

Ներկայացնենք համապատասխան էջերը.

8(Հ-1, 2, 3), 8(2, 3), 9(6), 11(Հ-1, 2, 3, 5), 12(1), 15(Հ-1, 2, 3, 4), 16(6), 19(1, 2), 20(4), 21(7), 22(Հ-1, 2, 3, 4), 24(4), 25(Հ- 1, 2, 3, 4), 26(Հ- 1, 2), 26(Հ- 1, 2, 3, 4, 5, 6, 7), 27(3), 31(1), 32(2), 34(Հ- 1, 2, 3, 4), 35(Հ- 1, 2, 3), 36(3), 37(5), 37(Գիտե՞ս, որ…), 37(6), 38(Հ-1, 2, 3), 39(Հ-1, 2, 3, 4), 39(Հ-1, 2, 3, 4, 5), 40(1), 41(5), 43(5), 44(Գիտե՞ս, որ…), 46(Հ-1, 2, 3, 4), 46(3), 49(Հ-1, 2, 3, 4, 5, 6), 50(3), 54(7), 57(Հ-1, 2, 3, 4, 5), 61(Հ-1, 2, 3, 4), 62(Հ-1, 2, 3, 4, 5, 6, 7, 8), 65(7), 67(Հ-1, 2, 3), 68(Հ-1, 2, 3), 70(5), 71(6), 72(Գիտե՞ս, որ…), 74(Հ-1, 2, 3, 4, 5), 77(Հ-1, 2, 3, 4, 5, 6), 78(1), 80(Հ-1, 2, 3, 4), 81(6), 84(Հ-1, 2), 85(3), 86(6), 90(7), 92(Հ-1, 2, 3), 92(1), 93(1), 95(Հ-1, 2, 3, 4, 5, 6, 7), 97(Հ-1, 2, 3), 97(ԲԱՄ), 98(Հ-1, 2), 99(Հ-1, 2, 3, 4, 5, 6, 7), 100(3), 102(Հ-1, 2, 3, 4), 102(2), 104(6, 7), 106(11), 108(Հ-1, 2, 3, 4), 108(4, 5), 109(6, 9), 111(Հ-1, 2, 3), 113(5, 6), 118(Հ-1, 2, 3), 119(2, 4), 119(Գիտե՞ս, որ…), 122(Հ-1, 2), 124(8, 9, 10), 127(Հ-1, 2), 131(Հ-1, 2, 3, 4), 131(Գիտե՞ս, որ…), 132(3), 136(Հ- 1, 2, 3), 137(Կարդա՛ և սովորի՛ր), 139(Հ-1, 2), 140(2), 147(Հ-1, 2, 3, 4, 5), 147(Հ-1, 2, 3), 148(3), 149(Հ-1, 2, 3), 150(Հ-1, 2), 150(2, 3), 152(9), 155(Հ-1, 2, 3, 4, 5), 155(Հ-1, 2), 156(5), 158(1), 160(Հ-1, 2, 3, 4, 5), 162(Հ-1, 2, 3, 4, 5, 6), 163(6, 7), 166(Հ-1, 2, 3), 166(Հ-1, 2, 3), 168(7), 171(4):

### Գ. Պատմելու/խոսելու կարողություն

Պատմելը խոսքի զարգացման, խոսքին տիրապետելու հիմնական միջոցներից մեկն է: Կան պատմելու շատ տեսակներ.

- մանրամասն կամ բնագրին հարազատ պատմելը (ընդարձակ),
- համառոտ պատմել,
- ընտրովի պատմել,
- դատողություններով կամ մեկնաբանելով պատմել,
- ձևափոխված պատմել,
- ստեղծագործաբար պատմել,
- շարունակելով պատմել,
- պատմել որպես մասնակից (1-ին դեմքով),
- պատմել որպես ականատես (3-րդ դեմքով):

Տարրական դպրոցում առավել գործածական է տեքստի բովանդակության վերարտադրման մանրամասն կամ բնագրին հարազատ պատմելը: Պատմելու կարողության

ձևավորումն ու զարգացումը բավականին բարդ գործընթաց է: Աշակերտների պատմելու կարողության ուսուցումը սկսվում է **տեքստի պարզ վերարտադրումով**: Այս նպատակով ուսուցիչը առաջադրում է պատմության գործողությունների շղթան ներկայացնող և տրամաբանորեն իրար հաջորդող հարցերի շարք՝ քայլաշար: Քայլաշարի հարցերը պետք է կառուցվեն այնպես, որ դրանք ոչ միայն նպաստեն ստեղծագործության **մանրամասն** վերարտադրմանը, այլև գլխավոր միտքը որոշելուն, գործող անձի վարքը վերլուծելուն և դեպքերի պատճառահետևանքային կապերը ճշգրտելուն:

Քանի որ աշակերտները նոր են սովորում պատմել, նպատակահարմար է, որ քայլաշարի հարցերը լինեն մանրամասն (եթե խոսքը համառոտ պատմելու մասին չէ), ներառեն գործողությունների տեսակը, տեղը, ժամանակը, գործող անձանց և այլն:

**Քայլաշարի օրինակ:**

1. Կարդալ տեքստը:
2. Առանձնացնել անծանոթ բառերը:
3. Բացատրել դրանք:
4. Որոշել պատմության թեման՝ ինչի մասին է տեքստը:
5. Առանձնացնել հենակետային բառերը:
6. Տեքստը բաժանել տրամաբանական ամբողջություն ունեցող հատվածների:
7. Վերնագրել դրանք:
8. Պարզել, թե ովքեր են գործող կերպարները, հերոսները:
9. Որոշել, թե երբ են տեղի ունենում դեպքերը:
10. Որոշել, թե որտեղ են տեղի ունենում դեպքերը:
11. Պարզել, թե ինչ են անում հերոսները:
12. Նկարագրել հերոսներին և նրանց արարքները:
13. Ինչ է սովորեցնում տեքստը, ինչ արժեքներ է փոխանցում:

Ներկայացնենք դասագրքում զետեղված որևէ տեքստը պատմելու քայլաշարի կոնկրետ օրինակ:

**ԽՈՍՔԻ ՈՒԺԸ**

Քայլաշարը ուսուցիչը կարող է նախապես գրել գրատախտակին կամ բազմացնել և տալ աշակերտներին:

- Ի՞նչ էր պատահել մայրիկին աշխատանքի վայրում:
- Ի՞նչ արեց նա, երբ տուն եկավ:
- Ի՞նչ արեց աղջիկը, երբ տեսավ մայրիկին անկողնում պառկած:
- Աղջիկն ինչպե՞ս իմացավ, որ մայրիկը ջերմություն չունի:
- Ի՞նչ ասաց աղջիկը խաղալիքներին:
- Ի՞նչ առաջարկեց աղջիկը մայրիկին:
- Ի՞նչ արեց մայրիկը և ինչ ասաց:
- Ի՞նչը օգնեց մայրիկի առողջանալուն:

- Ի՞նչ սովորեցիր այս պատմությունից:

Աշակերտները ուշադիր կարդում են քայլաշարի հարցերը և ըստ ցանկության կամ ուսուցչի ընտրությամբ մի քանի աշակերտ պատմում է տեքստը:

Գործածական է նաև **տեքստի ստեղծագործական վերարտադրումը:** Ներկայացնենք ստեղծագործաբար պատմելուն տանող առաջադրանքներ.

- պատմել տեքստը՝ այն լրացնելով այլ մանրամասներով,
- պատմել իբրև մասնակից,
- պատմել իբրև ականատես,
- պատմել հերոսներից մեկի անունից,
- պատմել նոր հերոս ներմուծելով,
- պատմել որևէ հերոսի հանելով պատմությունից,
- գտնել տեքստի համար հնարավոր շարունակություն,
- լրացնել բաց թողած բառերը և կառուցել տեքստ,
- հորինել պատմություններ նկարաշարերի միջոցով և տրված բառաշարերով,
- փոփոխել տեքստը՝պահպանելով հիմնական միտքը,
- բեմականացնել տեքստը,
- պատմել՝ ներմուծելով բառային նկարչություն:

Նման ձևով տեքստի վերատադրումը նպաստում է ոչ ստանդարտ մտածողության ձևավորմանը, երևույթներն անսովոր տեսանկյունից դիտարկելու կարողությանը, երևակայության զարգացմանը: Այն ընդլայնում է նաև աշակերտների հետաքրքրությունների շրջանակը ուսումնասիրվող նյութի նկատմամբ:

Դասագրքում և այս ձեռնարկում ներկայացված են տեքստը որևէ հերոսի անունից պատմելու բազմաթիվ հետաքրքրաշարժ օրինակներ:

ա. Տեքստը պատմել հերոսներից մեկի անունից

23(1), 28(6), 39(Հ-5), 47(5), 104(7), 152, 162(3):

բ. Տեքստը պատմել՝ ներմուծելով նոր հերոսի

62(Հ-9), 68(Հ-4), 84(Հ-3), 99(Հ-7), 162(Հ-4):

գ. Տեքստի համար գտնել հնարավոր շարունակություն

19(Հ-5), 49(Հ-6), 102:

դ. Հորինե՛լ պատմություն ըստ նկարների, տրված բառերի, սկզբնանկարների

5, 15(2), 16(4), 28(5), 32(3), 33, 40(2), 44(6), 54(8), 55, 63(3), 91, 115(2), 117, 145, 154(1), 163(ԱՊ), 169(1), 171(6):

ե. Տեքստը պատմել հերոսներից մեկի բացակայության դեպքում

26(Հ-4), 39(Հ-5):

զ. Առածներից ո՞րը կընտրվի որպես տեքստի վերնագիր

112(4):

է. Տեքստի բովանդակության հիմնական միտքը վեր հանող հարցեր

111(Հ-4), 118(Հ-4), 122(Հ-4), 127(Հ-3), 150(Հ-3), 165(Հ3):

**Դ. Գրելու ունակություններ**

Գրավոր խոսքը խոսքային գործունեության կարևորագույն բաղադրիչ է և ձևավորվում է նպատակաուղղված ուսուցման շնորհիվ:

Կա գրավորի 4 հիմնական տեսակ.

- արտագրություն (ընդօինակման և ստեղծագործական)
- թելադրություն (հնչյունային, ընտրովի, ազատ, հորինողական առաջադրանքներով)
- փոխադրություն (բնագին հարազատ կամ մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործաբար)
- շարադրություն (ըստ կազմակերպման ձևի՝խմբային, անհատական,

ըստ խոսքի տեսակի՝ պատմողական, նկարագրական, գնահատողական, համակցված, ըստ ոճական առանձնահատկությունների՝ զգացմունքային, կերպարային, գործնական)

Բնականաբար, գրելը համատեղվում է կարդալու հետ: Գրավոր խոսքի արտահայտչականությունը կախված է բառապաշարի հարստությունից, իսկ դա էլ, իր հերթին, կախված է կարդալուց: Դասագրքում զանազան միջոցներով երեխայի բառապաշարում ավելանում են նորանոր բառեր և ամրապնդվում է դրանց ճիշտ գրությունը:

Կարևորվել է նաև կետադրական նշանների իմացությունը: Դրանց մասին գրվել են հանելուկներ, տեքստեր և բազմաթիվ առաջադրանքներ:

Գրավորի գործընթացը՝ համեմատած կարդալու, պատմելու գործընթացի հետ, բավականին բարդ է: Երեխաները հաճախ խուսափում են գրավոր խոսք ձևակերպելուց: Այդ պատճառով անհրաժեշտ է կիրառել ուսումնական աշխատանքի տարբեր հնարներ և միջոցներ, տարաբնույթ առաջադրանքներ, որոնք կխրախուսեն երեխաների գրելու գործընթացը:

Այժմ մանրամասն ներկայացնենք գրելու ունակությունների ձևավորման ու զարգացման համար դասագրքում առկա միջոցները:

1. Գրել հարցերի պատասխանները. էջ՝ 8(1), 71(7), 114(1), 171(4):

2. Ավարտել նախադասությունները (ԴՔԻՊ). էջ՝ 10, 24, 41, 44, 47, 51, 54, 65, 72, 75, 81, 87, 93, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 163, 168:
3. Կազմել նախադասություններ. էջ՝ 8(2), 13(4), 15(2), 21(7), 24(4), 41(6), 43(4), 50(1), 64(6), 69(3), 74(1), 78(1), 85(5), 89(5), 96(1), 99(1), 102(1), 109(7), 122(1), 123(2), 133(4), 140(1), 151(4), 152(8), 162(4), 166(2), 172(7):
4. Աշխատանք վանկերով. էջ՝ 9(4), 27(2), 148(1), 168(6):
5. Գրել հարցեր. էջ՝ 103(3), 167(4):
6. Կարդալ, դուրս գրել, արտագրել բառեր, նախադասություններ, քառատողեր. էջ՝ 9(5,6), 12(1,2), 15(3), 16(6), 19(3), 20(5), 26(1), 27(3,4), 40(1), 47(4), 50(3, 4), 59(6), 63(2), 65(7), 69(4), 75(3,4), 78(2), 81(5,6), 93(1.2), 97(6,8), 100(3), 109(8), 113(7), 119(4), 120(6), 141(6), 151(7), 156(5):
7. Գրել նկարներում պատկերված առարկաների անունները. էջ՝ 10(7), 23(2), 29(10), 31(1), 40(3), 64(4), 80(2), 96(4), 122(1), 123(4), 132(1), 143(5), 168(6):
8. Լրացնել աղյուսակը. էջ՝ 13(4,6), 17(8), 17(), 24(3), 32(5), 36(3), 54(7), 58(2), 69(4), 70(5), 80(1), 87(7), 103(4), 108(1), 119(3), 132(1), 134(8), 166(1), 170(2), 171(4):
9. Վերականգնել «քանդված» նախադասությունը. էջ՝ 21(8), 43(5), 109(6):
10. Արտագրել՝ լրացնելով բաց թողած տառերը. էջ՝ 89(6), 102(1), 116(5), 141(4), 171(4):
11. Գրել փոքրիկ պատմություն. էջ՝ 21(8), 30(11,14), 32(3), 50(2), 51(5), 65(9), 72(8), 85(6), 100(6), 112(1), 116(4), 124(7), 136(20, 142(1), 160(3):
12. Գրել, վերականգնել, արտագրել բառերը. էջ՝ 24(5), 36(2), 37(7), 43(2), 58(3,4), 84(2), 120(5), 124(6), 129(6), 132(2), 137(3,5), 141(5), 148(3), 151(5), 156(4,6):
13. Վերծանել նկարելուկը և գրել. էջ՝ 12(2), 17(7), 30(12), 46(2), 89(3), 96(3), 100(8), 113(8), 156(3):
14. **Փոխակերպում** բառախաղը. էջ՝ 19(1,2), 53(5), 64(5), 104(6), 119(2), 124(10), 127(1), 163(6):
15. Լրացնել խաչբառը. էջ՝ 32(4), 47(6), 60(8), 90(8), 106(9), 125(11), 144(6), 157(7), 172(9):
16. Գրել բառազույգերով. էջ՝ 53(2), 58(2):
17. Շարունակել ըստ օրինակի. էջ՝ 75(2):
18. Վերծանել խառնագիրը. էջ՝ 89(6), 158(1):
19. **Բառքամոցի** բառախաղը. էջ՝ 102(2), 108(4), 132(2), 160(2):
20. Կազմել բառակապակցություններ, օգտագործել նախադասությունների մեջ. էջ՝ 32(2), 29(10), 58(3), 85(5), 102(1), 129(7):

**Ե. Լեզվական գիտելիքներ**

Դասագրքում լեզվական համակարգը կառուցված է հնչյունաբանություն, բառագիտություն, նախադասություն սխեմայով: Լեզվական բոլոր հասկացությունները նախ կրկնվում են, ապա զանազան հետաքրքրաշարժ միջոցներով ամրապնդվում է դրանց իմացությունը: Այդ միջոցներն են՝ լեզվական տարբեր հասկացությունների մասին երգեր և տեսահոլովակներ, «Բառը ափի մեջ», «Կարդա և սովորիր» խորագրերի նյութեր, վանկախաղեր ու բառախաղեր, հանելուկներ ու շուտասելուկներ, բառքամոցի ու փոխակերպում, նկարելուկներ ու խաչբառեր, բառաղյուսակներ ու գծապատկերներ, տեսախաղեր:

Դասագրքում նախ ներկայացվել են հնչյուն-տառ հասկացությունը և ձայնավորների ու բաղաձայնների ուղղագրության ուսուցումը, այնուհետև լեզվական մյուս գիտելիքները:

Ուղղագրությունը համընդհանուր ճանաչում ունեցող կանոնների մի համակարգ է: Մեր այսօրվա ուղղագրությունը հնչյունական լինելով հանդերձ, ունի նաև մասնակի կանոններ ու նորմատիվներ, որոնցով որոշվում է այս կամ այն տառի գործածությունը:

Լեզվի հնչյունային համակարգի և այբուբենի լրիվ համապատասխանություն գոյություն չունի: Բառերի հնչողությունը ժամանակի ընթացքում փոփոխվում է և խզում է առաջանում դրանց գրային արտահայտության հետ: Այդ պատճառով էլ նման բառերի մեջ տառերի գործածությունը որևէ հնարով չի ստուգվում և կարգավորվում է որոշակի կանոններով:

Ուղղագրության ուսուցումը տարրական դասարաններում շատ կարևոր է լեզվի իմացության գործնական տեսանկյունից:

Դրան հասնելու համար ավանդաբար կիրառվում են տարբեր մեթոդներ և դրանց զուգակցումը: Օրինակ՝ **ընդօրինակման մեթոդով** ուսուցանելիս տարբեր ձևերով անընդհատ կրկնվում են ճիշտ գրված բառապատկերները՝ դրանք հիշողության մեջ ամրակայելու համար: Ներկայացվող դասագրքում այդ կրկնությունները սոսկական կրկնություններ չեն, որոնք ինչ-որ չափով ձանձրալի են երեխայի համար, և դրանց արդյունավետությունը որոշակի առումով այնքան էլ բարդ չէ: Դասագրքում կիրառվում են տարաբնույթ կրկնություններ՝ արտագրություն, բաց թողած տառերի լրացման առաջադրանքներ, խառնագրեր, նկարելուկներ, բառաղյուսակներ, վանկախաղեր, բառքամոցի բառախաղեր, և այլն: Նման առաջադրանքները երեխան կատարում է հաճույքով, տևականորեն կենտրոնացնում է ուշադրությունը տվյալ բառապատկերը ստանալու համար, ապահովվում է հուզական ընկալումը: Կամա, թե ակամա, ճիշտ բառապատկերները ամրակայվում են երեխայի հիշողության մեջ:

Ընդօրինակման մեթոդին զուգակցվում է **հնչյունային մեթոդը,** որով ապահովվում է երեխայի հնչյունային լսողության ճիշտ զարգացումը: Այս մեթոդի հիմքում այն պարզ գաղափարն է, որ մարդը կյանքում ավելի շատ լսելով է գրում, քան տեսնելով: Ընդ որում, ինքնուրույն գրելու ժամանակ ևս գրողը լսում է իր ներքին խոսքը, այսինքն՝ կատարում

է ինքնաթելադրություն: Այս մեթոդով առաջնորդվելիս առավելությունը տրվում է թելադրություններին:

Դասագրքում բազմաթիվ են այնպիսի դասանյութերը, որոնք երեխան QR կոդերի միջոցով կարող է լսել և դիտել: Դա ևս նպաստում է երեխայի հնչյունային լսողության զարգացմանը:

Ինչպես վերևում նշեցինք, նման բառերի մեջ տառերի գործածությունը որևէ հնարով չի ստուգվում և կարգավորվում է որոշակի կանոններով: Այս դեպքում հանդես է գալիս **կանոնարկման մեթոդը:** Այսինքն, ուղղագրության ուսուցումն իրականացվում է համապատասխան կանոնների ուսուցմամբ և դրանց պահպանումով: Այս մեթոդով հիմնականում ուսուցանվում է ձայնավորների ուղղագրությունը:

Ձայնավորների և բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ սահմանված են ուղղագրական կանոններ: Դրանց գործնական դրսևորումները դասագրքում ներկայացված են բազմաբնույթ հետաքրքրաշարժ առաջադրանքների միջոցով:

Դասագրքում այդպիսի ուսուցմամբ, գործնական ճանապարհով, ներկայացված են **Է**-ի, **Ե**-ի, **Օ**-ի, **Ո**-ի, **Ը**-ի, **և**-ի ուղղագրության կանոնները:

Բաղաձայնների ուղղագրության ուսուցումը հիմնականում իրականացվում է ԱՉՔԻ ԱՌԱՋ խորագրով:

Ուղղագրության ուսուցումն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է համադրել բոլոր մեթոդները, դրանք լրացնել բազմաբնույթ առաջադրանքներով, կիրառել տեսալսողական հետաքրքրաշարժ միջոցներ՝ դրանք համապատասխանեցնելով տվյալ թեմայի պահանջներին և սովորողների առանձնահատկություններին:

Լեզվական գիտելիքներին տիրապետելը ապահովում է գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվելուն, տեսակետներն ու գիտելիքները, սեփական կարծիքը գրագետ ներկայացնելուն:

**1. Հնչյուն-տառ հասկացությունը**

Էջ 8 (3) - Հնչյուն-տառի երգը: Տեսահոլովակ: (Ինչով են տարբերվում հնչյունն ու տառը)

Էջ 9 (5) -Աղյուսակ: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 15 (3) - «Դեպի վեր» առաջադրանք: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 23 (2) - «Դեպի վեր» առաջադրանք»: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 29 (10) - «Դեպի վեր» առաջադրանք»: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 50 (4 ) - «Դեպի վեր» առաջադրանք»: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

էջ 54 (7) - «Դեպի վեր» առաջադրանք»: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

**2. Ձայնավորների ուղղագրության ուսուցում**

**ա) «Ձայնավորներ» հասկացությունը**

1. Երգ հայերենի ձայնավորների մասին: էջ 12 (1):

2. Առանձնացնել ձայնավորով և բաղաձայնով սկսվող բառերը: էջ 13 (4):

3. Տեքստից դուրս գրել բառեր, որոնք ունեն մեկ ձայնավոր: էջ 15(3):

4. Գրել բառեր, որոնք ունեն որոշակի թվով ձայնավորներ: էջ 15 (3):

5. Բառերում հաշվել հնչյունների և տառերի քանակները: էջ 15 (3):

6. Բառերից հանվել են ձայնավորները: Վերականգնել բառերը: էջ 58 (3):

**բ) Է-ի, Ե-ի ուղղագրություն**

1. Կարդալ «Ե-ի երգը», դիտել տեսահոլովակը: Ուշադրություն դարձնել Ե-ի հնչումին՝ ինչպես է **ե**-ն հնչում բառասկզբում, բառամիջում, բառավերջում: էջ 20 (4):

2. Դուրս գրել Ե-ով սկսվող բառերը: Ուշադրություն դարձնել, թե որ բառերի սկզբում է Ե-ն հնչում **յէ**, որ բառերի սկզբում՝ **է**: էջ՝ 20 (5):

3. Գրել առարկաների անունները: Դրանք սկսվում են Է-ով կամ Ե-ով: էջ 23 (2):

4. Բառակապակցությունները գրել մեկ բառով: Բառերն սկսվում են Է-ով կամ Ե-ով: էջ 23 (2):

5. Բառերում հաշվել հնչյունների և տառերի քանակները: էջ 23 (2):

6. Արտագրել բանաստեղծությունը: էջ 69 (4):

7. Լրացնել աղյուսակը: էջ 69 (4):

**գ ) Օ-ի, Ո-ի ուղղագրություն**

1. Արտագրել նախադասությունը, ընդգծել Ո պարունակող բառերը: էջ 26 (1):

2. Կարդալ «Ո-ի երգը», դիտել տեսահոլովակը: Մի սյունակում գրել այն բառերը, որտեղ Ո-ն հնչում է **վօ**, մյուս սյունակում՝ այն բառերը, որտեղ Ո-ն հնչում է **օ**: (Ո-ի հնչողությունը բառի մեջ տարբեր դիրքերում): էջ 27 (3):

3. Լրացնել բաց թողած տառերը: էջ 27 (4):

4. Գրել առարկաների անունները: Դրանք սկսվում են Օ-ով կամ Ո-ով: էջ 29 (10):

5. Բառակապակցությունները գրել մեկ բառով: Բառերն սկսվում են Օ-ով կամ Ո-ով: էջ 29 (10):

6. Բառերում հաշվել հնչյունների և տառերի քանակները: էջ 29 (10):

**դ) Ը-ի ուղղագրությունը**

1. Հանելուկ Ը-ի մասին: էջ 38 (ՄՊ):

2. «Տա՞ռն էլ գլխարկ ունենա» տեքստը Ը-ի մասին: էջ (38-39):

3. Ի՞նչ կպատահեր, եթե Ը-ն չունենար գլխարկ: էջ 38 (Հ-5):

4. Պատմությունը պատմել Ը-ի անունից: էջ 38 (Հ-6):

5. Կարդալ «Ը-ի երգը», դիտել տեսահոլովակը: էջ 40 (1):

6. Գտնել բառեր, որտեղ Ը-ն անտեսանելի գլխարկ է դրել: էջ 40 (1):

7. Շարունակել պատմությունը նկարի շուրջ: Գլխավոր դերերից մեկը կատարում է Ը-ն: Ը-ի վանկարար դերը: էջ 40 (2):

8. Վանկատել տրված բառերը: Ը-ի վանկարար դերը: էջ 40(3), 168(6):

9. «Կենդանի մոդելներով» վանկատել բառերը: էջ 41 (4):

10.Կարդալ շուտասելուկը, դիտել տեսահոլովակը, արտասանել: էջ 41 (5):

11. Վանկատել գաղտնավանկի **ը** ունեցող բառերը: էջ 168 ( 6):

12. Անտեսանելի Ը ունեցող բառերով կազմել նախադասություն: էջ 168 (6):

**ե) և-ի ուղղագրությունը**

1. Կարդալ «և-ի երգը», դիտել տեսահոլովակը: էջ 50 (3):

2. Երգի տեքստից դուրս գրել երկու բառ, որոնցից մեկում և-ը երկու հնչյուն է նշում՝ **էվ**, մյուսում՝ երեք՝ **յէվ**: էջ 50 (3):

3. Տեքստից դուրս գրել **և** պարունակող բառեր, հաշվել հնչյունների և տառերի քանակները: էջ 50 (4):

**3.Բաղաձայնների ուղղագրության ուսուցում**

**ա ) «Աչքի առաջ» խորագրի բառերը**

Յուրաքանչյուր դասանյութում հանդիպում են գրությամբ ու արտասանությամբ տարբերվող, ուղղագրական դժվարություններ ունեցող բառեր: Այդպիսի բառերը ձեռագիր տառատեսակով ներկայացվում են հատուկ շրջանակի մեջ «Աչքի առաջ» խորագրով: Դասագրքում դրանք ութսունութն են:

*Այլուր, այլևս, այսօր, աղջիկ, անընդհատ, անձրև, ամբողջ, ամենաարագ, անմիջապես, աշխարհ, առաջ, առաջին, առաջնորդ, առողջանալ, արդեն, արթնանալ, արջուկ, արև, բարձել, բարձր, բարձրանալ, բարև, բյուրեղ, բույն, գյուտարար, դադարել, դարձյալ, դարձնել, դեղձ, եղբայր, երբեմն, երբեք,*

*երկվորյակ, Երևան, երևի, ընդհանուր, ընթացիկ, թագավոր, թեև, թռչել, թրթռալ, իջնել, խաղընկեր, խնդրել, խորհրդավոր, խրճիթ, խցկվել, կառուցվածք, կառք, կարդալ, կարագ, կեղև, կեցցե, հաղթել, համբուրել, հարձակվել, հարյուր, հիանալ, հեքիաթ, հյուր, հոգատար, Հովհաննես, ճամփա, ճանապարհ, մարդիկ, մինչև, նաև, ներքև, նկարագրել, շոգ, շուրջբոլորը, չարաճճի, չէ, պաշտպանել, Սևան, վարդ, վերադառնալ, վերջ, վերջացնել, վերջին, տերև, ուղղել, փախչել, փորձ, փորձել, քուջուջ, օրորվել:*

«Աչքի առաջ» խորագրի բառերի ուսուցանման համար դասագրքում առկա են բազմաբնույթ առաջադրանքներ՝ արտագրություններ, նախադասությունների կազմում, աղյուսակային առաջադրանքների կատարում, նկարելուկների կազմում և լուծում, խաչբառերի լուծում, վերհիշում ինքնաթելադրությամբ, փոքրիկ պատմությունների հորինում, բաց թողած տառերի լրացում, խառնագրերի վերծանում, հանելուկների գուշակում, բառքամոցի խաղեր, բառակապակցությունների կազմում, աուդիոտեքստերի ունկնդրում, բազմազան երգերի ունկընդրում և տեսահոլովակների դիտում, և այլն:

Ներկայացնենք նման առաջադրանքներից մի քանիսը:

1. Կազմել նախադասություններ՝ օգտագործելով «Աչքի առաջ» խորագրի բառերը: Էջ 8(2), 13(3), 41(6), 89(5), 132(1):
2. Արտագրել «Աչքի առաջ» խորագրի բառերը: Էջ 9(5):
3. Օգտվելով նկարներից՝ «Աչքի առաջ» խորագրի բառերով լրացնել նախադասությունները: Էջ 15(2), 133(4):
4. Բառաղյուսակում գտնել «Աչքի առաջ» խորագրի բառերը: Էջ 32(2):
5. Փոփոխելով «Աչքի առաջ» խորագրի բառերի առաջին տառերը՝ ստանալ նոր բառեր: Էջ 43(2):
6. Վերծանել նկարելուկները: Էջ՝ 46(2), 89(3), 100(7):
7. Արտագրել «Աչքի առաջ» խորագրի բառեր պարունակող քառատողը: Էջ 47(4), 69(4), 109(9), 120(6):
8. Լրացնել խաչբառը՝ օգտագործելով «Աչքի առաջ» խորագրի բառեր: Էջ՝ 47(4), 69(4), 109(9), 120(6):
9. «Աչքի առաջ» խորագրի բառի ներկայացում նկարելուկի տեսքով: Էջ 53(4):
10. Կարդալ, վերհիշել «Աչքի առաջ» խորագրի բառերը: Էջ 54(7):
11. «Աչքի առաջ» խորագրի բառերից հանվել են ձայնավորները: Վերականգնել և գրել: Էջ 58(3):
12. «Աչքի առաջ» խորագրի բառերով կազմել փոքրիկ, զվարթ պատմություն: Էջ 65(9), 72(8), 124(7):
13. Հիշել «Աչքի առաջ» խորագրի բառերը՝ կատարելով աղյուսակային առաջադրանքը: Էջ 69(2), 70(5):
14. Օգտվելով տեքստից՝ լրացնել նախադասությունում բաց թողած բառերը: Էջ 64(6), 69(3):
15. Արտագրել «Աչքի առաջ» խորագրի բառ պարունակող նախադասությունը: Էջ 63(2):

16. Տեքստից դուրս գրել «Աչքի առաջ» խորագրի բառեր: Էջ 84(2):
17. Վերծանել խառնագիրը: Էջ 89(4):
18. Արտագրել բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը: Էջ 89(6), 116(5), 141(4), 171(4):
19. Կարդալ «Բառը ափի մեջ» խորագրով ներկայացվող նյութը: Էջ 97, 155:
20. Աշխատանք «Սովորիր հարցեր տալ» խորագրով: Էջ 29(9), 59(5), 70(5), 103(3), 167(4):
21. Աշխատանք «Բեմականացնել խնդուկը» խորագրով: Էջ 106:
22. Հանելուկի գուշակում: Էջ 108(5):
23. Աշխատանք «Բառքամոցի» բառախաղի շուրջ: Էջ 108(4):
24. «Աչքի առաջ» խորագրի բառերով կազմել բառակապակցություններ: Էջ 129(7):
25. «Աչքի առաջ» խորագրի բառերի հնչյունային մեթոդով ուսուցում աուդիոտեքստերի միջոցով: Էջ 7, 25, 38, 42,48, 56, 66, 92, 104, 118, 121, 146, 161:
26. «Աչքի առաջ» խորագրի բառերի հնչյունային մեթոդով ուսուցում երգերի միջոցով: Էջ 8, 12, 20, 27, 36, 40, 50, 65, 75, 77, 93, 100, 151, 156:

**4. Այբբենական կարգ**

Էջ 64 (4) – Բառերը դասավորել այբբենական հերթականությամբ:

**5. Տառանուններ**

Էջ 124 (6) – Տառանունների փոխարեն գրել համապատասխան տառը և կարդալ բառերը:

**6. Վանկ**

Էջ 9 (4) – Վանկախաղ: (Կա նաև այս խաղի էլեկտրոնային տարբերակը)

Էջ 10 (7) - Վանկախաղ: (Կա նաև այս խաղի էլեկտրոնային տարբերակը)

Էջ 27 (2) - Վանկախաղ: (Կա նաև այս խաղի էլեկտրոնային տարբերակը)

Էջ 36 (3) – «Վանկի երգը» Աղյուսակ: (Վանկատման պարզագույն կանոնները) Տեքստից միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ բառերի ընտրություն:

Էջ 40 (2) – Ը-ի վանկարար դերը:

Էջ 40 (3) – Ը-ի վանկարար դերը:

Էջ 41 (4) – Ը-ի վանկարար դերը:

Էջ 47 (4) Քառատողի տողերի մեջ հաշվել վանկերի քանակները:

Էջ 54 (7) – Աղյուսակ: (Լրացնել միավանկ, երկվանկ, եռավանկ բառերով)

Էջ 63(2) – Վանկատել բառը:

Էջ 148 (1) – «Վանկախաղ»: Խառը կարգով տրված վանկերով կազմել բառեր:

Էջ 168 (6) – Վանկատել գաղտնավանկի **ը** ունեցող բառերը։

**7. Բառ**

Էջ 8 (2) – Օգտագործելով տվյալ բառը՝ կազմել նախադասություն։

Էջ 9 (4) – Կազմել եռավանկ բառեր՝ օգտագործելով տրված վանկերը։

Էջ 9 (5) – Գրել բառեր, որոնք համապատասխանում են աղյուսակի պահանջներին։

Էջ 10 (7) – Միավանկ, բազմավանկ բառերի խմբավորում։

Էջ 12 (1) – Միավանկ, բազմավանկ բառերի առանձնացում։

Էջ 12 (2) – Կազմել բառեր՝ վերծանելով նկարելուկները։

Էջ 15 (3) – Գրել բառեր, որոնք ունեն մեկ ձայնավոր հնչյուն։

Էջ 17 (7) – Վերծանելով նկարելուկները՝ ստանալ նույն իմաստն ունեցող բառեր։

Էջ 18 (9) – Տեքստը՝ բառակազմական խաղ։

Էջ 19 (1-2) – Բառակազմական խաղ՝ փոխակերպում։

Էջ 19 (3) – Հաշվել տողերում բառերի քանակները։

Էջ 20 (5) – Աղյուսակային առաջադրանք **ե** պարունակող բառերի ուղղագրության վերաբերյալ։

Էջ 23 (2) – «Դեպի վեր» առաջադրանք։ (Բառակապակցությունները գրել մեկ բառով՝ սկսվում են **է**-ով կամ **ե**-ով)

Էջ 29 (10) – «Դեպի վեր» առաջադրանք։ (Բառակապակցությունները գրել մեկ բառով՝ սկսվում են **օ**-ով կամ **ռ**-ով)

Էջ 32 (2) – Բառաղյուսակ։ Գտնել «Աչքի առաջ» խորագրի բառերը։

Էջ 35 (1) – Գրել առարկաների անունները։

Էջ 40 (3) – Վանկատել բառերը, բաժանել խմբերի։

Էջ 41 (4) – Վանկատել գաղտնավանկի **ը** ունեցող բառերը «կենդանի տառերի» միջոցով։

Էջ 43 (2) – Կազմել բառեր՝ փոխելով բառի առաջին տառը։

Էջ 50 ( 3) - **և** պարունակող բառերի հնչումը։

Էջ 50 (4) - **և** պարունակող բառերի հնչումը։

Էջ 53 (5) – «Փոխակերպում» բառախաղի միջոցով նոր բառերի կազմում։

Էջ 54 (7) – «Աչքի առաջ» խորագրի բառերով լրացնել աղյուսակը։

Էջ 58 (1) – Բառերը վերագրել հերոսներին։

Էջ 58 (3) – Վերականգնել բառերը՝ ավելացնելով ձայնավորները։

Էջ 19 (3) – Հաշվել բառերի քանակը։

Էջ 64 (4) – Անվանել նկարներում պատկերված առարկաները։

Էջ 64 (5) – Բառակազմական խաղ՝ «Փոխակերպում»։

Էջ 65 (9) – Կազմել նախադասություն տրված բառերով։

Էջ 69 (3) – Լրացնել բաց թողած բառերը։

Էջ 71 (6) – Կարդալ տրված բառերը։

Էջ 71 (7) – Բառերը խմբավորել և գրել աղյուսակում։

Էջ 72 (8) – Տրված բառերով հորինել պատմություն։

Էջ 74 (1) – Լրացնել բաց թողած բառերը։

Էջ 78 (2) – Կազմել բառերի հոգնակին։

Էջ 81( 5) – Դուրս գրել առարկա ցույց տվող բառերը;

Էջ 84 (2) – Դուրս գրել անձ և իր ցույց տվող բառեր։

Էջ 89 ( 3) – Վերծանելով նկարելուկները՝ կազմել բառեր։

Էջ 89 ( 4) – Բառախաղ՝ «Խառնագիր»։

Էջ 89 (5) – Կազմել նախադասություն տրված բառերով։

Էջ 89 (6) – Լրացնել բառերում բաց թողած տառերը։

Էջ 90 (8) – Առարկաների անուններով լրացնել խաչբառը։

Էջ 96 (5) – Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր։

Էջ 100 (4) – Տեքստից գտնել իրարից մեկ տառով տարբերվող բառեր։

Էջ 100 ( 7) – Վերծանելով նկարելուկը՝ կազմել բառ։

Էջ 108 (4) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 102 ( 1) – Լրացնել բաց թողած բառերը։ Կազմել բառակապակցություններ։

Էջ 102 (2) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 104 (6) - «Փոխակերպում» բառախաղը։

Էջ  108 (4) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 109 ( 8) – Հաշվել բառերի քանակը նախադասությունների մեջ, թիվը գրել բառերով։

Էջ 116 ( 5) – Լրացնել բառերում բաց թողած տառերը։

Էջ 119  (2) – «Փոխակերպում» բառախաղը։

Էջ 120 (5) – Լրացնել բաց թողած բառերը։

Էջ 123 (2) – Համապատասխան բառերը տեղադրել նախադասության մեջ։

Էջ 123 (4) – Գրել նկարներում պատկերված առարկաների անունները։

Էջ 124 ( 6) – Վերականգնել բառերը՝ տառանունների փոխարեն գրելով համապատասխան տառը։

Էջ 124 (7) – Տրված բառերով հորինել պատմություն։

Էջ 124 ( 10) – «Փոխակերպում» բառախաղը։

Էջ 127 (1) – «Փոխակերպում» բառախաղը։

Էջ 129 (6) – Բառի առաջին տառը փոխելով ստանալ նոր բառեր։

Էջ 129 (7) – Տրված բառերով կազմել բառակապակցություններ։

Էջ 132 ( 1) – Նկարներում պատկերված առարկաների անուններով լրացնել աղյուսակը։

Էջ 132 (2) – Արտագրել բառերը, ընդգծել ընդհանուր բառամասը։

Էջ 132( 3) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 137 (3) – Տրված արմատներով կազմել նոր բառեր։

Էջ 137 (4) – Վերծանել նկարելուկը՝ կազմելով բառ։

Էջ 137 ( 5) – Տրված արմատով կազմել նոր բառեր։

Էջ 141 (4) – Լրացնել բաց թողած տառերը։

Էջ 141 ( 6) – Թիվը գրել տառերով։

Էջ 143 ( 5) – Գրել նկարներում պատկերված առարկաների անունները։

Էջ 148 ( 3) – Կարդալ բառերը, ընդգծել արմատները։

Էջ 150 ( 3) – Գրել, թե ինչ բառ է պատկերված նկարելուկով։

Էջ 151( 4) – Տրված բառաշարքի բառերը տեղադրել նախադասությունների մեջ։

Էջ 156 (3) – Գտնել, թե ինչ բառ է պատկերված նկարելուկով։

Էջ 156 (6) – Կազմել բառեր՝ օգտագործելով տրված արմատները։

Էջ 158 (1) – «Խառնագիր» բառախաղը։

Էջ 160 (2) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 171 (4) – Արտագրել՝ լրացնելով բաց թողած տառերը։

**8. Բառակապակցություն**

Էջ 23 (2) – Տրված բառակապակցությունները գրել մեկ բառով։

Էջ 29 (10) – Տրված բառակապակցությունները գրել մեկ բառով։

Էջ 58 ( 3) – Տրված բառերով կազմել բառակապակցություններ։

Էջ 85 (5) – Ստացված բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ։

Էջ 102 (1) – Կազմած բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ։

Էջ 129 ( 7) – Տրված բառերով կազմել բառակապակցություններ։

**9. Հակառակ իմաստ ունեցող բառեր**

Էջ 24 (3) – Տեքստից դուրս գրել տրված բառերի «հակառակորդ» բառերը։

Էջ 58 (2) – Բառաղյուսակից դուրս գրել հակառակ իմաստ ունեցող բառազույգեր։

Էջ 93 (1) – Երգից դուրս գրել հակառակ իմաստ ունեցող բառազույգեր։

Էջ 144 ( 6) – Գրել հակառակ իմաստ ունեցող բառը։

**10. Նույն իմաստ ունեցող բառեր**

Էջ 17 (7) – Լուծելով նկարելուկները՝ կստանաս երկու նույնիմաստ բառ։

**11. Առարկա ցույց տվող բառեր**

Էջ 64 (4) – Անվանել առարկաները։ Դրանք առարկա ցույց տվող բառեր են։

Էջ 64 (6) – Նախադասությունները լրացնել առարկա ցույց տվող բառերով։

Էջ 65 (7) – «Առարկա ցույց տվող բառերի երգը»

Էջ 67 ( 6) – Առարկա ցույց տվող բառերի հարցերը։

Էջ 71 (7) – Առարկա ցույց տվող բառերով լրացնել աղյուսակը։

Էջ 80 (2) – Գրել նկարներում պատկերված առարկաների անունները։

Էջ 81 (5) – Դուրս գրել առարկա ցույց տվող բառերը։

Էջ 96 (5) – Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր։

Էջ 106 (9) - Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր և լրացնել խաչբառը։

Էջ 128 (5) – Խմբավորել առարկա ցույց տվող բառերը։

Էջ 132 (1) – Բառերը լրացնել աղյուսակում։

Էջ 143 (5) – Առարկա ցույց տվող բառերին ավելացնել ածանցներ։

**12. Եզակի – հոգնակի**

Էջ 71 (6) – Գործնական ծանոթացում եզակի և հոգնակի թվով բառերին։

Էջ 75 (2) – Շարունակի՛ր։ Գործնական ծանոթացում եզակի և հոգնակի թվով բառերին։

Էջ 75 (3) – «Եզակիի և հոգնակիի երգը»։ Ի՞նչ է եզակին, ի՞նչ է հոգնակին։

Էջ 75 (4) – Եզակիի և հոգնակիի գործնական ճանաչում։

Էջ 78 – Կարդա՛ և սովորի՛ր։

Էջ 78 (2) – Եզակի թվով գրված բառերը դարձնել հոգնակի թվով։

Էջ 103 (5) – Եզակի թվով գրված բառերը դարձնել հոգնակի թվով։

**13. Անձ և իր ցույց տվող բառեր**

Էջ 84 (2) – Դուրս գրել անձ և իր ցույց տվող բառեր։

Էջ 87 (7) – Տեքստից ընտրելով անձ և իր ցույց տվող բառեր՝ լրացնել աղյուսակը։

**14. Գործողություն ցույց տվող բառեր**

Էջ 96 (4) – Գործնական ծանոթացում գործողություն ցույց տվող բառերին։

Էջ 96 (5) – Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր։

Էջ 100 (3) – «Գործողություն ցույց տվող բառերի երգը»։

Էջ 102 (1) – Գործողություն ցույց տվող բառերով կազմել բառակապակցություններ։

Էջ 109 (7) – Գործողություն ցույց տվող բառերը տեղադրել նախադասությունների մեջ։

Էջ 112 (3) – Նկարազարդման մեջ գտնել գործողություն ցույց տվող բառեր։

**15. Հատկանիշ ցույց տվող բառեր**

Էջ 119 (3) – Հատկանիշ ցույց տվող բառերի գործնական ծանոթացում։

Էջ 120 (5) – Առարկա ցույց տվող բառերի համար գրել հատկանիշ ցույց տվող բառեր։

Էջ 122 (1) – Բառին վերագրել հատկանիշներ։

Էջ 123 (39) – Կազմել հատկանիշ ցույց տվող բառեր։

**16. Բառի արմատ**

Էջ 132 (2) – Գործնական ծանոթացում նույնարմատ բառերի ընդհանուր մասերին։

Էջ 137 (Կարդա՛ և սովորի՛ր) – Գործնական ծանոթացում բառի արմատին։

Էջ 137 ( 3) – «Դեպի վեր» առաջադրանք։ (Ընդգծել բառերի արմատները։ Այդ արմատներով կազմել նոր բառեր։)

Էջ 137 (5) – Տրված արմատով կազմել նոր բառեր։

Էջ 141( 5) - Գտնել տրված բառերի արմատները։

Էջ 148 (2) - Գտնել տրված բառերի արմատները։

Էջ 151 ( 6) – Գտնել բառի արմատը։

**17. Ածանցավոր բառեր**

Էջ 143 (5) – Բառերին ավելացնել մասնիկներ և ստանալ նոր բառեր։ Գործնական ծանոթացում ածանցավոր բառերին։

Էջ 151 (5) Գործնական ծանոթացում ***ածանց*** բառին։

Էջ 151 (6) – Գտնել բառի արմատը և ածանցը։

Էջ 151 (7) – «Ածանցավոր բառերի երգը»։

**18. Պարզ բառեր**

Էջ 148 (3) – Գործնական ծանոթացում պարզ բառերին։

Էջ 157 (7) – Պարզ բառերից կազմել բարդ բառեր, լրացնել խաչբառը։

**19. Բարդ բառեր**

Էջ 156 (4) – Գործնական ծանոթացում բարդ բառերին։

Էջ 156 (5) – «Բարդ բառի երգը»։

Էջ 156 (6) – Օգտագործելով արմատները՝ կազմել բարդ բառեր։

Էջ 157 (7) – Պարզ բառերից կազմել բարդ բառեր։

**20. Դարձվածք**

Էջ 127 (2) – **Մաղով ջուր կրել։** Ներկայացված է բառակապակցության ուղիղ և փոխաբերական իմաստներն արտահայտող նկարներով և բացատրությամբ։

էջ 141(3) – **Համը հանել:** Ներկայացված է բառակապակցության ուղիղ և փոխաբերական իմաստներն արտահայտող նկարներով և բացատրությամբ:

**21. Նախադասություն**

ա.Կազմել նախադասություն գործածելով տրված բառերը, էջ 8 (2), 13 (3), 15 (2), 41 (6), 89 (5), 168 (6):

բ. Ըստ տեսակի ամբողջացնել նախադասության միտքը, էջ 21(7), 24 ( 4), 64 (6), 69 (3), 74 (1), 96 (1), 99 (1), 140 (1), 172 (7):

գ. Արտագրել նախադասությունները, էջ 19 (3), 26 (1), 63 (2), 113 (7), 141 (6):

դ. Բառերի փոխարեն նշանների օգտագործում նախադասությունների մեջ, էջ 43 (4), 53 (4), 100 (8):

ե. Վերականգնել «քանդված» նախադասությունը, էջ 43( 5), 109 (6), 122 (1):

զ. Նախադասությունը գրել նկարելուկի տեսքով, էջ 46 (2), 53 (4):

է. Ավարտել նախադասությունները, էջ 50 (1), 152 (8):

ը. Գրած բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ, էջ 85 (5), 102 (1):

թ. Տեքստում գտնել և կարդալ համապատասխան նախադասությունները, էջ 97 (8):

ժ. Բառերը ճիշտ տեղադրել և ստանալ նախադասություններ, էջ 103 (4), 109 (7), 133 (4), 151 (4), 162 (4):

ժա. Վերծանել նկարելուկով գրված նախադասությունները, էջ 113 (8):

ժբ. Ընդարձակել նախադասությունը, էջ 163 (6):

ժգ. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ, էջ 166 (3), 167 (կարդա՛ և սովորի՛ր), 167 (5):

ժդ. Նախադասության սաները, էջ 164՝ տեքստը:

ժե. Դասից քաղած իմ պտուղները: (Լրացնել անավարտ նախադասությունները):

էջ՝ 10, 13, 17, 21, 24 ,30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

**22. Կետադրական նշաններ**

էջ 97 ( 6) – Հանելուկ չակերտների մասին:

էջ 109 (9) – Հանելուկ հարցականի նշանի մասին:

Էջ 168 (7) – Հանելուկներ վերջակետի և բացականչական նշանի մասին։

Էջ 164 -166 – «Նախադասության սաները» (տեքստ)։

Էջ 165 (1) – Զվարթ առաջադրանք բացականչական նշանի մասին։

Էջ 166 (2) – Աղյուսակի լրացում՝ ո՞ր նշանին կդիմես։

Էջ 167 (4) – Հարց ու պատասխան կետադրական նշանների մասին։

Էջ 168 (ԱՊ) – Հնգատող կետադրական նշանների մասին։

## 2. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Սովորողները ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտելու ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի ու կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողաբար և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ ու համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչելու դրանց տարբերությունները:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788*

«Մայրենի-2» դասագրքում արտացոլված վերոնշյալ կարողունակության բաղադրիչները.

ա. Ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման:

բ. Ձևավորել վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ:

գ. Դրսևորել հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ:

դ. Սոցիալական հարաբերություններում գործել կառուցողաբար և համերաշխ:

ե. Դրսևորել ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ ու համագործակցային կարգավորման հմտություններ:

### ա. Ինքնաճանաչում ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունը ձևավորելու նպատակով դասագրքում օգտագործվել են բազմազան միջոցներ, կիրառվել են մեթոդներ ու հնարներ, աշխատանքի կազմակերպման ձևեր: Թվարկենք.

- Աշխատանք զույգերով:
- Խմբային աշխատանքներ:
- Փոքրիկ հետազոտական աշխատանքներ:
- Ինքնակազմակերպմանը նպաստող աշխատանքներ:
- Տեքստեր:
- Բեմականացումներ/դերային խաղեր (փոքրիկ պատմություններ, բանաստեղծություններ, խնդուկներ):
- Մնջախաղեր:
- Ժողովրդական բանահյուսության նմուշներ՝ հանելուկ, շուտասելուկ, սուտասելուկ, առած, դարձվածք:
- Դասանյութերի **Գլխագրեր, Մուտքի պատուհանիկներ, Դասից քաղած իմ պտուղները, Ամփոփման պատուհանիկներ**:
- Խաղեր

Շատ դեպքերում դասագրքում ներկայացված վերոնշյալ միջոցները կարող են առայել կարողունակության մի քանի բաղադրիչների ձևավորմանը: Այդ պատճառով հնարավոր են կրկնություններ:

### բ. Ինքնանդրադարձին և ինքնակազմակերպմանը նպաստող աշխատանքներ

Տարրական դպրոցի առաջատար խնդիրներից է աշակերտների մեջ ինքնուրույն սովորելու ունակություն, ինքնակազմակերպվածություն ձևավորելը: Ինքնակազմակերպվել նշանակում է նպատակասլաց կերպով օգտագործել սեփական հնարավորությունները նպատակին հասնելու համար՝ ճիշտ օգտագործելով ժամանակը, սեփական ուժերը և միջոցները: Ինքնակազմակերպվելը արտահայտվում է արտաքին ազդեցություններից առավելագույնս զերծ մնալով, գործողությունները առանց կողմնակի օգնության իրականացնելով: Երեխաները պետք է կարողանան մտածել, գտնել առաջադրված խնդիրների պատասխանները, նոր գիտելիքներ ձեռք բերել՝ հիմք ունենալով արդեն ունեցած գիտելիքները:

Դասագրքում երեխաների ինքնակազմակերպման համար կան բավականաչափ միջոցներ, տարբեր առաջադրանքներ: Նախ նշենք բոլոր դասերի **Գլխագրերը** և **Մուտքի պատուհանիկները**, որոնց կետերի շուրջ երեխաները ազատորեն արտահայտվում են, կռահումներ են անում, մասնակցում քննարկմանը: Նույնը կարելի է ասել նաև **Դասից**

**քաղած իմ պտուղները խորագրի** մասին: Այստեղ երեխաները հանրագումարի են բերում իրենց իմացածը, համեմատում գլխագրի կետերի հետ, կատարում համապատասխան հետևություններ՝ ինքնուրույն եզրակացություններ անում, դրանք համեմատում **Ամփոփման պատուհանիկի** գրառման հետ:

Նշենք նաև **Զույգերով աշխատանքը, Խմբային աշխատանքը, Փոքրիկ հետազոտական աշխատանքները, Բեմականացումները, Մնջախաղերը, Շուտասելուկները, որոշ տեքստեր, Առաջադրանքները:**

Այս ամենը նպաստում է երեխաների ինքնակազմակերպմանը, ստացած գիտելիքների համադրմանը, դրանց միջև կապերի հայտնաբերմանը, քննադատական մտածողության ձևավորմանը:

Այժմ մի քանի խոսքով անդրադառնանք ներկայացված միջոցներին:

### ա. Գլխագրեր

Յուրաքանչյուր նոր դաս սկսվում է Գլխագրի «Այս դասին դու...» բառերով: Այդտեղ գրված է, թե ինչ նոր բաներ են սովորելու, կրկնելու, իմացածը ամրապնդելու սովորողները տվյալ դասի ընթացքում: Ինչ հետաքրքրաշարժ առաջադրանքներ են սպասում նրանց, ինչ հերոսների հետ են ծանոթանալու, որ հերոսների օգնությամբ են ավելի լավ ճանաչելու իրենց և շրջապատող աշխարհը: Գլխագրերում ներկայացվում են դասի հիմնական նպատակները: Արդյունքում ձևավորվում են դրական դիրքորոշում և մոտիվացիա ուսումնասիրվելիք դասի նկատմամբ:

Այս ամենը երեխաներին սովորեցնում է նախապես իմանալ իրենց անելիքները, ինչ և ինչպես են անելու, ինչն էլ կարող է նպաստել երեխաների ինքնակազմակերպմանը:

Գլխագրերի էջերը.

Էջ 7, 11, 14, 22, 18, 25, 31, 34, 38, 42, 45, 48, 52, 56, 61, 66, 73, 76, 79, 82, 92, 94, 98, 101, 102, 107, 111, 118, 121, 126, 130, 135, 138, 142, 146, 149, 154, 158, 161, 164:

### բ. Մուտքի պատուհանիկներ

Յուրաքանչյուր դասի սկզբում կա գունավորված շրջանակ՝ համապատասխան գրառմամբ: Այն կոչվում է «Մուտքի պատուհանիկ»: Նշենք, որ «Մուտքի պատուհանիկում» ներկայացվող գրառումը խթանում է երեխաների երևակայությունը, դասանյութի նկատմամբ հետաքրքրություն է առաջացնում: Դրանցից շատերը ինքնաճանաչմանն ու ինքնակազմակերպմանը տանող մտքեր են, հարցադրումներ, երկխոսություններ, կարճ պատմություններ, հանելուկներ, չափածո դիմումներ, որոնց շուրջ երեխաները սկսում են մտածել:

Մուտքի պատուհանիկի էջեր.

Էջ՝ 7, 18, 22, 25, 24, 38, 42, 45, 48, 56, 61, 66, 73, 82, 92, 98, 101, 107, 111, 118, 121,126, 130, 135, 146, 158, 161, 164:

### գ. Դասից քաղած իմ պտուղները

Դասի ավարտին ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներին հետահայաց վերլուծություն կատարելու, անդրադառնալու, վերհիշելու և գնահատելու իրենց կատարած քայլերը: **«Դասից քաղած իմ պտուղները»** խորագրով ներկայացվող հարցաշարի միջոցով երեխան ինքն է պարզում, թե ինչ սովորեց (գիտելիք), ինչ է կարողանում անել (կարողություն), արտահայտում է իր վերաբերմունքը (դիրքորոշում):

Նման աշխատանքների պարբերական կազմակերպումը նպատակաուղղված է այն բանին, որ երեխաները վարժվեն վերլուծելու և գնահատելու իրենց ձեռքբերումները յուրաքանչյուր դասից, որոշեն իրենց հետագա անելիքները: Սա խորացնում է երեխայի ինքնաճանաչողությունը և մղում բարելավելու սեփական ուսումնառությունն ու կարողությունը:

Դասից քաղած իմ պտուղների էջերը.

Էջ 10, 13, 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

### դ. Ամփոփման պատուհանիկներ

Ամփոփման պատուհանիկում տրվում են դասագրքի ընդհանրացնող եզրակացությունները, որոնց շուրջ կազմակերպվում է քննարկում և երբեք չի պարտադրվում այդ եզրակացությունը: Ամփոփման պատուհանիկում երեխաները կարդում են դասանյութի ընդհանրացնող խոսքը և դատողություններ անում դրա վերաբերյալ, ազատորեն արտահայտում սեփական կարծիքն ու դիրքորոշումը: Ուսուցիչը պետք է խրախուսի և քաջալերի երեխաների ինքնուրույն մոտեցումներն ու եզրահանգումները: Սովորողը կարող է համեմատել իր կարծիքը, նկատառումներն ու մտքերը այդ եզրակացության հետ և անել համապատասխան հետևություններ:

Դասի վերջում անհրաժեշտ է երեխաների միջոցով հանգել ընդհանրացնող եզրակացության, որը հաճախ վերաբերում է մարդկության դարավոր ձեռքբերումներին, հասարակության մեջ ընդունված նորմերին ու կանոններին:

Ամփոփման պատուհանիկների էջերը.

Էջ 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 141, 153, 157, 160, 163, 168:

### ե. Փոքրիկ հետազոտական աշխատանքներ

Տարրական դասարաններում հետազոտական աշխատանքները նպաստում են երեխաների պատկերացումները շրջապատի մասին փոքր քայլերով ընդլայնելուն, կատարած աշխատանքը իրենց հասակակիցների առջև ներկայացնելուն, ինչպես նաև ինքնուրույն աշխատանք կատարելու բերկրանք զգալուն:

Հետազոտական աշխատանքների էությունը որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների խթանումն է և, գործնական ճանապարհով, այդ խնդիրների լուծումը, համապատասխան գիտելիքների ձեռքբերումը և հետագա կիրառումը: Սովորողները ինքնուրույն տարբեր աղբյուրներից ձեռք են բերում ինչպես պակասող տեղեկություններ ու գիտելիքներ, այնպես էլ, աշխատելով ու շփվելով տարբեր խմբերի հետ, հաղորդակցային կարողություններ, ձևավորում ու զարգացնում են համակարգային մտածողություն: Հետազոտական աշխատանք կատարելը նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, գիտելիքներն ինքնուրույն կիրառելու, քննադատական մտածողության, հետադարձ հայացքով անդրադարձ կատարելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: Աշխատանքը սովորեցնում է հարցեր նախապատրաստել, փոքրիկ քայլաշար ստեղծել, տեղեկություններ քաղել առաջադրված խնդրի մասին, այդ ամենը գրառել և կարողանալ ներկայացնել:

Դիտարկենք մի օրինակ: Դասագրքի 59-րդ էջում Հայկ Նահապետի արձանի մասին կա առաջադրանք: **Հետաքրքրվի՛ր և իմացի՛ր, թե որտեղ է գտնվում Հայկի արձանը: Ո՞վ է արձանի հեղինակը:**

Հետազոտական աշխատանք կատարելու համար նախ պետք է ստեղծել հարցերի շարքը: Օրինակ.

- Ո՞վ է Հայկ Նահապետը:
- Ինչո՞ւ է նրա համար արձան դրվել:
- Ի՞նչ է արձանը:
- Ո՞ւմ համար են արձան դնում:
- Որտե՞ղ է դրված Հայկի արձանը:
- Ո՞վ է արձանի հեղինակը:
- Քանի՞ մետր է արձանի բարձրությունը:
- Ի՞նչ զրահներ կան Հայկի վրա:

Այնուհետև գտնել այդ հարցերի պատասխանները:

Հետազոտական աշխատանքներ կատարելիս երեխաներին, իհարկե, օգնում և աջակցում են ուսուցիչներն ու ծնողները:

Դասագրքում կան բազմաթիվ և բազմաբնույթ առաջադրանքներ, որոնք նախատեսված են փոքրիկ հետազոտական աշխատանքների համար: Այդ առաջադրանքները մանրամասն քննարկված են համապատասխան դասերի մեթոդական մշակումներում:

Փոքրիկ հետազոտական աշխատանքի էջերը և առաջադրանքների համարները.

Էջ 6(2), 13(6), 10(8), 17(8), 21(9), 30(14), 59(7), 65(8), 82(1), 100(6), 110(11), 129(8):

### զ. Մնջախաղեր

Մնջախաղի հիմնական արտահայտչամիջոցներն են դիմախաղը, մարմնի շարժումները, ժեստերը: Մնջախաղով հնարավոր է ձևավորել ու զարգացնել երեխաների

ստեղծագործական միտքը, երևակայությունը, հույզերը ճիշտ արտահայտելու կարողությունը, զարգացնել ու ամրապնդել միմյանց հետ հաղորդակցվելու հմտությունները, բարձրացնել երեխաների ինքնագնահատականը: Եթե երեխան մնջախաղով ինչ-որ բան է բացատրում մյուսներին, նա ինքն էլ է պրպտում, թե ինչպես ավելի լավ, հասկանալի բացատրի դա: Զարգանում է երեխայի երևակայությունը, նա սովորում է գտնել ցուցադրվող առարկայի էական հատկանիշները, սովորում է ճանաչել ու այնպես ներկայացնել, որ դիտողը կռահի, թե ինչ է ցուցադրում ինքը: Այսինքն՝ սովորում է սովորել բացատրել, ճանաչել առարկան:

Մնջախաղով երեխաները կարող են ցուցադրել իրենց քաջածանոթ, պարզ հույզերն ու զգացմունքները՝ վախ, ուրախություն, տխրություն, զարմանք և այլն: Մնջախաղը սովորեցնում է երեխաներին հասկանալ և ընկալել առանց խոսքի, համագործակցել ընկերների հետ:

Մնջախաղի էջերի և առաջադրանքների համարները.

Էջ 13(5), 16(5), 28(7), 36(4), 37(5), 53(3), 142(1):

**է. Ժողովրդական բանահյուսության նմուշներ՝ հանելուկ, շուտասելուկ, սուտասելուկ, առած, դարձվածք, նկարելուկ, փոխակերպում, բառքամոցի:**

Դասագրքում մեծ տեղ է հատկացված նաև ժողովրդական բառ ու բանին: Կրկնվող խորագրերով ներկայացված են խնդուկներ, դարձվածքներ, առածներ, շուտասելուկներ, հանելուկներ: Այս ամենով ուսուցումը դառնում է զվարթ ու հետաքրքրաշարժ, երեխաները հնարավորություն են ունենում ըմբռշխնելու ժողովրդական բառն ու բանը, իրենցը դարձնելու և օգտագործելու հարկ եղած դեպքում:

Ժողովրդական բառ ու բանի ուսուցումը լավագույն միջոցներից է ինքնաճանաչման, երեխաներին իրենց արմատներին ծանոթացնելու, նրանց ապուպապերի մտածողությանը հաղորդակից դարձնելու, հայկական ավանդույթներին ծանոթացնելու և հայեցի մտածողություն ու դաստիարակություն սերմանելու համար:

Այժմ անդրադառնանք ժողովրդական բանահյուսության նմուշներին առանձին - առանձին:

**Հանելուկը** ինչ-որ առարկայի կամ երևույթի մասին այլաբանությամբ տրված հարց է, որը կարող է ներկայացվել նաև բանաստեղծական քառատողերով: Սովորաբար համառոտ, հանգավորված, հետաքրքրաշարժ, խորամանկամիտ, երբեմն խրթին նկարագրություն է, որը պետք է վերծանել: Հանելուկը առարկայի կամ երևույթի համառոտ նկարագրություն է:

Հանելուկը հեռվից հեռու ակնարկելով իր առարկայի ինչ-որ հատկանիշ կամ հատկանիշներ, իրական առարկաներն ու երևույթները քողարկելով, դիմակավորելով դժվար գուշակելի պատկերներով՝ դառնում է ակտիվ մտավարժանք, վերացարկման ունակության, համեմատման ու հակադրման, էականը գտնելու, վերլուծելու, սրա-

մտության ու պատկերավոր մտածողության զարգացման արդյունավետ միջոց: Դրանք, բնականաբար, սերտորեն առնչվում են ուսուցանվող բնագրին:

Ինչպես ասացինք, հանելուկը հետաքրքրաշարժություն և զվարթություն է հաղորդում ուսընթացին, լրացնում բնագիրը, հնարավորություն ընձեռում, որ երեխաներն ամփոփեն, ընդհանրացնեն իրենց գիտելիքները, փորձարկեն իրենց իմացությունը, առարկաները տեսնեն անծանոթ կողմերից, մտապահեն առարկաների ու երևույթների էական հատկանիշները:

Հանելուկը լուծելիս երեխաները գործի են դնում իրենց հնարամտությունը, երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, դիմակավորված, շղարշված պատկերի տակ առարկայի էական հատկանիշներն ի հայտ բերելու դժվարին կարողությունները:

Դրանք երեխաների ուշադրությունը որևէ երևույթի վրա երկարատև լարելու միջոց են:

Ընդհանրապես, կրտսեր դպրոցականները դժվարությամբ են առանձնացնում դիտարկվող առարկայի էական հատկանիշները, չեն կարողանում համակողմանիորեն նկարագրել տվյալ առարկան, և դա բնական է: Այսպիսի առաջադրանքները նպաստում են երեխաների՝ նկարագրելու կարողությունների զարգացմանը, առարկան իր հատկանիշներով ներկայացնելու և հատկանիշների միջոցով առարկան կռահելու ունակության զարգացմանը: Սովորում են ինքնուրույն կազմել պարզունակ հանելուկներ: Այսինքն՝ սովորում են ինչ-որ կերպ նկարագրել տվյալ առարկան, երևույթը՝ մտքում ունենալով այդպիսի նկարագրության բացատրությունը, որը սովորելու և սովորեցնելու ունակություն է ենթադրում: Այս բնույթի առաջադրանքները նպաստում են երեխաների խոսքատրամաբանական հիշողության զարգացմանը: Երեխան աստիճանաբար սովորում է գիտակցորեն կառավարել իր հիշողությունը, կարողանում է մտապահել և մտաբերել պահանջվող բառը, նախադասությունը և, ընդհանրապես, խոսքային ցանկացած դրսևորում:

Էջ 9(6), 37(6), 38(ՄՊ), 92(ՄՊ), 73(ՄՊ), 82(ՄՊ), 92(ՄՊ), 97(6), 108(5), 109(9), 113(6), 119(4), 121(ՄՊ), 124(9), 126(ՄՊ-3), 150(2), 168(7-2):

**Սուտասելուկը** կատակային բնույթի, հիմնականում՝ չափածո, փոքրիկ ստեղծագործություն է, որի մեջ գլխավոր դերը կատարում է «պոզով-պոչով» սուտը:

Սուտասելուկում առարկաներն ու երևույթները դիտարկվում են խիստ անսովոր, անհավանական տեսանկյուններից: Սուտասելուկի ուսուցումը նպաստում է երեխաների մեջ հումորի զգացում ձևավորելուն ու զարգացնելուն: Զարգացնում է ստեղծագործական երևակայությունը, նպաստում խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը: Երեխաները սովորում են անսովորը տեսնել սովորականի մեջ, բացահայտել հեքիաթայինը:

Դասագրքում ներկայացված է մեկ շուտասելուկ-սուտասելուկ. էջ 106(11):

**Առածները և ասացվածքները** ժողովրդական պատկերավոր ու սեղմ ասույթներ են կյանքի, մարդկային բարքերի, փոխհարաբերությունների, կենցաղային ամենաբազմա-

զան երևույթների վերաբերյալ: Առածների միջոցով բացահայտվել է ժողովրդի վերաբերմունքը չարի ու բարու նկատմամբ, առածներով ուսուցանվել են դարերի փորձությունն անցած իմաստությունները, մարդկային հարաբերությունները կարգավորող վարքուբարքի կանոնները, ձաղկվել են հոռի երևույթները և խրախուսվել լավն ու բարին:

Դասագրքում զետեղված առածները բոլորն էլ խտացրած ձևով արտահայտում են տվյալ դասի բնագրի հիմնական միտքը, ունեն դաստիարակիչ մեծ նշանակություն, նպաստում են բնագրի հիմնական միտքը սեղմ ու դիպուկ արտահայտելու կարողություններ ձևավորելուն: Ի վերջո, երեխաները հաղորդակցվում են ժողովրդական իմաստությանը, ազգային ինքնաճանաչման դիպուկ միջոցներից մեկին՝ առածին, որն անջնջելի հետք է թողնում նրանց լեզվամտածողության վրա: Այսինքն՝ բնագիրը նպաստում է, որ երեխաները լավ հասկանան առածի իմաստը, իսկ առածով ամփոփվում, ի մի է բերվում բնագրի արտահայտած հիմնական միտքը:

Ընտրված առածները և ասացվածքները երեխաների համար հասկանալի են, արտահայտած միտքը մատչելի է նրանց ընկալման համար: Երեխաները հեշտությամբ անգիր են անում դրանք և կիրառում իրենց խոսքում:

Դասագրքում տարբեր ձևերով ներկայացված է քսանմեկ առած և ասացվածք.

էջ 16(4), 21(8-3), 22(ՄՊ), 24(6), 37(7), 86(6), 100, 100(ԱՊ), 106(ԱՊ-3), 108(3), 110(ԱՊ), 119, 139(Հ-3), 159(Տեքստ),161(ՄՊ), 171:

**Դարձվածքները** դարերի ընթացքում բյուրեղացած իմաստություններ են, պատկերավոր, փոխաբերական իմաստ ունեցող արտահայտություններ, ժողովրդական սրամտություններ ու հնարամտություններ: Դրանք աշակերտի մեջ լեզվական հրաշալիքների նկատմամբ հետաքրքրասիրություն արթնացնելու, նրա պատկերավոր մտածողությունը զարգացնելու միտումով են ներկայացված դասագրքում:

Դարձվածքները ներկայացված են երկու դրվագով. առաջին դրվագում ներկայացված է արտահայտության ուղիղ իմաստը, մյուս դրվագում՝ փոխաբերական (դարձվածային) իմաստը: Սա հնարավորություն է տալիս, որ երեխաները ճիշտ ընկալեն դարձվածքը, հասկանան արտահայտության փոխաբերական իմաստը, դրանք կիրառեն իրենց խոսքում:

Դասագրքում ներկայացված է երկու դարձվածք. էջ 127(2), 141(3):

**Խնդուկը** փոքրիկ պատմություն է, կատակ, զվարճալի զրույց, զավեշտ, որի մեջ հիմնական դերը կատարում են բառախաղը, անսպասելի հանգուցալուծումը: Երեխաների մեջ դեռ փոքր հասակից պետք է զարգացնել հումորի զգացումը: Իսկ թե ինչպես է ընդհանրապես առաջանում ծիծաղելի կամ զավեշտական իրավիճակ, շատ բարդ խնդիր է: Մի դեպքում դա ակամա թյուրըմբռնումն է՝ ասվածը բառացի հասկանալու հետևանքով, մեկ այլ դեպքում՝ միտումնավոր կամ ակամա թյուրասացությունը, այլ դեպքում՝ դիմացինի խոսքի կամայական, քմահաճ կամ զվարճալի մեկնաբանումը և այլն:

Փորձը ցույց տվեց, որ երեխաները շատ են սիրում խնդուկներ, հասկանում են նրանցով արտահայտված հումորը, հաճույքով են կարդում, պատմում, բեմականացնում դրանք: Նրան շատ լավ հասկանում և զգում են փոխաբերական իմաստով գործածված երկիմաստ արտահայտությունները, վերհիշում են ու պատմում: Նրանք ընկալում են ծիծաղաշարժ դեպքերը, կարողանում են դերերով բեմադրել դրանք: Շատ կարևոր է, որ խնդուկները մոտ լինեն երեխաների կենսապայմաններին, որ երեխաները կարողանան ճիշտ ընկալել դրանք, հասկանան ծիծաղաշարժության պատճառները, զգան հումորի համն ու հոտը:

Այս բնույթի առաջադրանքները նպաստում են երեխաների խոսքատրամաբանական հիշողության զարգացմանը: Երեխան աստիճանաբար սովորում է գիտակցորեն կառավարել իր հիշողությունը, կարողանում է մտապահել և մտաբերել պահանջվող բառը, նախադասությունը և, ընդհանրապես, խոսքային ցանկացած դրսևորում:

Էջ 106(10), 110(10), 133(7), 155(2):

**ը. Խաղեր**

Մանկավարժներն ու հոգեբանները մեծ ուշադրություն են դարձրել խաղի միջոցով ուսուցումը կազմակերպելու գործին: Նման միտումը մանկավարժության մեթոդաբանության մեջ ինքնանպատակ փորձարարություն չէ, այլ ելնում է նրա էությունը բացահայտող մի շարք գիտությունների՝ փիլիսոփայության, գենետիկական և փորձառական հոգեբանության, կենսաբանության, մշակութաբանության, հասարակագիտության նվաճումներից:

Խաղին հատուկ կարևորություն է տրվում նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում, քանի որ, ըստ հոգեբանների, այդ տարիքն առանձնանում է որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան: Այդ տարիքում խաղը նրա էության դրսևորման հիմնարար, կազմակերպող առանցքն է, կիզակետը: Այդ տարիքում խաղն է անձի ձևավորման կարևորագույն միջոցը, գործոնը: Ուստի և մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման համակարգում խաղի դերին և ուսուցումը խաղի օգնությամբ կազմակերպելուն:

Խաղը մեծացնում է գիտելիքի նկատմամբ եղած գրավչության դաշտը, ընկալման, կլանվածության և սևեռման գործակիցները: Խաղով միջնորդավորված գիտելիքի ամրակայումը երեխայի հիշողության մեջ ավելի հիմնավոր է, քանի որ ընկալման իրողությունն ընթանում է նաև ենթագիտակցականի ակտիվ մասնակցությամբ, նրա մտավոր, հոգևոր և կամային հնարավորությունների ակտիվ և հուզականորեն հաճելի կիրարկումով:

Խաղով միջնորդավորված, սրամիտ ու հետաքրքրաշարժ մատուցումով երեխայի սեփականությունն են դառնում բազմաբնույթ գիտելիքներ և տեղեկություններ: Խաղերը նպաստում են պատկերավոր, վերացական, տրամաբանական մտածողության, երևակայության զարգացմանը, ընդլայնում լեզվամտածողական ներուժը, խթանում իմացական հետաքրքրությունները:

Մանկան խաղին բնորոշ է հուզականությունը: Գիտելիքը խաղով մատուցելու ընթացքում անհրաժեշտ է այն կապել երեխայի հուզական ոլորտի հետ: Քանի որ այդ տարիքում, ի տարբերություն խոսքատրամաբանական հիշողության, համեմատաբար լավ է զարգացած զննական-պատկերային հիշողությունը, ապա կարևորություն է ստանում տեքստերը համապատասխան պատկերներով ներկայացնելու եղանակը: Պատկերների և գիտելիքների միահյուսված մատուցման այս եղանակը նպաստում է երեխայի մտածողության առավել արդյունավետ զարգացմանը: Միտքը ձեռք է բերում առարկաների հատկանիշների զուգորդման և համակցման ընդունակություն: Տրամաբանական համադրման նախադրյալների ձևավորմանը մասնակցում են լեզվատրամաբանական ունակությունները և պատկերային ընկալումները: Ուսուցման միջոցինակությունը հոգնեցուցիչ է: Այն հաղթահարվում է խաղի օգնությամբ: Երեխան կրավորական լսողից դառնում է ակտիվ մասնակից:

Խաղերի կիրառմամբ ուսուցումը այն եզակի ձևերից մեկն է, որոնք հնարավորություն են ընձեռում աշակերտների ուսումնառությունը հետաքրքրաշարժ ու հրապուրիչ դարձնելու ոչ միայն ստեղծագործական-որոնողական մակարդակում, այլև գիտելիքի յուրացման ամենօրյա միապաղաղ գործընթացում: Ուսումնական գործընթացը կենտրոնանում է ոչ միայն աշակերտների բանականության վրա, այլև զգայական աշխարհի, հնարավորություն է ընձեռվում զարգացնելու աշակերտների ոչ միայն մտավոր, այլև զգայական կարողությունները: Կան խաղեր, որոնք հնարավորություն են ընձեռում համագործակցային ուսուցման մեթոդներով դասեր անցկացնելու համար, որոնց ժամանակ երեխաները ստեղծագործական խնդություն են ապրում, նրանց համար տեսանելի են դառնում իրենց աճը, կատարելագործումը, նրանք ձեռք են բերում ինքնավստահություն սեփական ուժերի նկատմամբ, վարժվում են համատեղ գործունեության, փնտրտուքի, ուսուցչի և միմյանց հետ հնարավոր բոլոր ձևերով համագործակցության:

Սակայն պետք է նշել, որ խաղը դասի ընթացքում արդարացվում է այն ժամանակ, երբ այն ուսուցման մեթոդ է, այլ ոչ թե սոսկ միջոց՝ աշակերտներին զվարթացնելու համար:

Առհասարակ, բոլոր խաղերն էլ կարելի է օգտագործել տարբեր եղանակներով մրցահանդեսներ, մրցույթներ կազմակերպելու համար:

Բայց պետք է հիշել մեկ բան. երեխաները շատ հուզական են, տպավորվող, նրանց նյարդային համակարգը դեռևս թույլ է: Պետք չէ չարաշահել զանազան մրցությունների կազմակերպումը: Երեխաները դեռևս դժվարությամբ են տանում պարտությունը:

Խաղի ընթացքում գործում է երևակայությունը, պատասխանն ինքնուրույն փնտրելու և գտնելու կամք է ձևավորվում, նոր հայացք է ձևավորվում հայտնի փաստերի ու երևույթների նկատմամբ, ընդլայնվում են երեխաների՝ երևույթների ու առարկաների միջև առնչություններ գտնելու կարողություններն ու հմտությունները, և այդ ամենը իրագործվում է ոչ թե ստիպմամբ, այլ աշակերտների ցանկությամբ:

Գաղտնիք չէ, որ երեխաները շատ շարժուն են, նրանց ուշադրությունն անկայուն է: Ի՞նչ մեթոդներով երեխաներին ստիպես, որ նրանք լսեն, ի՞նչ միջոցներով ուսումը

դարձնես հրապուրիչ, զվարթ։ Այս բոլորն իրականացնելուն օգնության են գալիս ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, որոնք սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել։ Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները։ Կարևոր է նաև այս ամենի դաստիարակչական կողմը։ Քանի որ այդ ընթացքում երեխաները մոտիկից առնչվում են, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում են ինքնուրույն և ընկերասեր։

Այո՛, երեխային ոչ թե պետք է ստիպել, որ նա ինչ-որ բան անի, այլ պետք է հետաքրքրել նրան, մասնակից դարձնել ուսընթացին, մղել ինքնուրույնության, սովորեցնել՝ ինչպես սովորել, սովորեցնել մտածել, իր ուժերի նկատմամբ ինքնավստահություն ձեռք բերել։

Մեծ է նաև խաղերի դաստիարակչական նշանակությունը։ Դրանք երեխայից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համառություն, տևական մտավոր լարում։ Նրանք զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, համակցված մտածողությունը։

Այսինքն՝ հարկավոր է օգտագործել երեխայի բնական հետաքրքրասիրությունը, նոր բան իմանալու նրա ձգտումը, սովորելը հետաքրքրաշարժ դարձնելը։ Երեխայի համար ամենաբնական, ամենասիրելի բանը խաղն է։ Պետք է ուսումնական նյութը խաղի միջոցով դարձնել հետաքրքիր, մատչելի, գրավիչ։

Անհրաժեշտ է «ձանձրալի» առաջադրանքներին տալ նոր իմաստ, նոր շահագրգռություն առաջացնել երեխայի մեջ դրանք կատարելու համար, հետաքրքրություն մտցնել առաջադրանքների մեջ, դրանք զգեստավորել հետաքրքրաշարժությամբ։ Օրինակ, գեղեցիկ գրելը ինքնին դժվար գործ է և դժվար է բացատրել, թե ինչու է դա կարևոր։ Սակայն, երբ փոխում ես վեկտորի ուղղությունը, այն դառնում է կոնկրետ նպատակ, կոնկրետ շահ ունեցող գործողություն, երեխան սկսում է ձգտել լավ, գեղեցիկ, անսխալ գրել։ Օրինակ, նամակ եք գրում Ձմեռ պապիկին՝ նվերների համար։ Ձմեռ պապը կարողանում է կարդալ միայն գեղեցիկ, անսխալ գրված նամակները։ Նամակ եք գրում գյուղում ապրող տատիկին, որի տեսողությունը վատ է և ծուռումուռ գրած ձեռագիրը չի կարող կարդալ։ Իհարկե, կարող եք պլանշետով ու հեռախոսով գրել նրան, սակայն նա չգիտի դրանք ինչպես կարդալ։ Կամ հանդիպել եք այլմոլորակայինի, օտարազգի մեկին, որը կարող է միայն ձեռագիրը կարդալ, այն էլ՝ գեղեցիկ գրվածը։ Պետք է ջանալ այնքան լավ գրել, որ նրանք գոհ մնան։ Պիտի մասնակցի գեղեցիկ գրողների մրցույթին և, հաղթելու դեպքում, ստանա նվեր, և այլն։

Դասագրքում բազմաթիվ ու բազմաբնույթ առաջադրանքներ կան, որոնց միջոցով ամենատարբեր հասկացություններ երեխաներին մատուցվում են խաղերի միջոցով։ Դրանք կարող են լինել լեզվական հասկացություններ, որոնք մատուցվում են երգերով և երգերի տեսահոլովակներով։ Օրինակ.

Հնչյուն-տառի երգը-8(3), Ձայնավորների երգը-12(1), Ե-ի երգը-20(4), Ո-ի երգը-27(3), Վանկի երգը-36(3), Ը-ի երգը-40(1), և-ի երգը-50(3), Առարկա ցույց տվող բառերի երգը-65(7), Եզակիի և հոգնակիի երգը-75(2), Հայոց այբուբենի երգը-77, Չ-ի երգը-93(1), Գործողություն ցույց տվող բառերի երգը-100(3), Ածանցավոր բառերի երգը-151(7), Բարդ բառի երգը-156(5): Դրանք կարող են լինել նկարելուկներ. 12(2), 17(6), 30(12), 46(2), 53(4), 89(3), 96(3), 113(8), 137(4), 150(3), 156(3), 157(7), փոխակերպումներ. 19(1), 53(5), 64(5), 104(6), 119(2), 124(10), 127(1), բառքամոցի. 102(2), 108(4), 132(3), 160(2), մնջախաղ. 3(5), 16(5), 28(7), 36(4), 37(5), 53(3), 142(1), խաչբառեր. 32(2), 32(4), 47(5), 60(8), 69(4), 90(8), 106(9), 125(11), 144(6), 157(7), 172(9):

Դասագրքում տեղ են գտել զանազան էլեկտրոնային առաջադրանքներ, որոնք գրքի համապատասխան խաղային առաջադրանքների էլեկտրոնային տարբերակներն են: QR կոդի միջոցով երեխաները կարող են այդ առաջադրանքները կատարել համապատասխան սարքերի միջոցով:

Այդպիսի առաջադրանքներ են. 9(4), 10(7), 12(2), 13(3), 27(2), 29(9), 43(5), 104(6), 133(4): Կան նաև խաղային տարրեր պարունակող տեքստեր. 18, 38, 92, 94, 98: Գրքում բազմաթիվ են խաղային առաջադրանքները. 16(4), 19(2), 20(6), 21(8), 30(11), 30(13), 36(2), 40(2), 40(3), 41(4), 43(4), 43(5), 52(1), 53(6), 58(2), 58(3), 75(5), 81(7), 89(4), 97(9), 100(8), 105(8), 108(2), 109(6), 112(2), 119(1), 123(3), 124(7), 132(3), 136(1), 143(3), 148(1), 158(1), 163(ԱՊ):

**գ. Մեփական ուժերի և կյանքի հանդեպ վստահության ձևավորում, առողջ և անվտանգ կենսակերպի դրսևորում:**

Դասագրքում բազմաթիվ միջոցներ կան կարողունակության այս բաղադրիչի իրականացման համար. տեքստեր, առաջադրանքներ, Մուտքի պատուհանիկ, Ամփոփման պատուհանիկ, «Դասից քաղած իմ պտուղները», զանազան խորագրեր: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

**Տեքստեր**

Ո՞վ եմ ես – էջ 7
Ընկերները – էջ 18
Խոսքի ուժը – էջ 22
Մի հեքիաթ ոզնու մասին – էջ 25
Փոքրիկ պարուհին – էջ 48
Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ – էջ 61
Ե՛վ նման ենք, և՛ տարբեր – էջ 98
Կորած օրը – էջ 111
Աստղեր – էջ 130
Էլմեր – էջ 146,
Փոքրիկի մեծ զարմանքը – էջ 154
Իրավունքն է ծնում պարտականություն – էջ 158

- **«Դասից քաղած իմ պտուղները» խորագրի ինքնանդրադարձներ**

էջ 10, 13, 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

- **Առաջադրանքներ**

էջ 6(2), 10(8), 11(Հ-4), 13(6), 15(Հ-4), 16(4), 17(8), 21(9), 24(4), 32(5), 41(5), 50(1), 77(Հ-4), 85(3,4), 90(7), 115(2), 134(8), 152(8), 154(1), 169(1):

- **Ամփոփման պատուհանիկ.** էջ 17, 21, 65, 129, 141:

- **Մուտքի պատուհանիկ.** էջ 48:

**դ. Ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ հարգանքի, ազնվության և պատասխանատվության դրսևորում:**

Կարողունակության այս բաղադրիչի ձևավորման համար դասագրքում կան տեքստեր, շուտասելուկներ, առած, ասացվածք, առաջադրանքներ և հարցեր, մուտքի, ամփոփման պատուհանիկներ:

- **Տեքստեր**

«Խոսքի ուժը» (22)
«Մի հեքիաթ ոզնու մասին» (25)
«Տա՞ռն էլ գլխարկ ունենա» (38)
«Փոքրիկ պարուհին» (48)
«Չարաճճին ընկերների հետ» (92)
«Չարաճճին մենակության մեջ» (94)
«Ե՛վ նման ենք,և՛ տարբեր» (98), «Տունը» (161)

- **Շուտասելուկներ**

**Շուտասելուկները** զվարճանքի համար ստեղծված կատակային ժանրի ստեղծագործություններ են (նախադասություն, ասույթ, չափածո երկտող) և հորինվում են այնպես, որ արագ-արագ արտասանելու դեպքում բառերն աղավաղվում են կամ խառնվում՝ զվարթություն ու ծիծաղ առաջացնելով ունկնդիրների մեջ:

Շուտասելուկները նախատեսված են երեխաներին զվարթացնելու, լարվածությունը թուլացնելու, մտերմիկ մթնոլորտ ստեղծելու համար: Դրանք ունեն նաև ուսուցողական նպատակ. մարզում են հիշողությունը, արտասանական ապարատը, արտահայտիչ ու արագ կարդալու կարողությունը, մշակում են առոգանությունը, ինչ-որ չափով նպաստում են լեզվական խնդիրների վերացմանը: Շուտասելուկներն ունեն դաստիարակչական գործառույթ: Դրանք, որպես կանոն, կատակային բնույթ ունեն և արտա-

սանողին հաճախ գցում են ինչ-որ չափով ծիծաղելի իրավիճակի մեջ: Արտասանողն ինքն էլ է ծիծաղում իր ասածների և իր վրա, հարգանքով է վերաբերվում ընկերներին և նրանց ասածներին, կարողանում է գնահատել կատակային իրավիճակը, հումորով է վերաբերվում ինքն իրեն, զարգանում է հումորի զգացումը:

Կարևոր բաղադրիչ է, որ երեխայի մեջ ձևավորվում է գործը մինչև վերջ հասցնելու համառություն. սովորելու կիրքը, առողջ ու զվարթ մրցակցությունը անկաշկանդ են դարձնում երեխային իր հույզերն արտահայտելիս:

Վերջում ավելացնենք, որ շուտասելուկը պետք է սկզբում արտասանվի դանդաղ ու բարձրաձայն, իսկ հետո՝ արագ և ցածրաձայն:

Նշենք, որ բոլոր շուտասելուկների համար դասագրքում կան համապատասխան հղումներ, որոնց միջոցով երեխաները կարող են դիտել փոքրիկ տեսահոլովակներ:

Շուտասելուկի էջերի և առաջադրանքների համարները.

Էջ 16(6), 27(4), 41(5), 46(3), 81(6), 97(7), 106(11), 113(5), 118(ՄՊ), 124(8), 163(7):

**Առաջադրանքներ և հարցեր.**

Էջ 15(Հ-4, 5), 20(6), 24(5), 28(8), 30(11), 36(4), 37(7), 40(2), 43(5), 44(6), 54(8), 81(4), 86(6), 90(7), 96(2), 115(2), 169(1), 170(2), 171(6):

Այլոց հանդեպ հարգանքի, պատասխանատվության դրսևորումների վերաբերյալ նյութեր կան նաև Մուտքի պատուհանիկների գրառումներում՝ էջ 25, 118, Ամփոփման պատուհանիկներում՝ էջ 21, 47, 65, 72, 110, 160, «Գիտե՞ս, որ» խորագրի նյութերում՝ էջ 37:

### ե. Սոցիալական հարաբերություններում կառուցողական և համերաշխ գործակցության դրսևորում:

Կարողանուկության այս բաղադրիչի ձևավորման համար դասագրքում կան տեքստեր, առած, ասացվածքներ, զույգային և խմբային աշխատանքներ:

- **Տեքստեր**

«Ընկերները» (18), «Արևն ու ծիածանը» (121), «Սառույցի բյուրեղը,ամպի փաթիլն ու ծովի կաթիլը» (126), «Էլմերը» (146–152) «Իրավունքն է ծնում պարտականություն» (158), «Նախադասության սաները» (164)

- **Առած-ասացվածքների** էջեր. 21(8-3), 24(6), 86(6), 139(Հ-3), 159(Տեքստ), 161(ՄՊ):

- **Զույգերով աշխատանք**

Զույգերով աշխատանքը խմբային աշխատանքի տարատեսակ է և անփոխարինելի դեր ունի երեխաների մեջ համագործակցության, շփման և հաղորդակցական կարողու-

թյունների ձևավորման ու զարգացման համար: Զույգերով աշխատանքը երեխաների մեջ ձևավորում է սոցիալական հմտություններ՝ միմյանց լսելու, ընկերոջ կարծիքն ընդունելու, համատեղ որոշումներ կայացնելու կարողություններ:

Դասագրքում կան բազմաթիվ և բազմաբնույթ առաջադրանքներ, որոնք նախատեսված են զույգերով աշխատանքի համար: Այդ առաջադրանքները մանրամասն քննարկված են համապատասխան դասերի մեթոդական մշակումներում: Այստեղ կներկայացնենք միայն դրանց էջերը և առաջադրանքների համարները.

Զույգերով աշխատանքի առաջադրանքների էջեր.

Էջ 8(1), 15(1), 17(8), 19(2), 20(6), 21(9), 28(7), 85(4), 97(9), 108(2), 127(4), 150(3), 169(1), 171(5):

- **Խմբային աշխատանք**

Խմբային աշխատանքը երեխաների մեջ ձևավորում է ընդհանուր նպատակ ունենալու և դրան հասնելու եղանակները համաձայնեցնելու, սեփական գործողությունները խմբի մյուս անդամների գործողությունների հետ համաձայնեցնելու ունակություններ: Խմբային աշխատանքները հնարավորություն են ստեղծում գործնական առումով շփվելու իրենց հասակակիցների հետ, ավելի մոտիկից ճանաչելու նրանց, համեմատվելու նրանց հետ, ավելի օբյեկտիվ ինքնագնահատական տալու իրենց: Դրանք նաև հնարավորություն են տալիս, որ սովորողները միավորվեն միասին ինչ-որ բան անելու համար, նրանց համար ապահովում են բազմազան դերային հնարավորություններ:

Խմբային աշխատանքների շնորհիվ երեխաների մեջ ձևավորվում է խմբային և անհատական պատասխանատվություն աշխատանքը արդյունավետ և սահմանված ժամկետում կատարելու համար. չէ՞ որ դրանից է կախված ամբողջ խմբի հաջողությունը: Այստեղ կա մի շատ կարևոր հանգամանք ևս: Այդպիսի աշխատանքի դեպքում խմբում տիրում են կարծիքներ արտահայտելու ազատություն և հանդուրժողականություն մյուսների կարծիքների վերաբերյալ:

Խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս, որ երեխաներն օգնեն միմյանց, սովորեն համագործակցել, և փոխօգնությունը դառնում է լավ արդյունքի հասնելու երաշխիք: Խմբային աշխատանքի ընթացքում երեխաները լսում են միմյանց տեսակետներն ու մեկնաբանությունները քննարկվող հարցի վերաբերյալ, գալիս ընդհանուր եզրակացության:

Դասագրքում կան բազմաթիվ և բազմաբնույթ առաջադրանքներ, որոնք նախատեսված են խմբային աշխատանքի համար: Այդ առաջադրանքները մանրամասն քննարկված են համապատասխան դասերի մեթոդական մշակումներում:

Խմբային աշխատանքի առաջադրանքների էջեր և առաջադրանքների համարները.

Էջ 6(1), 13(5), 16(5), 30(11), 41(4), 43(1), 44(6), 50(2), 53(3), 102(2), 106(10), 112(2), 140(1):

### զ. Ընկերակցության ունակություն և կոնֆլիկտների խաղաղ ու համագործակցային կարգավորման հմտությունների դրսևորում:

Կարողունակության այս բաղադրիչի ձևավորման համար դասագրքում կան տեքստեր, բեմականացումներ:

- **Տեքստեր**

«Ընկերները» (18)
«Ես» (34)
«Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը» (56)
«Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ» (61)
«Չարաճճին» (92)
«Էլմերը» (146–152)
«Տունը» (161):

- **Բեմականացումներ**

Ընկերակցության ձևավորման և զարգացման գործում իրենց ուրույն տեղն ունեն են բեմականացումները:

Գործունեության այս ձևերում երեխաներն իրենք են ընտրում դերերը, իրենք են սահմանում խաղի կանոնները, միմյանց հետ փոխհարաբերությունները, որոշում են խաղի դիպաշարը, բաժանում դերերը, ինչն էլ տանում է ընկերակցության և համագործակցության ձևավորմանը: Երեխաները ստանձնում են տարբեր մարդկանց դերեր, կերպավորում են զանազան կենդանիների ու բույսերի, հանպատրաստից ներկայացնում են երկխոսություններ և այլն: Նշենք, որ այդպես կարելի է ինչպես ճշգրտել և համակարգել երեխաների գիտելիքները, ձևավորել դրանք կոնկրետ իրավիճակում կիրառելու ունակություններ, այնպես էլ խթանել ստեղծագործական երևակայությունը, ձևավորել նախաձեռնելու կարողություններ, հնարավորություն ստեղծել, որ երեխաներն ազատորեն շփվեն միմյանց հետ, սովորեն ու սովորեցնեն, քննարկեն ինչպես ուսումնական հարցեր, այնպես էլ միջանձնային: Այդ խաղերը ոչ միայն աշխուժացնում են միտքը, այլև հուզական բարենպաստ միջավայր ստեղծում երեխայի համար: Ընկերասիրությունը, միջանձնային հարաբերությունները երեխայի համար «միս ու արյուն» դարձնելուն չեն օգնի խրատներն ու քարոզները: Սակայն բավական է, որ երեխան մասնակցի ընկերասիրությունը ներկայացնող որևէ բեմադրության, նա մշտապես կհիշի, նրա մեջ խորապես «իր տեղը կգտնի» այդ երևույթը: Ուսուցման գործընթացում դրանք անհրաժեշտ են երեխայի հաղորդակցական կարողությունների, ստեղծագործական և երևակայության մտածողության, հաղորդակցական կարողությունների զարգացման համար:

Այն բնագրերի դրվագները, որոնք նախատեսվում են բեմականացման համար, քայլ առ քայլ, աստիճանաբար ձևավորում ու զարգացնում են երեխայի երևակայությունը. առանց զրկելու կենդանությունից ու վառվռուն պատկերացումների կոնկրետությունից, այն դառնում է ավելի իրական, ավելի ամբողջական: Ուսուցիչը պետք է առիթը բաց

չթողնի և հաճախ դիմի այդ միջոցին. չէ՞ որ շատ բնագրեր ու առաջադրանքներ նման հնարավորություններ ընձեռում են, այսինքն՝ օժտված են դերային, թատերականացված, դիպաշարային խաղի կազմակերպման հնարավորություններով: Դրական անձանց, մարդկային կերպարով կենդանիների, բույսերի, զանազան «շնչավորված» առարկաների, տառերի դերեր խաղալը նպաստում է կրտսեր դպրոցականների հոգեկան առանձնահատկությունների, նրանց անհատականության և ընդունակությունների բացահայտմանը, ուսուցումը դարձնում է հետաքրքիր և զվարթ: Բեմականացումները կարելի է սկսել դերերով կարդալուց, հերոսներին որոշելուց, նրանց բնութագրումներից, որից հետո կատարել դերաբաշխում, զարգացնել երեխաների խոսքի արտահայտչականությունը և հստակությունը:

Բեմականացումները դասն ավելի հետաքրքիր են դարձնում և նպաստում են երեխաների խոսքի, մտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, մեծացնում են հետաքրքրությունը ուսման նկատմամբ, սովորեցնում են ընկերակցել և արդյունավետ հաղորդակցվել:

Բեմականացումների էջեր.
Էջ 36(4), 37(5), 81(7), 106(10), 110(10), 118(Հ4), 119(1), 126(Տեքստը), 127(4), 133(6), 136(1), 155(2), 158(ՄՊ), 161(Տեքստը):

### 3. Սովորել սովորելու կարողունակություն

Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021,*
*https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788*

«Մայրենի-2» դասագրքում արտացոլված վերոնշյալ կարողունակությունը չափազանց կարևոր է արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար:

Արդյունավետ ուսուցումը ենթադրում է ուսուցչի և սովորողների կողմից պարբերական հետահայաց վերլուծություն, անդրադարձ՝ հականալու ի՞նչ, ինչպե՞ս և ինչու՞ են սովորել: Վերջինս անչափ կարևոր պահ է սովորել սովորելու համար, երբ սովորողները ճանաչում են իրենց իմացածի և չիմացածի սահմանները, գիտակցում են, թե ինչ ունեն, ինչ են ձեռք բերել, ինչպես և որտեղ կարող են դրանք կիրառել: Այն նպաստում է

նաև սովորողների ուսումնական մոտիվացիայի ձևավորմանը, խրախուսում և քաջալերում նրանց:

Սովորել սովորելու կարողունակությունն առավելապես արտացոլված է դասագրքի հետևյալ **խորագրերում.**

- Սկզբնանկար
- Գլխագիր
- Մուտքի պատուհանիկ
- Դասից քաղած իմ պտուղները
- Ամփոփման պատուհանիկ
- Սովորի՛ր հարցեր տալ
- Փոքրիկ հետազոտական աշխատանք
- «Զույգերով աշխատանք», «Խմբային աշխատանք»
- Ինքնուրույն սովորելու կարողություն, ինքնակազմակերպվածություն
- Տեքստեր, առաջադրանքներ

**ա. Սկզբնանկար**

Դասագրքում կան ճանապարհային քարտեզներ՝ սկզբնանկարներ, որոնք համապատասխանում են դասագրքում զետեղված թեմաների քանակին: Դրանք երեխաների մեջ ձևավորում են այն մոտեցումը, որ ինչ-որ նոր բան սովորելիս, նոր բանի հանդիպելիս հարկավոր է նախ ծանոթանալ երևույթի վերաբերյալ ընդհանրական տեղեկություններին և մոտեցումներին:

Էջ 5, 33, 55, 91, 117, 145

**բ. Գլխագիր**

Յուրաքանչյուր նոր դաս սկսվում է Գլխագրի «Այս դասին դու...» բառերով: Գլխագրերում ներկայացվում են դասի հիմնական նպատակները, այն թե ինչ է սպասում սովորողին դասը ուսումնասիրելիս: Այդտեղ գրվում է, թե ինչ են վերհիշելու, սովորելու և ամրապնդելու սովորողները, ինչեր են անելու և կատարելու, ինչ կարևոր արժեքների շուրջն են խոսելու և իրենց կարծիքները ձևավորելու: Շնորհիվ այս խորագրի՝ երեխաները սովորում են յուրաքանչյուր դասից առաջ նախ ծանոթանալ դասի նպատակին, թե ինչ են իրենք սովորելու, ապա աստիճանաբար նաև իրենց համար պարզում են, որ ցանկացած գործ, այդ թվում նաև սովորելը, լավ անելու և հաջողելու համար նախ հարկավոր է որոշել և հստակեցնել նպատակը, այն, թե ինչ ես ցանկանում ունենալ արդյունքում, որոշել անելիքներդ, հետո անցնել դրանց իրականացմանը: Այդ կերպ այն դառնում է լավ սովորելու և հաջող գործելու գործիք, երեխան սովորում է արդյունավետ սովորել:

Ամեն դասին, հանդիպելով այս խորագրին, երեխան աստիճանաբար ընտելանում է այն գաղափարին, որ ամեն ինչ պետք է սկսել նպատակից, և փորձում է այն կիրառել իր ուսումնառության ընթացքում և վարքում:

Գլխագրերի էջերը.

Էջ 7, 11, 14, 22, 18, 25, 31, 34, 38, 42, 45, 48, 52, 56, 61, 66, 73, 76, 79, 82, 92, 94, 98, 101, 102, 107, 111, 118, 121, 126, 130, 135, 138, 142, 146, 149, 154, 158, 161, 164:

**գ. Մուտքի պատուհանիկներ**

Յուրաքանչյուր դասի սկզբում կա գունավորված շրջանակ՝ համապատասխան գրառմամբ: Այն կոչվում է «Մուտքի պատուհանիկ»: Նշենք, որ «Մուտքի պատուհանի-կում» ներկայացվող գրառումը խթանում է երեխաների երևակայությունը, դասանյութի նկատմամբ հետաքրքրություն է առաջացնում: Դրանցից շատերը ինքնաճանաչմանն ու ինքնակազմակերպմանը տանող մտքեր են, հարցադրումներ, երկխոսություններ, կարճ պատմություններ, հանելուկներ, չափածո դիմումներ, որոնց շուրջ երեխաները սկսում են մտածել:

Մուտքի պատուհանիկի էջեր.

Էջ 7, 18, 22, 25, 24, 38, 42, 45, 48, 56, 61, 66, 73, 82, 92, 98, 101, 107, 111, 118, 121,126, 130, 135, 146, 158, 161, 164:

**դ. Դասից քաղած իմ պտուղները**

Դասագիքի բոլոր դասերն ունեն այս խորագիրը: Խորագրի անվանումն իսկ հուշում է նրա նպատակն ու էությունը: Այն հնարավորություն է տալիս սովորողներին դասի ավարտին անդրադառնալու և վերհիշելու իրենց կատարած քայլերը ողջ դասի ընթացքում և գնահատելու դրանք: «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի միջոցով երեխան պարզում է, թե ինչ նոր բան ձեռք բերեց, սովորեց (գիտելիք), ինչ է կարողանում անել (կարողություն, հմտություն), ինչի վրա պետք է ուշադրություն դարձնի հետագայում, վերլուծում է իր վերաբերմունքը (դիրքորոշում և արժեքներ):

Յուրաքանչյուր դասի ավարտին հանդիպելով այս խորագրին՝ երեխան վարժվում, ապա նաև աստիճանաբար իր հաջող ուսումնառության գործում հասկանում ու կարևորում է վերլուծելու գործընթացի դերը և այն, որ յուրաքանչյուր դասի ավարտին հարկավոր է անդրադարձ կատարել, մշտապես վերլուծել և գնահատել ձեռք-բերումները, աշխատել դրանք զարգացնելու և բարելավելու ուղղությամբ: «Դասից քաղած իմ պտուղները» խորագրով ներկայացվող հարցաշարի միջոցով երեխան նաև սովորում է, թե ինչպես պետք է անդրադարձ և վերլուծություն կատարել, պարզել ձեռքբերումներն ու դժվարությունները, այդ ուղղությամբ իր հետագա անելիքները:

Իր քայլերը վերհիշելն ու գնահատելը նաև սովորեցնում է երեխային հասկանալ, թե ինչպես և ինչ ճանապարհով ինքը յուրացրեց դասը, իր որ քայլերը տարան ցանկալի արդյունքի, ինչից պետք է խուսափել, ինչին առավել ուշադրություն դարձնել: Այս ամենը նպաստում է երեխայի սովորել սովորելու կարողության ձևավորմանը: Երեխան տիրապետում է սովորելու գործիքներին:

Դասից քաղած իմ պտուղների էջերը.

Էջ 10, 13, 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

**ե. Ամփոփման պատուհանիկներ**

Ամփոփման պատուհանիկում ներկայացվում է դասագրքի ընդհանրացնող խոսքը դասանյութի վերաբերյալ: Ամփոփման պատուհանիկը ձևակերպված է այն սկզբունքով, որ սովորողը ծանոթանա այդ մտքին և «աշխատի» դրա հետ. համեմատի իր կարծիքի հետ, օրինակներ բերի, զուգահեռներ տանի իր կյանքի ու կենսափորձի հետ, դատողություններ և համապատասխան հետևություններ անի: Ամեն թեմայի ավարտին կարդալով ամփոփման պատուհանիկի ընդհանրացնող միտքը, ուղերձը, գաղափարը, երեխան սովորում է, որ ցանկացած նյութ յուրացնելիս, ընկալելիս հարկավոր է այն ամփոփել, ամբողջացնել, հետևություններ անել և փորձում է այն կիրառել իր ուսումնառության ընթացքում: Սա նույնպես սովորել սովորելուն ուղղված միջոց է:

Ամփոփման պատուհանիկների էջերը.

Էջ 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 141, 153, 157, 160, 163, 168:

**զ. Սովորի՛ր հարցեր տալ**

Սովորաբար սովորողի պատկերացումներն ու գիտելիքներն այս կամ այն հարցի վերաբերյալ պարզելու համար մենք հարցեր ենք ուղղում նրան՝ ակնկալելով պատասխաններ: «Սովորում ենք հարցեր ձևակերպել» խորագիրը փոխում է կարծես ավանդույթ դարձած մոտեցումն այն առումով, որ սովորողը նյութը յուրացնելու համար ոչ թե հարցերին է պատասխանում, այլ նյութի շուրջ ինքը հարցեր է ձևակերպում: Սա իրապես ավելի բարդ գործընթաց է, ու եթե սովորողը կարողանում է ուսումնասիրվող երևույթների, իրադարձությունների վերաբերյալ դիպուկ հարցեր ձևակերպել, ապա վստահաբար կարելի է ասել, որ նա ընկալել ու սովորել է այն: Այստեղ խորագիրը կարծես շրջուն է դարձնում իմացության գործընթացն այն առումով, որ իմանալու, սովորելու համար երեխան սովորում է ճիշտ ու դիպուկ հարցեր ձևակերպել՝ ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ և այլն: Կարևորն այն է, որ սովորողն իր համար պարզում է, որ սովորելու արդյունավետ ձևերից մեկը ճիշտ հարցեր ձևակերպելն է, որ հարցերի միջոցով ևս ինքը կարող է յուրացնել դասանյութը, գիտելիք ձեռք բերել: Սա նույնպես սովորել սովորելուն ուղղված միջոց է:

«Սովորի՛ր հարցեր տալ» խորագրի և առաջադրանքների էջերը.

Էջ 16(4), 19(Հ-5), 26(Հ-7), 29(9), 31(1), 37(7), 39(Հ-4), 40(2), 50(2), 59(5), 70(5), 85(4), 87(8), 102(Հ-5), 103(3), 127(4), 134(9), 136(1), 136(2), 167(4):

**Է. Փոքրիկ հետազոտական աշխատանք**

«Անելու միջոցով սովորելու» գաղափարն առավել քան համահունչ է կրտսեր դպրոցականի մտածողության առանձնահատկություններին, այն առավել դյուրին է դարձնում սովորելու գործընթացը, «ապահովում է սովորողի հանդիպումը իրական կյանքին և խնդիրներին, իրեն հուզող հարցերին»: Ինչն էլ նպաստում է որոշակի հարցերի, երևույթների և իրադարձությունների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների խթանմանը: Երեխան սովորում է գործելու միջոցով սովորել. գործնական ճանապարհով լուծել խնդիրները, գտնել հարցերի պատասխանները:

Հետազոտական աշխատանք կատարելը նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, գիտելիքները ինքնուրույն կիրառելու, քննադատական մտածողության, հետադարձ հայացքով անդրադարձ կատարելու ունակությունների ձևավորմանը և, ի վերջո, սովորել սովորելու կարողունակության զարգացմանը:

«Մայրենի-2» դասագրքում զետեղված հետազոտական փոքրիկ աշխատանքները, առաջադրանքները երեխաներին սովորեցնում են ինքնուրույն կամ խմբով տեղեկություններ և կարծիքներ քաղել առաջադրված խնդրի մասին տարբեր աղբյուրներից (գրականություն, մեծահասակներ, համացանց և այլն) հարցումներ և դիտարկումներ անել, հարցեր նախապատրաստել, փոքրիկ քայլաշար ստեղծել, այդ ամենը գրառել և ներկայացնել: Երկրորդ դասարանում նրանց, իհարկե, օգնում և հարկ եղած դեպքում ուղղորդում են ուսուցիչներն ու ծնողները, մեծահասակները:

Փոքրիկ հետազոտական աշխատանքները արտացոլված են դասագրքի հետևյալ էջերում. 6(2), 10(8), 13(6), 17(8), 21(9), 30(14), 59(7), 65(8), 82(1), 100(6), 110(11), 129(8):

### ը. «Զույգով աշխատանք», «Խմբային աշխատանք»

**Աշխատանքի կազմակերպման այս ձևերին** առավել մանրամասն անդրադարձել ենք ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության տեսանկյունից, որտեղ նրանք առավել դիպուկ ու թիրախային խնդիրներ են լուծում: Բայց ամեն անգամ, երբ սովորողը իր համադասարանցու հետ կամ փոքր խմբով աշխատանքներ է կատարում ու նաև վերլուծում, թե ինչպես և ինչի շնորհիվ կարողացավ հասնել ցանկալի արդյունքի, այս տեսակետից մենք նպաստում ենք սովորողների «սովորել սովորելու» կարողունակության զարգացմանը: Այս դեպքում ոչ միայն սովորողի սոցիալական կարողություններն են ձևավորվում, երեխան ոչ միայն սովորում է արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել, այլև սովորում է մյուսների հետ, միմյանց օգնելով ու լրացնելով գտնել իրեն հուզող հարցերի պատասխանը, հասնել հաջողության: Նա համոզվում է, որ «մի խելքը լավ է, երկուսն՝ ավելի» և պարզում է, որ սովորել կարող է ինչպես անհատապես, այնպես էլ ընկերների հետ համատեղ: Երեխան բացահայտում է արդյունավետ սովորելու ճանապարհ՝ համատեղ աշխատանքն ու համագործակցությունը:

Պարբերաբար զույգային կամ խմբային աշխատանքներ կատարելիս երեխան սովորում է լսել ընկերներին և նրանց կարծիքները, այս կամ այն հարցի լուծման նպատակով

նրանց առաջարկած տարբերակները, որոշումներ կայացնելիս հաշվի առնել մյուսների մտքերն ու մոտեցումները: Աշխատանքի կազմակերպման նման եղանակները ձևավորում են սովորողի անհատական պատասխանատվություն ընդհանուր արդյունքի համար: Ընդգրկվելով նման աշխատանքների մեջ՝ երեխան սովորում է սովորելու արդյունավետ ճանապարհ:

Զույգերով աշխատանքի առաջադրանքների էջեր.

Էջ 8(1), 15(1), 17(8), 19(2), 20(6), 21(9), 28(7), 85(4), 97(9), 108(2), 127(4), 150(3), 169(1), 171(5):

Խմբային աշխատանքի առաջադրանքների էջեր և առաջադրանքների համարները.

Էջ 6(1), 13(5), 16(5), 30(11), 41(4), 43(1), 44(6), 50(2), 53(3), 102(2), 106(10), 112(2), 140(1):

**Սովորեցնողի դերերը:** Խմբային, համագործակցային աշխատանքների ժամանակ սովորողները ստանձնում են դերեր և սովորում են երևույթներն ու իրադարձությունները ուսումնասիրել տարբեր եղանակներով ու ձևերով, տարբեր տեսանկյունից, տարբեր դերերով: Սա նույնպես համագործակցային աշխատանքի յուրահատկություն է և սովորել սովորելու հրաշալի միջոց: Հատկապես կարևորվում է, երբ երեխան ոչ թե սովորողի դերում է հանդես գալիս, այլ սովորեցնողի:

Սովորեցնողի դերում հանդես գալուն նպաստում են նաև դասագրքի նկարազարդ պատմությունները, հետաքրքրաշարժ առաջադրանքները և հարցերը, անակնկալ «Մուտքի պատուհանիկները», տեքստերը, սկզբնանկարները, «Ենթադրենք հանդիպել ես մեկին, որը չգիտի…», «Հիմնավորի՛ր միտքդ», «Հորինի՛ր մի պատմություն», «Այնպե՛ս բացատրիր, որ հասկանա», «Տեքստը պատմի՛ր որևէ հերոսի անունից», «Բացատրի՛ր ընկերոջդ» և այլ խորագրերով աշակերտին ուսուցչի դերում ներկայացնող նյութերը: Այստեղ աշակերտը որպես ուսուցիչ ներկայացնում է առարկայի, երևույթի էական հատկանիշները, փորձում է որքան հնարավոր է պարզ բացատրել այս կամ այն առաջադրանքը, իրողությունը, և այլն: Երեխան դառնում է ուսուցիչ, և մեծանում է պատասխանատվությունը ինչ-որ բան ճիշտ բացատրելու: Կարելի է ստեղծել այնպիսի իրավիճակ, որ եթե նա սխալ բացատրի, ապա իրենց ինքնաթիռը, տիեզերանավը, առագաստանավը վթարի կենթարկվի: Մեծանում է ինքնավերահսկողությունը, հաղթահարվում են ծուլությունը, անուշադրությունը, գործը մինչև վերջ հասցնելու անկարողությունը, սխալվելու վախը:

Ոչ ստանդարտ մտածողության, երևույթներն անսովոր տեսանկյունից դիտարկելու, երևակայության զարգացման համար, որոնք ստեղծարար մտածողության հիմքն են, կարելի է երեխաներին առաջարկել, որ նրանք տեքստը պատմեն տարբեր հերոսների անունից:

Հատկանշական է, որ այս գաղափարը դասագրքում կոնկրետացել է նաև տեքստով: Որպես օրինակ դիտարկենք «Ընկերներ» դասը: Այստեղ ընկերներից մեկը կարողանում է դառնալ «ուսուցիչ» և խաղի միջոցով կարողանում է ընկերոջ մեջ հետաքրքրություն առաջացնել դասի, գրել-կարդալու նկատմամբ:

Դրան նպաստում են նաև բազմապիսի հետաքրքրաշարժ առաջադրանքները՝ լրացրու՛ խաչբառը, Մրցույթ դասարանում, Նկարելուկ, Հանելուկ, Շուտասելուկ, ՈՒԽ առաջադրանքներ, և այլն, և այլն:
Դասագրքում այդպիսի նյութեր են.

էջ 7(տեքստը), 8(Հ-7), 11(տեքստը), 13(5), 14(տեքստը), 16(5), 18(տեքստը), 23(1), 28(7), 39(Հ-5), 53(3), 81(7), 85(3), 85(4), 97(9), 100(5), 100(9), 104(7), 108(2), 119(1), 136(1), 150(3), 162(3), 169(1):

**թ. Ինքնուրույն սովորելու կարողություն, ինքնակազմակերպվածություն**

«Սովորել սովորելու» կարողությունը ենթադրում է նաև ինքնուրույն սովորելու կարողություն, ինքնակազմակերպվածություն: Այն ենթադրում է օգտագործել սեփական հնարավորությունները նպատակին հասնելու համար՝ ճիշտ տնօրինել ժամանակը, սեփական ուժերը և միջոցները: Ինքնակազմակերպվելն արտահայտվում է արտաքին ազդեցություններից առավելագույնս զերծ մնալով, գործողությունները առանց կողմնակի օգնության իրականացնելով: Դասագրքում երեխաների ինքնակազմակերպման համար կան բավականաչափ միջոցներ, տեքստեր, տարբեր առաջադրանքներ: Որպես կանոն, առաջադրանքների և հանձնարարականների մեծ մասում ինքնուրույնության տարրը առկա է այն առումով, որ դրանք սովորողներին ստիպում են, նախ, ինքնուրույն մտածել, դատողություններ անել, գտնել առաջադրված խնդիրների պատասխանները, առաջարկություններ անել, և այլն: Նշենք նաև դասագրքի այն էջերը, որտեղ առավելապես շեշտադրվում են սովորողի ինքնուրույն աշխատանքն ու ինքնակազմակերպվածությունը:

**ժ. Տեքստեր, առաջադրանքներ**

Դասագրքում կան տեքստեր, որոնք ներկայացնում են սովորել սովորելու գաղափարը: Օրինակ՝ «Ընկերները» (18) փոքրիկ պատմվածքը: Պատմվածքում ընկերներից մեկը մյուսին, որը չէր սիրում գրել, կարդալ, որևէ բան սովորել, հետաքրքրաշարժ բառախաղի միջոցով սովորեցնում է սովորել: Այստեղ կարևորվում է այն գաղափարը, որ համապատասխան մոտեցման դեպքում հնարավոր է սովորելը դարձնել հետաքրքիր ու սիրելի: Նմանատիպ պատմություններ են «Գիրքը համոզում է Արային» (73), «Ե՛վ նման ենք, և՛ տարբեր» (98), «Ես» (34), «Փոքրիկի մեծ զարմանքը» (154), «Իրավունքն է ծնում պարտականություն» (158), «Պատմում է Մկնիկը» (104), «Ո՞վ եմ ես» (7-17), «Փոքրիկ պարուհին» (48), և այլն:

Առաջադրանքներ: Դասագրքում կան սովորել սովորելու կարողունակության զարգացմանը նպաստող առաջադրանքներ:

էջ 6(1), 8(1), 16(4), 23(1), 28(5), 28(6), 36(4), 37(5), 54(8), 85(3,4), 112(2), 116(4), 134(9), 154(1):

### 4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքին կատմամբ, գիտակցում են ՀՀ Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողները արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788*

### ա. Ժողովրդավարության, ազատության բարեվարքություն, սեփական քաղաքացիական պարտք

Շնորհիվ կարողունակության այս բաղադրիչի երեխաները սովորում և գիտակցում են, որ կրթությունն ու կյանքի պայմանները պետք է մատչելի և հասանելի լինեն բոլոր երեխաների համար, որ անհրաժեշտ է ապահովել հավասար պայմաններ ու հնարավորություններ կրթական տարբեր կարիքներ ունեցող երեխաների համար:

Երբ ուսուցման հիմքում դրվում են ժողովրդավարության և ազատության սկզբունքները, երեխաները աստիճանաբար սովորում են ազատորեն և անկաշկանդ արտահայտել իրենց մտքերն ու կարծիքները, չեն վախենում սխալվելուց, դառնում են հանդուրժող, լսում և ընդունում են ընկերների կարծիքները և հասկանում, որ դրանք կարող են լինել տարբեր:

Այս կարողունակությունը ենթադրում է նաև քաղաքացիական պարտքի ձևավորում, երեխաների կողմից սեփական և դիմացինի պարտականությունների գիտակցում, ապա կատարում, փոխօգնություն, իր ուժերի ներածի չափով մասնակցություն հանրային կյանքին և սեփական խնդիրների լուծմանը:

Երկրորդ դասարանցի աշակերտի համար բարեվարքությունը նշանակում է լինել ազնիվ, ճշտապահ, ճշմարտախոս, կարգապահ, ջանասեր, դրսևորել անաչառություն և անկեղծություն իր հարաբերություններում ու գնահատականներում: Ինչպես նաև սովորել և սեփական վարքում դրսևորել վարքի այն նորմերն ու կանոնները, որոնք ընդունված են իր համայնքում, հասակակիցների շրջապատում: Այս ամենը ապահովում է բարենպաստ միջավայր ապրելու և սովորելու համար, համատեղ և խաղաղ կեցություն:

Դասագրքում երեխաների մեջ այս որակների ձևավորմանը նպաստող բազմաթիվ տեքստեր, առաջադրանքներ և տարբեր խորագրերով ներկայացվող նյութեր ու հետազոտական աշխատանքներ կան:

Այս կարողունակությանը նպաստում են նաև աշխատանքի կազմակերպման տարբեր ձևերը՝ անհատական, զույգային, խմբային, ինչպես նաև համատեղ աշխատանքի կանոնները, որոնք արտացոլված են առաջադրանքների հրահանգներում։

**Տեքստերի էջեր.** Ո՞վ եմ ես (էջ 7), Ընկերները (էջ 18), Խոսքի ուժը (էջ 22), Մի հեքիաթ ոզնու մասին (էջ 25), Փոքրիկ պարուհին (էջ 48), Ե՛վ նման ենք, և՛ տարբեր (էջ 98), Ով աշխատի, նա կուտի (էջ 101), Ո՞ւմ ծառն է (էջ 107), Հայկի հարազատ հյուրերը (էջ 140), Էլմերը (էջ 146), Տունը (161), Փոքրիկի մեծ զարմանքը (էջ 154), Իրավունքն է ծնում պարտականություն (էջ 158)

**Առաջադրանքների և տարբեր խորագրերով ներկայացվող նյութերի էջեր**

Էջ 6(1), 8(1), 16(4), 17(8), 21(9), 24(5), 24(ԱՊ), 30(11), 32(5), 43(5), 44(6), 47(ԱՊ), 50(1), 54(8), 62(Հ-4, 5), 63(1), 65(ԱՊ), 72(Գիտե՞ս, որ…), 72(ԱՊ), 90(7), 99(Հ-4, 5), 99(1), 106(ԱՊ), 108(Հ-3), 108(1), 110(ԱՊ), 112(1), 115(2), 141(3), 154(1), 155(Հ-3, 4), 157(ԱՊ), 158(ՄՊ), 160(ԱՊ), 160(3), 160(Հ-1, 2, 3, 4), 163(ԱՊ), 169(1), 170(2), 170(3), 171(6), 172(7)։

**բ. Մեր հայրենիքի նկատմամբ**

Փոքրիկների համար հայրենիքը ընտանիքն է, դպրոցը, ընկերները, բակը, փողոցը, իրենց գյուղը կամ քաղաքը։ Երեխայի համար հայրենիք կարող է լինել իր պայմանական, երևակայական այն աշխարհը, որ ստեղծվում է հեքիաթներով ու խաղերով. հեքիաթի հերոսներն ու սիրելի խաղալիքները դառնում են փոքրիկի ընկերները, որոնց հետ նա ապրում է այդ աշխարհում։

Հայրենիքի նկատմամբ սերը նշանակում է ոչ միայն ճանաչել, այլ նաև հոգատար վերաբերմունք դրսևորել, խնամքով և խնայողաբար վերաբերվել շրջապատին, բնությանը և ռեսուրսներին։

Եվ այդ աշխարհներից յուրաքանչյուրով հնարավոր է մի փոքրիկ չափաբաժին իրական հայրենիքի պատկերացում տալ երեխային։

- **Տեքստեր**

Դասագրքում կան հայրենիքին նվիրված տեքստեր։ Ներկայացնենք դրանք։

Հայ երեխայի համար հայրենիքը կարող է սկսվել նույնիսկ մի բառից՝ հայ։ Ինչո՞ւ ենք մենք մեզ հայ ասում։

Եվ այդպես էլ սկսվում է «Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը» զրույց-տեքստը (էջ 56), որից էլ փոքրիկ Արմենն իմանում է, թե ով է Հայկ Նահապետը, և թե ինչու ենք մենք մեզ հայ անվանում։ Զրույց-պատումը մի անբռնազբոսիկ երկխոսություն է պապիկի ու թոռնիկի միջև, սակայն պարունակում է տեղեկություններ, որոնք անպայման կհետաքրքրեն ընթերցող փոքրիկներին։ Օրինակ՝ ո՞վ էր Հայկը, ո՞վ էր Բելը, ինչո՞ւ

նրանք կռվեցին, ինչպե՞ս Հայկը հայտնվեց երկնքում, ինչո՞ւ են մեր երկիրն անվանում Հայաստան, ինչո՞ւ ենք մենք մեզ հայ անվանում: Զրույցի վերջում փոքրիկ Արմենի այն միտքը, որ ինքը վախենում է հարևանի շնիկից, թեթևացնում ու զվարթացնում է զրույցը: Հումորը տեքստը մոտեցնում է երեխաների սրտին ու մտքին:

Հայրենիքի մասին հաջորդ տեքստով՝ «Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ» (էջ 61) ներկայացվում է մեր դյուցազներգության ամենավառ հերոսներից մեկը՝ Սասունցի Դավիթը: Դավթի կերպարը, նրա ուժեղ, համարձակ, քաջ, ազնիվ, մարդասեր ու մեծահոգի լինելը, որը ցայտուն կերպով արտացոլված է տեքստում, բարեվարքության մի փոքրիկ, բայց անմոռանալի դաս է փոքրիկ ընթերցողների համար:

Հաջորդ զրույցը մայրաքաղաք Երևանի մասին է՝«Երևան» (էջ 66): Երեխաներն իմանում են, թե երբ է կառուցվել Երևան քաղաքը, ով է կառուցել, սկզբում ինչ անուն է ունեցել, ինչպես է այդ անունը դարձել Երևան: Իմանում են, որ Երևանը մի քաղաք է, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

Դասի ընթացքում ծանոթանում են պետական երեք խորհրդանիշի. լսում են Երևան քաղաքի օրհներգը, տեսնում են և ուսումնասիրում Երևանի զինանշանն ու դրոշը:

Երեք զրույց, երեք հեքիաթային աշխարհ, հայրենիքի մասին երեք ծանոթություն ու գիտելիք:

Սուրեն Մուրադյանի «Հայրենիք» բանաստեղծության (էջ 82) մեջ բավականաչափ մանրամասն ներկայացված է, թե ինչ է հայրենիքը փոքրիկի համար՝ ընտանիքը, դպրոցը, բակը, խաղալիքները, ծառ ու ծաղիկը, լեռներն ու լճերը: Դասի ընթացքում երեխաները ծանոթանում են Հայաստանի մի շարք աշխարհագրական վայրերի, մշակութային ու գիտական հաստատությունների, կարդում են, թե ինչ է հայրենիքը իրենց հասակակիցների համար շատ հետաքրքիր նյութը:

«Գիրքը» եռամաս պատմությունը (էջ 73) նվիրված է անհիշելի ժամանակներից մինչև օրս հարատևող գրքի պատմությանը: Այս պատմության մեջ ևս առկայծում է հայրենիքը, նրա մշակույթը, մշակութային նվաճումներից մեկը՝ հայոց այբուբենը, և նրա ստեղծող Մեսրոպ Մաշտոցը: Դասի ընթացքում երեխաները ծանոթանում են «Մշո ճառընտիր» գրքի հուզիչ պատմությանը:

«Արևն ու ծիածանը» հեղինակային հեքիաթը (էջ 121) բնության չքնաղ երևույթներից մեկի՝ ծիածանի մասին է: Ընթերցող փոքրիկները կտեսնեն, որ իրենց հայրենիքի արևն էլ է հայ, ծաղիկներն էլ, և նրանք իրար հետ հայերեն են խոսում:

«Աստղեր» զրույց-պատմության մեջ (էջ 130) հետաքրքրաշարժ ձևով ներկայացվում են մեր հայրենիքի գիտամշակութային հզոր կոթողներից մեկը՝ աստղադիտարանը, և նրա հիմնադիր, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:

Մեկ այլ աշխարհահռչակ գիտնականի՝ Հովհաննես Ադամյանի մասին է «Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին» պատումը (էջ 135): Այստեղ ևս պատմական փաստերի հիման վրա, թեթև զրույցի տեսքով, հումորային տարրերով հագեցած երկխոսության միջոցով ներկայացված են Ադամյանի կյանքն ու գործունեությունը, գունավոր հեռուստատեսության ստեղծման ճանապարհին նրա գյուտերն ու վաստակը:

- **Առաջադրանքներ, փոքրիկ հետազոտական աշխատանքներ**

էջ 58(Գիտե՞ս, որ…), 58(4), 59(7), 60(8), 60(ԱՊ), 63(1,3), 64(6), 65(8), 65(ԱՊ), 68(1), 69(2,4), 70(Գիտե՞ս, որ…), 72(Գիտե՞ս, որ…), 72(ԱՊ), 77(Հ-5), 82(ՄՊ), 82(1), 84(Հ-3), 85(4), 86(6), 87(ԱՊ), 131(Հ-3), 139(Հ-1, 2):

### 5. Թվային և մեդիա կարողունակություն

Վերոնշյալ կարողունակությունը «Մայրենի-2» դասագրքում արտացոլված է հետևյալ կերպ:

### ա. Ծանոթացում մեդիա միջոցների և մեդիա արտադրանքի հետ:

Դասագրքում բազմաթիվ ու բազմաբնույթ առաջադրանքներ կան, որոնց միջոցով ամենատարբեր հասկացություններ երեխաներին մատուցվում են խաղերով: Թվային և մեդիա կարողունակության մասին նախնական պատկերացումներ և անհրաժեշտ գիտելիքներ երեխաները ձեռք են բերում գործնական ճանապարհով՝ **QR կոդի** միջոցով:

ա. Դրանք կարող են լինել լեզվական հասկացություններ, որոնք մատուցվում են **երգերով և երգերի տեսահոլովակներով**.

Հնչյուն-տառի երգը-8(3), Ե-ի երգը-20(4), Ռ-ի երգը-27(3), Ը-ի երգը-40(1), և-ի երգը-50(3), Հայոց այբուբենի երգը-77, Չ-ի երգը-93(1), Գործողություն ցույց տվող բառերի երգը-100(3):

բ. Դասագրքում տեղ են գտել զանազան **էլեկտրոնային առաջադրանքներ**, որոնք գրքի համապատասխան խաղային առաջադրանքների էլեկտրոնային տարբերակներն են: QR կոդի միջոցով երեխաները կարող են այդ առաջադրանքները կատարել համա-պատասխան սարքերի միջոցով: Այդպիսի առաջադրանքներ են.

ՎԱՆԿԱՏՈՒՆ-էջ 9(4), ԿԵՆԴԱՆԻՆԵՐ-էջ 10(7), ԱՆՈՒՆՆԵՐ-էջ 12(2), ՓՈԽԱԴՐԱՄԻ-ՋՈՑՆԵՐ- էջ 13(4), ԽՆՁՈՐ- էջ 27(2), ՈՁՆԻ- էջ 29(9), ՄԱՅՐԻԿ- էջ 43(5), ՄԱՅՐԻԿ -էջ 104(6), ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ-էջ 104(6), ԱՉՔԻ ԱՌԱՋ-էջ 133(4):

գ. Դասագրքում կա 12 շուտասելուկի **տեսահոլովակ**, որոնք երեխաները կարող են դիտել շուտասելուկի մոտ զետեղված QR կոդի միջոցով:

էջ 16(6), 27(4), 41(5), 46(3), 81(6), 97(7), 106(11), 113(5), 118(ՄՊ), 124(8), 163(7):

Դասագրքի 51-րդ էջի «Գիտե՞ս, որ…» խորագրով ներկայացվող Պարի միջազգային օրվան նվիրված տեսահոլովակի դիտում:

Ուսումնական նյութեր բաժնում ևս զետեղված են տեսահոլովակներ:

### բ. Թվային մեդիայի օգտագործման հետ կապված ռիսկերի գիտակցում:

Դասագրքի 140-րդ էջում ներկայացված է մի զվարթ պատմություն՝ ՀԱՅԿԻ ՀԱՐԱՋԱՏ ՀՅՈՒՐԵՐԸ: Այս պատմությունը նախ հետաքրքրական է իր կառուցվածքով՝ պատ-

մության բոլոր բառերն սկսվում են Հ տառով: Սա խթան է, որ երեխաները գոնե հետաքրքրության համար կարդան պատմությունը: Երկրորդ՝ այստեղ բավական մատչելի կերպով ներկայացված է, որ համակարգիչը, հեռատեսիլը, հեռուստացույցը, հեռախոսը, համացանցը ինչքան էլ որ սիրելի են ու օգտակար, դրա հետ մեկտեղ կարող են «համը հանել»:
Այսինքն՝ պետք չէ շատ տարվել դրանցով:
Տրված է առաջադրանք.
ի՞նչ պետք է անել, որ խելացի սարքերը «համը չհանեն»: Մտածի՛ր, քննարկի՛ր ընկերոջդ հետ:

### 3. Տեղեկատվության հոսքում կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկույթը հայթայթելու և մշակելու ունակություն:

Դասագրքում կան առաջադրանքներ, խորագրեր՝«Փոքրիկ հետազոտական աշխատանք», «Սովորի՛ր հարցեր տալ», որոնց շրջանակներում երեխաները հարցումներ են անում, զրույցներ են վարում մեծահասակների հետ, տեղեկությունները փնտրում են գրքերում, հանրագիտարաններում, համացանցում: Իրենց ձեռք բերած տեղեկությունները քննարկում են մեծահասակների հետ:
Դասագրքի էջ 161–ում «Տունը» բանաստեղծությունը ուսումնասիրելու արդյունքում երեխաները հասկանում են, որ միևնույն երևույթը տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում, գնահատում, հետևաբար ճիշտ կողմնորոշվելու համար հարկավոր է լսել բոլորի կարծիքները, հետո որոշում կայացնել:

Փոքրիկ հետազոտական աշխատանքի էջեր՝ 6(2), 10(8), 13(6), 17(8), 30(14), 59(7), 65(8), 82(1), 100(6):
«Սովորի՛ր հարցեր տալ» խորագրի և առաջադրանքների էջերը՝ 16(4), 19(Հ-5), 26(Հ-7), 29(9), 31(1), 37(7), 39(Հ-4), 40(2), 50(2), 59(5), 70(5), 85(4), 87(8), 102(Հ-5), 103(3), 127(4), 134(9), 136(1), 136(2), 167(4):

## 6. Մշակութային կարողունակություն

Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն ու ճաշակ:

Վերոնշյալ կարողունակությունը «Մայրենի-2» դասագրքում արտացոլված է հետևյալ կերպ.

**Ա. Հայ մշակույթի ու մարդկային մշակութային բաղադրիչների ճանաչում:**
**Բ. Սեփական ինքնության, ընտանիքի արժևորում:**
**Գ. Պատկերացում Հայաստանի աշխարհագրության և պատմության մասին:**

Չափորոշչային այս պահանջները, բնականաբար, դասագրքում ներկայացվել են երկրորդ դասարանցիների աշխարհընկալումներին և կենսափորձին համապատասխան: Դրանք ներկայացված են մի շարք տեքստերով և տեքստերին կից համապատասխան հարցերով ու առաջադրանքներով, տեսահոլովակով, հետազոտական փոքրիկ աշխատանքներով, խաչբառերով, նկարաշարերով: Դասագրքում զետեղված առածասացվածքները, շուտասելուկները, խնդուկներն ու հանելուկները երեխաներին ավելի են մոտեցնում հայ ժողովրդին և նրա մշակույթին:

## Ա. Հայ մշակույթի ու մարդկային մշակութային բաղադրիչների ճանաչում

**Փոքրիկ պարուհին-էջ 48:** Այս դասանյութն ուսումնասիրելիս երեխաները դիտում ու ծանոթանում են և իրենց վերաբերմունքն արտահայտում հայ և այլ ազգերի պարերին:

**«Աստղեր» (էջ 130)**: Այս զրույց-պատմության մեջ հետաքրքրաշարժ ձևով ներկայացվում են մեր հայրենիքի գիտամշակութային հզոր կոթողներից մեկը՝ աստղադիտարանը, և նրա հիմնադիր, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:

**«Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին (էջ 135):** Այստեղ երեխաները ծանոթանում են աշխարհահռչակ գիտնականին՝ Հովհաննես Ադամյանին և նրա գյուտին: Այստեղ ևս պատմական փաստերի հիման վրա, թեթև զրույցի տեսքով, հումորային տարրերով հագեցած երկխոսության միջոցով ներկայացված են Ադամյանի կյանքն ու գործունեությունը, գունավոր հեռուստատեսության ստեղծման ճանապարհին նրա գյուտերն ու վաստակը:

## Բ. Սեփական ինքնության, ընտանիքի արժևորում

**Ո՞վ եմ ես-էջ 7:** (*Մարդկային ընտանիք:* Արտահայտված է սեր ընտանիքի, իր անձի հանդեպ):

**Խոսքի ուժը-էջ 22:** (Փոքրիկ աղջնակի կողմից բարության և հոգատարության դրսևորում հիվանդ մոր նկատմամբ):

**Մի հեքիաթ ոզնու մասին-էջ 25**: (*Կենդանիների ընտանիք:* Ոզնի Ասեղի կողմից բարության և հոգատարության դրսևորում փոքր եղբոր նկատմամբ):

**Նկարչություն-էջ 42:** (*Մարդկային ընտանիք:* Որդու մեծ սերը իր մոր նկատմամբ, որն արտահայտվում է մոր մասին քնքուշ հուշերի ու այդ հուշերը նկարելու միջոցով):

**Կաքավի գովքը-էջ 45:** (*Թռչունների ընտանիք:* Կաքավիկն իր ձագուկների համար բույն է հյուսում, մեծացնում նրանց և աշխարհին ու մարդկային սրտերը լցնում գեղեցիկ երգերով):

**Փոքրիկ պարուհին-էջ 48:** (*Մարդկային ընտանիք:* Ինչպես է փոքրիկ աղջնակը մայրիկին պատմում պարուհի դառնալու իր երազանքի մասին: Ինչպես է մայրիկը նրան ներկայացնում այդ երազանքին հասնելու դժվարությունները և ինչպես է գուրգուրում ու խրախուսում նրան):

**Չարաճճին-էջ 92:** (*Տառերի ընտանիք:* Ինչպես չարաճճի Չ տառը հեռացավ տառերի իր ընտանիքից, ինչ արկածներ ունեցավ, ինչպես նորից վերադարձավ հարազատ ընտանիք, ու միասնաբար ինչպես բարի գործեր կատարեցին):

**Ե՛վ նման ենք, և՛ տարբեր-էջ 98:** (*Մարդկային ընտանիք:* Ինչպես ընտանիքում տարբեր խառնվածք ունեցող երկվորյակները կատարեցին մայրիկի ասածները, ինչպես նրանցից մեկը ծուլացավ, ինչպես ամաչեց իր ծուլանալու համար: Մայրիկը ծուլություն դրսևորած աղջնակին ինչպես կարողացավ հմտորեն ու աննկատ տեսցնել նրա սխալը):

**Կորած օրը-էջ 111:** (*Մարդկային ընտանիք:* Ինչպես ընտանիքում փոքր եղբայրը մեծ եղբորից լսելով, որ օրն էլ կարող է կորչել, ամեն օր անկողին մտնելիս մի տեսակ հաշվետվություն է տալիս իրեն ու մեծ եղբորը հարցնելով՝ նրան՝ այսօրվա օրը կորած չէ, չէ՞):

**Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին-էջ 135:** (*Մարդկային ընտանիք:* Ինչպես են պապիկ ու թոռ զրուցում, ինչպես է պապիկը թոռնիկի համար բացահայտում գունավոր հեռուստատեսության գյուտի հեղինակներից մեկի՝ Հովհաննես Ադամյանի կյանքն ու գործունեությունը, ինչպես են նրանք միասին երազում ապագայի մասին):

**Էլմերը-էջ 146:** (*Փղերի ընտանիք:* Ինչպես Էլմեր անունով մի փղիկ ապրում էր մեծ ու համերաշխ ընտանիքում: Ինչպես էր չարաճճիություններ անում, կատակում և ուրախացնում ընտանիքի մյուս անդամներին: Ինչպես փղերի ընտանիքը որոշեց Էլմերի անունով տոն ստեղծել ու ամեն տարի տոնել):

## Գ. Պատկերացում Հայաստանի աշխարհագրության և պատմության մասին:

**«Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը» (էջ 56):**

«Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը» զրույց-տեքստից փոքրիկ Արմենն իմանում է, թե ով է Հայկ Նահապետը, և թե ինչու ենք մենք մեզ հայ անվանում, մեր երկիրը՝ Հայաստան: Իմանում է նաև մի շարք տեղեկություններ մեր պատմության մասին:

**«Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ» (էջ 61)**: Այս տեքստով ներկայացվում է մեր դյուցազներգության ամենավառ հերոսներից մեկը՝ Սասունցի Դավիթը: Դավթի կերպարը, նրա ուժեղ, համարձակ, քաջ, ազնիվ, մարդասեր ու մեծահոգի լինելը, որը ցայտուն կերպով արտացոլված է տեքստում, բարեվարքության մի փոքրիկ, բայց անմոռանալի դաս է փոքրիկ ընթերցողների համար:

**«Երևան» (էջ 66): Այս** զրույցը մայրաքաղաք Երևանի մասին է: Երեխաներն իմանում են, թե երբ է կառուցվել Երևան քաղաքը, ով է կառուցել, սկզբում ինչ անուն է ունեցել,

ինչպես է այդ անունը դարձել Երևան: Դասի ընթացքում ծանոթանում են պետական երեք խորհրդանիշի. լսում են Երևան քաղաքի օրհներգը, տեսնում են և ուսումնասիրում Երևանի զինանշանն ու դրոշը:

**«Հայրենիք» (էջ 82)**: Սուրեն Մուրադյանի «Հայրենիք» բանաստեղծության միջոցով երեխաները ծանոթանում են Հայաստանի մի շարք աշխարհագրական վայրերի, մշակութային ու գիտական հաստատությունների:

**«Գիրքը» (էջ 73)**: Պատմությունը նվիրված է անհիշելի ժամանակներից մինչև օրս հարատևող գրքի պատմությանը: Այս պատմության մեջ առկայծում են հայրենիքը, նրա մշակույթը, մշակութային նվաճումներից մեկը՝ հայոց այբուբենը, և նրա ստեղծող Մեսրոպ Մաշտոցը: Դասի ընթացքում երեխաները ծանոթանում են «Մշո ճառընտիր» գրքի հուզիչ պատմությանը:

Այս կարողունակության վերոնշյալ բաղադրիչները արտացոլված են դասագրքի հետևյալ առաջադրանքներում և հետազոտական աշխատանքներում.

էջ 58(Գիտե՞ս, որ…), 58(4), 59(7), 60(8), 60(ԱՊ), 63(1,3), 64(6), 65(8), 65(ԱՊ), 68(1), 69(2, 4), 70(Գիտե՞ս, որ…), 72(Գիտե՞ս, որ…), 72(ԱՊ), 77(Հ-5), 82(ՄՊ), 82(1), 84(Հ-3), 85(4), 86(6), 87(ԱՊ), 131(Հ-3), 139(Հ-1, 2):

## Գլուխ 5. ՏԱՐԲԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴԱՍԱԳՐՔՈՒՄ

Հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Հարկ է նշել, որ երեխաներն ունեն զարգացման ինչպես տարիքային, այնպես էլ անհատական առանձնահատկություններ: Բոլոր երեխաներն էլ ունեն իրենց անհատական կրթական կարիքները, նախասիրությունները և իրենց հատուկ սովորելու ոճը: Ճկուն մեթոդիկայով գրված դասագիրքը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր երեխա ձեռք բերի իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Դրան հասնելու համար անհրաժեշտ է, որ դասագրքում լինեն համապատասխան միջոցներ ու պայմաններ, իսկ ուսուցիչներն էլ կիրառեն համապատասխան մեթոդներ, հնարներ երեխաների անհատական կրթական կարիքներն ու պահանջները բավարարելու համար:

Քանի որ երեխայի կրթությունն ու դաստիարակությունը իրականանում է սոցիալական տարբեր օղակներում՝ընտանիք, մանկապարտեզ, դպրոց և այլն, ապա անհրաժեշտ է, որ այդ միջավայրերում իշխեն սոցիալական համերաշխությունը, փոխադարձ սերն ու հարգանքը: Դրան մեծապես օգնում են կրթական ճկուն ծրագրերը և դրանց հիման վրա ստեղծված դասագրքերը: Այդ համատեքստում հաշվի են առնվել

**Ուսումնառության համընդհանուր ձևավորման (ՈՒՀՁ) հիմնական սկզբունքները.** նյութի ներկայացման բազմազանություն, գիտելիքի արտահայտման բազմազանություն, ներգրավման ձևերի բազմազանություն§:

Դասագրքի մեթոդական մշակումների, առաջադրանքների բազմազանությամբ հաշվի են առնվում սովորողների անհատական կարիքները, պահանջները և ուսումնառության ոճերը:

«Մայրենի-2» դասագրքում կան տարաբնույթ առաջադրանքներ և խորագրեր, որոնց շուրջ ուսուցիչը կարող է աշխատանքներ կազմակերպել կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների համար:

Դիտարկենք դրանցից մի քանիսը:

**Թեմատիկ շարքի սկզբնանկարներ:** Ամեն թեմատիկ շարքի սկզբնանկարների միջոցով հնարավոր է զարգացնել այդ երեխաների ուշադրությունը, խոսքը, հարստացնել նրանց բառապաշարը: Ամենակարևորն այն է, որ յուրաքանչյուր երեխա ընդգրկվի դասապրոցեսի մեջ և իր կարողությունների չափով ծանոթանա թեմատիկ շարքի դասերին: Այդ առումով աշակերտները կարող են անվանել դրվագանկարներում պատկերված նկարները, կազմել նախադասություններ, մատնանշել այս կամ այն առարկան, հերոսին:

**Նկարազարդումներ:** Իրենց կարողությունների սահմանում խոսք կառուցելու, ուշադրությունը կենտրոնացնելու, հրահանգը լսելու և կատարելու հնարավորություն, դասի նկատմամբ հետաքրքրություն ստեղծելու հնարավորություն են տալիս բոլոր դասանյութերի, ինչպես նաև որոշ առաջադրանքների նկարազարդումները: Այստեղ ուսուցիչը կարող է տարաբնույթ աշխատանքներ կատարել: Երեխաներին առաջարկել, որ նրանք.

ա. Ասեն, թե ինչ է պատկերված նկարում:

բ. Ցույց տան նկարում պատկերված կենդանիները և անվանեն դրանք:

գ. Գտնեն նկարում պատկերված ծաղիկները, ծառերը:

դ. Հաշվեն, թե քանի մարդ է պատկերված նկարում:

ե. Անվանեն նկարում պատկերված առարկաները:

Եվ նման բնույթի փոքրիկ այլ առաջադրանքներ:

**Տեքստերի հարմարեցում**: Ուսուցիչը կարող է տեքստը կրճատել, փոխել բառահումքը՝ հարազատ մնալով տեքստի բովանդակությանը:

Օրինակ, դասագրքի 22-րդ էջի «Խոսքի ուժը» տեքստը կարելի է համառոտել և հարմարեցնել ներառված երեխաների կարողություններին:

Պայմանավորված երեխաների կարդալու ունակություններով՝ կարող են տեքստերը ըստ ծավալի ու բարդության աստիճանաբար փոփոխվել:

§ § CAST (2018). Universal Design for Learning Guidelines version 2.2. http://udlguidelines.cast.org

1. Մայրիկը հիվանդացել էր: Աղջիկը խնամեց նրան: Մայրիկը առողջացավ:
2. Մայրիկը հիվանդացել էր: Պառկել էր անկողնում: Աղջիկը մոտեցավ նրան: Համբուրեց, թեյ առաջարկեց: Ջերմ խոսքեր ասաց: Մայրիկը առողջացավ:
3. Մայրիկը մրսել էր, հիվանդացել: Անկողին էր ընկել: Աղջիկը թեյ առաջարկեց: Հոգատար ու ջերմ վերաբերմունք ցույց տվեց մայրիկին: Մայրիկը առողջացավ:

Ներկայացնենք մի տեքստ ևս. «Մի հեքիաթ ոզնու մասին» (էջ 25):

1. Փոքրիկ ոզնին հիվանդացել էր: Բժիշկ Այբոլիտը գրեց, որ նրան պետք է խնձոր տալ: Ոզնու մեծ եղբայրը խնձորներ բերեց: Հիվանդ ոզնին կերավ, լավացավ:
2. Փոքրիկ ոզնին հիվանդացել էր: Բժիշկ Այբոլիտը գրեց, որ նրան պետք է խնձոր տալ: Ոզնու մեծ եղբայրը գնաց այգի: Խնդրեց, որ խնձորենին իրեն խնձոր տա: Խնձորենին խնձոր տվեց: Ոզնու մեծ եղբայրը խնձորները բերեց: Հիվանդ ոզնին կերավ, լավացավ:
3. Փոքրիկ ոզնին հիվանդացել էր: Բժիշկ Այբոլիտը գրեց, որ նրան պետք է խնձոր տալ: Ոզնու մեծ եղբայրը գնաց այգի: Խնդրեց, որ խնձորենին իրեն խնձոր տա: Խնձորենին ասաց, որ սիրով կտա: Բայց ոզնին չգիտեր, թե ինչպես քաղեր: Քամին օգնեց նրան: Խնձորենուն թափ տվեց: Խնձորները ընկան ոզնու փշերի վրա: Ոզնու մեծ եղբայրը խնձորները բերեց: Հիվանդ ոզնին կերավ, առողջացավ:

Այս նույն հեքիաթը առավել թույլ կարողություններ ունեցող երեխաներին սովորեցնելու համար ուսուցիչը կարող է օգտագործել հեքիաթի նկարների դրվագաշարը: Կարելի է նախօրոք պատրաստել նկարները և տալ այդպիսի երեխաներին, որ նրանք, հեքիաթը լսելուց հետո, դրանք դասավորեն ըստ հեքիաթի բովանդակության գործողությունների հաջորդականության:

Ուսուցիչը կարող է կազմել պարզագույն հարցեր իր համառոտած տեքստի վերաբերյալ:

**Տարաբնույթ առաջադրանքներ**: Յուրաքանչյուր դասի նյութերում կան առաջադրանքներ, որոնք ուսուցիչը կարող է հարմարեցնել հատուկ կարիքով աշակերտների համար: Հարմարեցում պետք է կատարել ըստ կարիքի՝ հաշվի առնելով աշակերտի ուժեղ կողմերը:

Քանի որ աշակերտների կարիքները տարբեր են, ապա **միևնույն առաջադրանքով հնարավոր** է կատարել տարբեր աշխատանքներ: Դասագրքի առաջադրանքները լայն հնարավորություն են տալիս, որ ուսուցիչները երեխաների հետ կատարեն տարաբնույթ աշխատանքներ:

Դասագրքում կան առաջադրանքներ, որոնք հնարավոր է **ունկնդրել, դիտել, կատարել**: Դրանք նաև հնարավորություն են տալիս, որ նման աշակերտները օգտվեն ժամանակակից միջոցներից:

Դասագրքում կան բազմաթիվ **նկարազարդ առաջադրանքներ**, որոնք ուսուցիչը կարող է հարմարեցնել աշակերտների անհատական կրթական կարիքներին, կատարել տարբեր աշխատանքներ:

Դիտարկենք մի քանի օրինակ:

**Էջ 10, 7-րդ առաջադրանք:** Երեխաները կարող են անվանել նկարում պատկերված կենդանիներին: Ուսուցիչը կարող է ունենալ այդ կենդանիների նկարներով քարտեր և հանձնարարել, որ երեխաները նկար-քարտերը համապատասխանեցնեն նկարում պատկերված կենդանիներին:

Նման աշխատանք հնարավոր է կատարել նաև 13-րդ էջի 4-րդ առաջադրանքում պատկերված փոխադրամիջոցների հետ: Այս աշխատանքի միջոցով ուսուցիչը կհարստացնի աշակերտների բառապաշարը, կընդլայնի նրանց աշխարհաճանաչողությունը:

Կարելի է հանձնարարել, որ երեխաները թվարկեն իրենց իմացած այլ փոխադրամիջոցներ:

Աշակերտները կարող են անվանել նկարներում պատկերված առարկաները՝ էջ 15(2), էջ 16(4): Կազմել նախադասություններ, պատմել նկարների բովանդակությունը: Այս աշխատանքը հնարավորություն կտա, որ աշակերտները կառուցեն խոսք, կզարգանան նրանց դիտողականությունն ու ուշադրությունը:

Այդ աշակերտներից առավել ունակները կարող են կատարել 15-րդ էջի 3-րդ վարժության առաջին կետը. տեքստից դուրս գրել 3 բառ, որոնք ունեն մեկ ձայնավոր հնչյուն:

Դասագրքի բոլոր տեքստերը նկարազարդված են: Նկարները բավական ցայտուն կերպով ներկայացնում են տեքստի բովանդակությունը, մատչելի են ընկալման համար, ցուցադրում են տեքստում կատարվող գործողությունները, երևույթները: Դրանք կարող են օգտագործվել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքներ կատարելիս: Դրանք որոշ դեպքերում հնարավորություն կտան, որ երեխաները հասկանան տեքստում կատարված իրադարձությունները և պատմեն, եթե անգամ դժվարանում են կարդալ:

Առաջադրանքների էջերը:

Էջ՝ 6(1), 10(7), 12(1), 13(3), 15(2), 16(4,6), 20(6), 21(8), 28(5,8), 32(4), 35(1), 44(6), 47(6), 51(5), 53(6), 54(8), 59(7), 63(3), 64(4), 65(8), 71(6), 75(4), 82(1), 87(7), 88(1), 96(5), 99(2), 109(7), 115(2), 120(5), 123(3,4), 125(11), 127(2), 128(5), 132(1), 133(7), 141(3), 142(1), 143(5), 144(1), 155(2), 158, 162(4), 168(6), 169(1), 171(6):

Մի քանի օրինակ:

**28-րդ էջի 5-րդ առաջադրանքը** հնարավորություն կտա, որ երեխան հասկանա տեքստում կատարված իրադարձությունները և պատմի, եթե անգամ դժվարանում է կարդալ:

**44-րդ էջի 6-րդ առաջադրանքով** պահանջվում է ստեղծել շնորհավորական բացիկ մայրիկի համար: Ուսուցիչը կարող է նախապես աշակերտների հետ տեխնոլոգիայի ժամին կտրատել բացիկին անհրաժեշտ մասերը: Այնուհետև, մայրենիի դասաժամին

աշակերտները կարող են ինքնուրույն կամ մեծահասակի օգնությամբ սոսնձել և պատրաստել բացիկը:

Այս աշխատանքը աշակերտներին կներշնչի ինքնավստահություն, կզարգանան նրանց ձեռքերի նրբաշարժումները, որոշում կայացնելու կարողությունները՝ գույնը, ձևը ընտրելիս:

**47-րդ էջի 6-րդ առաջադրանքը** կատարելիս աշակերտները կանվանեն ծաղիկները, կմատնանշեն իրենց ծանոթ ծաղիկը, կնկարեն իրենց դուր եկած ծաղիկը, կհաշվեն ծաղկի անվան տառերի, հնչյունների քանակը, կասեն, թե որ տառով է սկսվում և այլն:

**60-րդ էջի 8-րդ առաջադրանքը** կարելի է հարմարեցնել երեխաների անհատական կրթական կարիքներին ու պահանջներին այնպես, որ նրանք կարողանան ուսուցչի օգնությամբ առանձնացնել մի քանի հերոսի, հիշեն նրանց անունները: Հերոսների անունները և նրանց նկարները ուսուցիչը կարող է փակցնել առանձին քարտերի վրա և առաջարկել, որ երեխաները դրանք համապատասխանեցնեն իրար: Այս աշխատանքը կարելի է կատարել պարբերաբար, որպեսզի աշակերտները հիշեն անուններ՝ Մեսրոպ Մաշտոց, Հովհաննես Թումանյան, Սասունցի Դավիթ, և այլն: Իսկ հետագայում կարելի է ավելացնել այդ շարքը:

**75-րդ էջի 4-րդ առաջադրանքում** պահանջվում է, որ աշակերտները գրեն, թե ինչ են տեսնում նկարներում: Այս առաջադրանքով ակնառու ներկայացված են **մեկ** և **շատ** հասկացությունները: Երեխաները նկարների միջոցով կարող են տեսնել մեկ և շատ առարկաներ: Այս աշխատանքը խորացնելու նպատակով ուսուցիչը կարող է պատրաստել քարտեր, որոնց մի մասի վրա գրված կլինեն **մեկ, շատ** բառերը, իսկ մյուս քարտերի վրա կլինեն մեկ կամ շատ առարկաների նկարներ: Երեխաները պետք է քարտերը համապատասխանեցնեն իրար: Այդպես կարելի է ընդլայնել աշակերտների աշխարհաճանաչողությունն ու հարստացնել բառապաշարը:

**90-րդ էջի 8-րդ առաջադրանքի** դեպքում ուսուցիչը կարող է խաչբառի տողերը մեծ չափսերով առանձին-առանձին գծել թղթի վրա: Նկարում պատկերված առարկաների նկարները ունենալ առանձին քարտերով: Նկարների անվանումների տառերը գրել առանձին թղթիկների վրա: Առաջին փուլում երեխաները պետք է տառերով կազմեն նկարներում պատկերված առարկաների անունները և տեղադրեն համապատասխան նկարի տակ: Առաջադրանքի այս մասը ուսուցչի կամ նրա օգնականի միջոցով հաջողությամբ կատարած երեխաներին առաջարկել, որ նրանք յուրաքանչյուր տառ սոսնձեն տողերի համապատասխան վանդակում: Այս աշխատանքը կատարելուց հետո սոսնձեն բոլոր տողերը և ամբողջացնեն խաչբառը:

Ուսուցիչը կամ կարդալու հմտություն ունեցող որևէ աշակերտ ընդգծված այունակում կկարդա ՀԱՅԱՍՏԱՆ բառը: Այսպիսի աշխատանքով կզարգանան երեխաների մոտորիկան, հնչյունային վերլուծություն կատարելու կարողությունը, կամրապնդվի տառերի և բառերի ճանաչումը, ինչպես նաև կզարգանա բառապաշարը և կմեծանա հետաքրքրությունը ուսման նկատմամբ:

**96-րդ էջի 4-րդ առաջադրանք:** Աշակերտները պետք է ասեն, թե ով ինչ է անում (Հայկը երգում է: Անուշը պարում է: Արամը սղոցում է: Ծովինարը կարդում է): Երեխաները անունները կհամապատասխանեցնեն նկարներին: Կսովորեն, որ մարդկանց անունները գրվում են մեծատառով:

Ուսուցիչը կարող է առաջադրանքում ներկայացված անունները փոխել դասարանի երեխաների անուններով: Դա կնպաստի, որ ԿԱՊԿՈՒ երեխաները հիշեն իրենց դասընկերների անունները, որովհետև երբեմն այդ աշակերտները դժվար են հիշում դասընկերների անունները:

Կարելի է դասընկերների անունները գրել քարտերի վրա և խաղալ «Գտի՛ր, թե ով է» խաղը: Աշակերտները պետք է քարտը տան նրան, ում անունը գրված է քարտի վրա: Դա խթան կլինի, որ այդ աշակերտները վերհիշեն տառերը, կարողանան կարդալ, հիշեն դասընկերների անունները, զարգացնեն սոցիալական շփման իրենց ունակությունները:

**112-րդ էջի 2-րդ առաջադրանք:** Երեխաները կանվանեն իրենց ծանոթ առարկաները (թմբուկ, ամրակ, մեխ, մկրատ), կասեն, թե որտեղ են տեսել, ինչ կարող են անել դրանցով:

**120-րդ էջի 5-րդ առաջադրանքը** հնարավորություն կտա, որ երեխաները նկարում ճանաչեն և անվանեն իրենց ծանոթ բնության երևույթները, դրանք նկարեն և պատմեն դրանց մասին իրենց իմացածը:

**123-րդ էջի 4-րդ և 132-րդ էջի 1-ին առաջադրանքները** կատարելիս ուսուցիչը կարող է երեխաների համար նախօրոք պատրաստել նկար-քարտեր, կազմել կողմնորոշիչ աղյուսակ և հանձնարարել, որ այդ աշակերտները նկար-քարտերը սոսնձեն համապատասխան սյունակներում: Կարող է նաև հանձնարարել, որ նրանք շարքը լրացնեն իրենց ծանոթ առարկաների նկարներով: Նկարները կարող է նախապես տրամադրել կամ հանձնարարել, որ նկարեն:

**128-րդ էջի 5-րդ առաջադրանքը** կատարելու համար անհրաժեշտ է ունենալ դասագրքի էջի պատճեններ: Երեխաներին առաջարկել, որ նրանք անվանեն և շրջագծեն ծանոթ առարկաները: Առավել բարձր ունակություններ ունեցողներին առաջարկել, որ նրանք առանձնացնեն միավանկ և բազմավանկ բառերը: Կարելի է ունենալ նկար-քարտեր և աղյուսակ: Առաջարկել, որ երեխաները խմբավորեն առարկաները՝ սոսնձելով համապատասխան սյունակում:

**«Դեպի վեր» խորագիր**: Դասագրքում կան «Դեպի վեր» բնույթի առաջադրանքներ: Դրանք բարդության տարբեր աստիճաններ ունեցող միևնույն առաջադրանքի կամ տարբեր բարդությամբ առաջադրանքների համակարգ են: Այդ առաջադրանքները նախատեսված են տարբեր կարողություններով աշակերտների համար, այդ թվում նաև օժտված երեխաների համար, և ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ աշակերտները հնարավորության դեպքում կարողանան աստիճանաբար կատարել դրանք:

Ընդունելի է, որ յուրաքանչյուր աշակերտ առաջադրանքը կատարի այն չափով, որքանով կարողանում է, բայց միաժամանակ ուսուցիչը խրախուսում է բոլոր առաջադրանքները կատարելու աշակերտների ջանքերն ու փորձերը:

Այս առաջադրանքի առաջին կետերը հեշտ է հարմարեցնել աշակերտների պահանջներին:

Առաջադրանքների էջերը

Էջ 9(5), 15(3), 20(5), 23(2), 29(10), 31(1), 36(3), 40(3), 58(4), 64(4), 93(1), 102(1), 120(5), 122(1), 128(5), 132(1), 137(3), 168(6):

**Դասագրքի 23-րդ էջի 2-րդ առաջադրանքը** «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է: Դրա առաջին կետով պահանջվում է գրել, թե ինչեր են պատկերված նկարներում (եկեղեցի, եռանկյուն, երգիչ, գիրք, երամ, Էրեբունի):

Ըստ անհատական կրթական կարիքների ու հնարավորությունների՝ սովորողների մի մասը կարող է կատարել ամբողջ առաջադրանքը, մի մասը կարող է գրել մի քանի բառ, որոշ սովորողներ էլ՝ պարզապես թվարկել մի քանի առարկա:

**29-րդ էջի 10-րդ առաջադրանքը** «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է: Դրա առաջին կետով պահանջվում է գրել, թե ինչեր են պատկերված նկարներում (ռմամակ, օրորոց, որսորդ, ոզնի, որդ, օգոստոս):

**31-րդ էջի 1-ին առաջադրանքը** հնարավորություն կտա, որ երեխաները վերհիշեն թեմատիկ շարքի հերոսներին (նրանց մի մասին): Ուսուցիչը կարող է հարցնել, որ նրանք պատմեն, թե ինչ են հիշում յուրաքանչյուր հերոսի մասին, ինչ է արել նա, ինչ է հերոսի անունը: Ելնելով կարիքից կարող է տալ տառեր և հանձնարարել, որ երեխաները տառերից յուրաքանչյուրը դնեն այն հերոսի նկարի կողքին, որի անունը սկսվում է այդ տառով:

## *Գլուխ 6.* ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

### ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ
### Ա. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

**1. Լսի, հասկանա և համապատասխան արձագանք տա լսածին:**

Վերջնարդյունքը ձևավորվում է տեքստի վերաբերյալ հարցերին, համապատասխան առաջադրանքներին պատասխանելիս, ընկերներին լրացնելիս, օրագրի հարցերը ընկերներին ներկայացնելիս և կարծիքներ լսելիս, զույգերով և խմբային աշխատանքների մասնակցելիս, Մուտքի պատուհանիկների, Ամփոփման պատուհանիկների, Գլխագրերի կետերի շուրջ զանազան քննարկումների մասնակցելիս և ազատորեն իր կարծիքը հայտնելիս:

**2. Ձևակերպի հարցեր բանավոր ընթերցած կամ տեխնոլոգիական որևէ միջոցով ունկնդրած տեքստի հիմնական գաղափարի վերաբերյալ:**

Վերջնարդյունքը ձևավորվում է դասագրքի՝ տեքստի վերաբերյալ բազմաթիվ հարցերի և առաջադրանքների միջոցով:

**Հարցեր:** էջ 19(6), 26(7), 68(4), 102(5):
**Առաջադրանքներ:** էջ 10(8), 15(1), 16(4), 20(6), 24(6), 29(9), 30(14), 31(1), 37(7), 39(4), 40(2), 50(2), 54(9), 59(5, 7), 63(3), 65(8), 70(5), 81(5), 85(4, 6), 87(3), 103(3), 116(4), 119(1), 127(4), 134(8, 9), 136(1, 2), 167(4), 173(1):

### 3. Պատմի ապրածի, դիտածի, ընթերցածի մասին, արտահայտի սեփական զգացումները, ցանկությունները:

Վերջնարդյունքը ձևավորվում է «Մուտքի պատուհանիկների», «Դասից քաղած իմ պտուղները» խորագրերի, «Ամփոփման պատուհանիկների», Սկզբնանկարների շուրջ քննարկումների ընթացքում, ինչպես նաև զանազան առաջադրանքների միջոցով:
**Սկզբնանկարներ:** էջ 5, 33, 55, 91, 117, 145:
**Մուտքի պատուհանիկներ:** էջ՝ 7, 18, 22, 25, 24, 38, 42, 45, 48, 56, 61, 66, 73, 82, 92, 98, 101, 107, 111, 118, 121,126, 130, 135, 146, 158, 161, 164:
**Դասից քաղած իմ պտուղները:** էջ 10, 13, 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:
**Ամփոփման պատուհանիկներ:** էջ 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 141, 153, 157, 160, 163, 168:
**Գլխագրերի կետեր:** էջ՝ 7, 11, 14, 22, 18, 25, 31, 34, 38, 42, 45, 48, 52, 56, 61, 66, 73, 76, 79, 82, 92, 94, 98, 101, 102, 107, 111, 118, 121, 126, 130, 135, 138, 142, 146, 149, 154, 158, 161, 164:

**Առաջադրանքներ:** էջ 5, 6(1), 6(2), 8(1), 10(2), 13(6), 15(1), 16(4), 17(8), 18(Նախատեքստ), 20(6), 21(9), 23(1), 24(5), 28(8), 30(14), 32(5), 36(4), 43(1, 4), 44(6), 50(2), 51(5), 54(8), 59(7), 63(3), 81(4, 7), 82(1), 85(4), 90(7), 108(1), 112(2), 115(2), 116(4), 119(1), 136(1), 140(2), 154(1), 169(1):

### 4. Նկարագրի մարդկանց, վայրեր, իրադարձություններ, առարկաներ, երևույթներ՝ պարզ արտահայտելով մտքերն ու զգացումները:

Վերջնարդյունքը ձևավորվում է բազմաբնույթ հարցերի և առաջադրանքների միջոցով:

**Հարցեր:** էջ 8(1-7), 11(1-5), 15(1-3), 19(1-4), 21(1-3), 26(3,5), 38(1), 39(1-4), 46(1-4), 49(1-5), 57(3), 62(1-5), 68(1), 77(1-3), 93(2), 95(1-5), 98(2), 99(2, 3 ,5, 6), 102(2, 3), 108(2-5), 118(1-4), 131(2-4), 136(1), 139(5), 147(1-3), 149(1-3),
162(2-7):
**Առաջադրանքներ:** էջ 5, 6(1), 8(2). 13(8), 23(2), 28(4, 6), 29(9), 32(3), 33, 35(1), 36(4), 37(5), 40(3), 41(4), 44(6), 53(2,4), 54(6), 55, 58(1,4), 61(3, 4), 63(1, 3), 64(3), 81(7), 85(2), 91, 105(8), 108(2), 112(2), 115(2, 3, 4), 117, 119(1), 120(5), 122(3, 4), 123(4), 126(Նկարատակը), 128(4), 132(1), 136(1), 140(1), 142(1), 143(4), 145, 146(Նկարատակը), 154(1), 162(3), 165(1), 169(1), 170(3), 172(8):

### 5. Արտահայտիչ արտասանի մանկական բանաստեղծություններ (ցանկություն հայտնելու դեպքում), պատմի պատմություններ, տարբեր ժողովուրդների հեքիաթներ՝ ներկայացնելով հիմնական գաղափարը կամ ուղերձը:

Դասագրքում կան բավարար քանակությամբ չափածո ստեղծագործություններ՝ 10 տեքստ, 12 երգ, 15 հանելուկ, 6 շուտասելուկ, 20 քառատող, որոնք իրենց տեղն են գտել «Մուտքի պատուհանիկներում», «Ամփոփման պատուհանիկներում», «Դասից քաղած իմ պտուղները» խորագրում, տեքստերի ներսում, առաջադրանքներում:

Ընդհանուր առմամբ դասագրքում կան 63 մեծ ու փոքր չափածո նյութեր:

## Բ. ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

### 1. Արտագրի ոչ մեծ տեքստեր՝ կատարելով տրված առաջադրանքները:

Այս վերջնարդյունքը ապահովելու համար դասագրքում կան բավարար չափով առաջադրանքներ:
Էջ 9(6), 16(6), 19(3), 26(1), 27(4), 47(4), 59(6), 63(2), 69(4), 81(5), 89(6), 93(2), 97(6), 109(8), 113(7), 116(5), 119(4), 120(6), 141(6), 150(2):

### 2. Գրավոր պատասխանի կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ հարցերին:

Վերջնարդյունքների այս կետը ապահովվում է դասագրքի վարժությունների հետևյալ համակարգով:
**Առաջադրանքներ:** Էջ 8(1, 2), 9(5), 10(7, 8), 12(1, 2), 13(3, 4, 6), 15(2, 3), 16(6). 17(7, 8), 19(1, 2, 3), 20(5, 6), 21(7, 8, 9), 23(2), 24(3, 4, 5, 6), 26(1), 29(10), 30(11, 12, 14), 31(1), 32(2, 4, 5), 36(2, 3), 40(1, 3), 41(6), 43(2-5), 46(2), 47(4, 6), 50(1-4), 51(5), 53(2, 5), 54(7), 58(2-4), 59(5, 6), 60(8), 63(2), 64(4-6), 65(7, 9), 69(3, 4), 70(5), 71(7), 74(1), 75(2-4), 78(1, 2), 80(1-3), 81(4, 5), 84(2), 85(3, 5, 6), 87(7), 89(5, 6), 90(7, 8), 93(1, 2), 96(1, 4, 5), 97(6, 9), 99(1), 100(3, 6, 7), 102(1, 2), 103(3-5), 104(6), 106(9), 108(1, 4), 109(7, 8), 112(1, 3), 113(7), 114(1), 116(4, 5), 119(2, 3), 120(5, 6), 122(1), 123(2, 4), 124(10), 125(11), 127(1), 132(1-3), 133(4), 134(8), 136(2), 137(3, 5), 140(1), 141(4-6), 143(5), 144(6), 148(3), 151(4, 7), 152(8), 157(7), 160(2, 3), 162(4), 168(6), 171(4), 172(7, 9):
**«Դասից քաղած իմ պտուղները»** խորագիր: Էջ 10, 13, 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

### 3. Տրված հարցերի միջոցով վարի երկխոսություն դասընկերների, ուսուցիչների, ծնողների հետ և կատարի նշումներ:

Այս վերջնարդյունքի ապահովումն իրականացվում է հետևյալ հարցերի և առաջադրանքների համակարգի միջոցով:
Էջ 6(2), 10(8), 16(4), 17(8), 19(Հ-4,6), 20(6), 21(9), 24(5,6), 29(9), 30(14), 31(1), 32(5), 37(7), 39(Հ-4), 54(9), 59(5,7), 65(8), 70(5), 85(4,6), 102(Հ-5), 110(11), 127(4), 129(8), 134(9), 136(1,2),

**4. Բառերով և բառակապակցություններով գրավոր արտահայտի իր հույզերը կարդացած ստեղծագործության, ունկնդրած երաժշտության, դիտած ֆիլմի կամ ներկայացման մասին, կազմի շնորհավորական բացիկ:**

Այս վերջնարդյունքը ձևավորվում է մի շարք միջոցներով:
**Առաջադրանքներ:** էջ 8(1), 13(5), 16(5), 17(8), 21(7,9), 24(4-6), 30(11), 43(4), 54(8), 85(3), 96(2), 108(1), 116(4), 134(8), 160(3):
**«Դասից քաղած իմ պտուղները»** խորագիր: էջ 10, 13, 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

**Երգերի տեսահոլովակներ և առաջադրանքներ:** էջ 12(1), 20(4,5), 27(3), 36(3), 40(1), 50(3), 65(7), 75(3), 93(1), 100(3), 151(7), 156(5):
**Շուտասելուկների տեսահոլովակներ և առաջադրանքներ:** էջ 16(6), 27(4), 41(5), 46(3), 81(6), 97(7-2), 106(11), 113(5), 118(ՄՊ), 124(8), 163(7):
**Բեմականացումներ:** էջ 106(10), 110(10), 118(Հ-4), 127(4), 133(7), 155(2):

**Տեսահոլովակներ:** էջ 51(5):
**Շնորհավորական բացիկների ստեղծում**: էջ 54(8), 44(6):

## Գ. ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

**1. Իր հույզերն ու մտքերը արտահայտի ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, զգա դիմացինի հույզերը և դրսևորի համապատասխան վերաբերմունք:**
Տեքստը պատմելիս, հարցերին պատասխանելիս, Մուտքի, Ամփոփման պատուհանիկների, Գլխագրի կետերի, Դասից քաղած իմ պտուղները խորագրի շուրջ քննարկումներին մասնակցելիս, խմբային, զույգային աշխատանքների ընթացքում, լրացումներ կատարելիս, հարցեր ձևակերպելիս, ընկերոջը դիմելիս ու նրան լսելիս, փոքրիկ հետազոտական աշխատանքներ կատարելիս աշակերտը իր միտքն ու հույզերը արտահայտում է ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի ուղեկցությամբ: Որոշակի առաջադրանքներ կատարելիս. օրինակ՝ էջ 44(6), 54(8):

**2. Պարզ խորհրդանիշների միջոցով պատկերի լսածը, տեսածը, ընթերցածը, զգացածը:**
Այդպիսի հնարավորություն երեխաներն ստանում են նկարելուկներ լուծելիս և կազմելիս:
էջ՝ 12(2), 17(6), 30(12), 46(2), 53(4), 89(3), 96(3), 113(8), 137(4), 150(3), 156(3), 157(7):

**3.Կիրառի պարզ նշաններ իր մտքերն ու հույզերն արտահայտելիս:**
Դասագրքում կան բավարար չափով առաջադրանքներ, որոնք կատարելիս երեխաները կիրառում են պարզ նշաններ:
էջ 27(2), 32(5), 43(4), 52(1), 54(8), 97(9), 100(8), 108(1), 108(2), 134(8), 162(5), 165(1), 165(2), 166(2), 170(2):

**4.Մնջախաղով ներկայացնի ընթերցածի, լսածի բովանդակությունը:**
Էջ 13(5), 16(5), 28(7), 36(4), 37(5), 53(3), 142(1):

## Դ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ
## ՏԵՔՍՏԻ ՀԱՍԿԱՑՈՒՄ

**1. Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, ներկայացնի կարդացածի բովանդակությունը՝ պատասխանելով հարցերին, ձևակերպի հարցեր տեքստի հիմնական գաղափարի վերաբերյալ:**

**ա. Կարդալ:**

Կարդալ նշանակում է **ընդունել** գրավոր ներկայացված տեղեկույթը, **մշակել** հիշողության մեջ, **պահպանել** և **վերարտադրել**: Դրան հասնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է երեխային սովորեցնել տեքստի բովանդակության ընկալման արդյունավետ միջոցներ.

Մի քանի խոսք դանդաղ ու արագ կարդալու մասին:

Դանդաղ կարդալն իր պատճառներն ունի.

- Երեխան չի կարողանում կենտրոնանալ՝ նախադասության վերջում մոռանում է, թե ինչ է կարդացել սկզբում:
- Տեսողությունը կենտրոնացնում է մի 2-3 տառի վրա, չի տեսնում ամբողջ բառը ու մոռանում է, թե ինչ հնչյուններ է ասել:
- Թույլ բառապաշարը (անծանոթ բառ կարդալն ավելի դժվար է):
- Տեսողական հետընթաց՝ վերադառնում է արդեն կարդացածին:

Լավ են օգնում շուտասելուկները, տարբեր արագությամբ կարդալը, աղմուկի մեջ կենտրոնանալն ու կարդալը:

Կարդալու արագությունը կարելի զարգացնել պարզ միջոցներով:

Սյունակներով գրված 3-4-տառանի բառերի ընթերցում՝ վերևից ներքև:

Երեխան կարդում է, ասենք, մեկ րոպեում 40 բառ: Ուսուցիչը կամ ծնողը կարող է կարդալ 60 բառ, որ երեխան լսի ու փորձի կարդալ նույն արագությամբ: Նույն առաջադրանքը երեխան եթե կարդա 3 անգամ անընդմեջ, ապա մեծ է հավանականությունը, որ նա 3-րդ անգամ կարդա արդեն մեկ րոպեում:

Այսօրինակ առաջադրանքները կարելի է կրկնել շարունակաբար:

Այնուհետև կարևոր է ստուգել ոչ միայն կարդալու արագությունը, այլև թե ինչ ընկալեց, ինչ հիշեց, ինչ մշակեց, ինչ վերարտադրեց:

Կարդալու արագությունը մեկ րոպեում 25-95 բառ է: Պետք է հիշել նաև, որ ով դանդաղ է խոսում, նա դանդաղ էլ կկարդա:

Դասագրքում բազմաթիվ են կարդալու կարողությունների զարգացմանը նպատակաուղղված միջոցները:

**բ. Ներկայացնել հարցերի բովանդակությունը՝ պատասխանելով հարցերին.**

Էջ՝ 8(1-7), 11(1-5), 15(1-5), 19(1-6), 22(1-4), 26(1-7), 34(4), 35(1-3), 38(1-3), 39(1-6), 43(1-3), 46(1-4), 49(1-6), 57(1-5), 61(1-4), 62(1-9), 66(1-3), 67(1-3), 68(1-4), 74(1-5), 77(1-5), 80(1-4), 84(1-3), 93(1-3), 95(1-7), 98(1, 2), 99(1-7), 102(1-5), 108(1-5), 111(1-4), 118(1-4), 122(1-4), 127(1-4), 131(1-5), 136(1-3), 139(1-4), 147(1-3), 149(1-3), 150(1-3), 155(1-5), 160(1-4), 162(1-6), 165(1-3):

Առաջադրանքներում արտահայտված հարցերի միջոցով.

Էջ՝ 8(3), 31(1), 43(1), 52(1), 53(20, 58(1), 63(1), 69(2,3), 74(1), 78(1), 80(2,3), 81(4), 85(5), 86(6), 88(1), 96(1,2), 103(4), 108(1), 112(1,4), 116(3), 140(1), 143(2), 152(8), 162(1), 166(2), 170(3), 171(5), 172(7,9):

Տեքստի բովանդակության հիմնական միտքը վեր հանող հարցեր.

111(Հ-4), 118(Հ-4), 122(Հ-4), 127(Հ-3), 150(Հ-3), 165(Հ-3):

**գ. Հարցերի ձևակերպում**

Հարցեր տալու կարողությունը հրաշալի միջոց է, որի օգնությամբ կարելի է.
- աշակերտների մեջ ձևավորել ուշադիր կարդալու կարողություն,
- ընդլայնել աշակերտների մտահորիզոնը,
- աշակերտներին սովորեցնել արդյունավետ աշխատել տեղեկույթի հետ,
- բարենպաստ պայմաններ ստեղծել ուսումնական հաջող գործունեության ձևավորման համար:

«Սովորի՛ր հարցեր տալ» առաջադրանքի նպատակն է, որ աշակերտը, ուշադիր լսելով կամ կարդալով տեքստը, կարողանա ճիշտ հարցեր ձևակերպել:
Հարցեր ձևակերպելու կարողությունը ձևավորելու և զարգացնելու նպատակով կարելի է կազմակերպել տարբեր աշխատանքներ.

- ✓ Հարցեր առաջադրել, որոնց պատասխանները տրված նախադասություններն են:
- ✓ Հարցեր առաջադրել տրված փոքրիկ տեղեկատվական տեքստի շուրջ:
- ✓ Կազմակերպել տարաբնույթ լեզվատրամաբանական խաղեր, մասնակից դարձնել զանազան մրցահանդեսների:

Դասագրքում կան բազմաբնույթ հարցեր և առաջադրանքներ երեխաների մեջ հարցեր ձևակերպելու ունակությունների զարգացման համար:

Էջ 6(2), 10(8), 13(5), 16(4), 17(7), 19(Հ-5), 20(6), 21(9), 24(5), 24(6), 26(Հ-7), 29(9), 30(14), 31(1), 32(5), 37(7), 39(Հ-4), 40(2), 50(2), 54(9), 59(5), 59(7), 65(8), 70(5), 85(4), 85(6), 87(8), 102(Հ-5), 103(3), 110(11), 127(4), 129(8), 134(9), 136(1), 136(2):

**2. Տեքստի բովանդակության, բառերի ու արտահայտությունների և նկարագրման միջոցով ներկայացնի հերոսներին, վերլուծի նրանց վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ:**

**ա. Մկզբնանկարների միջոցով** սովորողները նախնական պատկերացումներ են կազմում, ենթադրություններ են անում հերոսների մասին, այնուհետև, տեքստերն ուսումնասիրելիս, համեմատում են իրենց ստեղծած հերոսների վարքը տեքստի իրական հերոսների վարքի հետ:
Էջ 5, 33, 55, 91, 117, 145:

**բ. Տարատեսակ հարցերին պատասխանելու միջոցով:**
Էջ՝ 8(1-5), 11(1-3), 15(1, 2, 4), 19(1-5), 22(1-4), 26(1-7), 29(9), 35(1, 2), 39(1-4), 43(1-3), 46(1-4), 49(1-6), 57(1-5), 62(1-9), 68(1-4), 74(1-5), 77(1-0, 80(1-4), 84(1-3), 93(1-3), 95(1-7), 99(1-7), 102(1-5), 108(1-5), 111(1-4), 118(1-4), 122(1-4), 127(1-4), 131(1-5), 136(1-3), 139(1-4), 150(1-3), 155(1-5), 160(1-4), 162(1-6), 165(1-3):

**գ. Առաջադրանքներ կատարելու միջոցով:**
Էջ 15(1), 16(4, 5), 19(3), 21(7), 24(4), 27(2), 28(8), 30(13), 31(1), 32(3, 4), 36(4), 37(5), 40(1), 52(1), 53(2), 58(1), 59(6, 7), 63(1, 3), 64(6), 69(2-4), 70(5), 70(Գիտե՞ս, որ…), 74(1), 78(1), 80(2, 3), 81(4), 82(1), 85(3, 5, 6), 86(6), 88(1), 90(7, 8), 93(1), 96(1, 2), 99(1), 102(1), 103(3), 104(7), 108(1), 114(1), 115(2), 116(3), 125(11), 128(5), 128(5), 134(8), 136(2), 140(1), 142(1), 143(2), 152(8), 154(1), 162(2), 165(1), 166(2), 167(4), 171(5), 172(7):

**դ. Նկարագրման միջոցով:**
Էջ 15(Հ-3), 28(5), 43(3), 44(6), 46(1), 57(Հ-4), 62(Հ-9), 68(1), 89(2), 93(2), 105(8), 112(3), 120(5), 150(Հ-2), 162(2):

**ե. Ամփոփման պատուհանիկների միջոցով:**
Էջ 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 141, 153, 157, 160, 163, 168:

**զ. Մուտքի պատուհանիկների միջոցով:**
Էջ 7, 18, 22, 25, 24, 38, 42, 45, 48, 56, 61, 66, 73, 82, 92, 98, 101, 107, 111, 118, 121,126, 130, 135, 146, 158, 161, 164:

**3.Տարբերի բանաստեղծությունը և հեքիաթը:**

Դասագրքի առաջին տեքստը բանաստեղծություն է, որտեղ հերոսը իր մասին պատմում է բանաստեղծության միջոցով: Վերհիշում են բանաստեղծություններին բնորոշ մի քանի առանձնահատկություն: Ի տարբերություն հեքիաթի, բանաստեղծության տողերը կարճ են, յուրաքանչյուր տող սկսվում է մեծատառով: Սովորաբար յուրաքանչյուր տողում վանկերի քանակը նույնն է:

Տողերի վերջին բառերի վերջին տառերը հնչողությամբ մոտ են իրար, և այլն:

**4. Լսի, կարդա ոչ գրական պարզ տեքստեր և առանձնացնի կարևոր մտքերը:**

Դասագրքում նման տեքստեր են բոլոր «Գլխագրերի», «Մուտքի պատուհանիկների», «Ամփոփման պատուհանիկների» գրառումները, «Գիտե՞ս, որ, …», «Բառը ափի մեջ», «Կարդա՛ և սովորի՛ր» խորագրերի նյութերը, որոշ առաջադրանքներ:

## Ե. ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դասագրքում լեզվական համակարգը կառուցված է հնչյունաբանություն, բառագիտություն, նախադասություն սխեմայով: Լեզվական բոլոր հասկացությունները նախ կրկնվում են, ապա զանազան հետաքրքրաշարժ միջոցներով՝ *լեզվական տարբեր հասկացությունների մասին երգեր և տեսահոլովակներ, «Բառը ափի մեջ», «Կարդա՛ և սովորի՛ր» խորագրերի նյութեր, վանկախաղեր ու բառախաղեր, հանելուկներ ու շուտասելուկներ, բառքամոցի ու փոխակերպում, նկարելուկներ ու խաչբառեր, բառաղյուսակներ ու գծապատկերներ, տեսախաղեր*, ամրապնդվում է դրանց իմացությունը:

Դասագրքի երկրորդ մասի վերջում կա անվանացանկ՝ **«Լեզվական տարրական գիտելիքների ընդգրկումը դասագրքում»** խորագրով:

### 1. Հնչյուն-տառ

Էջ 8 (3) - Հնչյուն-տառի երգը: Տեսահոլովակ: (Ինչով են տարբերվում հնչյունն ու տառը)

Էջ 9 (5) - Աղյուսակ: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 15 (3) - «Դեպի վեր» առաջադրանք: Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 23 (2) - «Դեպի վեր» առաջադրանք: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 29 (10) - «Դեպի վեր» առաջադրանք: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակնեը)

Էջ 50 (4) - «Դեպի վեր» առաջադրանք: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

Էջ 54 (7) - «Դեպի վեր» առաջադրանք: (Բառերի մեջ հնչյունների և տառերի քանակները)

### 2. Ձայնավոր–բաղաձայն հնչյուն-տառեր

Էջ 12 (1) - Ձայնավորների երգը: (Ձայնավոր հնչյուններ, նրանց տառերը)

Էջ 13 (4) - Աղյուսակ: (Ձայնավորով և բաղաձայնով սկսվող բառերի առանձնացում)

Էջ 15 (3) - «Դեպի վեր» առաջադրանք: (Գրել բառեր, որոնք ունեն մեկ ձայնավոր)

Էջ 58 (3) - Վերականգնել բառերը՝ ավելացնելով ձայնավորները:

### 3. Է-ի, ե-ի ուղղագրություն

Էջ 20 (4) - Ե-ի երգը։ Տեսահոլովակ։ (Ինչպես է ե-ն հնչում բառասկզբում, բառամիջում, բառավերջում)

Էջ 20 (5) - «Դեպի վեր» առաջադրանք։Աղյուսակ։ (Ե-ի հնչողությունը տարբեր դիրքերում)

Էջ 23 (2) - «Դեպի վեր» առաջադրանք։ (Բառակապակցությունները գրել մեկ բառով)

Էջ 69 (4) - Լրացրու՛ աղյուսակը։

### 4. Օ-ի, ո-ի ուղղագրություն

Էջ 26 (1) - Արտագրել՝ ընդգծելով ***ո*** պարունակող բառերը։

Էջ 27 (3) - Ո-ի երգը։ Տեսահոլովակ։ (Ո-ի հնչողությունը բառի մեջ տարբեր դիրքերում)

Էջ 27 (4) - Շուտասելուկ։ (Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողած տառերը)

Էջ 29 (10) - «Դեպի վեր» առաջադրանք։(Բառակապակցությունները գրել մեկ բառով՝ սկսվում են օ-ով կամ ո-ով)

### 5. Ը-ի ուղղագրությունը

Էջ 38 (ՄՊ) – Հանելուկ **ը**-ի մասին

Էջ 38 (Տեքստը) – Ինչպես **Ը**-ն հայտնվեց այբուբենում։

Էջ 38 (Հ-5) -Պատմությունը պատմել Ը-ի անունից։

Էջ 38 (Հ-6) – Ի՞նչ կպատահեր, եթե Ը-ն չունենար գլխարկ։

Էջ 40 – «Ը-ի երգը»։ Տեսահոլովակ։ (Ը-ի ուղղագրությունը)

Էջ 40 (2) - Ը-ի վանկարար դերը։

Էջ 40 ( 3) - Ը-ի վանկարար դերը։

Էջ 41( 4) - Ը-ի վանկարար դերը։

Էջ 41( 5) - Շուտասելուկ։ Տեսահոլովակ։ (Ը-ն շուտասելուկով)

Էջ 168 ( 6) - Վանկատել գաղտնավանկի **ը** ունեցող բառերը։

### 6. և-ի ուղղագրությունը

Էջ 50 (3) - «**և**-ի երգը»։ Տեսահոլովակ։ (**և**-ի ուղղագրությունը)

Էջ 50 (4) - Տեքստից դուրս գրել **և** պարունակող բառեր, հաշվել հնչյունների և տառերի քանակները։

### 7. Այբբենական կարգ

Էջ 64 (4) - Բառերը դասավորել այբբենական հերթականությամբ։

### 8. Տառանուններ

Էջ 124 (6) - Տառանունների փոխարեն գրել համապատասխան տառը և կարդալ բառերը։

### 9. Վանկ

Էջ 9 (4) -Վանկախաղ։ (Կա նաև այս խաղի էլեկտրոնային տարբերակը)

Էջ 10 (7) - Վանկախաղ։ (Կա նաև այս խաղի էլեկտրոնային տարբերակը)

Էջ 27 (2) - Վանկախաղ։ (Կա նաև այս խաղի էլեկտրոնային տարբերակը)

Էջ 36 (3) - «Վանկի երգը» Աղյուսակ։ (Վանկատման պարզագույն կանոնները) Տեքստից միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ բառերի ընտրություն։

Էջ 40 (2) - Ը-ի վանկարար դերը։

Էջ 40 (3) - Ը-ի վանկարար դերը։

Էջ 40 (4) - Ը-ի վանկարար դերը։

Էջ 47 (4) Քառատողի տողերի մեջ հաշվել վանկերի քանակները։

Էջ 54 (7) - Աղյուսակ։ (Լրացնել միավանկ, երկվանկ, եռավանկ բառերով)

Էջ 63(2) - Վանկատել բառը։

Էջ 148 (1) - «Վանկախաղ»։ Խառը կարգով տրված վանկերով կազմել բառեր։

Էջ 168 (6) - Վանկատել գաղտնավանկի **ը** ունեցող բառերը։

### 10. Բառ

Էջ 8 (2) - Օգտագործելով տվյալ բառը՝ կազմել նախադասություն։

Էջ 9 (4) - Կազմել եռավանկ բառեր՝ օգտագործելով տրված վանկերը։

Էջ 9 (5) - Գրել բառեր, որոնք համապատասխանում են աղյուսակի պահանջներին։

Էջ 10 (7) - Միավանկ, բազմավանկ բառերի խմբավորում։

Էջ 12 (1) - Միավանկ, բազմավանկ բառերի առանձնացում։

Էջ 12 (2) - Կազմել բառեր՝ վերծանելով նկարելուկները։

Էջ 15 (3) - Գրել բառեր, որոնք ունեն մեկ ձայնավոր հնչյուն։

Էջ 17 (7) - Վերծանելով նկարելուկները՝ ստանալ նույն իմաստն ունեցող բառեր։

Էջ 18 (9) - Տեքստը՝ բառակազմական խաղ։

Էջ 19 (1-2) -Բառակազմական խաղ՝ փոխակերպում։

Էջ 19 (3) - Հաշվել տողերում բառերի քանակները։

Էջ 20 (5) - Աղյուսակային առաջադրանք **ե** պարունակող բառերի ուղղագրության վերաբերյալ։

Էջ 23 (2) - «Դեպի վեր» առաջադրանք։ (Բառակապակցությունները գրել մեկ բառով՝ սկսվում են **է**-ով կամ **ե**-ով)

Էջ 29 (10) - «Դեպի վեր» առաջադրանք։ (Բառակապակցությունները գրել մեկ բառով՝ սկսվում են **օ**-ով կամ **ռ**-ով)

Էջ 32 (2) - Բառաղյուսակ։ Գտնել «Աչքի առաջ» խորագրի բառերը։

Էջ 35 (1) - Գրել առարկաների անունները։

Էջ 40 (3) – Վանկատել բառերը, բաժանել խմբերի։

Էջ 41 (4) – Վանկատել գաղտնավանկի **ը** ունեցող բառերը «կենդանի տառերի» միջոցով։

Էջ 43 (2) – Կազմել բառեր՝ փոխելով բառի առաջին տառը։

Էջ 50 ( 3) - **և** պարունակող բառերի հնչումը։

Էջ 50 (4) - **և** պարունակող բառերի հնչումը։

Էջ 53 (5) – «Փոխակերպում» բառախաղի միջոցով նոր բառերի կազմում։

Էջ 54 (7) – «Աչքի առաջ» խորագրի բառերով լրացնել աղյուսակը։

Էջ 58 (1) – Բառերը վերագրել հերոսներին։

Էջ 58 (3) – Վերականգնել բառերը՝ ավելացնելով ձայնավորները։

Էջ 19 (3) – Հաշվել բառերի քանակը։

Էջ 64 (4) – Անվանել նկարներում պատկերված առարկաները։

Էջ 64 (5) – Բառակազմական խաղ՝ «Փոխակերպում»։

Էջ 65 (9) – Կազմել նախադասություն տրված բառերով։

Էջ 69 (3) – Լրացնել բաց թողած բառերը։

Էջ 71 (6) – Կարդալ տրված բառերը։

Էջ 71 (7) – Բառերը խմբավորել և գրել աղյուսակում։

Էջ 72 (8) – Տրված բառերով հորինել պատմություն։

Էջ 74 (1) – Լրացնել բաց թողած բառերը։

Էջ 78 (2) – Կազմել բառերի հոգնակին։

Էջ 81( 5) – Դուրս գրել առարկա ցույց տվող բառերը;

Էջ 84 (2) – Դուրս գրել անձ և իր ցույց տվող բառեր։

Էջ 89 ( 3) – Վերծանելով նկարելուկները՝ կազմել բառեր։

Էջ 89 ( 4) – Բառախաղ՝ «Խառնագիր»։

Էջ 89 (5) – Կազմել նախադասություն տրված բառերով։

Էջ 89 (6) – Լրացնել բառերում բաց թողած տառերը։

Էջ 90 (8) – Առարկաների անուններով լրացնել խաչբառը։

Էջ 96 (5) – Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր։

Էջ 100 (4) – Տեքստից գտնել իրարից մեկ տառով տարբերվող բառեր։

Էջ 100 ( 7) – Վերծանելով նկարելուկը՝ կազմել բառ։

Էջ 108 (4) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 102 ( 1) – Լրացնել բաց թողած բառերը։ Կազմել բառակապակցություններ։

Էջ 102 (2) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 104 (6) - «Փոխակերպում» բառախաղը։

Էջ  108 (4) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 109 ( 8) – Հաշվել բառերի քանակը նախադասությունների մեջ, թիվը գրել բառերով։

Էջ 116 ( 5) – Լրացնել բառերում բաց թողած տառերը։

Էջ 119  (2) – «Փոխակերպում» բառախաղը։

Էջ 120 (5) – Լրացնել բաց թողած բառերը։

Էջ 123 (2) – Համապատասխան բառերը տեղադրել նախադասության մեջ։

Էջ 123 (4) – Գրել նկարներում պատկերված առարկաների անունները։

Էջ 124 ( 6) – Վերականգնել բառերը՝ տառանունների փոխարեն գրելով համապա-
տասխան տառը։

Էջ 124 (7) – Տրված բառերով հորինել պատմություն։

Էջ 124 ( 10) – «Փոխակերպում» բառախաղը։

Էջ 127 (1) – «Փոխակերպում» բառախաղը։

Էջ 129 (6) – Բառի առաջին տառը փոխելով՝ ստանալ նոր բառեր։

Էջ 129 (7) – Տրված բառերով կազմել բառակապակցություններ։

Էջ 132 ( 1) – Նկարներում պատկերված առարկաների անուններով լրացնել աղյուսակը։

Էջ 132 (2) – Արտագրել բառերը, ընդգծել ընդհանուր բառամասը։

Էջ 132( 3) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 137 (3) – Տրված արմատներով կազմել նոր բառեր։

Էջ 137 (4) – Վերծանել նկարելուկը, կազմել բառ։

Էջ 137 ( 5) – Տրված արմատով կազմել նոր բառեր։

Էջ 141 (4) – Լրացնել բաց թողած տառերը։

Էջ 141 ( 6) – Թիվը գրել տառերով։

Էջ 143 ( 5) – Գրել նկարներում պատկերված առարկաների անունները։

Էջ 148 ( 3) – Կարդալ բառերը, ընդգծել արմատները։

Էջ 150 ( 3) – Գրել, թե ինչ բառ է պատկերված նկարելուկով։

Էջ 151( 4) – Տրված բառաշարքի բառերը տեղադրել նախադասությունների մեջ։

Էջ 156 (3) – Գտնել, թե ինչ բառ է պատկերված նկարելուկով։

Էջ 156 (6) – Կազմել բառեր՝ օգտագործելով տրված արմատները։

Էջ 158 (1) – «Խառնագիր» բառախաղը։

Էջ 160 (2) – «Բառքամոցի» բառախաղը։

Էջ 171 (4) – Արտագրե՛լ՝ լրացնելով բաց թողած տառերը։

### 11. Բառակապակցություն

Էջ 23 (2) – Տրված բառակապակցությունները գրել մեկ բառով։

Էջ 29 (10) – Տրված բառակապակցությունները գրել մեկ բառով։

Էջ 58 ( 3) – Տրված բառերով կազմել բառակապակցություններ։

Էջ 85 (5) – Ստացված բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ։

Էջ 102 (1) – Կազմած բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ։

Էջ 129 ( 7) – Տրված բառերով կազմել բառակապակցություններ։

### 12. Հակառակ իմաստ ունեցող բառեր

Էջ 24 (3) – Տեքստից դուրս գրել տրված բառերի «հակառակորդ» բառերը։

Էջ 58 (2) – Բառաղյուսակից դուրս գրել հակառակ իմաստ ունեցող բառազույգեր։

Էջ 93 (1) – Երգից դուրս գրել հակառակ իմաստ ունեցող բառազույգեր։

Էջ 144 ( 6) – Գրել հակառակ իմաստ ունեցող բառը։

### 13. Նույն իմաստ ունեցող բառեր

Էջ 17 (7) – Լուծելով նկարելուկները՝ կստանաս երկու նույնիմաստ բառ։

### 14. Առարկա ցույց տվող բառեր

Էջ 64 (4) – Անվանել առարկաները։ Դրանք առարկա ցույց տվող բառեր են։

Էջ 64 (6) – Նախադասությունները լրացնել առարկա ցույց տվող բառերով։

Էջ 65 (7) – «Առարկա ցույց տվող բառերի երգը»

Էջ 67 ( 6) – Առարկա ցույց տվող բառերի հարցերը։

Էջ 71 (7) – Առարկա ցույց տվող բառերով լրացնել աղյուսակը։

Էջ 80 (2) – Գրել նկարներում պատկերված առարկաների անունները։

Էջ 81 (5) – Դուրս գրել առարկա ցույց տվող բառերը։

Էջ 96 (5) – Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր։

Էջ 106 (9) - Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր և լրացնել խաչբառը։

Էջ 128 (5) – Խմբավորել առարկա ցույց տվող բառերը։

Էջ 132 (1) – Բառերը լրացնել աղյուսակում։

Էջ 143 (5) – Առարկա ցույց տվող բառերին ավելացնել ածանցներ։

### 15. Եզակի – հոգնակի

Էջ 71 (6) – Գործնական ծանոթացում եզակի և հոգնակի թվով բառերին։

Էջ 75 (2) – Շարունակի՛ր։ Գործնական ծանոթացում եզակի և հոգնակի թվով բառերին։

Էջ 75 (3) – «Եզակիի և հոգնակիի երգը»։ Ի՞նչ է եզակին, ի՞նչ է հոգնակին։

Էջ 75 (4) – Եզակիի և հոգնակիի գործնական ճանաչում։

Էջ 78 – Կարդա՛ և սովորի՛ր։

Էջ 78 (2) – Եզակի թվով գրված բառերը դարձնել հոգնակի թվով։

Էջ 103 (5) – Եզակի թվով գրված բառերը դարձնել հոգնակի թվով։

### 16. Անձ և իր ցույց տվող բառեր

Էջ 84 (2) – Դուրս գրել անձ և իր ցույց տվող բառեր։

Էջ 87 (7) – Տեքստից ընտրելով անձ և իր ցույց տվող բառեր՝ լրացնել աղյուսակը։

### 17. Գործողություն ցույց տվող բառեր

Էջ 96 (4) – Գործնական ծանոթացում գործողություն ցույց տվող բառերին։

Էջ 96 (5) – Առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր։

Էջ 100 (3) – «Գործողություն ցույց տվող բառերի երգը»։

Էջ 102 (1) – Գործողություն ցույց տվող բառերով կազմել բառակապակցություններ։

Էջ 109 (7) – Գործողություն ցույց տվող բառերը տեղադրել նախադասությունների մեջ։

Էջ 112 (3) – Նկարազարդման մեջ գտնել գործողություն ցույց տվող բառեր։

### 18. Հատկանիշ ցույց տվող բառեր

Էջ 119 (3) – Հատկանիշ ցույց տվող բառերի գործնական ծանոթացում։

Էջ 120 (5) – Առարկա ցույց տվող բառերի համար գրել հատկանիշ ցույց տվող բառեր։

Էջ 122 (1) – Բառին վերագրել հատկանիշներ։

Էջ 123 (39) – Կազմել հատկանիշ ցույց տվող բառեր

### 19. Բառի արմատ

Էջ 132 (2) – Գործնական ծանոթացում նույնարմատ բառերի ընդհանուր մասերին։

Էջ 137 (Կարդա՛ և սովորի՛ր) – Գործնական ծանոթացում բառի արմատին։

Էջ 137 (3) – «Դեպի վեր» առաջադրանք։ (Ընդգծել բառերի արմատները։ Այդ արմատներով կազմել նոր բառեր)

Էջ 137 (5) – Տրված արմատով կազմել նոր բառեր։

Էջ 141(5) - Գտնել տրված բառերի արմատը։

Էջ 148 (2) - Գտնել տրված բառերի արմատը։

Էջ 151 (6) – Գտնել բառի արմատը։

### 20. Ածանցավոր բառեր

Էջ 143 (5) – Բառերին ավելացնել մասնիկներ և ստանալ նոր բառեր։ Գործնական ծանոթացում ածանցավոր բառերին։

Էջ 151 (5) Գործնական ծանոթացում ***ածանց*** բառին։

Էջ 151 (6) – Գտնել բառի արմատը և ածանցը։

Էջ 151 (7) – «Ածանցավոր բառերի երգը»։

### 21. Պարզ բառեր

Էջ 148 (3) – Գործնական ծանոթացում պարզ բառերին։

Էջ 157 (7) – Պարզ բառերից կազմել բարդ բառեր, լրացնել խաչբառը։

### 22. Բարդ բառեր

Էջ 156 (4) – Գործնական ծանոթացում բարդ բառերին։

Էջ 156 (5) – «Բարդ բառի երգը»։

Էջ 156 (6) – Օգտագործելով արմատները՝ կազմել բարդ բառեր։

Էջ 157 (7) – Պարզ բառերից կազմել բարդ բառեր։

## 23. Դարձվածք

Էջ 127 (2) – **Մաղով ջուր կրել:** Ներկայացված է բառակապակցության ուղիղ և փոխաբերական իմաստներն արտահայտող նկարներով և բացատրությամբ:

Էջ 141(3) – **Համը հանել:** Ներկայացված է բառակապակցության ուղիղ և փոխաբերական իմաստներն արտահայտող նկարներով և բացատրությամբ:

## 24. Նախադասություն

ա. Կազմել նախադասություն՝ գործածելով տրված բառերը: Էջ 8 (2), 13 (3), 15 (2), 41 (6), 89 (5), 168 (6):

բ. Ըստ տեսակի ամբողջացնել նախադասության միտքը: Էջ 21(7), 24 (4), 64 (6), 69 (3), 74 (1), 96 (1), 99 (1), 140 (1), 172 (7):

գ. Արտագրել նախադասությունները: Էջ 19 (3), 26 (1), 63 (2), 113 (7), 141 (6):

դ. Բառերի փոխարեն նշանների օգտագործում նախադասությունների մեջ: Էջ 43 (4), 53 (4), 100 (8):

ե. Վերականգնել «քանդված» նախադասությունը: Էջ 43( 5), 109 (6), 122 (1):

զ. Նախադասությունը գրել նկարելուկի տեսքով: Էջ 46 (2), 53 (4):

է. Ավարտել նախադասությունները: Էջ 50 (1), 152 (8):

ը. Գրած բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ: Էջ 85 (5), 102 (1):

թ. Տեքստում գտնել և կարդալ համապատասխան նախադասությունները: Էջ 97 (8):

ժ. Բառերը ճիշտ տեղադրել և ստանալ նախադասություններ: Էջ 103 (4), 109 (7), 133 (4), 151 (4), 162 (4):

ժա. Վերծանել նկարելուկով գրված նախադասությունները: Էջ 113 (8):

ժբ. Ընդարձակել նախադասությունը: Էջ 163 (6):

ժգ. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Էջ 166 (3), 167 (կարդա և սովորիր), 167 (5):

ժդ. Նախադասության սաները: Էջ 164՝ տեքստը:

ժե. Դասից քաղած իմ պտուղները: (Լրացնել անավարտ նախադասությունները):

Էջ 10, 13, 17, 21, 24 ,30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

## 25. Կետադրական նշաններ

Էջ 97 ( 6) – Հանելուկ չակերտների մասին:

Էջ 109 (9) – Հանելուկ հարցականի նշանի մասին:

Էջ 168 (7) – Հանելուկներ վերջակետի և բացականչական նշանի մասին։

Էջ 164 -166 – «Նախադասության սաները» (տեքստ)։

Էջ 165 (1) – Զվարթ առաջադրանք բացականչական նշանի մասին։

Էջ 166 (2) – Աղյուսակի լրացում՝ ո՞ր նշանին կդիմես։

Էջ 167 (4) – Հարց ու պատասխան կետադրական նշանների մասին։

Էջ 168 (ԱՊ)- Հնգատող կետադրական նշանների մասին։

## Զ. ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

### 1. Նկարագրի տեքստի կառուցվածքը՝ ներկայացնելով տեքստի սկիզբը և ավարտը։

Տեքստի կառուցվածքի ճիշտ ընկալմանը հասնելու համար անհրաժեշտ են.
- ուշադիր կարդալ տեքստը,

- պատասխանել բովանդակությանը վերաբերող հարցերին,

- առանձնացնել հիմնական միտքը և թեման,

- մտածել ենթավերնագրեր,

- տրված արտահայտություններից մեկն ընտրել որպես տեքստի վերնագիր,

- գտնել և բացատրել անծանոթ բառերը,

- ուշադրություն դարձնել տեքստի մանրամասներին,

- գտնել նրանում ամփոփված տեղեկույթի էական և ոչ էական մասերը,

- կարդացածը համադրել սեփական փորձի հետ,

- տեքստը պատմել որևէ հերոսի անունից,

- ներմուծելով նոր հերոսի կամ հերոսներից մեկին հեռացնելով՝ փոխել տեքստի բովանդակությունը,

- տեքստի համար գտնել հնարավոր շարունակություն,

-տեքստում փոխել ինչ-որ մանրամասն և կարողանալ տեքստը կառուցել՝ հաշվի առնելով, որ այդ մանրամասնը չկա,

- տեքստում լրացնել բաց թողած բառերը և կառուցել տեքստ,

- հորինել պատմություններ նկարաշարերի միջոցով և տրված բառաշարերով,

- պատասխանել տեքստի հիմնական միտքը վեր հանող հարցերին,

- տեքստն այնպես կրճատել, որ հիմնական միտքը մնա,

- կազմելով հանգուցային բառերի շղթա՝ ստեղծել նոր պատմություն,

- տեքստի ամենակարճ նախադասությունները կարողանալ ընդարձակել,

- կարողանալ կտրատված շերտերով տեքստը վերականգնել՝ նախադասությունները դնելով ճիշտ հերթականությամբ,

- կարողանալ տեքստի ներքևում տրված նկարներից առանձնացնել այն նկարները, որոնք վերաբերում են տեքստին, և այլն,

- ըստ առաջադրանքի պայմանի՝ կարողանալ ընթերցել տեքստի համապատասխան հատվածները,

- կարողանալ նկարագրել տեքստի որևէ մաս:

**ա. Տեքստը պատմել՝ ներմուծելով նոր հերոսի**

62(Հ-9), 68(Հ-4), 84(Հ-3), 99(Հ-7), 162(Հ-4):

**բ. Տեքստի համար գտնել հնարավոր շարունակություն**

19(Հ-5), 49(Հ-6), 102:

**գ. Հորինել պատմություն ըստ նկարների, տրված բառերի, սկզբնանկարների**

5, 15(2), 16(4), 28(5), 32(3), 33, 40(2), 44(6), 54(8), 55, 63(3), 91, 115(2), 117, 145, 154(1), 163(ԱՊ), 169(1), 171(6):

**դ. Տեքստը պատմել հերոսներից մեկի բացակայության դեպքում**

26(Հ-4), 39(Հ-5):

**ե. Առածներից ո՞ր կընտրվի որպես տեքստի վերնագիր**

112(4):

**զ. Տեքստի բովանդակության հիմնական միտքը վեր հանող հարցեր**

111(Հ-4), 118(Հ-4), 122(Հ-4), 127(Հ-3), 150(Հ-3), 165(Հ3):

**է. Հարցեր և առաջադրանքներ**

Էջ՝ 11(Հ-3,5), 15(Հ-3), 15(1), 19(3), 22(Հ-4), 24(4), 26(1), 31(1), 47(4), 52(1), 57(4), 62(Հ-6,9), 63(2), 64(6), 68(1), 69(3), 77(Հ-5), 95(Հ-7), 97(8), 99(1), 112(4), 140(1), 143(2), 155(5), 160(Հ-3,4):

**2.Վերարտադրել տեքստը ստեղծագործության այս կամ այն հերոսի անունից**: 23(1), 28(6), 39(Հ-5), 47(5), 100(5), 104(7), 152, 162(3):

## Է. ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

### 1. Ձևակերպի հարցեր, պլանավորի հարցերի բացահայտմանն ուղղված գործողությունների քայլաշար:

Հարցեր տալու կարողությունը հրաշալի միջոց է, որի օգնությամբ կարելի է.

- աշակերտների մեջ ձևավորել ուշադիր կարդալու կարողություն,
- ընդլայնել աշակերտների մտահորիզոնը,
- աշակերտներին սովորեցնել արդյունավետ աշխատել տեղեկույթի հետ,
- բարենպաստ պայմաններ ստեղծել ուսումնական հաջող գործունեության ձևավորման համար:

«Սովորի՛ր հարցեր տալ» առաջադրանքի նպատակն է, որ աշակերտը, ուշադիր լսելով կամ կարդալով տեքստը, կարողանա ճիշտ հարցեր ձևակերպել:

Հարցեր ձևակերպելու կարողությունը ձևավորելու և զարգացնելու նպատակով կարելի է կազմակերպել տարբեր աշխատանքներ.

- ✓ Հարցեր առաջադրել, որոնց պատասխանները տրված նախադասություններն են:
- ✓ Հարցեր առաջադրել տրված փոքրիկ տեղեկատվական տեքստի շուրջ:
- ✓ Կազմակերպել տարաբնույթ լեզվատրամաբանական խաղեր, մասնակից դարձնել զանազան մրցահանդեսների:

Դասագրքում կան բազմաբնույթ հարցեր և առաջադրանքներ երեխաների մեջ հարցեր ձևակերպելու ունակությունների զարգացման համար:

Էջ 6(2), 10(8), 13(5), 16(4), 17(7), 19(Հ-5), 20(6), 21(9), 24(5), 24(6), 26(Հ-7), 29(9), 30(14), 31(1), 32(5), 37(7), 39(Հ-4), 40(2), 50(2), 54(9), 59(5), 59(7), 65(8), 70(5), 85(4), 85(6), 87(8), 102(Հ-5), 103(3), 110(11), 127(4), 129(8), 134(9), 136(1), 136(2):

### 2.Ընտրի գիրք կամ այլ ռեսուրս առաջարկված ցանկից և գտնի տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող հարցերի պատասխանները:

## Ը. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ
## ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ

### 1. Համագործակցի ընկերների հետ, մասնակցի խմբային աշխատանքների, քննարկումների, ստանձնի տարբեր դերեր և հաջողությամբ իրականացնի դրանք:

**ա. Գլխագրերի կետերի** շուրջ քննարկումներ

Էջ 7, 11, 14, 22, 18, 25, 31, 34, 38, 42, 45, 48, 52, 56, 61, 66, 73, 76, 79, 82, 92, 94, 98, 101, 102, 107, 111, 118, 121, 126, 130, 135, 138, 142, 146, 149, 154, 158, 161, 164:

**բ. Մուտքի պատուհանիկների** շուրջ քննարկումներ
Էջ 7, 18, 22, 25, 24, 38, 42, 45, 48, 56, 61, 66, 73, 82, 92, 98, 101, 107, 111, 118, 121,126, 130, 135, 146, 158, 161, 164:

**գ. «Դասից քաղած իմ պտուղները»** խորագրի շուրջ քննարկումներ
Էջ 10, 13, 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 54, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 137, 141, 144, 148, 153, 157, 160, 163, 168:

**դ. Ամփոփման պատուհանիկների** շուրջ քննարկումներ
Էջ 17, 21, 24, 30, 37, 41, 44, 47, 51, 60, 65, 72, 75, 78, 81, 87, 97, 100, 106, 110, 113, 116, 120, 125, 129, 134, 141, 153, 157, 160, 163, 168:

**ե. Զույգային աշխատանքների** ընթացքում քննարկումներ
Էջ 8(1), 15(1), 17(8), 19(2), 20(6), 21(9), 28(7), 85(4), 97(9), 108(2), 127(4), 150(3), 169(1), 171(5):

**զ. Խմբային աշխատանքների** ընթացքում քննարկումներ
Էջ 6(1), 13(5), 16(5), 30(11), 41(4), 43(1), 44(6), 50(2), 53(3), 102(2), 106(10), 112(2), 140(1):

**է. Բեմականացումների** նախապատրաստման ժամանակ կատարվող քննարկումներ
Էջ 36(4), 37(5), 81(7), 106(10), 110(10), 118(Հ4), 119(1), 126(Տեքստը), 127(4), 136(1), 133(7), 155(2), 158(ՄՊ), 161(Տեքստը):

**ը. Մնջախաղերի** նախապատրաստման ժամանակ կատարվող քննարկումներ
Էջ 13(5), 16(5), 28(7), 36(4), 37(5), 53(3), 142(1):

**թ. Շուտասելուկների** ընթացքում կատարվող քննարկումներ
Էջ 16(6), 27(4), 41(5), 46(3), 81(6), 97(7), 106(11), 113(5), 118(ՄՊ), 124(8), 163(7):

**ժ. Սկզբնանկարների** շուրջ քննարկումներ
Էջ 5, 33, 55, 91, 117, 145:

## Թ. ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

### 1. Սիրի իրեն, ընտանիքը, հայրենիքը:

Այս վերջնարդյունքը դասագրքում ապահովվում է տեքստերով, գլխագրերի որոշ կետերով, մուտքի, ամփոփման պատուհանիկների որոշ գրառումներով, հարցերով և առաջադրանքներով:

**Տեքստեր:** Էջ 7, 11, 14, 25, 42, 48, 56, 61, 66, 73, 76, 79, 82, 98, 135, 138, 154, 158:

**Հարցեր, առաջադրանքներ, գլխագրերի որոշ կետեր, մուտքի, ամփոփման պատուհանիկների որոշ գրառումներ**:
Էջ՝ 6(1), 10(8), 11(Գ-3), 13(6), 11(Հ-5), 17(8), 24(4), 27(2), 30(ԱՊ), 42(Գ-4), 43(1), 43(4), 44(6), 44(ԱՊ), 45(3), 48(Գ-2,3), 50(1), 51(ԱՊ), 52(Գ-2), 54(8), 56(Գ-2), 59(7), 60(8),

60(ԱՊ), 61(ՄՊ), 61(Գ-2, 3, 4), 63(1, 3), 64(5), 65(8), 65(ԱՊ), 66(Գ-2, 3), 69(4), 70(Գիտե՞ս, որ…), 72(Գիտե՞ս, որ…), 82(Գ-2, 3, 4), 85(3), 87(ԱՊ), 98(Գ-2, 3), 112(1), 129(ԱՊ), 130(2), 134(8), 135(2), 139(Հ-4), 141(ԱՊ), 154(1), 154(Գ-2, 3), 157(ԱՊ), 158(Գ-2, 3, 4), 158(ՄՊ), 160(ԱՊ), 163(ԱՊ):

**2. Դրսևորի հարգանք ուսուցիչների, դասընկերների, շրջապատող մարդկանց նկատմամբ:**

**Առաջադրանքներ:** Էջ՝ 7(Գ-4), 8(2), 12(2), 18(Գ-3), 20(6), 21(7,9), 21(ԱՊ), 24(5), 37(7), 41(5), 53(3), 97(8), 100(8), 127(4):

**3.Դրսևորի հարգանք դպրոցի, գրքի, շրջապատի նկատմամբ:**

**Տեքստեր:** 73, 76, 79:
**Հարցեր, առաջադրանքներ, գլխագրերի որոշ կետեր, մուտքի, ամփոփման պատուհանիկների որոշ գրառումներ:** Էջ՝ 73(Գ-4), 76(Գ-2), 78(1), 79(Գ1, 2), 80(1, 2), 81(4, 5, 7), 81(ԱՊ):

**4. Ցուցաբերի հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:**

**Տեքստեր:** Էջ 7, 11, 14, 18, 22, 25, 42, 48, 98, 135, 138, 146, 149, 154, 158:
**Հարցեր, առաջադրանքներ, գլխագրերի որոշ կետեր, մուտքի, ամփոփման պատուհանիկների որոշ գրառումներ:** Էջ՝ 6(1), 14(Գ-3), 15(Հ-4,5), 17(ԱՊ), 24(5), 28(8), 30(11), 37(Գիտ՞ես, որ…), 37(5), 38(), 47(ԱՊ), 72(ԱՊ), 85(4, 5, 6), 86(6), 90(7), 100(ԱՊ), 107(Գ-4, 5), 107(ՄՊ), 108(1, 2), 110(11), 110(ԱՊ), 114(Գ-2, 3), 116(4), 119(Գիտե՞ս, որ…), 120(ԱՊ), 121(Գ-2, 3), 124(5), 125(11), 126(Գ-2, 3), 128(5), 129(8), 131(Գիտե՞ս, որ…), 150(Գիտե՞ս, որ…), 153(ԱՊ), 169(1), 170(2), 171(6):

**5. Սիրի ընթերցանությունը:**

Դասագրքի բազմաբնույթ, բազմաբովանդակ, հետաքրքրաշարժ, երևակայությունն ու ստեղծարար մտածողությունը խթանող տեքստերը, հարցերն ու առաջադրանքները, հետաքրքրություն առաջացնող բազմաթիվ խորագրերը, անշուշտ, կստեղծեն այն ջերմ ու բովանդակալից մթնոլորտը, որը կնպաստի, որ սովորողները սիրեն ընթերցանությունը:

## Գլուխ 7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ, որոնք հաջորդում են մեկը մյուսին և կարող են պարբերաբար կրկնվել նշված հաջորդականությամբ.
ա. Հայտորոշիչ գնահատում,
բ. ձևավորող գնահատում,

գ. ամփոփիչ գնահատում:

Այստեղ ներկայացված են հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման նմուշ-օրինակներ, ինչպես նաև թեմաների վերջնարդյունքների գնահատման հարցաշարեր: Գնահատման նմուշօրինակները ստեղծվել են գնահատման նոր մեթոդաբանության հիման վրա:

### *Հայտորոշիչ գնահատում*

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողների նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, նոր թեմայի կամ դասի ուսումնասիրման մեկնարկից առաջ:

Հայտորոշիչ գնահատման արդյունքում պետք է բացահայտվի, թե սովորողն ինչ գիտի, ինչ չգիտի կամ ոչ ամբողջական պատկերացում ունի ուսուցանվող թեմայի վերաբերյալ, ինչն էլ հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության բովանդակությունը, գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

**Հայտորոշիչ գնահատման օրինակ - 1**

| | |
|---|---|
| Ուսումնական առարկա | Մայրենի |
| Գնահատման տեսակ | Հայտորոշիչ |
| Գնահատման ձև | Գրավոր աշխատանք՝ համակցված բանավոր հարցմամբ |
| Դասարան | 2-րդ |
| Թեմա | Հնչյունաբանություն, հնչյուն, տառ |
| Նպատակ | Հնչյուն-տառի մասին երեխաների նախնական գիտելիքների և հմտությունների հայտորոշում |
| Բարդության աստիճան | Միջին |
| Տևողություն | 15 -20 րոպե |
| Առաջադրանքների քանակ | 6 |
| Հարցերի քանակ՝ | 3 |

Լրացրո՛ւ աղյուսակը.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գրի՛ր ձայնավոր հնչյունների տառերը | Գրի՛ր տառեր, որոնք ունեն | Գրի՛ր տրված միավանկ բառերի հնչյունների և | Գրի՛ր տրված երկվանկ բառերի հնչյունների և | Գրի՛ր բառեր, որոնք ունեն 3 տառ, | Գրի՛ր բառեր, որոնք ունեն 4 տառ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2 կամ 3 հնչյուն | տառերի քանակը | տառերի քանակը: | 4 հնչյուն | 5 հնչյուն |
| | | ող — տ, —h<br>եզ— տ,— h | արև—տ, —h<br>նաև—տ,—h | _____<br>---------- | _____<br>---------- |

Բանավոր հարցում:

1. Քանի՞ ձայնավոր հնչյուն և տառ կա հայերենում: Թվարկի՛ր:
2. Ո՞ր տառերն են, որ բառասկզբում կամ բառամիջում ունեն մեկից ավելի հնչյուններ:
3. Ե՞րբ է բառի հնչյունների քանակը շատ տառերի քանակից:

**Սխալների քարտեզագրման օրինակ - 1**

| | **Անունը, ազգանունը** | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Առաջադրանքներ** | **Սովորող 1** | **Սովորող 2** | **Սովորող 3** | **Սովորող 4** | **Սովորող 5** | **Սովորող 6** | **Սովորող 7** | **Սովորող 8** | **Սովորող 9** |
| **Գիտի բոլոր ձայնավոր հնչյունների տառերը** | | | | + | | | + | + | |
| **Գիտի երկու կամ երեք հնչյուն ունեցող տառերը** | | | | | | + | | | |
| **Հաշվում է հնչյունների և տառերի քանակը միավանկ բառերում** | + | + | + | + | + | | + | + | + |
| **Հաշվում է հնչյունների և տառերի քանակը երկվանկ բառերում** | + | | + | | | | | | + |
| **Գրում է բառեր, որոնք ունեն 3 տառ, 4 հնչյուն** | | + | | | + | | | | |

**Հայտորոշիչ գնահատման օրինակ - 2**

**«Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» թեմայի հայտորոշիչ թեստ**

| | |
|---|---|
| Ուսումնական առարկա | Մայրենի |

| | |
|---|---|
| Գնահատման տեսակ | Հայտորոշիչ թեստ |
| Դասարան | 2-րդ |
| Թեմա | «Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» |
| Նպատակ | Պարզել երեխաների նախնական պատկերացումներն այն մասին, թե երբ և որտեղ են ապրում նրանք: |
| Բարդության աստիճան | Պարզ |
| Տևողություն | 10 - 15 րոպե |
| Առաջադրանքների քանակ | 8 |

Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

1. Ինչպե՞ս են մեր երկիրն անվանում.

- Երևան
- Հայաստան
- Արարատ

2. Ո՞րն է մեր երկրի մայրաքաղաքը.

- Գյումրի
- Երևան
- Էջմիածին

3. Ո՞ւմ դեմ է կռվել է Հայկը.

- Մսրա Մելիքի
- Բելի
- Սանասարի

4. Ո՞ւմ դեմ է կռվել Սասունցի Դավիթը.

- Մսրա Մելիքի
- Բելի
- Ձենով Օհանի

5. Ո՞ւմ արձանն է պատկերված

- Հայկ
- Մեսրոպ Մաշտոց
- Սասունցի Դավիթ

6. Ի՞նչ է եղել Երևանի հին անունը.

- Արարատ
- Էրեբունի
- Էջմիածին

7. Ինչի՞ վրա են մարդիկ հին ժամանակներում գրել.

- Թղթի
- Ժայռերի
- Ավազի

8. Ո՞ր սարն է նկարում պատկերված.



- Արարատ
- Արագած
- Աժդահակ

**Հայտորոշիչ թեստի օրինակ - 3**

| | |
|---|---|
| Ուսումնական առարկա | Մայրենի |
| Գնահատման ձև | Թեստ |
| Գնահատման տեսակ | Հայտորոշիչ |
| Դասարան | 2-րդ |

| | |
|---|---|
| Թեմա | Շարահյուսություն |
| Նպատակ | Նախադասության մասին երեխաների ունեցած նախնական գիտելիքների հայտորոշում |
| Բարդության աստիճան | Միջին |
| Տևողություն | 15-20 րոպե |
| Առաջադրանքների քանակ | 4 |

**1. Կարդա՛, եթե նախադասություն է՝ դատարկ վանդակում գրի՛ր 1, եթե նախադասություն չէ՝ 0:**

- Բարի պապիկ ☐
- Պապիկը մշակում է այգին: ☐
- Աշուն երկրներ չվել թռչուններ: ☐

**2. Ո՞ր տարբերակում են պահպանված նախադասության գրության կանոնները:**

- Օդանավը սավառնում է երկնքում:
- Երկնքում շողում է պայծառ արևը:
- Արան սովորում է երկրորդ դասարանում:

**3.Վերականգնի՛ր «քանդված» նախադասությունը և գրի՛ր:**

**4. Կռահի՛ր՝ ի՞նչ են ցույց տալիս նախադասության կողքին գրված թվերը և լրացրո՛ւ դատարկ վանդակները:**

- Անահիտը քայլեց: ------- 2 ☐
- Ինքնաթիռը սլացավ դեպի ամպերը: ------ 4 ☐
- Փիղը կնճիթը վեր բարձրացրեց: -------- ☐
- Կատուն մտավ մառանը: -------- ☐

**Սխալների քարտեզագրման օրինակ - 2**

| | Անուն, ազգանուն | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առաջադրանքներ | Սովորող 1 | Սովորող 2 | Սովորող 3 | Սովորող 4 | Սովորող 5 | Սովորող 6 | Սովորող 7 | Սովորող 8 | Սովորող 9 |
| 1. Ճանաչում է նախադասությունը | | + | | | | | | | |
| 2. Գիտի մեծատառի և վերջակետի գործածության կանոնները | | + | | | | | | | |
| 3. Վերականգնում է «քանդված» նախադասությունը | | | | | + | | - | | |
| 4. Հաշվում է նախադասության անդամների քանակը | | | | | | | | - | |

**Հայտորոշիչ գնահատման օրինակ - 4**

| | |
|---|---|
| Ուսումնական առարկա | Մայրենի |

| | |
|---|---|
| Գնահատման ձև | Թեստ |
| Գնահատման տեսակ | Հայտորոշիչ |
| Դասարան | 2-րդ |
| Թեմա | Բառագիտություն. առարկա ցույց տվող բառեր |
| Նպատակ | Բացահայտել աշակերտների ունեցած գիտելիքները |
| Բարդության աստիճան | Միջին |
| Տևողություն | 15 րոպե |
| Առաջադրանքների քանակ | 6 |

1. Նշի՛ր առարկա ցույց տվող բառերը.

- բարի
- անտառ
- կարդալ
- գիրք

2. Նշի՛ր՝ ո՞ր հարցերին են պատասխանում առարկա ցույց տվող բառերը.

- ինչպիսի՞, ո՞ր
- ինչքա՞ն, որքա՞ն
- ի՞նչ, ինչե՞ր, ո՞վ, ովքե՞ր
- ի՞նչ անել, ի՞նչ լինել

3.Նշի՛ր՝ ո՞ր շարքի բոլոր բառերն են անձ ցույց տալիս.

- թռչուն, ջուր
- ուսուցիչ, տետր
- նկարիչ, մայրիկ
- քանոն, քույրիկ

4. Նշի՛ր՝ ո՞ր շարքի բոլոր բառերն են եզակի թվով

- թռռներ, ծառ
- կատու, դռներ
- բերք, սարեր
- միրգ, շուն

5. Շարունակի՛ր.

- սար – սարեր
- թռչուն – թռչուններ
- սեղան –
- տերև -

6. Առարկա ցույց տվող բառերի դիմաց գրի՛ր համապատասխան հարցը.

օդաչու՝_____ սեղան՝_____

գրքեր՝ _____ աշակերտներ՝_____

| | Անուն, ազգանուն | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առաջադրանքներ | Սովորող1 | Սովորող 2 | Սովորող 3 | Սովորող 4 | Սովորող 5 | Սովորող 6 | Սովորող 7 | Սովորող 8 | Սովորող 9 |
| 1. Գիտի առարկա ցույց տվող բառերը | | + | | | | | | | |
| 2. Գիտի առարկա ցույց տվող բառերին տրվող հարցերը | | + | | | | | | | |
| 3. Գիտի անձ ցույց տվող բառերը | | | | | + | | - | | |
| 4. Տարբերում է եզակի և հոգնակի թվերը | | | | | | | | - | |
| 5. Կազմում է տրված բառերի հոգնակին | | | | | | + | | | |
| 6. Առարկա ցույց տվող բառերի համար գրում է հարցեր | | | + | | | | | | |

### *Ձևավորող գնահատում*

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ՝ սովորողի սեփական արդյունքների համեմատում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը: Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ),
2) բանավոր հարցում,
3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն),
4) գործնական աշխատանքներ,
5) տնային աշխատանք,
6) թղթապանակ,
6) նախագծային աշխատանք:

Ձևավորող գնահատման մեջ կարևորվում է ուսուցչի կողմից սովորողներին տրվող հետադարձ կապը:

**Ձևավորող գնահատման օրինակ - 1**

| | |
|---|---|
| Ուսումնական առարկա | Մայրենի |
| Գնահատման տեսակ | Ձևավորող |
| Գնահատման ձև | Թեստ |
| Դասարան | 2-րդ |
| Թեմա | Հնչյունաբանություն, հնչյուն, տառ |
| Նպատակ | Հնչյուն-տառի մասին երեխաների գիտելիքների և հմտությունների ստուգում, ձեռքբերումների և դժվարությունների բացահայտում |
| Բարդության աստիճան | Միջին |
| Տևողություն | 20 րոպե |
| Առաջադրանքների քանակ | 5 |

**1. Քանի՞ հնչյուն և քանի՞ տառ կա տրված պատկերների անվանումների մեջ: Լրացրո՛ւ աղյուսակը:**

| Պատկերի անվանումը | Տառերի Քանակը | Հնչյունների քանակը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

**2. Քանի՞ բառ կա բառաշարքում, որոնց հնչյունների և տառերի քանակները հավասար են: Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:**

**Տղա, մայրիկ, ակնոց, եղանակ, երկինք, որակ, գործ, ձուկ**

- 5
- 6
- 4

**3. Նշի՛ր՝ ո՞ր բառաշարքի բոլոր բառերի հնչյուններն ու տառերն են քանակով հավասար:**

- համեղ, երամ, մայր
- օղակ, սունկ, գիրք
- մարդ, ամպ, կարկանդակ

**4. Ո՞ր բառի հնչյուններն են տառերից շատ: Արտագրի՛ր այդ բառը:**

_____

**5. Գրի՛ր.**

○ Բառ, որի հնչյունների և տառերի քանակները հավասար են՝ _____

- Բառ, որի հնչյունները տառերից շատ են՝ _____

**Ձևավորող գնահատման օրինակ - 2**

| | |
|---|---|
| Ուսումնական առարկա | Մայրենի |
| Գնահատման ձև | գրավոր առաջադրանք |
| Գնահատման տեսակ | Ձևավորող |
| Դասարան | 2-րդ |
| Թեմա | Բառագիտություն. արմատ, ածանց |
| Նպատակ | Ամփոփել աշակերտների ձեռք բերած գիտելիքները |
| Բարդության աստիճան | Միջին |
| Տևողություն | 20 րոպե |
| Առաջադրանքների քանակ | 5 |

**1. Ո՞րն է տրված բառի արմատը: Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:**




- փոր
- փորձ
- ան

**2. Նշի՛ր այն բառը, որը կարող է բառեր կազմել տրված արմատներով:**



- աղբ
- անձրև
- նամակ

**3. Ո՞ր արմատից են առաջացել տրված բառերը: Գրի՛ր այդ արմատը:**

_____

4. **Գրի՛ր առարկաների անվանումները: Ընդգծի՛ր կազմությամբ բարդ բառը:**

_____ _____ _____

**5. Օգտվելով նկարից՝ կազմի՛ր բարդ բառեր և գրի՛ր:**



**Ձևավորող գնահատման օրինակ - 3**

| | |
|---|---|
| Ուսումնական առարկա | Մայրենի |
| Գնահատման տեսակ | Ձևավորող |
| Դասարան | 2-րդ |
| Թեմա | Հատկանիշ ցույց տվող բառեր, ձայնավոր հնչյունների ուղղագրություն, իմաստով մոտ և հակառակ բառեր: |
| Նպատակ | Բացահայտել աշակերտների ձեռքբերումները, բացթողումները կամ դժվարությունները: |
| Բարդության աստիճան | Բարդ |
| Տևողություն | 30 րոպե |
| Առաջադրանքների քանակ | 5 |

1. **Տրված բառաշարքից դո՛ւրս գրիր հատկանիշ ցույց տվող բառերը:**

Ուտել, սպիտակ, արևոտ, ձյուն, պայծառ, ջուր, ջրային, գունավոր, կրծել, տուն:

_____

_____

2. Արտագրի՛ր տրված բառակապակցությունները՝ դատարկ վանդակի փոխարեն գրելով բաց թողած տառը: Ընդգծի՛ր հատկանիշ ցույց տվող բառերը:

գեղեցիկ □րազ մաքուր □րագիր

փշոտ □զնի պատկերազարդ □ջեր

_____

_____

_____

3. Աջ և ձախ սյունակներում գտի՛ր հակառակ իմաստ ունեցող բառերը և միացրո՛ւ.

մեծ բարդ _____

պարզ ներքև _____

հին կարճ _____

երկար նոր _____

վերև փոքր _____

4. Աջ և ձախ սյունակներում գտի՛ր նույն իմաստ ունեցող բառերը և միացրո՛ւ.

զվարթ ջինջ _____

նուրբ կայտառ _____

թախծոտ քնքուշ _____

մաքուր սիրուն _____

գեղեցիկ տխուր _____

5. Աջ և ձախ սյունակների բառերը միացրո՛ւ այնպես, որ ստացվեն բառակապակցություններ: Գրի՛ր այդ բառակապակցությունները.

ոսկեզօծ շուն _____

հավատարիմ զարդ _____

բարձր եղանակ _____

անձրևային սար _____

### *Ամփոփիչ գնահատում*

Ամփոփիչ գնահատման նպատակն է՝ մայրենիի չափորոշչով և ծրագրով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատումը՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| | **Անունը, ազգանունը** | | | | | | | | |
| **Առաջադրանքներ** | **Սովորող 1** | **Սովորող 2** | **Սովորող 3** | **Սովորող 4** | **Սովորող 5** | **Սովորող 6** | **Սովորող 7** | **Սովորող 8** | **Սովորող 9** |
| **Առանձնացնում է հատկանիշ ցույց տվող բառերը** | | | | + | | | + | + | |
| **Գիտի ձայնավորների ուղղագրությունը** | | | | | | + | | | |
| **Գտնում է հակառակ իմաստ ունեցող բառազույգեր** | + | + | + | + | + | | + | + | + |
| **Գտնում է մոտ իմաստ ունեցող բառազույգեր** | + | | + | | | | | | + |
| **Կազմում է բառակապակցություններ** | | + | | | + | | | | |
| **Գրում է բառակապակցությունները** | | + | | | | | + | | |

Ստորև ներկայացված են ամփոփիչ գնահատման համար նախատեսված հարցաբանների նմուշներ դասագրքի վեց թեմաների վերաբերյալ, ինչպես նաև գրավոր խոսքի ստուգաթերթ:

## Թեմաների ավարտին տրվող ամփոփիչ հարցեր

### Թեմա 1

### Ով ենք մենք

**1. Գրի՛ր քո՝**

անունը, ազգանունը _____

ծննդյան օրը, ամիսը, տարին_____

բնակության հասցեն_____

_____

**2. Գրի՛ր՝ ո՞վ ես դու.**

դպրոցում _____

տանը _____

մայրիկի համար _____

պապիկի համար _____

**3. Գրի՛ր.**

Ի՞նչ ես անում դպրոցում որպես աշակերտ.

_____

Ի՞նչ ես անում տանը որպես զավակ.

_____

Ի՞նչ ես անում գրադարանում որպես ընթերցող.

_____

Ի՞նչ ես անում տիկնիկային թատոնում որպես հանդիսատես.

_____

**4. Շարունակի՛ր նախադասությունը.**

Սիրում եմ, երբ,

_____

Ուրախանում եմ, երբ,

_____

Տխրում եմ, երբ._____

**5. Ո՞ր հերոսից ի՞նչ սվորեցիր.**

Աստղիկ_____

Ոզնի Ասեղ _____

Նարե _____

Նարեկ_____

**Թեմա 2**

**Ինչպես ենք մենք ինքնարտահայտվում**

**1. Ինչպե՞ս ես դու շրջապատի մարդկանց ներկայացնում.**

քո սովորածն ու իմացածը՝ _____

քո ուրախությունն ու տխրությունը՝ _____

քո սերն ու կարոտը՝ _____

քո զարմանքն ու հիացմունքը՝ _____

*Օգտվի՛ր տրված բառերից՝ խոսք, երգ, պար, բանաստեղծություն, մնջախաղ:*

**2. Այն տողերը, որոնք վերաբերում են քեզ, լրացրու՛ ինքդ, իսկ մյուս տողերը լրացնելու համար հարցրու մայրիկիդ, հայրիկիդ, քույրիկիդ կամ եղբորդ:**

**Ուրախությունից՝**

Ես ——————————————:

Մայրիկս——————————————:

Հայրիկս ——————————————:

Քույրիկս կամ եղբայրս ——————————————:

**Կարոտից՝**

Ես ——————————————:

Մայրիկս ——————————————:

Հայրիկս——————————————:

Քույրիկս կամ եղբայրս——————————————:

**Զարմանքից՝**

Ես ——————————:

Մայրիկս ——————————————:

Հայրիկս ——————————————:

Քույրիկս կամ եղբայրս——————————:

**Թեմա 3**

**Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ**

**1. Գրի՛ր։**

ա) Ո՞րն է քո հայրենիքը.

_____

բ) Որտե՞ղ ես դու ապրում.

_____

գ) Ու՞մ անունով կոչվեցին մեր երկիրը և մենք.

_____

դ) Ո՞րն է քո մայրենի լեզուն.

_____

**2. Գրի՛ր.**

ա) Ո՞րն է Երևանի հին անունը.

_____

_____

բ) Երևանի ի՞նչ տեսարժան վայրեր գիտես։ Գրի՛ր առնվազն երկուսը։

_____

գ ) Քո ծննդավայրի ամենասիրելի անկյունը։

_____

**3. Գրի՛ր.**

ա) Ու՞մ դեմ էր կռվում Սասունցի Դավիթը։

_____

բ) Ի՞նչը օգնեց Դավթին հաղթելու թշնամուն։

_____

գ) Դավթի ո՞ր հատկանիշներն են  քեզ  դուր գալիս։ Գրի՛ր առնվազն երկուսը։

_____

**4. Գրի՛ր։**

ա) Նախկինում ինչերի՞ վրա են մարդիկ գրել։

_____

բ) Ի՞նչ տեսակի գրքեր դու գիտես։

_____

գ) Ի՞նչ է գիրքը քեզ համար։

_____

**5. Գրի՛ր.**

ա) Ի՞նչ է հայրենքը քեզ համար։

_____

բ) Քեզ համար հայրենիքը ներկայացնող  երկու կարևոր և թանկ բան։

_____

գ) Ի՞նչ գործերով  ես ցույց տալիս քո սերը հայրենիքի նկատմամբ։

_____

**6. Գրի՛ր.**

ա) Ի՞նչը քեզ ամենից շատ դուր եկավ այս թեմայում։

_____

_____

_____

բ) Ինչի՞ մասին կուզենայիր ավելին իմանալ։

_____

_____

_____

**Թեմա 4**

**Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում**

**1. Գրի՛ր Չ-ի կատարած բարի գործերը.**

- _____
- _____
- _____

**2. Լրացրու՛ նախադասությունները։**

- Մարդը գեղեցիկ է _____:
- _____ աշխատելիս հիվանդ է, ուտելիս՝ առողջ։

**3. Գրի՛ր.**

ա) Ի՞նչ կարող ես անել ընկերներիդ հետ։
_____

_____

_____

բ) Ի՞նչ կարող ես անել մեծահասակների հետ։

_____

_____

_____

**4. Գրի՛ր երեք կարևոր բաների մասին, որ անում ես օրվա ընթացքում։**

| | Ե՞րբ | Որտե՞ղ | Ի՞նչ ես անում |
|---|---|---|---|
| 1 | | | |
| 2 | | | |
| 3 | | | |

**5. Գրի՛ր.**

ա ) Ի՞նչ ես անում, որ մայրիկդ ժպտա։

_____

բ) Ի՞նչ ես անում, երբ ընկերդ դժվարանում է առաջադրանքը կատարելիս։

_____

գ) Ի՞նչ ես անում, որ ուսուցիչները գոհ լինեն քեզնից։

_____

դ) Ի՞նչ ես անում, որ ձեր բակը բարեկարգ լինի։

_____

**Թեմա 5**

**Ինչպես է աշխատում աշխարհը**

**1. Ինչի՞ համար ենք ջուրն օգտագործում։ Գրի՛ր առնվազն երեք դեպք։**

_____

_____

_____

**2. Գրի՛ր, թե ի՞նչ է առաջանում, երբ հանդիպում են.**

ա) արևի շողն ու ծովի ջուրը

_____

բ) ջրի կաթիլները երկնքում

_____

գ) արևն ու անձրևը

_____

դ) առվակները

_____

**3. Գրի՛ր՝ ովքե՞ր են ամպի երեխաները։**

Մեծը՝ _____ ջուր է տալիս չորացած հողին։

Նրա քույրը՝ _____ փռում է իր ճերմակ, փափուկ վերմակը։

Եղբայրը՝ _____ գալիս է և փշրում ծառ ու ճյուղ։

Բոլորից փոքրը՝ _____ մարգարիտներ է շարում ծաղիկների ու խոտերի թերթերին։

**4. Ի՞նչ գիտես աստղադիտարանի մասին։ Գրի՛ր մեկ բան։**

_____

**5. Ո՞վ է գունավոր հեռուստացույցի գյուտի հեղինակը։**

_____

6. Գրի՛ր մեկ բան, որ փոփոխվել է.

_____

ա) քո շրջապատում վերջին մեկ ամսվա ընթացքում

_____

բ) քո կյանքում՝ վերջին մեկ տարվա ընթացքում

_____

Թեմա 6

Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում

1. Գրի՛ր մեկ բան.

ա) որով նման ես ընկերոջդ

_____

բ) որով տարբերվում ես ընկերոջիցդ

_____

2. Գրի՛ր քեզ համար կարևոր երկու իրավունք։

_____

_____

3. Գրի՛ր քո պարտականություններից երկուսը։

_____

_____

**4. Բառաշարքից ընտրի՛ր և գրի՛ր այն բառերը, որոնք համապատասխանում են առածի իմաստին.**

*փոխօգնություն, միասնություն, ճշմարտախոսություն, համախմբվածություն, արդարություն*

**Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:**

_____

_____

**5. Գրի՛ր:**

**Համատեղ և համերաշխ ապրելու համար ինձ.**

**ο ա) գնում են**

_____

_____

**բ) անհրաժեշտ են**

_____

_____

**Գրավոր խոսքի վերջնարդյունքների ստուգաթերթ**

| Վերջնարդյունք | **Սովո-ռող 1** | **Սովո-ռող 2** | **Սովո-ռող 3** | **Սովո-ռող 4** | **Սովո-ռող 5** |
|---|---|---|---|---|---|
| 1. Գրավոր պատասխանել տեքստի ընդհանուր բովանդակության վերաբերյալ հարցերին | | | | | |
| 2. Բառերով և բառակապակցություններով գրավոր արտահայտել իր հույզերը կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ | | | | | |
| 3. Մտքերն արտահայտել ավարտուն նախադասություններով | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. Գրավոր խոսքում կիրառել նորածանոթ բառերը | | | | | |
| 5. Գրավոր խոսքում պահպանել բառերի ճիշտ գրությունը | | | | | |

## Գլուխ 8. ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԻ ԴԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆՆԵՐ

Այստեղ ներկայացված են տարբեր տիպի դասերի տարբեր տեսակի դասապլաններ: Դասապլանների նմուշօրինակներում արտացոլված են դասի հստակ նպատակներն ու վերջնարդյունքները, դասի փուլերի նկարագրությունները, ուսուցչի և սովորողների գործողությունները, դասի ամփոփումն ու գնահատումը, անդրադարձը:

### ԵՐԵՎԱՆ

### Դասի պլանի օրինակելի նմուշ 1

(Նոր նյութի ուսումնասիրության դաս)

| | *Ուսուցչի գործողություն* | *Աշակերտների գործողություն* | *Նշումներ և բացատրություններ* |
|---|---|---|---|
| *1* | *Առարկա, ամսաթիվ* | *Մայրենի* | |
| *2* | *Դասարանը* | *2-րդ* | |
| *3* | *Դասի թեման* | *Երևան* | |
| *4* | *Դասի տիպը* | Նոր նյութի ուսումնասիրության դաս | |
| *5* | *Դասի նպատակները* | *1. Գիտելիք*<br>• Հարստացնել հայրենիքի և շրջապատող աշխարհի մասին գիտելիքները<br>• Հարստացնել բառապաշարը<br>• Զարգացնել որոշ պատկերացումներ ժողովրդի պատմության, մշակույթի վերաբերյալ<br>*2. Կարողություն*<br>• Զարգացնել կարդալու և գրելու կարողությունները | |

| | | | |
|---|---|---|---|
| | | • Զարգացնել գրավոր և բանավոր խոսքը<br>• Զարգացնել տեքստը ընթերցելիս առանձին բառակապակցությունների և բառախմբերի իմաստների վրա կենտրոնանալու կարողությունը<br>***3. Արժեք***<br>• Ձևավորել ժամանակի և տարածության մեջ կատարված փոփոխությունները տեսնելու և գնահատելու կարողությունները<br>***4. Վերաբերմունք***<br>• Խրախուսել և խթանել հայրենիքի նկատմամբ սերն ու հոգատարությունը | |
| *6* | ***Դասի վերջնարդյունքները*** | • Հասկանալով ընթերցի տեքստը, պատասխանի հարցերին<br>• Բացատրի ունկնդրած և ընթերցած տեքստի նորածանոթ բառերն ու արտահայտությունները, կիրառի դրանք խոսքում<br>• Հասկանա տեքստի բովանդակության ու նկարագրման կապը<br>• Իմանա՝ ով է կառուցել Էրեբունին<br>• Համեմատի Էրեբունին ու Երևանը<br>• Պահպանի տեքստում հանդիպած բառերի ուղղագրությունը գրավոր խոսքում | |
| *7* | **Խաչվող հասկացություններ** | • Ժամանակ և տարածություն<br>(Տարբեր ժամանակներում և վայրերում մարդկանց կենցաղը, ձեռքբերումները) | |

| | | | |
|---|---|---|---|
| *8* | **Կապը ՀՊՉ տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ** | S1, S7, S8, S9, S14, S16, S17, S18, S22, S23, S25 | |
| 9 | **Ներառարկայական կապեր** | «Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը» | |
| *10* | ***Միջառարկայական*** **կապեր** | • Կերպարվեստ (Երևանի տեսարժան վայրերի նկարների, նկարազարդումների դիտում, մեկնաբանում)<br>• Երաժշտություն («Երևանի օրհներգի» ունկնդրում, կատարում, սովորում) | |
| *11* | **Ուսումնական գործունեության ձևեր (Ուսուցման և գնահատման մեթոդներ, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևեր)** | • Գործնական մեթոդ՝ վարժություն «Փորձի՛ր գուշակել»<br>• Զննական մեթոդ՝ «Էրեբունի քաղաքի սեպագիր արձանագրությունը» նկարի ցուցադրություն<br>• Խոսքային մեթոդ՝ լուռ, դադարներով ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով, ընտրովի ընթերցանություն<br>• Ձևավորող գնահատման հնար «Հարցադարան»<br>• Անհատական և խմբային աշխատանքներ | |
| *12* | ***Ուսուցման ոճեր՝***<br>***1) Վիզուալ (տեսողական)***<br>***2) Աուդիալ (լսողական)***<br>***3) Կինեսթետիկ*** | **1)** Դիտում է դասագրքի տեքստը, պատկերները, նկարազարդումները։<br>**2)** Լսում է ուսուցիչների և ընկերների բացատրությունները։<br>**3)** Կատարում է գրավոր առաջադրանքներն ու հանձնարարությունները, խաղում է լիցքաթափող խաղ | |
| *13* | ***Առաջարկվող գործունեության ձևեր*** | • Կարդալ տեքստը՝ դադարներով և ընտրովի։ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | • Արտահայտել մտքերն ու զգացումները՝ պահպանելով հայերենի ուղղախոսական կանոնները։<br>• Հյուսել ոչ ծավալուն պատմություններ թեմատիկ նկարների շուրջ<br>• Բացատրել ունկնդրած և ընթերցած տեքստի նորածանոթ բառերն ու արտահայտությունները, կիրառել դրանք խոսքում<br>• Ստեղծել կապակցված բանավոր խոսք<br>• Բացատրել տեքստի և նկարազարդման կապը | |
| *14* | ***ԿԱՊԿՈՒ սովորողների՝ աշխատանքներ***<br>• Նվազագույն<br>• Առավելագույն | • Դիտել դասագրքի որևէ նկարազարդում և խոսել դրա շուրջ։<br>• Կատարել դասագրքի Առաջ. 1-ը | |
| *15* | ***Դասի փուլերը, տևողությունը, ընտրված մեթոդները:***<br>***Ըստ փուլերի մանրամասն նկարագրություն***) | **Ա) Դասի սկիզբ (5–7 րոպե)**<br>**«Փորձի՛ր գուշակել» վարժության կիրառում**<br>Նախօրոք պատրաստել բառ-քարտեր՝ ***ծնվել, անուն ստանալ, մեծանալ, ապրել***, դասավորել դրանք երեխաների սեղաններին տեսանելի հատվածում։<br>**Բ) Նոր նյութի ուսումնասիրություն (20-25րոպե)** Հարցադրումներով բացահայտում, ցուցադրումով բացատրություն<br>• **Տեքստային աշխատանք –**<br>• Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով<br>• Տեքստի ընտրովի ընթերցանություն՝ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | բովանդակության ընկալումը խորացնելու նպատակով<br>• **Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ**<br><br>**Գ) Դասի ավարտ՝ ամփոփում և անդրադարձ**<br>• **Դասի ամփոփման և անդրադարձ կատարելու նպատակով** աշխատանքային տետրում առաջադրանքների կատարում<br><br>**Դ) Ձևավորող գնահատում՝ «Հարցադարան» հնար** (Ուսուցիչը, հիմք ընդունելով սովորողների ակտիվությունը, ներգրավվածությունը, կատարված ամփոփիչ աշխատանքի արդյունքները, կատարում է **դասի վերլուծություն**: Հաշվի է առնում դասի դրական և բացասական կողմերը, կատարում է հետևություններ: Պլանավորում է հաջորդ դասը):<br><br>**Ե) Տնային աշխատանքի հանձնարարում** | |
| *16* | ***Ուսումնադիտողական պարագաներ, էլեկտրոնային ռեսուրսներ*** | • Բառ-քարտեր,<br>• «Հարցադարան» քարտեր<br>• Ինքնակպչուն թղթեր<br>• Երեբունի քաղաքի սեպագիր արձանագրության նկար | |

| | | | |
|---|---|---|---|
| | | • Երևանի տեսարժան վայրերի նկարներ | |
| *ա) Դասի սկիզբ (տևողությունը՝ 5 -7 րոպե)*<br>**Դասը կարելի է սկսել «Փորձի՛ր գուշակել» վարժության կիրառմամբ:**<br>• Դասագրքերը փակ են: Կարելի է նախապես գրատախտակին գրել (կամ փակցնել) ***ծնվել, անուն ստանալ, մեծանալ, ապրել*** *քարտ*- բառերը և աշակերտներին առաջարկել գուշակել, թե ինչն է ծնվում, անուն ստանում, մեծանում, ապրում:<br>• Այնուհետև ուսուցիչն ասում է, որ քաղաքներն էլ են ծնվում, անուն ստանում, մեծանում և ապրում: Ապա կարելի է ցուցադրել Էրեբունի քաղաքի սեպագիր արձանագրության նկարը, ասել, որ սա էլ մի քաղաքի ծննդյան վկայական է (կամ անձնագիր), որի մասին այսօր պետք է կարդան: | • Երեխաներն անկաշկանդ արտահայտում են իրենց կարծիքը, հիմնավորում: Բոլոր առաջարկվող տարբերակները *(կենդանի, բույս, մարդ, ծաղիկ և այլն)* լսելուց հետո ուսուցիչն աշակերտներին կարող է հուշում անել հարցի տեսքով. այդտեղ ապրում են մարդիկ, և այդ տեղի անունը որ կողմից էլ կարդաք՝ նույնն է: Տարբեր պատասխաններից հետո նա երեխաների ուշադրությունը հրավիրում է *քաղաք* տարբերակի վրա, եթե չեն նշել այդ տարբերակը: | Վարժության նպատակն է. խթանել աշակերտների երևակայությունը, ուշադրությունն ու հետաքրքրությու-նը և կապ ստեղծել ուսուցանվող նյութի հետ: |
| *բ) Նոր նյութի ուսումնասիրություն (տևողությունը՝ 20 - 25 րոպե)*<br>• **Աշխատանք տեքստի շուրջ**<br>Ուսուցչի հրահանգով աշակերտները բացում են դասագիրքը, լուռ կարդում են դասանյութի գլխագիրը և մուտքի պատուհանիկը: | Աշակերտները լուռ ընթերցում են դասանյութի գլխագիրը և մուտքի պատուհանիկը: Այնուհետև<br>լավ ընթերցող աշակերտներից որևէ մեկն է բարձրաձայն կարդում դրանք: Երեխաները ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը ընթերցված կետերի վերաբերյալ: | |

| | | |
|---|---|---|
| • **Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով**<br>Առաջարկվում է տեքստն ընթերցել հատվածներով՝ ուսուցչի կողմից՝ զուգահեռ բացատրելով նորածանոթ բառերը.<br>**Կառք***- ծածկ ունեցող երկանիվ կամ քառանիվ հարմարավետ սայլ։<br>**Բերնեբերան***- այստեղ՝ մեկը մյուսին պատմելով, հաղորդելով։<br>**Մրգանույշ***- մրգից պատրաստված քաղցր ուտելիք, մուրաբա։<br><br>**Հատված 1.**<br>(Պատմվածքի սկզբից մինչև՝ «Այդ քարը մինչև հիմա պահպանվել է» նախադասությունը)<br><br>*-Ի՞նչ իմացավ թոռնիկը մայրաքաղաք Երևանի մասին։*<br><br>*-Ինչպե՞ս է Էրեբունին դարձել Երևան։*<br><br>**Հատված 2** («Իսկ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում» նախադասությունից մինչև՝ «Երևի տխուր քաղաք է եղել | *Պատասխանների հնարավոր տարբերակներ։*<br><br>-Հզոր թագավոր Արգիշտին շա՛տ ու շատ տարիներ առաջ կառուցեց մեր քաղաքը և անունը Էրեբունի դրեց։<br><br>-Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան)<br><br>- Իմ կարծիքով՝դպրոցներ միշտ եղել են։ Ուղղակի շատ քիչ են եղել։ Քիչ մարդիկ են սովորել այնտեղ։ | |

| | | |
|---|---|---|
| Էրեբունին» նախադասությունը)<br><br>*-Քո կարծիքով՝ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում։* | - Պապիկը պատմեց, որ Էրեբունիում այսօրվա դպրոցների նման դպրոցներ չեն եղել, բայց հայերը շատ վաղուց են գրել–կարդալ իմացել։ Գրել են քարերի և կավե սալիկների վրա։ | |
| *- Ի՞նչ պատմեց պապիկը դպրոցների մասին։* | -Այս մասին քարի վրա գրվել է շատ տարիներ առաջ, և այդ քարը մինչև հիմա պահպանվել է։ | |
| *-Որտեղի՞ց **գիտենք**, որ Արգիշտին է կառուցել Երևանը։* | - Իմ կարծիքով՝ քաղաքները ուրախ կամ տխուր են, երբ ուրախ կամ տխուր են այնտեղ ապրողները։ | |
| *-Ի՞նչ եք կարծում, տխո՞ւր քաղաք է եղել Էրեբունին։* | _ Էրեբունի քաղաքում կային կառքեր, մարտակառքեր, արագավազ ձիեր։ Կային նաև շատ հետաքրքիր խաղեր, հեքիաթներ ու հեքիաթասացներ, երգ ու պար կար, լուրեր տանող-բերող սուրհանդակներ։ | |
| **Հատված 3** («Չէ՝, ի՜նչ ես ասում» նախադասությունից մինչև վերջ)<br><br>*- Ինչե՞ր կային Էրեբունի քաղաքում։* | - Արամ պապն Արգիշտի թոռնիկին խոստացավ տանել «Էրեբունի» թանգարան, որ նա տեսնի, թե ինչպես են ապրել հայերը հազարավոր տարիներ առաջ։ | |
| *- Ի՞նչ խոստացավ Արամ պապն Արգիշտի թոռնիկին։* | - Արամ պապը և Արգիշտին սիրում են Երևանը, որովհետև այն Հայաստանի մայրաքաղաքն է, աշխարհի ամենամեծ քաղաքը, որտեղ | |

| | | |
|---|---|---|
| *- Ինչու՞ էին Արգիշտին և Արամ պապը սիրում Երևանը։*<br><br>- Իսկ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում։<br><br>• **Տեքստի ընտրովի ընթերցանություն՝ բովանդակության ընկալումը խորացնելու նպատակով։**<br>➢ Ընթերցե՛ք այն տողերը, որտեղ խոսվում է հայկական դպրոցների, հայերեն գիր ու տառի մասին։<br>➢ Ի՞նչ էր հետաքրքրում փոքրիկ Արգիշտիին։ Ընթերցե՛ք նրա հարցերը։ | բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն։<br><br>- Այսօրվա դպրոցների նման՝ ոչ։<br><br>-Բայց մենք շա՛տ վաղուց գրել-կարդալ գիտեինք, ճիշտ է՝ մի քիչ այլ կերպ էինք գրում։<br>— Պապի՛կ, ինչո՞ւ է իմ անունն Արգիշտի։<br>-Իսկ քո անունն ո՞վ է դրել։<br>- Իսկ ինչու՞ է մեր քաղաքի անունը Երևան։<br>-Բա ինչի՞ վրա էին գրում։<br>-Իսկ Էրեբունիում պաղպաղակ կա՞ր։ | |

| | | |
|---|---|---|
| Տեքստից ընտրի՛ր և կարդա՛ այն հատվածը, որտեղ պատմվում է, թե.<br>-ինչպես են գրել Էրեբունիում,<br>-ինչպիսի քաղաք է եղել Էրեբունին,<br>-ինչու են Երևանը շատ սիրում:<br><br>• **Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ:**<br><br>-Ո՞ւմ միջև է զրույցն ընթանում:<br><br>-Ի՞նչ է թոռնիկի անունը:<br><br>-Ինչու՞ է հենց այդ անունը տրվել նրան:<br><br>-Ո՞վ էր Արգիշտի թագավորը:<br><br>-Ինչպե՞ս է առաջացել Երևան անունը: | -Թոռնիկի և պապի միջև է զրույցն ընթանում:<br><br>-Թոռնիկի անունը Արգիշտի է:<br><br>-Տրվել է ի պատիվ Արգիշտի թագավորի:<br><br>-Հզոր թագավոր էր Արգիշտին, և նա է կառուցել Էրեբունի քաղաքը:<br><br>-Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան:<br><br>-Իմացավ, որ Երևանի նախկին անունը եղել է Էրեբունի, որ այն կառուցել է հայ հզոր թագավոր Արգիշտին:<br>- Իմացավ նաև Էրեբունու փոխադրամիջոցների մասին:<br>-Իմացավ, որ նախկինում մարդիկ գրել են կավե սալիկների, քարերի վրա:<br>-Իմացավ, որ հայ թագավորները սիրել են ուտել մրգանույշ:<br><br>-Այո, որովհետև . . . | |

| | | |
|---|---|---|
| -Ի՞նչ նոր բաներ իմացավ Արգիշտին Երևանի մասին։<br><br>-Ի՞նչ ես կարծում, թոռնիկը հավանե՞ց պապիկի նկարագրած Էրեբունին։ Հիմնավորի՛ր կարծիքդ։<br><br>-Ի՞նչ կարող ես անել քո մայրաքաղաքին, քո բնակավայրին, քո դպրոցին օգտակար լինելու համար։<br><br>Այնուհետև ուսուցիչը QR կոդի միջոցով ներկայացնում է տեքստի բեմականացման տեսահոլովակը։<br><br>• **Խաղային դադար (3 րոպե)** | -Լավ սովորել, դառնալ պիտանի մարդ, մաքուր պահել շրջապատը, լինել հոգատար ու ուշադիր։<br><br>Երեխաները լսում են իրենց ասված բառերը, ցատկում են կամ կքանստում։<br><br>-Նկարներում պատկերված են Հանրապետության հրապարակը, Էրեբունի թանգարանը, Մատենադարանը, | |

| | | |
|---|---|---|
| Ուսուցիչը ասում է իրերի անուններ: Եթե այդ իրերը կային Էրեբունիում, երեխաները կքանստում են, իսկ եթե չկային, ցատկում են:<br><br>• **Գ) Դասի ավարտ՝ ամփոփում և անդրադարձ *(10 – 15 րոպե)***<br><br>• Աշխատանքային տետրում առաջադրանքի կատարում՝ **դասի ամփոփման նպատակով**<br>**Առաջադրանք 1.**<br><br>**Ուշադիր դիտի՛ր տեքստի նկարազարդումները և գտի՛ր Երևանի սիրելի վայրերը:** | Ծիծեռնակաբերդը, Մարզահամերգային համալիրը, Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքը, բժշկական ինստիտուտի շենքը, կայարանամերձ հրապարակը՝ Սասունցի Դավթի արձանով: | |
| **Առաջադրանք 2.** Ժամանակի ընթացքում ի՞նչն է փոխվել մեր քաղաքում: Միացրո՛ւ սլաքներով<br><br>-Ի՞նչն է փոխվել ժամանակի ընթացքում:<br><br>• ***«Հարցադարան» հնար***<br><br>Ուսուցիչը, հիմք ընդունելով սովորողների | | Երեխաները պետք է մտովի կամուրջ կառուցեն հնադարյան Էրեբունի քաղաքի ու այսօրվա Երևանի միջև և տեսնեն փոփոխություննե-րի մի քանի օրինակ:<br><br>«Հարցադարան» հնարը ներառում է մի շարք հարցադրումներ, որոնք դասի |

| | | |
|---|---|---|
| ակտիվությունը, ներգրավվածությունը, կատարված ամփոփիչ աշխատանքի արդյունքները՝ կատարում է **դասի վերլուծություն**<br>Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի սեղանին դրվում է քարտ՝ հետևյալ հարցերով.<br>✓ Ի՞նչ նոր բան այսօր իմացաք:<br>✓ Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:<br>✓ Ի՞նչն էր դժվար:<br>✓ Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչո՞ւ:<br><br>Վերջում, ուսումնասիրելով քարտերը, ուսուցիչը համապատասխան եզրագանգումներ է անում: Հաշվի է առնում դասի դրական և բացասական կողմերը՝ կատարում է հետևություններ: | | ամփոփման և անդրադարձման ժամանակ ուղղվում են այս կամ այն սովորողին կամ սովորողների որոշակի խմբին և օգնում են ուսուցչին որոշելու, թե որ գիտելիքը կամ հասկացությունը չյուրացվեց սովորողների կողմից: Կիրառվում են հարցադրման մի շարք տարբերակներ, հատկապես ընդարձակ պատասխաններ պահանջող՝ սովորողներից անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով: Պլանավորում է հաջորդ դասը: |
| **Ե) Տնային աշխատանքի հանձնարարում**<br><br>• Կարդալ տեքստը վարժ, արտահայտիչ,<br>• սովորել նորածանոթ բառերի բացատրությունը<br>• այդ բառերով կազմել բառակապակցու-թյուններ, նախադասություններ: | | |

ԵՐԵՎԱՆ

## Դասի պլանի օրինակելի նմուշ 2

(Գիտելիքների ամրապնդման, կարողությունների, հմտությունների ձևավորման դաս)

***Առարկա*** ՝ Մայրենի

***Դասարան***՝ 2-րդ

***Դասի թեման***՝ Երևան

***Դասի տիպը*** ՝ Գիտելիքների ամրապնդման, կարողությունների, հմտությունների ձևավորման դաս (2-րդ դասաժամ)

***Դասի նպատակները*** ՝

- ***Գիտելիք***
  - Ընդլայնել հայրենիքի և շրջապատող աշխարհի մասին գիտելիքները
  - Հարստացնել բառապաշարը
  - Զարգացնել որոշ պատկերացումներ հայ ժողովրդի պատմության, մշակույթի վերաբերյալ
- ***Կարողություն***
  - Ձևավորել անսովոր իրավիճակներում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ
  - Ձևավորել հարցեր տալու կարողություն
  - Զարգացնել դերերով կարդալու կարողությունը
  - Ձևավորել ժամանակի և տարածության մեջ կատարված փոփոխությունները տեսնելու և գնահատելու կարողություններ

- ***Վերաբերմունք***
  Ձևավորել հոգատար վերաբերմունք հայրենիքի նկատմամբ
- ***Արժեք***
  Խրախուսել և խթանել հայրենիքի նկատմամբ սերը

***Դասի վերջնարդյունքները*** ՝

- Դերերով ընթերցի տեքստը՝ համապատասխան արտահայտչական միջոցներով և հույզերով
- Սովորի «Աչքի առաջ» բառերը՝ օգտագործելով բառակապակցությունների և նախադասությունների մեջ
- Սովորի հարցեր տալ, ձևակերպի հարցեր առաջադրված պատասխանների համար
- Ճանաչի Երևանի դրոշը, զինանշանը, օրհներգը
- Ամրապնդի է-ե ուղղագրության իմացությունը

- Գնահատի դասի ընթացքում իր ձեռքբերումները

***Կապը ՀՊՀ տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ***

- S1, S7, S8, S9, S14, S16, S17, S18, S22, S23, S25

***Խաչվող հասկացություններ***

- Ժամանակ և տարածություն

***Ուսուցման ռճեր՝***

1. ***Վիզուալ (տեսողական)***
   Դիտում է դասագրքի տեքստը, պատկերները, նկարազարդումները:
2. ***Աուդիալ (լսողական)***
   Լսում է ընկերների, ուսուցչի խոսքը, Երևանի օրհներգը
3. ***Կինեսթետիկ***
   Բացում է դասագրքի QR կոդը՝ կատարելով տրված առաջադրանքները, կատարում է գրավոր առաջադրանքները:

***ԿԱՊԿՈՒ սովորողների աշխատանքները.***

Նվազագույն

- Ունկնդրել Երևանի հիմնը (QR կոդ)
- Գունազարդել Երևանի դրոշը
  Դիտել նկարազարդումները

Առավելագույն

Արտագրել «Էրեբունի» բանաստեղծությունը կամ հատված այդ բանաստեղծությունից:

***Ուսումնադիտողական պարագաներ, տեխնիկական միջոցներ, էլեկտրոնային ռեսուրսներ.***

- «Մուտքի» քարտեր
- «Ելքի» քարտեր
- « T- աձև» աղյուսակ
- Ինքնակպչուն թղթեր
- Երևանի դրոշի, զինանշանի նկարներ
- Երևանի օրհներգի ձայնասկավառակ

***Ուսումնական գործունեության ձևեր (ուսուցման և գնահատման մեթոդներ, ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևեր)***

- Դերերով ընթերցանության մեթոդ
- «Կմախք» մեթոդ
- Գործնական մեթոդներ՝ գրավոր աշխատանք, աղյուսակի և խաչբառի լրացում

- Ձևավորող գնահատման հնար՝ «Մուտքի քարտեր», «Ելքի քարտեր»
- Անհատական և զույգային աշխատանքներ

***Ներառարկայական կապերը***

- Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը (2-րդ դաս)

***Միջառարկայական կապերը***

- Կերպարվեստ
  (Երևանի տեսարժան վայրերի նկարներ)
- Երաժշտություն
  («Երևանի օրհներգի» ունկնդրում)

***Դասի ընթացքը (փուլերը, տևողությունը, ընտրված մեթոդները)***

1. **Ներածություն ( 3-5 րոպե)**

➢ Հնար՝ «Մուտքի քարտեր»

2. **Հիմնական մաս (23-25 րոպե)**

➢ Դերերով ընթերցանություն՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով

➢ Բառային աշխատանք

➢ Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ

**3. Դասի ամփոփում և անդրադարձ (10րոպե)**

➢ «Կմախք» մեթոդ

**4. Գնահատում (5 րոպե)**

➢ Հնար՝ «Ելքի քարտեր»

**5. Տնային աշխատանքի հանձնարարում (1 րոպե)**

**Դասի ընթացքը՝**

1. **Ներածություն (3-5 րոպե)**

Դասի սկզբում, երբ ուսուցիչը ցանկանում է հասկանալ, թե ինչ են յուրացրել սովորողները նախորդ դասից, կիրառվում է անհատական ***«Մուտքի քարտեր» հնարը.***

- ✓ Նշի՛ր **3** բան, որ հիշում ես նախորդ դասից:
- ✓ Նշի՛ր **2** բան, որ կարևորում ես:
- ✓ Նշի՛ր **1** բան, որին կուզենայիր այս դասին կրկին անդրադառնալ:

2. **Հիմնական մաս (23-25 րոպե)**

➢ **Դերերով ընթերցանություն՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով.**

Ուսուցչի առաջարկով աշակերտներն ընտրում են դերերը՝

Արամ պապ, Արգիշտի թոռ։ Կարդում են տեքստը դերերով՝ պահպանելով կետադրական նշանները։ Կարդում են այնպես, որ զգացվեն Արգիշտիի անկեղծ զարմանքն ու Արամ պապի սերը Երևանի նկատմամբ։

- **Աշխատանք «Աչքի առաջ» բառերի շուրջ.**

Աշակերտները «Աչքի առաջ» խորագրի բառերը գրում են գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝

**Եր-ան, թա-ավոր, ա-տոմեքենա, կարա-, բար-ել, կա-ք։**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին և բառատետրում, կազմում բառակապակցություններ կամ նախադասություններ։

**Երևան**- վարդագույն Երևան, Երևանի հուշարձաններ

**թագավոր**- հզոր թագավոր, թագավորի զգեստ

**բարձել**- բեռները բարձել, բարձել ավտոմեքենան

**ավտոմեքենա**- մարդատար ավտոմեքենա, ավտոմեքենայի ղեկ

**կառք**- արագընթաց կառք, կառք նստել, ձիերը լծել կառքին

**կարագ**- դեղին կարագ, կարագը հալել, կարագով ճաշ եփել

- **Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ.**

**Առաջադրանք 3.** Տեքստից օգտվելով՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած բառերը։

Ուսուցիչը աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացրած նյութը և լրացնելու անավարտ նախա-դասությունները։

- Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան։
- Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է։
- Երևանում բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն։

Առաջադրանքը նպաստում է տեքստի բովանդակության յուրացմանը, ինչպես նաև այն բանին, որ աշակերտը մտապահի, հիշողության մեջ ամրագրի, որ Երևան անունը առաջացել է Էրեբունի անունից, որ Երևանը Հայաստանի

մայրաքաղաքն է, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

**Առաջադրանք 4.**

Արտագրի՛ր բանաստեղծությունը:
Լրացրո՛ւ աղյուսակը:

ԷՐԵԲՈՒՆԻ
– Էմի՛ն, գնա՞նք Էրեբունի:
– Գնա՛նք, Արա:
Բայց չգիտեմ տեղը նրա:
– Ա՜յ քեզ Էմին, դու չգիտե՞ս,
Որ հնամյա Էրեբունին
Երևանի անունն է հին:

**Է**-ի, **Ե**-ի ուղղագրության իմացության ամրապնդման համար երեխաները, օգտվելով փոքրիկ բանաստեղծությունից, նկարներից և անցած դասանյութերից, լրացնում են աղյուսակը (զույգային աշխատանք).

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| է | ջ | | | | | | |
| է | մ | ի | ն | | | | |
| ա | փ | ս | ե | | | | |
| հ | ա | ս | ց | ե | | | |
| Ե | ր | և | ա | ն | | | |
| է | ր | ե | բ | ու | ն | ի | |
| է | ջ | մ | ի | ա | ծ | ի | ն |

**Առաջադրանք 5.**

ՍՈՎՈՐԻ՛Ր ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

- Կարդա՛ պապիկի պատասխանները: Մտածի՛ր, թե ինչ հարցեր է տվել Արգիշտին:
- Լրացրո՛ւ աղյուսակը: Քեզ օգնության կգան ընդգծված բառերը:

**Արգիշտին կարող էր տալ այսպիսի հարցեր.**

| | |
|---|---|
| Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը: | Երևանը **Հայաստանի մայրաքաղաքն է:** |

| | |
|---|---|
| Ո՞վ է կառուցել Էրեբունին: | **Էրեբունին կառուցել է** հզոր թագավոր Արգիշտին: |
| Որտե՞ղ է պահվում Երևանի քարե անձնագիրը: | **Երևանի քարե անձնագիրը պահվում է** Էրեբունի թանգարանում: |
| Ի՞նչ քարերով են կառուցված Երևանի շենքերը: | **Երևանի շենքերը** կառուցված են վարդագույն տուֆից: |

Կարելի է առաջադրանքը կատարել խմբային կամ զույգային աշխատանքի միջոցով: Դասարանը բաժանել խմբերի կամ զույգերի: Յուրաքանչյուր զույգին կամ խմբին տալ թղթե շերտիկների վրա գրված պատասխան-նախադասությունները: Աշակերտները լուռ կարդում են նախադասությունը, մտածում են հարցը և գրում շերտիկի վրա: Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը կամ զույգերը ներկայացնում են իրենց գրած հարցերը: Հնարավոր է, որ աշակերտները նույն պատասխանի համար ձևակերպեն տարբեր հարցեր: Ուսուցիչը պետք է ուշադիր լսի, հնարավորության տա արտահայտվելու բոլոր խմբերին, ապա միայն, քննարկելով աշակերտների հետ, կատարի ճշգրտումներ: Պետք է խրախուսել աշակերտների մասնակցությունը, առանձնացնել ճիշտ ձևակերպած հարցերը:

- **«Գիտե՞ս, որ...» խորագրի շուրջ աշխատանք**

Նախքան «Գիտե՞ս, որ…» խորագրին անդրադառնալը կարելի է միացնել Երևանի օրհներգը (QR): Ուսուցիչը աշակերտներին բացատրում է, որ օրհներգը պաշտոնական տոների, արարողությունների ժամանակ հնչող հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է կամ երգ: Ուսուցչի հրահանգով աշակերտները ոտքի կանգնած՝ ուշադիր լսում են երգը:

Այնուհետև ծանոթանում են Երևանի զինանշանին և դրոշին: Կապույտ ֆոնին հայերեն բրոնզագույն մեծատառերով մակագրված «ԵՐԵՎԱՆ» պատվանդանին կանգնած, գլուխը հետ շրջած, իշխանության խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է՝ մեջտեղից բարձրացող Կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով: Առյուծի կրծքին՝ հավերժության նշանի վրա, Արարատ լեռան պատկերն է: Ողջ պատկերը երիզված է ուղղանկյունաձև վահանակով: Գործածված են բրոնզագույն և կապույտ գույները: Դրոշի կենտրոնում պատկերված է կապույտով երիզված բրոնզագույն Երևանի զինանշանը՝ շրջապատված 12 կարմիր եռանկյուններով, որոնք խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները:

**3. Դասի ամփոփում և անդրադարձ (10 րոպե)**

***«Կմախք»*** մեթոդ:

Գրել 1 նախադասություն, որը կասի, թե ինչի մասին է պատմվածքը.

- 1 արտահայտություն, որ կարևոր է տեքստի համար

- 1 բառ, որ արտահայտում է պատմվածքի իմաստը
- Ի՞նչ գույն ունի պատմվածքը

**4. Գնահատում (5 րոպե)**

Ձևավորող գնահատման **«Ելքի քարտեր» հնարի** միջոցով դասի ավարտին հավաքվում են սովորողների պատասխանները։ Հիմնվելով պատասխանների վրա՝ ուսուցիչը կառուցում է հաջորդ դասը, որպեսզի առանձնացնի և անդրադառնա չյուրացված հասկացություններին, գաղափարներին։

- ✓ Նշի՛ր **3** բան, որ սովորեցիր այսօր։
- ✓ Նշի՛ր **2** բան, որ հետաքրքրեց քեզ։
- ✓ Նշի՛ր **1** բան, որ մնաց անհասկանալի։

**5. Տնային աշխատանք.**

Պատմե՛լ՝ ինչպես է Էրեբունին դարձել Երևան։ Արտագրել դուր եկած հատվածը։

## ԵՐԵՎԱՆ

### Դասի պլանի օրինակելի նմուշ 3

(Գիտելիքների ընդհանրացման և ամրապնդման դաս)

***Առարկա՝*** Մայրենի

***Դասարան՝*** 2-րդ

***Դասի թեման՝*** Երևան

***Դասի տիպը՝*** Գիտելիքների ընդհանրացման և ամրապնդման դաս (3-րդ դասաժամ)

***Դասի նպատակները .***

- ***Գիտելիք***
  - Ընդլայնել հայրենիքի և շրջապատող աշխարհի մասին գիտելիքները
  - Հարստացնել բառապաշարը
  - Զարգացնել որոշ պատկերացումներ հայ ժողովրդի պատմության, մշակույթի վերաբերյալ
- ***Կարողություն***
  - Նպաստել հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացմանը
  - Ձևավորել անձ և իր ցույց տվող բառերը ճանաչելու կարողություն
  - Ձևավորել և զարգացնել բանավոր կապակցված խոսք կառուցելու կարողություն
  - Զարգացնել տեքստը պատմելու կարողությունը

- *Դիրքորոշում*
  Ձևավորել դիրքորոշում ժամանակի և տարածության մեջ կատարված փոփոխությունների նկատմամբ

- *Արժեք*
- Խրախուսել և խթանել հայրենիքի նկատմամբ սերն ու հոգատարությունը

*Դասի վերջնարդյունքները.*

- Պատմի՝ ինչպես է Էրեբունին դարձել Երևան
- Դերերով վերարտադրի տեքստը՝ համապատասխան արտահայտչական միջոցներով և հույզերով
- Ընտրովի վերարտադրի նկարազարդումներին համապատասխան հատվածները
- Սովորած բառերով գրի փոքրիկ զվարթ պատմություն՝ զարգացնելով երևակայությունը
- Ճանաչի Մատենադարանի շենքը, իմանա, թե այնտեղ ինչեր են պահվում
- Տարբերի անձ և իր ցույց տվող բառերը
- Հարցերի միջոցով առանձնացնի անձ և իր ցույց տվող բառերը
- Գնահատի դասի ընթացքում իր ձեռքբերումները

*Կապը ՀՊՀ տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ*

- S1, S7, S8, S9, S14, S16, S17, S18, S22, S23, S25

*Խաչվող հասկացություններ*

- Ժամանակ և տարածություն

*Ուսուցման ռաձեր՝*

1. *Վիզուալ (տեսողական)*

   Դիտում է դասագրքի տեքստը, պատկերները, նկարազարդումները
2. *Աուդիալ (լսողական)*
   Լսում է ընկերների կարծիքները, ուսուցչի խոսքը, բացատրությունը

3. *Կինեսթետիկ*

   Գրավոր առաջադրանքների կատարում, ուսումնական խաղին մասնակցություն՝ «Արտաքին և ներքին շրջաններ»

*ԿԱՊԿՈՒ սովորողների աշխատանքները՝*

- Նվազագույն

Դիտում է նկարազարդումները, թվարկում, թե ինչ է տեսնում նկարներում:

- Առավելագույն

  Առաջ. 6, նկար-բառերը անվանում է, կարդում

***Ուսումնադիտողական պարագաներ, տեխնիկական միջոցներ, էլեկտրոնային ռեսուրսներ՝***

- «Գիտելիքի բուրգ» պաստառ
- Մատենադարանի լուսանկար
- « Քառաբաժան» աղյուսակ
- Ինքնակպչուն թղթեր, թղթե շերտիկներ
- «Մշո ճառընտիր» գրքի լուսանկար

***Ուսումնական գործունեության ձևեր (ուսուցման և գնահատման մեթոդներ, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևեր)***

- Խոսքային մեթոդներ՝ պատմելու մեթոդ, բացատրություն
- Զննական մեթոդներ՝ նկարների ցուցադրություն
- «Քառաբաժան» մեթոդ
- Ձևավորող գնահատման հնար՝ «Գիտելիքների բուրգ»
- Անհատական աշխատանք, աշխատանք ողջ դասարանով

***Միջառարկայական կապերը***

- Կերպարվեստ
  (Մատենադարանի, Ճառընտիրի լուսանկարներ)
- Մանկական գրականություն
  («Գիտե՞ս որ…» հանրագիտարանային նյութ)
- Թատրոն
  Բեմականացում՝ «Պապի և թոռան զրույցը»)

***Դասի ընթացքը (փուլերը, տևողությունը, ընտրված մեթոդները)***

**1. Դասի մուտք (3-5 րոպե)**

- *Հնար՝«Արտաքին և ներքին շրջաններ»*

**2. Հիմնական մաս (23-25 րոպե)**

- Աշխատանք պատմելու տարբեր տեսակների կիրառման շուրջ՝ կապակցված խոսքի ձևավորման և զարգացման նպատակով
- Աշխատանք «Գիտե՞ս, որ…» նյութի շուրջ
- Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ

**3. Դասի ավարտ՝ ամփոփում և անդրադարձ (7-10 րոպե)**

- Քննարկում՝ «Ամփոփման պատուհանիկ»

- Անդրադարձ՝ «Դասից քաղած իմ պտուղները»

**4. Գնահատում (5-7 րոպե)**

- Հնար՝ «Գիտելիքների բուրգ»

**5. Տնային աշխատանքի հանձնարարում**

**Դասի ընթացքը՝**

**1. Դասի մուտք (3-5 րոպե)**

Դասի սկզբում ուսուցիչը ցանկանում է հասկանալ, թե ինչ են յուրացրել սովորողները նախորդ դասից, կիրառվում է ***«Արտաքին և ներքին շրջաններ» հնարը:***

Սովորողները կազմում են 2 շրջան՝ արտաքին և ներքին: Այնուհետև կանգնում են դեմ դիմաց և ուսումնասիրվող թեմայից միմյանց հարցեր են ուղղում: Հարցերի պատասխանը լսելուց հետո արտաքին շրջանի սովորողները տեղափոխվում են ժամասլաքի ուղղությամբ, կազմում են նոր զույգեր և կրկին միմյանց հարցեր ուղղում: Այդ ընթացքում ուսուցիչը դիտարկումներ է անում և նշում սովորողների թյուրընկալումներն ու դժվարությունները՝ հետագայում դրանց անդրադառնալու և շտկումներ կատարելու համար:

**2. Հիմնական մաս (23-25 րոպե)**

- **Աշխատանք տեքստը պատմելու շուրջ՝** կապակցված խոսքի ձևավորման և զարգացման նպատակով:

**Աշակերտները տեքստը պատմում են տարբեր ձևերով՝**

- ***Դերերով պատմել***
- ***Ընտրովի պատմել***
- ***Համառոտ պատմել***

**Աշխատանք «Գիտե՞ս, որ...» նյութի շուրջ**

«Գիտե՞ս, որ…» խորագրի նյութը երեխաները կարդում են ինքնուրույն, ապա արտահայտում իրենց կարծիքները կարդացածի մասին: Ուսուցիչը լսում է բոլորին, ապա ընդհանրացնում աշակերտների եզրահանգումները: Ուսուցիչը բացատրում է, որ հին ժամանակներում գրքեր պատրաստում էին կենդանիների մշակված կաշիներից:

- **Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ**

**Առաջադրանք 6.** Կարդա՛ տրված բառերը:

Առաջադրանքի միջոցով, գործնական եղանակով ներմուծվում են առարկա ցույց տվող բառերին տրվող **ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր** հարցերը:

«Հիշի՛ր» խորագրով ներկայացվում է գործնական ճանապարհով սովորածի ընդհանրացումը:

**Առաջադրանք 7.** Բառերը խմբավորի՛ր ըստ պահանջվող հարցերի:

Այս առաջադրանքով ապահովվում է ստացված գիտելիքի գործնական կիրառումը: Երեխաները պետք է լրացնեն աղյուսակը.

| **ո՞վ** | **ովքե՞ր** | **ի՞նչ** | **ինչե՞ր** |
|---|---|---|---|
| տղա | ձկնորսներ | առյուծ | երկրներ |
| աղջիկ | վարորդներ | շուն | մրգեր |
| գյուղացի | քույրեր | գիրք | կատուներ |
| երգիչ | մայրեր | աղվես | |
| եղբայր | տատիկներ | բաժակ | |

Պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել այն բանին, որ հայերենում կենդանիներին ևս տրվում են **ի՞նչ, ինչե՞ր** հարցերը:

**3. Դասի ամփոփում և անդրադարձ (7-10 րոպե)**

**Դասի ավարտին** երեխաները կարդում են ***ամփոփման*** պատուհանիկում գրվածը: Ուսուցիչը կազմակերպում է փոքրիկ քննարկում, որի ընթացքում սովորողներն արտահայտում են իրենց վերաբերմունքը այնտեղ գրված մտքի շուրջ:

**Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ (անդրադարձ և ամփոփում)**

Խորագրի տակ ներկայացվող արտահայտությունների նկարազարդումները մեկ անգամ ևս երեխաներին հիշեցնում են Երևանի խորհրդանիշները և խորհրդանիշ դարձած հուշարձանները:

Սովորողները, կատարելով այս հանձնարարությունը, ևս մեկ անգամ ընդհանրացնում են իրենց ձեռք բերած գիտելիքները ամբողջական համակարգում:

**Ես իմացա**, թե ով է կառուցել Էրեբունին, և այն ինչպես է դարձել Երևան:

**Ես հասկացա,** որ ավելի մեծ սիրով ու պատասխանատվությամբ կվերաբերվեմ նրան:

**Ես զգացի** սեր և հպարտություն:

**Ես որոշեցի** երբեք չաղտոտել իմ սիրելի քաղաքը, ծնողներիս հետ այցելել «Էրեբունի» թանգարան:

**4. Գնահատում (5 րոպե)**

**Ձևավորող գնահատման հնար՝ «Գիտելիքների բուրգ»**

Դասանյութի ձեռք բերած գիտելիքներն ընդհանրացնելու, մեկ ամբողջական համակարգի մեջ միավորելու համար սովորողներին առաջարկվում է ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգը, այսինքն՝ ինչ սովորեցին և ինչ կարող են անել դասի տվյալ փուլում: Այդ նպատակով յուրաքանչյուր սովորող թղթի վրա պատկերում է բուրգ՝ ուսուցչի տված օրինակով: Բուրգի ամեն մի հատվածում գրում է նախադասություններ, որոնց միջոցով արտահայտում է իր գիտելիքները:



I. Դրական հույզեր
II. Օգտակար տեղեկություններ տեքստից
III. Հետաքրքիր փաստեր տեքստից

Ապա այդ թղթերը կախում են դասարանի պատին: Բոլոր սովորողները հերթով մոտենում են թղթերին և կարդում գրածները:

Վերջում անդրադառնում են գրված մտքերին և ամփոփում:

**5. Տնային աշխատանքի հանձնարարում**

**Առաջադրանք 8.** «Աչքի առաջ» խորագրի բառերով հորինի՛ր մի փոքրիկ, զվարթ պատմություն:

## ԵՐԵՎԱՆ

### Դասի պլանի օրինակելի նմուշ 4

(Գնահատման դաս)

***Առարկա՝*** Մայրենի

***Դասարան՝*** 2-րդ

***Դասի թեման՝*** Երևան

***Դասի տիպը՝*** Գնահատման դաս (4-րդ դասաժամ) /

***Դասի նպատակները .***

- ***Գիտելիք***
    - Բացահայտել սովորողների ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները, գիտելիքների համապատասխանության աստիճանը ներկայացվող պահանջներին
- ***Կարողություն***
    - Խթանել հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացումը
    - Բացահայտել անձ և իր ցույց տվող բառերը տարբերակելու կարողությունը
    - Բացահայտել բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողությունը
    - Բացահայտել սովորողների ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները, կարողությունների և հմտությունների համապատասխանության աստիճանը ներկայացվող պահանջներին

- ***Արժեք***
- Բացահայտել և գնահատել ժամանակի և տարածության մեջ կատարված փոփոխությունները տեսնելու և գնահատելու կարողությունները
- ***Վերաբերմունք***
- Խրախուսել և խթանել հայրենիքի նկատմամբ սերն ու հոգատարությունը

***Դասի վերջնարդյունքները՝***

- Պատմի Երևանի որևէ տեսարժան վայրի մասին:
- Պատմի՝ Էրեբունին ինչպես դարձավ Երևան:
- Իմանա, ճանաչի Երևանի խորհրդանիշները:
- Սովորած բառերով գրի փոքրիկ զվարթ պատմություն՝ զարգացնելով երևակայությունը:
- Տարբերի և հարցերի միջոցով առանձնացնի անձ և իր ցույց տվող բառերը:
- Գնահատի դասի ընթացքում իր ձեռքբերումները:

***Կապը ՀՊՀ տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ***

- S1, S7, S8, S9, S14, S16, S17, S18, S22, S23, S25

***Խաչվող հասկացություն***

- Ժամանակ և տարածություն

***ԿԱՊԿՈՒ սովորողների աշխատանքները՝***

- Նվազագույն

Դիտում է նկարազարդումները, ասում անվանումները:

- Առավելագույն

Կարդում է գրավոր աշխատանքի առաջադրանք 1-ի բառերը ։

*Առաջադրանք օժտված երեխաների համար*

Համացանցից տեղեկություններ քաղել Երևանի՝ ձեր սիրած տեսարժան վայրի մասին, և հաղորդում պատրաստել ընկերների համար։

*Ուսումնադիտողական պարագաներ, տեխնիկական միջոցներ, էլեկտրոնային ռեսուրսներ՝*

- Բանավոր հարցարան
- Գրավոր առաջադրանքներ

*Ուսումնական գործունեության ձևեր (գնահատման մեթոդներ )*

- Բանավոր հարցում
- Գրավոր աշխատանք
- Ստուգաթերթ

*Միջառարկայական կապերը*

- Կերպարվեստ
  (Երևանի տեսարժան վայրերի, դրոշի, զինանշանի նկարներ)

*Դասի ընթացքը (փուլերը, տևողությունը, ընտրված մեթոդները)*

1. Դասի մուտք (1-2 րոպե)

2. Բանավոր հարցում / 8-10 րոպե)

3. Գրավոր աշխատանք (23-25 րոպե)

4.Դասի ամփոփում, գնահատում, ստուգաթերթի ստեղծում

(10րոպե)

Դասի ընթացքը՝

1. Դասի մուտք (1-2 րոպե)

- Աշխատանքի պարզաբանում

2. Բանավոր հարցում (8-10 րոպե)

➢ Ա. Ասա՛ պատկերված առարկաների անվանումները.

- Բ. Երևանի ո՞ր տեսարժան վայրը կարող ես տանել հյուր եկած ընկերոջդ և պատմել դրա մասին:
- Գ. Պատմի՛ր՝ Էրեբունին ինչպես դարձավ Երևան:

*Բանավոր հարցման արդյունքում առաջարկվում է նախատեսել 3-5 աշակերտի գնահատում:*

**3. Գրավոր աշխատանք (23-25 րոպե)**

➢ 1. Կարդա՛ բառերը: Խմբավորի՛ր դրանք ըստ պահանջվող հարցերի (Պապ, թոռ, քաղաք, կենդանիներ, կաշի, մարդիկ, կառքեր, թագավորներ)

| **ո՞վ** | **ովքե՞ր** | **ի՞նչ** | **ինչե՞ր** |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |

**2.** Լրացրու՛ նախադասություններում բաց թողած բառերը.

Շա՛տ ու շա՛տ տարիներ առաջ ———————— թագավորը կառուցեց ———————— ———————— քաղաքը:

Երևանի ———— ———————— պահպանվում է Էրեբունի թանգարանում:

**3.** «Աչքի առաջ» խորագրի բառերով հորինի՛ր և գրի՛ր մի փոքրիկ, զվարթ պատմություն:
(*կարագ, թագավոր, Երևան, բարձել, կառք, ավտոմեքենա*)

_____
_____
_____
_____
_____
_____
_____

**4. Դասի ամփոփում, գնահատում (5 րոպե)**

Լրացված ստուգաթերթի նմուշ

| Աշակերտներ | Ս. Գ. | Ա.Մ. | Գ.Ք. | Ա. Տ. | Գ.Վ. | Վ. Ա. | Ն.Ս. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բանավոր՝ առ.1 | + | + | - | + | + | + | + | | |
| Բանավոր՝ առ. 2 | - | + | + | - | + | + | + | | |
| Բանավոր՝ առ. 3 | + | + | + | - | - | - | + | | |
| Գրավոր՝ առաջադրանք 1 | - | + | + | - | + | + | - | | |
| Գրավոր՝ առաջադրանք 2 | - | | + | - | + | + | + | | |
| Գրավոր՝ առաջադրանք 3 | + | + | + | + | - | - | + | | |

## ԷԼՄԵՐ

### Դասի պլանի օրինակելի նմուշ 5

(Հաղորդման դաս)

| ԱՌԱՐԿԱՆ – Մայրենի | | |
|---|---|---|
| Դասարանը – 2-րդ | Ուստարի – 2022-2023 | Կիսամյակը- 2րդ |
| Թեման | Էլմերը: Ինչպես դառնալ փղագույն | |
| Դասի տիպը | Հաղորդման դաս (նոր փաստերի ու երևույթների հետ ծանոթացման դաս) | |
| Դասի տևողությունը | 45 րոպե | |
| Դասի նպատակը | • Խորացնել կարդալու կարողությունները<br>• ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները<br>• զարգացնել հոգեկան գործընթացները | |
| Վերջնարդյունքները | • հասկանալով ընթերցի տեքստը<br>• պատասխանի առաջադրված հարցերին<br>• նկարագրի փղերի ընտանիքը<br>• մասնակցի խմբային աշխատանքի՝ պահպանելով խմբում աշխատելու կանոնները | |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդհանրական խաչվող հասկացություն-ները | Պատճառ և հետևանք | | |
| Կարողունակու-թյուններ | 1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>2. Սովորել, սովորելու կարողունակություն | | |
| Միջառարկայական կապ | Կերպարվեստ | | |
| Կապը ՀՊՉ-Ի հետ | S1, S7, S9, S16, S18 ,S22 | | |
| Ուսուցման մեթոդներ | Զրույց, քննարկում, դադարներով ընթերցանություն, խմբային աշխատանք, զույգով քննարկում | | |
| **Դասի փուլերը** | **Ուսուցչի գործունեություն** | **Աշակերտի գործունեություն** | **Հարցեր/հրահանգ-ներ** |
| **1. Դասի սկիզբ՝ 10**<br>7<br><br>3 | Աշակերտներին բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին տալ նախադասու-թյունների շերտիկը (3 նախադասու-թյուն) և ներկելու իրենց մասը։<br><br>Ուղղորդել աշակերտներին նկարի մասերը փակցնել պաստառին։ | Սովորողները բաժանվում են խմբերի, կար-դում են շերտիկի վրա գրված 3 նախադասու-թյունները և յուրաքանչյուր նախադասու-թյան տրամա-դրության համա-ձայն ներկում են նկարի մի մասը։<br><br>Աշխատանքի ավարտից հետո փակցնում են ստացված պատկերները՝ ստանալով փղի նկար։ | - Եկե՛ք վերհիշենք խմբային աշխատանքի կանոնները։<br>- Կարդացե՛ք նախադասությունները։<br>- Յուրաքանչյուր նախադասության տրամադրությունն արտահայտե՛ք համապատասխան գույնով՝ ներկելով ձեր բաժին նկարը։<br><br>-Ի՞նչ պատկեր ստացվեց։<br>-Ի՞նչն է անսովոր այդ նկարում։ |

| | | | |
|---|---|---|---|
| 2. Դասի ընթացք՝ 25<br><br>5 | Կազմակերպել զույգերով քննարկում դասագրքի էջի հարցի շուրջ։<br><br>Հանձնարարել կարդալ մուտքի պատուհանիկի քառատողը։ | զույգերով քննարկում են առաջադրված հարցը, ազատ արտահայտում են իրենց մտքերը։<br>Բացում են դասագիրքը, կարդում են մուտքի պատուհանիկը։ | «Հետաքրքիր է, զույնզգույն փիղ լինո՞ւմ է» |
| 15 | Հատվածաբար ընթերցել տեքստը, աշակերտներին ուղղել հարցեր։ | Հետևել տեքստի ընթերցանությանը, պատասխանել յուրաքանչյուր հատվածից հետո առաջադրված հարցերին։ | Ինչպիսի՞ն էր փղերի ընտանիքը։<br><br>Ինչպիսի՞ փղեր էին ապրում այդ ընտանիքում։<br><br>Ինչո՞վ էր Էլմերը տարբերվում մյուս փղերից։<br><br>Ինչո՞ւ էր փղերի ընտանիքը երջանիկ։<br><br>Ինչո՞ւ Էլմերը որոշեց հեռանալ։<br><br>Ինչպե՞ս էին ողջունում ջունգլիի կենդանիները Էլմերին։ Ինչո՞ւ։<br><br>Ինչպե՞ս Էլմերը դարձավ փղագույն։ |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Հանձնարարել Հանձնարարել սովորողներին ընթերցել տեքստը։ | Սովորողները, շարունակելով միմյանց, ընթերցում են տեքստը։ | Ի՞նչ էր զգում Էլմերը, երբ նմանվել էր բոլորին։ |
| 3. Ավարտ (10)<br><br>7<br><br>3 | Կատարել ձևավորող գնահատում՝ սովորողներին տալով «Ելքի քարտեր»։<br><br>Հանձնարարել տնային աշխատանք։ | Լրացնում են ելքի քարտերը, կարդում են իրենց գրառումները։ | Ավարտի՛ր նախադասություն-ները.<br>- Ի՞նչը քեզ զարմացրեց։<br>-Ի՞նչը քեզ ուրախացրեց։<br>-Ի՞նչը քեզ անհանգստացրեց։<br><br>Սովորել տեքստը վարժ կարդալ։ |
| Ուսուցչի անդրադարձը դասին | Դասը հագեցած էր, ընդհանուր առմամբ հաջողված։ Աշակերտները հանձնարարությունները կատարում էին սիրով և ոգևորված, մտքերն արտահայտում էին ազատ ու անկաշկանդ, հետևում էին ընկերոջ ընթերցանությանը։ | | |

Աշակերտներ, որոնք աջակցության կարիք ունեն.

| Անուն | Խնդիր | Աջակցություն |
|---|---|---|
| 1 | Դասին ներգրավվածության ցածր մակարդակ | Հարցերը տալիս դիմել անվանական, որ ներգրավվի ընդհանուր քննարկմանը: |
| 2 | Ուշադրության կենտրոնացում | Նստեցնել ուսուցչին մոտ, պահել տեսողական կապ հետը, հարցերին պատասխանելիս դիմել անվանական: |

## Ո՞ՒՄ ԾԱՌՆ Է

### Դասի պլանի օրինակելի նմուշ 6

(Գիտելիքների ստուգման դաս)

| ԱՌԱՐԿԱՆ – Մայրենի | |
|---|---|
| Դասարանը – 2-րդ | Ուստարի – 2022-2023 |
| Թեման | Ո՞ւմ ծառն է |
| Դասի տիպը | Գիտելիքների ստուգման դաս |
| Դասի տևողությունը | 45 րոպե |
| Դասի նպատակը | • խորացնել կարդալու կարողությունները<br>• ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները<br>• զարգացնել պատասխանատվության մասին երեխաների ունեցած պատկերացումները |
| Վերջնարդյունքները | • հասկանալով և համապատասխան հնչերանգով ընթերցի բանաստեղծությունը<br>• բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում<br>• լրացնի նախադասությունները գործողություն ցույց տվող բառերով<br>• կարևորի պատասխանատվությունն ու հետևողականությունը |
| Ընդհանրական խաչվող հասկացությունները | Պատճառ և հետևանք |

| | |
|---|---|
| Կարողունակություններ | 1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>2. Սովորել, սովորելու կարողունակություն<br>3. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն |
| Միջառարկայական կապ | Կերպարվեստ |
| Կապը ՀՊՉ-Ի հետ | • Գրավոր և բանավոր հաղորդակցվել գրական հայերենով։<br>• Մտքերն արտահայտելիս բերել պարզ հիմնավորումներ։<br>• Ճանաչել և պահպանել հասարակական վարքի կանոնները։ |
| Ուսուցման մեթոդներ | Զրույց, քննարկում, դաղարներով ընթերցանություն, խմբային աշխատանք, զույգով քննարկում |

| Դասի փուլերը | Ուսուցչի գործունեություն | Աշակերտի գործունեությունն | Հարցեր/հրահանգ-ներ |
|---|---|---|---|
| **1. Դասի սկիզբ՝ 3** | Աշակերտներին առաջարկել հանելուկ ծառի մասին և ծավալել զրույց այն մասին, թե ինչ է անհրաժեշտ ծառ աճեցնելու համար։ | Գուշակում են հանելուկի պատասխանը։ Մասնակցում են զրույցին՝ ազատ արտահայ-տելով իրենց մտքերը։ | Այն ի՞նչն է՝<br>- Շոգին՝ հագած,<br>Ցրտին՝ մերկ,<br>Մի ոտք ունի,<br>Հազար ձեռք։<br><br>-Ի՞նչ է անհրաժեշտ ծառ աճեցնելու համար։ |
| 2. Դասի ընթացք՝ 35<br><br>5 | Աշակերտներին բաժանել թղթի վրա տպված բանաստեղծու-թյունը | Սովորողները կազմում են զույգեր և լրացնում են իրենց քարտե-ռում բաց թողնված | Ընթերցե՛ք ձեր թղթիկի բանաստեղծությունը և լրացրե՛ք բաց թողած բառերը՝ օգտվելով ընկերոջ օրինակից։ |

| | | | |
|---|---|---|---|
| 5<br><br>10 | Կատարել դասագրքի էջ 109-ի առաջադրանք 7-ը։<br><br>Մոտենալ սովորողներին, խրախուսել, անհրաժեշտության դեպքում ուղղորդել։ | գործողություն ցույց տվող բառերը՝ օգտվելով զույգի նմուշից։ (Տե՛ս պլանի վերջում։)<br><br>Աշխատանքի ավարտից հետո աշակերտները կարդում են ամբողջական բանաստեղծությունը, ցանկության դեպքում արտասանում են անգիր։<br><br>Սովորողները դիտում են առաջ. 7-ի նկարը և այդ նկարի շուրջ կազմում են տարբեր նախադասություններ։<br><br>Բացում են տետրերը, աշխատում են նախ ինքնուրույն, | Ի՞նչ են ցույց տալիս ձեր գրած բառերը։<br><br>-Դիտեք նկարը և այդ նկարի շուրջ կազմեք նախադասություններ։<br><br>-Տրված նախադասությունները արտագրե՛ք տետրում՝ տրված բառերը տեղադրելով համապատասխան նախադասության մեջ։<br><br>- Աշխատանքն ավարտելուց հետո ընկերոջ հետ կատարեք ստուգում։ |

| | | | |
|---|---|---|---|
| 15 | Դասարանը բաժանել խմբերի, հիշեցնել խմբային աշխատանք կատարելու կանոնները, բաժանել քարտերը։ (Քարտի նմուշը տե՛ս ստորև։)<br><br>Լսել խմբերին։ | ապա զույգի հետ կատարում են ստուգում։<br><br>Սովորողները լրացնում են քարտի առաջադրանք -ները։ Աշխատանքն ավարտելուց հետո ներկայացնում են այն։ | - Կարդացե՛ք առաջադրանքների պահանջները, քննարկեք միասին և լրացրե՛ք։ |
| 3. Ավարտ (10)<br><br>7 | Ամփոփել կատարված աշխատանքները, ուշադրություն դարձնել խմբային աշխատանքի արդյունքին։ Երեխաների թվարկած դպրոցական գործերի հիման վրա սահմանել պատասխանա-տու վարքի դասարանական կանոն։<br><br>Կատարել ձևավորող գնահատում՝ սովորողներին տալով խմբային աշխատանքի | Խմբով առաջարկում են դասարանա-կան կանոն, քննարկում են ուսուցչի հետ, ամփոփում։ | -Ի՞նչ գործեր էիք առանձնացրել։<br>-Ի՞նչ կանոն մշակենք, որպեսզի այդ գործերը միշտ արվեն ժամանակին և ճիշտ։ (Օրինակ՝ դասերին ներկայանալ տնային հանձնարարություններ-ը կատարած։ Կամ՝ դասին ներկայանալ ժամանակին) |

| | | | |
|---|---|---|---|
| | գնահատման քարտերը։ (Նմուշը տե՛ս ստորև) | | |
| Ուսուցչի անդրադարձը դասին | Դասը հագեցած էր, ընդհանուր առմամբ հաջողված։ Աշակերտները հանձնարարությունները կատարում էին սիրով և ոգևորված, մտքերն արտահայտում էին ազատ ու անկաշկանդ, հետևում էին ընկերոջ ընթերցանությանը։ | | |

Զույգային աշխատանք 1

| *1. Ընթերցե՛ք ձեր թղթիկի բանաստեղծությունը և լրացրե՛ք բաց թողած բառերը՝ օգտվելով ընկերոջ օրինակից։* | | *1. Ընթերցե՛ք ձեր թղթիկի բանաստեղծությունը և լրացրե՛ք բաց թողած բառերը՝ օգտվելով ընկերոջ օրինակից։* |
|---|---|---|
| **Ո՞ւմ ծառն է 1**<br><br>Տնկին* բերեց Աշխենը,<br>Փոսը _____ Արմենը,<br>Ծառը տնկեց Կարենը,<br>Ջուրն էլ լցրեց Սուրենը։<br>Տնկեցին ու _____,<br>Գնացին ու մոռացան։<br>Իսկ Աշոտը _____,<br>Ցրտից, շոգից պաշտպանեց,<br>Նրա ձեռքով հոգատար<br>Փոքրիկ տնկին _____ ծառ։<br>Մի օր եկան ծառի մոտ<br>Մանուկները մեր ծանոթ,<br>Տեսան բացված թևերը,<br>Առողջ բունն ու տերևը։<br>-Իմ տնկին է _____,-<br>Հպարտացավ Աշխենը։<br>-Ես եմ խորունկ փոս բացել,-<br>Աքլորացավ Արմենը։<br>-Իմ ձեռքով է _____,-<br>Ջղայնացավ Սուրենը։<br>Աշոտն ասաց. «Ձեր տնկին<br>Ի՛նձ է միայն ճանաչում,<br>Նրա ամեն տերևին<br>Իմ քրտինքն է կանաչում»։ | **Կտրելման տեղ** | **Ո՞ւմ ծառն է 2**<br><br>Տնկին* բերեց Աշխենը,<br>Փոսը փորեց Արմենը,<br>Ծառը _____ Կարենը,<br>Ջուրն էլ լցրեց Սուրենը։<br>Տնկեցին ու հեռացան,<br>Գնացին ու _____:<br>Իսկ Աշոտը խնամեց,<br>Ցրտից, շոգից _____,<br>Նրա ձեռքով հոգատար<br>Փոքրիկ տնկին դարձավ ծառ։<br>Մի օր եկան ծառի մոտ<br>Մանուկները մեր ծանոթ,<br>_____ բացված թևերը,<br>Առողջ բունն ու տերևը։<br>-Իմ տնկին է զորացել,-<br>_____Աշխենը։<br>-Ես եմ խորունկ փոս բացել,-<br>Աքլորացավ Արմենը։<br>-Իմ ձեռքով է ամրացել,-<br>_____ Սուրենը։<br>Աշոտն ասաց. «Ձեր տնկին<br>Ի՛նձ է միայն ճանաչում,<br>Նրա ամեն տերևին<br>Իմ քրտինքն է կանաչում»։ |

| | | |
|---|---|---|
| **2. Ի՞նչ են ցույց տալիս ձեր լրացրած բառերը։** | | **2. Ի՞նչ են ցույց տալիս ձեր լրացրած բառերը։** |

Խմբային աշխատանքի քարտ

1. Օգտվելով բանաստեղծությունից՝ լրացրեք աղյուսակը՝ 1, 2, 3 միավորով՝ գնահատելով յուրաքանչյուրի կատարած գործը։

| **Ով** | **Ի՞նչ արեց** | **Միավորը** |
|---|---|---|
| Աշխեն | | |
| Արմեն | | |
| Կարեն | | |
| Սուրեն | | |
| Աշոտ | | |

2. Խմբում քննարկեք և գրե՛ք.

Ի՞նչ կլիներ, եթե Աշոտը նույնպես չխնամեր ծառը։

_____

_____

1. Լրացրե՛ք նախադասությունը՝

Աշոտը.

◯ պատասխանատու է ◯ պատասխանատու չէ

Հիմնավորե՛ք ընտրությունը։ (Աշոտը պատասխանատու է, որովհետև ……

Աշոտը պատասխանատու չէ, որովհետև ……)

2. Նշե՛ք մեկ «գործ» դպրոցի հետ կապված, որը դուք պետք է անեք։

_____

3. Ի՞նչ կլինի, եթե չանեք այդ գործը։

_____

4. Խմբում քննարկե՛ք և ներկայացրե՛ք ձեր կարծիքը։

- Բանաստեղծության հերոսներից ո՞վ ամենաշատ միավորը ստացավ։ Ինչո՞ւ։

Խմբային աշխատանքի գնահատման աղյուսակ

| | Գերազանց | Լավ | Բավարար |
|---|---|---|---|
| Աշխատանքին մասնակցել են խմբի բոլոր անդամները։ | | | |
| Առաջադրանքները կատարված էին ճիշտ։ | | | |
| Կարծիքը ներկայացնելիս բերեցին հստակ հիմնավորումներ։ | | | |
| Կատարված աշխատանքը ներկայացվեց հստակ, գրական հայերենով։ | | | |

## *Գլուխ 9.* ՀՈՒՄՈՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԴԱՍԱԳՐՔՈՒՄ

Հումորը ծաղրի և սրտակցության ձույլ միավորում է։ Հենց հումորն է օգնում, որ թե՛ մեծահասակը, թե՛ փոքրիկը շրջապատում տեսնեն անսովորը, գտնեն անսպասելի շարունակություն, դեպքերին նայեն կողքից, մտածեն ոչ ստանդարտ։ Հումորն այսօր խիստ այժմեական և անհրաժեշտ ունակություն է մարդու համար՝ իր գործունեությունը հաջող կազմակերպելու, մարդկային հարաբերություններում հեշտ կողմնորոշվելու համար։ Այդ պատճառով պետք է դեռևս ցածր դասարաններից երեխաների մեջ ձևավորել ու զարգացնել հումորի զգացումը, որը երեխայի անհատականության կերտման համար հրաշալի բաղադրիչ է։ Հումորի զգացողության զարգացումը պարզ անհրաժեշտություն է տարրական դպրոցի սաների սոցիալականացման համար։ Այն

ցածրացնում է ընկճախտի և տագնապայնության աստիճանը, մեծացնում է իրար հետ շփվելու, հաղորդակցվելու մակարդակը, ավելի լավատես է դարձնում այս կամ այն խնդիրը լուծելիս:

Նկատենք, որ հումորն ունի տարիքային առանձնահատկություններ. այն, ինչը մեծահասակին կարող է զվարճացնել, թվալ հաջող կատակ, երեխային կարող է անհասկանալի լինել, և՝ հակառակը:

Հումորը նպաստում է մարդկային շփումների, հարաբերությունների բարելավմանը, օգնում է հեշտությամբ դուրս գալու դժվար իրավիճակներից, թուլացնելու լարվածությունը, բարձրացնելու ընդհանուրի տրամադրությունը:

Երեխաները ստեղծագործելու մեծ պահանջ ունեն: Պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, անկաշկանդ հայացքը շրջապատի վրա և հումորը մեծ դեր ունեն նրա ստեղծագործական ներուժը վեր հանելու գործում:

Այսօր շրջանառվում է ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏ հասկացությունը, որը ուրիշների հույզերը ճանաչելու, մտադրությունները, ցանկությունները հասկանալու ունակություն է ենթադրում, ինչպես նաև իր և ուրիշների հույզերի կառավարում՝ առաջադրված գործնական տարաբնույթ խնդիրները լուծելիս: Եվ այստեղ ամենահետաքրքիրն այն է, որ հումորը հուզական ինտելեկտի կարևոր բաղադրիչներից մեկն է համարվում:

Նրանք, ովքեր կարողանում են կատակել, հասկանալ հումորը, ավելի հեշտ են ընկերներ գտնում, ավելի արագ են հարմարվում շրջապատին, բարձրանում է նրանց ինքնագնահատականը, ավելի հանգիստ են տանում դժվարությունները, ավելի հեշտ են հաղթահարում արգելքներն ու խոչընդոտները, ձեռք են բերում ստեղծարար մտածողություն: Հասկանալի է, որ աշակերտների հումորի զգացումը զարգացնելը պարզ անհրաժեշտություն է: Բնականաբար, դրան հասնելու համար պետք է օգտագործել ձեռքի տակ եղած բոլոր միջոցները:

Իսկ ինչպե՞ս զարգացնել երեխաների հումորի զգացումը, որ չլինեն միծալքանի ընկալումներ, որ երեխան բերկրանք ապրի անսովորից, որ զարգանա նրա վերացական մտածողությունը, որ նրա առարկայական-պատկերային մտածողությունը ավելի ընդհանրական դառնա, կարողանա վերացարկել, երևույթներն ընկալել բազմաշերտ, անսովոր կողմերից դիտարկել իրողությունը, տեսնել ու զգալ ծիծաղելին, ուրախը, զվարթ նայել շատ ու շատ երևույթների:

Այս ամենին հասնելու համար, առաջին հերթին, պետք է դիտարկել դասագրքերի ուսումնական տեքստերը, նկարազարդումը, տարաբնույթ առաջադրանքները:

Եվ այսպես, դիտարկենք «Մայրենի-2» դասագրքի այն միջոցները, որոնք անմիջականորեն նպաստում են երեխաների մեջ հումորի զգացումը զարգացնելուն. **Տեքստեր, նկարազարդումներ, բեմականացումներ, մնջախաղ, խնդուկներ, շուտասելուկներ, երգեր, հանելուկներ, գլխագրեր, մուտքի պատուհանիկներ, փոխակերպումներ, դարձվածքներ, հարցեր, զվարթ առաջադրանքներ**:

Առանձին-առանձին անդրադառնանք նշված միջոցներից յուրաքանչյուրին:

## Ա. ՏԵՔՍՏԵՐ

1. **Ես քաջ եմ - էջ (7-14)**

Բանաստեղծության հերոսը իր մասին հենց սկզբից խոսում է հումորով: Սա նրան ավելի մտերմիկ է դարձնում ընթերցողին. «Ինձ հարցնում եք՝ ո՞վ եմ ես, պատասխանեմ մեծի պես»,- ասում է նա ու շարունակում՝ «Մե՛ծ եմ արդեն՝ դպրոցական»: Բնականաբար, հերոսի այս ասածը ևս ժպիտ կառաջացնի երկրորդ դասարանցու դեմքին: «Ափ դուրս եկա՝ տերևի պես դողալ գիտեմ» ինքն իրեն հեգնելով ասում է հերոսը՝ ցույց տալով, որ ջրից դուրս գալուց հետո ուժեղ դողում է: Հերոսը, թեև իրեն քաջ է համարում, սակայն խոստովանում է, որ վախենում է տզտզան մոծակներից. «Թեև քաջ եմ ծնված օրից, բայց վախ ունեմ էս տզտզան մոծակներից»: Երեխաներից ոմանք կասեն, որ իրենք էլ են վախենում մոծակներից, մի մասն էլ կասի, թե մոծակն ինչ է, որ վախենա: Սակայն բոլորի մեջ էլ կմնա այն համոզումը, որ կարելի է վախերի մասին հումորով ասել ու ազատվել դրանցից:

2. **Ընկերները - էջ (18-19)**

Այս տեքստում հերոսներից մեկը՝ Նարեն, կարողանում է համոզել իր ընկերոջը՝ Նարեկին, որ նա ոչ միայն գրի ու կարդա, այլև խնդրի, որ այդ գրել-կարդալը շարունակվի, թեև հենց սկզբից ասում էր, որ գրել-կարդալ չի սիրում, միայն խաղալ է սիրում: Գաղտնիքներից մեկն այն է, որ Նարեն հենց խաղալ է առաջարկում: Բայց որ խաղալն ավելի հետաքրքիր ու գրավիչ լինի, Նարեն օգտագործում է հումորային հնարք՝ առաջարկում է **մուկ**-ից ստանալ ոչ ավելի ոչ պակաս՝ **փիղ**: Միգուցե Նարեկը չհամաձայներ խաղալ, եթե չլիներ առաջադրանքի հումորային բաղադրիչը: Այդ բաղադրիչը օգնում է նաև դասը սովորող երկրորդ դասարանցուն, որ նա հետաքրքրությամբ ուսումնասիրի տեքստը:

3. **Պատմում է հիվանդությունը - էջ (23)**

Երբ պատմությունը պատմվում է տեքստի հերոսներից մեկի անունից, այն էլ ոչ թե որևէ անձի անունից, այլ հիվանդության, դա արդեն եղելությանը, իրադարձությանը անսովոր տեսանկյունից նայել է, իրադարձության մեջ հումորային բաղադրիչ տեսնել է: Իսկ հիվանդությունը դարձյալ հումորով է պատմում, թե ինչպես ինքը հիվանդացրեց Աստղիկի մայրիկին. «… սկսեցի խուտուտ տալ ու ցավեցնել մայրիկի կոկորդը»: Նա պատմում է, թե ինչպես մայրիկի հետ հաճույքով մտավ տաք անկողին և ուրախությանը չափ չկար:

4. **Մի հեքիաթ ոզնու մասին - էջ (25-26)**

Ամբողջ հեքիաթը ներծծված է նուրբ հումորով՝ սկսած ոզնու անունից՝ Ասեղ: Հետո ոզնիների բնում հայտնվում է բժիշկ Այբոլիտը իր ողջ հասակով մեկ: Նա հիվանդ ոզնու համար այգուն դեղատոմս է գրում ծառերի լեզվով՝ ծառերեն, որ խնձորենին կարողանա կարդալ ու հասկանալ դեղատոմսը: Իսկ քամին իր համար պառկած է լինում ցանկապատի տակ: Այսօրինակ հումորային պատկերները երեխաների երևակայական աշխարհին շատ հոգեհարազատ են, անսովոր են ու հետաքրքիր:

5. **Ես - էջ (34-35**)

Այս փոքրիկ պատմությունը ամբողջովին ներծծված է հումորով: Հեգնելով, կատակով Վիլյամ Սարոյանը ներկայացնում է, թե մարդիկ ինչպես մի բառ ունենալով ընդամենը, փորձում էին արտահայտել իրենց զգացածն ու տեսածը, հասկանալ, թե ինչ է աշխարհը: Տեսնում են, որ մի բառը քիչ է: Դրանով հնարավոր չէ բացատրել, թե ինչ է աշխարհը: Հետո գտան այլ բառեր՝ շատ բառեր: Ու փորձեցին իրենք իրենց բացատրել, թե ինչ է աշխարհը: Սակայն դարձյալ չհաջողվեց: Եվ մինչև հիմա էլ փնտրում են այդ հարցի պատասխանը: Դասագրքում ներկայացված է այս պատմության՝ երեխաներին ընկալելի չափաբաժինը: Երեխաները դեռևս այն մեկ բառ ունենալու չափով են ընկալում, թե ինչ է աշխարհը:

6. **Տա՞ռն էլ գլխարկ ունենա - էջ (38-39)**

Այս պատմության հումորն սկսվում է հենց վերնագրից: Երեխաների երևակայությունը այսօր այնքան է մուլտֆիլմերի, զանազան ֆանտաստիկ կինոնկարների միջոցով հարստացել ամենաաներևակայելի ֆանտազիաներով, որ թվում է, թե նրանց հնարավոր չէ այլևս զարմացնել ինչ-որ բանով: Սա առաջին հայացքից: Իրականում անսպառ են նրանց զարմանալու ու զարմացնելու հնարավորությունները: Նրանք այս մի վերնագրից արդեն մտնում են մի կախարդական աշխարհ ու սպասում դեպքերի հետագա զարգացմանը: Մուտքի պատուհանիկի հանելուկը լուծելուց հետո նրանք հասկանում են, որ խոսքը Ը հնչյուն-տառի մասին է: Այնուհետև հայտնվում է իրենց անչափ սիրելի Մեսրոպ Մաշտոցը, որն ազատորեն զրուցում է տառերի հետ, կանչում է Ը-ին ու մի կախարդական, անտեսանելի գլխարկ նվիրում: Հումորով, կատակով ներկայացվել է գաղտնավանկի Ը-ի ուղղագրությունը, որը երեխաները երբեք չեն մոռանա. չէ՞ որ միշտ հիշելու են անտեսանելի գլխարկ դրած տառը:

7. **Էրեբունի - էջ (69)**

Փոքրիկ բանաստեղծության մեջ կատակով ներկայացվում է հնամյա **Էրեբունի** և նորօրյա **Երևան** անունների ընդհանրությունը:

8. **Գիրքը համոզում է Արային - էջ (73-74)**

Այս պատմության մեջ հումորով ներկայացված է Արայի և գրքի զրույցը:

9. **Գիրքը: Հայոց այբուբենը - էջ (76-77)**

Այս պատմությունը նախորդի շարունակությունն է, որտեղ ևս սրամտում են հերոսները՝ Արան ու գիրքը:

10. **Չարաճճին - էջ (92), (94-95)**

Այս հեքիաթը բազմաթիվ սրամտություններով, կատակային տարբեր պարունակող արտահայտություններով լի մի պատմություն է գլխավոր հերոսի՝ Չ տառի արկածների մասին: Հենց մուտքի պատուհանիկի գրառմամբ նշվում է, որ հեքիաթը պատմել է Չ տառը:

Նա կարող է խցկվել «Երեխանե՛ր, լա՛վ սովորեք» նախադասության մեջ և այն դարձնել «Երեխանե՛ր, լավ չսովորե՛ք», կարող է կանգնել հեռախոսային «Ալո՛, ալո՛»

բառերից առաջ ու դրանք դարձնել «Չալո՛, Չալո՛»: Նա կարող է կոտրել «ման-չամանը, ինչ կա-չկա խառնել իրար», կարող է կանգնել **իր** բառի առջևում և այն դարձնել **չիր,** կարող է կանգնել **որս** բառի առաջ ու նրան դարձնել **չորս**, որի հետևանքով էլ որսորդի աչքերն էլ են չորս դառնում ու չի կարողանում որսին խփել, և այլն:

**11. Պատմում է մկնիկը - էջ (104-105)**

Մկնիկը «Ով աշխատի, նա կուտի» տեքստը պատմում է իր անունից: Ամբողջ պատմությունը զվարճապատում է՝ լի հումորով, կատակով, պոզով-պոչով ստերով:

**12. Արևն ու ծիածանը - էջ (121-122)**

Հեքիաթ-պատմության մեջ Արևը հայերեն է խոսում ծաղիկների հետ և չի զարմանում. չէ՞ որ դրանք Հայաստանի ծաղիկներն են: Արևը, զրուցելով ծաղիկների հետ, ներկում է նրանց այնպիսի գույներով, որոնցով ներկել էր երկնքի ծիածանը:

**13. Սառույցի Բյուրեղը, Ամպի Փաթիլն ու Ծովի Կաթիլը - էջ (126)**

Բանաստեղծության մեջ Ծովի Կաթիլը հեռախոսով զրուցում է Ամպի Փաթիլի հետ, որոշում են հյուր կանչել նաև Սառույցի Բյուրեղին, որ նստեն, խոսեն դեսից-դենից:

**Բ. ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐ**

Յուրաքանչյուր դասաժամի կարելի է աշխատանք տանել տեքստի և համապատասխան նկարազարդման շուրջ: Այս աշխատանքը ավանդաբար մշտապես եղել է: Երեխաները համեմատել են տեքստը և նկարը, պարզել են, թե տեքստի որ մասն է նկարազարդված, ինչ կա տեքստում, որ չի արտահայտված նկարազարդման մեջ, և ինչ կա նկարազարդման մեջ, որը չկա տեքստում: Այս աշխատանքը նպաստում է, որ երեխաներն ավելի ուշադիր ուսումնասիրեն տեքստը, կարողանան համադրել տեքստի համապատասխան դրվագները նկարազարդման հետ, զարգացնեն խոսքը և համապատասխան նկարը համադրելու իրենց կարողությունները, տեքստից ստացած և իրենց երևակայության մեջ «նկարած» պատկերները համեմատեն նկարչի պատկերածի հետ, անեն եզրակացություններ:

Հումորի զգացում ձևավորելուն և զարգացնելուն շատ են նպաստում նաև դասագրքի նկարազարդումները՝ դրանք լինեն տեքստի նկարազարդումներ, թե առանձին առաջադրանքների: Դիտարկենք այդպիսի նկարազարդումներից մի քանիսը:

Դասագրքի **15-րդ էջի 2-րդ առաջադրանքում** կա գլխի վրա կանգնած երեխայի մի նկար և մակագրություն՝ **կարելի է … այսպես**: Երեխաները պետք է լրացնեն նախադասությունը: Բնականաբար «Կարելի է նաև այսպես» նախադասությունը զվարթություն կբերի երեխաներին և կատակելու հնարավորություն կընձեռի:

**20-րդ էջի 4-րդ առաջադրանքում** երեխաները տեսնում են հումորային մի նկար. տառերը պատվի են առել և նրանց առջևով եղնիկի, եղևնու, եգիպտացորենի ու եղեգի ուղեկցությամբ երգելով քայլում է Ե տառը:

**25-րդ էջի տեքստի** նկարազարդումը լի է հումորով. բժիշկ Այբոլիտը հյուր է Ասեղ ոզնու տանը և դեղատոմս է գրում հիվանդ ոզնու համար, որի թևատակին նախօրոք դրել է ջերմաչափը: Այդ ամենին հետևում է անտառով մեկ լուրեր տանող- բերող կաչաղակը: Այս զվարթ նկարը մեծ հնարավորություն կտա, որ երեխաները կատակեն, զվարթ մեկնաբանություններ անեն, նկարը համեմատեն տեքստի հետ:

**34-րդ էջի տեքստի** նկարազարդման մեջ ևս բազմաթիվ հումորային դրվագներ կան, սրամիտ իրավիճակների պատկերներ, որոնք հնարավորություն կտան, որ երեխաները սրամտեն, կատակեն:

Օրինակ՝ կինը խորովում է որսը, ամուսինը ձեռքերը վեր է բարձրացրել ու գոռ-գոռում է, որ խորովածը վառվում է: Երեխաներից մեկը նստել է մի հսկայական մամոնտի վրա, մյուսը շան հետ ուշադիր նայում է խարույկի վրա խորովվող որսին: Իսկ նկարիչը անտարբեր այս ամենին, իր համար պալերի վրա նկարներ է անում:

**39-րդ էջի տեքստի** նկարազարդման մեջ Մեսրոպ Մաշտոցը զրուցում է ուրախ-զվարթ տառերի հետ և անտեսանելի գլխարկ է դնում Ը-ի գլխին: Տառերը ծափահարում են: Դարձյալ երեխաների՝ սրամտելու, կատակելու բավարար հնարավորություն կա:

**40-րդ էջի 2-րդ առաջադրանքի** նկարում ուրախ ոստիկանը վանկ առ վանկ փողոցի անցումով անցկացնում է «Ինչպես տղան անցավ փողոցը» նախադասությունը: Բոլոր վանկերը ձեռքով են անում միմյանց, խրախուսում ոստիկանին և հնարավորություն տալիս, որ երեխաները զվարթ մեկնաբանություններ ու կատակներ անեն:

**53-րդ էջի առաջադրանք 6-ում** պատկերված են գոյություն չունեցող կենդանիներ: Երեխաներն իրենք էլ պետք է նկարեն մի այդպիսի կենդանի ու անուններ դնեն բոլոր կենդանիներին: Պարզ է, թե երեխաներն իրենց անսպառ երևակայությամբ ինչպիսի կենդանիներ կնկարեն և ինչ ծիծաղելի անուններ կդնեն նրանց, ինչքան կկատակեն ու կսրամտեն:

**87-րդ էջի 8-րդ առաջադրանքի** նկարազարդումը աշխարհը հումորով, զվարթությամբ ընկալելու մի պատկեր է ներկայացնում, և երեխաներին հնարավորություն է տալիս արտահայտվելու, սրամտելու, կատակելու:

**Դասագրքի 92, 94 և 95-րդ էջերի** տեքստային նկարազարդումները փայլուն հնարավորություն կտան, որ երեխաները շարժեն միտքն ու երևակայությունը, տեսնեն, թե նկարիչն ինչ սրամտությամբ է իրականացրել տեքստի նկարազարդումները: Դրանք երեխաներին հնարավորություն են ընձեռնում, որ նրանք իրադարձությունների մեջ տեսնեն կատակայինը, ընկալեն թե՛ տեքստի, թե՛ նկարազարդումների մեջ եղած հումորը:

**101, 102-րդ էջերի** տեքստային նկարազարդումները ևս լի են հումորով ու սրամիտ լուծումներով, որոնք անմասն չեն թողնի երեխաներին կատակելու ու սրամտելու համար:

**104, 105-րդ էջերի** նկարազարդումներում Մուկիկն ու Ծիտիկը համակարգչային խաղեր են խաղում, Հավիկը հեռախոսով կանչում է նրանց, որ գան ալյուրը տուն տանեն, այնուհետև Հավիկը հրշեջի հագուստով հաց է թխում թոնրում, Մուկիկն ու Ծիտիկը կրակմարիչները պատրաստ պահած սպասում են: Այս ամենը զվարթ, ուրախ մթնոլորտ է ստեղծում, երեխաներին մղում կատակելու, սրամտելու: Իսկ **8-րդ առաջադրանքը** ամբողջովին հումորային է և մեծ հնարավորություն է բացում երեխաների մեջ հումորի զգացումը զարգացնելու համար:

**115-րդ էջի ամբողջ նկարազարդումը** որքան որ շատ լուրջ թեմա է ներկայացնում, այնքան էլ հումորային է: Նկարաշարի նկարագրությունը մանրամասն կա մեթոդական մշակման մեջ:

**133-րդ էջում** կատակային է խնդուկի նկարազարդումը: Նույնը՝ **էջ 155-ի խնդուկի** նկարազարդման դեպքում:

Շատ սրամիտ ու հումորով լի է **էջ 161-ի բանաստեղծության** նկարազարդումը, որը մեծ հնարավորություն է տալիս թե՛ հերոսների կերպարների բացահայտման, թե նրանց գործողություններին հումորով վերաբերվելու համար:

Այստեղ ներկայացրինք ամենացայտուն հումորային նկարազարդումները: Բնականաբար, դրանք դասագրքում ավելի շատ են:

## Գ. ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄՆԵՐ

Ուսուցման ընթացքում բեմականացումների օգտագործումն անհրաժեշտ է երեխայի մեջ երևակայության, ստեղծագործական մտածողության, հաղորդակցական կարողությունների զարգացման համար: Ուսուցիչը պետք է առիթը բաց չթողնի և հաճախ դիմի այդ միջոցին. չէ՞ որ շատ բնագրեր ու առաջադրանքներ նման հնարավորություններ ընձեռում են, այսինքն՝ օժտված են դերային, թատերականացված, դիպաշարային խաղի կազմակերպման հնարավորություններով: Տվյալ պարագայում մեզ հետաքրքրում են այն բեմականացումները, որոնք առավել քան նպաստում են երեխաների մեջ հումորի զգացում, սրամտելու և կատակելու ունակություններ ձևավորելուն ու զարգացնելուն:

Բեմականացումների շարքին կարելի է դասել **մնջախաղերը:**

Մնջախաղի հիմնական արտահայտչամիջոցներն են դիմախաղը, մարմնի շարժումները, ժեստերը: Մնջախաղը ուղեկցել է մարդկությանը հնագույն ժամանակներից: Մնջախաղով հնարավոր է ձևավորել ու զարգացնել երեխաների երևակայությունը, հույզերը ճիշտ արտահայտելու կարողությունը, ձևավորել ու զարգացնել հումորի զգացումը, զարգացնել ու ամրապնդել միմյանց հետ հաղորդակցվելու հմտությունները, բարձրացնել երեխաների ինքնագնահատականը:

Մնջախաղով երեխաները կարող են ցուցադրել իրենց քաջածանոթ, պարզ հույզերն ու զգացմունքները՝ վախ, ուրախություն, տխրություն, զարմանք և այլն:

## Դ. ԽՆԴՈՒԿՆԵՐ

**Խնդուկները**, դրանց բեմականացումները ևս զարգացնում են երեխաների հումորի զգացումը, սրամտելու, կատակներ անելու կարողությունը:

Խնդուկը փոքրիկ պատմություն է, կատակ, զվարճալի զրույց, զավեշտ, որի մեջ հիմնական դերը կատարում է բառախաղը, անսպասելի հանգուցալուծումը: Խնդուկը հիանալի միջոց է երևույթներին այլ տեսանկյունից նայելու, իրավիճակն անսպասելի, տրամաբանությունից դուրս շարունակությամբ փոխելու համար:

Ըստ դասագրքի **13-րդ էջի 5-րդ առաջադրանքի**, երեխաները պետք է մնջախաղով ցույց տան նկարներում պատկերված փոխադրամիջոցները, **ըստ16-րդ էջի 5-րդ առաջադրանքի՝** երեխաները պետք է մնջախաղով ցույց տան հերոսի սերը, զարմանքը, ուրախությունը, **ըստ 28-րդ էջի 7-րդ առաջադրանքի** երեխաները պետք է մնջախաղով ցույց տան հեքիաթի հերոսներին, **ըստ 36-րդ էջի առաջադրանք 4-ի** երեխաները պետք է

միայն **ես** բառով պատմվածքի հերոսներին ներկայացնեն, որ նրանց բարեկամն են և սիրում են նրանց, **ըստ 53-րդ էջի 3-րդ առաջադրանքի** երեխաները պետք է ընկերների համար ցույց տան, ծիծաղ, զարմանք, ամոթ, տխրություն, զայրույթ, վախ, սեր, ուրախություն, **ըստ էջ 142-ի 1-ին առաջադրանքի** երեխաները մնջախաղով պետք է ցույց տան թեմայի դասերին հանդիպած բնության երևույթներ: Բնականաբար, նման բաներ ներկայացնելու համար, երեխաները պետք է գործի դնեն իրենց հնարամտությունն ու սրամտությունը, կատակելու կարողությունները, հումորը, մարմնի շարժումները, դիմախաղն ու ժեստերը:

**Ըստ 37-րդ էջի 5-րդ առաջադրանքի**, երեխաները պետք է Մաուգլիին սովորեցնեն որևէ բառ: **Ըստ 81-րդ էջի 7-րդ առաջադրանքի և 119-րդ էջի 1-ին առաջադրանքի, 136-րդ էջի 1-ին առաջադրանքի**, երեխաները պետք է մեկին, որը չգիտի, թե ինչ է գիրքը (ջուրը, հեռուստացույցը), բացատրեն, թե ինչ է գիրքը (ջուրը, հեռուստացույցը): Այս պարագայում ևս երեխաները պետք է գործի դնեն իրենց երևակայությունը, հնարամտությունը, սրամտությունը, հումորի զգացումը:

**106-րդ էջի 10-րդ առաջադրանքով** երեխաները պետք է բեմականացնեն խնդուկը:

**Ըստ 110-րդ էջի առաջադրանք 10-ի պահանջի**, երեխաները պետք է բեմականացնեն մի բավական ծավալուն խնդուկ: Այստեղ ևս անհրաժեշտաբար նրանք պետք է գործադրեն իրենց սրամտությունն ու հումորի զգացումը:

**118-րդ էջի հարց 4-ով** պահանջվում է բեմականացնել սարից իջնող առվակների զրույցը: Բնականաբար, առանց երևակայության լարման, հնարամտության ու սրամտության, առանց հումորի,առանց կատակելու անհնարին կլինի այդպիսի զրույցի ներկայացումը:

**127-րդ էջի 4-րդ էջի առաջադրանքը** երեխաներին մղում է, որ նրանք օգտագործեն իրենց կատակելու կարողությունները, որքան հնարավոր է հումորով լի, սրամիտ հարցեր տան ընկերոջը:

**Ըստ 133-րդ էջի 7-րդ առաջադրանքի**, երեխաները պետք է բեմականացնեն մի փոքրիկ խնդուկ, որտեղ գլխավոր դերը կատարում է բառի փոխաբերական իմաստը:

**155-րդ էջի 2-րդ առաջադրանք-խնդուկով** ներկայացվում են **միամիտ** և **խորամանկ** մարդկանց կերպարներ:

## Ե. ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ, ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Դասագրքում զետեղված շուտասելուկները ինքնին սրամիտ, կատակային բնույթի, հումորային արտահայտություններ են, որոնց կարդալը, մի քանի անգամ արտասանելը և տեսահոլովակները դիտելը բավարար պայմաններ են ստեղծում երեխաների մեջ հումորի զգացում ձևավորելու և զարգացնելու համար: **Սուտասելուկը** կատակային բնույթի, հիմնականում չափածո, փոքրիկ ստեղծագործություն է, որի մեջ գլխավոր դերը կատարում է «պոզով – պոչով» սուտը:

Սուտասելուկի ուսուցումը նպաստում է երեխաների մեջ հումորի զգացում ձևավորելուն ու զարգացնելուն: Զարգացնում է ստեղծագործական երևակայությունը, նպաստում խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը:

Դասագրքում ներկայացված է մեկ շուտասելուկ-սուտասելուկ՝ 106(11):

Շուտասելուկներ կան դասագրքի հետևյալ էջերում.
Էջ՝ 16(6), 27(4), 41(5), 46(3), 81(6), 97(7-2), 106(11), 113(5), 118(ՄՊ), 124(8), 163(7):

## Զ. ԵՐԳԵՐ

Հումորային տարրեր են պարունակում որոշ տառերի համար գրված երգերը, որոնք արտացոլված են նաև համապատասխան տեսահոլովակներում:
Էջ՝ 20 (4), 40 (1), 50 (3), 93 (1):

## Է. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

**Հանելուկը** ինչ-որ առարկայի կամ երևույթի այլասացությամբ տրված հարց է, որը կարող է ներկայացվել նաև բանաստեղծական քառատողերով: Սովորաբար համառոտ, հանգավորված, հետաքրքրաշարժ, խորամանկամիտ, երբեմն խրթին նկարագրություն է, որը պետք է վերծանել:

Հանելուկը հեռվից հեռու ակնարկելով իր առարկայի ինչ-որ հատկանիշ կամ հատկանիշներ, իրական առարկաներն ու երևույթները քողարկելով, դիմակավորելով դժվար գուշակելի պատկերներով, դառնում է ակտիվ մտավարժանք, վերացարկման ունակության, համեմատման ու հակադրման, էականը գտնելու, վերլուծելու, սրամտության ու պատկերավոր մտածողության զարգացման արդյունավետ միջոց: Դրանք, բնականաբար, սերտորեն առնչվում են ուսուցանվող բնագրին:

Ինչպես ասացինք, հանելուկը հետաքրքրաշարժություն և զվարթություն է հաղորդում ուսընթացին, լրացնում բնագիրը, հնարավորություն ընձեռում, որ երեխաներն ամփոփեն, ընդհանրացնեն իրենց գիտելիքները, փորձարկեն իրենց իմացությունը, առարկաները տեսնեն անծանոթ կողմերից, մտապահեն առարկաների ու երևույթների էական հատկանիշները:

Այստեղ կներկայացնենք այն հանելուկները, որոնք լուծելու համար երեխաները պետք է գործադրեն իրենց հնարամտությունն ու սրամտությունը, հումորով նայեն առաջադրված խնդրին:
Էջ 9(6), 37(6), 38(ՄՊ), 92(ՄՊ), 97(6), 109(9), 119(4), 150(2), 168(7):

## Ը. ԳԼԽԱԳՐԵՐ

Յուրաքանչյուր նոր դաս սկսվում է Գլխագրի «Այս դասին դու...» բառերով: Այդտեղ գրված է, թե ինչ նոր բաներ են սովորելու և կրկնելու սովորողները տվյալ դասի ընթացքում, ինչ հետաքրքրաշարժ առաջադրանքներ են սպասում նրանց, որ ծանոթանալու են դասանյութի հերոսներին և նրանց օգնությամբ ավելի լավ են ճանաչելու իրենց և շրջապատող աշխարհը: Գլխագրերում ներկայացվում են դասի հիմնական նպատակները:

Գլխագրերի մի մասում կան այնպիսի կետեր, որոնց շուրջ մտորելու, զրուցելու համար անհրաժեշտ է, որ երեխաները բացեն երևակայության դռները, գործադրեն իրենց

սրամտությունն ու հնարամտությունը, կատակեն, հումորով կարողանան պատասխանել զրուցակցին: Նշենք դրանցից մի քանիսը:
Էջ 11(4)- Կտեսնես, թե հերոսն ինչու է տերևի պես դողում:
Էջ 14(4)- Կիմանաս, թե քաջ տղան որ կենդանուց է վախենում:
Էջ 18(4)- Կտեսնես, թե ինչպես փոքրիկ մուկը դարձավ հսկա փիղ:
Էջ 22(4)- Կկարդաս, թե ինչպես հիվանդությունը քամուն հեծած մտավ սենյակ:
Էջ 25(5)- Կսովորես դեղատոմս գրել քո սիրելի կենդանու համար:
Էջ 34(4)- Մաուգլիին կսովորեցնես բառեր:
Էջ 45(4)- Քո տեղը կգտնես կաքավիկների երգչախմբում:
Էջ 52(3)- Կհորինես նոր բառեր:
Էջ 73(4)- Կտեսնես, որ երբ գիրքը բացես, նա քեզ կասի՝ բարև:
Էջ 79(2)- Կիմանաս, թե ինչպես երջանկացնել գրքին:
Էջ 82(5)- Կհայտնվես Անահիտի երազում:
Էջ 101(4)- Կիմանաս, որ մկնիկը Խանձած Բեղերի ցեղից էր:
Էջ 121(4)- Կտեսնես, որ արևը հայերեն գիտի:
Էջ 130(4)- Քո նկարած աստղանավով կթռչես դեպի աստղերը:
Էջ 135(1)- Կիմանաս, որ բառերն էլ արմատներ ունեն, ինչպես ծառերը:
Էջ 149(1)- Կիմանաս, թե փղերեն ինչ է նշանակում Էլմեր:

## Թ. ՄՈՒՏՔԻ ՊԱՏՈՒՀԱՆԻԿՆԵՐ

Յուրաքանչյուր դասի սկզբում կա գունավորված շրջանակ՝ համապատասխան գրառմամբ, որը կոչվում է «Մուտքի պատուհանիկ»: Նշենք, որ «Մուտքի պատուհանիկում» ներկայացվող գրառումը երեխաների երևակայությունը խթանելու, դասանյութի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար նախատեսված մտքեր են, հարցադրումներ, երկխոսություններ, կարճ պատմություններ, հանելուկներ, չափածո դիմումներ, և այլն:

Դրանց մի մասը գրված է հումորով և, բնականաբար, քննարկումների ժամանակ երեխաները չեն կարող անմասն մնալ կատակելուց, սրամտելուց, հարցերին հումորով պատասխանելուց: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Էջ 38- Ինը ընձուղտ գնում են,
Ընձուղտների առջևում
Նա շատ հանգիստ մնում է,
Իննի պոչին քնում է:

Էջ 92- Դուռս թակեց մի ծուռ տառ՝
Շատ եմ ուզում քեզ հյուր գալ:
Դուռը սիրով բացեցի,
Ինչ որ պատմեց, գրեցի:

Էջ 101- Պարզվում է՝ հավիկը կարող է ոչ միայն ձու ածել, այլև հաց թխել:

Էջ 111- Շատ բան կարող է կորչել. Օրինակ՝ դրամը, գրիչը, գլխարկը, նույնիսկ՝ օրը:

Էջ 118- ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ
Որ չդառնա չրի ծառ,
Ջրի՛ր ծառը, ա՛յ Պայծառ:

Էջ 146- Փի՞ղն էլ լինի գույնզգույն,
Տեսնես ի՞նչ է նա զգում,
Ուրա՞խ է նա, թե՞ տխուր,
Արի գնանք նրան հյուր:
Էջ 154- Լսե՞լ ես, Արամը շատ իրավունքներ ունի արդեն:

-Ծննդյան օրվա առթի՞վ են նվիրել:

-Չէ՛, ոնց որ հայրիկն է արտասահմանից բերել:

-Թե՞ մայրիկն է պատվիրել:

-Չգնա՞նք տեսնենք:

-Գնա՛նք:

Էջ 161- Սիրելի է ամեն տուն,
Փչակ լինի, թե շան բույն,
Հյուր գնալու տեղ լինի,
Թեկուզ մի քիչ նեղ լինի:

## Ժ. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

**Փոխակերպումներում** տրված են սլաքներով իրար միացված բառաշարքեր: Ամեն անգամ բառի մեջ փոխելով մեկ տառ՝ պետք է ստանալ նոր բառ:

Բառի մեջ մեկ տառ փոխելով ուրիշ բառ ստանալը մեծ հրճվանք է պատճառում երեխաներին, մանավանդ, երբ բոլոր վարժություններում ելակետային բառը և վերջին բառը իրար հետ կապված են որևէ հետաքրքիր առնչությամբ: Ասենք՝ **մուկ**-ից **փիղ** են ստանում, **քար**-ից՝ **հաց**, **շուն**-ից՝ **հավ**, **կով** և այլն:

Էջ 19(1), 53(5), 64(5), 104(6), 119(2), 124(10), 127(1):

## ԺԱ. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Դարձվածքները ներկայացված են երկու դրվագով. առաջին դրվագում ներկայացված է արտահայտության ուղիղ իմաստը, մյուս դրվագում՝ փոխաբերական (դարձվածային) իմաստը: Սա հնարավորություն է տալիս, որ երեխաները ճիշտ ընկալեն դարձվածքը, հասկանան արտահայտության փոխաբերական իմաստը, դրանք կիրառեն իրենց խոսքում: Ներկայացված երկու դարձվածքն էլ հումորային են և կնպաստեն ոչ միայն այն

բանին, որ երեխաները պարզ կերպով հասկանան, թե ինչ է դարձվածքը, այլև կնպաստեն նրանց հումորի զգացողության զարգացմանը:

Դասագրքում ներկայացված է երկու դարձվածք.

էջ 127(2), 141(3):

**ԺԲ. ԶՎԱՐԹ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

էջ 19(1,2), 20(6), 23(1), 24(6), 30(11,13), 32(3), 36(4), 40(2), 43(4), 53(4,6), 54(9), 65(9), 72(8), 81(7), 97(9), 99(2), 100(8), 105(8), 108(2), 112(2), 124(7), 127(4), 136(1), 143(4), 165(1):

## Գլուխ 10. ԴԱՍԱԳՐՔԻ ՉԱՓԱԾՈ ԴԱՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջին հայացքից կարող է թվալ, թե չափածո նյութեր քիչ են ներառված դասագրքում: Սակայն, եթե դասագիրքն առավել ուշադրությամբ քննարկենք այդ տեսանկյունից, կտեսնենք, որ դա ամենևին էլ այդպես չէ: Պարզապես չափածո նյութերը տրված են ավելի փոքր չափաբաժիններով, և երեխան առավել հեշտությամբ դրանց մի մասը կցանկանա և կսովորի անգիր: Բանն այն է, որ դրանք լավ հանգավորված, համառոտ, երբեմն ընդամենը մի քառյակով ներկայացված դիպուկ, հումորով լի, կատակային մանրամասներով հանելուկներ են, շուտասելուկներ, մուտքի և ամփոփման պատուհանիկների գրառումներ, որոշ առաջադրանքներ ու երգեր:

Ներկայացնենք դասագրքում զետեղված չափածո ստեղծագործությունները ըստ ժանրային պատկանելության:

1. **Տեքստեր:**

Ո՞վ եմ ես- էջ 7: Նկարչություն- էջ 42: Կաքավի գովքը- էջ 45: Իմ հայրենիքը- էջ 82: Ո՞ւմ ծառն է- էջ 107: Ջուրը- էջ 118: Սառույցի Բյուրեղը, Ամպի Փաթիլն ու Ծովի Կաթիլը- էջ 130: Փոքրիկի մեծ զարմանքը -էջ 154: Իրավունքն է ծնում պարտականություն- էջ 158: Տունը- էջ 161:

2. **Երգեր:**

Հնչյուն-տառի երգը-8(3), Ձայնավորների երգը-12(1), Ե-ի երգը-20(4), Ո-ի երգը-27(3), Վանկի երգը-36(3), Ը-ի երգը-40(1), և-ի երգը-50(3), Առարկա ցույց տվող բառերի երգը-65(7), Եզակիի և հոգնակիի երգը-75(2), Հայոց այբուբենի երգը-77, Չ-ի երգը-93(1), Գործողություն ցույց տվող բառերի երգը-100(3), Ածանցավոր բառերի երգը-151(7), Բարդ բառի երգը-156(5):

3. **Հանելուկներ:**

էջ 9(6), 37(6), 38(ՄՊ), 92(ՄՊ), 73(ՄՊ), 82(ՄՊ), 92(ՄՊ), 97(6), 108(5), 109(9), 113(6), 119(4), 121(ՄՊ), 124(9), 126(ՄՊ-3), 150(2), 168(7-2):

4. **Ամփոփման պատուհանիկների գրառումներ:**

էջ 97, 110, 120, 134, 141, 163, 168:

5. **Մուտքի պատուհանիկների գրառումներ:**

էջ 73, 82, 118, 146, 153, 161:

6. **Շուտասելուկներ:**

էջ 16, 27, 97, 113, 118, 124:

7. **Առաջադրանքներ**:

էջ 59 (6), 69(4), 81(5), 89(1):

8. **Տեքստի ներառում:**

էջ 70, 77:

9. **«Դասից քաղած իմ պտուղները» խորագրի գրառում:**

էջ 41:

# ՄԱՍ 2.

# ԲՈԼՈՐ ԴԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

## *Գլուխ 1.* ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### 1.1. Երկու խոսք

Այստեղ ներկայացված են դասագրքի բոլոր դասերի մեթոդական մշակումները, ուսուցչի և սովորողների քայլերը դասի սկզբից մինչև վերջ: Մեկնաբանված են դասագրքի հիմնական խորագրերը՝ գլխագիր, մուտքի պատուհանիկ, սկզբնանկար, հարցեր, առաջադրանքներ, «Աչքի առաջ», դասից քաղած իմ պտուղները, ինչպես նաև այլ խորագրեր:

Հատկանշական է, որ մանրամասն ներկայացված են դասագրքի բոլոր հարցերի ակնկալվող պատասխանների օրինակներ, առաջադրանքների լուծումներ և տարբերակներ (243 հարց, 296 առաջադրանք):

Առաջադրանքները լուծելու ձևերին զուգահեռ տրված են նաև առաջադրանքներ ստեղծելու եղանակները: Ներկայացված և բացատրված են նաև սովորելու եղանակները, ուսումնառության մեթոդներ և հնարներ:

«Գրադարակ» անկյունում** ներկայացված են տվյալ դասին առնչվող նյութեր, որոնք ուսուցիչը կարող է օգտագործել իր հայեցողությամբ:

**ՉՈՒ ԴԱՍՎԱՐՆԵՐԻՆ**

Բարև՛, դպրոց հիմնադիր,
Եվ դասվարներ հատընտիր,
Ձեզ սիրում են բոլորը,
Խինդով լի՞ է ձեր օրը:

Երեխաներ, դե, շատ կան.
Մեկն ուզում է պետքարան,
Մեկ ուրիշը հուզվել է,
Ինքն իր ներսում սուզվել է:

Մեկի քուղը կապեցիք,
Մեկի աղբը թափեցիք,
Մեկն ուզում է տուն գնալ,
Մեկ ուրիշը՝ լուռ մնալ:

Ա՜խ, ի՞նչ անի դասվարը,
Վերը մաքրի, թե վարը,
Քիթը սրբի բալիկի.
Վարչապետն է գալիքի:

Բայց դասվարը կարող է,
Ամեն բան էլ ճարող է.
– Մի կողմ դրեք մրգերը,
Սիրուն բացեք գրքերը:

Ո՞վ կկարդա դասը մեր,
Թող բարձրացնի ձեռքը վեր:
Ձեռք եմ ուզում, ոչ մի՝ ես,
Կարդա՛, Աննա՛, շա՛տ ապրես:

Ապրի՛, ապրի՛ մեր Աննան,
Դասը կարդաց աննման,
Հիմա վերցրու գրիչը՝
Սիրուն-սիրուն գրիր Չ:

Եվ դասվարը դաս վարում,
Մեկ երգում է, մեկ՝ պարում,
Մեկ ծափ տալիս, մեկ՝ թռչում,
Վերջում հազիվ է շնչում:

Ծնողները, ա՜խ, եկան:
– Էս հուզվե՞լ է երեխան:
– Էս ի՞նչ բան է, սոված է:
– Շա՞տ է քրտնած մնացել:

– Էսօր ի՞նչ է ստացել:
– Հո չի՞ կռվել, չի՞ լացել:
– Ա՜խ, լավ նայեք զավակիս,
Երեխա է նա հանգիստ:

Շա՜տ դժվար է ձեր գործը,
Բայց օգնում է ձեր փորձը,
Սերն է օգնում ու բարին,
Հվարթ լինի ուստարին:

** «Գրադարակում» ընդգրկված բոլոր նյութերը՝ Վաչագան Ա. Սարգսյանի:

## 1.2. Դասագրքի 1-3-րդ էջերը

ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԵԼԵՆԱ ՁԻԼԱՎՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ 2

QUANTUM
ՔՎԱՆՏ

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ–2023

# ՀԱՅՐԱՅՆԱՄԱՍ

# ՔԱՐՏԵԶ


ԻՆՉՊԵՍ Է «ԱՇԽԱՏՈՒՄ» ԱՇԽԱՐՀԸ
ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՊՐՈՒՄ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ
chagan.am
ԴԱՍԱԳՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԸ
Բարև՛, սիրելի՛ երկրորդ դասարանցի: Ես քո դասագիրքն եմ:
Քեզ հրավիրում եմ իմ մոլորակներով մի մեծ ճամփորդության: Այդ ընթացքում դու.
• կկարդաս հետաքրքիր պատմություններ,
• կծանոթանաս շատ հերոսների,
• կզրուցես նրանց հետ քեզ հետաքրքրող հարցերի մասին,
• կճանաչես քո իրավունքներն ու պարտականությունները,
• հարցեր կտաս,
• կպատասխանես հարցերի,
• կխաղաս բազմաթիվ խաղեր,
• կգուշակես հանելուկներ,
• կսովորես զվարթ շուտասելուկներ,
• կլուծես խաչբառեր, նկարելուկներ,
• ավելի լավ կճանաչես քեզ և քեզ շրջապատող աշխարհը:
Բարի՛ երթ, իմ փոքրի՛կ բարեկամ:

### 1.3. Դասագրքի ողջույնը

Դասագրքերը փակ են: Ուսուցիչը երեխաների համար կարդում է 3-րդ էջի ԴԱՍԱԳՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԸ կամ QR-կոդի միջոցով երեխաներին լսելի է դարձնում այն:

Ուսուցիչը բացատրում է QR-կոդի նշանակությունը, ցույց տալիս, թե ինչպես է հնարավոր «կենդանացնել» այն: Նա նշում է, որ դասագրքում դեռ շատ են հանդիպելու այդ նշանին, որ QR-կոդով, հեռախոսով ու պլանշետով, համակարգչով շատ առաջադրանքներ են կատարելու, դիտելու են զանազան տեսանյութեր, լսելու են երգեր, դիտելու են փոքրիկ մուլտֆիլմեր և այլն:

### 1.4. Դասագրքի կառուցվածքը

Ուսուցիչն առաջարկում է, որ աշակերտները բացեն դասագրքերը, թերթեն և ուսումնասիրեն:

Ուսումնասիրելու համար երեխաներին տրվում է որոշակի ժամանակ: Այնուհետև, ուսուցչի ուղղորդմամբ, աշակերտները պարզում են, որ գիրքը նկարազարդ է, ունի **էջեր**, **կազմ**, վերջում կան **ցանկեր**:

Ուսուցիչը, ըստ անհրաժեշտության, տալիս է համառոտ բացատրություններ: Ցույց է տալիս գրքի **կազմը** և բացատրում, որ կազմը սովորաբար լինում է խիտ թղթից կամ ստվարաթղթից, ընդգրկում է գրքի էջերը, պաշտպանում դրանք: Կազմի վրա գրվում են հեղինակների անունները և գրքի անունը: Ասում է, որ մեր այս գրքի անունն է «Մայրենի-2»:

Մանկական գրքերի կազմերը սովորաբար նկարազարդ են: Ըստ կազմի նկարազարդման կարելի է կռահել գրքի բովանդակությունը:

Այնուհետև ցույց է տալիս գրքի առաջին էջը՝ **տիտղոսաթերթը** և ասում, որ տիտղոսաթերթի վրա գրվում են հեղինակների, նկարիչների անունները, գրքի անվանումը, որտեղ է լույս տեսել, երբ, ինչ հրատարակչությամբ:

Գրքի վերջում կան ցանկեր: Ցանկ 1-ում տրվում են որոշ առաջադրանքների պատասխաններ: Ցանկ 2-ում լեզվական այն նյութերի անվանումներն են, որոնք սովորողները պետք է ուսումնասիրեն ուստարվա ընթացքում: Վերջին ցանկը կոչվում է **բովանդակություն**: Այնտեղ տրված են բոլոր դասանյութերի վերնագրերը, դրանց հեղինակների անուն-ազգանունները, դասագրքում՝ դրանց էջերը: Ցանկը հնարավորություն է տալիս ավելի հեշտ օգտվելու գրքից:

Ուսուցիչը կարող է կազմակերպել խաղ. «Ով ավելի շուտ կգտնի»: Նա ասում է որևէ նյութի վերնագիր: Երեխաները պետք է բովանդակությունից գտնեն այդ դասանյութի էջը և բացեն գիրքը՝ այդ էջում կարդալով նաև նյութի հեղինակի անունը և ազգանունը:

Այնուհետև աշակերտների հետ պարզում են, որ գրքի հեղինակներն այն մարդիկ են, ովքեր ստեղծում են գիրքը՝ ընտրում են, գրում են դասանյութերը, հարցերն ու առաջադրանքները, գրքում զետեղված հետաքրքրաշարժ նյութերը: Նկարիչը ևս համարվում է համահեղինակ: Նկարիչը, համագործակցելով հեղինակների հետ, նրանց օգնությամբ նկարներ է ստեղծում դասագրքի համար:

Ուսուցիչը վերջում բացատրում է, որ **հրատարակչությունը** մի կազմակերպություն է, որը խնամքով ուսումնասիրում է հեղինակների ստեղծած գիրքը, եթե սխալներ

են լինում, հեղինակների միջոցով շտկում է, անհրաժեշտության դեպքում՝ նկարազարդում, այնուհետև տպարանում տպագրում է գիրքը և վաճառում ընթերցողներին: Իսկ դասագրքերը երեխաներին տրվում են անվճար, որպեսզի բոլոր երեխաները հնարավորություն ունենան լավ սովորելու: Այնպես որ, երեխաները պետք է լավ պահպանեն գրքերը, որ դրանք պատշաճ տեսքով վերադարձնեն դպրոցին:

### 1.5. Դասագրքի «Ճանապարհային քարտեզի» ուսումնասիրում

Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է 2-րդ և 3-րդ էջերում պատկերված տիեզերագնացների և մոլորակների վրա:

Ուսուցիչը երեխաներին հարցնում է, թե նրանց կարծիքով ովքեր են այդ տիեզերագնացները, ինչ գնդեր են երևում գրքի էջերում, ինչու է գրքի 2-րդ և 3-րդ էջերի վրա գրված «Ճանապարհային քարտեզ»: Միասին պարզում են, որ տիեզերագնացները 2-րդ դասարանցիներ են, որ դասագիրքը մի փոքրիկ տիեզերք է, որն ունի իր մոլորակները: Դրանք դասանյութերի այն խմբերն են (թեմաներն են), որոնք իրենք պետք է ուսումնասիրեն ամբողջ տարվա ընթացքում: Մոլորակների վրա գրված են թեմաների անվանումները:

Այնուհետև ուսուցիչը բացատրում է, թե, ընդհանրապես, ինչ են քարտեզները: Դրանք տեղանքում կողմնորոշվելու համար են: Դրանց վրա նշված են սարերն ու գետերը, քաղաքներն ու գյուղերը, ճանապարհներն ու կամուրջները և այլն: Քարտեզի օգնությամբ մարդիկ կարողանում են ընտրել ճիշտ ճանապարհ և գնալ իրենց ցանկացած վայրը: Դասագրքի քարտեզի վրա ևս մոլորակից մոլորակ, թեմայից թեմա նշված է ճանապարհ: «Այդ ճանապարհով մենք միասին թեմայից թեմա անցնելով՝ կուսումնասիրենք ամբողջ գիրքը և կհասնենք մեր նպատակին՝ ավելի վարժ կկարդանք, ավելի անսխալ կգրենք, մեզ ավելի ուժեղ կզգանք, ավելի լավ կճանաչենք մեզ և մեր շրջապատը, կիմանանք մեր իրավունքների ու պարտականությունների մասին»,- բացատրում է ուսուցիչը:

**ԱՐԱՄԸ**

Փոքրիկ Արամին իր տարեդարձին
Մի մեծ աստղանավ նվեր տվեցին:
Դրանից լավ բա՞ն: Հասավ ուզածին՝
Թռչել երկնքով, հասնել աստղերին:

Մնում էր միայն հավաքել պաշար,
Կապել զենքերը, դնել սաղավարտ.
Ինչն էլ Արամը կատարեց արագ,
Ու առաջինը նա Լուսին հասավ:

Չմնաց երկար՝ շատ գործեր ունի,
Աստղերը շատ են երկնի անհունի:
Հերթով այցելեց աստղերի մարդկանց,
Մանուկների հետ բռնոցի խաղաց:

Ծիլ ու ծառ տեսավ շատ զարմանալի,
Եվ կենդանիներ՝ տասնութոտանի:
Ամբողջ երկնքով երկար պտտվեց,
Իջավ իր նավից, մայրիկին փարվեց:



## 1.6.Պայմանանշաններ

# ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

Ծանոթացի՛ր այս պայմանանշաններին: Դրանք քեզ կօգնեն, որ ավելի արագ և հեշտ կողմնորոշվես դասագրքի էջերում:

| | | | |
|---|---|---|---|
| | Խմբային աշխատանք | | Ունկնդրել |
| | Աշխատանք զույգերով | | Պատմել |
| | Մուտքի պատուհան | | Աչքի առաջ |
| | Ամփոփում | | Գիտե՞ս, որ... |
| | Հարցեր | | Ներառարկայական կապ |
| | Առաջադրանք | | Միջառարկայական կապ |
| | Հետաքրքրաշարժ առաջադրանք | | Նախագծային աշխատանք (հետազոտական) |
| | «Դեպի վեր» առաջադրանք<br>*Բարդ*<br>*Միջին բարդությամբ*<br>*Պարզ* | | Առած, ասացվածք |
| | | | Շուտասելուկ |
| | | | Հանելուկ |
| | Գրել | | Նկարելուկ |
| | Սովորի՛ր հարցեր տալ | | Փոխակերպում |
| | Հիշի՛ր, վերհիշի՛ր | | QR կոդ<br>vachagan.am կայքի հղում |

4

Աշակերտները ուսուցչի հորդորով բացում են դասագրքի պայմանանշանների էջը (4):

Ուսուցիչը համառոտակի բացատրում է, որ պայմանանշանը ինչ-որ գաղափարի, հասկացության, առարկայի համար հորինված պատկեր է: Օրինակ, ուսուցիչը ցուցադրում է ⊙, , պայմանանշանները և երեխաների օգնությամբ բացահայտում, որ ⊙-ը սրտի պայմանանշանն է, -ը՝ եկեղեցու, իսկ -ը վարորդներին զգուշացնում է, որ մոտակայքում երեխաներ կան:

Քննարկում են 4-րդ էջի «գրել» ( ), «ունկնդրել» ( ), «պատմել» ( ) պարզ պայմանանշանները:

Ուսուցիչը նշում է, որ դասագրքի պայմանանշանները շատ են, և դրանք իրենք կուսումնասիրեն աստիճանաբար: Դա կօգնի իրենց ամբողջ ուսումնառության ընթացքում հեշտությամբ կողմնորոշվելու դասագրքով աշխատելիս:

Ուսուցիչը պետք է հետևողական լինի և դասերի ժամանակ ուղղորդի երեխաներին, որ նրանք ինքնուրույն օգտվեն դասագրքի պայմանանշանների էջից:

Նշենք, որ պայմանանշանների իմացությունը և կիրառումը նպաստում են, որ երեխաները ծանոթանան ու ընկալեն երևույթի մոդելավորման պարզագույն ձևերը, որն անհրաժեշտ է երեխաների վերացական մտածողության ձևավորման ու զարգացման համար:

## *Գլուխ 2.* «ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

### 2.1. Աշխատանք «Ով ենք մենք» թեմայի սկզբնանկարի շուրջ

**ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ «ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ» ՄՈԼՈՐԱԿ**

Նկարներում պատկերված են «Ով ենք մենք» մոլորակի բնակիչները:
Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում:

5

Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները ուշադիր ուսումնասիրում են «Բարի գալուստ «Ով ենք մենք» մոլորակ» սկզբնանկարը (էջ 5): Ուսուցիչը հիշեցնում է, որ յուրաքանչյուր մոլորակ որևէ թեմատիկ խմբի պայմանանշանն է, իսկ թեմատիկ խմբում ընդգրկված են իրար «հարազատ» դասանյութեր, որոնցից յուրաքանչյուրը և բոլորը միասին արտահայտում են տվյալ թեմայի ընդհանուր գաղափարը, օգնում են դրա յուրացմանն ու անհրաժեշտ հետևություններ անելուն: Յուրաքանչյուր թեմա ունի սկզբնանկար, որը յուրատեսակ մուտքի պատուհան է տվյալ թեմայի դասանյութերին ծանոթանալու համար: Սկզբնանկարները դասագրքում «ճամփորդելու» համար յուրատեսակ նկարազարդ ուղեցույցներ են, որոնք դասագիրքը բաժանում են ըստ թեմատիկ շարքերի, հեշտ կողմնորոշվելու հնարավորություն են ընձեռում դասագրքից օգտվողին:

Սկզբնանկարները հնարավորություն են ընձեռում թռուցիկ կերպով ինքնուրույն ծանոթանալու թեմայի բովանդակությանը, կանխագուշակումներ անելու, հորինելու պատմություններ ըստ նկարների՝ դրանք հետագայում համեմատելով համապատասխան պատմությունների հետ:

Աշակերտներն ուսուցչի հետ պարզում են, որ, բացի նկարներից, սկզբնանկարը պարունակում է նաև ուսումնասիրվող թեմատիկ խմբի անվանումը: Հնարավոր է, որ սկզբնանկարում լինի որևէ կարգախոս, հրահանգ: Օրինակ՝ այս սկզբնանկարում կա «Նկարներում պատկերված են «Ով ենք մենք» մոլորակի բնակիչները: Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում» հրահանգը: Սկզբնանկարների նկարները վերցված են թեմայում ընդգրկված դասանյութերից:

Սկզբնանկարները երեխաների ուշադրությունը տվյալ թեմայի դասանյութերի վրա սևեռելու, նրանց հետաքրքրասիրությունը բորբոքելու, կռահումներ անելու, ստեղծարար մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու համար հիանալի միջոց են:

«Ով ենք մենք» թեմայի սկզբնանկարում զետեղված նկարները հիանալի հնարավորություն են տալիս, որ երեխաները կառուցեն անկաշկանդ խոսք, երևակայությամբ հորինեն փոքրիկ պատմություններ, արտահայտեն իրենց աշխարհընկալումները այս կամ այն երևույթի վերաբերյալ:

Թեմայի մուտքը՝ սկզբնանկարի հետ աշխատանքը, կարելի է կազմակերպել խմբային աշխատանքով: Խմբային աշխատանքը երեխաների մեջ ձևավորում է ընդհանուր նպատակ ունենալու, պարտականությունները բաժանելու, առաջադրված նպատակին հասնելու եղանակները համաձայնեցնելու, մեկի գործողությունները խմբի մյուս անդամների հետ համաձայնեցնելու, նպատակը և արդյունքը համեմատելու ունակություններ:

Խմբերով աշխատելիս անհրաժեշտ է պահպանել մի քանի պարզ պայման.

ա. Խումբը պետք է ստանա հստակ ու կոնկրետ ձևակերպված առաջադրանք՝ ամբողջովին կանխատեսելի արդյունքով:

բ. Խնդրի լուծման համար պետք է ապահովվեն անհրաժեշտ առարկաներ:

գ. Պետք է հստակեցվի՝ խումբը բանավո՞ր է պատասխանում, թե՞ գրավոր:

դ. Պետք է սահմանվի որոշակի ժամանակ աշխատանքը կատարելու համար:

ե. Ավարտին խմբերը հերթով ներկայացնում են իրենց աշխատանքը, լսում են միմյանց, անում լրացումներ:

Դասարանը խմբերի բաժանելու բազմազան ձևեր կան: Աշակերտների քանակով և աշխատանքի բնույթով է որոշվում եղանակի ընտրությունը:

«Ով ենք մենք» սկզբնանկարում կա ինը առանձնացված նկար: Եթե աշակերտների քանակն այնպիսին է, որ հնարավոր է դասարանը բաժանել 9 խմբի, ապա ուսուցիչը նախապես թղթերի վրա գրում է այդ նկարներից ընտրված պատկերների անվանումներ (**խաղող, բժիշկ, մուկ, ուսուցիչ, մայրիկ, տիեզերագնաց, մոծակ, մաթեմատիկա, ուսապարկ**): Այնուհետև առաջարկում է, որ յուրաքանչյուր խումբ վերցնի որևէ թուղթ, կարդա բառը, գտնի այն նկարը, որում կա այդ բառը և հորինի փոքրիկ պատմություն՝ փորձելով կռահել, թե ինչ պատմություն է նկարազարդել նկարիչը: Ուսուցիչը կարող է բանավոր կամ գրավոր ուղղորդել աշակերտներին՝ նրանց տալով կամ գրատախտակին գրելով պատմություն հորինելու մի այսպիսի քայլաշար.

- ի՞նչ է պատկերված նկարում,
- ովքե՞ր են հերոսները,
- ի՞նչ են անում կամ ինչի՞ մասին են խոսում հերոսները,
- ի՞նչ վերնագիր կդնես քո հորինած պատմությանը:

Իսկ եթե դասարանի աշակերտների թիվը փոքր է և հնարավոր չէ շատ խմբեր ձևավորել, ապա պետք է խմբային աշխատանքի մեջ ներգրավել խմբերի քանակին հավասար նկարներ: Նաև հնարավոր է կազմակերպել զույգերով աշխատանք:

ԳՐԱԳԱՐԱԿ

ԿԱՏՈՒՆ

Մեր կատուն
Մի օր մտավ
Ներկատուն:
Ներկեր քսեց
Բեղերին,
Շերտեր արեց
Սև-դեղին՝
Մեջքին, փորին
Ու պոչին,
Հետո մի լավ
Չորացավ
Ու այնտեղից
Չալ կատուն
Մտավ մոտիկ
Նկարչատուն:
Նստեց խոժոռ,
Ոտքը՝ ոտքին,
Բեղը ցցեց,
Թուշն ուռցրեց,
Մազը փքեց,
Թաթը ձգեց
Ու նկարվեց:
Ու նկարից
Նայում է խիստ
Ոչ թե կատու,
Այլ մի վագր
Շատ ահարկու:

## 2.2.Աշխատանք «Բարև՛, ես եմ» նկարաշարի շուրջ



ԲԱՐԵ՛Վ, ԵՍ ԵՄ

1 • Ուշադի՛ր դիտիր նկարները: Պատմի՛ր, թե որ նկարում ով է Արևիկը:

ընկերուհի

աշակերտ

Արևիկ

քույր

դուստր

թոռնիկ

ընթերցող

կենդանիների պաշտպան

ուղևոր

• Օգտվելով նկարներից՝ պատմի՛ր քո մասին:

2 Ինչպես հասկացար, այս մոլորակում խոսելու ենք քո, քո ընտանիքի, քո շրջապատի մարդկանց մասին: Դու կարող ես ստեղծել մի յուրահատուկ՝ «Բարև՛, ես եմ» օրագիր: Յուրաքանչյուր դասին լրացրո՛ւ այդ օրագիրը: Երբեմն կարող ես հարցնել ծնողներիդ, դասընկերներիդ, ուսուցիչներիդ: Պատմի՛ր քո հույզերի, հետաքրքրությունների, կատարած գործերի մասին: Որքան սիրով աշխատես, այնքան քո օրագիրը կլինի հետաքրքիր և տարբերվող:

ԱՇԽԱՏԱՆՔ ՕՐԱԳՐՈՒՄ

Անուն, ազգանուն, հայրանուն

Ծննդյան օրը, ամիսը, տարին

Ծննդավայր

Բնակության հասցե

Դպրոցը, դասարանը

Ստորագրություն

Փակցրու՛ նկարդ

1 2

6

**Առաջադրանք 1.**

- Ուշադիր դիտի՛ր նկարները: Պատմի՛ր, թե որ նկարում ով է Արևիկը:

Երեխաները տեսնում են, որ նկարների հերոսը՝ Արևիկը, տարբեր իրավիճակներում ունի տարբեր դերեր՝ **ընկերուհի, աշակերտ, քույր, դուստր, թոռնիկ, ընթերցող, կենդանիների պաշտպան, ուղևոր**:

Աշակերտները հասկանում են, որ մարդը կարող է տարբեր դերեր ունենալ կյանքում: Ուսուցիչը բացատրում է, որ այդպես է նաև կենդանիների, բույսերի և իրերի դեպքում: Օրինակ, կարելի է առաջարկել, որ աշակերտները նկարագրեն և ասեն, թե ինչ է շունը տարբեր իրավիճակներում՝ **մարդու հավատարիմ ընկեր, հոտի պահապան, տան պահապան, չորքոտանի կենդանի, սահնակ քաշող, կույրին ուղեկցող, խաղընկեր, սահմանապահին, ոստիկանին օգնող** և այլն: Կարելի է առաջարկել, որ երեխաները թվարկեն ծառի դերերը՝ **պտուղ է տալիս, պաշտպանում է արևից, փայտ է տալիս, թռչունները բույն են հյուսում նրա վրա, սկյուռը ապրում է նրա փչակում՝ սկյուռի տունն է** և այլն:

Այնուհետև ուսուցիչը երեխաներին առաջարկում է, որ նրանք սովորական սպիտակ թղթի համար մտածեն դերեր: **Թղթի վրա կարելի է գրել, նրան պահ տալ մեր մտքերը՝ դառնա մտքի պահապան, նկարել նրա վրա, թուղթը դարձնել ինքնաթիռ, ծիտիկ՝ ճիշտ ծալծլելով, դարձնել նավակ, կտրատելով դարձնել բույս, կենդանի** և այլն:

- Օգտվելով նկարներից՝ պատմի՛ր քո մասին:

Սեփական դերի գիտակցման համար նպատակահարմար է, որ բոլոր աշակերտները կարողանան մտածել իրենց դերերի մասին: Առաջադրանքում պատկերված նկարները և գրված բառերը կօգնեն, որ աշակերտները հասկանան և առանձնացնեն իրենց դերերը: Կարելի է հանձնարարել փոքրիկ գրավոր աշխատանք՝ ընտրի՛ր և գրի՛ր դրվագանկարներից քո դերերը:

Ուսուցիչը աշակերտներին բացատրում է, որ յուրաքանչյուրը բոլոր դերերում կարող է և չլինել: Հնարավոր են այնպիսի դերեր, որոնք պատկերված չեն նկարներում:

Աշխատանքի գրավոր կազմակերպման ձևը կապահովի բոլորի մասնակցությունը և կնպաստի ինքնուրույն մտածելու, վերլուծելու կարողության զարգացմանը:

Օրինակ, աշակերտի գրածը կարող է ունենալ այսպիսի տեսք.

**Ես Անին եմ: Աշակերտ եմ: Արայի ընկերն եմ:**

**Ծնողներիս դուստրն եմ, տատիկիս՝ թոռնիկը:**

**Ընթերցող եմ: Ավտոբուսում ուղևոր եմ:**

**Կենդանիների պաշտպան եմ:**

Աշակերտն իր գրածը ներկայացնում է բարձրաձայն:

Ուսուցիչը ուշադրություն է դարձնում երեխաների խոսքին, որպեսզի նրանք խոսքը կառուցեն ամբողջական, ավարտուն, կապակցված նախադասություններով:

ԿԱՊԿՈՒ երեխաներին կարելի է առաջարկել, որ նրանք հաշվեն, թե քանի տղա (աղջիկ) է պատկերված նկարներում, ինչ կենդանիներ կան նկարներում, որ նկարում են մարդիկ ամենաշատը, որ նկարում՝ ամենաքիչը, և այլն:

## 2.3. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրում

Տարրական դասարաններում երեխաների պատկերացումները շրջապատի մասին փոքր քայլերով ընդլայնելուն, նրանց կատարած աշխատանքը իրենց հասակակիցների առջև ներկայացնելու կարողություն ձևավորելուն, ինչպես նաև ինքնուրույն աշխատանք կատարելու բերկրանք պարգևելուն, թիմային աշխատանք կատարելու հմտություններ ձևավորելուն են նպատակամղված հետազոտական աշխատանքները:

«Բարև՛, ես եմ» օրագրի ստեղծումն ու նրանով կատարվելիք աշխատանքները կարելի է համարել փոքրիկ հետազոտական աշխատանք՝ ինքնաճանաչման, ինքնագնահատականի վերաբերյալ:

Ցածր դասարաններում աշակերտների հետազոտական աշխատանքը ընթանում է ուսուցչի պարբերական ուղղորդմամբ, խրախուսմամբ և, հարկ եղած դեպքում, անհրաժեշտ շտկումներով: Անմասն չեն մնում նաև ծնողները, որոնք ևս ակտիվորեն ներգրավվում են ուսումնական գործընթացում, օգնում երեխաներին կատարելու հետազոտական աշխատանքը:

Ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է օրագիր ստեղծելու և հետագա դասերին լրացնելու աշխատանքները: Նա հանձնարարում է, որ աշակերտները տանը վերցնեն որևէ տետր և ծնողների օգնությամբ լրացնեն նրա առաջին էջը՝ ըստ դասագրքում տրված նմուշի:

Ուսուցիչը աշակերտներին առաջարկում է կատարել փոքրիկ հետազոտական աշխատանք ինքնաճանաչման նպատակով:

Ուսուցիչը բացատրում է, որ օրագրին պետք է վերաբերվել խնամքով, գրել ընթեռնելի ձեռագրով, գրագետ, կոկիկ, գեղեցիկ, լինել անկեղծ, ուշադրություն դարձնել ձևավորմանը:

## 2.4. Ո՞Վ ԵՄ ԵՍ

**ԵՍ ՄԱՆՈՒԿ ԵՄ**

### 2.4.1. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրի շուրջ

Դասընկերների «Բարև՛, ես եմ» օրագրերի գրառումներին, ձևավորումներին ծանոթանալու համար երեխաները բաժանվում են խմբերի: Խմբերի ներսում երեխաներն իրար են փոխանցում օրագրերը, կարդում են և համեմատում: Այնուհետև խմբերը իրար են փոխանցում օրագրերը, մինչև բոլորը ծանոթանում են բոլորի օրագրերին:

Այս աշխատանքը նաև նպաստում է, որ երեխաները ավելի լավ ճանաչեն միմյանց, ավելի մտերմանան:

Այս դասին դու.

- Կամրապնդես հնչյունների և տառերի մասին քո գիտելիքները:
- Կծանոթանաս բանաստեղծության հերոսին:
- Դու էլ կարող ես դառնալ բանաստեղծության հերոս:
- Կպատմես քո և քո ընկերների մասին:

## Ո՞Վ ԵՄ ԵՍ

Վաչագան Ա. Սարգսյան

vachagan.am

**Ծանոթանանք բանաստեղծության հերոսին, գուցե դու ճանաչե՞ս նրան:**

### ԵՍ ՄԱՆՈՒԿ ԵՄ

1

Ինձ հարցնում եք՝
Ո՞վ եմ ես,
Պատասխանեմ
Մեծի պես:



2

Ես մանուկ եմ
Շատ ժրաջան*,
Մե՜ծ եմ արդեն՝
Դպրոցական,
Գրել, կարդալ
Գիտեմ ես լավ:

3

Գիտեմ երգել
Ու նկարել,
Հանդեսներում
Ուրախ պարել:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*արդեն*
*կարդալ*
*երգել*

* **Ժրաջան** – աշխատասեր, ջանասեր, եռանդուն:

7

Այնուհետև ուսուցիչը աշակերտներին ասում է, որ յուրաքանչյուր նոր դաս ունի սկիզբ, որտեղ գրված է, թե ինչ նոր բաներ ենք սովորելու և կրկնելու, ինչ հետաքրքրաշարժ առաջադրանքներ են սպասում մեզ, որ ծանոթանալու ենք դասանյութի հերոսներին և նրանց օգնությամբ ավելի լավ ենք ճանաչելու մեզ:

Բացատրելուց հետո ուսուցիչը կարդում է դասի **գլխագիրը**: Այնուհետև գլխագիրը կարդում են երեխաները և արտահայտում իրենց կարծիքը գլխագրի կետերի վերաբերյալ:

Այնուհետև ուսուցիչն ասում է, որ կապույտ գծի միջև գրված է դասանյութի վերնագիրը՝ Ո՞Վ ԵՄ ԵՍ, ներքևում՝ հեղինակի անուն-ազգանունը՝ Վաչագան Ա. Սարգսյան: Բացատրում է, որ բոլոր դասերը սկսվելու են նման կերպ:

Գունավորված շրջանակը կոչվում է «Մուտքի պատուհանիկ»: Նշենք, որ «Մուտքի պատուհանիկում» ներկայացվող գրառումը երեխաների երևակայությունը խթանելու, դասանյութի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար նախատեսված մտքեր են, հարցադրումներ, երկխոսություններ, կարճ պատմություններ, հանելուկներ և այլն: Երեխաները կարդում են պատուհանիկի գրառումը: Նրանց մեջ կառաջանա դասի հերոսին ծանոթանալու ցանկություն:

Դասագրքի էջի կառուցվածքը բացատրելուց հետո ուսուցիչն ասում է. «Օրագրի առաջին էջում դուք գրել էիք ձեր մասին, ինչն օգնեց, որ ավելի մոտիկից ծանոթանաք իրար: Պատկերացնո՞ւմ եք, այսօրվա «Ո՞Վ ԵՄ ԵՍ» դասի հերոսն էլ է ուզում պատմել իր մասին: Եկեք սիրով ծանոթանանք հերոսին, տեսնենք՝ ո՞վ է նա, գուցե դուք ճանաչե՞ք նրան:

«Ո՞Վ ԵՄ ԵՍ» բանաստեղծությունը բաղկացած է երեք մասից, որոնք ունեն առանձին վերնագրեր: Այսօրվա դասի վերնագիրն է՝ «Ես մանուկ եմ»:

### 2.4.2. Տեքստի ընթերցում

Այնուհետև ուսուցիչը բարձրաձայն և առոգանությամբ կարդում է բանաստեղծությունը: Ողջ դասարանը ուշադրությամբ հետևում է ուսուցչին՝ մտքում կարդալով և իմաստավորելով կարդացածը: Բանաստեղծության այսպիսի ընթերցումը հնարավորություն է տալիս, որ երեխաները խմբովին կարդան և նույնիսկ անգիր անեն այն:

Ուսուցիչն առաջարկում է, որ միասին դիտեն մի տեսահոլովակ, որտեղ բանաստեղծության հերոսը՝ երկրորդ դասարանցի մի մանուկ, ներկայացնում է, թե ով է ինքը: Քննարկում են տեսահոլովակը և շարունակում դասը:

Կարելի է աշակերտների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ հերոսը իր մասին պատմում է բանաստեղծության միջոցով: Վերհիշել բանաստեղծություններին բնորոշ մի քանի առանձնահատկություն: Աշակերտների դիտարկումների հիման վրա եզրակացնել, որ բանաստեղծություններն ունեն այսպիսի առանձնահատկություններ.

- Տողերը կարճ են:
- Յուրաքանչյուր տող սկսվում է մեծատառով:
- Սովորաբար բոլոր տողերում վանկերի քանակը նույնն է:

- Տողերի վերջին բառերի վերջին տառերը հնչողությամբ մոտ են իրար (**ես – պես, ժրաջան – դպրոցական, արդեն – գիտեմ, նկարել - պարել**):

Տեքստի հետ արդյունավետ աշխատելու համար վարժ կարդացող երեխաներից մի քանիսը բարձրաձայն կարդում են տեքստը, մյուսները լուռ հետևում են՝ մտքում կարդալով տեքստը:

**2.4.3. Բառային աշխատանք**

Բառային աշխատանքի հիմնական նպատակն է անծանոթ բառերի, տարբեր արտահայտությունների, դարձվածքների, հականիշների, համանիշների բացատրումը և ակտիվ բառապաշար ներմուծումը:

Ուսուցիչը նախապես բնագրից առանձնացնում է դժվարընկալելի բառերն ու արտահայտությունները հետագա աշխատանքի համար: Օրինակ՝ **ժրաջան** բառը:

Ուսուցիչը նաև հանձնարարում է, որ աշակերտները կարդան տեքստը և իրենց մոտ նշեն անծանոթ բառերն ու բառակապակցությունները: Սա նպաստում է տեքստի ընկալմանը, ակտիվ բառապաշարի հարստացմանը, աշակերտների կարդալու տեխնիկայի կատարելագործմանը, նրանց ուշադրության սևեռմանը տվյալ երևույթի վրա: Այնուհետև նշած բառերը աշակերտները բացատրում են միմյանց և ուսուցչի ուղղորդմամբ գալիս ընդհանուր եզրակացության:

Անծանոթ բառերի բացատրությունը կարելի է կատարել տարբեր արդյունավետ եղանակներով:

Դասագրքում բացատրվող բառի վրա դրվում է կապույտ գույնի աստղանիշ և տողատակում բացատրվում է երեխային հասկանալի բառապաշարով: Այստեղ **ժրաջան** բառով ստեղծվել է առաջադրանք 2-ը, որպեսզի երեխաների մեջ ամրապնդվի թե՛ բառի նշանակությունը, թե՛ ուղղագրությունը:

Պետք է ստեղծել այնպիսի առաջադրանքներ կամ ձևակերպել այնպիսի հարցեր, որ երեխան իր գրավոր կամ բանավոր խոսքում գործածի նորածանոթ բառերը:

### 2.4.4. Աշխատանք տեքստի շուրջ

**Հարցեր**

1. Ո՞վ է բանաստեղծության հերոսը:
2. Ինչպիսի՞ն է նա:
3. Ի՞նչ գիտի մանուկը:
4. Ի՞նչ է կարողանում անել:
5. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է բանաստեղծության հերոսը իրեն մեծ համարում:
6. Դու քեզ մեծ համարո՞ւմ ես: Ինչո՞ւ:
7. Եթե դու նկարչի կողքին լինեիր, ապա ի՞նչ կառաջարկեիր ավելացնել նկարազարդման մեջ:

**Առաջադրանքներ**

1

| Ի՞նչ գիտեմ | Ի՞նչ եմ ուզում անել | Ինչպիսի՞ն եմ ես |
|---|---|---|
| | | |
| | | |

- Գրի՛ր հարցերի պատասխանները:
- Համեմատի՛ր ընկերոջդ գրած պատասխանների հետ:

2 Քո ընկերներից ո՞ւմ ես համարում ժրաջան:
Կազմի՛ր մեկ նախադասություն՝ օգտագործելով **ժրաջան** բառը և «Աչքի առաջ» խորագրի բառերից որևէ մեկը:
Օրինակ՝ **ժրաջան Աննան կարդում է:**

3 Կարդա՛ «Հնչյուն-տառի երգը», դիտի՛ր տեսահոլովակը:

vachagan.am

**ՀՆՉՅՈՒՆ-ՏԱՌԻ ԵՐԳԸ**

Ես հնչյունն եմ՝ հնչում եմ,
Օդում ապրում, շնչում եմ,
Հենց գրեցիր՝ տառ եմ ես,
Գիր եմ արդեն բարետես:

Պատասխանի՛ր հարցերին:

- Ի՞նչ է անում հնչյունը:
- Ինչո՞վ են տարբերվում հնչյունն ու տառը:

8

### 2.4.5. Հարցերի և առաջադրանքների օրինակներ

1. Ո՞վ էր բանաստեղծության հերոսը: (Մանուկը)

2. Ինչպիսի՞ն էր նա: (Մեծ, ժրաջան)

3. Ի՞նչ գիտեր նա: Կարդա՛ համապատասխան տողերը:
(Գրել, կարդալ

Գիտեմ ես լավ)

4. Ի՞նչ էր կարողանում նա անել: Կարդա՛ համապատասխան տողերը:

(Գիտեմ երգել

Ու նկարել,

Հանդեսներում

Ուրախ պարել)

5. Քո կարծիքով ինչո՞ւ է բանաստեղծության հերոսը իրեն մեծ համարում: (Որովհետև դպրոցական է, կարդալ գիտի, գրել գիտի)

6. Դու քեզ մեծ համարո՞ւմ ես: Ինչո՞ւ: (Մեծ եմ, որովհետև դպրոց եմ հաճախում, գրել, կարդալ, պատմել, հարցեր տալ գիտեմ, ինձնից փոքրիկ եղբայր ունեմ, ինքնուրույն եմ դասերս պատրաստում, և այլն)
7. Եթե դու նկարչի կողքին լինեիր, ապա ի՞նչ կառաջարկեիր ավելացնել նկարազարդման մեջ: (Երեխաները ազատորեն արտահայտում են իրենց կարծիքները:)

### 2.4.6. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

«Աչքի առաջ» խորագրի բառերի ուսուցման համար աշակերտները նախ կարդում են գրված բառերը, ապա բանաստեղծության մեջ գտնում են այդ բառերը՝ մեկ անգամ ևս կարդալով բանաստեղծությունը: Մտածում են, թե ինչու են հատկապես այդ բառերն առանձնացված և ուսուցչի օգնությամբ պարզում են, որ այդ բառերը հնչողությամբ տարբերվում են գրությունից (հնչում են այլ կերպ, գրվում են այլ կերպ):

Նշենք նաև, որ «Աչքի առաջ» խորագրի բառերը երեխաների ակտիվ բառապաշար ներածելու համար դասագրքում կիրառվել են բազմատեսակ հնարներ, բազմաբնույթ վարժություններ և առաջադրանքներ:

Տե՛ս, օրինակ, դասագրքի 8-րդ էջի առաջադրանք 2-ը:

Այս բնույթի առաջադրանքների աշակերտները հանդիպում են բոլոր դասանյութերում: Միշտ էլ ուղղագրական դժվարություններ ներկայացնող բառերը առանձնացվել են ինչ-որ ձևով, ավելի ցայտուն ներկայացվել, որ երեխաների ուշադրությունը սևեռվի դրանց վրա: Տեսողական հիշողությունը ևս օգնում է, որ երկար մտապահվեն այդ բառապատկերները:

**Առաջադրանք 1.**

| Ի՞նչ գիտեմ | Ի՞նչ եմ ուզում անել | Ինչպիսի՞ն եմ ես |
|---|---|---|
| | | |

- Գրի՛ր հարցերի պատասխանները:
- Համեմատի՛ր ընկերոջդ գրած պատասխանների հետ:

Աղյուսակը կարելի է լրացնել՝ այն գծելով տետրում, կամ ուսուցիչը կարող է այն նախապես գծել թերթիկների վրա, բաժանել երեխաներին, որ լրացնեն:

Երեխաները անհատապես լրացնում են աղյուսակը, ապա զույգերով ծանոթանում են միմյանց գրածներին: Այդ աշխատանքի ընթացքում նրանք կգտնեն որոշակի նմանություններ ու տարբերություններ իրենց գրածների միջև և ավելի լավ կճանաչեն միմյանց:

**Հարցերի մոտավոր պատասխաններ**

| Ի՞նչ գիտեմ | Ի՞նչ եմ ուզում անել | Ինչպիսի՞ն եմ ես |
|---|---|---|
| Գրել | Մեծանալ | Լավ սովորող |
| Կարդալ | Ուժեղանալ | Երկար մազեր ունեմ |
| Երգել | Օգնել տան գործերում | Գեղեցիկ եմ |
| Պարել | Սովորել լողալ | Սիրում եմ մարդկանց |
| Նկարել | Սովորել ձի քշել | Սիրում եմ կենդանիներ |
| Դաս սովորել | Խաղ ստեղծել | Կարող եմ ուրախացնել մարդկանց |
| Արտասանել | Կարատե պարապել | Սիրում եմ գրքեր կարդալ |

**2.4.7. Աշխատանք լեզվական գիտելիքի շուրջ**

**Առաջադրանք 2.** Քո ընկերներից ո՞ւմ ես համարում ժրաջան:

Կազմի՛ր մեկ նախադասություն՝ օգտագործելով **ժրաջան** բառը և «Աչքի առաջ» խորագրի բառերից որևէ մեկը:

Օրինակ՝ Ժրաջան Աննան կարդում է:

Աշակերտներին տրվում է 1,5-2 րոպե նախադասություններ կազմելու համար: Այդ ժամանակամիջոցում ով քանի նախադասություն կազմեց և գրեց տետրում, կարդում է:

**Առաջադրանք 3**. Կարդա՛ «Հնչյուն-տառի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը:

Աշակերտները կարդում են, լսում և դիտում «Հնչյուն-տառի երգի» հոլովակը (QR-կոդ): Այնուհետև պատասխանում են տրված հարցերին:

- Ի՞նչ է անում հնչյունը: (Հնչում է, ապրում է, շնչում է:)
- Ինչո՞վ են տարբերվում տառն ու հնչյունը: (Հնչյունը մենք արտասանում ենք և լսում, տառը գրում ենք և կարդում:)

**4**

vachagan.am

Օգտվելով նկարից և տրված վանկերից՝ կազմի՛ր երեք եռավանկ բառ: Օրինակ՝

**գը-րա-** → **գրատուն**:

**5**

○ Կարդա՛ և արտագրի՛ր **երգ, կարդալ, մանուկ, երեխա** բառերը:

✧ Կռահի՛ր, թե ինչ են ցույց տալիս «երգ» բառի դիմաց գրված թվերը: Նույն օրինաչափությամբ մյուս բառերի դիմաց գրի՛ր համապատասխան թվերը:

**երգ** – 3,4 **կարդալ** – **մանուկ** – **երեխա** –

☼ Գրի՛ր բառեր, որոնք համապատասխանում են աղյուսակի պահանջներին:

| | տառ | հնչյուն | բառ |
|---|---|---|---|
| ա. | 3 | 4 | |
| բ. | 3 | 3 | |
| գ. | 4 | 5 | |

**6**

Կարդա՛ հանելուկը, արտագրի՛ր և գուշակի՛ր պատասխանը:

Հորդ տղան է,
Բայց եղբայրդ չէ,
Եթե ուզում ես
Նրան ճանաչել,
Պետք է հայելուն
Օգնության կանչել:

**Առաջադրանք 4.**

• Օգտվելով նկարից և տրված վանկերից՝ կազմի՛ր երեք եռավանկ բառ:

• Այս առաջադրանքը կատարելու համար ուսուցիչը աշակերտներին բացատրում է, որ շրջանակների մեջ գրված **ութ** վանկով և **տուն** բառով (որը նկարված է) կազմվում է չորս բառ: Այդ բառերից մեկը տրված է օրինակում՝ **գը-րա-տուն**: Հարկավոր է նման ձևով մնացած վեց վանկով և **տուն** բառով կազմել երեք բառ:

Երեխաները կազմում են **դե-դա-տուն, հա-ցա-տուն** և **ներ-կա-տուն բառերը:**

Այնուհետև՝ ցույց տալով առաջադրանքի մոտ դրված QR-կոդի նշանը, ուսուցիչը բացատրում է, որ այդ նույն առաջադրանքը նրանք կարող են կատարել էլեկտրոնային շտեմարանում՝ ակտիվացնելով QR-կոդը կամ ակտիվացնելով vachagan.am հղումը:

### 2.4.8. «ՎԱՆԿԱՏՈՒՆ» էլեկտրոնային առաջադրանքի նկարագրությունը

Կապույտ պատուհանիկի մեջ գրված է՝ «Դիտել օրինակը»: Սեղմելով այդ պատուհանիկին՝ բացվում է մի փոքրիկ ցուցադրական տեսահոլովակ:

Կտացնելով խաղը բացող եռանկյուն նշանի վրա՛ խաղացողը տեսնում է, թե ինչպես է ընթանում խաղը: Այնուհետև փակում է տեսահոլովակը և սկսում խաղը:

Խաղալու համար սովորողը պետք է մկնիկով բռնի վանկը և տեղավորի ներքևի գծապատկերի վանդակներից մեկում: Ընտրված վանկը փոխում է իր գույնը և դառնում է դեղին, որպեսզի խաղացողը հիշի, թե որ վանկն է ընտրել: Եթե բոլոր վանկերը ճիշտ է ընտրել, ապա ներքևում գրվում է՝ «ճիշտ պատասխաններ» և կազմած բառը *(գրատուն, դեղատուն, ներկատուն, հացատուն)*: Եթե սխալ է ընտրել վանկերը, ապա տողը կարմրում է և գծապատկերը դատարկվում է:

5 **Առաջադրանք 5.**

○ Կարդա՛ և արտագրի՛ր **երգ, կարդալ, մանուկ, երեխա** բառերը:

✧ Կռահի՛ր, թե ինչ են ցույց տալիս «երգ» բառի դիմաց գրված թվերը:
Նույն օրինաչափությամբ մյուս բառերի դիմաց գրի՛ր համապատասխան թվերը:
երգ – 3,4 կարդալ – մանուկ – երեխա –

☼ Գրի՛ր բառեր, որոնք համապատասխանում են աղյուսակի պահանջներին:

«Դեպի վեր» պայմանանշանը դրվում է բարդության տարբեր աստիճաններ ունեցող միևնույն առաջադրանքի դեպքում, ինչպես նաև տարբեր բարդությամբ առաջադրանքների համակարգի դեպքում: Այդ առաջադրանքները նախատեսված են տարբեր կարողություններով աշակերտների համար, և ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ աշակերտները հնարավորության դեպքում կարողանան աստիճանաբար կատարել դրանք:

Ընդունելի է, որ յուրաքանչյուր աշակերտ առաջադրանքը կատարի այն չափով, որքանով կարողանում է, բայց միաժամանակ ուսուցիչը խրախուսում է բոլոր առաջադրանքները կատարելու աշակերտների ջանքերն ու փորձերը:

### 2.4.9. Աշխատանք պայմանանշանի շուրջ

Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է դասագրքում աստիճանի տեսքով պատկերված պայմանանշանի (  ) և դրա վերնագրի՝ «Դեպի վեր»-ի վրա: Աշակերտները փորձում են հասկանալ նշանի կառուցվածքը և բովանդակությունը, պայմանանշանի և վերնագրի կապը: Պարզում են, որ դա դեպի վեր տանող աստիճան է, և իրենք կարող են առաջադրանքները քայլ առ քայլ կատարելով հասնել ամենավերին աստիճանին:

Այնուհետև ուսուցիչը բացատրում է, որ աստիճանի առաջին պատկերը (○) ցույց է տալիս առաջադրանքի առավել պարզ, մատչելի բաղադրիչը, երկրորդ աստիճանին (✧) հասնելու համար պետք է առավել ջանք գործադրել, ավելի շատ աշխատել, իսկ երրորդ աստիճանին (✵) հասնելու համար լարել բոլոր ուժերը, առավել կենտրոնանալ:

Պետք է դասարանում ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ: Աշակերտները գնահատում են իրենց սեփական ձեռքբերումները՝ թե ինչ կարող էին անել երեկ, ինչ կարող են անել այսօր և ինչին պետք է ձգտեն վաղը, պարզում են սեփական ուժեղ և բարելավման կարիք ունեցող կողմերը, աշխատում այդ ուղղությամբ: Այսինքն՝ համեմատվում են իրենք իրենց հետ, այլ ոչ թե ընկերների:

○ Կարդա՛ և արտագրի՛ր **երգ, կարդալ, մանուկ, երեխա** բառերը:

✧ Կռահի՛ր, թե ինչ են ցույց տալիս «երգ» բառի դիմաց գրված թվերը: Նույն օրինաչափությամբ մյուս բառերի դիմաց գրի՛ր համապատասխան թվերը:

- երգ – 3, 4
- մանուկ –
- կարդալ –
- երեխա –

Երեխաներն ինքնուրույն գուշակում են, թե ինչ են նշանակում 3 և 4 թվերը, որոնք գրված են «երգ» բառի դիմաց: (Դրանք ցույց են տալիս տվյալ բառի մեջ տառերի (3) և հնչյունների (4) քանակները:)

Եթե աշակերտները գլխի չեն ընկնում, կարելի է հուշող հարցեր առաջադրել: Օրինակ՝ ասել, որ երեխաները բառերը ենթարկեն հնչյունային վերլուծության:

Այնուհետև երեխաները լրացնում են բառերի տառերի և հնչյունների քանակը:

Երգ – 3 տառ, 4 հնչյուն (որովհետև **ե**-ն երկհնչյուն տառ է)

Մանուկ – 5, 5

Կարդալ – 6, 6

Երեխա – 5, 6 (որովհետև **ե**-ն երկհնչյուն տառ է)

Գրի՛ր բառեր, որոնք համապատասխանում են աղյուսակի պահանջներին:

Երեխաները պետք է ասեն տրված օրինակներին համապատասխանող բառեր և լրացնեն աղյուսակը:

Օրինակ.

3 տառ, 4 հնչյուն կաղապարի դեպքում (**որս, որդ, ոսպ, ոստ, որջ, երգ, ելք, երբ** և այլն):

3 տառ, 3 հնչյունի դեպքում (**շուն, տուն, մուկ** և այլն):

4 տառ, 5 հնչյունի դեպքում (**ոզնի, երազ, ելակ** և այլն):

Աղյուսակը կարելի է լրացնել՝ գծելով տետրում:

**Առաջադրանք 6.** Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը:

Դասագրքում մեծ տեղ է հատկացված ժողովրդական բանահյուսության նմուշներին: Այստեղ կանդրադառնանք ժողովրդական բանահյուսության ամենավառ նմուշներից մեկին՝ հանելուկին:

### 2.4.10. Աշխատանք հանելուկի պայմանանշանի շուրջ

Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է հանելուկի պայմանանշանի վրա, լսում նրանց տարբերակներն ու մեկնաբանությունները, թե ինչի է նման նշանը:

Միասին պարզում են, որ պայմանանշանում զվարթ աճպարարն է, որը գլխարկի միջից դուրս է հանում նապաստակ, երբ այնտեղ դրել էր ուրիշ մի բան: Այսինքն՝ հանելուկի առարկան այնպես է նկարագրվում, որ առաջին հայացքից դժվար է գլխի ընկնել, թե ինչ է այն:

Ուսուցիչը բացատրում է, որ հանելուկն առարկայի կամ երևույթի հետաքրքրաշարժ, խորամանկամիտ, համառոտ նկարագրություն է, որը պետք է վերծանել:

Հանելուկի գուշակումը նպաստում է երեխաների վերացարկման ունակության, սրամտության ու պատկերավոր մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Այն հնարավորություն է ընձեռում, որ երեխաները առարկաներն ու երևույթները տեսնեն անծանոթ և անսովոր կողմերից, մտապահեն դրանց էական հատկանիշները:

Հանելուկը հետաքրքրաշարժություն ու զվարթություն է հաղորդում ուսընթացին, նպաստում է, որ երեխաները կարողանան իրենց ուշադրությունը երկարատև լարել որևէ երևույթի վրա:

### 2.4.11. Հանելուկի գուշակում

Աշակերտները լուռ կարդում են հանելուկը և, օգտվելով նկարազարդումից, գուշակում են հանելուկի պատասխանը:

**ՀԱՆԵԼՈՒԿ**
**Հորդ տղան է,**
**Բայց եղբայրդ չէ,**
**Եթե ուզում ես**
**Նրան ճանաչել,**
**Պետք է հայելուն**
**Օգնության կանչել:**

Հանելուկին կից նկարազարդման մեջ մի տղա նայում է հայելու մեջ և տեսնում է ինքն իրեն: Աշակերտները գլխի են ընկնում, որ հանելուկի պատասխանն է՝ ԵՍ:



ԳՐԱԳԱՐԱԿ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առանց թևի թռչում են,
Երկինք-գետին թրջում են,
Նրանց մոտից թե նայես,
Մարդիկ կարծես մրջյուն են:
ԱՄՊԵՐ

Արթնանում է քեզնից վաղ,
Անունն ասես ա՛ղ է, ա՛ղ,
Ու թե փոխենք լոկ մի տառ,
Նա կդառնա աղաղաղ:
ԱՔԱՂԱՂ

Փետուր ունի գույնզգույն,
Կտուց ունի՝ գլխից մեծ,
Եթե ունես ցանկություն,
Կզրուցի նա քեզ հետ:
ԹՈՒԹԱԿ

Այս ո՞վ ունի երեք աչք՝
Կարմիր, դեղին ու կանաչ:
Կանգնած է նա փողոցում,
Ճամփան փակում է, բացում:
ԼՈՒՍԱԿԻՐ

Կենդանի է նա մաքրասեր,
Շատ է սիրում մածուն ու սեր,
Լվացվում է շատ խնամքով,
Սակայն միայն ճաշից հետո:
ԿԱՏՈՒ

7 Գրի՛ր կենդանիների անունները. միավանկ բառերը՝ մի սյունակում, երկվանկ բառերը՝ մյուս:

vachagan.am

| Միավանկ | Երկվանկ |
|---|---|
| ձի | ընձուղտ |

- Ուրիշ ի՞նչ խմբերի կարող ես բաժանել կենդանիները:
- Հիմնավորի՛ր քո բաժանումը:

8 **ԱՇԽԱՏԱՆՔ ՕՐԱԳՐՈՒՄ**

Հարցրո՛ւ մեծահասակներին և լրացրո՛ւ «Բարև՛, ես եմ» օրագիրը:

**Հորդորակ.** *Գրի՛ր քո ամենագեղեցիկ ձեռագրով:*

Իմ քաշն ու հասակը ծնվելու պահին _____

Իմ քաշն ու հասակը հիմա _____

Իմ արտասանած առաջին բառը _____

3

Երբ եմ սկսել քայլել _____

Իմ սիրելի խաղալիքը _____

Իմ կարդացած առաջին գիրքը (հեքիաթը) _____

4

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

1. Ես կարող եմ բառի մեջ հաշվել _____ և _____ քանակը:
2. Ես կարող եմ պատմել _____ մասին:
3. Այս դասից ինձ ամենաշատը դուր եկավ _____:

10

**Առաջադրանք 7.**

Գրի՛ր կենդանիների անունները. միավանկները մի սյունակում, երկվանկները՝ մյուս:

Ուրիշ ի՞նչ խմբերի կարող ես բաժանել կենդանիները: Հիմնավորի՛ր բաժանումը:

Այս առաջադրանքի մանրամասն նկարագրությունը ներկայացված է QR-կոդով բացվող նրա էլեկտրոնային տարբերակում:

### 2.4.12. «ԿԵՆԴԱՆԻՆԵՐ» էլեկտրոնային առաջադրանքի նկարագրությունը

Էկրանի ձախ անկյունում գրված են խաղի անունը և դասագրքի էջն ու առաջադրանքի համարը՝ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ՝ էջ 10(7):

Նկարում տեսնում ենք՝ աղվես, ձի, արջ, առյուծ, գայլ, ընձուղտ: Տրված է պայմանը՝ «Կենդանիները բաժանի՛ր խմբերի»: Կապույտ պատուհանիկում գրված է. «Դիտել օրինակը»:

Խաղացողը, սեղմելով այդ պատուհանիկին, բացում է խաղի ցուցադրական օրինակը: Փակելով ցուցադրությունը՝ վերադառնում է խաղին:

Կանաչ պատուհանիկում գրված է. «Սկսել սկզբից»: Եթե խաղացողը խաղի որևէ դրվագից ուզում է հետ վերադառնալ սկիզբ, ապա սեղմում է այդ վանդակը:

Վանդակներից ներքև աղոտ երևում է ինչ-որ մի տող, որի ամենաձախ մասում պարզ երևում է «Միավանկ-երկվանկ» գրությունը: Սա ցույց է տալիս, որ տվյալ պահին կենդանիները պետք է բաժանել ըստ այդ հատկանիշի: Դա գրված է նաև ներքևի կապույտ պատուհանիկում:

Խաղացողը, մկնիկով բռնելով որևէ կենդանի, նրան իջեցնում է ներքևի կապույտ գծապատկերի տակ: Գծապատկերի տակ բացվում է գորշ պատուհանիկ, որի մեջ էլ թողնում է կենդանուն: Կենդանու անունը գրվում է գծապատկերի տակ: Եթե ճիշտ տեղում է տեղադրված, խաղը շարունակվում է, եթե ոչ, ապա լսվում է արգելող ձայնանշան, և կենդանին վերադառնում է իր տեղը: Եթե բոլոր կենդանիները ճիշտ են տեղադրվում, ապա գծապատկեր-աղյուսակն ունենում է հետևյալ տեսքը.

| Միավանկ | Երկվանկ |
|---|---|
| ձի | աղվես |
| արջ | ընձուղտ |
| գայլ | առյուծ |

Նշենք, որ տվյալ սյունակում կարևոր չեն կենդանիների տեղերը, այսինքն՝ «Միավանկ» սյունակի տակ կենդանիները կարող են գրվել ցանկացած հերթականությամբ՝ (ձի, արջ, գայլ), (ձի, գայլ, արջ), (արջ, գայլ, ձի), (արջ, ձի, գայլ), (գայլ, արջ, ձի), (գայլ, ձի, արջ): Նույնը՝ աջ սյունակի դեպքում:

Երբ բոլոր կենդանիները ճիշտ տեղավորվել են իրենց վանդակներում, երկար տողի ձախ կողմում ակտիվանում է «Խոտակեր-գիշատիչ» խորագիրը, որի վրա կտացնելով, խաղացողը պետք է կենդանիները բաժանի ըստ այդ հատկանիշի.

| Խոտակեր | Գիշատիչ |
|---|---|
| ձի | աղվես |
| ընձուղտ | արջ |
| | առյուծ |
| | գայլ |

Ճիշտ բաժանելուց հետո տեղում ակտիվանում է «Ձայնավորով սկսվող - բաղաձայնով սկսվող» խորագիրը.

| Ձայնավորով սկսվող | Բաղաձայնով սկսվող |
|---|---|
| աղվես | ձի |
| արջ | գայլ |
| առյուծ | |
| ընձուղտ | |

Ճիշտ բաժանելուց հետո (աղվես, արջ, առյուծ, ընձուղտ), (ձի, գայլ) բացվում է «Սմբակավոր - թաթեր ունեցող» խորագիրը: Ճիշտ լրացնելուց հետո ստացվում են հետևյալ խմբերը.

| Սմբակավոր | Թաթեր ունեցող |
|---|---|
| ձի | նապաստակ |
| ընձուղտ | գայլ |
| ուղտ | աղվես |
| | արջ |
| | առյուծ |

Աշակերտները պետք է իմանան, որ խմբում պետք է լինի առնվազն երկու կենդանի:

**2.4.13. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրի շուրջ:**

**Առաջադրանք 8.**

Բանաստեղծության հերոսը քեզ պատմեց, թե ով է ինքը: Դու էլ պատմիր քո մասին: Մեծահասակների օգնությամբ լրացրու «Բարև, ես եմ» օրագրիդ էջը՝ ըստ ձևանմուշի:

**2.4.14. Դասից քաղած իմ պտուղները**

Դասի ավարտին ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներին հետահայաց վերլուծություն կատարելու, վերհիշելու և գնահատելու իրենց կատարած քայլերը: Ստորև բերված հարցաշարի միջոցով երեխան ինքն է պարզում, թե ինչ սովորեց (գիտելիք), ինչ է կարողանում անել (կարողություն), վերլուծում է իր վերաբերմունքը (դիրքորոշում):

Նման աշխատանքների պարբերաբար կազմակերպումը նպատակաուղղված է այն բանին, որ երեխաները վարժվեն վերլուծելու և գնահատելու իրենց ձեռքբերումները յուրաքանչյուր դասից: Երեխաները իրենց ձեռքբերումները համեմատում են գլխագրում ներկայացված նպատակների հետ, անում անհրաժեշտ եզրակացություններ:

Թերթի՛ր այս դասի էջերը, վերհիշի՛ր կատարված աշխատանքները և լրացրո՛ւ անավարտ նախադասությունները. Ի՞նչ սովորեցիր այս դասից և ի՞նչ կարող ես արդեն անել:

1.Ես կարող եմ բառի մեջ հաշվել _____ և _____ քանակը:
2.Ես կարող եմ պատմել _____ մասին:
3.Այս դասից ինձ ամենաշատը դուր եկավ _____:

Երեխաները պետք է անհատապես լրացնեն անավարտ նախադասությունները:

Հարկավոր է նկատի ունենալ, որ առաջադրանքի հարցերը աստիճանաբար բարդանում են, տարբեր երեխաներ կարող են տարբեր քանակի հարցերի պատասխանել:

Ըստ անհրաժեշտության ուսուցիչը կարող է անհատապես օգնել և ուղղորդել աշակերտներին:

Կարող են լինել նմանատիպ պատասխաններ.

1. Ես կարող եմ բառի մեջ հաշվել հնչյունների և տառերի քանակը:
2. Ես կարող եմ պատմել իմ մասին:
3. Ինձ դուր եկավ՝ բանաստեղծությունը, հերոսը, հանելուկը, նկարազարդումը, խաղերը, բառերի հետ աշխատանքը:

## 2.5. Ո՞Վ ԵՄ ԵՍ

**ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ…**

Դասը սկսվում է «Բարև՛, ես եմ» օրագրերին անդրադարձ կատարելով:

Կարելի է կազմակերպել աշխատանք զույգով: Աշակերտները կարդում են իրենց օրագրի գրառումները: Այնուհետև, ըստ ցանկության, ներկայացնում են ընկերոջ օրագրից մի փաստ՝ խոսքը կառուցելով մոտավորապես այսպիսի կաղապարներից մեկով.

**Իմ ընկեր _____ի օրագրի գրառումներից ինձ դուր եկավ _____:**

**Իմ ընկեր _____ի օրագրի գրառումներից ինձ զարմացրեց, որ _____:**

**Իմ ընկեր _____ի օրագրի գրառումներից ինձ հետաքրքրեց, որ _____:**

**Պարզվում է, որ իմ ընկերը _____:**

**Իմ ընկերոջ նման ես էլ _____:**

Աշխատանքի կազմակերպման նպատակն է աշակերտների մեջ ձևավորել և զարգացնել լսելու, համագործակցելու, համեմատելու, որոշում կայացնելու կարողություններ: Նման աշխատանքը նաև զարգացնում է բանավոր խոսքը: Ուսուցիչը կարող է վերոնշյալ ձևակերպումները նախապես գրել գրատախտակին կամ թղթիկների վրա և տրամադրել աշակերտներին:

Ուսուցիչը աշակերտների հետ ամփոփում է օրագրերի շուրջ աշակերտների կատարած աշխատանքը: Միասին պարզում են, որ այդ աշխատանքի միջոցով ավելի լավ ճանաչեցին իրենց և իրենց ընկերներին:

Այնուհետև ուսուցիչը աշակերտներին հիշեցնում է, որ յուրաքանչյուր նոր դաս սկսվում է գլխագրի «Այս դասին դու…» բառերով: Այդտեղ գրված է, թե ինչ նոր բաներ ենք սովորելու և կրկնելու, ինչ հետաքրքրաշարժ առաջադրանքներ են սպասում մեզ, որ ծանոթանալու ենք դասանյութի հերոսներին և նրանց օգնությամբ ավելի լավ ենք ճանաչելու մեզ:

Այս դասին դու.

• Կվերհիշես ձայնավոր և բաղաձայն հնչյունները:

• Կլուծես նկարելուկներ:

• Ավելի լավ կճանաչես քեզ ու քո հույզերը:

• Կտեսնես, թե հերոսն ինչու է տերևի պես դողում:

vachagan.am

## Ո՞Վ ԵՄ ԵՍ

### ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ

④

Ես սիրում եմ
Ծնողներիս,
Ընկերներիս
Ու նաև ինձ,
Իմ խաղերը,
Մուլտֆիլմերը,
Նկարազարդ
Իմ գրքերը,
Տոն օրերի
Նվերները:

⑤

Զարմանում եմ
Ձրի վրա,
Որ հոսում է,
Այս փոքրիկի՝
Որ խոսում է:
Հիանում եմ
Ես ամպերով,
Որ գոռում են
Կայծակ տալով:

⑥

Ուրախ եմ ես,
Որ ձկան պես
Խոր ջրերում
Հայրիկիս հետ
Լողալ գիտեմ:
Ափ դուրս եկա՝
Տերևի պես
Դողալ գիտեմ:

### Հարցեր

1. Ինչի՞ մասին է պատմում բանաստեղծության հերոսը:
2. Ո՞ւմ և ի՞նչ է սիրում բանաստեղծության հերոսը:
3. Ինչի՞ վրա է նա.
   **ա)** զարմանում, **բ)** ուրախանում, **գ)** ինչո՞վ է հիանում:
   Կարդա՛ համապատասխան տողերը:
4. Դո՞ւ ինչի վրա ես.
   **ա)** զարմանում, **բ)** ուրախանում, **գ)** ժպտում, **դ)** ինչո՞վ ես հիանում:
5. Բանաստեղծության ո՞ր մասը քեզ դուր եկավ, ինչո՞ւ:

**ԱՇՔԻ ԱՌԱՋ**

*տերև*
*հիանալ*
*նկարազարդ*

11

**2.5.1. Աշխատանք գլխագրի շուրջ**

Բացատրելուց հետո ուսուցիչը կարդում է դասի «գլխագիրը»: Երեխաները լուռ հետևում են գլխագրի կետերին:

Հետագա դասերին երեխաները ինքնուրույն կկարդան գլխագրի կետերը, կարծիքներ կհայտնեն:

### 2.5.2. Աշխատանք նկարազարդման շուրջ: Կերպարվեստ

Շարունակենք ծանոթանալ մեր հերոսին: Ուշադիր դիտե՛ք նկարազարդումը: Ի՞նչ եք կարծում, է՞լ ինչի մասին է մեզ ուզում պատմել նա:

Երեխաները նկարազարդման դրվագների միջոցով կռահում են, թե ինչի մասին են բանաստեղծության հաջորդ մասերը, թե ինչի մասին է պատմում հերոսը:

Ցանկալի է աշխատանքը կազմակերպել փակ դասագրքերով՝ ցուցադրելով նկարների տպագիր կամ էլեկտրոնային տարբերակները, որպեսզի տեքստը չկաղապարի երեխայի երևակայությունը: Սա հիանալի միջոց կարող է դառնալ երեխաների երևակայության զարգացման, երևույթը նկարչական լեզվից բառայինի վերածման, կերպարվեստի արտահայտչամիջոցների ընկալումներ ձևավորելու և զարգացնելու, միջառարկայական կապեր ապահովելու համար: Հնարավոր են շատ տարբեր պատասխաններ, որոնք պետք է հիմնավորեն աշակերտները և խրախուսվեն ուսուցչի կողմից:

### 2.5.3. Բանաստեղծության ընթերցում

Բոլոր աշակերտները բանաստեղծությունն ընթերցում են լուռ և մեկ անգամ ևս նկարազարդման մասին իրենց կռահումները համեմատում տեքստի հետ: Ապա ուսուցիչը բանաստեղծությունն ընթերցում է բարձրաձայն, որին հետևում են բոլոր աշակերտները:

Այնուհետև ուսուցիչը՝ ցույց տալով QR-կոդը, երեխաներին առաջարկում է դիտել տեսահոլովակը: Ինչպես նախորդ տեսահոլովակում, այստեղ ևս տեսահոլովակը կառուցված է այնպես, որ մանկան յուրաքանչյուր ավարտված միտք ուղեկցվում է համապատասխան նկարազարդմամբ: Երեխաները համեմատում են իրենց պատկերացրածը տեսահոլովակում ներկայացրածի հետ, անում հետևություններ:

### 2.5.4. Աշխատանք տեքստի շուրջ

**Հարցերի և առաջադրանքների օրինակներ**

1. Նկարազարդման վերաբերյալ ձեր ո՞ր կանխագուշակումներն էին ճիշտ:
2. Ո՞ւմ և ի՞նչ է սիրում բանաստեղծության հերոսը: (Ծնողներին, ընկերներին, խաղեր, մուլտֆիլմեր, նկարազարդ գրքեր, տոն օրերի նվերներ)
3. Կարդա՛ համապատասխան տողերը:

ա) Ինչի՞ վրա է հերոսը զարմանում: (Զարմանում եմ ջրի վրա, որ հոսում է: Այս փոքրիկի, որ խոսում է)

բ) Ինչո՞վ է հերոսը հիանում: (Հիանում եմ ես ամպերով, որ գոռում են կայծակ տալով)

գ) Ինչի՞ց է հերոսն ուրախանում: (Ուրախ եմ ես, որ ձկան պես խոր ջրերում հայրիկի հետ լողալ գիտեմ)

• Դո՞ւ ինչի վրա ես զարմանում, ուրախանում, ժպտում, ինչո՞վ ես հիանում: (Երեխաները անկաշկանդ արտահայտում են իրենց հույզերը:)

• Քո կարծիքով, ի՞նչ կլինի, եթե մարդիկ դադարեն զարմանալ, սիրել, հիանալ: (Երեխաների երևակայությունը խթանող, փոքրիկ «սադրանք» պարունակող հարց է, որը երեխաներին հնարավորություն կտա արտահայտելու իրենց կարծիքը նման անհավատալի դեպքերում:)

• Բանաստեղծության ո՞ր մասը քեզ դուր եկավ, ինչո՞ւ: (Կարող են հնչել զանազան պատասխաններ: Պետք է լսել բոլոր պատասխաններն ու դրանց հիմնավորումները:)

### 2.5.5. Անդրադարձ «Աչքի առաջ» խորագրի բառերին

Այնուհետև անդրադառնում են «Աչքի առաջ» խորագրի բառերին (**տերև, հիանալ, նկարազարդ**):

Ուսուցիչը հիշեցնում է, որ դրանք արտասանությամբ և գրությամբ տարբեր բառեր են: Հանձնարարում է, որ դրանք գտնեն բանաստեղծության մեջ, որ դրանց կանդրադառնան՝ կատարելով առաջադրանք 3-ը:

### 2.5.6. Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ

**Առաջադրանք 1.** Կարդա՛ «Ձայնավորների երգը» և կատարի՛ր առաջադրանքները:

**ԵՐԳՈՂ ԲԱՌԸ**

Լինում է, չի լինում, մի բառ է լինում:

Այդ բառի տառերը ձանձրանում են լուռ մնալուց:

– Եկե՛ք երգենք,– ասում է տառերից մեկը:

– Ես երգել չգիտեմ,– տխուր ասում է թ-ն:

– Ինձ նման երգիր՝ ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ,– երգում է ու-ն:

– Թ՛, թ՛, թ՛, չէ՛, չեմ կարող:

– Մ՛, մ՛, մ՛,– փորձում է մ-ն:

– Բ՛, բ՛, բ՛,– փորձում է բ-ն:

– Կ՛, կ՛, կ՛,– փորձում է կ-ն:

– Բոլորդ էլ բաղաձա՛յն եք, չեք կարողանում երգել,– զայրանում է ու-ն:– Այս բառի մեջ ե՛ս եմ միակ ձայնավորը: Կարող եմ երգել՝ ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ:

Ո՞ր բառի տառերն էին փորձում երգել:



## Առաջադրանքներ

**1** Կարդա՛ «Ձայնավորների երգը» և կատարի՛ր առաջադրանքները:

**ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՐԳԸ**

Վեց եղբայր ենք ձայնավոր,
Բայց գրվում ենք ութ տառով,
ԱՅԲ, Է, ՈՒ, Օ, ԸԹ, ԻՆԻ:
Չեն կարող լինել բառեր պարզապես,
Առանց մեզ, առանց մեզ:

○ Երգից արտագրի՛ր այն բառերը, որոնց երկրորդ հնչյունը ձայնավոր է:

✧ Դո՛ւրս գրիր բազմավանկ բառերը և վանկատի՛ր:

☼ Երգի **վեց, եղբայր, ձայնավոր, բայց, գրվել, ութ, լինել, տառ, պարզապես, բառ, առանց** բառերը բաժանիր խմբերի: Բացատրի՛ր, թե ինչու այդպես բաժանեցիր:

**2**

vachagan.am

• Լուծելով նկարելուկները՝ գրի՛ր մանկան ընկերների անունները:

Օրինակ՝ **ան** = Վարդան:

1. **ան**
2. **իկ**
3.
4. **Ն**
5. **իկ**

6. **են**
7. **իկ**
8. **ո**
9. **Ա**

• Ալվարդ և Լուսինե անուններով կազմի՛ր նկարելուկներ:



Աշակերտները լուռ կարդում են «Ձայնավորների երգը» բանաստեղծությունը և վերհիշում, թե ինչ գիտեն ձայնավորի մասին: (Վեց հնչյուն են, 8 տառ, առանց ձայնավորի բառ չկա, բառի յուրաքանչյուր վանկ ունի մեկ ձայնավոր:)

Այնուհետև անցնում են առաջադրանքների կատարմանը:

Երգից արտագրի՛ր այն բառերը, որոնց երկրորդ հնչյունը ձայնավոր է:

Բանաստեղծությունից անհատապես դուրս են գրում բոլոր այն բառերը, որոնց երկրորդ հնչյունը ձայնավոր է (**վեց, ձայնավոր, բայց, գրվել, տառ, չեն, կարող, պարզապես, լինել, բառեր, մեզ**), համեմատում են ընկերոջ դուրս գրած բառերի հետ, հարկ եղած դեպքում լրացնում են իրենց բառերի շարքը: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչն ուշադրություն է դարձնում բաց թողած բառերի վրա, հարցադրումների օգնությամբ հայտնաբերում են այդ բառերը և դուրս գրում:

Դո՛ւրս գրիր բազմավանկ բառերը և վանկատի՛ր:

Երգի տեքստից ընտրում են բազմավանկ բառերը և վանկատում (**ձայ-նա-վոր-ներ, եղ-բայր, գրը-վել, կա-րող, պար-զա-պես, լի-նել, ա-ռանց, բա-ռեր**):

Բանաստեղծության **վեց, եղբայր, ձայնավոր, բայց, գրվել, ութ, լինել, տառ, պարզապես, բառ, առանց** բառերը բաժանիր խմբերի: Բացատրի՛ր, թե ինչու այդպես բաժանեցիր:

Բանաստեղծության **վեց, եղբայր, ձայնավոր, բայց, գրվել, ութ, լինել, տառ, պարզապես, բառ, առանց** բառերը բաժանում են խմբերի և բացատրում խմբավորման եղանակը:

Խմբերի բաժանման հիմքում կարող են լինել տարբեր հատկանիշներ:

Առարկաների որևէ խմբից որևէ հատկանիշով մասի առանձնացումը զարգացնում է երեխաների տրամաբանական մտածողությունը, երևակայությունը, առարկաների հատկանիշներն ընկալելու, առարկաներին հատկանիշներ վերագրելու նրանց կարողությունը:

Օրինակ, դուրս գրված բառերը կարելի է բաժանել երեք խմբի՝ միավանկ (**վեց, բայց, տառ, չեն, մեզ**), երկվանկ (**գրվում, կարող, լինել, բառեր**), եռավանկ (**ձայնավոր, պարզապես**) բառերի: Կամ չորս խմբի՝ երեքտառանի բառեր (**վեց, տառ, չեն, մեզ**), չորստառանի (**բայց**), հինգտառանի (**գրվել, կարող, լինել, բառեր**) և ութտառանի (**ձայնավոր, պարզապես**):

(Պետք է ընդունել նաև խմբերի բաժանման այն տարբերակները, որոնք երեխաները կառաջարկեն և ճիշտ կհիմնավորեն:)

**Առաջադրանք 2. Աշխատանք նկարելուկի շուրջ**

- Լուծելով նկարելուկները՝ գրի՛ր մանկան ընկերների անունները:
- Ալվարդ և Լուսինե անուններով կազմի՛ր նկարելուկներ:

Նկարելուկները նկարների, նշանների, տառերի, նրանց փոխադարձ դասավորության, գույների և պատկերավորման այլ միջոցներով ծածկագրված՝ այլ լեզվով գրված բառեր, բառակապակցություններ, նախադասություններ են: Նկարելուկ բառը կազմվել է **նկար և հանելուկ** բառերից:

Քանի որ նկարելուկն առաջին անգամ է հանդիպում աշակերտին այս դասագրքում, կարելի է աշխատանք տանել նաև պայմանանշանի շուրջ՝ հընթացս բացահայտելով նկարելուկներ կազմելու մի քանի պարզ միջոց:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է կռահումներ անել, գտնել, թե ինչ կապ կա պայմանանշանի և հասկացության (նկարելուկի) միջև: Աշակերտներն ասում են իրենց տարբերակները, հիմնավորում: Քննարկման արդյունքում գլխի են ընկնում, որ նկարելուկի պայմանանշանը հենց ինքը մի նկարելուկ է: Նախ տեսնում են, որ **նկար** բառը պատկերված է նկարով, իսկ ելակի նկարի մեջ գրվածը՝ **ա=ու**, նշանակում է, որ **ելակ** բառի **ա** տառը պետք է դարձնել **ու**՝ կստացվի **ելուկ**: Այսինքն՝ ստացվում է՝ **նկար + ելուկ = նկարելուկ**:

Այս աշխատանքից հետո երեխաները կարող են հեշտությամբ վերծանել նկարելուկները: Ուսուցիչն առաջարկում է ուշադիր դիտել նկարելուկները և գլխի ընկնել, թե ինչ անուններ են թաքնված նկարելուկներում: Աշակերտներն ասում են իրենց տարբերակները և հիմնավորում: Քննարկման արդյունքում երեխաների օգնությամբ վերծանվում են մանկան ընկերների անունները. **Վարդան, Արևիկ, Մեխակ, Նվարդ, Խաչիկ, Սուրեն, Աստղիկ, Սարո, Անուշ:**

Ըստ ներկայացված նկարելուկների՝ երեխաները հեշտությամբ կարող են կազմել նկարելուկներ Ալվարդ և Լուսինե անուններով.

Ալ և ե

Ուսուցիչն ասում է, որ կա այս առաջադրանքի էլեկտրոնային տարբերակը, որտեղ մանրամասն ներկայացված են նրանով աշխատելու բոլոր փուլերը:

### 2.5.7. «ԱՆՈՒՆՆԵՐ» էլեկտրոնային առաջադրանք

Էկրանին երևում է դասագրքի էջ 12-ի առաջադրանք 2-ը:

Կտացնելով որևէ նկարելուկի վրա՝ բացվում է չորս անուն: Խաղացողը պետք է ընտրի ճիշտ անունը: Ճիշտ ընտրելու դեպքում անունը կապույտ գույնով գրվում է նկարելուկի կողքին: Սխալ անուն ընտրելու դեպքում անունը կարմրում է, և խաղը սկսվում է նորից:

Ենթադրենք աշակերտը սեղմում է 1-ին նկարելուկի պատուհանիկին: Այդ դեպքում բացվում են չորս պատուհանիկներ՝ **Ալվարդ, Վարդուհի, Վարդան, Վարդգես**: Աշակերտը պետք է ընտրի ճիշտ պատասխանը՝ **Վարդան**:

Այսպես բոլոր նկարելուկների դեպքում:

3 Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով **տերև**, **հիանալ**, **նկարազարդ** բառերը:

4 Խմբավորի՛ր առարկաների անունները և լրացրո՛ւ աղյուսակը:

vachagan.am

| Ձայնավորով սկսվող | Բաղաձայնով սկսվող |
|---|---|
| ուղղաթիռ | սուզանավ |
| | |

Ուրիշ ի՞նչ խմբերի կարող ես բաժանել փոխադրամիջոցները: Հիմնավորի՛ր բաժանումը: Ո՞ր փոխադրամիջոցից ես օգտվել դու:

5 Մնջախաղով ցո՛ւյց տվեք նախորդ առաջադրանքում պատկերված փոխադրամիջոցները:

6 ԱՇԽԱՏԱՆՔ ՕՐԱԳՐՈՒՄ

- Լրացրո՛ւ «Բարև, ես եմ» օրագիրը:

| Հերոսը | Ես |
|---|---|
| Սիրում է _____ | Սիրում եմ _____ |
| Զարմանում է _____ | Զարմանում եմ _____ |
| Հիանում է _____ | Հիանում եմ _____ |
| Ուրախանում է _____ | Ուրախանում եմ _____ |
| 5 | 6 |

- Ի՞նչ նմանություն կա քո և բանաստեղծության հերոսի միջև:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

1. Ես կարող եմ պատմել _____ մասին:
2. Ես իմացա, որ _____:
3. Հերոսն ինձ օգնեց, որ ես _____:

13

**Առաջադրանք 3.** Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով **տերև, հիանալ, նկարազարդ բառերը:**

Այս բառերը «Աչքի առաջ» խորագրի բառերն են: Առաջադրանքը կնպաստի դրանց ճիշտ գրության ամրապնդմանը:

**Նախադասությունների օրինակներ:**

Աշնան տերևները գույնզգույն են:
Ծառից ընկավ վերջին տերևը:
Տերևին նստեց մի թիթեռ:

Ես հիանում եմ իմ դասագրքով:
Մայրիկս ասաց, որ հիանում է ինձնով:
Արամը հիանում է իր նոր հեծանիվով:

Մեր դասագիրքը նկարազարդ է:
Նկարազարդ գրքեր սիրում եմ:
Այս շենքի մի պատը նկարազարդ է:

**Առաջադրանք 4.** Խմբավորի՛ր առարկաների անունները և լրացրո՛ւ աղյուսակը:

• Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները. ձայնավորով սկսվողները մի սյունակում, բաղաձայնով սկսվողները՝ մյուս:
• Ուրիշ ի՞նչ խմբերի կարող ես բաժանել փոխադրամիջոցները:
• Հիմնավորի՛ր բաժանումը:
• Ո՞ր փոխադրամիջոցից ես երբևէ օգտվել դու:

Երեխաներն այս առաջադրանքով ամրապնդում են ձայնավոր, բաղաձայն հնչյունների իրենց իմացությունը, առարկաները խմբերի բաժանելու իրենց կարողությունը, սովորում և ամրապնդում են ժամանակակից փոխադրամիջոցների անվանումներ (**ուղղաթիռ, գնացք, ավտոբուս, նավակ, ինքնաթիռ, սուզանավ**):

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է առաջադրանքի կողքին դրված QR-կոդին և նշում, որ կա առաջադրանքի էլեկտրոնային տարբերակը, որը հետաքրքրաշարժ մի խաղ է: Ցանկացողները կարող են խաղալ և առավել մանրամասն ծանոթանալ առարկաները խմբերի բաժանելու հետաքրքրաշարժ միջոցների, ինչպես նաև մանրամասներ իմանալ տվյալ առարկաների վերաբերյալ:

### 2.5.8. «ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ» էլեկտրոնային առաջադրանք

Էկրանի ձախ անկյունում գրված են խաղի անունը և դասագրքի էջն ու առաջադրանքի համարը՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ՝ էջ 13(4):

Էկրանին բացված նկարում տեսնում ենք՝ ուղղաթիռ, ավտոբուս, ինքնաթիռ, գնացք, սուզանավ և նավակ:

Տրված է պայմանը՝ «Խմբավորի՛ր առարկաների անունները և լրացրո՛ւ աղյուսակը»: Կապույտ պատուհանիկում գրված է. «Դիտե՛լ օրինակը»:

Խաղացողը՝ սեղմելով այդ պատուհանիկին, բացում է խաղի ցուցադրական օրինակը: Փակելով ցուցադրությունը՝ վերադառնում է խաղին:

Կանաչ պատուհանիկում գրված է. «Սկսել սկզբից»: Եթե խաղացողը խաղի որևէ դրվագից ուզում է հետ վերադառնալ սկիզբ, ապա սեղմում է այդ վանդակը:

Վանդակներից ներքև աղոտ երևում է ինչ-որ մի տող, որի ամենաձախ մասում պարզ երևում է «Ձայնավորով սկսվող-բաղաձայնով սկսվող» գրությունը: Սա ցույց է տալիս, որ տվյալ պահին փոխադրամիջոցները պետք է բաժանել ըստ այդ հատկանիշի: Դա գրված է նաև ներքևի կապույտ պատուհանիկում:

Խաղացողը, մկնիկով բռնելով որևէ փոխադրամիջոց, նրան իջեցնում է ներքևի կապույտ գծապատկերի տակ: Գծապատկերի տակ բացվում է գորշ պատուհանիկ, որի մեջ էլ թողնվում է փոխադրամիջոցը: Փոխադրամիջոցի անունը գրվում է գծապատկերի տակ: Եթե ճիշտ տեղում է տեղադրված, խաղը շարունակվում է, եթե ոչ, ապա լսվում է արգելող ձայնանշան, և փոխադրամիջոցը վերադառնում է իր տեղը: Եթե բոլոր փոխադրամիջոցները ճիշտ են տեղադրվում, ապա Գծապատկեր – աղյուսակն ունենում է հետևյալ տեսքը.

| Ձայնավորով սկսվող | Բաղաձայնով սկսվող |
|---|---|
| Ուղղաթիռ | նավակ |
| ավտոբուս | գնացք |
| ինքնաթիռ | սուզանավ |

Նշենք, որ տվյալ սյունակում կարևոր չեն փոխադրամիջոցների տեղերը, այսինքն՝ «Ձայնավորով սկսվող» սյունակի տակ փոխադրամիջոցները կարող են գրվել ցանկացած հերթականությամբ՝ (ուղղաթիռ, ավտոբուս, ինքնաթիռ), (ուղղաթիռ, ինքնաթիռ, ավտոբուս), (ինքնաթիռ, ավտոբուս, ուղղաթիռ), (ինքնաթիռ, ուղղաթիռ, ավտոբուս), (ավտոբուս, ինքնաթիռ, ուղղաթիռ), (ավտոբուս, ուղղաթիռ, ինքնաթիռ): Նույնը՝ աջ սյունակի դեպքում:

Երբ բոլոր փոխադրամիջոցները ճիշտ տեղավորվել են իրենց վանդակներում, երկար տողի ձախ կողմում ակտիվանում է «Երկվանկ-եռավանկ» խորագիրը, որի վրա կտացնելով, խաղացողը պետք է փոխադրամիջոցները բաժանի ըստ այդ հատկանիշի՝ (գնացք, նավակ), (ուղղաթիռ, ավտոբուս, սուզանավ, ինքնաթիռ):

| Երկվանկ | Եռավանկ |
|---|---|
| նավակ | ուղղաթիռ |
| գնացք | ինքնաթիռ |
| | ավտոբուս<br>սուզանավ |

Ճիշտ բաժանելուց հետո տողում ակտիվանում է «Անիվներ ունեցող-անիվներ չունեցող» խորագիրը:

| Անիվներ ունեցող | Անիվներ չունեցող |
|---|---|
| գնացք | նավակ |
| ավտոբուս | ուղղաթիռ |
| ինքնաթիռ | սուզանավ |
| | տիեզերանավ |
| | առագաստանավ |

Ճիշտ բաժանելուց հետո՝ (գնացք, ավտոբուս, ինքնաթիռ), (ուղղաթիռ, սուզանավ, նավակ), բացվում է «Օդային-ցամաքային-ջրային» խորագիրը: Ճիշտ լրացնելուց հետո ստացվում են (ուղղաթիռ, ինքնաթիռ), (գնացք, ավտոբուս) և (սուզանավ, նավակ) խմբերը:

| Օդային | Ցամաքային | Ջրային |
|---|---|---|
| ինքնաթիռ | գնացք | նավակ |
| ուղղաթիռ | ավտոբուս | սուզանավ |

**Առաջադրանք 5.** Մնջախաղով ցո՛ւյց տվեք նախորդ առաջադրանքում պատկերված փոխադրամիջոցները:

Երեխաները մնջախաղով ցույց են տալիս գնացքը, ուղղաթիռը, ավտոբուսը, սուզանավը, նավակը, ինքնաթիռը: Տվյալ դեպքում նրանք ցույց են տալիս առարկայի էական հատկանիշները հասկանալի ժեստերով, մարմնի շարժումներով՝ զարգացնում են իրենց երևակայությունը, դիմացինին որևէ բան հասկանալի բացատրելու ունակությունները: Պակաս կարևոր չէ նաև ուրախ տրամադրությունը:

**2.5.9. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրի 5-րդ, 6-րդ էջերի շուրջ**

- Լրացրո՛ւ «Բարև՛, ես եմ» օրագիրը:

| **Հերոսը** | **Ես** |
|---|---|
| Սիրում է _____ | Սիրում եմ _____ |
| Զարմանում է _____ | Զարմանում եմ _____ |
| Հիանում է _____ | Հիանում եմ _____ |
| Ուրախանում է _____ | Ուրախանում եմ _____ |

- Ի՞նչ նմանություն կա քո և բանաստեղծության հերոսի միջև:

(Հերոսն օգնեց, որ ավելի լավ ճանաչես քեզ, պատմես, թե ինչ ես սիրում, ինչից ես զարմանում, ինչով ես հիանում, ուրախանում:

Այսուհետև կարող ես ավելի ուշադիր լինել քո և քեզ շրջապատող մարդկանց ու երևույթների նկատմամբ:)

**2.5.10. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)**

Դասի ավարտին կատարվում են հետահայաց վերլուծություն, կատարված աշխատանքների վերհիշում ու գնահատում:

1. Ես կարող եմ պատմել _____ մասին:
2. Ես իմացա, որ _____:
3. Հերոսն ինձ օգնեց, որ ես _____:

Կարելի է.

- Աղյուսակը բազմացնել դասագրքից և բաժանել աշակերտներին,
- Լրացնել աշխատանքային տետրում:

Երեխաները պետք է անհատապես լրացնեն աղյուսակը: Հարկավոր է նկատի ունենալ, որ առաջադրանքի հարցերը աստիճանաբար բարդանում են, տարբեր երեխաներ կարող են տարբեր քանակի հարցերի պատասխանել:

Ըստ անհրաժեշտության, ուսուցիչը կարող է անհատապես օգնել և ուղղորդել աշակերտներին:

Կարող են լինել նմանատիպ պատասխաններ.

- Ես կարող եմ պատմել իմ և իմ հույզերի (հերոսի, ընկերների) մասին:
- Ես իմացա, որ նկարելուկներով կարելի է գրել անուններ:
- Հերոսն ինձ օգնեց, որ ես ճանաչեմ ինձ ու իմ ընկերներին:

## 2.6. ՈՎ ԵՄ ԵՍ

**ԵՍ ՔԱՋ ԵՄ**

**2.6.1. Անդրադարձ «Բարև՛, ես եմ» օրագրերին**

**Դասի սկզբում** անդրադարձ է կատարվում «Բարև՛, ես եմ» օրագրերին:

Ուսուցչի առաջարկով աշակերտներն օրագրում լրացված պատասխաններից ընտրում են որևէ մեկը, որն ամենաշատը կցանկանային ներկայացնել դասարանին, գրում են կպչուն թղթին, ներքևում նշում են իրենց անունը, կարդում են բարձրաձայն և փակցնում գրատախտակին նախապես գծված սյունակներից մեկում:

| Սիրում եմ | Ուրախանում եմ | Հիանում եմ | Զարմանում եմ |
|---|---|---|---|
| | | | |

Ուսուցիչը նախապես հրահանգում է աշակերտներին, որ նրանք ուշադիր հետևեն ընկերների պատասխաններին՝ նմանությունները, համընկումները պարզելու համար: Աշխատանքի ավարտին ուսուցիչը կատարում է ընդհանրացումներ:

Այս աշխատանքով խորանում է աշակերտների ինքնաճանաչումը, միաժամանակ նպաստավոր պայմաններ են ստեղծվում միմյանց ավելի լավ ճանաչելու, մտերմանալու համար:



ԳՐԱԳԱՐԱԿ

ՎԱՀԱԳՆԻ ԿԱՏՈՒՆ

Վահագնն ասաց. «Մեր բակում
Ես տեսել եմ մեծ կատու»:
– Որքա՞ն էր մեծ կատուն քո,–
Ասաց Անին ժպտալով:
– Ամեն աչքը՝ մի կարապ,
Պոչը՝ երկար, ձիգ պարան,
Ամեն ոտքը՝ մի գերան,
Ուներ շան չափ մեծ բերան:
Ականջները գորգի չափ,
Գլուխ ուներ հորթի չափ,
Բայց ինչքան էլ ջանում էր,
Քամին քշում-տանում էր:
– Վա՜յ,– ծիծաղեց ժիր Անին,–
Դու տեսել ես իմ կատվին,
Ես եմ նրան նկարել,
Իմ ձեռքից էր նա փախել:

Այս դասին դու.

• Կամրապնդես ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին քո գիտելիքները:

• Կհասկանաս, որ սխալները կարելի է շտկել:

• Կբացահայտես, թե որքան կարևոր է, երբ ճանաչում ես քեզ և շրջապատի մարդկանց:

• Կիմանաս, թե քաջ տղան որ թռչող կենդանուց է վախենում:

vachagan.am

## Ո՞Վ ԵՄ ԵՍ

### ԵՍ ՔԱՋ ԵՄ

7

Թեև քաջ եմ
Ծնված օրից,
Բայց վախ ունեմ
Էս տզտզան
Մոծակներից:



8

Մեկ էլ կարծես
Վախենում եմ,
Թե ես սխալ
Մի բան կանեմ:
Էլ ի՞նչ ասեմ՝
Ամաչում եմ
Վատ, խռովկան
Իմ բառերից:
Պաշտպանում եմ
Իմ քույրիկին,
Մեկ էլ փոքրիկ
Իմ շնիկին:

9

Նաև շատ եմ
Ես զայրանում,
Երբ ոչ մեկն ինձ
Չի հասկանում:

10

Ես տխրում եմ,
Որ մեծերը
Մե՞ծ են արդեն,
Իսկ ես այսքա՞ն
Փոքրիկ եմ դեռ:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*թեև*

*նաև*

*պաշտպանել*



**2.6.2. Աշխատանք գլխագրի շուրջ**

Ուսուցչի հորդորով երխաները լուռ կարդում են «Գլխագրի» կետերը: Այնուհետև քննարկում են կարդացածը: Բացահայտում են իրենց գիտելիքները ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին: Ներկայացնում են, թե ինչ են հասկանում **սխալվել** և **սխալը շտկել, ուղղել** ասելով:

Քննարկում են, թե ինչ է նշանակում մարդկանց ճանաչել:

Առաջին կետի վերաբերյալ երեխաները ներկայացնում են իրենց կարծիքները: Երկրորդ կետը խնդրահարույց է. նախ՝ պետք է պարզել, թե ինչ է սխալը, այնուհետև կարծիք հայտնել դա շտկելու մասին:

Երրորդ կետով երեխաները պարզում են, թե ինչ է նշանակում ճանաչել մարդկանց, արտահայտում են իրենց կարծիքը:

Չորրորդ կետը «սադրանք» պարունակող կետ է և խթան է բանաստեղծությունը կարդալու համար:

### 2.6.3. Աշխատանք դասի նկարազարդման շուրջ

Մինչև բանաստեղծության ընթերցումը ուսուցիչն աշակերտների ուշադրությունը կարող է հրավիրել էջի նկարազարդումների վրա՝ հանձնարարելով, որ նրանք ուշադիր դիտեն նկարազարդումները, պատմեն, թե ինչ է անում հերոսը տարբեր դրվագներում, ինչ է զգում:

Աշակերտները ուշադիր դիտում են նկարները, պատմում, հայտնում իրենց կարծիքները և հիմնավորում:

Առաջին կատակ նկարում պատկերված է, թե ինչպես է բանաստեղծության «քաջ» հերոսը մենամարտում ոչ պակաս «քաջ» մոծակների դեմ:

Երկրորդ նկարում պատկերված է ֆուտբոլային խաղի մի դրվագ: Երեխաների ուշադրությունը հրավիրելով նկարի վրա՝ ուսուցիչը հարցնում է, թե ինչ սխալ է կատարել «Վան» թիմի ֆուտբոլիստը: Այդ ֆուտբոլիստը սխալմամբ գնդակն ուղարկել է սեփական դարպասը: Անդառնալի՞ սխալ է, թե՞ հնարավոր է շտկել: Երեխաների պատասխանները լսելուց հետո կարելի է ընդհանրացնելով ասել, որ երկու դեպքն էլ հնարավոր է: Սակայն ֆուտբոլիստը չի վհատվում, սկսում է ավելի լավ խաղալ, ուժերի գերագույն լարումով փորձում է շտկել իր սխալը, որը ոչ միայն իրեն է վնաս բերել, այլև ամբողջ թիմին և թիմի երկրպագուներին:

Երրորդ նկարում բանաստեղծության հերոսը զայրանում է, որ իրեն ոչ ոք չի հասկանում: Ինքը քանդակել է մի այնպիսի բան, որ ոչ ոք չի հասկանում քիչ է, դեռ մի բան էլ ծիծաղում են իր վրա: Բայց հերոսն այնքան էլ չպետք է զայրանա, պետք է կամ լավ բացատրի, թե ինչ է քանդակել, ինչու է այդպես քանդակել, կամ էլ հետևություններ անի մի ուրիշ քանդակ անելիս:

Չորրորդ նկարում հերոսը տխրում է, որ ինքը դեռևս փոքր է ու չի կարող մեծերի նման աստղագնացի հանդերձանք հագնել ու աստղագնացով սլանալ տիեզերք: Պետք չէ շտապել, հարկավոր է լավ սովորել, մարզվել, ուժեղ դառնալ հոգով ու մարմնով:

### 2.6.4. Աշխատանք տեքստի շուրջ

Բանաստեղծության բարձրաձայն ընթերցում:

Աշակերտները նկարազարդման շուրջ իրենց կռահումները համեմատում են տեքստի հետ:

Այնուհետև դիտում են դասի տեսահոլովակը, որտեղ փոքրիկը արտասանում է բանաստեղծությունը, իսկ բանաստեղծության նկարազարդման դրվագները երևում են էկրանին:

**2.6.5. Հարցերի և առաջադրանքների օրինակներ**

- Ի՞նչ նոր բան իմացար հերոսի մասին: (Իմացա, թե նա ինչից է վախենում, ամաչում, ում է պաշտպանում, ինչից է զայրանում, տխրում)
- Ինչի՞ց է բանաստեղծության հերոսը վախենում, ամաչում (Մոծակներից, սխալ բան անելուց)
- Ինչի՞ վրա է, զայրանում: (Զայրանում է, որ ոչ մեկը իրեն չի հասկանում)
- Դո՞ւ ինչ ես անում, երբ թվում է, թե քեզ չեն հասկանում: (Երեխաները անկաշկանդ ներկայացնում են, թե ինչպես են իրենք վարվում, երբ իրենց չեն հասկանում՝ տխրում են, բողոքում են, փորձում են բացատրել, և այլն)
- Ո՞ւմ է պաշտպանում: (Քույրիկին, շնիկին)
- Ինչո՞ւ է հերոսը պաշտպանում շնիկին և քույրիկին: (Որովհետև հերոսը սիրում է նրանց, իրեն մեծ է համարում, ցանկանում է օգտակար լինել, և այլն)
- Ինչի՞ց է տխրում հերոսը: (Տխրում է, երբ իրեն փոքրիկ են համարում)
- Է՞լ ում կամ ինչը կարելի է պաշտպանել: (Թույլերին, անօգնականներին, ընկերներին, հարազատներին, տունը, հայրենիքը, բնությունը, կենդանիներին, և այլն)
- Քո կարծիքով՝ հերոսը մե՞ծ էր, թե՞ փոքրիկ: (Մեծ էր, որովհետև քաջ էր ու շատ բան էր կարողանում անել, պաշտպանում էր շատերին, փոքր էր, որովհետև մեծերը իրեն փոքր էին համարում, որովհետև ինքը դեռ չի կարողանում մենակ դպրոց գնալ, և այլն)

**2.6.6. Խաղ «Գուշակի՛ր հույզը»**

*Խաղի նպատակը:* Ծանոթացում բանաստեղծության մեջ ներկայացված ***զայրույթ, զարմանք, ամոթ, վախ, տխրություն, ուրախություն*** հույզերի արտաքին դրսևորումներին:

Մեթոդականում տեքստի շուրջ հարցերն ավելի շատ են, քան դասագրքում: Ուսուցիչը կարող է շատ հարցեր ընտրել՝ կախված դասարանի առանձնահատկություններից, ուսուցչի առջև դրված խնդիրներից:

*Խաղի ընթացքը:* Ուսուցիչը նախապես հույզ արտահայտող վեց բառերը՝ ***զայրույթ, զարմանք, ամոթ, վախ, տխրություն, ուրախություն,*** գրում է թղթե առանձին շերտիկների վրա, ծալում է և դնում արկղիկի մեջ:

Ուսուցիչն ընտրում և արկղիկի մոտ է հրավիրում այն աշակերտներին, ովքեր կարող են մնջախաղով արտահայտիչ ցուցադրել հույզը, որպեսզի դասընկերները կարողանան հեշտությամբ կռահել:

*Մնջախաղի հիմնական արտահայտչամիջոցներն են դիմախաղը, մարմնի շարժումները, ժեստերը: Մնջախաղը ուղեկցել է մարդկությանը հնագույն ժամանակներից: Մնջախաղով հնարավոր է ձևավորել ու զարգացնել երեխաների երևակայությունը, հույզերը ճիշտ արտահայտելու կարողությունը, զարգացնել ու ամրապնդել միմյանց հետ հաղորդակցվելու հմտությունները, բարձրացնել երեխաների ինքնագնահատականը: Մնջախաղով երեխաները կարող են ցուցադրել իրենց քաջածանոթ, պարզ հույզերն ու զգացմունքները՝ վախ, ուրախություն, տխրություն, զարմանք և այլն:*

Նրանցից յուրաքանչյուրն արկղիկից հանում է բառերից մեկը և մնջախաղով ցույց է տալիս, թե ինչ հույզ է անվանում այդ բառը: Դասարանի մյուս աշակերտները փորձում են կռահել ներկայացվող հույզը:

Ուսուցիչը հետևում է, որ երեխաները իրենց կռահումները բարձրաձայնեն հույզի ցուցադրումն ավարտելուց հետո միայն:

Գուշակելուց հետո շերտիկները փակցվում են գրատախտակին: Ուսուցչի առաջարկով աշակերտները բանաստեղծությունից ընտրում են և կարդում այն տողերը, որոնցում պատմվում է այդ հույզերի մասին:

*Ամփոփում*: Խաղի ավարտին երեխաները պարզում են, թե ներկայացված հույզերից որոնք չկային բանաստեղծության այս հատվածի մեջ:

Ուսուցչի ուղղորդմամբ երեխաները հասկանում են, որ ***զայրույթ, զարմանք, ուրախություն, ամոթ, վախ, տխրություն*** հույզերը կարելի է ներկայացնել, նկարագրել բառերով՝ ինչպես բանաստեղծության մեջ է, ներկայացնել նկարներով՝ ինչպես նկարազարդման մեջ է արված և կարելի է ներկայացնել, ցույց տալ դիմախաղով ու շարժումներով, ինչպես մնջախաղում ցույց տվեցին երեխաները:

### 2.6.7. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Այնուհետև ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է «Աչքի առաջ» խորագրի՝ **թեև, նաև**, **պաշտպանել** բառերի վրա: Առաջարկում է, որ երեխաները բանաստեղծության մեջ գտնեն այդ բառերը և կարդան բանաստեղծության համապատասխան հատվածը: Ուսուցիչն աշակերտներին տեղեկացնում է, որ այդ բառերին իրենք դեռևս կանդրադառնան՝ կատարելով 15-րդ էջի առաջադրանք 2-ը:

Այսինքն՝ տեքստի յուրացման նպատակով կազմակերպվում են տարաբնույթ ուսումնական աշխատանքներ՝ տեսահոլովակի դիտում, նկարազարդման պատմում, մեկնաբանում, հույզերի ներկայացում և գուշակում, նկարազադման և բանաստեղծության համապատասխան տողերի կապի բացահայտում, բանաստեղծության հատվածների բարձրաձայն ընթերցում, «Աչքի առաջ» խորագրի բառերը պարունակող հատվածների առանձնացում և ընթերցում: Այս աշխատանքները լավագույն հնարավորություն են ստեղծում բոլոր աշակերտներին ուսումնական գործընթացում ներգրավելու համար:

## Հարցեր

1. Ի՞նչ նոր բան իմացար հերոսի մասին:
2. Տեքստից ընտրի՛ր և կարդա՛, թե հերոսը.
   - ինչից է վախենում,
   - ինչից է ամաչում,
   - երբ է զայրանում,
   - երբ է տխրում:
3. Բանաստեղծության 8-րդ մասի նկարագրման մեջ փոքրիկն ինչպե՞ս է սխալվել:
4. Ինչո՞ւ է հերոսը պաշտպանում շնիկին և քույրիկին:
5. Էլ ո՞ւմ կամ ի՞նչը կարելի է պաշտպանել:

## Առաջադրանքներ

1 Բանաստեղծության հատվածները համեմատի՛ր համապատասխան նկարագրությունների հետ: Քննարկի՛ր ընկերոջդ հետ:

2 Լրացրո՛ւ նախադասություններն ըստ նկարների՝ օգտագործելով **թեև, նաև, պաշտպանել** բառերը:

... դժվար էր, բայց _____ :

Կարելի է ... այսպես _____ :

Դարպասապահը ... _____ :

3

○ Տեքստից դո՛ւրս գրիր 3 բառ, որոնք ունեն մեկ ձայնավոր հնչյուն:

✧ Հաշվի՛ր քո գրած բառերի հնչյունների և տառերի քանակները:

✡ Գրի՛ր բառեր, որոնք ունեն.
   - մեկ ձայնավոր և մեկ բաղաձայն,
   - մեկ ձայնավոր և երկու բաղաձայն,
   - մեկ ձայնավոր և երեք բաղաձայն:

15

### 2.6.8. Աշխատանք լեզվական առաջադրանքների շուրջ

**Առաջադրանք 1**. Համեմատի՛ր բանաստեղծության երկրորդ հատվածն ու համապատասխան նկարագրությունը՝ քննարկելով ընկերոջդ հետ:

- Ի՞նչ կա բանաստեղծության հատվածում, որը չի արտացոլված նկարազարդման մեջ:
- Ի՞նչ կա նկարազարդման մեջ, որ չկա բանաստեղծության մեջ:

Աշակերտներն ընթերցում են և տեսնում, որ բանաստեղծության հերոսը վախենում է սխալ բան անելուց, ամաչում է իր խոռվկան բառերից, պաշտպանում է քույրիկին և շնիկին: Իսկ նկարազարդման դրվագում ներկայացված է այն պահը, երբ հերոսը սխալմամբ իր թիմին է գոլ խփել:

**Առաջադրանք 2:** Լրացրո՛ւ նախադասություններն ըստ նկարների՝ օգտագործելով ***թեև, նաև, պաշտպանել*** բառերը:

Աշակերտները, օգտվելով նկարներից և գծապատկերներից, կարող են կազմել տարբեր նախադասություններ նույն նկարի վերաբերյալ: Օրինակ.

**Թեև դժվար էր, բայց մայր ճնճղուկը պաշտպանեց ձագուկին:**
**Թեև դժվար էր, սակայն մայր ծիտը քշեց կատվին:**
Եվ այլն:
**Կարելի է նաև այսպես նայել հայելու մեջ:**
**Կարելի է նաև այսպես մարզվել:**
Եվ այլն:
**Դարպասապահը պաշտպանում է դարպասը:**
**Դարպասապահը չկարողացավ պաշտպանել դարպասը:**
Եվ այլն:

**Առաջադրանք 3.**

Տեքստից դու՛ր գրիր 3 բառ, որոնք ունեն մեկ ձայնավոր հնչյուն: (Քաջ, վախ, շատ, բայց, մեկ, մեծ, իսկ, դեռ, և այլն)

Հաշվի՛ր քո գրած բառերի հնչյունների և տառերի քանակները: (Բոլոր բառերն ունեն 3 հնչյուն, 3 տառ)

Գրի՛ր բառեր, որոնք ունեն՝

- մեկ ձայնավոր և մեկ բաղաձայն (**օր, բու, ձու, սա, նա, ձի, էշ,** և այլն),
- մեկ ձայնավոր և երկու բաղաձայն (**տուն, շուն, գետ, հող,** և այլն),
- մեկ ձայնավոր և երեք բաղաձայն (**գունդ, գործ, փորձ, հերթ,** և այլն):

4 Ուշադի՛ր դիտիր նկարները.

- ո՞ր դրվագում հերոսն ինչպե՞ս է սխալվել,
- ինչպե՞ս է ուղղել իր սխալը,
- հարցե՛ր տուր հերոսներին և իմացի՛ր, թե ինչու նրանք սխալվեցին:

- Դու ի՞նչ ես անում, երբ սխալվում ես:

Սխալվեցի՞ր, մի՛ վախեցիր, դասե՛ր քաղիր*, առա՛ջ անցիր:

5 Մնջախաղով ցո՛ւյց տվեք հերոսի զայրույթը, ամոթը, վախը, տխրությունը:

6 ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

vachagan.am

Քա՞ջ եմ, թե՞ քաջ չեմ,
Օոծրակիս մոտի
Էս մեծ մոծակից
Փախչե՞մ, չփախչե՞մ:

Արտագրի՛ր շուտասելուկը: Դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

* **Դասեր քաղել** – խրատվել, անհրաժեշտ հետևություն անել:

16

**Առաջադրանք 4.** Ուշադիր դիտի՛ր նկարները: Ո՞ր դրվագում հերոսն ինչպե՞ս է սխալվել և ինչպե՞ս է ուղղել իր սխալը:

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին ուշադիր դիտել նկարները և պատմել, թե ինչի մասին են նկարները, ինչ է պատկերել նկարիչը: Արդյո՞ք կապ կա նկարաշարի

և բանաստեղծության տողերի միջև: Ուսուցիչը աշակերտների մասնակցությամբ պարզում է, որ նկարաշարի յուրաքանչյուր նկար կազմված է երկու դրվագից. մի դրվագում գործած սխալն է, մյուսում՝ այդ սխալի հանդեպ դրսևորած վերաբերմունքը:

Նկարաշարում պատկերված սխալները շտկելի են, ուղղելի, դրանք սովորեցնում են ճիշտ դրսևորել մեզ համապատասխան իրավիճակներում, օգնում են, որ մենք հասկանանք, թե ինչպես վերաբերվենք մեր սխալներին, չկրկնենք դրանք և ինչպես կարգավորենք մեր վարքը:

Առաջին նկարազույգում պատկերված է երկու դրվագ: Առաջին դրվագում աշակերտը սխալ է լուծել թվաբանական վարժությունը: Երկրորդ դրվագում ուղղել է սխալը և ժպտում է:

Երկրորդ նկարազույգի առաջին դրվագում հեծանվորդը չի նկատել «Փակուղի» նշանը և թեքվել է ձախ: Սակայն շատ արագ հասկացել է, որ սխալվել է: Երկրորդ դրվագում նա վերադարձել է և շարունակում է հեծանվավազքը ճիշտ ուղղությամբ:

Սակայն պետք է հիշել, որ կան անդառնալի սխալներ, որոնցից պետք է անպայման խուսափել:

Այնուհետև ուսուցիչը կազմակերպում է քննարկում հետևյալ հարցի շուրջ.

*– Դո՞ւ ինչ ես անում, երբ սխալվում ես:*

Աշակերտներն ազատ, անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը և քննարկում: Գալիս են այն եզրակացության, որ կան այնպիսի սխալներ, որոնցից եթե չի հաջողվում խուսափել, ապա պետք չէ վհատվել, վախենալ: Պարզապես պետք է դասեր քաղել, հնարավորության դեպքում ուղղել և աշխատել հետագայում չանել նման սխալներ:

Քննարկումն ամփոփվում է դասագրքում գրված մտքի ընթերցմամբ:

**Սխալվեցի՞ր՝ մի՛ վախեցիր, դասե՛ր քաղիր, առա՛ջ անցիր:**

**Առաջադրանք 5.** Մնջախաղով ցո՛ւյց տվեք հերոսի զայրույթը, ամոթը, վախը, տխրությունը:

Առաջադրանքը կարելի է կատարել խմբային աշխատանքի միջոցով: Երեխաներին բաժանվում են խմբերի. յուրաքանչյուր խումբ ընտրում է իր ներկայացուցչին, որը մյուս խմբերի համար ցուցադրում է ներկայացված հույզերը:

### 2.6.9. Աշխատանք շուտասելուկի շուրջ

**Առաջադրանք 6.** Արտագրի՛ր շուտասելուկը: Դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր շուտասելուկը:

**ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ**
**Քա՞ջ եմ, թե՞ քաջ չեմ,**
**Ծոծրակիս մոտի**
**Էս մեծ մոծակից**
**Փախչե՛մ, չփախչե՛մ:**

Շուտասելուկները զվարճանքի համար ստեղծված կատակային ժանրի ստեղծագործություններ են (նախադասություն, ասույթ, չափածո երկտող) և հորինվում են այնպես, որ արագ-արագ արտասանելու դեպքում բառերն աղավաղվում են կամ խառնվում՝ զվարթություն ու ծիծաղ առաջացնելով ունկնդիրների մեջ: Շուտասելուկները նաև զարգացնում են արտասանական ապարատը, այն դարձնում առավել կատարյալ և ճկուն:

Աշակերտները կարդում են շուտասելուկը, սովորում անգիր, աշխատում են արտասանել ճիշտ և արագ, ինչն էլ հանգեցնում է զվարթ իրավիճակի, և, միաժամանակ, զարգացնում նրանց արտասանական ապարատը, վերացնում խոսքային վթարները, նպաստում կարդալու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Երեխաները արտագրում են շուտասելուկը:

Արտագրությունը, ընդհանուր առմամբ, նպաստում է տեքստը հիշելուն, տեքստի բովանդակությունը ավելի լավ ըմբռնելուն և հասկանալով կարդալուն:

Արտագրության ժամանակ բառապատկերները տպավորվում են հիշողության մեջ, ավելի հեշտ են հիշվում: Նպաստում է նաև կետադրական նշանների ճիշտ կիրառմանը, նախադասության ուղղագրության իմացության ամրապնդմանը:

Երեխաները կարող են նաև լսել ու դիտել շուտասելուկների ասմունքը QR-կոդով: Էկրանին հայտնվում է շուտասելուկները մեծ վարպետությամբ ասմունքող հաղորդավարուհի Լյուսի Կարապետյանը: Նա շուտասելուկը նախ արտասանում է դանդաղ՝ սովորական ընթերցելու արագությամբ, ապա՝ միջին արագությամբ, այնուհետև՝ գերարագ:

Երեխաները տեսնում և լսում են, թե որքան զվարթ և արագ է հնարավոր ասել շուտասելուկները: Իրենք էլ փորձում են ասել, որքան հնարավոր է արագ, և ուրախ մթնոլորտ է ստեղծվում:

## ԳՐԱԳԱՐԱԿ

### ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Պատի տակին, տակին պատի,
Զրուցում են տատն ու պապին:

❁❁❁

Հորդ անձրևը ջրեց որթը,
Հորթը կերավ որդի տորթը:

❁❁❁

Բզեզը բզզում է, դզեզը լսում է,
Դզեզն է դզզում, բզեզը չի լսում:

❁❁❁

Զարթուցիչը զիլ զնգաց,
Ժիր Զորիկը վազեց ցած:

❁❁❁

Էշը էշի փուշ ուտի, նուշ չուտի,
Էմինն էլի փուշ չուտի, նուշ ուտի:

❁❁❁

Մի փուչիկ փչիր.
Թռչում է, թող թռչի,
Չի թռչում, թող չթռչի:

**7** Եթե նկարելուկում պատկերից հետո դրված է ՝ նշանը, ապա պատկերի անունից պետք է հանել վերջին տառը:

Օրինակ՝ ՝ = մուր (մուրձ – ձ = մուր):

Եթե պատկերից առաջ դրված է ՞ նշանը, ապա պատկերի անունից պետք է հանել առաջին տառը:

Օրինակ՝ ՞ = կար (նկար – ն = կար):

**Լուծի՛ր նկարելուկները և կստանաս երկու բառ, որոնք նույնպես նշանակում են քաջ:**

**8**

## ԱՇԽԱՏԱՆՔ ՕՐԱԳՐՈՒՄ

Լրացրո՛ւ օրագիրդ: Քննարկի՛ր ընկերոջդ հետ:

1. Ես ամենից շատ.
- վախենում եմ ____
- ամաչում եմ _____
- տխրում եմ _____
- զայրանում եմ ____

7

2. Որոշել եմ սրանից հետո _____

3. Ես հասկացա, որ սխալները _____

8

## ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես իմացա _____:
Ես կարողացա _____:
Ինձ հետաքրքիր էր _____:

**Հերոսն օգնեց, որ ավելի լավ ճանաչես քեզ, պատմես քո մասին: Այսուհետև կարող ես ավելի ուշադիր լինել քո և քեզ շրջապատող մարդկանց ու երևույթների նկատմամբ:**

17

### 2.6.10. Աշխատանք նկարելուկի շուրջ

Ուսուցիչը հետևում է, որ աշակերտները ուշադիր կարդան, թե ինչ են նշանակում ՝ և ՞ նշանները նկարելուկներում: Կարելի է առաջարկել, որ երեխա-

ներն իրենք հորինեն պարզագույն նկարելուկներ՝ օգտագործելով այդ նշանները: Օրինակ.

լամպ – լ = ամպ  սարդ – դ = սար

Լուծելով նկարելուկ 1-ը՝ կստանա արի:

կարիճ – կ – ճ = արի

Լուծելով նկարելուկ 2-ը՝ կստանա կտրիճ:

կարիճ = կտրիճ

**2.6.11. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրում**

Աշակերտները շարունակում են լրացնել օրագիրը:

1. Ես ամենից շատ.
   - վախենում եմ _____
   - ամաչում եմ _____
   - տխրում եմ _____
   - զայրանում եմ _____
2. Որոշել եմ սրանից հետո _____
3. Ես հասկացա, որ սխալները _____

Պետք է խրախուսել, որ երեխաներն ազատ և անկաշկանդ շարադրեն իրենց մտքերը:

Լսի՛ր ընկերոջդ, ծանոթացի՛ր նրա օրագրում կատարած աշխատանքներին և լրացրո՛ւ անավարտ նախադասությունները:

Աշակերտները կազմում են զույգեր, միմյանց ներկայացնում օրագրերում կատարած աշխատանքները:

Պետք է ժամանակ հատկացնել աշխատանքի կատարմանը, հրահանգել, որ աշակերտները ուշադիր լսեն ընկերոջը և մտապահեն (կամ համառոտ գրառեն) իրենց ամենից շատ հետաքրքրած միտքը (մտքերը): Նպատակահարմար է աշակերտներին նախապես տրամադրել անավարտ նախադասություններով ձևանմուշը:

**2.6.12. Դասից քաղած իմ պտուղները**

Երեխաները լրացնում են անավարտ նախադասությունները:

Ես իմացա_____:

Ես կարողացա _____:

Ինձ հետաքրքիր էր_____:

Լրացնելուց հետո աշակերտները բարձրաձայն կարդում են իրենց գրառումները:

Աշխատանքն ամփոփելուց հետո եզրակացնում են, որ եթե լավ ես ճանաչում քեզ և քո շրջապատի մարդկանց, ապա գիտես՝ ում և ինչով օգնել, ում հետ զբոսնել, ում հետ ինչի մասին զրուցել, ինչպես ուրախացնել ընկերոջդ, ում հետ ինչ խաղալ:

**2.6.13. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» շուրջ**

Այնուհետև ընթերցվում է ամփոփիչ պատուհանիկի խոսքը:



Հերոսն օգնեց, որ ավելի լավ ճանաչես քեզ, պատմես քո մասին: Դու հասկացար, որ այսուհետև կարող ես ավելի ուշադիր լինել քո և քեզ շրջապատող մարդկանց ու երևույթների նկատմամբ:



ԳՐԱԳԱՐԱԿ

ՓԻՂԸ

Հսկա փիղ եմ տանը պահում,
Նրա հետ շա՜տ-շատ եմ խաղում,
Թեկուզ երկար կնճիթ չունի,
Բայց սուր ճանկեր, բեղեր ունի:

Այսպիսի փիղ ո՞վ է տեսել,
Որ մլավի կամ ելնի ծառ.
Փիղ եմ կոչել կատվին մեր տան,
Որ շները վրա չտան...

## 2.7. ԸՆԿԵՐՆԵՐԸ

Այս դասին դու.

• Կվերհիշես **ե**-ի մասին ունեցած գիտելիքներդ:

• Կիմանաս, թե ինչպես չսիրած գործը դարձնել սիրելի:

• Կգնահատես ընկերոջ դերը դժվարություններ հաղթահարելու գործում:

• Կտեսնես, թե ինչպես փոքրիկ մուկը դարձավ մի հսկա փիղ:

### ԸՆԿԵՐՆԵՐԸ

**Վաչագան Ա. Սարգսյան**

**Ուզո՞ւմ ես իմանալ, թե ընկերներից մեկն ինչպես օգնեց մյուսին, որ նա չսիրած գործը սիրով անի: Կարդա՛ պատմվածքը:**

Հավանաբար կլինեն գործեր, որոնք դու սիրում ես անել: Կլինեն գործեր, որոնք դու չես սիրում անել: Պատմի՛ր այդ մասին:



Նարեն ու Նարեկն ընկերներ են:

– Ես շա՜տ եմ սիրում դպրոց գնալ,– ասում է Նարեն:

– Իսկ ես չե՛մ սիրում,– ասում է Նարեկը:

– Ինչո՞ւ:

– Չեմ սիրում գրել, կարդալ: Սիրում եմ խաղալ:

– Ես էլ եմ սիրում խաղալ: Ուզո՞ւմ ես, արի միասին մի կախարդական խաղ խաղանք: Արի **մուկ**-ից **փիղ** սարքենք:

– Ինչպե՞ս:

• Ո՞վ էր շատ սիրում դպրոց գնալ:

• Ի՞նչ խաղ էին ուզում խաղալ:

• Քո կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է **մուկ**-ից **փիղ** ստանալ:

**18**

### 2.7.1. Դասի սկիզբ

Ուսուցչի առաջարկով երեխաները բացում են դասագրքերը և հետևում դասի ԳԼԽԱԳՐԻՆ: Ուսուցիչը կարդում է ԳԼԽԱԳԻՐԸ և յուրաքանչյուր կետ քննարկում երե-

խաների հետ: Հետագայում երեխաներն ինքնուրույն կկարդան գլխագիրը և համապատասխան եզրակացություններ կանեն:

Առաջին կետը վերաբերում է լեզվական գիտելիքին՝ Ե-ի ուղղագրությանը, որին երեխաները այս կամ այն չափով ծանոթ են առաջին դասարանից:

Երկրորդ կետը անպայման աշխուժություն կմտցնի դասարանում և կբորբոքի երեխաների հետաքրքրությունը:

Երրորդ կետը ևս հոգեհարազատ է երեխաներին. նրանք բոլորն էլ այդ տարիքում կարծում են, որ շատ ընկերներ ունեն և, իրոք, ունեն:

Չորրորդ կետը արդեն հեքիաթային աշխարհ կտանի երեխաներին և կխթանի երևակայությունն ու տեքստը կարդալու նրանց ցանկությունը:

Այնուհետև ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է դասի մուտքի պատուհանիկին: Երեխաները կարդում են մուտքի պատուհանիկը, արտահայտում իրենց կարծիքը:

Մուտքի պատուհանիկի գրառումը յուրատեսակ խթանում է, երեխաների հետաքրքրասիրությունը գրգռելու միջոց, նրանց դեպի դասն ուղղորդելու հետաքրքրաշարժ եղանակ:

### 2.7.2. «ՍԻՐՈՒՄ ԵՄ - ՉԵՄ ՍԻՐՈՒՄ» խաղը

Ուսուցիչը կարդում է պատուհանիկի տակ գրված խաղամուտքը:

Հավանաբար կլինեն գործեր, որոնք դու սիրում ես անել: Կլինեն գործեր, որոնք դու չես սիրում անել: Պատմի՛ր այդ մասին:

Գրվածի վերաբերյալ երեխաների մտքերը լսելու, նրանց նախասիրությունները բացահայտելու նպատակով կարելի է կազմակերպել «Ես էլ» խաղը:

Ուսուցիչը գրատախտակին գրում է գործողություններ, որոնք ինքը իբր չի սիրում անել, և գործողություններ, որոնք ինքը սիրում է անել: Ապա հերթով կարդում է տարբերակները: Եթե աշակերտը այդ մտքին համաձայն է, ապա ասում է՝ ***ես էլ***:

Օրինակ կարող են լինել այսպիսի արտահայտություններ.

*շուտ քնել,*
*կարգի բերել սենյակը,*
*գիրք կարդալ,*
*հագուստը դասավորել,*
*դաս սովորել,*
*հեռուստացույց դիտել,*
*շնորհակալություն ասել,*
*բարևել,*
*բարի գիշեր մաղթել և այլն:*

Ուսուցիչը բացատրում է, որ կան գործեր, որոնք առաջին հայացքից ինչ-ինչ պատճառներով մենք չենք ուզում անել, բայց դրանք ևս անհրաժեշտ են և կարևոր: Եթե ուզում ես իմանալ, թե ինչպես ընկերներից մեկը օգնեց մյուսին չսիրած գործը սիրով անելու՝ կարդա՛ պատմվածքը:

### 2.7.3. Աշխատանք տեքստի շուրջ

Տեքստը բաժանված է երկու մասի:

Առաջին հատվածը բարձրաձայն ընթերցելուց հետո երեխաները պատասխանում են բովանդակության ընկալմանը նպաստող հարցերին:

- Ովքե՞ր էին պատմվածքի հերոսները:
- Ի՞նչ խաղ էին ուզում խաղալ:
- Քո կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է **մուկ**-ից **փիղ** ստանալ:

Այնուհետև շարունակում են ընթերցանությունը:

Երկրորդ հատվածն ընթերցելու ընթացքում ուսուցիչը կարող է երեխաներին հերթով հրավիրել գրատախտակի մոտ: Նրանցից առաջինը գրատախտակին գրում է **մուկ** բառը և նստում: Յուրաքանչյուր հաջորդ քայլում փոփոխելով բառի տառերը՝ երեխաները հաջորդաբար գրում են ստացված բառերը և կարդում: Վերջում ստացվում է հետևյալ փոխակերպումը՝ **մուկ**-ը դառնում է **փիղ**.

**մուկ ➔ մուր ➔ հոր ➔ հող ➔ փող ➔ փիղ**

Ահա թե ինչպիսի կախարդական հնարքով Նարեն կարողացավ մուկը փիղ դարձնել:

Ընթերցման նման եղանակը ապահովում է երեխաների ակտիվ մասնակցությունը, ներգրավվածությունը ուսումնական գործընթացին՝ նյութի ընկալումը դարձնելով ավելի դյուրին և հետաքրքիր:

### 2.7.4. Տեքստի բովանդակության շուրջ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով առաջարկվող հարցերի օրինակներ

- Ի՞նչ էր սիրում անել Նարեն: (Դպրոց գնալ, խաղալ)
- Ի՞նչ էր սիրում անել Նարեկը: (Խաղալ)
- Ի՞նչ չէր սիրում անել Նարեկը : (Գրել, կարդալ)
- Փոխվե՞ց Նարեկի մեջ ինչ-որ բան տեքստի վերջում: Կարդա՛ համապատասխան տողերը: (Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ. տեսա՞ր՝ ինչքան գրեցի ու կարդացի)
- Ո՞վ և ի՞նչը օգնեց, որ սովորելու նկատմամբ Նարեկի վերաբերմունքը փոխվի: (Խաղը, ընկերը)
- Ծանո՞թ էր քեզ այդ խաղը: Ինչպե՞ս է այն կոչվում: (Փոխակերպում)
- Քանի՞ բառ գրեց և կարդաց Նարեկը: (6)
- Ի՞նչ ես կարծում, Նարեն ու Նարեկը շարունակեցի՞ն խաղալ, ինչո՞ւ: (Այո՛, որովհետև երկուսն էլ սիրում էին խաղալ և խաղալով՝ սովորել)

– Նախ՝ արի գրենք՝ **մուկ**: Գրեցի՞ր: Հիմա **մուկ** բառի մեջ **կ**-ի փոխարեն գրենք՝ **ր**: Ի՞նչ ստացվեց:

– **Մուր**:

– Ճի՛շտ է: Հիմա **մուր**-ի մեջ **մ**-ն փոխենք **հ**-ի:

– Ստացանք **հուր**: Հուրն ի՞նչ է:

– Հուրը կրակն է: **Հուր**-ի մեջ **ու**-ն փոխենք **ո**-ի:

– Ստացանք **հոր**: Բա փիղն ո՞ւր է:

– Սպասի՛ր, հիմա **հոր**-ը դարձնենք **հող**, իսկ **հող**-ը՝ **փող**:

– Հա՜, հասկացա: **Փող**-ի **ո**-ն կփոխենք **ի**-ի և կստանանք **փիղ**: Շատ լավ խաղ էր: Արի՛ էլի խաղանք:

– Չէ՛, չե՛մ խաղում: Դու ասում ես, թե գրել, կարդալ չես սիրում:

– Սիրո՜ւմ եմ, սիրո՜ւմ եմ. տեսա՞ր՝ ինչքան գրեցի ու կարդացի: Էլի խաղանք, լա՞վ:

## Հարցեր

1. Ովքե՞ր էին պատմվածքի հերոսները:
2. Ի՞նչ արեց Նարեն: Պատմի՛ր այդ մասին:
3. Ի՞նչ էր սիրում և ի՞նչ չէր սիրում անել Նարեկը:
4. Ինչպե՞ս Նարեկը սիրեց գրել և կարդալ:
5. Ծարունակի՛ր պատմությունը. ի՞նչ եղավ հետո:
6. Ի՞նչ հարց կտաս Նարեկին, եթե հանդիպես նրան:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**
*դարձնել*

## Առաջադրանքներ

**1** Կազմի՛ր **մուկ**-ից **փիղ** ստանալու շղթան: Քանի՞ քայլով **մուկ**-ը դարձավ **փիղ**:

**մուկ** → **մուր** → . . .

**2** Ընկերոջդ հետ, Նարեի և Նարեկի նման.
- **այծ**-ից ստացի՛ր **արջ**,
- **կով**-ից ստացի՛ր **կաթ**:

**3** Ի՞նչ առաջարկեց Նարեն Նարեկին: Տեքստից գտի՛ր և արտագրի՛ր այդ տողերը:
Քանի՞ բառ ստացվեց:

19

**Առաջադրանք 1-ը** երեխաները ընդհանուր ուժերով արդեն կատարել են: Անհրաժեշտ է գրատախտակի վրայից հեռացնել փոխակերպման շղթան և երեխաներից մեկին առաջարկել, որ նա գրատախտակի մոտ վերականգնի բառաշղթան և հաշվի քայլերի քանակը:

Քայլերի քանակը բառերի արանքում դրված գծերի քանակն է:

**Աշխատանք զույգերով**

**Առաջադրանք 2.** *Ընկերոջդ հետ.*

1. **այծ**-ից ստացի՛ր **արջ,**
2. **կով**-ից ստացի՛ր **կաթ:**

Քանի՞ քայլով ստացաք յուրաքանչյուր փոխակերպումը:

Աշխատանքը կարելի է կազմակերպել զույգերով, այնուհետև հաշվել, թե որ զույգը քանի քայլով է հասել նպատակին:

**այծ ➔ այտ ➔ արտ ➔ արջ**
**կով ➔ կավ ➔ կաթ**

**Առաջադրանք 3.** Ի՞նչ առաջարկեց Նարեն Նարեկին: Տեքստից գտի՛ր և արտագրի՛ր այդ տողերը: Քանի՞ բառ արտագրեցիր:

Երեխաները արտագրում են հետևյալ նախադասությունները.

*Ուզո՞ւմ ես, արի միասին մի կախարդական խաղ խաղանք: Արի* ***մուկ****-ից* ***փիղ*** *սարքենք:* Այնուհետև հաշվում են, թե քանի բառ արտագրեցին՝ 12)

## ՀՐԱՇԱԳՈՐԾԸ

– Մի հրաշագործ է հայտնվել անտառում,– շունչը հազիվ տեղը բերելով՝ ասաց Վինի Թուխը:

– Ինչի՞ց է երևում, որ հրաշագործ է,– հետաքրքրվեց Դնչիկը:

– Կախարդական փայտիկ ունի՝ ծաղիկը դարձնում է թիթեռ, քարը՝ գնդակ, մորին՝ ձմերուկ: Ի՞նչ ուզում անում է:

– Դա ինչ է, որ,– ասաց Բուն:– Ես կարող եմ ջուրը կրակ դարձնել:

– Ինչպե՞ս:

– Տեսեք, ջուր բառի մեջ ընդամենը մի տառ եմ փոխում՝ ջ-ն դարձնում եմ հ: Ստացվում է հուր: Իսկ հուրը, ինչպես գիտեք, կրակն է:

– Մ՛յ քեզ հրաշք,– զարմացան Թուխն ու Դնչիկը:

Իսկ դուք, սիրելի՛ երեխաներ, կարո՞ղ եք մարդ-ը դարձնել ծաղիկ:



4

Կարդա՛ «Ե-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը: Ուշադրությո՛ւն դարձրու, թե **ե**-ն ինչպես է հնչում:

vachagan.am

**Ե-Ի ԵՐԳԸ**

Թե՛ բառի մեջ և թե՛ վերջում,
Ես հնչում եմ՝ **է՜**, **է՜**, **է՜**,
Երբ գնում եմ ես առջևից,
Միշտ երգում եմ՝ **յէ՜**, **յէ՜**, **յէ՜**,
Բացառությամբ՝ **եմ**, **ես**, **ենք**,
Եվ **եք** ու **են** բառերի:

5

| «Ե-ի երգից» դուրս գրի՛ր. | |
|---|---|
| ○ **ե**-ով սկսվող բոլոր բառերը, | _____ |
| ✧ • այն բառերը, որոնց սկզբում **ե**-ն հնչում է **յէ**, | _____ |
| • այն բառերը, որոնց սկզբում **ե**-ն հնչում է **է**: | _____ |
| ☼ Գրի՛ր **ե**-ով սկսվող այլ բառեր: | _____ |

6

Հարցրո՛ւ ընկերոջդ, թե այս գործերից նա որոնք կարող է խաղով անել: Նշումնե՛ր արա և համեմատի՛ր քո արդյունքների հետ:

- դաս սովորել
- կարգի բերել սենյակը
- շուտ քնել
- գիրք կարդալ
- հագուստը դասավորել

Ով ավելի շուտ քնի, նա կհաղթի:

20

## 2.7.5. Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ

**Առաջադրանք 4.** Կարդա՛ կամ QR-կոդի միջոցով լսի՛ր և դիտի՛ր «Ե-ի երգը»: Ուշադրություն դարձրո՛ւ թե **ե**-ն ինչպես է հնչում:

**Ե-Ի ԵՐԳԸ**

Թե՛ բառի մեջ և թե՛ վերջում,
Ես հնչում եմ է՛, է՛, է՛,
Երբ գնում եմ ես առջևից,
Միշտ երգում եմ յէ՛, յէ՛, յէ՛,
Բացառությամբ՝ **եմ, ես, ենք,**
Եվ **եք** ու **են** բառերի:

Աշակերտները կարդում են կամ լսում ու դիտում են «Ե - ի երգը» :

Ուսուցչի հարցադրումների օգնությամբ վերհիշում են **է-ե**-ի ուղղախոսական և ուղղագրական պարզ կանոնները: Բառասկզբում **ե**-ն հնչում է **յէ**, բացառությամբ **եմ, ես, ենք, եք, են** բառերի: Իսկ բառամիջում և բառավերջում **ե**-ն հնչում է **է**:

**Առաջադրանք 5:**

| «Ե-ի երգից» դուրս գրի՛ր. | |
|---|---|
| ○ **ե**-ով սկսվող բոլոր բառերը, | _____ |
| ✧ • այն բառերը, որոնց սկզբում **ե**-ն հնչում է **յէ**, | _____ |
| • այն բառերը, որոնց սկզբում **ե**-ն հնչում է **է**: | _____ |
| ☼ Գրի՛ր **ե**-ով սկսվող այլ բառեր: | _____ |

1. «Ե-ի երգից» աշակերտները դուրս են գրում այն բառերը, որոնք սկսվում են **ե**-ով: (**Ես, եմ, ես, եք, են, ենք, երբ, երգում** և լրացնում աղյուսակի համապատասխան տողը)
2. Դուրս գրած բառերը բաժանում են երկու խմբի՝ ըստ **ե**-ի հնչողության: Այնուհետև լրացնում են աղյուսակի համապատասխան տողերը: (**եմ, ես, ենք, եք, են**) և (**ես, երբ, երգում**)
3. Գրում են **ե**-ով սկսվող այլ բառեր: (**Երես, երազ, ելակ, երեխա, երամ** և այլն:)

**2.7.6. Անդրադարձ խաղին**

**Առաջադրանք 6.**

Հարցրո՛ւ ընկերոջդ, թե այս գործերից նա որոնք կարող է խաղով անել: Նշումներ արա՛ և համեմատի՛ր քո արդյունքների հետ:

- դաս սովորել
- կարգի բերել սենյակը
- շուտ քնել
- գիրք կարդալ
- հագուստը դասավորել

Ուսուցիչը անդրադարձ է կատարում դասի սկզբին կազմակերպած «Ես էլ» խաղին։

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է գրատախտակին գրված բառակապակցություններին։ Առաջարկում է այդ բառակապակցություններից առաջ գրել «խաղալով» բառը։

Երեխաները կարդում են ստացված բառակապակցությունները.

*խաղալով կարգի բերել սենյակը,*

*խաղալով շուտ քնել,*

*խաղալով գիրք կարդալ,*

*խաղալով հագուստը դասավորել,*

*խաղալով դաս անել,*

*հեռուստացույց դիտել,*

*շնորհակալություն ասել,*

*բարևել,*

*բարի գիշեր մաղթել։*

Այնուհետև հանձնարարում է երեխաներին, որ նրանք տանը փորձեն, թե թվարկված գործերից որոնք կարելի է խաղալով անել։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե անհնարին է խաղալով դաս սովորել։ Ուսուցիչը կարող է ուղղորդել երեխաներին, որ նրանք հենց այս դասը խաղալով սովորեն ընտանիքի անդամներից մեկի հետ։ Եթե այդպիսի հնարավորություն չկա, դասը կարդալիս խաղան երևակայական ընկերոջ հետ։ Կարող են իրենց համար խաղընկեր ընտրել իրենց սիրելի մուլտհերոսներին, կինոհերոսներին, գրքերի հերոսներին և այլն։

- «Խաղալով կարգի բերել սենյակը» գործողությունը ավելի հեշտ է պատկերացնել։ Խաղալիքներին համապատասխան հրահանգներով ուղարկել իրենց տեղերը՝ ամեն մեկին մի բան հանձնարարելով. մեկը պետք է քնի, մյուսը պատրաստվի մենամարտի, երրորդը լուռ մնա, որ իրեն չգտնեն, չորրորդը հանգիստ տեղավորվի տուփի մեջ և այլն։ Դերեր հատկացնելով իրերին՝ հագուստին, գրքերին, դպրոցական պիտույքներին, բոլորին «կարգի հրավիրի»։
- «Խաղալով շուտ քնել»։ Հետաքրքիր է, մինչև քանիսը հաշվելով դու կքնես, փորձի՛ր։ Ո՞վ ավելի երկար փակ կպահի աչքերը։ Ավելի շուտ քնողը ավելի շուտ կարթնանա, տեսնես ճի՞շտ է։ Նման արտահայտությունները քնելը շատ արագ կվերածեն քնախաղի։
- «Խաղալով գիրք կարդալ»։ Կարդալ մի քանի նախադասություն և փորձել նկարել կարդացածը։ Խնդրել ընտանիքի անդամներից մեկին, որ լսի իրեն։ Կարդալ երևակայական ընկերոջ համար՝ բացատրելով «անհասկանալի» բառերը։ Կարդալ և պատկերացնել, թե ինքը ռեժիսոր է ու մուլտֆիլմ է նկարում իր կարդացածի մասին և այլն։
- «Խաղալով հագուստը դասավորել»։ Այստեղ առանձնակի ջանքեր պետք չեն խաղ պատկերացնելու համար։ Հագուստներին պետք է «ուղեկցել» իրենց տները՝ յուրաքանչյուրի հետ վարվելով խնամքով։

***Հաջորդ դասին*** ուսուցիչը ժամանակ է հատկացնում, որ աշակերտները միմյանց պատմեն իրենց կատարած գործերի մասին, առանձնացնելով այն գործերը, որոնք խաղի օգնությամբ ավելի սիրով և հեշտությամբ են կատարել: Աշխատանքը կարելի է կազմակերպել «Շրջի՛ր, զո՛ւյգ ընտրիր, պատմի՛ր» հնարով:

**7** Ըստ պատմվածքի՝ ամբողջացրո՛ւ նախադասության միտքը:

Խաղը Նարեկին օգնեց, որ նա _____:

Խաղը Նարեկին օգնեց, որ նա _____:

**8** **ԱՌԱԾ**

Առածի բառերը խառնվել են: Վերականգնի՛ր առածը և գրի՛ր:

հասկացող կարդացողը Շատ կլինի:

սարեր որ տանք, կտանք: Ուս շուռ ուսի

Գյուղ կկոտրի: կանգնի, գերան

**9** **ԱՇԽԱՏԱՆՔ ՕՐԱԳՐՈՒՄ**

Գրի՛ր մի դեպք, երբ դու օգնել ես ընկերոջդ կամ ընկերդ է օգնել քեզ: Ի՞նչ էիր զգում:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Ես սովորեցի _____

Ես կարողացա _____

Ես հասկացա _____

**Դժվարությունները հեշտ է հաղթահարել, երբ կողքիդ ունես հոգատար ընկեր:**

**Առաջադրանք 7**. Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է, որ նրանք, օգտվելով տեքստից և իրենց փորձից, ամբողջացնեն հետևյալ նախադասությունները.

- **Խաղը Նարեկին օգնեց, որ նա ----------:**
- **Խաղը Նարեին օգնեց, որ նա ----------:**

Այս առաջադրանքը նպաստում է տեքստի հերոսների և իր արարքների նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը:

Կարող են լինել նմանատիպ պատասխաններ.

• *Խաղը Նարեկին օգնեց, որ նա սիրի գրել և կարդալ:*

• *Խաղը Նարեին օգնեց, որ նա բարի գործ անի ընկերոջ համար՝ ցուցաբերելով հոգատարություն:*

**2.7.7. Աշխատանք առածի շուրջ**

**Առաջադրանք 8.** Առածի բառերը խառնվել են: Վերականգնի՛ր առածը և գրի՛ր:

Ժողովրդական առածները պատկերավոր ու սեղմ ասույթներ են կյանքի, մարդկային բարքերի, փոխհարաբերությունների, կենցաղային ամենաբազմազան երևույթների վերաբերյալ:

Առածները մեծ դեր կարող են ունենալ անձի վարքի կարգավորման գործում, անձ–հասարակություն փոխհարաբերության մեջ: Պետք է երեխաների հոգին սնող աղբյուրներից մեկն էլ լինի ժողովրդական առածը, որն ազգային մտածողության յուրօրինակ դրսևորումներից է, լեզվական հազվագյուտ խտացում, լեզվամտածողության դրսևորման բացառիկ միջոց:

Բնագիրը նպաստում է, որ երեխաները լավ հասկանան առածի իմաստը, իսկ առածով ամփոփվում, ի մի է բերվում բնագրի արտահայտած հիմնական միտքը:

Փորձը ցույց է տալիս, որ երեխաները շատ լավ յուրացնում են առածները և ըստ իրադրության կիրառում:

Տրված է երեք առած: Առածներից յուրաքանչյուրի բառերի տեղերը խառնված են: Պետք է բառերը դասավորել ճիշտ հերթականությամբ, այսինքն՝ վերականգնել առածը: Տրված է նաև երեք ուղղորդող նկար: Այդ առածները հետևյալներն են.

*Շատ կարդացողը հասկացող կլինի:*

*Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:*

*Գյուղ կանգնի, գերան կկոտրի:*

Երեխաներին կարելի է հանձնարարել, որ նրանք կարդան ներքոշարադրյալ միտքը և իրենց կարծիքը հայտնեն կարդացածի մասին:

**Թե գործը սիրով անես, օձը բնից կհանես:**

**2.7.8. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրում**

Շարունակի՛ր լրացնել «Բարև՛, ես եմ» օրագիրը:

**Առաջադրանք 9.**

Գրի՛ր մի դեպք, երբ դու օգնել ես ընկերոջդ կամ ընկերդ է օգնել քեզ:

*Ի՞նչ էիր զգում:*

Ուսուցիչն առաջարկում է հիշել և գրել մի դեպք, երբ երեխան ինքն է օգնել ընկերոջը կամ ընկերն է օգնել իրեն:

Հաշվի առնելով, որ դասարանում սովորում են տարբեր կարողություններ և կրթական կարիքներ ունեցող երեխաներ, առաջադրանքը կարելի է կատարել տարբեր եղանակներով.

- գրել փոքրիկ շարադրանք,
- նկարել,
- գրել իրավիճակը ներկայացնող բառեր, բառակապակցություններ,
- փակցնել իրավիճակը ներկայացնող նկարներ և այլն:

**2.7.9. Անդրադարձ և ամփոփում**

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է, որ նրանք վերհիշեն դասը և թվարկեն, թե ինչ սովորեցին այս դասին, ինչ կարողացան անել և ինչ հասկացան: Փոխվե՞ց արդյոք իրենց վերաբերմունքը ընկերների հանդեպ:

**2.7.10. Անավարտ նախադասությունների լրացման օրինակներ**

**Ես սովորեցի** «Ե-ի երգը», «Փոխակերպում» բառախաղը, խաղալով կարգի բերել իմ սենյակը, շատ հետաքրքիր առածներ, և այլն:

**Ես կարողացա** իմ չսիրած գործերից մեկը դարձնել սիրելի, կարողացա այծ-ը դարձնել արջ, անգիր անել «Ե-ի երգը», և այլն:

**Ես հասկացա**, որ պետք է օգնել ընկերներին, պետք է կարողանալ սովորել նրանցից, ես հասկացա, որ առածները շատ բան են սովորեցնում մեզ, և այլն:

Երեխաները **դասի ավարտին** ամփոփման պատուհանիկում կարդում են դասագրքի ընդհանրացնող խոսքը և դատողություններ անում դրա վերաբերյալ:

## 2.8. ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

**Դասի սկզբում** ուսուցիչը գրատախտակին գրում է կամ բացում է նախօրոք գրված «Երբ հիվանդ եք լինում, ի՞նչն է ձեզ օգնում, որ շուտ ապաքինվեք» հարցը: Կազմակերպում է ՄՏԱԳՐՈՒՄ:

Խրախուսվում է ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Երեխաների առջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց

որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա:

«Մտքերի տարափ» մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարները ընդունելի են, «սխալ» չկա:

Այս մեթոդը նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն:

Համատեղ աշխատանքը կարող է ավելի բարձր որակի մտքեր ծնել, քան նույն պայմաններում անհատական աշխատանքը: Որևէ միտք չպետք է փորձել մերժել ոչ գործնական լինելու պատճառով կամ շտապողաբար մշակելով կամ վերաձևակերպել:

- Պարզապես պետք է պահպանել մի քանի պարզ կանոն:
- Որևէ կերպ չպետք է քննադատել արտահայտած գաղափարը՝ ո՛չ բառերով, ո՛չ դիմախաղով, ո՛չ ժեստերով:
- Պետք է խրախուսել բազմատեսակ մտքեր արտահայտելը:

Մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է զգա, որ իր արտահայտած միտքը ուշադրության արժանացավ:

Հնարավոր պատասխաններ՝ **դեղ, թեյ, միրգ, բանջարեղեն, արև, մեղր, բժշկի խորհուրդները, կաթը, հեղուկները, տաք հագնվելը,** և այլն:



ԳՐԱԳԱՐԱԿ

ՄԱՅՐԻԿԸ

Ինձ ծնել է իմ մայրիկը,
Ինձ սնել է իմ մայրիկը,
Գիշերները լաց եմ եղել,
Եվ չի քնել իմ մայրիկը:

Տոտիկ-տոտիկ քայլ եմ արել,
Ինձ բռնել է իմ մայրիկը,
Երբ ընկել եմ, լաց եմ եղել,
Լացել է և իմ մայրիկը:

Երբ ցավել է իմ մատիկը,
Սիրտն է ցավել իմ մայրիկի,
Համբուրել է իմ թաթիկը,
Եվ բուժվել է իմ մատիկը:

Մի օր հանկարծ նրան նայել,
Մայրի՛կ, մայրի՛կ եմ ասել,
Մայրս անուշ գրկել է ինձ
Ու մոռացել հոգսեր ու վիշտ:

Այս դասին դու.

• Կամրապնդես է-ե-ի մասին գիտելիքներդ:

• Կպատմես տեքստը տարբեր հերոսների անունից:

• Կիմանաս, որ խոսքն էլ ուժ ունի և կտվորես օգտագործել այն:

• Կկարդաս, թե ինչպես հիվանդությունը, քամուն հեծած, մտավ սենյակ:

## ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

Լիպարիտ Սարգսյան

**Ամենաբուժիչ դեղը սիրով ասված խոսքն է:**
**Ինչպե՞ս՝ կզարմանաս դու: Կարդա՛ և կտեսնես:**

Մայրիկն աշխատանքից տուն եկավ և անմիջապես անկողին մտավ:

– Մայրի՛կ, հիվա՞նդ ես,– հարցրեց Աստղիկը:

– Այո՛,– թույլ-թույլ ասաց նա:

Աստղիկը շոյեց մայրիկի ձեռքերը: Համբուրեց ճակատն ու այտերը և ասաց.

– Ջերմություն չունես:

Հետո գնաց իր սենյակը և տիկնիկներին ու խաղալիքներին ասաց.

– Ձայն չհանե՛ք, մայրիկս հիվանդ է:

Վերադառնալով մայրիկի մոտ՝ ասաց.

– Թեյ կուզե՞ս:

Մայրիկը լսեց Աստղիկի ասածները և ժպտալով ասաց.

– Ո՛չ, աղջիկս, արդեն լավացա:

### Հարցեր

1. Ի՞նչ էր պատահել մայրիկին:
2. Ի՞նչ արեց աղջիկը:
3. Մայրիկն ինչպե՞ս առողջացավ առանց դեղի և նույնիսկ առանց թեյի:
4. Տեքստի ո՞ր տողերից երևաց, որ աղջիկը հոգատար է և ուշադիր մայրիկի նկատմամբ: Կարդա՛ այդ տողերը:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*անմիջապես*
*համբուրել*
*աղջիկ*

### 2.8.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Աշակերտները բացում են դասագրքերը և կարդում «ԱՅՍ ԴԱՍԻՆ ԴՈՒ» ԳԼԽԱ-ԳԻՐԸ: Ուսուցիչը մի քանիսին հարցնում է, թե նրանք ինչ են մտածում նշված այս կամ այն կետի վերաբերյալ:

Առաջին կետի վերաբերյալ մի քանի հարցի միջոցով պարզում է, թե երեխաները ինչ են հիշում Է-ի և Ե-ի ուղղագրությունից:

Երկրորդ կետի վերաբերյալ նշում է, որ միասին կորոշեն, թե ովքեր կամ ինչերն են տեքստի հերոսները և պատմությունը կպատմեն տարբեր հերոսների անունից:

Հարցերի միջոցով կբացահայտեն, թե երեխաներն ինչպես են հասկանում երրորդ կետի «Խոսքն էլ ուժ ունի» արտահայտությունը:

Չորրորդ կետը երեխաներին պատմության մեջ ներքաշելու, կարդալու ցանկություն ձևավորելու, երևակայությունը խթանելու և զվարթ մտքով դասի ընթացքին հետևելու համար է:

Այնուհետև աշակերտները կարդում են մուտքի պատուհանիկի գրառումը:

Ամենաբուժիչ դեղը սիրով ասված խոսքն է: Ինչպե՞ս, կզարմանաս դու: Կարդա՛ և կտեսնես:

### 2.8.2. Տեքստի ընթերցում

Աշակերտները նախ մտքում կարդում են տեքստը, այնուհետև տեքստն ընթերցվում է բարձրաձայն:

### 2.8.3. Հարցերի և առաջադրանքների օրինակներ

- Ովքե՞ր էին տեքստի հերոսները: (Մայրիկը, Աստղիկը, տիկնիկներն ու խաղալիքները, հիվանդությունը)
- Ի՞նչ էր պատահել մայրիկին: (Մրսել էր, հիվանդացել)
- Ի՞նչ արեց աղջիկը: (Ուշադիր, հոգատար վերաբերմունք ցույց տվեց մայրիկին:)
- Ի՞նչ արեց մայրիկը: (Մայրիկը ժպտալով խրախուսեց Աստղիկին և ասաց՝ որ լավացավ)
- Ինչպիսի՞ն էր Աստղիկը: (Ուշադիր, լսող, սիրող, համբերատար, բարի)
- Տեքստի ո՞ր տողերից երևաց, որ աղջիկը հոգատար և ուշադիր է մայրիկի նկատմամբ: Կարդա՛ այդ տողերը: (Աստղիկը շոյեց մայրիկի ձեռքերը: Համբուրեց ճակատն ու այտերը)
- Մայրիկն ինչպե՞ս առողջացավ առանց դեղի և նույնիսկ առանց թեյի: (Դստեր վերաբերմունքը, սերը, հոգատարությունը, ուշադրությունը առողջացրին մայրիկին)
- Ինչպիսի՞ն էր մայրիկի (աղջկա) տրամադրությունը պատմվածքի սկզբում և վերջում: (Սկզբում՝ տխուր, տագնապած, վերջում՝ ուրախ և զվարթ)
- Պատմվածքի ո՞ր հատվածն է պատկերված նկարազարդման մեջ: (Երբ աղջիկը հոգատար վերաբերմունք է ցույց տալիս մայրիկին)

- Ի՞նչ տրամադրություն կա նկարում: Պատմի՛ր քո զգացածը: (Մայրիկը սիրով նայում է Աստղիկին: Աստղիկն էլ սիրով ու քնքշանքով է նայում մայրիկին՝ օգնելու մեծ ցանկությամբ)

### 2.8.4. Անդրադարձ մտագրոհին

Ուսուցիչն առաջարկում է, որ աշակերտները կարդան գրատախտակին գրված իրենց արտահայտած մտքերը և ավելացնեն նոր մտքեր, որոնք ցանկացան գրել տեքստը յուրացնելուց հետո:

**Առաջադրանքներ**

**1** Տե՛ս, թե հիվանդությունն ինչպես է իր անունից պատմում տեքստը:

Դուռը բաց էր: Ես միջանցիկ քամու հետ մտա Աստղիկի մայրիկի աշխատասենյակ: Ես սիրում եմ անակնկալ հյուր գնալ: Հարմարավետ տեղավորվեցի և սկսեցի խուտուտ տալ ու ցավեցնել մայրիկի կոկորդը: Նա հասավ տուն, պառկեց տաքուկ անկողնում: Ես էլ՝ նրա հետ: Ուրախությանս չափ չկար: Մեկ էլ, որտեղից որտեղ, հայտնվեց Աստղիկը: Նա այնքա՜ն հոգատարություն և ուշադրություն նվիրեց մայրիկին, որ ինձ համար այլևս տեղ չմնաց: Ես զայրացած դուրս փախա:

Դու էլ տեքստը պատմի՛ր Աստղիկի անունից:

**2** ○ Գրի՛ր, թե ինչեր են պատկերված նկարներում:



✧ Օգտվելով նկարներից՝ բառակապակցությունները գրի՛ր մեկ բառով.

- երգ երգող –
- Հայաստանի գլխավոր եկեղեցին –
- երեք անկյուն, երեք կողմ ունեցող պատկեր –
- դասագրքի թերթերի մի երես –
- Երևանի հին անունը –
- թռչունների խումբ –

✡ Հաշվի՛ր ստացված բառերի տառերի և հնչյունների քանակները:

23

### 2.8.5. Աշխատանք տեքստի վերարտադրման շուրջ

**Առաջադրանք 1.** Տե՛ս, թե ինչպես է տեքստն իր անունից պատմում հիվանդությունը:

Պատմելու կարողության ձևավորումն ու զարգացումը բավականին բարդ գործընթաց է: Երեխաներին պատմել հանձնարարելուց առաջ անհրաժեշտ է նրանց նախապատրաստել պատմելուն: Պատմելուն նախապատրաստող հարցերը պետք է կառուցվեն այնպես, որ դրանք ոչ միայն նպաստեն ստեղծագործության մանրամասն վերարտադրմանը, այլև գլխավոր միտքը որոշելուն, գործող անձերի վարքը վերլուծելուն և դեպքերի պատճառահետևանքային կապերը ճշգրտելուն: Այս աշխատանքը սովորողների մեջ մշակում է վերլուծելու, համադրելու, հակադրվելու և դատողություններ անելու կարողություններ, որոնք չափազանց կարևոր են հետագա արդյունավետ ուսումնական գործունեության համար:

Աշակերտների պատմելու կարողությունը ձևավորելու և զարգացնելու նպատակով ուսուցիչը առաջադրում է պատմության գործողությունների շղթան ներկայացնող և տրամաբանորեն իրար հաջորդող հարցերի շարք՝ քայլաշար:

Քանի որ աշակերտները նոր են սովորում պատմել, նպատակահարմար է, որ քայլաշարի հարցերը լինեն մանրամասն, ներառեն գործողությունների տեսակը, տեղը, ժամանակը, գործող անձանց և այլն:

*Քայլաշարը ուսուցիչը կարող է նախապես գրել գրատախտակին կամ բազմացնել և տալ աշակերտներին:*

### 2.8.6. Տեքստը պատմելու քայլաշար

- Ի՞նչ էր պատահել մայրիկին աշխատանքի վայրում:
- Ինչ արեց նա, երբ տուն եկավ:
- Ինչ արեց աղջիկը, երբ տեսավ մայրիկին անկողնում պառկած:
- Ի՞նչպես իմացավ աղջիկը, որ մայրիկը ջերմություն չունի:
- Ի՞նչ ասաց աղջիկը խաղալիքներին:
- Ի՞նչ առաջարկեց աղջիկը մայրիկին:
- Ի՞նչ արեց մայրիկը և ի՞նչ ասաց:

Աշակերտները ուշադիր կարդում են քայլաշարի հարցերը և ըստ ցանկության կամ ուսուցչի ընտրությամբ մի քանի աշակերտ պատմում է տեքստը:

Մի քանի խոսք մայրենիի ժամերին ուսումնասիրվող տեքստի ստեղծագործաբար, որևէ հերոսի անունից պատմելու ուսուցման գործընթացի մասին: Ստեղծագործաբար պատմելը աշակերտի առջև խնդիր է դնում կարդացածի բովանդակությունը վերարտադրելիս որոշակի փոփոխություններ ներմուծել: Ստեղծագործաբար պատմելու էությունը աշակերտի կողմից տեքստի ինքնօրինակ փոխակերպումն է: Մայրենիի ժամերին գործունեության այս տեսակը ոչ միայն ընդլայնում է աշակերտների հետաքրքրությունների շրջանակը ուսումնասիրվող ստեղծագործության նկատմամբ և

ավելի կենդանի դարձնում դասի մթնոլորտը, այլև իրականացնում է մի շարք մեթոդական խնդիրներ.

- նպաստում է կարդացածի հանդեպ վերաբերմունքի մշակմանը,
- աշակերտների մեջ հուզական արձագանք է առաջացնում տեքստի նկատմամբ, օգնում է ավելի խորությամբ ընկալելու ստեղծագործության գաղափարը,
- նպաստում է կարդացածի նկատմամբ վերաբերմունքի արտահայտմանը,
- մարզում է ընթերցողական հայացքի ճկունությունը, սովորեցնում է հասկանալ տարբեր հերոսների դիրքորոշումն ու մեկնաբանել վարքագիծը:

**2.8.7. Տեքստի պատմում որևէ հերոսի անունից**

Ոչ ստանդարտ մտածողությունը, երևույթներն անսովոր տեսանկյունից դիտարկելու կարողությունը, որոնք հիմք են հանդիսանում ստեղծարար մտածողության համար, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման նպատակով կարելի է երեխաներին առաջարկել պատմել տեքստի հերոսների, երևույթների անունից: Այս դեպքում՝ մայրիկի, հիվանդության, խաղալիքների, ներմուծել նոր՝ երևակայական հերոս և պատմել նրա անունից:

Ուսուցիչը որպես օրինակ տեքստը պատմում է մայրիկի անունից:

*Ես վերադարձա աշխատանքից: Ինձ թույլ էի զգում: Անմիջապես մտա անկողին: Շատ հուզվեցի, երբ աղջիկս եկավ ու հարցրեց, թե ինչ է պատահել: Երբ իմացավ, որ հիվանդ եմ, շոյեց ձեռքերս, համբուրեց ճակատս ու այտերս և ասաց, որ ջերմություն չունեմ: Աղջիկս հիշում էր, որ երբ ինքը հիվանդանում էր, ես համբուրելով ստուգում էի նրա ջերմությունը: Հետո լսեցի, թե նա ինչպես էր սենյակում տիկնիկներին ու խաղալիքներին ասում, որ չաղմկեն ու ինձ չխանգարեն: Ապա եկավ ինձ մոտ ու թեյ առաջարկեց: Ես ուրախացա նրա հոգատար և ուշադիր վերաբերմունքից, համբուրեցի ու, կարծես, միանգամից առողջացա: Ի՜նչ լավ է, որ նման աղջիկ ունեմ :*

Այնուհետև առաջարկում է, որ աշակերտները ուշադիր լսեն և կռահեն, թե այժմ ինքը ում անունից է պատմում պատմությունը:

*Ես նա եմ, որ մարմին չունի, հենց կանգնեց՝ էլ չի լինի: Ես հասարակ չեմ: Ինձ բոլորը Միջանցիկ են ասում: Թե՛ զովացնել գիտեմ, թե՛ հիվանդացնել: Մի անգամ տեսա, որ աշխատասենյակներից մեկի դուռը բաց է: Որոշեցի մտնել, մի քիչ զովացնել Աստղիկի մայրիկին: Աստղիկին որտեղից գիտե՞մ: Փողոցում բռնոցի շատ ենք խաղացել իրար հետ: Դեռ չէի մտածել վերջացրել, մեկ էլ հանկարծ մի հին ծանոթ հիվանդություն մոտեցավ, խնդրեց, որ իրեն էլ վերցնեմ հետս: Դրեցի շալակիս, ու ներս մտանք: Հենց դռնից Հիվանդությունը անմիջապես շալակիցս իջավ, վազեց, փաթաթվեց մայրիկին, համբուրեց նրան: Այդպես Աստղիկի մայրիկը հիվանդացավ: Ես շատ զղջացի, բայց արդեն ուշ էր:*

Աշակերտները լսում են, կատարում կռահումներ և գալիս են եզրահանգման, որ տեքստը ուսուցիչը պատմել է քամու անունից:

Ուսուցիչը ավելացնում է, որ հիվանդության անունից պատմությունը կա դասագրքում, և երեխաները դա կարող են ինքնուրույն կարդալ:

*Դուռը բաց էր, ես միջանցիկ քամու հետ մտա Աստղիկի մայրիկի աշխատասենյակ: Ես սիրում եմ անակնկալ հյուր գնալ տարբեր մարդկանց: Հարմարավետ տեղավորվեցի և սկսեցի խուտուտ տալ ու ցավեցնել մայրիկի կոկորդը: Նա հասավ տուն, պառկեց տաքուկ անկողնում: Ես էլ՝ նրա հետ: Ուրախությանս չափ չկար: Մեկ էլ, որտեղից որտեղ հայտնվեց Աստղիկը և այնքան հոգատարություն և ուշադրություն նվիրեց մայրիկին, որ ինձ համար այլևս տեղ չմնաց: Ես զայրացած դուրս փախա:*

Ուսուցիչը կարող է առաջարկել նաև այս տարբերակը՝ պատմությունը պատմել խաղալիքներից մեկի անունից:

*Մի օր, ամեն անգամվա պես, խաղալիքներով անհամբեր սպասում էինք Աստղիկին, որ միասին խաղանք, զրուցենք, ուրախանանք: Հանկարծ ներս մտավ Աստղիկը: Մենք դեռ չէինք հասցրել ուրախությունից ճչալ, երբ Աստղիկը մատը դրեց շրթունքներին ու ասաց, որ մայրիկը հիվանդ է, պետք է լուռ մնանք: Մենք, իհարկե, տխրեցինք, սակայն գիտեինք, թե Աստղիկը որքան հոգատար է և ուշադիր իր մայրիկի նկատմամբ: Այդպես էլ եղավ: Մենք գաղտագողի, անշշուկ, ոտքներիս թաթերի վրա մոտեցանք ու տեսանք, թե ինչպես Աստղիկի ջերմ ու հոգատար վերաբերմունքից մայրիկն առողջացավ: Եվ մենք նորից ուրախ-զվարթ խաղացինք միասին:*

Այնուհետև ուսուցիչը առաջարկում է, որ աշակերտները մի փոքր երևակայեն, պատկերացնեն, որ իրենք են հայտնվել նման իրավիճակում, և տեքստը պատմեն իրենց անունից:

**Առաջադրանք 2:**

Ինչպես տեսնում ենք, այս առաջադրանքը «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է: Այսինքն՝ առաջադրանքը նախատեսված է տարբեր կարողություններով աշակերտների համար:

○ Գրի՛ր, թե ինչեր են պատկերված նկարներում:

Այս բնույթի առաջադրանքները ինքնաթելադրության համար նախատեսված յուրօրինակ առաջադրանքներ են և նպաստում են երեխաների գրելու կարողությունների մեծացմանը: Պատկերված առարկաների, երևույթների, գործողությունների անվանումները մտքում վերականգնելը և ճիշտ ուղղագրությամբ գրելը նպաստում է թե՛ բառապաշարի հարստացմանը, թե՛ բազմաթիվ բառերի ուղղագրության իմացության ամրապնդմանը:

✧ Օգտվելով նկարներից՝ բառակապակցությունները գրի՛ր մեկ բառով:

Նմանօրինակ առաջադրանքների միջոցով երեխաները հարստացնում են իրենց բառապաշարը, զարգանում է նրանց լեզվազգացողությունը, նույն երևույթը կարողանում են արտահայտել համանիշ ձևերով:

Ընդհանրապես կրտսեր դպրոցականները դժվար են յուրացնում սահմանումները, նրանց վերացարկման, ընդհանրացումներ կատարելու ունակությունները այնքան էլ զարգացած չեն: Նման բնույթի առաջադրանքները նպաստում են այդ հատկությունների զարգացմանը:

Ձևավորվում են առարկայի, երևույթի էական հատկանիշները բնութագրող արտահայտությունների միջոցով առարկայի կամ երևույթի անվանումը գտնելու երեխաների կարողությունները: Օրինակ՝ հաց թխող մարդ - հացթուխ:

Տվյալ առաջադրանքում.

*երգ երգող – երգիչ,*

*Հայաստանի գլխավոր եկեղեցին – Էջմիածին,*

*երեք անկյուն, երեք կողմ ունեցող պատկեր – եռանկյուն,*

*դասագրքի թերթերի մի երեսը – էջ,*

*Երևանի հին անունը – Էրեբունի,*

*թռչունների խումբ – երամ:*

☼ Հաշվի՛ր ստացված բառերի տառերի և հնչյունների քանակները:

Երեխաները պետք է վերհիշեն Է-ի, Ե-ի ուղղագրությունը և հաշվեն այդ բառերում հնչյունների ու տառերի քանակները.

*երգիչ – 5 տառ, 6 հնչյուն*

*Էջմիածին - 8 տառ, 8 հնչյուն*

*եռանկյուն - 8 տառ, 9 հնչյուն*

*էջ - 2 տառ, 2 հնչյուն*

*Էրեբունի - 7 տառ, 7 հնչյուն*

*երամ - 4 տառ, 5 հնչյուն*

## ԳՐԱԳԱՐԱԿ

### ՏԱՌԱՁՐՈՒՅՑ

**Է**-ն ու **Ե**-ն Տառաշեն քաղաքի «Էրեբունի» զբոսայգում նստած զրուցում էին:

– Սա քա՞ր է,– նստարանը շոշափելով՝ հարցրեց **Է**-ն:

– Այո՛, քարե նստարան է:

– Ինձ էլ թվաց, թե փայտ է:

– Ո՛չ, քարե նստարան է և ոչ թե՝ փայտե:

Մի պահ տառերը լռեցին: Երևի մտածում էին **քար է – քարե, փայտ է – փայտե** բառազույգերի մասին:

– Է՜,– հանկարծ հառաչեց **Ե**-ն:

– Ի՞նչ պատահեց,– զարմացավ **Է**-ն:

– Ինչ որ պիտի պատահեր, շատ վաղուց արդեն պատահել է:

– Ի՞նչ է եղել,– անհանգստացավ **Է**-ն:

– Անունս **եչ** են դրել: **Հեչ** դուրս չի գալիս:

– Բա՜ն ես գտել տխրելու համար: Ես անուն չունեմ ու բոլորովին էլ չեմ տխրում:

– Ավելի լավ կլիներ ես էլ չունենայի:

– Շա՜տ լավ էլ անուն է: Արի ուրիշ բանից խոսենք: Շատ քիչ է պատահում, որ հանդիպում ենք իրար: Լավ է, որ «Էրեբունիում» հանդիպեցինք:

– Այո՛, այդպիսի մի քանի բառ կա ընդամենը: Դրանցից մեկը **էլեկտրականությունն** է իր բազմազավակ ընտանիքի անդամներով:

– **Երբևէ** չեմ հանդիպել այնպիսի մի բառի, որ դու առաջինը լինես, իսկ ես՝ վերջինը,– կատակեց **Է**-ն:

**Ե**-ն ժպտալով ասաց.

– Գիտե՞ս՝ մեկ էլ երբ կհանդիպենք:

– Ե՞րբ:

– Երբ այգիները **էտեն**:

– Էտելն ի՞նչ է:

– Ճյուղերի ավելորդ մասերը կտրում են, որ բերքն առատ լինի:

– Իսկ երբ բերքն առատ լինի, բերքն ու բարիքը **կէժանացնեն**, ու մենք էլի կհանդիպենք:

– Իսկապես,– ուրախացավ **Է**-ն և շարունակեց.

– Շատ ժամանակներ առաջ ես բառամիջում և բառավերջում հաճախ էի հանդիպում: Հիմա գրեթե չկամ: Մի քանի բարդ բառ է մնացել ընդամենը՝ **ելևէջ, մանրէ** և այլն:

– Այն ժամանակ գրեթե միշտ ես էի գրվում բառասկզբում, բայց դու էիր հնչում,– ասաց **Ե**-ն:

– Այո՛, հետո եկավ **Ց**-ն ու կանգնեց քո առաջ, և ես դարձա երկրորդը: Հիմա մի քանի բառ է մնացել, որոնց սկզբում դու ես գրվում, բայց ես եմ լսվում,– ցածրաձայն ասաց **Է**-ն:

– Ճիշտ ես՝ **եմ, ես, ենք, եք, են** բառերն են դրանք,– հաստատեց **Ե**-ն:

– **Ես**-ն էլ երկերեսանի է. մեկ **յես** է, մեկ՝ **էս**:

Նրանք դեռ երկար կզրուցեին նստարանին նստած, եթե հանկարծ չլսվեր.

– **Էհե՛յ**, ո՞վ կա այդտեղ:– Զբոսայգին արդեն փակում ենք:

– Ահա մի բառ էլ լսեցինք, որտեղ մենք երկուսով ենք,– ուրախ-ուրախ ասացին **Է**-ն ու **Ե**-ն:

Վազելով հասան ու մտան Այբուբեն:

3 Լրացրո՛ւ աղյուսակը՝ տեքստից դուրս գրելով հակառակ իմաստ ունեցող բառերը:

| եկավ | գնաց |
|---|---|
| փոքրիկ | |
| առողջ | |
| ուժեղ | |
| ոչ | |

4 Ըստ տեքստի՝ ամբողջացրո՛ւ նախադասությունները:

Մայրիկն առողջացավ, որովհետև _____:

Մայրիկն ուրախացավ, որովհետև _____:

Այս պատմվածքից ես սովորեցի, որ _____:

## ԱՇԽԱՏԱՆՔ ՕՐԱԳՐՈՒՄ

5 Գրի՛ր ջերմացնող, քաղաքավարի բառեր, որոնք դու գործածում ես ընտանիքիդ անդամների, ընկերներիդ և շրջապատի մարդկանց հետ շփվելիս:




## ԱՌԱԾ

Խոսք կա՝ սարի գլուխ կհանի, խոսք կա՝ սարից ներքև կքերի:

6 Մեծահասակներին հարցրո՛ւ, թե որ խոսքերն են սարի գլուխ հանում: Գրի՛ առ և համեմատի՛ր ընկերոջդ գրածի հետ:

## ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

_____ _____ _____ _____

**Սիրով ասված խոսքը կարող է մոռացնել մարդու հոգսերը, ջերմացնել նրան:**

24

**Առաջադրանք 3:**

Երեխաները տեքստից գտնում են «հակառակորդ» (հակառակ իմաստ ունեցող) բառերը և լրացնում աղյուսակը:

Առաջադրանքը կարելի է գրել տետրում առանց աղյուսակը գծելու:

3 Լրացրո՛ւ աղյուսակը՝ տեքստից դուրս գրելով հակառակ իմաստ ունեցող բառերը:

| | |
|---|---|
| **եկավ** | **գնաց** |
| **փոքրիկ** | |
| **առողջ** | |
| **ուժեղ** | |
| **ոչ** | |

Այս առաջադրանքի նպատակն է հականիշների մասին նախագիտելիքներ ձևավորելը, գործնական ճանապարհով դրանք ճանաչելը: Առաջադրանքը նպաստում է նաև երեխաների ուշադրության զարգացմանը, տեքստը ուշադիր կարդալուն:

**Առաջադրանք 4:** Ըստ տեքստի՝ ամբողջացրո՛ւ նախադասությունները:

Մայրիկն առողջացավ, որովհետև _____
Մայրիկն ուրախացավ, որովհետև _____
Այս պատմվածքից ես սովորեցի, որ _____

Համադրելով տեքստից յուրացրածը, մտագրոհի արդյունքները՝ երեխաները լրացնում են նախադասությունները: Սա կարելի է համարել մի յուրատեսակ ամփոփում, վերաբերմունքի դրսևորում և եզրակացություններ անելու հնարավորություն:

**2.8.8. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրում**

**Առաջադրանք 5.** Շարունակի՛ր լրացնել «Բարև՛, ես եմ» օրագիրը:

*Հիշի՛ր և գրի՛ր այն ջերմացնող, քաղաքավարի խոսքերը, որոնք դու գործածում ես ընտանիքիդ անդամների, ընկերներիդ և շրջապատի մարդկանց հետ շփվելիս:*

Ուսուցիչը հարցնում է երեխաներին, թե ինչու է հեղինակը պատմվածքի համար ընտրել «Խոսքի ուժը» վերնագիրը: Աշակերտները արտահայտում են իրենց կարծիքներն ու մտքերը: Ուսուցիչը գրատախտակին փակցնում կամ նկարում է ճյուղատարած, առանց տերևների մի մեծ ծառ և ասում է, որ այս ծառը իրենց օգնության կարիքն ունի, որ նորից կանաչի ու պտուղ տա: Ուսուցիչը նախապես պատրաստում է մի արկղիկ և մեջը դնում թղթե ձևավոր շերտիկների վրա գրված բառեր, մտքեր: (Թղթերը կարելի է կտրատել որևէ պտուղի տեսքով): Ցույց է տալիս արկղիկը և ասում, որ այնտեղ հավաքվել են խոսքեր, որոնք կարող են տարբեր գործեր կատարել: Առաջարկում է արկղիկից հանել, ընտրել և ծառի ճյուղերին փակցնել այն խոսքերը, որոնք կարող են առողջացնել ծառը, օգնել նրան: Թղթերի վրա գրված են «շնորհակալություն», «խնդրեմ», «ես կօգնեմ», «չեմ անի», «լավ եմ անում», «քո գործը չի», «սիրում եմ», «ներիր», «խնդրում եմ», «քե՛զ ինչ» և այլ խոսքեր:

Աշակերտները արկղիկից հանում են թերթիկները, կարդում, ընտրում են «ջերմացնող» խոսքերը և ամրացնում ծառի ճյուղերին:

Կարդում են նաև արկղիկում մնացած բառերը և մեկնաբանում, թե ինչու այդ բառերը չամրացրին ծառի ճյուղերին:

Խաղի ավարտին աշակերտները եզրակացնում են, որ ջերմ, քաղաքավարի, սիրալիր խոսքերը մեծ, ներգործող ուժ ունեն, կարող են առողջ պտուղներ տալ, օգնել բոլորին, ջերմացնել և բարի դարձնել աշխարհը:

Նույնիսկ փոքրիկ խոսքը կարող է մեծ գործ կատարել՝ առողջացնել մայրիկին, ջերմացնել մարդկանց հոգիները:

**Առաջադրանք 6.**

Ներկայացվում է ժողովրդական մի առած, որը խտացրած կերպով ամփոփում է պատմության ասելիքը: «Խոսք կա՝ սարի գլուխ կհանի, խոսք կա՝ սարից ներքև կբերի»:

Երեխաներին տրվում է փոքրիկ հետազոտական աշխատանք՝ մեծահասակներից հարցնել, թե որ խոսքերն են սարի գլուխ հանում: Առաջադրանքը կնպաստի երեխաների մեջ հարցեր տալու կարողությունների, ընկերների հետ տվյալ հարցի վերաբերյալ մտքեր արտահայտելու, երևույթի էությունը ավելի խոր ըմբռնելու ունակությունների զարգացմանը:

**2.8.9. Դասից քաղած իմ պտուղները**

- **Ես սովորեցի** տեքստը պատմել տեքստի հերոսների անունից:
- **Ես կարողացա** տեքստը պատմել հարցերի օգնությամբ:
- Ինձ պատկերացրի հերոսի դերում և պատմվածքը պատմեցի նրա անունից:
- Կռահեցի, թե ինչ անսովոր հերոսների անունից է ուսուցիչը պատմում տեքստը:
- Ես կարողացա բառերից առանձնացնել ջերմ, քաղաքավարի ,սիրալի խոսքերը և հասկացա, թե որքան կարևոր է դրանց գործածումը:
- **Ես հասկացա**, որ խոսքը մեծ ուժ ունի, և փոքրիկ խոսքն էլ կարող է մեծ գործ կատարել:
- Կարողացա նկարներով պատկերված բառակապակցությունները գրել մեկ բառով:
- **Ինձ դուր եկավ** քամու անունից գրված պատմությունը:

Դասի ավարտին երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված ամփոփիչ խոսքը և քննարկում:

**Սիրով ասված խոսքը կարող է մոռացնել մարդու հոգսերը, ջերմացնել նրան:**

## 2.9. ՄԻ ՀԵՔԻԱԹ ՈԶՆՈՒ ՄԱՍԻՆ

**Դասի սկզբում ուսուցիչը կազմակերպում է զրույց «Բարություն, բարի գործեր» թեմայով:**

Ուսուցիչը զրույցի միջոցով բացահայտում է երեխաների պատկերացումները բարության, բարի գործեր կատարելու մասին: Բացատրում է, որ բարի լինել նշանակում է թե՛ խոսքով, թե՛ գործողությամբ ցավ չպատճառել դիմացինին, ընդունել նրան այնպիսին, ինչպիսին նա կա, չծաղրել դիմացինի թերությունները, չնեղացնել իրենից փոքրերին, չհալածել կենդանիներին, հնարավորության դեպքում ձմռանը կերակրել նրանց:

Հոգատար և ուշադիր լինել ընտանիքի անդամների, ընկերների, մտերիմների, դասընկերների նկատմամբ, կարողանալ բարի, քնքուշ վերաբերմունք ցուցաբերել հիվանդներին, թույլերին: Երեխաները պետք է հասկանան, որ բարի լինում են ուժեղները, համարձակները, այնպիսիք, որոնք կարող են ուրիշի համար նեղություն կրել, չարչարվել, իրենց ժամանակը, իրենց միջոցները չխնայել նրանց համար: Բարի լինելը անպայման փոխհատուցվում է: Բայց բարություն անելիս, մեկին օգնելիս չպետք է այդ ամենը անել ցուցադրաբար, որ բոլորը տեսնեն. չէ՞ որ դա նվաստացնում և վիրավորում է նրան, ում լավություն ես անում: Այնպես պետք է լավություն անես, բարի գործ կատարես, որ ձախ ձեռքդ չիմանա, որ աջով լավություն ես արել: «Լավություն արա՛, ջուրը գցի՛ր. ձուկը չիմանա, Աստված կիմանա»,- ասում է առածը: Այսինքն՝ բարությունը, բարի գործը արա աննկատ, ոչ ցուցադրաբար, և դա կփոխհատուցվի:

Չկա մեծ ու փոքր բարի գործ: Ամենաաննշան թվացող բարի գործը ևս շատ մեծ արժեք ունի:

Մարդը, մեծ լինի, թե փոքր, ինքն իր նկատմամբ էլ պետք է բարի լինի: Դպրոցականը պետք է լավ սովորի, պահպանի առողջությունը, մարզանք անի, գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերի, լավը դառնա շրջապատի համար: Այս ամենով ինքը բարություն կանի իր ընտանիքին, իր դպրոցին, իր մտերիմներին ու հարազատներին:

Բարի լինելը հեշտ չէ, ինչպես հեշտ չէ ցանկացած լավ բան անելը:

Եթե ուզում ես բարի լինել փոքրիկ թռչնի նկատմամբ, պիտի չքանդես նրա սարքած բույնը և թույլ չտաս, որ ուրիշները քանդեն կամ ձեռք տան բնի միջի թռչնի ձվերին կամ ձագերին, իսկ մեծ քաղաքներում բույն շինես նրա համար, ձմռանը կերակրես:

Այսինքն՝ բարի լինել նշանակում է ինչ-որ բարի, լավ բան անել: Ամեն բան սկսվում է բարի բաներ մտածելուց: Բարի՛ մտածիր ու բարի՛ք գործիր:

Այս դասին դու.

• Կվերհիշես և կամրապնդես ռ-ի մասին ունեցած գիտելիքներդ:

• Ընկերներիդ հետ կբեմականացնես հեքիաթը:

• Կսովորես հարցեր տալ:

• Կհասկանաս, թե որքան կարևոր է հոգատար և բարի լինելը:

• Կկարողանաս դեղատոմս գրել քո սիրելի կենդանու համար:

vachagan.am

## ՄԻ ՀԵՔԻԱԹ ՈԶՆՈՒ ՄԱՍԻՆ

Ռոլանդ Շառոյան

**Հետաքրքիր է՝ ինչ բարի գործեր ես կատարել դու:**
**Պատմի՛ր դրանցից մեկի մասին ընկերներիդ:**
**Այս հեքիաթում էլ կան բարի գործեր կատարողներ:**
**Գտի՛ր, թե ովքեր են նրանք:**

Կա, ապրում է մի ոզնի՝ Ասեղ անունով, իր փոքրիկ եղբոր հետ: Մի օր Ասեղի եղբայրը հիվանդանում է: Կանչում են բժիշկ Այբոլիտին: Հիվանդին ստուգելուց հետո բժիշկ Այբոլիտը ծառերի լեզվով մի դեղատոմս է գրում խնձորի այգուն.

**«Խնդրում եմ փոքրիկ ոզնուն խնձորներ տալ»:**

Ոզնի Ասեղը գնում է այգի և դեղատոմսը տալիս է խնձորենուն:

– Խնդրեմ, Ասեղ, դու մեր այգու լավ բարեկամն ես, ինչքան կուզես տար, միայն թե ինչպե՞ս պիտի քաղես,– ասում է խնձորենին:

– Ես էլ չգիտեմ,– պատասխանում է ոզնի Ասեղը և շփոթված կանգնում ծառի տակ:



• Ի՞նչ է պատահում մի օր ոզնիների ընտանիքում:
• Ի՞նչ դեղատոմս է գրում բժիշկ Այբոլիտը:
• Ի՞նչ է ասում խնձորենին:
• Քո կարծիքով՝ ոզնի Ասեղն ինչպե՞ս կքաղի խնձորները:

### 2.9.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Առաջին կետը քննարկելիս երեխաները ներկայացնում են իրենց գիտելիքները Ռ հնչյուն-տառի մասին;

Երկրորդ կետը զվարթություն կբերի աշակերտներին: Հեքիաթի բեմականացումը միշտ էլ լի է ուրախ անակնկալներով:

Երրորդ կետը կարող է նաև զարմանք պատճառել երեխաներին. չէ՞ որ նրանք հարցեր տալու մեծ վարպետներ են: Ուսուցիչը պարզաբանում է, որ դասանյութն ուսումնասիրելիս ամեն բան պարզ կդառնա:

Չորրորդ կետի մասին երեխաները բավականաչափ ասելիք կունենան՝ հիմք ընդունելով նախորդ դասը:

Հինգերորդ կետում թեթևակի «սադրանք» պարունակող միտք է, որը կբորբոքի երեխաների երևակայությունն ու հետաքրքրասիրությունը:

«Հատկապես ո՞ր կետը ձեզ դուր եկավ»,- հարցնում է ուսուցիչը, լսում երեխաների պատասխաններն ու հիմնավորումները:

Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները հիշեն և ընկերներին պատմեն իրենց կատարած բարի գործերից որևէ մեկի մասին:

Ուսուցիչը խրախուսում է, որ աշակերտները իրենց խոսքում օգտագործեն նախորդ դասին իրենց օրագրերում գրած բարի, ջերմացնող, քաղաքավարի բառերը:

### 2.9.2. Տեքստի ընթերցում

Տեքստը ընթերցվում է բարձրաձայն, հատվածներով (ուսուցչի կամ աշակերտների կողմից): Յուրաքանչյուր հատվածից հետո աշակերտները պատասխանում են հարցերին, որոնք նպաստում են տեքստի նկատմամբ հետաքրքրության պահպանմանն ու ընկալմանը:

Առաջին հատվածը ավարտվում է դասագրքի 25-րդ էջում, որից հետո երեխաները պատասխանում են նույն էջի հարցերին.

- *Ի՞նչ է պատահում մի օր ոզնիների ընտանիքում:*
- *Ի՞նչ դեղատոմս է գրում բժիշկ Այբոլիտը:*
- *Ի՞նչ է ասում խնձորենին:*
- *Քո կարծիքով՝ ինչպե՞ս ոզնի Ասեղը կքաղի խնձորները:*

Երկրորդ հատվածը՝ մինչև հեքիաթի ավարտը, որից հետո երեխաները պատասխանում են տեքստի վերջում տրված երկու հարցին.

- *Ինչպե՞ս ոզնին կարողացավ քաղել խնձորները:*
- *Ինչո՞ւ էր ոզնին ուրախ:*

Տեքստը ընթերցելուց հետո ուսուցիչն առաջարկում է, որ բոլորը միասին լսեն և դիտեն տեսահոլովակն ու իրենց կարծիքները հայտնեն:

Այդ պահին քամին, որ հոգնել էր երկար թափառելուց, պառկած է լինում այգու ցանկապատի տակ և մի մեղմ երգ է սուլում: Քամին լսում է նրանց խոսակցությունը:

– Ես հիմա քեզ կօգնեմ,– ասում է քամին և ո՜ւո՜ւո՜ւ սուրալով պտտվում խնձորենու շուրջը:

Մեկը մյուսի հետևից խնձորներն ընկնում են և շարվում ոզնու փշերին: Հետո քամին նորից գնում և պառկում է իր տեղը ու մեղմ սուլում:

Ոզնի Ասեղը շնորհակալություն է հայտնում քամուն ու խնձորենուն և ուրախ-ուրախ վերադառնում տուն: Իսկ նրա եղբայրը ուտում է խնձորներն ու առողջանում:

• Ինչպե՞ս ոզնին կարողացավ քաղել խնձորները:
• Ինչո՞ւ էր ոզնին ուրախ:

## Հարցեր

1. Ովքե՞ր էին հեքիաթի հերոսները:
2. Ինչպե՞ս Ասեղն օգնեց եղբորը:
3. Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր ոզնու եղբայրը:
4. Եթե քամին չլիներ, ի՞նչ կաներ ոզնին:
5. Ի՞նչ բարի գործեր կատարվեցին հեքիաթում:
6. Ի՞նչը օգնեց, որ առողջանա ոզնին:
7. Քո կարծիքով՝ ի՞նչ հարցեր կտա հիվանդ ոզնին իր եղբորը, երբ տեսնի խնձորները:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*հեքիաթ*
*եղբայր*
*առողջանալ*
*վերադառնալ*

## Առաջադրանքներ

1 Արտագրի՛ր տեքստի վերջին երկու նախադասությունը: Ընդգծի՛ր **ո** պարունակող բառերը:



**2.9.3. Հարցերի և առաջադրանքների օրինակներ**

- Ովքե՞ր էին հեքիաթի հերոսները: (Ոզնի Ասեղը, ոզնու եղբայրը, Այբոլիտը, խնձորենին, քամին)

- Ի՞նչ էր պատահել Ասեղի եղբորը: (Հիվանդացել էր)
- Ինչպե՞ս Ասեղն օգնեց եղբորը: (Դիմեց բժշկի և կատարեց նրա ցուցումը)
- Ո՞ւմ դիմեց ոզնի Ասեղը: (Այբոլիտին)
- Ի՞նչ դեղատոմս գրեց Այբոլիտը: (Այբոլիտը որպես դեղամիջոց առաջարկեց խնձորներ)
- Ի՞նչ պատասխանեց խնձորենին: (Համաձայնեց տալ խնձորներ այգու բարեկամ ոզնուն)
- Ո՞վ օգնեց ոզնուն հավաքելու խնձորները: (Քամին)
- Ի՞նչ կասես քամու մասին: (Քամին պատրաստակամ էր, բարի, հնարամիտ)
- Ինչպե՞ս կբացատրես ***թափառել*** բառը: (Շրջել, զբոսնել, ման գալ)
- Եթե քամին չլիներ, ի՞նչ կաներ ոզնին: (Օգնություն կխնդրեր որևէ ուժեղ կենդանուց, տերևների մեջ կփնտրեր ընկած խնձորներ, և այլն)
- Ի՞նչ էր զգում Ոզնի Ասեղը պատմության սկզբում, վերջում: (Սկզբում նա անհանգիստ էր, մտահոգ, իսկ վերջում՝ ուրախ)
- Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր ոզնու եղբայրը: (Նույն կերպ կվարվեի, թեյ կտայի, կկանչեի մայրիկին, խորհուրդ կհարցնեի մեծերից, և այլն)
- Ի՞նչ բարի գործեր կատարվեցին հեքիաթում: (Ոզնի Ասեղը բուժեց եղբորը: Քամին թափեց խնձորները: Այբոլիտը ճիշտ խորհուրդ տվեց: Խնձորենին համաձայնեց տալ իր պտուղները)
- Ինչո՞ւ բոլորն օգնեցին Ասեղին: (Որովհետև Ասեղն էլ բարի էր, հոգատար, բոլորին օգնող)
- Ի՞նչը օգնեց, որ առողջանա ոզնին: (Հոգատար վերաբերմունքը, բարի վերաբերմունքը, ուշադրությունը, խնամքը, պատրաստակամությունը, բուժիչ օգնությունը)

**2.9.4. Աշխատանք կարդալու կարողությունների զարգացման շուրջ**

Այդ նպատակով կարելի է կազմակերպել ընտրովի ընթերցանություն՝ աշակերտներին առաջարկելով ընթերցել.

- ամենից շատ դուր եկած հատվածը,
- ամենակարևոր հատվածը,
- ամենաուրախ հատվածը:

**Առաջադրանք 1.** Արտագրի՛ր տեքստի վերջին երկու նախադասությունը: Ընդգծի՛ր **n** պարունակող բառերը:

Երեխաները կընդգծեն **ոզնի, շնորհակալություն, խնձորենի, առողջանալ բառերը:**



**2** Ամբողջացրո՛ւ խնձորների կեսերը և կիմանաս, թե ինչն օգնեց հիվանդ ոզնուն:




vachagan.am

**3** Կարդա՛ «Ո-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը: Առանձնացրո՛ւ **ո** պարունակող բառերը: Մի սյունակով գրի՛ր այն բառերը, որոնցում **ո**-ն հնչում է **վo**, մյուս սյունակում՝ այն բառերը, որոնցում **ո**-ն հնչում է **o**:

vachagan.am

**Ո-Ի ԵՐԳԸ**

Բառի վերջում ես **o** եմ,
Սարը կողքիս՝ Սար**ո** եմ,
Կարը կողքիս՝ Կար**ո** եմ,
Բառամիջում ես **o** եմ՝
Ծ**ո**վ եմ, հ**ո**ղ եմ, խաղ**ո**ղ եմ:
Բառասկզբում միշտ **ո** եմ՝
**Ո**ս եմ, **ո**տք եմ, **ո**ր**ո**ր եմ,
Բացի մեկից: Ես **ո՞վ** եմ:




**4** Արտագրի՛ր շուտասելուկը՝ լրացնելով բաց թողած տառերը: Դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

☐ոսորդ ☐զնին

– ☐ղջո՜ւյն, ☐ղջո՜ւյն,
☐ոսորդ ☐զնի,
☐՞ոդ ես ☐ոսում:
– ☐՛չ, ☐ղկույզներ
☐սկի վազի:

vachagan.am

27

**2.9.5. Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ**

**Առաջադրանք 2.** Ամբողջացրո՛ւ խնձորների կեսերը և կիմանաս, թե ինչն օգնեց հիվանդ ոզնուն:

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է խնձորների կեսերի վրա:

Առաջարկում է, որ աշակերտները ամբողջացնեն բառերը, կարդան ստացված բառերը:

Առաջադրանքը լուծելով՝ երեխաները վերհիշում են բառերի վանկատման կանոնները և, միաժամանակ, գտնում, թե ինչը օգնեց հիվանդ ոզնուն՝ **հոգատարություն, ուշադրություն, փոխօգնություն, բարություն:**

Միասին պարզում են, որ այդ բառերն ամենակարևորն էին հեքիաթի հերոսների համար, և որ դրանք կարևոր են նաև իրենց կյանքում:

### 2.9.6. «ԽՆՁՈՐ» էլեկտրոնային առաջադրանքի նկարագրությունը

Խնձորներն ամբողջացնելու համար պետք է գտնել, թե որ երկու խնձորի վրա է գրված բառը: Կտացնելով **հոգատա** բառամասը պարունակող խնձորի կեսի վրա, այնուհետև՝ **ռություն** բառամասը պարունակող խնձորի կեսի վրա, նրանք ամբողջանում են, դառնում մի խնձոր, որի վրա գրված է **հոգատարություն**: Նույնը՝ ***փոխօգնություն, ուշադրություն, բարություն*** բառերի դեպքում:

Եթե խաղացողը սխալ բառամաս է ուզում դնել որպես շարունակություն, ապա կիսախնձորները կարմրում են և բառ չեն կազմում: Արդյունքում ստացվում է չորս խնձոր՝ **հոգատարություն, փոխօգնություն, ուշադրություն** և **բարություն** գրություններով:

**Առաջադրանք 3.** Կարդա՛ կամ լսի՛ր և դիտի՛ր «Ո-ի երգը»: Առանձնացրո՛ւ **ո** պարունակող բառերը: Մի սյունակով գրի՛ր այն բառերը, որոնցում **ո**-ն հնչում է՝ **վo**, մյուս սյունակում՝ այն բառերը, որոնցում **ո**-ն հնչում է **o**:

**Ո-ի երգը**

Բառի վերջում ես **o** եմ,
Սարը կողքիս՝ Սարո եմ,
Կարը կողքիս՝ Կարո եմ,
Բառամիջում ես **o** եմ՝
Ծով եմ, հող եմ, խաղող եմ:
Բառասկզբում միշտ **ո** եմ՝
Որս եմ, ոտք եմ, որոր եմ,
Բացի մեկից: Ես **Ո՞Վ** եմ :

| Հնչում է՝ վo | Հնչում է՝ o |
|---|---|
| որս | ծով, հող, խաղող |
| որոր | Սարո, Կարո |
| ոտք | որոր |
| | կողք, ով |

Պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել **որոր** բառի մեջ **ո**-ի տարբեր հնչողությանը: Այս բառը պետք է գրել երկու այուսակներում էլ, քանի որ բառասկզբում հնչում է ***վո***, իսկ բառամիջում՝ ***օ***:

**2.9.7. Խաղ՝ Ո-ի ուղղագրությունն ամրապնդելու նպատակով**

- Ուսուցիչը գրատախտակին գրում է (կամ նախապես գրված բառերը փակցնում է գրատախտակին, ցուցադրում է էկրանին) *լոր, հորդ, շող, պոչ, հորթ* բառերը:
- Աշակերտները հաշվում են գրված բառերի տառերի և հնչյունների քանակները:

- Գրում են նույն բառերն առանց առաջին տառի.

  **լոր հորդ շող պոչ հորթ**
  **որ որդ ող ոչ որթ**
- Եզրակացնում են, թե ինչը փոխվեց: (Տառերի քանակը պակասեց, իսկ հնչյուններինը՝ ոչ, փոխվեց բառի իմաստը, վերևի շարքում ***ո***-ն հնչում էր ***օ***, իսկ ներքևի շարքում՝ ***վո***:)

**Առաջադրանք 4.** Արտագրի՛ր շուտասելուկը՝ լրացնելով բաց թողած տառերը:

Երեխաները նախ լսում և դիտում են շուտասելուկի ասմունքը, որը ներկայացվում է երեք արագությամբ՝

- սովորական ընթերցման արագությամբ
- միջին արագությամբ
- մեծ արագությամբ:

Այնուհետև արտագրում են շուտասելուկը՝ լրացնելով բաց թողնված Ո տառը:

Բնականաբար բոլորն էլ ցանկանում են նմանօրինակել ասմունքողին, որը զվարթությամբ է լցնում դասարանը:

**ՃԱՅՆ ՈՒ ՈՐՈՐԸ**

Ճայը ասաց որորին.
– Ես անտառի թռչուն եմ՝
Աչքս նրա օրորին,
Ու ծովի հետ գործ չունեմ:

Փետուրներս սև են խիստ,
Ու շատ եմ ես անհանգիստ.
Դու թռչուն ես ձկնասուն,
Ինչո՞ւ են քեզ ճայ ասում:

Որորն ասաց սև ճային.
– Շատ եմ կանչում ես ճա՛յ, ճա՛յ,
Հետևելով իմ ձայնին,
Ինձ ասում են՝ ճա՛յ է, ճա՛յ:

Ես էլ շատ եմ զայրանում,
Իմ հարգելի՛ բարեկամ,
Ամեն մեկիս անունը
Պետք է տեղին ու ճիշտ տան:

5 Պատմի՛ր հեքիաթը՝ օգտվելով նկարաշարից:

6 Հեքիաթը պատմի՛ր հիվանդ ոզնու անունից:

7 ՄԻՆ ԱՅՍ

**ՄՆՋԱԽԱՂ**

Ընկերներիդ հետ մնջախաղի միջոցով ներկայացրեք հեքիաթի հերոսներին և նրանց գործողությունները:

8 • Քո կարծիքով՝ հեքիաթի հերոսներից ո՞ւմ է ուղղված այս երկտողը.

Թե հոգատար ես ու սիրով լիքը,
Գովելի է շատ քո անելիքը:

• Հիմնավորի՛ր կարծիքդ:

28

**2.9.8. Աշխատանք տեքստի վերարտադրման շուրջ**

**Առաջադրանք 5.**

*Պատմելու կարողությունների զարգացման* նպատակով կարելի է կազմակերպել տարբեր աշխատանքներ:

### 2.9.9. Տեքստի վերարտադրում նկարային դրվագաշարի միջոցով

Դրվագային նկարաշարը տեքստը պատմելու քայլաշարն է:
Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին.

- Ուշադիր դիտել նկարաշարը, մտքում կառուցել հեքիաթում տեղի ունեցող գործողությունների շղթան:
- Մեկ կամ մի քանի նախադասությամբ պատմել նկարաշարի դրվագներում ներկայացված գործողությունները: (Դրվագները ներկայացնում են տարբեր աշակերտներ:)
- Պատմել ամբողջական հեքիաթը՝ ըստ նկարաշարի:
- Ուշադիր լսել ընկերներին և, անհրաժեշտության դեպքում, կատարել լրացումներ:

Կարելի է դրվագաշարի նկարները նախապես ունենալ ձեռքի տակ, ցուցադրել խառնված հերթականությամբ, առաջարկել աշակերտներին, որ նրանք նախ դրվագները դասավորեն ըստ տեքստում կատարված գործողությունների հաջորդականության, ապա պատմեն հեքիաթը՝ օգտվելով դրվագաշարից և տեքստից:

### 2.9.10. Տեքստի վերարտադրում հեքիաթի որևէ հերոսի անունից

**Առաջադրանք 6.** Հեքիաթը պատմի՛ր հիվանդ ոզնու անունից:

Ոչ ստանդարտ մտածողության, երևույթներն անսովոր տեսանկյունից դիտարկելու, երևակայության զարգացման համար, որոնք ստեղծարար մտածողության հիմք են հանդիսանում, կարելի է երեխաներին առաջարկել, որ նրանք տեքստը պատմեն տարբեր հերոսների անունից՝ խնձորենու, քամու, հիվանդ ոզնու, Ասեղի, Այբոլիտի, խնձորի:

Ներկայացնենք, օրինակ, խնձորենու անունից:

*Ինչպես գիտեք, ես ապրում եմ իմ տանը՝ այգում:*

*Հող ու ջրից, արևից ու օդից խնձորներ եմ ստեղծում, կախում ճյուղերիցս, որ մարդիկ ու կենդանիները օգտվեն: Դա նաև ինձ է օգուտ: Նրանք սերմերս տարածում են, որ նոր խնձորենիներ աճեն:*

*Մի օր մեր այգու լավ բարեկամ Ոզնին եկավ մոտս ու խնձորներ ուզեց իր հիվանդ եղբոր համար: Նույնիսկ դեղատոմս էր բերել: Ես նրան առանց դեղատոմսի էլ կտայի խնձորներ: Բայց չգիտեի, թե ինչպես: Մնացել էինք շվարած: Լավ է, որ քամին լսեց մեր խոսակցությունը, ինձ մի լավ թափ տվեց և մի քանի խնձոր ընկավ ուղիղ ոզնու փշերին: Քամու թափ տալուց դեռ երբեք այդքան լավ չէի զգացել: Ոզնին էլ արագ հեռացավ, խնձորները հասցրեց իր հիվանդ եղբորը:*

### 2.9.11. Հեքիաթի բեմականացում

**Առաջադրանք 7.**

Կարելի է հեքիաթը ներկայացնել առանց խոսքերի՝ մնջախաղի միջոցով ցուցադրելով հեքիաթի հերոսներին և նրանց գործողությունները:

*Այս տեքստը հարմար է նաև բեմականացնելու համար:*

*Ուսուցչի կողմից առաջարկվող տարամակարդակ և տարատեսակ առաջադրանքները և աշակերտների կողմից դրանց ընտրությունը հնարավորություն են տալիս,*

*որ սովորողները տեքստը վերարտադրեն և պատմեն իրենց կրթական կարիքներին և նախասիրություններին համապատասխան:*

**Առաջադրանք 8.**

- Քո կարծիքով՝ հեքիաթի հերոսներից ո՞ւմ է ուղղված այս երկտողը:
  Թե հոգատար ես ու սիրով լիքը,
  Գովելի է շատ քո անելիքը:
- Հիմնավորի՛ր կարծիքդ:

Նկարներում պատկերված են հեքիաթի չորս հերոս՝ **քամի, Ասեղ ոզնի, բժիշկ Այբոլիտ** և **ծառ:**

Երեխաները կարող են տարբեր կարծիքներ հայտնել և հիմնավորել իրենց կարծիքները:

Վերջում բոլորն էլ գալիս են այն եզրակացության, որ երկտողը կարող է վերաբերել հերոսներից յուրաքանչյուրին:

**2.9.12. Հնարավոր պատասխաններ և հիմնավորումներ**

Երկտողն ուղղված է Ասեղին, որովհետև.

- Նրա հոգատարության շնորհիվ եղբայրն առողջացավ:
- Նա դիմեց Այբոլիտի օգնությանը:
- Նա խնձորներ բերեց եղբոր համար:

Երկտողն ուղղված է քամուն, որովհետև.

- Քամին առանց իրեն խնդրելու, պատրաստակամորեն օգնեց ոզնուն:
- Քամու շնորհիվ Ասեղը խնձորները «քաղեց» ծառից:

Երկտողն ուղղված է բժիշկ Այբոլիտին, որովհետև.

- Նա առանց վարանելու եկավ և ստուգեց հիվանդին:
- Նա հիվանդ ոզնու համար դեղատոմս գրեց:

Երկտողն ուղղված է ծառին, որովհետև.

- Նա սիրով խնձոր տվեց:
- Թույլ տվեց, որ իր խնձորները քամին ցած նետի:

ՀԱՆԵԼՈՒԿ
ԲԺԻՇԿ ԱՅԲՈԼԻՏ

Ազգանունը՝ Ցավքաշյան,
Իսկ անունը՝ Այայայ,
Հենց վատ զգաս աննշան,
Գնա մոտը անպայման:

9

vachagan.am

## ՍՈՎՈՐԻՐ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

Ոզնին պատասխանել է երեխաների հարցերին: Կարդա՛ այդ պատասխանները: Կռահի՛ր, թե ինչ հարցեր են տվել երեխաները:

| Երեխաների հարցերը | Ոզնու պատասխանները |
|---|---|
| | Ոզնին ունի 36 ատամ, կարճ պոչ, հազարավոր փշեր: |
| | Ոզնիների մեծ մասի թաթերին կա հինգ մատ: |
| | Ոզնին ուտում է սնկեր, հատապտուղներ, խոտ, երբեմն էլ՝ գորտեր և մկներ: |
| | Աշնանը ոզնին չոր տերևներից ու խոտից որջ է պատրաստում: |
| | Ոզնին այդ որջում քնում է մոտ 130 օր: |

10 ○ Գրի՛ր, թե ինչեր են պատկերված նկարներում:




✧ Օգտվելով նկարներից՝ բառակապակցությունները գրի՛ր մեկ բառով.
փշոտ կենդանի –
ութերորդ ամիսը –
որս անող –
գայլերի խումբ –
երեխայի ձռնվող մահճակալ –
սողացող կենդանի –

☼ Հաշվի՛ր ստացված բառերի տառերի և հնչյունների քանակները:

29

### 2.9.13. ՍՈՎՈՐԻ՛Ր ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

**Առաջադրանք 9.** Ոզնին պատասխանել է երեխաների հարցերին: Կարդա՛ այդ պատասխանները: Կռահի՛ր, թե ինչ հարցեր են տվել երեխաները:

| Երեխաների հարցերը | Ոզնու պատասխանները |
|---|---|
| | Ոզնին ունի 36 ատամ, կարճ պոչ, հազարավոր փշեր: |
| | Ոզնիների մեծ մասի թաթերին կա հինգ մատ: |
| | Ոզնին ուտում է սնկեր, հատապտուղներ, խոտ, երբեմն էլ՝ գորտեր և մկներ: |
| | Աշնանը ոզնին չոր տերևներից ու խոտից որջ է պատրաստում: |
| | Ոզնին այդ որջում քնում է մոտ 130 օր: |

**2.9.14. Աշխատանք հարցեր ձևակերպելու կարողության ձևավորման և զարգացման շուրջ**

***Սովորի՛ր հարցեր տալ***

Հարցեր տալու կարողությունը հրաշալի միջոց է, որի օգնությամբ կարելի է.

- աշակերտների մեջ ձևավորել ուշադիր կարդալու կարողություն,
- ընդլայնել աշակերտների մտահորիզոնը,
- աշակերտներին սովորեցնել արդյունավետ աշխատել տեղեկույթի հետ,
- բարենպաստ պայմաններ ստեղծել ուսումնական հաջող գործունեության ձևավորման համար:

Աշակերտները սովորաբար հարցեր են տալիս այն ամենի մասին, ինչն իրենց համար անհասկանալի է, ինչը լավ չեն հասկացել, կամ ուզում են լրացնել իմացածը, կամ երբ ուզում են նոր բան իմանալ:

«Սովորի՛ր հարցեր տալ» առաջադրանքի նպատակն է, որ աշակերտը, ուշադիր լսելով կամ կարդալով տեքստը, կարողանա ճիշտ հարցեր ձևակերպել:

Հարցեր ձևակերպելու կարողությունը ձևավորելու և զարգացնելու նպատակով կարելի է կազմակերպել տարբեր աշխատանքներ.

- Հարցեր առաջադրել, որոնց պատասխանները տրված նախադասություններն են:
- Հարցեր առաջադրել տրված փոքրիկ տեղեկատվական տեքստի շուրջ:
- Կազմակերպել տարաբնույթ լեզվատրամաբանական խաղեր, մասնակից դարձնել զանազան մրցահանդեսների:

Այս դեպքում նախադասությունների տեսքով ներկայացված են պատասխաններ, իսկ աշակերտները պետք է հարցեր ձևակերպեն այդ պատասխանների համար:

*Ոզնին պատասխանել է երեխաների հարցերին: Կարդա՛ այդ պատասխանները: Կռահի՛ր, թե ինչ հարցեր են տվել երեխաները:*

Ոզնին ունի 36 ատամ, կարճ պոչ, հազարավոր փշեր:

Ոզնիների մեծ մասի թաթերին կա հինգ մատ:

Ոզնին ուտում է սնկեր, հատապտուղներ, խոտ, երբեմն էլ՝ գորտեր և մկներ:

Աշնանը ոզնին չոր տերևներից ու խոտից որջ է պատրաստում:

Ոզնին այդ որջում քնում է մոտ 130 օր:

Աշակերտները կամ ուսուցիչը հերթով ընթերցում են նախադասությունները: Յուրաքանչյուր նախադասություն կարդալուց հետո երեխաները ձևակերպում են հնարավոր հարցեր այդ նախադասության համար:

Կարող են լինել նմանատիպ հարցեր.

- Ինչպիսի՞ կենդանի է ոզնին:
- Քանի՞ ատամ ունի ոզնին:
- Ինչպիսի՞ն է նրա պոչը:
- Որտե՞ղ են գտնվում ոզնու փշերը:
- Քանի՞ մատ կա ոզնու թաթերին:
- Ի՞նչ է ուտում ոզնին:
- Ինչպե՞ս է ոզնին պատրաստվում ձմռանը:
- Քանի՞ օր է քնում ոզնին:

Առկա է նաև այս առաջադրանքի էլեկտրոնային տարբերակը, որը QR-կոդի կամ vachagan.am կայքի հղումով հնարավոր է բացել:

**2.9.15. «ՈԶՆԻ» էլեկտրոնային առաջադրանքի նկարագրությունը**

Էկրանին երևում է դասագրքի 29-րդ էջի առաջադրանք 8-ը:

Աշակերտը սեղմում է «Ոզնու պատասխանները» սյունակի առաջին տողի վրա: Հատուկ պատուհանիկում բացվում է 3 հարց.

1. Քանի՞ ձագ ունի ոզնին:
2. Քանի՞ ատամ ունի ոզնին, ինչպիսի՞ պոչ, որքա՞ն փուշ:
3. Որտե՞ղ է ապրում ոզնին:

Աշակերտը պետք է կտացնի իր կարծիքով ճիշտ հարցի վրա: Եթե կտացնի 2-րդ հարցի վրա, ապա այդ հարցը գրվում է «Երեխաների հարցերը» սյունակի առաջին տողում, և աղյուսակի այդ տողը ներկվում է բաց կանաչ, այսինքն՝ հարցը ճիշտ է ընտրված: Իսկ եթե կտացնում է 1-ին կամ 3-րդ հարցի վրա, ապա դա դարձյալ գրվում է առաջին տողում, սակայն ամբողջ տողը կարմրում է և լսվում է արգելող ձայնային ազդանշան:

Նույն կերպ 2-րդ տողի համար բացվում են հետևյալ հարցերը.

1. Քանի՞ թաթ ունեն ոզնիները:
2. Ոզնին կարողանո՞ւմ է կանգնել հետևի թաթերի վրա:
3. Քանի՞ մատ կա ոզնու յուրաքանչյուր թաթին:

Նույն կերպ 3-րդ տողի համար բացվում են հետևյալ հարցերը.

1. Ոզնին հավաքո՞ւմ է հատապտուղներ:
2. Ի՞նչ է ուտում ոզնին:
3. Ոզնին ընտանի՞ կենդանի է:

Նույն կերպ 4-րդ տողի համար բացվում են հետևյալ հարցերը.

1. Ե՞րբ է ոզնին որջ պատրաստում և ինչպե՞ս:
2. Ոզնին կարողանո՞ւմ է հողի տակ փոս փորել:
3. Ոզնին ե՞րբ է ձագեր ունենում:

Նույն կերպ 5-րդ տողի համար բացվում են հետևյալ հարցերը.

1. Ոզնին ձմռանը սունկ հավաքո՞ւմ է:
2. Ոզնին իր որջում որքա՞ն ժամանակ է քնած մնում:
3. Ոզնին իր որջում երեք ամի՞ս է քնում:

**Առաջադրանք 10.**

Ինչպես տեսնում ենք, այս առաջադրանքը ևս «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է: Այսինքն՝ առաջադրանքը նախատեսված է տարբեր կարողություններով աշակերտների համար:

○ Գրի՛ր, թե ինչեր են պատկերված նկարներում:

Այս բնույթի առաջադրանքները, ինչպես նշեցինք վերևում, ինքնաթելադրության համար նախատեսված յուրօրինակ առաջադրանքներ են և նպաստում են երեխաների գրելու կարողությունների զարգացմանը: Պատկերված առարկաների, երևույթների, գործողությունների անվանումները մտքում վերականգնելը և ճիշտ ուղղագրությամբ գրելը նպաստում են թե՛ բառապաշարի հարստացմանը, թե՛ բազմաթիվ բառերի ուղղագրության իմացության ամրապնդմանը:

✧ Օգտվելով նկարներից՝ բառակապակցությունները գրի՛ր մեկ բառով:

Նմանօրինակ առաջադրանքների միջոցով երեխաները հարստացնում են իրենց բառապաշարը, զարգանում է նրանց լեզվազգացողությունը, նույն երևույթը կարողանում են արտահայտել համանիշ ձևերով:

Ձևավորվում են առարկայի, երևույթի էական հատկանիշները բնութագրող արտահայտությունների միջոցով առարկայի կամ երևույթի անվանումը գտնելու երեխաների կարողությունները: Տվյալ առաջադրանքում.

փշոտ կենդանի – ոզնի
ութերորդ ամիսը – օգոստոս
որս անող – որսորդ
գայլերի խումբ – ոհմակ
երեխայի ճոճվող մահճակալ – օրորոց
սողացող կենդանի - օձ

☼ Հաշվի՛ր ստացված բառերի տառերի և հնչյունների քանակները:

Երեխաները պետք է վերհիշեն Օ-ի, Ո-ի ուղղագրությունը և հաշվեն այդ բառերում հնչյունների ու տառերի քանակները.

*ոզնի – 4 տառ, 5 հնչյուն*

*օգոստոս - 7 տառ, 7 հնչյուն*

*որսորդ - 6 տառ, 7 հնչյուն*

*ոհմակ - 5 տառ, 6 հնչյուն*

*օրորոց - 6 տառ, 6 հնչյուն*

*օձ - 2 տառ, 2 հնչյուն:*

## ԳՐԱԳԱՐԱԿ

### ՈՐՍՈՐԴ Ո-Ն ՈՒ ՏԱՆՏԻՐՈՒՀԻ Օ-Ն

Դուռը թակեցին:

– Ո՞վ է,– հարցրեց տանտերը:

– Մենք ենք,– պատասխանեցին դրսից:

– Դուք ովքե՞ր եք:

– Օդաչուներ:

– Օդանավո՞վ եք եկել:

– Ո՛չ, օդապարիկով:

– Ի՞նչ եք ուզում:

– Մի հարց ունենք ձեզ:

– Վաղը կեսօրից հետո եկեք:

– Այսօր չի՞ լինի, շուտ ենք ուզում իմանալ հարցի պատասխանը:

– Լավ, եկեք, բայց տանտիրուհին տանը չէ:

Հյուրերը ներս մտան: Տան տերը՝ որսորդ **Ո**-ն, նստած էր բազմոցին:

– Ի՞նչ հարց է ձեզ հետաքրքրում,– հարցրեց **Ո**-ն:

– Ուզում ենք իմանալ, թե ինչո՞ւ, երբ դու բառերի սկզբում ես լինում, բոլորը քեզ ասում են **վo**:

– Օ՜,– ասաց **Ո**-ն:– Շա՜տ վաղուց ես **n**-ով սկսվող բոլոր բառերում հնչում էի **o**: Հետո, չգիտես թե ինչու, իմ անվան **վ**-ն էլ եկավ միացավ **o**-ին, ու ես բառերի սկզբում սկսեցի հնչել **վo**:

– Բա ինչո՞ւ **ով** և **ովքեր** բառերի դեպքում քեզ ասում են **o**:

– Այդ երկու բառերը մնացին որպես հին օրերի հիշողություն:

Այդ պահին ներս մտավ տանտիրուհի **Օ**-ն: Բարևեց հյուրերին: **Ո**-ն տանտիրուհուն ներկայացրեց հյուրերին և ասաց, թե ինչու են եկել:

Տանտիրուհի **Ո**-ն մեղմ ժպտալով ասաց.

– Այսօր, եթե բառասկզբում **o** է լսվում, ես եմ գրվում: Իսկ բառամիջում ու բառավերջում ես եմ հընչում, բայց իմ սիրելի **n**-ն է գրվում:

– Իհա՛րկե, միշտ չէ, որ այդպես է,– բարեհոգաբար ասաց **Ո**-ն:

– Հա՜, իհա՛րկե,– համաձայնեց **Օ**-ն:– Երբ ինձնով սկսվող բառերը բարդ բառեր են կազմում, ես մնում եմ **o**:

– Օրինակ՝ **այսօր, տնօրեն, անօգուտ, անօգնական**,– նրան լրացրեց **Ո**-ն:

Հյուրերը, լսելով այս բացատրությունները, շնորհակալություն հայտնեցին: Ուզում էին հրաժեշտ տալ: Սակայն տանտիրուհին ասաց, որ ուզում է երգել իր երգը.

### Օ-Ի ԵՐԳԸ

*Ես այբուբեն ուշ եմ մտել,*
*Բայց իմ տեղը լավ եմ գտել,*
*Մեծ Մաշտոցը ինձ չի գծել,*
*Սակայն իմ մեջ ձայն է լցրել:*

*Ավյունից եմ ծնվել մի օր,*
*Եվ անունս դրել են Օ,*
*Կլոր եմ ես, ունեմ եզերք՝*
*Ամբողջական մի տիեզերք:*

*Օդանավ եմ այսօր դարձել,*
*Օվկիանոս եմ կտրել-անցել,*
*Օդ եմ, օր եմ, օրենսդիր եմ,*
*Օգտակար եմ, օրագիր եմ:*

**11** **Խմբային աշխատանք**

Ընկերներիդ հետ գրի՛ր դեղատոմս մեր բարեկամ կենդանիներից մեկի համար՝

- նապաստակ
- ձի
- փիղ
- մեղու
- կատու
- շուն

**12** **ՆԿԱՐԵԼՈՒԿ**

• Հեքիաթի ո՞ր հերոսն է պատկերված նկարելուկով:

Ա „ =

• Նկարելուկով պատկերի՛ր խնձորենի:

**13** Գիտե՞ս, որ «Այբոլիտ» անունը ռուսերենից թարգմանաբար նշանակում է՝ «ա՜խ, ցավո՜ւմ է»: Բժշկին նոր անո՛ւն դիր հայերենով:

**14** **ԱՇԽԱՏԱՆՔ ՕՐԱԳՐՈՒՄ**

Հարցրո՛ւ, որ իմանաս




Օրագրում գրի՛ր տեղեկություններ քո անվան մասին:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

**Ես իմացա**

**Ես կարողացա**

**Ես արժևորեցի**

**Լավ է, որ հոգատար եղբայր ունես, թեկուզ այդ եղբայրը մի փշոտ ոզնի է:**



**Առաջադրանք 11.**

Ընկերներիդ հետ գրի՛ր դեղատոմս մեր բարեկամ կենդանիներից մեկի համար՝ նապաստակի, փղի, մեղվի, կատվի, շան, ձիու:

Աշխատանքը կարելի է կատարել խմբային մեթոդով: Խմբային աշխատանքը երեխաների մեջ ձևավորում է ընդհանուր նպատակ ունենալու, պարտականությունները բաժանելու, առաջադրված նպատակին հասնելու եղանակները համաձայնեցնելու, մեկի գործողությունները խմբի մյուս անդամների հետ համաձայնեցնելու, նպատակը և արդյունքը համեմատելու ունակություններ:

Խմբերով աշխատելիս անհրաժեշտ է պահպանել մի քանի պարզ պայման.

ա. Խումբը պետք է ստանա հստակ ու կոնկրետ ձևակերպված առաջադրանք՝ ամբողջովին կանխատեսելի արդյունքով:

բ. Խնդրի լուծման համար պետք է ապահովվեն անհրաժեշտ առարկաներ:

գ. Պետք է հստակեցվի՝ խումբը բանավո՞ր է պատասխանում, թե՞ գրավոր:

դ. Պետք է սահմանվի որոշակի ժամանակ աշխատանքը կատարելու համար:

ե. Ավարտին խմբերը հերթով ներկայացնում են իրենց աշխատանքը, լսում են միմյանց, անում լրացումներ:

Դասարանը բաժանվում է խմբերի: Խմբի ներսում յուրաքանչյուր աշակերտ գրում է իրենց խմբին բաժին հասած կենդանու համար իր բուժիչ դեղամիջոցը: Այնուհետև խմբում քննարկելուց հետո գրում են դեղատոմս, կազմակերպում դասարանային քննարկում, լսում բոլոր խմբերին:

**2.9.16. Աշխատանք նկարելուկի շուրջ**

**Առաջադրանք 12.**

Հեքիաթի ո՞ր հերոսն է պատկերված նկարելուկով:

Երեխաներն արդեն գիտեն նման նկարելուկներ կազմելու և լուծելու հնարքները:

Յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն լուծում է նկարելուկը: Այնուհետև համեմատում են լուծումները և գալիս ընդհանուր եզրակացության, որ նկարելուկով պատկերված է **Ասեղ**:

Երկու ստորակետով հեռացված են **սեղան** բառի **ա** և **ն** տառերը, մնացել է **սեղ**, որը առջևում դրված **Ա**-ի հետ կարդացվում է **Ասեղ**:

**Առաջադրանք 13.**

Առաջադրանքը ներկայացված է ՈՒԽ պայմանանշանով: Այսինքն՝ կատակային, զվարթ բնույթ ունի և խթանում է երեխաների երևակայությունը, ձևավորում ու զարգացնում է նրանց հումորի զգացումը:

Պատասխանները կարող են շատ տարբեր լինել՝ Ցավքաշյան, Ախցավյան, Ցավբուժյան, Դեղյան, Հաբունի, Դեղունի, Բուժյանց և այլն:

**2.9.17. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերով**

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է ուղղագրական արժեք ունեցող բառերի վրա, որոնք առանձնացված են դասագրքի 26-րդ էջում՝ ***հեքիաթ***, ***եղբայր, առողջանալ, վերադառնալ:*** Աշակերտները այդ բառերը գրում են իրենց տետրերում և սովորում այդ բառերի ճիշտ գրելաձևը: Աշակերտները կարող են նաև այդ բառերով կազմել և գրել բառակապակցություններ կամ փոքրիկ նախադասություններ:

**2.9.18. Աշխատանք «Բարև՛, ես եմ» օրագրում**

**Առաջադրանք 14.** Հարցրո՛ւ, որ իմանաս։

Հարցեր ձևակերպելու կարողության զարգացման նպատակով ուսուցիչը կարող է հանձնարարել, որ երեխաները տանը, դպրոցում հարցեր տալով իմանան տեղեկություններ իրենց անվան մասին և գրեն օրագրում։

**2.9.19. Դասից քաղած իմ պտուղները**

Երեխաների մեջ անդրադարձ կատարելու, սովորածը ամփոփելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց մեծանում են ուսումնական նյութը ավելի լավ ըմբռնելու, իմաստավորելու կարողությունները։ Այդ առումով յուրաքանչյուր դասի վերջում տրված՝ ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ խորագրին պետք է մեծ ուշադրություն դարձնել և հնարավորություն տալ, որ երեխաները ազատորեն արտահայտեն իրենց մտքերը.

- այսօր ես իմացա…
- ինձ համար հետաքրքիր էր…
- դժվարացա…
- հասկացա, որ…
- ես սովորեցի…
- ես արդեն կարող եմ…
- ինձ զարմացրեց…
- ես ցանկանում եմ…
- և այլն։

Ուսուցիչը խրախուսում է, որ երեխաները վերհիշեն և ասեն, թե ինչ սովորեցին և ինչ կարողություններ ձեռք բերեցին դասի ընթացքում։

Օրինակ.

- Սովորեցի **ռ**-ի երգը և ամրապնդեցի **ռ**-ի մասին ունեցած գիտելիքներս։
- Սովորեցի հարցեր ձևակերպել և պատասխանել հարցերին։
- Իմացա ընկերներիս կատարած բարի գործերի մասին։
- Պատմեցի իմ կատարած բարի գործերի մասին։
- Նկարաշարի օգնությամբ տարբեր հերոսների անունից պատմեցի հեքիաթը։
- Կազմեցի բառակապակցություններ և նախադասություններ գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերով։
- Կռահեցի հանելուկի պատասխանը, և այն։

**2.9.20. Ամփոփում**

Աշակերտները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված երկտողը, քննարկում, արտահայտում իրենց կարծիքը։

## «ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու.

- Կվերհիշես թեմատիկ շարքի հերոսներին:
- Կհորինես պատմություն:
- Կվերհիշես քո սովորած բառերի ձիշտ գրությունը:
- Կգնահատես «Բարև՛, ես եմ» օրագրում քո կատարած աշխատանքը:

### Առաջադրանքներ

1 ○ Կարդա՛ թեմատիկ խմբի հերոսների խոսքերը:

1. – Ես մանուկ եմ շատ ժրաջան, մեծ եմ արդեն, դպրոցական:
2. – Ես չեմ սիրում գրել-կարդալ, սիրում եմ խաղալ:
3. – Արի՛ մի կախարդական խաղ խաղանք:
4. – Ես հիմա քեզ կօգնեմ:
5. – Զարմանում եմ ջրի վրա, որ հոսում է:
6. – Ձայն չհանե՛ք, մայրիկս հիվանդ է:
7. – Ո՛չ, աղջիկս, արդեն լավացա:
8. – Դու մեր այգու լավ բարեկամն ես, ինչքան կուզես, տար:

✧ Գրի՛ր հերոսների անունները:

☼ Ո՞ր խոսքը ո՞ր հերոսինն է: Ո՞ր հերոսները խոսք չունեն: Այդ հերոսներին տո՛ւր մեկական հարց:

31

### 2.10.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Միասին քննարկում են գլխագրի կետերը և անցնում առաջադրանքների կատարմանը: Առաջադրանքները յուրատեսակ ամփոփում են ամբողջ թեմայի համար:

Ամփոփիչ առաջադրանքներով երեխաները վերհիշում են թեմայի հերոսներին, ԱՉՔԻ ԱՌԱՋ խորագրով ներկայացվող ուղղագրական դժվարություններ ունեցող բառերը, ամփոփում են օրագրում մի քանի շաբաթ կատարած իրենց աշխատանքը, հորինում են պատմություններ, որտեղ մասնակցում են թեմայի գլխավոր հերոսները:

**Առաջադրանք 1.**

«Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

Համեմատաբար թույլ առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է պարզապես կարդան թեմատիկ խմբի հերոսների խոսքերը:

Առաջադրանքի երկրորդ կետով պահանջվում է գրել նկարներում պատկերված հերոսների անունները՝ **Մանուկ, քամի, Նարե, Այբոլիտ, Ասեղ, մայրիկ, ծառ, Նարեկ, Աստղիկ:** Երեխաները պետք է հիշեն համապատասխան դասերի նկարազարդումները, գտնեն, թե որ հերոսը որ դասից է: Չհիշելու դեպքում կարող են ազատորեն թերթել թեմայի դասերի նկարազարդումները:

Առաջադրանքի երրորդ կետով երեխաները պետք է գրեն, թե որ խոսքը որ հերոսինն է:

1. Մանուկ
2. Նարեկ
3. Նարե
4. Աստղիկ
5. Մանուկ
6. Աստղիկ
7. Մայրիկ
8. Ծառ

Խոսք չունեն քամին, Այբոլիտը, Ասեղը: Այդ հերոսներին երեխաները պետք է տան մեկական հարց:

**Քամուն տրվող հարցերի օրինակներ.**

- Ինչո՞ւ օգնեցիր ոզնուն:
- Ինչո՞ւ էիր քնել ցանկապատի տակ:
- Ի՞նչ երգ էիր սուլում:

**Այբոլիտին տրվող հարցերի օրինակներ.**

- Կենդանիներին շա՞տ եք սիրում:
- Է՞լ ում եք խնձորով բուժել:
- Ի՞նչ լեզվով էիք գրել դեղատոմսը:

**Ասեղին տրվող հարցերի օրինակներ.**

- Եթե Քամին չօգներ՝ ի՞նչ էիք անելու:
- Խնձորներով վազելը դժվա՞ր է ոզնու համար:
- Խնձորներից դու էլ կերա՞ր:

**Կարելի է հանձնարարել, որ այդ անուններով կազմեն նախադասություններ:**

- Այս անուններով հնարավոր նախադասությունների օրինակներ:
- Ասեղը քամու ժամանակ վնասել էր ոտքը և դիմեց Այբոլիտին:
- Թեև քամի էր, բայց Այբոլիտը գնաց Ասեղի մոտ:
- Քամին քշեց Այբոլիտի գլխարկը, բայց Ասեղը գտավ ու վերադարձրեց:
- Այբոլիտը Ասեղին գրկած, գնում էր քամուն ընդառաջ:

Այս առաջադրանքը նաև կարելի է կատարել խաղի միջոցով՝ դասարանը խմբերի բաժանելով:

**2.10.2. Խաղ՝ «Ո՞ւմ խոսքերն են»**

Խաղը հնարավորություն կընձեռի ևս մեկ անգամ վերհիշելու դասանյութերը, գլխավոր հերոսներին և նրանց մտքերը:

Խաղի ընթացքը.

- Սովորողներին բաժանել խմբերի:
- Յուրաքանչյուր խմբին թղթի առանձին շերտերով տալ դասագրքի 31-րդ էջում մեջբերված խոսքերը և հերոսների նկարները:

Խմբի անդամները պետք է յուրաքանչյուր նկարի ներքևում գրեն այն թղթի շերտի համարը, որի հեղինակը նկարում պատկերված հերոսն է:

Իսկ խոսք չունեցող հերոսներին տան հարցեր կամ նրանց անուններով առանձին թղթի վրա կազմեն նախադասություններ:



**2**

Բառաղյուսակում բառերը կարդացվում են ձախից աջ և վերևից ներքև: Գտի՛ր և դո՛ւրս գրիր «Աչքի առաջ» խորագրի քո սովորած բառերը:

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հ | ա | մ | բ | ու | ր | ե | լ | | | | | |
| հ | ե | ք | ի | ա | թ | ■ | թ | ■ | ղ | | | | | | |
| | ր | դ | ա | ր | ձ | ն | ե | լ | բ | | | | | | |
| | գ | ■ | ն | ա | և | կ | և | պ | ա | շ | տ | պ | ա | ն | ե | լ |
| | ե | կ | ա | ր | դ | ա | լ | ■ | յ | | | | | | |
| | լ | | լ | դ | ■ | ր | տ | ե | ր | և | | | | | |
| | | | վ | ե | ր | ա | դ | ա | ռ | ն | ա | լ | | | |
| | | | | ն | ■ | գ | | | | | | | | | |
| | ա | ռ | ո | ղ | ջ | ա | ն | ա | լ | | | | | | |
| | | | | | | ր | | | | | | | | | |
| | | | | | | դ | | | | | | | | | |

**3** Հորինի՛ր մի ուրախ պատմություն, որի հերոսները լինեն թեմատիկ խմբի գլխավոր հերոսները՝ մանուկը, ոգնի Ասեղը, Աստղիկը, Նարեն ու Նարեկը, Այբոլիտը, քամին, մայրիկը, խնձորենին:

**4** Լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված յունակում կկարդաս, թե ում էին հյուր եկել հեքիաթների հերոսները:




**5** Լրացրո՛ւ աղյուսակը ըստ «Բարև՛, ես եմ» օրագրում քո կատարած աշխատանքների՝ համապատասխան յունակում դնելով + նշանը:

| Իմ կատարած աշխատանքը | Բոլորը | Մի քանիսը | Մեկը | Ոչ մեկը |
|---|---|---|---|---|
| Լրացրել եմ օրագրի էջերը: | | | | |
| Գրել եմ առանց ջնջումների: | | | | |
| Նկարազարդել եմ էջերը: | | | | |
| Լրացրել եմ անսխալ: | | | | |
| Աշխատել եմ ինքնուրույն: | | | | |



### 2.10.3. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերով

**Առաջադրանք 2.** Այս առաջադրանքներին երեխան հանդիպում է գրեթե բոլոր դասերին: Միշտ էլ ուղղագրական դժվարություններ ներկայացնող բառերն առանձնացվել

են ինչ-որ կերպ, ավելի ցայտուն ներկայացվել, որ երեխաների ուշադրությունը սևեռվի դրանց վրա, տեսողական հիշողությունը ևս օգնի մտապահելու այդ բառերի ուղղագրությունը:

Դրանք տրվում են կամ շրջանակների մեջ, կամ հատուկ ձևավորմամբ, առանձնանում են գույնով և, որպես կանոն, ձեռագիր են:

Այդ բառերը երեխաները կարդում են թե՛ բնագրերում, թե՛ հատուկ առանձնացված և ձևավորված շրջանակներում, թե՛ գրում են տետրերում, թե՛ վարժություններ ու առաջադրանքներ կատարում դրանցով: Այդ ամենը նպաստում է դրանց ուղղագրության իմացությանը և ամրակայմանը հիշողության մեջ:

Այս ամփոփման մեջ դրանք ներկայացված են յուրօրինակ խաչբառի տեսքով: Երեխաները դրանք նախ պետք է գտնեն խաչբառի տողերում և սյունակներում, ապա գրեն առանձին-առանձին:

| Տողերով | Սյունակներով |
|---|---|
| համբուրել | երգել |
| հեքիաթ | հիանալ |
| դարձնել | արդեն |
| նաև | նկարազարդ |
| պաշտպանել | թեև |
| կարդալ | եղբայր |
| տերև | |
| վերադառնալ | |
| առողջանալ | |

### 2.10.4. Պատմության հորինում թեմատիկ խմբի գլխավոր հերոսներով

**Առաջադրանք 3.** Հորինի՛ր մի ուրախ պատմություն, որի հերոսները լինեն թեմատիկ խմբի գլխավոր հերոսները՝ մանուկը, ոզնի Ասեղը, Աստղիկը, Նարեն ու Նարեկը, Այբոլիտը, քամին, մայրիկը, խնձորենին:

Երեխաները արդեն բավական լավ են ճանաչում թեմատիկ շարքի հերոսներին, գիտեն նրանց բնավորությունը, գիտեն, թե նրանք ինչ կարող են անել: Ելնելով դրանից՝ նրանք կարող են հորինել ուրախ պատմություններ:

Օրինակ: Փչում էր մեղմ **քամի**: **Խնձորենու** տակ, **Ոզնի Ասեղին** գրկած, նստած էր **Բժիշկ Այբոլիտը** և **մայրիկի** հետ դիտում էր, թե ինչպես են ֆուտբոլ խաղում **Մանուկը, Աստղիկը, Նարեն** ու **Նարեկը:**

**2.10.5. Խաչբառի լուծում**

**Առաջադրանք 4.** Լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս, թե ում էին հյուր եկել հեքիաթների հերոսները:

Աշակերտներին հոգեհարազատ զբաղմունք է խաչբառ լրացնելը:

Այս դեպքում նրանք պետք է մտքում վերականգնեն նկարներում պատկերվածների անունները և, տառային վերլուծություն անելով այդ անուններով, լրացնեն խաչբառի տողերը: Ընդգծված սյունակում նրանք կկարդան, որ Այբոլիտը, Թզուկը, Բուրատինոն և Չիպոլինոն հյուր էին եկել **Ոզնուն**:

**2.10.6. «Բարև՛, ես եմ» օրագրում կատարած աշխատանքների ամփոփում**

**Առաջադրանք 5.** Լրացրո՛ւ աղյուսակը ըստ «Բարև՛, ես եմ» օրագրում քո կատարած աշխատանքների՝ համապատասխան սյունակում դնելով + նշանը:

| Իմ կատարած աշխատանքը | Բոլորը | Մի քանիսը | Մեկը | Ոչ մեկը |
|---|---|---|---|---|
| Լրացրել եմ օրագրի էջերը: | | | | |
| Գրել եմ առանց ջնջումների: | | | | |
| Նկարազարդել եմ էջերը: | | | | |
| Լրացրել եմ անսխալ: | | | | |
| Աշխատել եմ ինքնուրույն: | | | | |

Այս առաջադրանքով ավարտվում է «Բարև՛, ե՛ս եմ» օրագրում կատարվող աշխատանքը: Սա կատարած աշխատանքների յուրատեսակ ամփոփում է, ինքնագնահատման մի փորձ:

Աղյուսակում դրված + նշանները ինչքան շատ լինեն աղյուսակում, այնքան ավելի լավ աշխատանք է կատարել տվյալ աշակերտը:



*Գլուխ 3.* «ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ»
ԹԵՄԱՅԻ ԴԱՍԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

## 3.1. Աշխատանք «Ինչպես ենք մենք ինքնարտահայտվում» թեմայի սկզբնանկարի շուրջ

33

Այս թեմատիկ խումբը սկսվում է հինգ նկարից բաղկացած մի սկզբնանկարով: Երեխաները իրենց պատմություններն են հորինում սկզբնանկարում ներկայացված նկարների շուրջ: Թեմայի դասանյութերը ուսումնասիրելիս դրանք համեմատում են ներկայացված պատմությունների հետ, անում եզրակացություններ:

Ուսուցիչը հիշեցնում է, որ յուրաքանչյուր մոլորակ որևէ թեմատիկ խմբի պայմանանշանն է, իսկ թեմատիկ խմբում ընդգրկված են իրար «հարազատ» դասանյութեր, որոնցից յուրաքանչյուրը և բոլորը միասին արտահայտում են տվյալ թեմայի ընդհանուր գաղափարը, օգնում են դրա յուրացմանն ու անհրաժեշտ հետևություններ անելուն: Յուրաքանչյուր թեմա ունի սկզբնանկար, որը յուրատեսակ մուտքի պատուհան է տվյալ թեմայի դասանյութերին ծանոթանալու համար: Սկզբնանկարները դասագրքում «ճամփորդելու» համար յուրատեսակ նկարազարդ ուղեցույցներ են, որոնք դասագիրքը բաժանում են ըստ թեմատիկ շարքերի, հեշտ կողմնորոշվելու հնարավորություն են ընձեռում դասագրքից օգտվողին:

Սկզբնանկարները հնարավորություն են ընձեռում թռուցիկ կերպով ինքնուրույն ծանոթանալու թեմայի բովանդակությանը, կանխագուշակումներ անելու, հորինելու պատմություններ ըստ նկարների՝ դրանք հետագայում համեմատելով համապատասխան պատմությունների հետ:

Սկզբնանկարների նկարները վերցված են թեմայում ընդգրկված դասանյութերից:

Սկզբնանկարները երեխաների ուշադրությունը տվյալ թեմայի դասանյութերի վրա սևեռելու, նրանց հետաքրքրասիրությունը բորբոքելու, կռահումներ անելու, ստեղծարար մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու համար հիանալի միջոց են:

Առաջին նկարում Մեսրոպ Մաշտոցը ժպտալով գլխարկ է դնում Ը տառի գլխին: Երեխաները իրենց երևակայությամբ կստեղծեն որևէ զվարթ պատմություն. ինչո՞ւ հենց Ը տառի գլխին է դնում անտեսանելի գլխարկը, ինչո՞ւ են մյուս տառերն ուրախ, և այլն:

ԿԱՊԿՈՒ երեխաներին կարելի է հանձնարարել, որ նրանք հաշվեն և գրեն, թե ինչ տառեր են պատկերված նկարում:

Վերևի աջ նկարում ուրախ մայրիկ է պատկերված և փոքրիկ ուրախ մի տղա: Ինչո՞ւ են ուրախ նրանք, ի՞նչ են անում, ինչե՞ր կան նկարում (ծառ, արևոտ դաշտեր, տուն, ծաղիկներ): Ներքևի ձախ նկարում պատկերված են մարդիկ, որոնց դեմքերից ու ժեստերից երևում է, որ նրանք լարված մտածում են: Հետաքրքիր է՝ ինչի՞ մասին են մտածում: ԿԱՊԿՈՒ երեխաներին կարելի է հանձնարարել, որ նրանք ասեն (գրեն), թե ինչ կենդանիներ կան նկարում: Քանի՞ մարդ կա նկարում:

Աջ կողմի մեջտեղի նկարում փոքրիկ աղջիկը ինչ-որ բան է ասում մայրիկին: Նրա գլխավերևում պարուհիներ են պատկերված: Ի՞նչ են զրուցում մայր ու աղջիկ, ինչո՞ւ են պարուհիներ պատկերված: Վերջին նկարում պատկերված է մի կաքավիկ՝ իր ձագուկների հետ: Արևը դուրս է եկել ամպերի տակից: Երևում է կաքավիկի բույնը՝ հյուսած ծաղիկներով:

Ձախ կողմի ներքևի նկարում երեխաներից մեկը համակարգչով ինչ-որ խնդիր է լուծում, մյուսը՝ հեռուստացույցով մուլտֆիլմ է դիտում: Ավելի խորքում հին ժամանակների գիտնականներ են, իսկ հեռվում երևում է նախնադարյան մարդը՝ նետ ու աղեղով:

Այս դասին դու.

- Կսովորես «Վանկի երգը»:
- Կիմանաս, թե ինչու են ստեղծվել բառերը:
- Մնջախաղով կներկայացնես նախադասություններ:
- Մաուգլիին կսովորեցնես բառեր:

## ԵՍ

Ըստ Վիլյամ Սարոյանի

**Հետաքրքիր է՝ ո՞րն է եղել աշխարհում առաջին բառը:**

Վաղո՜ւց, շա՜տ վաղուց աշխարհում մի բառ կար՝ **ես**:

Եթե մեկնումեկն ուզում էր ասել. «Բարև՛, ես եմ», պարզապես ասում էր՝ **ես**: Եթե ուզում էր ասել. «Ինձ մի նարինջ տուր», կամ. «Ի՜նչ գեղեցիկ ծառ է», «Ցիտիկը ծլվլում է», դարձյալ միայն մի բառ էր ասում՝ **ես**:

Դա միակ բառն էր աշխարհում:

Մարդկանց մի մասը պարզապես գոռում էր այդ բառը, մյուսները շշուկով էին ասում, մի քանիսը՝ լացով, ոմանք էլ՝ ծիծաղելով. չէ՞ որ դա մարդկանց միակ բառն էր:

Մի օր էլ մարդկանց գլուխն սկսեց ցավել անընդհատ **ես-ես-ես-ես-ես** ասելուց-լսելուց: Գլխացավից ու ձանձրույթից ազատվելու համար նրանք շատ էին ուզում մի նոր բառ հորինել:



- Ո՞րն էր միակ բառը:
- Ինչպե՞ս էին մարդիկ իրար հետ խոսում:
- Ինչո՞ւ որոշեցին նոր բառ ստեղծել:
- Քո կարծիքով՝ ի՞նչ նոր բառ կհորինեն:

## 3.2. ԵՍ

### 3.2.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Աշակերտները կարդում են դասի գլխագիրը: Ուսուցչի ուղղորդմամբ՝ քննարկում կետերը: Գլխագրերում ներառված նպատակները ձևակերպված են այնպես, որ երեխաների համար դրանք լինեն հետաքրքիր, պարունակեն խորհրդավորություն, բորբոքեն երևակայությունը, որ երեխաները ցանկանան ուշադիր կարդալ տեքստը և կատարել առաջադրանքները: Միաժամանակ դրանք բոլորը չափելի նպատակներ են, ուսումնական գործունեության կարևոր բաղադրիչներ:

Առաջին կետը կարդալով՝ երեխաները հետաքրքրությամբ կցանկանան տեսնել, թե ինչպիսին է «Վանկի երգը»:

Երկրորդ կետը դարձյալ թեթևակի «սադրանք» է պարունակում և կարծիքների տեղատարափ կառաջացնի:

Երրորդ կետը առավել ևս կբորբոքի երեխաների երևակայությունը, կշարժի հետաքրքրասիրությունը:

Չորրորդ կետը զվարթության զգացողություններ կբերի երեխաներին և բոպե առաջ դասանյութերին ծանոթանալու ցանկություն:

### 3.2.2. Աշխատանք «Մուտքի պատուհանիկի» շուրջ

*«Հետաքրքիր է՝ ո՞րն է եղել աշխարհում առաջին բառը»:*

Կարող են լինել բազմազան պատասխաններ՝ *ողջույն, բարև, մամա, այո, ոչ, արի, քար, ծառ, ուտելիք, ես, դու, և այլն:*

Ուսուցիչը լսում է երեխաների կարծիքները առանց գնահատական տալու: Այնուհետև երեխաներին առաջարկում է խաղալ մի խաղ:

### 3.2.3. Խաղ՝ «Պատմիր ինչպես կարող ես»

Խաղից առաջ ուսուցիչը մի այսպիսի զրույց է վարում երեխաների հետ:

Շատ հին ժամանակներում մարդիկ ապրում էին քարանձավներում, և նրանց ապրուստի միակ միջոցը որսորդությունն էր: Կանայք մնում էին քարանձավներում, տղամարդիկ գնում էին որսի: Որսից վերադառնալուց հետո որսորդները պատմում էին մյուսներին, թե ինչպես է անցել որսը՝ ի՞նչ են որսացել և ինչպե՞ս:

Այնուհետև ուսուցիչը հերթով կանչում է երեք աշակերտի:

Առաջին աշակերտին տալիս է մի նկար, որի վերևում գրված է՝ **պատմի՛ր նկարն առանց բառերի՝ մնջախաղով:** Աշակերտը ներկայացնում է նկարի սյուժեն մնջախաղով: Մյուս աշակերտները կռահում են, թե ինչ է պատմում իրենց ընկերը: Ուսուցիչը չի մեկնաբանում աշակերտների պատասխանները: Կանչում է երկրորդ աշակերտին: Նրան տալիս է նույն նկարի երկրորդ տարբերակը, որի վերևում գրված է՝ **պատմի՛ր նկարը՝ օգտագործելով միայն «ես» բառը**: Մյուս աշակերտները կրկին ասում են, թե ինչ է պատմում իրենց ընկերը: Ուսուցիչը չի մեկնաբանում աշակերտների պատասխան-

ները, սակայն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ թեև կարելի էր օգտագործել միայն մեկ բառ, սակայն ավելի շատ բան հասկացվեց, քան նախորդ դեպքում:

Երրորդ աշակերտի նկարի վերևում գրված է՝ **պատմի՛ր նկարը**: Աշակերտը պատմում է նկարը: Ուսուցիչը երեխաների հետ հարցուպատասխանի միջոցով պարզում է, որ երրորդ դեպքում ավելի հեշտ էր և՛ ներկայացնելը, և՛ հասկանալը, թե ինչի մասին էր նկարը:

Վերջում նկարը պատմում է ուսուցիչը՝ երեխաներին հորդորելով ուշադիր լինել և առանձնացնել այն առարկաները, երևույթները, որոնք մինչ այդ ներկայացվել էին ոչ մանրամասն կամ ընդհանրապես չէին ներկայացվել:

Ուսուցիչն ամփոփում է խաղը ասելով՝ ինչպես նկատեցիք, առանց բառերի շատ ավելի դժվար էր արտահայտվել այնպես, որ բոլորին հասկանալի լիներ: Մեկ բառով փոքր-ինչ հեշտ էր, բայց ոչ լիարժեք հասկանալի: Իսկ արդեն բոլոր բառերի գործածմամբ շատ ավելի հեշտ և հասկանալի էր արտահայտվելը:

Իսկ գիտեք՝ բառերն էլ միանգամից չեն ստեղծվել, նրանք էլ իրենց ստեղծման պատմությունն ունեն: Կարդանք, տեսնենք, թե ինչպես են առաջացել բառերը՝ ըստ մեր պատմվածքի:

Այս խաղը կնպաստի երեխաների երևակայության զարգացմանը, երեխաները կզգան մայրենի լեզվի բառապաշարին տիրապետելու և կիրառելու կարևորությունը, ավելի նրբազգաց կդառնան այն մարդկանց նկատմամբ, ովքեր զրկված են բառերով արտահայտվելու կարողությունից, հարգանքով կվերաբերվեն նրանց:

### 3.2.4. Աշխատանք նկարազարդման շուրջ

Նախքան տեքստի ընթերցումը ուսուցիչը առաջարկում է, որ երեխաներն ուշադիր դիտեն էջի նկարազարդումը, պատմեն, թե ինչ են տեսնում նկարներում, և փորձեն գուշակել, թե որն է եղել այդ մարդկանց առաջին բառը: Պատասխաններն ու հիմնավորումները լսելուց հետո անցնում են տեքստի բարձրաձայն ընթերցմմանը:

### 3.2.5. Տեքստի բարձրաձայն ընթերցում

Կարելի է կիրառել «Դադարներով ընթերցանություն» մեթոդական հնարը: Այս մեթոդական հնարը հնարավորություն է տալիս կենտրոնացնել երեխաների ուշադրությունը, խթանել հետաքրքրությունը նյութի հաջորդ հատվածը կարդալու հանդեպ, աշակերտների մեջ զարգացնել միմյանց լսելու կարողությունը:

Ուսուցիչը կարդում է առաջին հատվածը: Այնուհետև աշակերտները պատասխանում են հարցերին:

- Ո՞րն էր միակ բառը:
- Ինչպե՞ս էին մարդիկ իրար հետ խոսում:

• Ինչո՞ւ որոշեցին նոր բառ ստեղծել:
• Քո կարծիքով՝ ի՞նչ նոր բառ կհորինեն:

Վերջապես մի մարդ, որի գլուխն ամենից շատ էր ցավում **ես** ասելուց, գտավ այդ նոր բառը: Կեսգիշերին արթնանալով՝ նա, ինչքան ուժ ուներ, գոռաց՝ **դո՜ւ**: Հաջորդ առավոտ աշխարհում մի նոր բառ կար՝ **դու**:

Եվ եթե կան **ես**-ն ու **դու**-ն, ինչո՞ւ չլինեն **իմ**-ն ու **քո**-ն, եթե կա **ոչ**-ը, ինչո՞ւ չլինի **այո**-ն, եթե կա **տաք**-ը, ինչո՞ւ չլինեն **սառը**, **կոշտ**-ն ու **փափուկ**-ը, **մոտիկ**-ն ու **հեռու**-ն, **թաց**-ն ու **չոր**-ը, **սխալ**-ն ու **ճիշտ**-ը, **լույս**-ն ու **խավար**-ը, **սև**-ն ու **սպիտակ**-ը:

Այսպես մարդիկ սկսեցին իրար հետ խոսել, հարցեր տալ ու պատասխանել և մտածել, թե ինչ բան է այս աշխարհը:

Եվ մինչև հիմա էլ փնտրում են այդ հարցի պատասխանը:



## Հարցեր

1. Ի՞նչ բառեր հորինեցին մարդիկ:
2. Ինչո՞ւ էին նոր բառեր հորինում:
3. Ի՞նչ ես կարծում՝ մարդիկ արդեն բոլոր բառերը հորինե՞լ են: Կարծիքդ հիմնավորի՛ր:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*Մարդիկ դարձյալ անընդհատ աշխարհ*

## Առաջադրանքներ

1

Ուշադի՛ր դիտիր տեքստի նկարազարդումը և այս նկարները:
• Թվարկի՛ր այն առարկաների անվանումները, որոնք, քո կարծիքով, վերջերս են ստեղծվել:
• Վերջերս ստեղծված ի՞նչ առարկա կավելացնես այս շարքում:

Ուսուցիչը կարդում է երկրորդ հատվածը: Այնուհետև երեխաները պատասխանում են հարցերին:

1. Ի՞նչ բառեր հորինեցին մարդիկ: (**Դու, իմ, քո, ոչ, այո, տաք, սառը, կոշտ, փափուկ, մոտիկ, հեռու, թաց, չոր, սխալ, ճիշտ, լույս, խավար, սև, սպիտակ**)

2. Ինչո՞ւ էին նոր բառեր հորինում: (Որ իմանան, թե ինչ բան է այս աշխարհը)

3. Ի՞նչ ես կարծում՝ մարդիկ արդեն բոլոր բառերը հորինե՞լ են: Կարծիքդ հիմնավորի՛ր: (Ո՛չ: Մարդիկ անընդհատ նոր առարկաներ են հորինում, նոր երևույթներ բացահայտում, և այդ բոլորին անուններ են հարկավոր)

**3.2.6. Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ ու եզրահանգումներ կատարելու նպատակով**

• Ե՞րբ են տեղի ունեցել դեպքերը: (Շա՛տ հին ժամանակներում)

• Ո՞րն էր միակ բառը, և ինչպե՞ս էին մարդիկ իրար հետ խոսում այդ բառով: (**Ես**: Մի մասը գոռում էր այդ բառը, մի մասը շշուկով էր ասում, մի մասը՝ լացով, ոմանք էլ՝ ծիծաղելով)

• Քո կարծիքով՝ հեղինակն ինչպե՞ս հասկացրեց, որ մեկ բառով դժվար է հաղորդակցվել: Կարդա՛ համապատասխան տողերը: (Մի օր էլ մարդկանց գլուխն սկսեց ցավել անընդհատ **ես-ես-ես** ասելուց-լսելուց)

• Մարդիկ ձանձրանում էին նույն բառն ասելուց: Հետաքրքիր է, ի՞նչ էր զգում բառը: (Բառն էլ էր հոգնել մարդկանց բերանում: Բառը շատ ուրախ էր, որ մենակ ինքն էր: Բառը ուզում էր ընկեր ունենալ: Բառի համար տխուր էր)

• Քո կարծիքով՝ բառն ուրա՞խ էր, որ ընկերներ ունեցավ: (Ուրախ էր, որ ընկերների հետ կարող էր նախադասություններ կազմել, խաղեր խաղալ)

• Մարդիկ մինչև հիմա ո՞ր հարցի պատասխանն են փնտրում: Իսկ դուք գիտե՞ք այդ հարցի պատասխանը: (Ի՞նչ բան է աշխարհը: Աշխարհը մենք ենք: Աշխարհը ամեն բան է: Ոչ ոք չի կարող ասել: Մեծանամ՝ կիմանամ)

• Ո՞րն է եղել քո արտասանած առաջին բառը: (Օրագրում գրել էի)

**Առաջադրանք 1.** Ուշադի՛ր դիտիր տեքստի նկարազարդումը և այս նկարները:

• Թվարկի՛ր այն առարկաների անվանումները, որոնք, քո կարծիքով, վերջերս են ստեղծվել:

• Վերջերս ստեղծված ի՞նչ առարկա կավելացնես այս շարքում:

Նկարներով պատկերված են՝ **հրթիռ, ինքնաթիռ, փոցխ, համակարգիչ, անիվ, հեռախոս, մոմ:**

Երեխաները ուշադիր դիտում են նկարը և դուրս են գրում այն առարկաների անվանումները, որոնք, ըստ իրենց, վերջերս են ստեղծվել: Աշխատանքը կատարում են նախ ինքնուրույն, ապա ընթերցում են իրենց տարբերակները: Ընթերցելիս ուշադիր լսում են ընկերներին և համընկնող բառերը չեն կարդում:

Ուսուցիչը կարող է այսպիսի հարց ուղղել աշակերտներին.

– Եթե դու լինեիր նկարիչը, ի՞նչ առարկա կավելացնեիր:

Պետք է ուշադիր լինել՝ հեռախոսը ստեղծվել է շատ ավելի վաղ, քան կարող է թվալ երեխաներին (մոտ 150 տարի առաջ): Ամենահինը կարող ենք համարել անիվը, որն ստեղծվել է անհիշելի ժամանակներում, այնուհետև մոմը՝ եթե վառվող ճյուղերը, կերոնները համարենք մոմի նախօրինակ, փոցխը, ինքնաթիռը, հրթիռը և վերջում՝ համակարգիչը:

Այս առաջադրանքի հետ կարելի է հանձնարարել փոքրիկ հետազոտական աշխատանք. երեխաները հետաքրքրվում են՝ օգտվելով տարբեր աղբյուրներից և լրացնում են իրենց բառերի շարքը:

2 Տրված բառերից ընտրի՛ր ճիշտ պատասխանը և գրի՛ր ✎-ի փոխարեն:

**Ես + դու + նա = ✎:**

- նարինջ
- մենք
- գլուխ

3

○ Կարդա՛ «Վանկի երգը»:

**ՎԱՆԿԻ ԵՐԳԸ**

Թե բառն ասես մասերով՝
Մա-սե-րով,
Ամեն մասում մի ձայնավոր՝
Ձայ-նա-վոր,
Դու կխոսես վանկերով՝
Վան-կե-րով,
Ամեն մի վանկ կարտասանես
Մի շնչով, մի շնչով:




✧ Երգից ընտրի՛ր միավանկ, երկվանկ, եռավանկ ու քառավանկ բառեր և գրի՛ր աղյուսակի համապատասխան սյունակներում:

| միավանկ | երկվանկ | եռավանկ | քառավանկ |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |

☼ Շարունակի՛ր լրացնել աղյուսակը: Յուրաքանչյուր սյունակում ավելացրո՛ւ ևս երկու բառ: Հիշի՛ր նաև «Աչքի առաջ» խորագրի բառերը:

4 Պատկերացրո՛ւ՝ հայտնվել ես պատմվածքի հերոսների աշխարհում, որտեղ **ես**-ը միակ բառն է: Ինչպե՞ս կհասկացնես, որ նրանց բարեկամն ես և սիրում ես նրանց:

36

**Առաջադրանք 2.** Տրված բառերից ընտրի՛ր ճիշտ պատասխանը և գրի՛ր ՞-ի փոխարեն:

**Ես + դու + նա = ՞:**

- **նարինջ**
- **մենք**
- **գլուխ**

Երեխաները պետք է արտագրեն **ես+դու+նա = ՞** արտահայտությունը և հարցական նշանի փոխարեն տեղադրեն ներքևի երեք բառերից մեկը: Յուրաքանչյուր ընտրություն պետք է հիմնավորվի: Այս առաջադրանքով ցույց է տրվում միասնականության գաղափարը, որ մենքը, այսինքն հանրությունը, բաղկացած է մեզանից՝ ինձանից, քեզնից, նրանից: Այս մասին ակնարկվում է նաև տեքստում:

Հասկանում են, որ յուրաքանչյուրն էլ աշխարհի մի մասնիկ է:

**Առաջադրանք 3**. Կարդա՛ «Վանկի երգը»:

**Վանկի երգը**
**Թե բառն ասես մասերով՝**
**Մա-սե-րով,**
**Ամեն մասում մի ձայնավոր՝**
**Ձայ-նա-վոր,**
**Դու կխոսես վանկերով՝**
**Վան-կե-րով,**
**Ամեն վանկը կարտասանես**
**Մի շնչով, մի շնչով:**

Ինչպես տեսնում ենք, սա «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

Երեխաները կարդում են վանկի երգը: Ուսուցչի ուղղորդմամբ հիշում են.

- ✓ Յուրաքանչյուր վանկում կա միայն մեկ ձայնավոր հնչյուն:
- ✓ Առանց ձայնավորի վանկ չի կարող լինել:
- ✓ Միավանկ բառերը կարող են կազմված լինել մեկ հնչյունից՝ **ու**, երկու հնչյունից՝ **ակ**, երեք հնչյունից՝ **պար**, չորս հնչյունից՝ **պարկ**, հինգ հնչյունից՝ **պարտք**:
- ✓ Բոլոր միավանկ բառերը և բոլոր վանկերը կարդացվում են մեկ շնչով:

Երգից ընտրի՛ր միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ բառեր և գրի՛ր աղյուսակի համապատասխան սյունակներում:

| միավանկ | երկվանկ | եռավանկ | քառավանկ |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |

☼ Շարունակի՛ր լրացնել աղյուսակը: Յուրաքանչյուր սյունակում ավելացրո՛ւ ևս երկու բառ: Հիշի՛ր նաև «Աչքի առաջ» խորագրի բառերը:

○ Երեխաներից ոմանք կարդում են երգը:

✧ Երեխաներից ոմանք լրացնում են աղյուսակը:

| միավանկ | երկվանկ | եռավանկ | քառավանկ |
|---|---|---|---|
| թե | ասես | Մասերով | կարտասանես |
| բառ | ամեն | Զայնավոր | |
| մի | մասում | Կխոսես | |
| դու | շնչով | Վանկերով | |
| վանկ | | | |

☼ Երեխաները շարունակում են լրացնել աղյուսակը համապատասխան բառերով:

**Առաջադրանք 4:** Երեխաներն արդեն բավականին փորձ ունեն որևէ երևույթ մնջախաղով ցույց տալու համար: Նրանք ազատ ու անկաշկանդ կարող են ցույց տալ, որ իրենք բարեկամներ են և ոչ թե թշնամիներ:



5

Մաուգլին այն տղան է, որ մանուկ ժամանակ հայտնվում է խոր անտառում և, մեծանալով վայրի կենդանիների մեջ, խոսել չի սովորում:

Պատկերացրո՛ւ, որ հանդիպել ես Մաուգլիին: Առաջինը ո՞ր բառը կսովորեցնես նրան և ինչպե՞ս:

**Գիտե՞ս, որ տառերը հնարավոր է չտեսնել, բայց կարդալ:**

Աշխարհում կան վատ տեսնող և կույր մարդիկ: Նրանցից մեկը ֆրանսիացի Լուի Բրայլն էր, որը երեք տարեկանում կուրացել էր: Սակայն նա 15 տարեկանում կարողացավ ստեղծել այբուբեն կույրերի համար:

Արդեն երկու հարյուր տարի Բրայլի ստեղծած ուռուցիկ այբուբենով կույր մարդիկ մատներով շոշափելով կարողանում են կարդալ:

6

Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը:

**Քոնն է, բայց ուրիշներն ավելի շատ են օգտագործում:**

Քանի դեռ խոսքը բերանումդ է, դու ես նրա տերը: Ասացի՛ր՝ նա է քո տերը:

7

Ընտանիքիդ անդամներին հարցրո՛ւ, թե որն է նրանցից ամեն մեկի սիրած բառը: Գրի՛ր դրանք և համեմատի՛ր ընկերոջդ գրածների հետ:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

**Բառերը հորինում ենք, որ հասկանանք մեզ և աշխարհը:**



**Առաջադրանք 5.** Առաջադրանքը նպաստում է, որ երեխաները պատասխանատու զգան իրենց դիմացինի նկատմամբ: Ճիշտ է, այստեղ դիմացինը իրենց սիրելի մուլտ-

ֆիլմի հերոսն է, սակայն, միևնույն է, պետք է ամենայն պատասխանատվությամբ մոտենալ հարցին: Իհարկե, կատակն ու հումորը բնավ չեն խանգարի գործին:

Երեխաները պետք է հիմնավորեն իրենց բառերի ընտրությունը: Դրանով կբացահայտվի նաև, թե նրանք ինչ խորությամբ են ընկալել տեքստը:

Պետք է «Մաուգլիի ուսուցումը» ընթանա զվարթ մթնոլորտում, բացահայտի երեխաների սրամտությունն ու հնարամտությունը, իրենց ընտրության հիմնավորումը: Կարելի է բեմականացնել՝ աշակերտներից մեկին դարձնելով Մաուգլիի դերակատար:

### 3.2.7. Անդրադարձ «Գիտե՞ս, որ…» խորագրին

Այս խորագրով տրվում են այնպիսի նյութեր, որոնք սերտորեն կապված են բնագրին, նպաստում են երեխաների աշխարհայացքի ձևավորմանը այս կամ այն հարցի նկատմամբ, տալիս են ստույգ և երեխաների համար մատչելի լրացուցիչ գիտելիքներ ուսացանվող նյութի վերաբերյալ:

Տվյալ դեպքում երեխաներին մատուցվում է մի նյութ, որից երեխաները եզրակացնում են, որ եղել ու կան մարդիկ, ովքեր մտածում են դիմացինի բարօրության, նրան երջանիկ դարձնելու, նրա կյանքի համար ավելի տանելի պայմաններ ստեղծելու համար: Այդպիսի մարդ էր ֆրանսիացի Լուի Բրայլը, որը ոչ միայն իր համար ստեղծեց այբուբեն, այլև բոլոր չտեսնող մարդկանց համար: Այսօր արդեն կույր լինելը արգելք չէ, որ մարդը կարողանա կարդալ, կրթվել ու դառնալ հասարակության լիարժեք անդամ:

### 3.2.8. Աշխատանք հանելուկի շուրջ

**Առաջադրանք 6.** Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը:

Հանելուկները ևս երեխաների սրամտությունը, հնարամտությունը զարգացնելու, առարկայի էական հատկանիշներով՝ հաճախ շատ խոր թաքցրած, առարկան գտնելու ժողովրդական բանահյուսության հիանալի նմուշներ են:

Այս հանելուկում առկա է թեթևակի «սադրանք» հանելուկը կարդացողի նկատմամբ: Ինչպե՞ս է հնարավոր, որ քո ունեցածը ուրիշն ավելի շատ օգտագործի, քան ինքդ:

Սա հաճախ հանդիպող հնարք է:

Երեխաների պատասխանները լսելուց, քննարկելուց հետո պարզում են, որ խոսքը մարդու անվան մասին է:

### 3.2.9. Աշխատանք առածի շուրջ

Ժողովրդական բանահյուսության մեկ այլ նմուշ է առածը: Այս առածը վերաբերում է սեփական խոսքի նկատմամբ պատասխանատվության գիտակցմանը: Եթե դեռ քո միտքը խոսք չես դարձրել ու ասել, ապա դա քոնն է: Սակայն եթե խոսքը ասացիր, ապա նա քեզ պարտավորեցնում է կատարել, հաստատել քո ասածը: Այսինքն՝ նա

դառնում է քո «տերը», դու պիտի ենթարկվես քո ասածին, պարտավոր ես քո ասածը կատարել:

**Առաջադրանք 7.** Ընտանիքիդ անդամներին հարցրո՛ւ, թե որն է նրանցից ամեն մեկի սիրած բառը: Գրի՛ր դրանք և համեմատի՛ր ընկերոջդ գրածների հետ:

Այս առաջադրանքը գալիս է լրացնելու այն առաջադրանքների շարքը, որոնցով պահանջվում է, որ երեխաները հարցեր տան, երկխոսության մեջ մտնեն շրջապատի մարդկանց հետ, գրառումներ անեն և համեմատեն ընկերների արած գրառումների հետ:

**3.2.10. Դասից քաղած իմ պտուղները**

Երեխաները տեքստը յուրացնելուց, առաջադրանքները կատարելուց, գլխագրի նպատակներն իրականացնելուց հետո ամփոփում են իրենց կատարած աշխատանքը՝ ներկայացնելով, թե ինչ իմացան, ինչից զարմացան և ինչ կարողացան անել:

Կարելի է տալ այսպիսի առաջադրանք: Լրացրե՛ք անավարտ նախադասություն-ները:

Ես իմացա _____

Ինձ զարմացրեց _____

Ես կարողացա _____

**Երեխաները շարունակում են անավարտ նախադասությունները:**

Կարող են լինել նմանատիպ պատասխաններ:

**Ես իմացա**, որ մեկ բառով դժվար է հաղորդակցվել:

...որ բառերի օգնությամբ ճանաչում ենք աշխարհը:

...որ բառերի օգնությամբ կարողանում ենք միմյանց նկարագրել և բնութագրել:

...որ բառերի օգնությամբ բացատրում ենք իրար մեր զգացածը:

**Ինձ զարմացրեց**, որ ըստ պատմվածքի առաջին բառը եղել է **ես**-ը, երկրորդ բառը՝ **դու**-ն:

Որ մեկ բառով հնարավոր է պատմել նկարի բովանդակությունը:

Որ կույրերի համար ստեղծվել են այբուբեն և գրքեր:

**Ես կարողացա** անգիր սովորել վանկի երգը, լուծել հանելուկը, լավ կարդալ ու պատմել տեքստը:

**3.2.11. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» շուրջ**

Այնուհետև երեխաները կարդում են դասագրքի ամփոփման պատուհանիկի միտքը:

**Բառերը հորինում ենք, որ հասկանանք մեզ և աշխարհը:**

Աշակերտները ասում են իրենց կարծիքները:

Ուսուցիչը կազմակերպում է փոքրիկ քննարկում:

Այս դասին դու.

• Բառերը կբաժանես խմբերի ըստ տարբեր հատկանիշների:

• Կճանաչես հեքիաթի հերոսին և նրա գործերը:

• Կիմանաս, թե ով է անտեսանելի գլխարկ նվիրել հեքիաթի հերոսին:

• Կհասկանաս, թե ինչ գործերով կարող ես օգտակար լինել շրջապատիդ:

## ՏԱ՞ՌՆ ԷԼ ԳԼԽԱՐԿ ՈՒՆԵՆԱ

Վաչագան Ա. Սարգսյան

vachagan.am

**Ինը ընձուղտ գնում են,**
**Ընձուղտների առջևում**
**Նա շատ հանգիստ մնում է,**
**Ինձի պոչին քնում է:**

Մեսրոպ Մաշտոցը շրջում էր Հայաստանում: Նա զրուցում էր մարդկանց հետ: Լսում էր նրանց խոսքերը, մտապահում հնչյունները: Տառեր էր հորինում այդ հնչյունների համար: Մի հնչյուն կար, որ Մեսրոպ Մաշտոցից մեկ թաքնվում էր բառերի մեջ, մեկ՝ երևում: Թփերի հետևից ծիկրակում* էր, պահմտոցի խաղում:

Աշխարհի շատ այբուբեններ գիտեր Մաշտոցը: Այբուբեններից ոչ մեկում այդ **Ը** հնչյունի համար ոչ ոք տառ չէր ստեղծել: Մի օր Մաշտոցը, նստած ծառի հովին, զրուցում էր իր ստեղծած տառերի հետ: Հանկարծ թփերի միջից լսվեց՝ **ը՛, ը՛, ը՛**:

Մաշտոցը մտերմաբար ասաց.

– Ուզո՞ւմ ես միանալ մեզ և բառերի մեջ էլ պահմտոցի խաղալ:



• Ինչպե՞ս էր Մեսրոպ Մաշտոցը հնչյունների համար տառեր հորինում:
• Ո՞ր հնչյունի համար ոչ մի այբուբենում տառ չէին ստեղծել:
• Ի՞նչ լսեց Մեսրոպ Մաշտոցը, երբ զրուցում էր իր ստեղծած տառերի հետ:

* **Ծիկրակել** – թաքուն նայել:

**3.3.1. Անդրադարձ գլխագրին**

Ուսուցիչը կամ աշակերտները հերթով կարդում են գլխագրի կետերը, արտահայտում իրենց կարծիքները, քննարկում: Մեծ հետաքրքրություն և աշխուժություն կառաջացնի նախավերջին կետը: (Կիմանաս, թե ով է անտեսանելի գլխարկ նվիրել հեքիաթի հերոսին:) Նախ պետք է ճշտել, թե ինչ է նշանակում անտեսանելի գլխարկ: Դա ա՞յն գլխարկն է, որը չի երևում, թե՞ որը անտեսանելի է դարձնում գլխարկը դնողին:

**3.3.2. Անդրադարձ «Մուտքի պատուհանիկում» ներկայացված հանելուկին**

**Ինը ընձուղտ գնում են,**
**Ընձուղտների առջևում**
**Նա շատ հանգիստ մնում է,**
**Իննի պոչին քնում է:**

Հանելուկի գուշակումը կարելի է իրականացնել՝ խաղալով «Պահմտոցի» խաղը: Ուսուցիչը հանելուկի պատասխանը նախապես գրում է թղթի վրա (կամ պատրաստում է մեծադիր պատկերի տեսքով) և թաքցնում դասասենյակում՝ ինչ-որ մի տեղ:

Կարդում են մուտքի պատուհանիկում գրված հանելուկը, փորձում են գուշակել: Ուսուցչի հուշումով թաքցրած պատասխանը փնտրում են դասասենյակում:

Կարելի է աշակերտներին ասել, որ հանելուկի պատասխանը իրենց հետ պահմտոցի է խաղում, թաքնվել է դասասենյակում և պետք է գտնել այն:

**Հանելուկի գուշակումը** «Պահմտոցի» **խաղով կազմակերպելը մոտիվացնում է երեխաներին, խթանում դասանյութի հանդեպ նրանց հետաքրքրությունը, կապ ստեղծում դասավանդվող նյութի հետ:**

Պատասխանը գտնելուց հետո ուսուցիչն ասում է, որ մեր պատմվածքի հերոսներից մեկ հենց Ը տառն է:

**3.3.3. Աշխատանք տեքստի շուրջ**

Տեքստի հատվածներն ընթերցելուց հետո բովանդակության նախնական ընկալման համար աշակերտները պատասխանում են տրված հարցերին՝ կարդալով տեքստի համապատասխան հատվածները:

• *Ինչպե՞ս էր Մեսրոպ Մաշտոցը հնչյունների համար տառեր հորինում:* (Մեսրոպ Մաշտոցը շրջում էր Հայաստանով: Նա զրուցում էր մարդկանց հետ: Լսում էր նրանց խոսքերը, մտապահում հնչյունները: Տառեր էր հորինում այդ հնչյունների համար)

• *Ո՞ր հնչյունի համար ոչ մի այբուբենում տառ չէին ստեղծել:* (Ը-ի)

• ***Ի՞նչ լսեց Մեսրոպ Մաշտոցը, երբ զրուցում էր իր ստեղծած տառերի հետ:*** **(Մաշտոցը թփերի մեջ տեսավ Ը-ին, որը հետաքրքրությամբ նայում էր իրենց)**

II հատված

• *Ի՞նչ նվիրեց Մեսրոպ Մաշտոցը Ը տառին:* (Կախարդական անտեսանելի գլխարկ)

• *Ի՞նչ պատգամ տվեց Մեծ ուսուցիչը Ը տառին:* (Բառի մեջ հենց դնես գլխիդ՝ անտեսանելի կդառնաս: Քեզ կլսեն, բայց չեն տեսնի: Իսկ բառի սկզբում կամ վերջում անպայման առանց գլխարկի կլինես, որ բոլորը քեզ և՛ տեսնեն, և՛ լսեն)

• *Ի՞նչ խոստացավ Ը տառը:* (Խոստացավ կատարել Մաշտոցի պատգամը)

• *Ինչպիսի՞ն էր Ը տառի վերաբերմունքը իր ընտանիքի հանդեպ:* (Ես սիրում եմ տառերի իմ ընտանիքը,- ասում է Ը-ն: - Ինձ լավ տեսնում ու լսում եք այնտեղ)

Այնուհետև ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է QR-կոդի վրա. ասելով՝ տեսնենք, թե պատմվածքն ինչպես է ներկայացված տեսահոլովակով: Երեխաները դիտում են տեսահոլովակը, արտահայտում իրենց կարծիքը:

Ը-ն զարմացավ, որ Մաշտոցն ուզում է իր համար էլ տառ ստեղծել, և համեստորեն գլխով արեց: Բոլոր տառերը ծափ տվեցին ուրախությունից:

– Այդ դեպքում քեզ մի կախարդական գլխարկ եմ տալիս: Բառի մեջ հենց դնես գլխիդ՝ անտեսանելի կդառնաս: Քեզ կլսեն, բայց չեն տեսնի: Իսկ բառի սկզբում կամ վերջում անպայման առանց գլխարկի կլինես, որ բոլորը քեզ և՛ տեսնեն, և՛ լսեն:

Ը-ն փորձեց գլխարկը: Շատ հարմար էր: Նրան գլխարկը շատ դուր եկավ:

Ը-ն խոստացավ միշտ կատարել Մեծ ուսուցչի պատգամը և մինչև օրս էլ կատարում է:

– Ես սիրում եմ տառերի իմ ընտանիքը,– ասում է Ը-ն:– Ինձ լավ տեսնում ու լսում եք այնտեղ:



• Ի՞նչ նվիրեց Մեսրոպ Մաշտոցը Ը տառին:
• Ի՞նչ պատգամ տվեց Մեծ ուսուցիչը Ը տառին:
• Ի՞նչ խոստացավ Ը տառը:
• Ինչպիսի՞ն էր Ը տառի վերաբերմունքը իր ընտանիքի հանդեպ:

**ԱՇՔԻ ԱՌԱՋ**

*Մինչև վերջ փորձել*

## Հարցեր

1. Ինչո՞վ էր նման և ինչով էր տարբերվում Ը տառը մյուս տառերից:
2. Ի՞նչ ես կարծում՝ Ը տառն ուրա՞խ էր, ինչո՞ւ:
3. Կա՞ տեքստում մի բան, որ քեզ զարմացրեց:
4. Քո անվան առաջին տառով սկսվող ի՞նչ հարց կտայիր Մեսրոպ Մաշտոցին:
5. Ի՞նչ կպատահեր, եթե Մաշտոցն Ը-ին անտեսանելի գլխարկ չտար:
6. Պատմությունը պատմի՛ր Ը-ի անունից:

**Հարցերի և առաջադրանքների օրինակներ.**

• Քո կարծիքով՝ ինչո՞ւ էր Ը-ն թաքնվում Մեսրոպ Մաշտոցից: (Ը-ն թաքնվում էր, որովհետև սիրում էր պահմտոցի խաղալ: Ամաչում էր: Ինքն էլ չգիտեր, թե ինչու է թաքնվում)

• Ինչո՞ւ էր զարմանում Ը-ն: (Ը-ն զարմանում էր, որովհետև արդեն գիտեր, որ աշխարհի ոչ մի այբուբենում իր համար տառ չկար: Եվ մտածում էր՝ Մաշտոցն իր համար տառ կստեղծի՞, թե՝ չէ)

• Քո կարծիքով՝ ինչո՞ւ էին ուրախացել տառերը: (Տառերը ուրախացել էին, որ նոր ընկեր կունենան, որ Ը-ն էլ առանց տառի չի մնա, ինչը կօգնի հեշտությամբ բառեր արտասանելուն)

• Ինչո՞վ է տարբերվում Ը տառը մյուս տառերից: (Ը-ն ունի կախարդական գլխարկ, կարող է մեկ երևալ, մեկ չերևալ, կարող է չերևալ, բայց երևելի գործ կատարել)

• Ինչո՞վ է Ը-ն նման մյուս տառերին: (Մյուս տառերի նման բառեր է կազմում և ապրում այնտեղ)

• Քո կարծիքով՝ բառերին դուր եկա՞վ Ը տառի գլխարկը, ինչո՞ւ: (Այո, դուր եկավ, որովհետև բառերը հասկացան, որ ավելի գեղեցիկ կինչեն)

• **Կարդա՛ այն տողերը, որտեղ նկարագրված է Ը տառի վերաբերմունքը իր ընտանիքի հանդեպ: (Ես սիրում եմ տառերի իմ ընտանիքը,- ասում է Ը-ն: - Ինձ լավ տեսնում ու լսում եք այնտեղ)**

• Ի՞նչ ես կարծում՝ Ը տառը ուրա՞խ էր, ինչո՞ւ: (Ը-ն ուրախ էր, որովհետև գտավ մի մեծ ու համերաշխ ընտանիք)

• Կա՞ տեքստում մի բան, որ քեզ զարմացրեց: (Օրինակ՝ ոչ մի այբուբենում այս ինչյունի համար ոչ ոք տառ չէր ստեղծել)

• Ի՞նչ գործեր է կատարում Ը տառը: (Օգնում է, բաղաձայնների մեջտեղում է կանգնում և վանկ է դառնում, առանց իրեն որոշ բաղաձայններ չեն ինչում)

• Պատմությունը պատմի՛ր Ը տառի անունից:

**3.3.4. Տեքստի պատմում հերոսներից մեկի անունից**

***Ը ՏԱՌԸ***

*Ես ապրում էի խոսքերի մեջ, ինչպես իմ բոլոր ընկերները: Մենք հոգիներ կարծես լինեինք՝ մարմին չունեինք: Համերաշխ էինք, ամեն մեկս գիտեր իր տեղը: Երբ խոսողը դժվարանում էր շարունակել իր խոսքը, չգիտես թե ինչու, ինձ էր օգնության կանչում ու ասում էր՝ ը՛, ը՛, ը՛, ը՛: Շատերը շատ երկար էին ասում՝ ը՛ը՛ը՛ըըըը՛ը՛: Արդեն ես էլ էի հոգնում: Բայց, մեկ է, շատ լավն էին մեր աշխարհը, մարդիկ ու մարդկանց աշխարհը:*

*Մի օր էլ տեսա, որ մի փառահեղ մարդ իմ ընկերների համար մարմիններ է ստեղծում, ու ես արդեն ոչ միայն լսում էի իմ ընկերոջը՝ ա՛ա՛, այլև տեսնում, որ նա մարմին ունի, անունը՝ **Ա** տառ:*

*Այդպես ընկերներիս հետ շրջելով՝ այդ ընտիր մարդը իմ բոլորի ընկերների համար տառեր հորինեց ու հագուստի նման հագցրեց նրանց: Ես, թաքնվելով, հետևում էի նրանց ամբողջ ժամանակ: Մի օր էլ այդ փառահեղ մարդը լսեց ինձ, երբ ես թփերի մեջ թաքնված քթիս տակ երգում էի: Կանչեց իր մոտ, ասաց՝ երգիր: Ես երգեցի՝ ը՛ըըըը՛:*

*Ասաց՝ լավ: Քեզ մի գլխարկ եմ նվիրում: Հապա դի՛ր: Դրեցի, ու ընկերներս զարմանքից ճչացին: Ես դարձա անտեսանելի: Ընկերներիցս իմացա, որ այդ մարդու անունը Մեսրոպ Մաշտոց է: Նա ինձ պատվիրեց. հենց բառի սկզբում լինես կամ վերջում, կհանես գլխարկդ, որ երևաս: Ես նրա պատվիրանը սիրով եմ կատարում: Դեռ մի բան էլ ավելին՝ բառը վանկատելիս էլ եմ հանում գլխարկս՝ ի պատիվ ինձ այդ գլխարկը նվիրողի:*

*Շատ եմ սիրում թե՛ գլխարկս, թե՛ Մեսրոպ Մաշտոցին, որ ինձ էլ բառամեջ հանեց:*

## Առաջադրանքներ

vachagan.am

### Ը-ի ԵՐԳԸ

Ինձ լսում են, բայց չեն գրում,
Իբր ունեմ բարակ ձայն,
Սակայն առանց ինձ չի հնչում
Ոչ մի ընդհատ բաղաձայն:

Երբ ինձնով է բառն սկսվում,
Ես գրվում եմ՝ ընտիր, ընծա,
Բարդ բառերում լավ եմ լսվում,
Ու գրվում եմ անընդհատ:

**1**

Կարդա՛ «Ը-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը: Երգից գտի՛ր և գրի՛ր բառեր, որտեղ ը-ն անտեսանելի գլխարկ է դրել:

**2**

«Ինչպես տղան անցավ փողոցը» նախադասությունը գնում էր դպրոց: Ոստիկանն օգնեց, որ նա անցնի փողոցը:

- Շարունակի՛ր պատմությունը նկարի շուրջ:
- Ի՞նչ հարց կտայիր ոստիկանին:

**3**

○ Գրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում:

✧ Վանկատի՛ր գրածդ բառերը:

✡ Բառերը բաժանի՛ր խմբերի: Ինչպե՞ս առանձնացրիր խմբերը, հիմնավորի՛ր:

### 3.3.5. Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ

**Առաջադրանք 1.** Կարդա՛ «Ը-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը:
Երգից գտի՛ր և գրի՛ր բառեր, որտեղ Ը-ն անտեսանելի գլխարկ է դրել:

Աշակերտները կարդում են «Ը-ի երգը», դուրս են գրում գաղտնավանկի **ը** պարունակող բառերը՝ *լսել, գրել, հնչել, սկսվել, գրվել, լսվել:*

Նրանք հնարավորություն ունեն QR-կոդի միջոցով լսելու և տեսնելու նաև երգի շատ գեղեցիկ տեսահոլովակը:

**Առաջադրանք 2.**

«Ինչպես տղան անցավ փողոցը» նախադասությունը գնում էր դպրոց: Ոստիկանն օգնեց, որ նա անցնի փողոցը:

- Շարունակի՝ր պատմությունը նկարի շուրջ:
- Ի՞նչ հարց կտայիր ոստիկանին:

Առաջադրանքում պատկերված է մի կատակային, երևակայական տեսարան: «Ինչպես տղան անցավ փողոցը» նախադասությունը գնում է դպրոց: Սակայն լուսակրի լույսն այնքան արագ է փոխվում, որ նախադասությունը չի հասցնում անցնել փողոցը: Նախադասությունը դիմում է ոստիկանին, որ օգնի իրեն: Ոստիկանը հնարամիտ էր: Նա նախադասության բառերը բաժանում է վանկերի ու նրանց ձեռքերից բռնած զգուշորեն անցկացնում փողոցը: Փողոցն անցնելուց հետո վանկերը միանում են իրար, կազմում բառեր: Բառերը նորից միանում են ու կազմում նախադասություն, որն էլ ուրախ-ուրախ գնում է դպրոց:

Այստեղ թե՛ գաղտնավանկի Ը-ի դերն է երևում բառերը վանկատելիս, թե՛ երեխաների ուշադրությունն է հրավիրվում փողոցն անցնելու կանոններին, թե՛ միջառարկայական կապ է ստեղծվում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի հետ:

**Առաջադրանք 3.**

Դարձյալ «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

○ Առաջին կետի պահանջի համաձայն՝ երեխաները պիտի գրեն **գնդակ, գդալ, շղթա, նկար, չղջիկ, խխունջ, մրջյուն, բզեզ** բառերը:

✧ Երկրորդ կետի պահանջի համաձայն՝ պետք է վանկատեն գաղտնավանկի ը պարունակող այդ բառերը. **գը-դակ, գը-դալ, շը-թա, նը-կար, չը-ջիկ, խը-խունջ, մը-ջյուն, բը-զեզ:**

☼ Երրորդ կետի պահանջի համաձայն՝ պետք է բառերը բաժանեն խմբերի: Այստեղ ամենահավանական հատկանիշը շնչավոր-անշունչ հատկանիշն է: Կստացվի երկու խումբ.

| | |
|---|---|
| գնդակ | չղջիկ |
| գդալ | խխունջ |
| շղթա | մրջյուն |
| նկար | բզեզ |

**4** Դառնալով «կենդանի տառեր»՝ բեմականացնելով վանկատե՛ք գնդակ և մկրատ բառերը: Զմոռանաք անտեսանելի գլխարկ ունեցողին:

**5** Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

vachagan.am

Թե ընկերը ընկրկի*,
Նրա ընկերը կընկնի:

**6** Կազմի՛ր մեկ նախադասություն՝ օգտագործելով մինչև, վերջ, փորձել բառերը:

### ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Դասը սիրով կարդացի,
Հետո սիրուն պատմեցի
Ու հասկացա, որ դասն էլ
Ունի հրաշք գլխարկներ.
Գլխարկները հանեցի
Ու ինձ համար պարզեցի.

ինձ համար հետաքրքիր էր

ես իմացա

ես կարող եմ

Ը-ն, երևա, թե չերևա, օգնում է քեզ, որ ճիշտ կարդաս ու գրես:

* **Ընկրկել** – հրաժարվել, հետ կանգնել, գիջել:

**3.3.6. Ուսուցում խաղով**

**Առաջադրանք 4.** Դառնալով «Կենդանի տառեր»՝ բեմականացնելով վանկատե՛ք **գնդակ** և **մկրատ** բառերը:

Ը-ի վանկարար դերը առավել տեսանելի դարձնելու, բառի մեջ բաղաձայնային կուտակումների արտասանությունը դյուրին ու սահուն դարձնելու նրա դերը առավել ցայտուն ցուցադրելու համար, կարելի է խաղալ «Կենդանի մոդելներ» խաղը:

*Խաղի ընթացքը:*

Դասարանը բաժանել երկու խմբի: Ելնելով դասարանի կազմից՝ կարելի է ընտրել գաղտնավանկի Ը պարունակող համապատասխան երկարությամբ երկու բառ: Օրինակ՝ **նկար, փչակ, գնդակ, մկրատ,** և այլն:

Խաղը նկարագրենք վերջին երկու բառերի ընտրության դեպքի համար:

• Ուսուցիչը ԳՆԴԱԿ, ՄԿՐԱՏ բառերի մեծադիր տառերը առանձին-առանձին դնում է սեղանին՝ փակ վիճակում, խառը հերթականությամբ: Ամենավերջում դրվում են Ը տառերը:

• Յուրաքանչյուր խմբից մեկական աշակերտ մոտենում է տառերի իր խմբին, վերցնում մեկ տառ ու կանգնում գրատախտակի մոտ՝ դեմքով դեպի գրատախտակը: Յուրաքանչյուր խումբ վերցնում է հինգ տառ:

• Փակ վիճակում մնում են միայն Ը-երը:

• Տառերը վերցնելուց հետո, ուսուցչի հրահանգով երկու խմբի աշակերտները դեմքով դառնում են դեպի դասարանը՝ ցույց տալով իրենց մոտ եղած տառերը: Նստարաններին նստած մնացած յուրաքանչյուր խմբի աշակերտների օգնությամբ և ուղղորդմամբ գրատախտակի մոտ կանգնածները, փոխելով իրենց դիրքերը, կազմում են բառերը՝ ԳՆԴԱԿ, ՄԿՐԱՏ:

• Այնուհետև ուսուցիչն առաջարկում է, որ երկու բառն էլ բաժանվեն վանկերի: Ստացվում է հետևյալ պատկերը՝ ԳՆ-ԴԱԿ, ՄԿ-ՐԱՏ: Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ բառը վանկերի բաժանելիս, յուրաքանչյուր վանկում անպայման պետք է լինի մեկ ձայնավոր հնչյուն:

• Նա հրահանգում է, որ յուրաքանչյուր վանկից առաջ գան ձայնավորները: Յուրաքանչյուր երկվանկ բառից առաջ է գալիս ընդամենը մեկը՝ Ա ձայնավորը:

• «Իսկ ո՞ւր է մեր առաջին վանկի ձայնավորը» ,- հարցնում է ուսուցիչը: Երեխաները պատասխանում են, որ այդ ձայնավորը Ը-ն է: «Իսկ չէ՞ որ նա խոստացել էր հանել իր կախարդական անտեսանելի գլխարկը, երբ բառը վանկերի բաժանվեր: Եկենք խնդրենք, որ Ը հնչյունները գան»,- ասում է ուսուցիչը:

• Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտենում է սեղանին, վերցնում Ը-ն ու կանգնում համապատասխան տեղում: Ստացվում է հետևյալ պատկերը՝ ԳԸՆ-ԴԱԿ, ՄԸԿ-ՐԱՏ:

**Առաջադրանք 5.**

Շուտասելուկները նաև նպաստում են արտասանական թերությունները շտկելուն:

Երեխաները կարող են QR-կոդի միջոցով լսել, թե ինչպես է շուտասելուկը կարդում, միջին արագությամբ ասմունքում, շատ մեծ արագությամբ ասմունքում հաղորդավարը: Ինչպես կկռահեն երեխաները՝ այս շուտասելուկի հիմքում պատմության հերոսն է՝ Ը-ն:

**Առաջադրանք 6.** Կազմի՛ր մեկ նախադասություն՝ օգտագործելով **մինչև, վերջ, փորձել** բառերը:

Առաջադրանքը «Աչքի առաջ» խորագրի բառերի (**մինչև, վերջ, փորձել**) ճիշտ գրությունը ամրապնդելու նպատակ ունի:

Նախադասությունների օրինակներ.

- Առանց մինչև վերջ փորձելու հետևություններ մի արա:
- Մինչև փորձելը, վերջ տուր թնկթնկոցիդ:
- Մինչև ես մտածում էի վերջում փորձել, նա վերջացրեց դժվար խնդրի լուծումը:

**3.3.7. Դասից քաղած իմ պտուղները**

Երեխաները նախ կարդում են վեցատողը, ապա, ուսուցչի ուղղորդմամբ, հերթով անդրադառնում են գլխարկների տակ գրված ամփոփիչ արտահայտություններին: Ներկայացնում են, թե ինչն էր իրենց համար հետաքրքիր, ինչ իմացան, ինչ կարող են անել: Օրինակ, կարող են հնչել նման պատասխաններ.

• **Ինձ համար հետաքրքիր էր**, որ աշխարհի ոչ մի այբուբենում ը հնչյունի համար տառ չկա: Ինձ համար հետաքրքիր էր «Ը-ի երգը»: Շատ հետաքրքիր էր շուտասելուկի ասմունքը:

• **Ես իմացա**, որ որոշ բառերում **ը**-ն հանում է իր գլխարկը և դառնում է տեսանելի: Իմացա, թե ինչպես է Մեսրոպ Մաշտոցը ստեղծել հայոց այբուբենը: Իմացա, որ կան մարդիկ, որոնք նման են **ը** տառին. նրանք օգնում են քեզ՝ երևան, թե չերևան:

• **Ես կարող եմ** ճիշտ վանկատել բառերը: Ես կարող եմ արագ արտասանել շուտասելուկը: Ես կարող եմ պատմել, թե ինչպես Մեսրոպ Մաշտոցը մի անտեսանելի գլխարկ նվիրեց Ը-ին:

Ուսուցիչը խրախուսում է աշակերտներին, որ նրանք ազատ և անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Աշակերտները հիմնավորում են իրենց կարծիքները, քննարկում դասընկերների հետ:

**3.3.8. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» շուրջ**

Ուսուցչի հանձնարարությամբ երեխաները կարդում են «Ամփոփման պատուհանիկում» գրված միտքը.

- **Ը -ն, երևա, թե չերևա, օգնում է քեզ, որ ճիշտ կարդաս ու գրես:**

Ուսուցիչը մեկնաբանում է՝ Ը-ն նման է բոլոր ձայնավորներին, սակայն նաև տարբերվում է նրանցից: Նա միակ ձայնավորն է, որ որոշ բառերում լսվում է, բայց չի գրվում, նա գեղեցիկ է դարձնում մեր խոսքը:

Երեխաներն արտահայտում են իրենց կարծիքները, քննարկում ամփոփիչ միտքը:

## 3.4. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Դասը կարելի է սկսել «Խոսքային նկարչություն» վարժությունով:

Ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները մայրիկի հետ կապված որևէ դրվագ հնարավորինս պատկերավոր նկարագրեն՝ «խոսքով նկարեն»: Վարժության նպատակն է՝ հետաքրքրություն առաջացնել երեխաների մեջ և կապ ստեղծել ուսուցանվող նյութի հետ:

Դասագրքերը փակ են: Ուսուցիչը առաջարկում է աշակերտներին հիշել որևէ հետաքրքիր դրվագ, որը կապված լինի իրենց մայրիկների հետ: Այնուհետև ներկայացնում է «Խոսքային նկարչության» քայլաշարը.

- «Խոսքերով նկարել» այն վայրը, որտեղ տեղի է ունեցել իրադարձությունը:
- «Խոսքերով նկարել» մայրիկին և նրա շուրջը գտնվող իրերը:
- «Խոսքերով նկարել», թե որտեղ էր գտնվում ինքը և ինչ էր անում:
- «Խոսքերով նկարել», թե տարվա որ եղանակին է տեղի ունեցել իրադարձությունը:

Երեխաները ազատորեն ներկայացնում են իրադարձությունները: Ուսուցիչը խրախուսում է և անում անհրաժեշտ ուղղորդումներ:

Այնուհետև, բացելով դասագրքերը, անցնում են դասանյութին:

### ՏԱՌԸ ԹՌՉՈՒՄ Է, ԹԵ՞ ՑԱՏԿՈՒՄ

Անին թռչուններ էր նկարել:

Նկարների տակ գրել էր՝ **արագիլ, ծիծեռնակ, կրունկ**:

– Ես չգիտեի, որ կրունկներն էլ են թռչուն,– ծիծաղեց Սոնան:

– Ինչո՞ւ ես ծիծաղում,– նեղացավ Անին:

– Որովհետև կռունկնե՛րն են թռչում: Իսկ իմ ու քո կրունկները շա՜տ-շատ կարող են թռչկոտել:

– Մեկ չէ՞,– ասաց Անին:– Մի տառ է, էլի:

– Դե նայի՛ր, թե մի տառը ինչ կարող է անել,– ասաց Սոնան:– Հիմա ես բառը ր-ով կասեմ, իսկ դու այն դարձրու ռ-ով: Տե՛ս, թե ինչ կստացվի:

Դու լավ չես վարվում:

Գնացի սարը ջուր խմելու:

Այս դասին դու.

• Կամրապնդես վանկի մասին քո գիտելիքները:

• Նկարագրդումը կհամեմատես տեքստի հետ:

• Կընտրես մտքերն ու զգացմունքներն արտահայտելու քո եղանակը:

• Կիմանաս, թե ինչեր կարող ես նվիրել մայրիկին նրա ծննդյան օրվա առթիվ:

## ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

**Ռազմիկ Դավոյան**

**Ի՞նչ ես կարծում՝ հնարավո՞ր է նկարել մանկությունը:**

vachagan.am

Այստեղ մի տուն նկարեմ,
Կողքին մի ծառ նկարեմ,
Վրան մի բույն նկարեմ,
Մեջը ծիծառ* նկարեմ:

Հեռվում շոգ դաշտ նկարեմ,
Կակաչ ու սինձ* նկարեմ,
Ջրով լի տաշտ նկարեմ,
Ու մեջը ինձ նկարեմ:

Կողքիս մայրիկս կանգնի,
Ես ջուր ցանեմ փեշերին.
Խոշոր աստղեր կցոլան
Նրա սրտի գիշերին:

Հետո մի թուփ նկարեմ,
Վրան՝ խոշոր, կարմիր վարդ,
Այնքա՜ն անուշ նկարեմ,
Որ զարմանա ամեն մարդ:

* **Ծիծառ** – ծիծեռնակ:

* **Սինձ** – ուտելի բանջարաբույս:



### 3.4.1. Աշխատանք տեքստի, գլխագրի և մուտքի պատուհանիկի շուրջ

Ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները կարդան դասանյութի գլխագիրը: Երեխաները կարդում են, մտքեր փոխանակում, արտահայտում իրենց կարծիքը:

Կարելի է անցկացնել քննարկում մուտքի պատուհանիկի՝ «Ի՞նչ ես կարծում՝ հնարավո՞ր է նկարել մանկությունը» հարցի շուրջ: Աշակերտները իրենց մտքերը կարտահայտեն անկաշկանդ, ուսուցիչը կլսի բոլորի պատասխանները և հիմնավորումները:

**3.4.2. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով**

Առաջին ընթերցման ժամանակ տեքստի բովանդակության ընկալումն ապահովելու համար կարելի է բացատրել նորածանոթ բառերի իմաստը նախօրոք.

**ծիծառ** – ծիծեռնակ,

**սինձ** – ուտելի բանջարաբույս:

Նախքան բանաստեղծության ընթերցումը ուսուցիչն առաջարկում է QR-կոդի միջոցով դիտել տեսահոլովակը: Երեխաները լսում են բանաստեղծության գեղեցիկ ասմունքը, դիտում են նկարազարդման դրվագները: Այնուհետև ուսուցիչն առաջարկում է, որ երեխաները տեքստը կարդան լուռ, դանդաղ՝ փորձելով պատկերացնել այն տեսարանները, որոնք բանաստեղծը կերտել է բառերով: Որից հետո բանաստեղծությունը ընթերցվում է բարձրաձայն՝ ուսուցչի կամ լավ ընթերցող աշակերտների կողմից:

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**ԻՆՉՊԵՍ ԲԱՌԵՐԸ ԳԵՏՆ ԱՆՑԱՆ**

Մի օր «եկե՛ք գնանք Հրազդան» նախադասությունը որոշեց գնալ Հրազդան քաղաք: Նստեց մի գնացք ու հասավ մինչև Հրազդան գետը: Գետի մյուս ափը պիտի նավակով անցներ: Նավապետ Թզուկն ասաց.

– Իմ նավակը շատ փոքրիկ է, սիրելի՛ նախադասություն, դու չես տեղավորվի:

– Բառ-բառ նստենք:

– Իմ թզուկային նավակում նույնիսկ մի բառ էլ չի տեղավորվի՝ շատ ծանր է: Ես կարող եմ ամեն անգամ մի-մի վանկ տեղափոխել:

Նախադասությունն ասաց.

– Իմ սիրելի՛ բառեր, արագ-արագ բաժանվե՛ք վանկերի, որ կարողանանք անցնել մյուս ափը:

«Եկեք» բառն անմիջապես բաժանվեց երկու վանկի՝ **ե-կեք**, ու անցավ մյուս ափը: «Գնանք» բառը չգիտեր՝ ինչպես բաժանվի վանկերի, իրար էր խառնվել:

Այդ պահին «Գնանք» բառի **Ը** հնչյունը հանեց իր անտեսանելի գլխարկն ու դարձավ **Ը** տառ: «Գնանք» բառն էլ կարողացավ բաժանվել վանկերի՝ **գը-նանք,** ու անցավ գետը:

«Հրազդան» բառը **Ը**-ի օգնությամբ բաժանվեց երեք վանկի՝ **Հը-րազ-դան,** ու Նավապետ Թզուկը նրան էլ հաջողությամբ տեղափոխեց գետի մյուս ափը:

Մյուս ափին վանկերը նորից իրար միացան ու դարձան բառեր, բառերն էլ իրար միացան ու դարձան նախադասություն և ուրախ-ուրախ սկսեցին շրջել Հրազդանում:

Սիրելի՛ երեխաներ: Իսկ դո՞ւք ինչպես եք բառերը գետի մյուս ափն անցկացնում: Չէ՞ որ տետրի լուսանցքի գիծը նման մի գետ է: Երբ հասնում եք լուսանցքի գծին, բայց բառը դեռ չի վերջացել, ի՞նչ եք անում: Իհարկե՝ **տո-ղա-դարձ**:

Իսկ տողադարձ անելիս բառը պետք է **վան-կա-տեք**:

Հիշե՛ք. եթե բառերը ճիշտ չվանկատեք ու ճիշտ տողադարձ չանեք, նրանք կխորտակվեն թզուկային նավակի հետ:

## Հարցեր

1. Ի՞նչ էր ուզում նկարել բանաստեղծության հեղինակը:
2. Ինչո՞ւ էր նա ուզում այդ ամենը նկարել:
3. Ի՞նչ էր ուզում հերոսն արտահայտել այդ նկարներով:

## Առաջադրանքներ

1 Ինչպե՞ս ես արտահայտում քո սերը ընտանիքիդ անդամների, ընկերներիդ նկատմամբ: Պատմի՛ր:

2 Փոփոխելով **վարդ** և **բույն** բառերի առաջին տառերը՝ ստացի՛ր նոր բառեր և գրի՛ր:

3
- Ուշադի՛ր դիտիր բանաստեղծության նկարազարդումը:
- Տրված բառաշարքում ընդգծի՛ր՝ ինչը պատկերված չէ նկարում.

տուն, ծառ, բույն, ծիծառ, կակաչ, շոգ դաշտ, սինձ, ջրով լի տաշտ, մանուկ, մայրիկ, փեշեր, վարդի թուփ:

4 ☹, ☹ և ☺ նշանները տեղադրի՛ր

- **Ես ուրախ եմ:**
- **Ես տխուր եմ:**
- **Ես հանգիստ եմ:**

նախադասությունների համապատասխան բառերի փոխարեն:

5 Վերականգնի՛ր «քանդված» նախադասությունը:

vachagan.am

**մայրիկիս** **Ես** **սիրում:** **շատ** **եմ**

Հիշո՞ւմ ես: Նախադասությունը սկսում են մեծատառով, վերջում դնում վերջակետ:

### 3.4.3. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

Բանաստեղծության բովանդակությունը, նրա մեջ ամփոփված հույզերն ու զգացմունքները ընկալելի դարձնելու նպատակով կարելի է երեխաներին առաջադրել բազմաբովանդակ հարցեր:

1. Ինչի՞ց իմացաք, որ սա բանաստեղծություն է: (Տողերը կարճ են, տողերում վանկերը հավասար են, տողերի վերջին բառերը նման են հնչում, և այլն)
2. Ի՞նչ էր ուզում նկարել բանաստեղծության հեղինակը: Պատմի՛ր: (Տուն, ծառ, բույն, ծիծառ, դաշտ, կակաչ, սինձ, տաշտ, իրեն, մայրիկին, թուփ, վարդ)
3. Ի՞նչ եք կարծում՝ բանաստեղծության հերոսը փոքրիկ երեխա՞ է, թե՞ մեծահասակ: (Փոքրիկ երեխա: Բանաստեղծության հեղինակը մեծահասակ է)
4. Ինչու՞ էր ուզում այդ ամենը նկարել: (Կարոտել էր իր մանկությանը)
5. Ի՞նչ էր ուզում հերոսն արտահայտել այդ նկարներով: (Իր մանկության պատկերները, իր սերը մոր նկատմամբ)
6. Ի՞նչ է ուզում ասել հեղինակը խոշոր աստղեր կցոլան նրա սրտի գիշերին արտահայտությամբ: (Մայրիկը կմոռանա իր վշտերը, կպայծառանա)
7. Ո՞ր քառատողը ձեզ դուր եկավ, նկարագարդեք այն: (Երեխաները նկարագարդում են իրենց դուր եկած քառատողը)

**Առաջադրանք 1**. Դու ինչպե՞ս ես արտահայտում քո սերը ընտանիքիդ անդամների, ընկերներիդ նկատմամբ:

Կարելի է առաջադրանքի կատարումը կազմակերպել զույգերով:

### 3.4.4. Բառախաղ՝ «Փոխի՛ր մեկ տառ»

**Առաջադրանք 2**. Փոփոխելով **վարդ** և **բույն** բառերի առաջին տառերը՝ ստացի՛ր նոր բառեր և գրի՛ր:

Օրինակ.

- **Վարդ, բարդ, դարդ, զարդ, հարդ, մարդ, սարդ, ջարդ**:
- **Բույն, գույն, թույն, հույն, նույն:**

Երեխաներին պետք է հուշել, որ նրանք հերթով հիշեն այբուբենի տառերը, տեղադրեն **-արդ** և **-ույն** տառակապակցություններից առաջ և տեսնեն՝ բառ ստացվե՞ց, թե՞ ոչ: Կարող են օգտվել դասագրքերում, տետրերում, այլ տեղերում զետեղված այբուբեններից:

### 3.3.5. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» խորագրի այդ բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝

**բու-ն, վար-** :

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, այդ բառերը գրում են բառատետրում, կազմում բառակապակցություններ կամ նախադասություններ:

**Բույն**- թռչունի բույն, գազանի բույն:
**Վարդ** - սպիտակ վարդ, վարդի թերթ:

### 3.4.6. Աշխատանք տեքստի նկարազարդման շուրջ

**Առաջադրանք 3.**

• Ուշադիր դիտի՛ր բանաստեղծության նկարազարդումը:

• Տրված բառաշարքում ընդգծի՛ր այն բառը, որը պատկերված չէ նկարում.

տուն, ծառ, բույն, ծիծառ, կակաչ, շոգ դաշտ, սինձ, ջրով լի տաշտ, մանուկ, մայրիկ, փեշեր, վարդի թուփ:

Այս առաջադրանքը նպաստում է, որ երեխաները թե՛ ուշադիր կարդան բանաստեղծությունը և թե՛ ուշադիր դիտեն համապատասխան նկարազարդումը: Դրանք համեմատեն և գտնեն, թե բանաստեղծության մեջ ներկայացված որ առարկան չի արտացոլվել նկարազարդման մեջ: Միջառարկայական կապ է ապահովում նկարչության և մայրենիի միջև:

Ուշադիր զննելուց ու իրենց կարծիքներն ասելուց հետո ընդհանուր ուժերով եզրակացնում են, որ նկարազարդման մեջ չեն արտացոլվել **վարդի թուփը** և **սինձը**:

Ուսուցիչը ցուցադրում է այդ բույսերի նկարները և առաջարկում, որ երեխաները նկարեն դրանք:

### 3.4.7. Աշխատանք պարզ խորհրդանիշներով

**Առաջադրանք 4.** ☹, 😐 և ☺ նշանները տեղադրի՛ր

- Ես ուրախ եմ:
- Ես տխուր եմ:
- Ես հանգիստ եմ:

նախադասությունների համապատասխան բառերի փոխարեն:

Այս առաջադրանքով երեխաների մեջ ձևավորվում են պարզ խորհրդանիշների միջոցով ընթերցածը պատկերելու կարողություններ:

**Առաջադրանք 5.** Վերականգնի՛ր քանդված նախադասությունը:

Երեխաները պետք է գլխի ընկնեն, որ մեծատառով սկսվող **Ես** բառը նախադասության առաջին բառն է: Իսկ վերջակետով վերջացող **սիրում** բառը նախադասության վերջին բառն է: Այսքանը կռահելուց հետո արդեն հեշտ է վերականգնել այն նախադասությունները, որոնք բավարարում են առաջադրանքի պայմանին: Այս նախադասություններից որ մեկն էլ գրի երեխան՝ առաջադրանքը կհամարվի կատարված:

- **Ես մայրիկիս շատ եմ սիրում:**
- **Ես եմ մայրիկիս շատ սիրում:**
- **Ես եմ շատ մայրիկիս սիրում:**
- **Ես շատ եմ մայրիկիս սիրում:**
- **Ես շատ մայրիկիս եմ սիրում:**
- **Ես մայրիկիս եմ շատ սիրում:**

### 3.4.8. «Մայրիկ» էլեկտրոնային առաջադրանքի նկարագրություն

Էկրանին երևում է «քանդված» նախադասությունը:

Խաղացողը, բռնելով նախադասության որևէ մաս, տեղադրում է ներքևի գծապատկերի որևէ վանդակում: Այդ դեպքում վերցրած մասը գույնը փոխում է: Խաղացողը պետք է գլխի ընկնի, որ գծապատկերի առաջին վանդակում պետք է դրվի նախադասության **Ես** մասը, քանի որ նախադասությունը սկսվում է մեծատառով: Իսկ վերջին վանդակում՝ **սիրում** մասը, քանի որ նախադասության վերջում դրվում է վերջակետ: Մնացած երեք բառերը՝ **մայրիկիս, շատ, եմ,** տարբեր հերթականությամբ դնելով գծապատկերի 2-րդ, 3-րդ, 4-րդ վանդակներում, ստացվում են բոլոր ճիշտ վեց պատասխանները:



6 Նկարներում դու տեսնում ես, թե ով ինչպես է շնորհավորում իր մայրիկին՝ նրա ծննդյան օրվա առթիվ:

Բացիկ է նվիրում

Երգում է

Իր նկարած նկարն է նվիրում

Գրկում և համբուրում է

Օգնում է տնային գործերում

• Դո՞ւ ինչպես ես արտահայտում քո սերը: Պատմի՛ր:
• Ստեղծի՛ր շնորհավորական մի բացիկ:

Գիտե՞ս, որ...

Հին ժամանակներում մարդիկ նկարել են քարանձավների պատերին, որպեսզի պատմեն իրենց զբաղմունքի, կյանքի, սիրած գործերի մասին:

Նկարչության միջոցով այսօր էլ մարդիկ կարող են արտահայտել իրենց տրամադրությունը, պատմել իրենց մասին:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես պարզեցի

Ինձ հաջողվեց

Ինձ դուր եկավ

Ես ցանկացա

Նկարչությունը կարող է օգնել քեզ, որ արտահայտես քո մտքերն ու հույզերը:

44

### 3.4.9. Աշխատանք շնորհավորական բացիկի ստեղծման շուրջ

**Առաջադրանք 6.**

Նկարներում դու տեսնում ես, թե ով ինչպես է շնորհավորում իր մայրիկին՝ նրա ծննդյան օրվա առթիվ:

Բացիկ է նվիրում

Երգում է

Իր նկարած նկարն է նվիրում

Գրկում և համբուրում է

Օգնում է տնային գործերում

- Դո՞ւ ինչպես ես արտահայտում քո սերը: Պատմի՛ր:
- Ստեղծի՛ր շնորհավորական մի բացիկ:

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է, որ նրանք, օգտվելով նկարների տակագրերից, պատմեն, թե ինչ են տեսնում նկարներում:

Հայտնի է, որ նկարների բովանդակությունը պատմելը շատ է նպաստում երեխաների պատմելու կարողությունների ձևավորմանն ու խոսքի զարգացմանը: Այս առաջադրանքում նաև խրախուսվում է, որ երեխաները իրենց մայրիկների ծննդյան տարեդարձը նշեն մայրիկների հանդեպ ջերմ վերաբերմունք ցուցաբերելով:

Այնուհետև երեխաները անկաշկանդ պատմում են, թե ծննդյան տարեդարձին իրենք ինչպիսի նվեր են անում մայրիկներին:

Ուսուցիչը խրախուսում է յուրաքանչյուր արտահայտվող աշակերտին:

### 3.4.10. Անդրադարձ «Գիտե՞ս, որ…» խորագրին

«Գիտե՞ս, որ…» խորագրով ներկայացվում է, որ հնագույն ժամանակներից ի վեր նկարչությունը ուղեկցել է մարդուն: Նկարչության միջոցով մարդը աստիճանաբար մոտեցավ գիր ստեղծելու գաղափարին, և շատ վաղ ժամանակներում էլ ստեղծվեցին այբուբեններ: Այս փոքրիկ նյութը դուռ է բացում, որ մի քանի դաս հետո ավելի մանրամասն խոսվի գրքի ստեղծման մասին: Սա ներառարկայական կապն ապահովող դասանյութերից է:

### 3.4.11. Դասից քաղած իմ պտուղները

Ուսուցիչը դասի ավարտին աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները:

Երեխաները կարդում են ներկապանակների ներքևում գրված ամփոփիչ արտահայտությունները և ասում, թե ինչ պարզեցին, ինչ հաջողվեց անել, ինչը դուր եկավ և ինչ ցանկացան անել:

Ուսուցիչը կարող է հարցնել՝ երեխաներն արդյո՞ք հիշում են, թե ինչ են կարդացել դասանյութի գլխագրում: Եվ արդյո՞ք դասից քաղած պտուղները համընկնում են գլխագրի կետերում ներկայացված նպատակներին:

Եթե երեխաները լավ չեն հիշում, կարող են նորից կարդալ և համեմատել: Տեսնել՝ ավելի՞ն են արել, թե՞ ինչ-որ բան պակաս են արել:

Այնուհետև կարդում են ամփոփման պատուհանիկում գրված միտքը, կարծիքներ արտահայտում, լրացնում միմյանց:

## 3.5. ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

### 3.5.1. Դասի սկիզբ

Դասի սկզբին կարելի է կիրառել «ԳՈՒՍ» մեթոդական հնարը: Ուսուցիչը նախօրոք գրատախտակին գծում է եռամաս աղյուսակ կամ ցուցադրում ԳՈՒՍ-ի պաստառը, որի ձախ կողմում գրված է՝ **գիտեմ**, կենտրոնում՝ **ուզում եմ իմանալ**, աջ սյունակում՝ **սովորեցի** բառերը: Աշակերտներն ուսուցչի հրահանգով ունկնդրում են Կոմիտասի «Կաքավի գովքը» երգը: QR

Ուսուցիչը հաջորդիվ հարցնում է աշակերտներին, թե նրանք երբևէ լսե՞լ են այդ երգը, ի՞նչ գիտեն այդ երգի մասին: Ովքե՞ր են երգի հեղինակները՝ խոսքերի և երաժշտության: Ապա լրացնում են **գիտեմ** սյունակը: Եթե աշակերտները դժվարանան պատասխանել հարցերին, ապա ուսուցիչը կտեղեկացնի երգի ստեղծողների՝ հայ մեծ երգահան Կոմիտասի և Ամենայն հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անունները:

Այնուհետև ուսուցիչն աշակերտներին հարցնում է, թե նրանք ինչ են ուզում իմանալ այդ հեղինակների մասին: Որից հետո լրացվում է **ուզում եմ իմանալ** սյունակը: Իսկ դասի վերջում լրացվում է **սովորեցի** սյունակը:

ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿ «ԿԱՔԱՎ»

Կաքավների մի երամ
Չվում էր դեպ Երևան:
Բայց մի կաքավ, ո՞նց եղավ,
Այդ երամից հետ ընկավ:

Բայց հնարը նա գտավ.
Օդակայան շուտ մտավ,
Օդանավի տոմս առավ,
Փափուկ նստեց ու թռավ:

Բայց դե նստած օդանավում՝
Մտածում է, ծանր շնչում.
«Ես թռչուն եմ, բայց չգիտեմ.
Ես թռչո՞ւմ եմ, թե՞ չեմ թռչում»:

Այս դասին դու.

• Կիմանաս, որ առարկաներն ունեն ընդհանուր անվանում:

• Կճանաչես Հայաստանի որոշ ծաղիկներ:

• Կպարզես, թե ինչպես է երգն օգնում, որ արտահայտես սեփական մտքերն ու հույզերը:

• Քո տեղը կգտնես կաքավիկների երգչախմբում:

## ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

**Հովհաննես Թումանյան**

vachagan.am

**Այս գեղեցիկ թռչունը խոտերի ու ծաղիկների մեջ հյուսում է իր բույնը, ձագուկներ հանում, կերակրում նրանց, մեծացնում, թռչել ու երգել սովորեցնում:**

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:
Սիրունի՜կ, սիրունի՜կ,
Սիրունի՜կ, նախշո՜ւն կաքավիկ:
Քո բույն հյուսած ծաղիկներով՝
Շուշան*, նարգիզ*, նունուֆարով*,
Քո տեղ լցված ցող ու շաղով,
Քնես-կելնես երգ ու տաղով:
Սիրունի՜կ, սիրունի՜կ,
Սիրունի՜կ, նախշո՜ւն կաքավիկ:
Քո թև փափուկ ու խատուտիկ*,
Պստի կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կշորորաս ճուտիկներով:
Սիրունի՜կ, սիրունի՜կ,
Սիրունի՜կ, նախշո՜ւն կաքավիկ:
Երբ կկանգնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես* ծաղիկներին,
Դարդի ծովեն սիրտ կհանես,
Մեր սրտերին խինդ կբերես:
Սիրունի՜կ, սիրունի՜կ,
Սիրունի՜կ, նախշո՜ւն կաքավիկ:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*արև* *բարև*

* **Շուշան, նարգիզ, նունուֆար** – ծաղիկներ:
* **Խատուտիկ** – *այստեղ՝* գույնզգույն:
* **Սաղմոս ասել** – երգել, գովերգել:



### 3.5.2. Աշխատանք դասանյութի գլխագրի և մուտքի պատուհանիկի շուրջ

Մինչև տեքստի ընթերցումը ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները ուշադիր ընթերցեն գլխագրի կետերը: Այնուհետև հպանցիկ քննարկում են այդ կետերում ար-

տահայտված նպատակները: Ուսուցիչն ասում է, որ դասանյութը յուրացնելուց հետո կրկին կանդրադառնան այս կետերին ու կտեսնեն, թե որքանով և ինչպես իրականացրին կետերում արտահայտված նպատակները:

Գրեթե բոլոր գլխագրերում կան «սադրիչ» կետեր, որոնք խթանում են երեխաների երևակայությունը, վառում հետաքրքրասիրությունը, ստիպում որպե առաջ կարդալու տեքստը: Այդպիսին է գլխագրի վերջին կետը: Այդ կետը կիրականանա, երբ երեխաները լսեն երգը և միասեն երգեն:

Հետո կարդում են տեքստի վերնագիրը և դիտում նկարազարդումը: Փորձում են գուշակել, թե ինչի մասին է տեքստը, ինչ բովանդակություն ունի: Այնուհետև ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է մուտքի պատուհանիկում գրվածի վրա: Նրանք կարդում են գրվածը և հասկանում, որ խոսքը կաքավ թռչունի մասին է:

Ուսուցչուհին հրահանգում է, որ երեխաները լուռ կարդան բանաստեղծությունը՝ փորձելով պատկերացնել այն տեսարանները, որոնք բանաստեղծը կերտել է բառերով:

### 3.5.3. Տեքստի բարձրաձայն ընթերցում՝ բառաբացատրական աշխատանքով

Տեքստը կարդում են բարձրաձայն, կատարվում են մեկնաբանություններ և բառաբացատրական աշխատանք:

• Ի՞նչ էր ուզում ասել հեղինակը «բարև բերավ ծաղիկներեն» արտահայտությամբ: (Ուսուցիչը բացատրում է, որ -են վերջավորությունը ժողովրդի խոսակցական լեզվում նույնն է, ինչ որ -ից վերջավորությունը, այսինքն՝ հեղինակը պատկերավոր կերպով ներկայացնում է, որ կաքավիկը թռել եկել է ծաղիկների աշխարհից ու բերել է ծաղիկների բարևը)

• «Նախշուն կաքավ» արտահայտության մեջ **նախշուն** բառն ի՞նչ բառով կփոխարինեիք: (Սիրուն, չալպուտուրիկ)

• Բացատրե՛ք **ցող, խատուտիկ** բառերի իմաստները: (**Ցող**-ջրի մանրիկ կաթիլներ, որ գիշերը կամ վաղ առավոտյան նստում են բույսերի, գետնի և այլ առարկաների վրա: **Խատուտիկ**-այստեղ՝ գույնզգույն):

### 3.5.4. Զրույց տեքստի բովանդակության շուրջ

Ուղղորդող հարցեր.

1. Ինչի՞ց իմացաք, որ սա բանաստեղծություն է: (Տողերը կարճ են, իրար հավասար, տողերում վանկերի քանակները գրեթե հավասար են, տողերը վերջանում են նույնահունչ բառերով, և այլն)

2. Կարդացե՛ք կաքավին նկարագրող տողերը: (Պիտի կարդան կրկներգը և երրորդ քառատողը)

3. Հեղինակը ի՞նչ բառերով է նկարագրում կաքավի բույնը: (Պիտի կարդան բանաստեղծության երկրորդ քառատողը)

4. Ո՞ր քառատողը ձեզ ամենից շատ դուր եկավ: Ինչու՞: (Երեխաներն ասում են, թե որ քառատողն իրենց դուր եկավ և հիմնավորում իրենց ընտրությունը)

### 3.5.5. Տեքստի արտահայտիչ ընթերցանություն՝ կարդալու որակական բոլոր հատկանիշների պահպանումով

Ուսուցիչը աշակերտների ընթերցանության կարողությունները զարգացնելու նպատակով կարող է տալ այսպիսի հանձնարարություններ.

• Կարդացե՛ք բանաստեղծությունն այնպես, որ երևա, որ դուք շատ եք սիրում կաքավիկին:

• Գտե՛ք այն տողը, որտեղ խոսվում է զվարթության ու խինդի մասին, ընթերցե՛ք համապատասխան հնչերանգով:

### 3.5.6. Աշխատանք նկարազարդման շուրջ

Ուսուցիչը առաջարկում է երեխաներին, որ նրանք նկարը համեմատեն բանաստեղծության հետ: Բանաստեղծության այս պատկերներից ո՞րը չի նկարել նկարիչը.

- արև բացվեց թուխ ամպերեն
- կաքավ թռավ կանաչ սարեն
- քո բույն հյուսած ծաղիկներով՝ շուշան, նարգիզ, նունուֆարով
- կարմիր-կարմիր տոտիկներով կշորորաս ճուտիկներով
- երբ կկանգնես մամռոտ քարին

Երեխաները համեմատում են, տեսնում, որ նույն բանը կարելի է և՛ խոսքով ասել, և՛ նկարով:

Իսկ ներկայացված պատկերներից նկարիչը չի նկարել 2-րդը և վերջինը:

**ԿԱՔԱՎԻԿԻ ՀԱՆԵԼՈՒԿԸ**

Կաքավիկը՝ կարմիր տոտիկ,
Մի բույն հյուսեց շատ խորոտիկ,
Ձվեր ածեց, ձագեր հանեց,
Քարին կանգնեց, ուրախ երգեց:

Այսքան բան է նա կատարել,
Թռել, երգել, քուջուջ արել,
Արդյոք հիմա նա կարո՞ղ է
Իրեն թռչուն միշտ անվանել:

*(Չի կարող, որովհետև խոսել չգիտի)*

## Հարցեր

Պատասխանի՛ր հարցերին: Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

1. Որտեղի՞ց դուրս եկավ արևը.
   - սարի հետևից
   - ամպի տակից
   - ձորից
2. Ի՞նչ ծաղիկներից էր հյուսած կաքավիկի բույնը.
   - շուշան, նարգիզ, նունուֆար
   - վարդ, նարգիզ, նունուֆար
   - շուշան, նարգիզ, մանուշակ
3. Ինչպիսի՞ն է կաքավիկը.
   - թևը փափուկ, կտուցը նախշուն, տոտիկը փոքրիկ
   - թևը փափուկ, կտուցը պստիկ, տոտիկը կարմիր
   - թևը կարմիր, կտուցը պստիկ, տոտիկը կարճլիկ
4. Ինչո՞ւ է հեղինակը գովում կաքավիկին.
   - Ուրախություն է պարգևում բոլորին:
   - Իր երգով արթնացնում է բոլորին:
   - Ոչնչացնում է վնասատուներին:

## Առաջադրանքներ

1 Նկարի՛ր երգի՝ քեզ դուր եկած քառատողը:

2 • Վերծանի՛ր նկարելուկը և գրի՛ր ստացված նախադասությունը:



• «Բարև՛, Աստղի՛կ» նախադասությունը պատկերի՛ր նկարելուկի տեսքով:

3 Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

vachagan.am

Ճուտը ճկեց ճիտը*,
Կծեց ծտի ճիտը:

* **ճիտ** – վիզ:

46

### 3.5.7. Ճիշտ պատասխանի ընտրում

Պատասխանի՛ր հարցերին: Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

1. Որտեղի՞ց դուրս եկավ արևը.
   - սարի հետևից

- **ամպի տակից**
- ձորից

2. Ի՞նչ ծաղիկներից էր հյուսած կաքավիկի բույնը.
- **շուշան, նարգիզ, նունուֆար**
- վարդ, նարգիզ, նունուֆար
- շուշան, նարգիզ, մանուշակ

3. Ինչպիսի՞ն է կաքավիկը
- թևը՝ փափուկ, կտուցը՝ նախշուն, տոտիկը՝ փոքրիկ
- **թևը՝ փափուկ, կտուցը՝ պստիկ, տոտիկը՝ կարմիր**
- թևը՝ կարմիր, կտուցը՝ պստիկ, տոտիկը՝ կարճլիկ

4. Ինչո՞ւ է հեղինակը գովում կաքավիկին.
- **ուրախություն է պարգևում բոլորին**
- իր երգով արթնացնում է բոլորին
- ոչնչացնում է վնասատուներին

**Առաջադրանք 1.** Նկարի՛ր քեզ դուր եկած քառատողը:

Սա կարելի է հանձնարարել որպես ինքնուրույն աշխատանք: Աշակերտները կնկարեն և կմեկնաբանեն իրենց նկարածը:

### 3.5.8. Աշխատանք նկարելուկի և «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

**Առաջադրանք 2.**
- Վերծանի՛ր նկարելուկը և գրի՛ր ստացված նախադասությունը:
- «Բարև, Աստղիկ» նախադասությունը գրի՛ր նկարելուկի տեսքով:

Այս առաջադրանքը շատ պարզ առաջադրանք է: Նախատեսված է նաև թույլ կարողություններ ունեցող երեխաների համար:

Պետք է գրեն՝ «Բարև, արև» նախադասությունը:

Նկատենք, որ այս առաջադրանքի միջոցով անդրադարձ է կատարվում «Աչքի առաջ» խորագրով ներկայացվող բառերին՝ առանց այդ մասին հատուկ նշելու: Երեխաները գրում են **բարև, արև** բառերը և ամրապնդում դրանց գրության իմացությունը:

Առաջադրանքի երկրորդ կետը աշակերտները հեշտությամբ կկարողանան կատարել: Նրանք արդեն գիտեն, թե անուններն ինչպես գրել նկարելուկի տեսքով:

Նաև կարելի է «Աչքի առաջ» բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝

**ար-** **բար-**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը բառատետրում և կազմում բառակապակցություններ: Օրինակ.

**արև**- արևի շող, ոսկեշող արև

**բարև**- բարև տալ, ջերմ բարև

**3.5.9. Անդրադարձ շուտասելուկին**

**Առաջադրանք 3.** Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

**Ճուտը ճկեց ճիտը,**
**Կծեց ծտի ճիտը:**

Նախքան շուտասելուկի հետ աշխատանքը, ուսուցիչը QR-կոդի միջոցով ցուցադրում է շուտասելուկի ասմունքը: Դիտելուց հետո երեխաները զվարթ մթնոլորտում սկսում են արտասանել շուտասելուկը՝ մրցելով, թե ով ավելի արագ կարտասանի:

4 Արտագրի՛ր տեքստի առաջին քառատողը: Քանի՞ վանկ կա առաջին տողում, քանի՞ վանկ՝ երկրորդ:

5 Տեքստը պատմի՛ր Արևի անունից:

6 Լրացրո՛ւ խաչբառը: Ո՞ր ծաղիկները տեղ չգտան խաչբառում:




| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | | ծ | | | |
| | 2 շ | ու | շ | ա | ն | | |
| 3 | | | | ղ | | | |
| | 4 | | | ի | | | |
| | | 5 | | կ | | | |

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես ձանձրացի _____ Ես կարողացա արտահայտել _____ Ինձ համար պարզեցի _____

Կաքավիկը երգով է իր սերն արտահայտում իր շրջապատի և մեր նկատմամբ: Մենք էլ մեր փոքրիկ բարեկամների նկատմամբ մեր սերն արտահայտենք ուշադիր ու հոգատար վերաբերմունքով:

47

**Առաջադրանք 4.** Արտագրի՛ր տեքստի առաջին քառատողը: Քանի՞ վանկ կա առաջին տողում, քանի՞ վանկ՝ երկրորդ:

Երեխաներն արտագրում են բանաստեղծության առաջին քառատողը և հաշվում առաջին երկու տողերում վանկերի քանակները՝ 8 և 8:

### 3.5.10. Աշխատանք տեքստի վերարտադրման շուրջ

**Առաջադրանք 5.** Տեքստը պատմի՛ր Արևի անունից:

Կարելի է կիրառել տեքստի ստեղծագործաբար վերարտադրման միջոցը և երեխաներին հանձնարարել, որ նրանք տեքստը պատմեն որևէ հերոսի անունից՝ կաքավի, արևի, սարի, մամռոտ քարի, ճուտիկների, կաքավի բնի:

Օրինակ՝ արևի անունից:

*Վաղ առավոտյան արթնացա, ամպե վերմակը վրայիցս հետ տարա ու ժպտացի աշխարհին՝ սար ու քարին, խոտ ու ջրին, մարդկանց ու կենդանիներին: Մեկ էլ տեսնեմ կաքավիկը արագ վեր կացավ, բույնը հարդարեց, ճուտիկներին ձայն տվեց, կանգնեց մամռոտ քարին ու սկսեց երգել ինձ ու բոլորի համար: Ես էլ ուրախ շողեր ուղարկեցի նրան:*

### 3.5.11. Խաչբառի լրացում

**Առաջադրանք 6**. Լրացրու՛ խաչբառը: Ո՞ր ծաղիկները տեղ չգտան խաչբառում:

Այս առաջադրանքում երեխան, լրացնելով ծաղիկների անունները, ընդգծված սյունակում կարդում է դրանց ընդհանուր անվանումը՝ **ծաղիկ**:

Ընդհանուր անվան գտնելու վերաբերյալ առաջադրանքները կատարելու համար երեխան պետք է ըստ առարկաների էական հատկանիշների մտովի միավորի դրանք որևէ հասկացության մեջ: Օրինակ՝ **տանձը, խնձորը, ծիրանը, սալորը** միավորվում են **միրգ** հասկացության մեջ:

Այս առաջադրանքների կատարումը զարգացնում է երեխայի՝ վերացարկելու, առարկաների էական հատկանիշներն առանձնացնելու և ընդհանրացումներ անելու կարողությունները, նպաստում է, որ երեխան հասկանա առարկա-բառ-հասկացություն շղթան, կատարի վերլուծական և համադրական մտային գործողություններ: Այսօրինակ առաջադրանքների կատարումը բացահայտում և ընդլայնում է երեխայի աշխարհաճանաչողությունը:

Այս առաջադրանքը կարելի է հանձնարարել որպես տնային աշխատանք:

Խաչբառը լրացնելով **ձնծաղիկ, շուշան, արևածաղիկ, նարգիզ, կակաչ** ծաղկանուններով, երեխաները տեսնում են, որ դուրս մնացին **նունուֆար** և **մանուշակ** ծաղկանունները:

Երբեմն արժե երեխաներին ցույց տալ գլխագրի նպատակների և կատարելիք առաջադրանքների կապը: Օրինակ, երեխաներին կարելի է հիշեցնել, որ այս առաջադրանքի միջոցով իրականացվում են գլխագրի 1-ին և 2-րդ պահանջները:

### 3.5.12. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Աշակերտները ինքնուրույն լրացնում են անավարտ նախադասությունների միտքը.

Ես ճանաչեցի...

Ես կարողացա արտահայտել...

Ինձ համար պարզեցի...

Ուսուցիչը դասի ավարտին աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացված նյութը և լրացնելու անավարտ նախադասությունների միտքը:

### 3.5.13. Զրույց «Ամփոփման պատուհանիկում» գրված մտքի շուրջ

Բոլոր կենդանի էակներն էլ ապրում են, տուն ու բույն են կառուցում, ձագուկներ ունենում, ուրախանում են, երգում ու իրենց գոհությունը հայտնում երկնքին:

*Կաքավիկը երգով է իր սերն արտահայտում իր շրջապատի և մեր նկատմամբ: Մենք էլ մեր փոքրիկ բարեկամների նկատմամբ մեր սերն արտահայտենք ուշադիր ու հոգատար վերաբերմունքով:*

Երեխաները ներկայացնում են, թե ինչպես են իրենց հոգատարությունը արտահայտում կենդանիների նկատմամբ: Աշխույժ պատմում են ընտանի կենդանիների մասին, նրանց նկատմամբ իրենց վերաբերմունքի մասին:

## 3.6. ՓՈՔՐԻԿ ՊԱՐՈՒՀԻՆ

### 3.6.1. «Երազանքների ծառ» վարժությունը

Ուսուցիչը դասասենյակի մի անկյունում փակցնում է ճյուղատարած ծառի մի նկար: Ասում է աշակերտներին, որ սա երազանքների ծառն է, պետք է ծառը զարդարենք մեր «երազանքներով»:

Յուրաքանչյուրն իր երազանքը պետք է գրի կպչուն թղթիկի վրա և փակցնի ծառին: Աշակերտներին ուսուցիչը նախօրոք բաժանում է գույնզգույն կպչուն թղթիկներ: Նրանք գրում են, թե ինչ են երազում, բարձրաձայն կարդում են գրածները և փակցնում ծառին:

Այնուհետև ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ինչ պետք է անել երազանքներին հասնելու համար: Պատասխանները՝ մեկ կամ երկու բառ:

Այս միտքը ուսուցիչը կարող է բանավոր ասել կամ գրել գրատախտակին:

Այս աշխատանքից հետո ուսուցիչը կազմակերպում է «Մտքերի տարափ» մեթոդական հնարը, որը կնպաստի նոր գաղափարների ի հայտ գալուն:

Հիշեցնենք, որ երեխաները կարող են ազատորեն արտահայտել իրենց մտքերը, ասել այն ամենը, ինչը այդ պահին ծնվում է: Ուսուցիչը բոլոր ասածները գրառում է

գրատախտակին, չի քննադատում, խրախուսում է գաղափարները, ապահովում է, որ բոլոր ցանկացողները հավասարապես արտահայտվեն, գրառում է բոլոր մտքերը:

Այս դասին դու.

• Կսովորես «և-ի երգը»:

• Կծանոթանաս մեր և այլ ժողովուրդների պարերից մի քանիսին:

• Կիմանաս, թե ինչպես է պարն օգնում արտահայտելու սեփական մտքերն ու հույզերը:

• Կպարզես, թե ինչքան ջանք ու եռանդ է պետք երազանքիդ հասնելու համար:

## ՓՈՔՐԻԿ ՊԱՐՈՒՀԻՆ

Վաչագան Ա. Սարգսյան

vachagan.am

**Տեսնենք, թե ինչի է պատրաստ փոքրիկ աղջիկը իր երազանքին հասնելու համար:**

– Մա՛մ, ուզում եմ պարուհի դառնալ,– դեռ դպրոցական պայուսակը չհանած՝ ասած փոքրիկ Լուսինեն:

– Ինչո՞ւ հանկարծ որոշեցիր պարուհի դառնալ,– ժպտալով հարցրեց մայրիկը՝ վերցնելով պայուսակը:

– Ուզում եմ, որ բոլորը հիանան ինձնով:

– Բայց մենք հիմա էլ ենք քեզնով հիանում:

– Չէ: Ուզում եմ բեմում պարել: Ուզում եմ, որ բոլորն ինձ ծափահարեն, զարմանան իմ գեղեցիկ շարժումներով: Հետո էլ ինձ հեռուստացույցով ցույց կտան:

– Իսկ գիտե՞ս, որ լավ պարելու համար պիտի շատ աշխատես: Պիտի ամեն օր առավոտ վաղ արթնանաս:

– Կարթնանամ:

– Պիտի շատ մարզվես:

– Կմարզվեմ:

– Պիտի շա՜տ-շատ պարես, նույն շարժումը հազար անգամ կրկնես:

– Կպարե՜մ, կկրկնե՜մ:

### 3.6.2. Աշխատանք գլխագրի շուրջ

Ուսուցչի հորդորով երեխաները կարդում են դասի գլխագիրը:

Ուսուցիչը կարող է հարցնել, թե որ կետը հատկապես դուր եկավ աշակերտներին, որ կետի մասին են ուզում արտահայտվել: Ցանկացողները արտահայտվում են գլխագրի այս կամ այն կետի վերաբերյալ: Հպանցիկ քննարկումից հետո անդրադառնում են մուտքի պատուհանիկի գրառմանը:

Առաջին կետը կզվարթացնի և կհետաքրքրի երեխաներին: Նրանք արդեն մի քանի տառի մասին երգեր լսել և դիտել են:

Երկրորդ կետը կզարմացնի երեխաներին՝ ինչպե՞ս պիտի ծանոթանան:

Երրորդ կետի շուրջ ուսուցիչը կարող է կազմակերպել փոքրիկ քննարկում: Երեխաները արդեն հասկացել են, որ զգացմունքները հնարավոր է արտահայտել թե՛ խոսքով, թե՛ մարմնի շարժումներով, թե՛ նկարչությամբ, թե՛ երգով: Նրանք կեզրակացնեն, որ պարով ևս հնարավոր է արտահայտել մարդկային ապրումներ ու զգացմունքներ:

Չորրորդ կետի վերաբերյալ մի քանի կարծիք լսելուց հետո ուսուցիչը կասի, որ այդ մասին կկարդանք տեքստում:

Աշակերտներից յուրաքանչյուրն արդեն գրել է իր երազանքի մասին և մտագրոհի ժամանակ արտահայտել իր կարծիքը այդ նպատակին հասնելու միջոցների մասին: Այժմ յուրաքանչյուրի համար հետաքրքիր կլինի, թե պատմության հերոսուհի իր հասակակիցը ինչ նպատակ ունի և ինչի է պատրաստ դրան հասնելու համար: Պատմության հերոսուհին դառնում է համադասարանցի, ավելի է որոշակիանում նրա կերպարը:

### 3.6.3. Աշխատանք տեքստի վերնագրի և նկարազարդման շուրջ

Մինչ տեքստի ընթերցումը ուսուցչուհին հանձնարարում է ընթերցել տեքստի վերնագիրը և դիտել նկարազարդումը:

«Ի՞նչ եք կարծում, ի՞նչի մասին է երազում փոքրիկ աղջիկը»,- հարցնում է ուսուցիչը, լսում է աշակերտների բոլոր պատասխանները և խրախուսում:

Պատմության վերնագիրը և նկարազարդումը երեխաներին հուշում են, որ փոքրիկ աղջիկը երազում է մեծ պարուհի դառնալ:

### 3.6.4. Տեքստի վերաբերյալ տեսահոլովակի դիտում

Այնուհետև ուսուցիչը QR-կոդի միջոցով ցուցադրում է տեքստի բեմականացումը՝ աշակերտներին հորդորելով, որ ստուգեն իրենց կանխագուշակումները տեքստի բովանդակության վերաբերյալ:

Տեքստի նախնական ընկալումը պարզելու նպատակով կարելի է տալ նման բնույթի հարցեր.

1. Ովքե՞ր էին տեքստի հերոսները: (Լուսինեն և մայրիկը)
2. Ի՞նչ երազանք ուներ Լուսինեն: (Դառնալ պարուհի)

3. Ինչի՞ էր պատրաստ Լուսինեն իր երազանքին հասնելու համար: (Վաղ արթնանալ, շատ մարզվել, շարժումները կրկնել, ճիշտ սնվել, լավ սովորել, քիչ խաղալ)

Տեքստի բարձրաձայն ընթերցանությունից առաջ կարելի է QR-կոդի միջոցով լսել և դիտել տեքստի բեմականացումը:

### 3.6.5. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Տեքստը կարդում են բարձրաձայն, կատարվում են մեկնաբանություններ և բառաբացատրական աշխատանք:

### 3.6.6. Զրույց տեքստի բովանդակության շուրջ

1. Ո՞րն էր Լուսինեի երազանքը: (Դառնալ պարուհի)

2. Ինչու՞ էր Լուսինեն որոշել պարուհի դառնալ: (Ուզում էր բեմում պարել, որ բոլորը հիանային իրենով, ծափահարեին)

3. Ի՞նչ պետք է աներ Լուսինեն երազանքին հասնելու համար: (Վաղ արթնանա, շատ մարզվի, նույն շարժումը հազար անգամ կրկնի, ճիշտ սնվի, անընդհատ վազքի մեջ լինի, լավ սովորի, ազատ ժամանակ քիչ ունենա, խաղալու ժամանակ չունենա, կատարի պարուսույցի բոլոր ասածները)

4. Ի՞նչու էր Լուսինեն համաձայնում մայրիկի նշած պայմաններին: (Որովհետև անպայման ուզում էր լավ պարուհի դառնալ, ուզում էր պարի միջոցով ցույց տալ, թե ինքը ինչ է զգում)

5. Ինչու՞ արցունքների միջից ժպտաց Լուսինեն: (Որովհետև մտածում էր, որ անպայման կհասնի իր երազանքին)

6. Ինչու՞ մայրիկը ամուր գրկեց աղջկան: (Մայրիկը հիացավ աղջկա հաստատակամությամբ: Նրան ոգևորելու համար: Մայրիկը հավատաց, որ Լուսինեն կհասնի իր երազածին: Հիացավ Լուսինեով)

7. Իսկ դու՞ ինչով ես ուզում հիացնել մարդկանց: (Յուրաքանչյուր աշակերտ պատմում է իր երազանքի մասին)

8. Քո կարծիքով՝ Լուսինեն կհասնի՞ իր երազանքին: Ինչո՞ւ: (Այո: նա շատ հաստատակամ է, շատ է սիրում պարել: Ուզում է, որ բոլորը հիանան իրենով)

**ԱՇՈՒՆԸ ԵՎ ՏԵՐԵՎՆԵՐԸ**

Աշուն է: Ծառի վերևի ճյուղերին արդեն տերև չի մնացել: Տերևների **տեր**երը գնացել են, միայն **և**-երն են ծառերից կախված օրորվում: Ներքևի ճյուղերից մեկի վրա երկու տերև զրուցում են:

– Երևի մենք էլ թռչենք-գնանք:

– Հա, գնանք, արև չկա, մրսում եմ:

–Նաև մենակ ենք մնացել, տխուր է:

– Ես էլ եմ մրսում,– հարևան ճյուղից նրանց միացավ մենակ մնացած ևս մի տերև:

Հենց քամին փչեց, երեքով թեթև-թեթև, թև թևի տված թռան-հեռացան:

Իսկ **և**-երը մնացին ծառի վրա: Ձյունը կգա, բուքը կգա, սակայն նրանք կմնան ծառի վրա: Գարնանը **տեր**երը կգան, միանալով **և**-երին, նորից կդառնան **տերև**ներ, սիրուն կխշշան և ուրախ կզրուցեն:

– Պիտի ճիշտ սնվես, անընդհատ վազքի մեջ ես լինելու:

– Ճիշտ կսնվեմ, վազքից էլ չեմ վախենում:

– Պիտի դպրոցում շարունակես լավ սովորել:

– Կսովորեմ:

– Ազատ ժամանակ շատ քիչ ես ունենալու: Ընկերներիդ հետ խաղալու ժամանակ էլ չես ունենա:

– Ոչի՞նչ:

– Պիտի պարուսույցի բոլոր ասածները կատարես:

– Կկատարե՞մ,– հուզված ասաց Լուսինեն:– Հենց երաժշտություն եմ լսում, հանգիստ չեմ կարողանում մնալ, սիրտս թրթռում է, ուզում եմ պարել, ցույց տալ, թե ինչ եմ զգում:

– Հնարավոր է, որ այդ ամենն անես, բայց քեզնով չհիանան:

– Ոչի՞նչ, ե՛ս կհիանամ,– արցունքների միջից ժպտաց Լուսինեն:

– Ես էլ կհիանամ,– ասաց մայրիկն ու ամուր գրկեց աղջկան:

**ԱՉՔԻ ՍՈՒԱՉ**

*հիանալ*

*թրթռալ*

*արթնանալ*

## Հարցեր

1. Ի՞նչ երազանք ուներ Լուսինեն:
2. Ինչո՞ւ էր Լուսինեն որոշել պարուհի դառնալ:
3. Ի՞նչ պետք է աներ Լուսինեն իր երազանքին հասնելու համար:
4. Ինչո՞ւ էր Լուսինեն համաձայնում մայրիկի նշած պայմաններին:
5. Իսկ դո՞ւ ինչով կուզեիր հիացնել մարդկանց:
6. Շարունակի՛ր պատմությունը. ի՞նչ տեղի ունեցավ տասը տարի հետո:

49

### 3.6.7. Աշխատանք արտահայտիչ ընթերցանության կարողությունները զարգացնելու նպատակով

Կարդացե՛ք մայրիկի և աղջկա երկխոսությունը՝ համապատասխան հնչերանգով:

- Գտե՛ք և կարդացեք այն տողերը, որոնք ներկայացնում են Լուսինեի երազանքին հասնելու համառությունը, ընթերցե՛ք համապատասխան հնչերանգով:
- Ձեր ցանկությամբ բաշխե՛ք դերերը և ընթերցեք՝ օգտագործելով համապատասխան շարժումներ և դիմախաղ:

### 3.6.8. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» խորագրի բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝

**Հի-նալ, թրթ-ալ, ար-նանալ:**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը բառատետրում և կազմում բառակապակցություններ:

**Հիանալ**- հիանալ աշխատանքով, հիանալ պարով

**Թրթռալ**- սիրտը թրթռալ, ուրախությունից թրթռալ

**Արթնանալ**- վաղ արթնանալ, արթնանալ ձայնից

## ՈՎ Է ԱՄԵՆԻՑ ՇՈՒՏ ԱՐԹՆԱՆՈՒՄ

– Արևն է ամենից շուտ արթնանում,– ասաց Արևիկը:

– Ծառն է ամենից շուտ արթնանում,– ասաց Սոսեն:

– Ծովն է արթնանում: Նա չի էլ քնում,– ասաց Ծովինաը:

– Թռչուններն են ամենից շուտ արթնանում,– ասաց Արծվիկը:

– Ծաղիկներն են ամենից շուտ արթնանում,– ասաց Վարդուհին:

– Ո՛չ,– ասաց Լուսինեն:– Մայրիկներն են ամենից շուտ արթնանում ու մեզ արթնացնում, որ գնանք պարի:

## Առաջադրանքներ

1 Ավարտի՛ր նախադասությունները:

**Ես երազում եմ** _____:

**Երազանքս իրական դարձնելու համար ես պետք է** _____, _____, _____:

2 Հարցրո՛ւ ընկերոջդ, թե ինչ երազանքներ ունի: Գրի՛ր և համեմատի՛ր քո երազանքների հետ:

3

• Կարդա՛ «**և**-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը: Ուշադրությո՛ւն դարձրու, թե **և**-ն ինչպես է հնչում:

• Երգից առանձնացրո՛ւ և գրի՛ր երկու բառ, որոնցից մեկում **և**-ը երկու հնչյուն է նշում՝ էվ, մյուսում՝ երեք՝ յէվ:

vachagan.am

### և-Ի ԵՐԳԸ

Ծանոթանանք՝ և-ն եմ ես,
Ես նշան եմ, խառն եմ ես,
Նաև բառ եմ տառի պես:
Բառամիջում, բառավերջում՝
էվ եմ հնչում, թեև տեսեք՝
Նաև մեկ-մեկ յէվ եմ շնչում:
Թե գնում եմ ես առջևից,
Կամ էլ մնում մեն-մենակ,
Յէվ եմ հնչում շարունակ:

4 ○ Տեքստից դո՛ւրս գրիր **և** պարունակող բառերը:

Գևորգը Երևանից գնաց Սևան՝ իր ընկեր Լևոնին հյուր: Թեև օրն արևոտ չէր, սակայն նրանք որոշեցին լողալ Սևանում: Լևոնի քույրը՝ Տաթևը, ևս միացավ նրանց:

✧ Հաշվի՛ր այդ բառերի հնչյունների և տառերի քանակները:

☼ Հիշի՛ր **և** պարունակող մեկ ուրիշ բառ: Այդ բառը գործածի՛ր նախադասության մեջ:



**Առաջադրանք 1.** Ավարտի՛ր նախադասությունները:
Ես երազում եմ _____:
Երազանքս իրական դարձնելու համար ես պետք է_____,
_____, _____:

Այս առաջադրանքը կարելի է հանձնարարել որպես ինքնուրույն աշխատանք: Գրավոր աշխատանքը վերջացնելուց հետո երեխաները բարձրաձայն կկարդան իրենց գրածները: Կքննարկեն միմյանց հետ:

**Առաջադրանք 2.** Հարցրու ընկերոջդ, թե նա ինչ երազանքներ ունի: Գրի՛ր և համեմատի՛ր քո երազանքների հետ:

Այսօրինակ առաջադրանքներով երեխաների մեջ ձևավորվում են հարցեր տալու միջոցով, երկխոսություններով զրուցակիցներից տեղեկություններ քաղելու, դրանք գրառելու նախնական կարողություններ:

### 3.6.9. Աշխատանք «և-ի երգը» տեսահոլովակի շուրջ

**Առաջադրանք 3.**

• Կարդա՛ «և-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը: Ուշադրություն դարձրո՛ւ, թե **և**-ն ինչպես է հնչում:

**և-Ի ԵՐԳԸ**
**Ծանոթանանք՝ և-ն եմ ես,**
**Ես նշան եմ, խառն եմ ես,**
**Նաև բառ եմ տառի պես:**
**Բառամիջում, բառավերջում՝**
**Էվ եմ հնչում, թեև տեսեք՝**
**Նաև մեկ-մեկ յէվ եմ շնչում:**
**Թե գնում եմ ես առջևից,**
**Կամ էլ մնում մեն-մենակ,**
**Յէվ եմ հնչում շարունակ:**

• Երգից առանձնացրո՛ւ երկու բառ, որոնցից մեկում և-ը երկու հնչյուն է նշում՝ էվ, մյուսում՝ երեք՝ յէվ:

Օրինակ՝ **նաև** - 3 հնչյուն, **առջև** - 2 հնչյուն:

Այս աշխատանքը կարելի է կազմակերպել որպես աշխատանք զույգերով:

**Առաջադրանք 4.** Սա «Դեպի վեր» առաջադրանք է, որը բարդության տարբեր աստիճաններ (պարզ, միջին, բարդ) ունեցող միևնույն առաջադրանքն է և նախատեսված է տարբեր կարողությունների տեր աշակերտների համար: Ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ աշակերտները հնարավորության դեպքում կարողանան աստիճանաբար կատարել դրանք:

○ Տեքստից դո՛ւրս գրիր **և** պարունակող բառերը:
Աշակերտները տեքստից արտագրում են **նաև, թեև, առջև** բառերը:

✧ Հաշվի՛ր այդ բառերի հնչյունների և տառերի քանակները:
**նաև**- 3 տառ, 5 հնչյուն
**թեև**- 3 տառ, 5 հնչյուն
**առջև**- 4 տառ, 5 հնչյուն

☼ Հիշի՛ր **և** պարունակող մեկ ուրիշ բառ: Այդ բառը գործածի՛ր նախադասության մեջ:

Օրինակ: Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է:

### Գիտե՞ս, որ...

vachagan.am

Ապրիլի 29-ին նշվում է պարի միջազգային օրը: Այս տոնի նպատակն է պարի միջոցով միավորել տարբեր ազգերը, միմյանց ներկայացնել իրենց ժողովուրդների պարերը:



Ստեպ (Իռլանդիա)

Սիրտակի (Հունաստան)

Քարթուլի (Վրաստան)

«Բերդ» (Հայաստան)

Վալս (Ավստրիա)

Ֆլամենկո (Իսպանիա)

Տարանտելլա (Իտալիա)

Էնզելի (Հայաստան)

5

- Լսի՛ր և դիտի՛ր հատվածներ պարերից:
- Գրի՛ր, թե որ պարը քեզ ամենաշատը դուր եկավ:

### ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ինձ ոգևորեց _____

Ես երազեցի _____

Ինձ հաջողվեց _____

Պարով նույնպես կարող ես արտահայտել քո մտքերն ու հույզերը:

### 3.6.10. Անդրադարձ «Գիտե՞ս, որ...» խորագրին

Երեխաներն իմանում են, որ կա պարի միջազգային օր:

Նկարներում ներկայացված են 7 երկրի պարեր:

Նկարները դիտելուց հետո, ուսուցիչը QR-կոդի միջոցով ցուցադրում է նշված պարերի մասին մի գեղեցիկ տեսահոլովակ: Երեխաները լսում և դիտում են տեսահոլովակը, տեսնում են, թե որքան տարբեր են ժողովուրդների պարերը: Տեսնում են, թե տարբեր ժողովուրդներ ինչպես են պարի միջոցով արտահայտում իրենց հույզերն ու զգացմունքները:

**Ստեպ** - իռլանդական պար է, խմբապար է:

**Սիրտակի** - հունական խմբապար է:

**Քարթուլի**- վրացական պար է, պարում են երկուսով՝ տղա և աղջիկ:

**«Բերդ»** պար- հայկական խմբապար է, պարում է տղաների խումբը:

**Վալս** - ավստրիական զուգապար է, պարում են երկուսով՝ տղա և աղջիկ:

**Ֆլամենկո** - իսպանական մենապար կնոջ համար:

**Տարանտելլա** - իտալական խմբապար է:

**Էնզելի** - հայկական խմբապար է, պարում է կանանց խումբը:

**Առաջադրանք 5.**

- Լսի՛ր և դիտի՛ր հատվածներ պարերից:
- Գրի՛ր, թե որ պարը քեզ ամենաշատը դուր եկավ:

Երեխաները QR-կոդի միջոցով լսում են փոքրիկ հատվածներ ներկայացված պարերից, արտահայտում իրենց զգացածը, նշում, թե որ պարն իրենց ավելի շատ դուր եկավ:

### 3.6.11. Անդրադարձ և ամփոփում

Ուսուցիչը աշակերտների հետ անդրադարձ է կատարում դասի գլխագրում արտացոլված նպատակներին: Պարզում, թե այդ նպատակներ իրականացան, թե ոչ: Քննարկում են կատարած աշխատանքները:

Պարզում են, որ դասագրքի այս պատմությունը ցույց է տալիս, որ երազանքներ ունենալը անհրաժեշտ է մարդուն երջանիկ լինելու համար, սակայն բավարար չէ, եթե դրան չի հետևում համառ ու քրտնաջան աշխատանքը, նպատակին հասնելու անկոտրում ձգտումը:

### 3.6.12. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Ինձ ոգևորեց...

Ես երազեցի...

Ինձ հաջողվեց...

Նախադասությունների լրացման օրինակներ

Ինձ ոգևորեց այն, որ Լուսինեն իր նպատակին հասնելու համար պատրաստ էր շատ ու շատ աշխատել:

Ինձ ոգևորեց այն, որ Լուսինեի մայրիկը հասկացավ Լուսինեին:
Ինձ ոգևորեց այն, որ ես էլ կարող եմ շատ աշխատել ու հասնել իմ երազանքին:
Ես երազեցի պարուհի դառնալ:
Ես երազեցի, որ Լուսինեն հասնի իր նպատակին:
Ես երազեցի, որ խաղաղություն լինի:
Ինձ հաջողվեց անգիր սովորել «և-ի երգը»:
Ինձ հաջողվեց լուծել իմ սիրած ծաղիկների մասին խաչբառը:
Ինձ հաջողվեց բոլորից արագ ու ճիշտ արտասանել շուտասելուկը:

Ուսուցիչը դասի ավարտին աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացված նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները:

**3.6.13. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» գրառման շուրջ**

Երեխաները ամփոփման պատուհանիկում կարդում են, որ պարով նույնպես կարող են արտահայտել իրենց հույզերն ու զգացմունքները, ինչպես խոսքով, նկարչությամբ, երաժշտությամբ: Արտահայտում են իրենց կարծիքը:

## ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՀՈՒՅԶԵՐ

Նավապետ եմ, նավապետ,
Ծով չեմ թողել, կամ էլ՝ գետ,
Որտեղ ջուր կա՝ անցել եմ,
Ալիքները սանձել եմ:

Նավս, ճիշտ է, պստիկ է,
Բայց, լավ նայես, ճստիկ է,
Ի՞նչ մտածեմ՝ անում է,
Որտեղ ուզեմ՝ տանում է:

Մի օր մտանք խիտ անտառ,
Լողում էինք ծառից ծառ,
Ձեռքը պարզեց մի մեծ արջ,
Հայերեն էր խոսում վարժ:

Ասաց՝ Սևան կտանե՞ս,
Ձուկ բռնել եմ ուզում ես:
«Ինչ ասացի՞ր, արջ ախպեր,
Սևանում ձուկ չկա էլ»:

Ցոթգլխանի մի Վիշապ
Ծառի տակից ինձ ասաց.
«Մոտդ հեքիաթ չի՞ լինի,
Մեռա առանց հեքիաթի»:

«Պարո՛ն Վիշապ, դիմացի՛ր,
Հեքիաթներն են ցանուցիր.
Համակարգիչ, հեռախոս.
Քիչ ենք կարդում մենք այսօր»:

Նավս մտավ մի բզեզ.
«Գիրք կարդալ եմ ուզում ես»:
Մի խաղ տխուր մոտեցավ.
«Ինձ չեն խաղում,– ասաց նա:–
Կարոտել եմ բակին իմ,
Մանուկներին մտերիմ»:

Շատ շատերը մոտ եկան,
Նավս տեսան, հիացան,
Ասին՝ գրի՛ր մեր մասին,
Որ միշտ մնանք միասին:

## «ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու.

- Կհիշես քո սովորած բառերի ձիշտ գրությունը:
- Կտեսնես, թե ինչպես էին արտահայտում իրենց հույզերն ու զգացմունքները թեմատիկ շարքի հերոսները:
- Կհորինես նոր բառեր:

### Առաջադրանքներ

1

- Հիշի՛ր, թե որ դասից են մեջբերումները:
- Նկարները համապատասխանեցրո՛ւ մտքերին:

1. Գլխացավից ու ձանձրույթից ազատվելու համար մարդիկ շատ էին ուզում մի նոր բառ հորինել:

2. Նա զարմացավ, որ Մաշտոցն ուզում է իր համար էլ տառ ստեղծել, և համեստորեն գլխով արեց:

3. Ձրով լի տաշտ նկարեմ,
Ու մեջը ինձ նկարեմ:

4. Երբ կկանգնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին:

5. Հենց երաժշտություն եմ լսում, հանգիստ չեմ կարողանում մնալ, սիրտս թրթռում է, ուզում եմ պարել, ցույց տալ, թե ինչ եմ զգում:

### 3.7.1. Անդրադարձ գլխագրին

Երեխաները կարդում են գլխագրի կետերը, արտահայտում իրենց կարծիքը և ուսուցչի գլխավորությամբ քննարկում են կետերում արտահայտված նպատակները, կանխագուշակումներ անում որոշ կետերի դեպքում: Օրինակ, ինչպե՞ս են նոր բառեր հորինելու և ե՞րբ:

### 3.7.2. Առաջադրանքներ թեմայի ամփոփման վերաբերյալ

**Առաջադրանք 1.**

- Հիշի՛ր, թե որ դասից են մեջբերումները:
- Նկարները համապատասխանեցրո՛ւ մտքերին:

Այս առաջադրանքի միջոցով երեխաները վերհիշում են թեմայում ընդգրկված դասանյութերը, տեքստերի հերոսներին, նրանց խոսքերը, պարզում են, թե որ մեջբերումը որ տեքստից է: Նկարները փոքրիկ հուշումներ են առաջադրանքը ավելի դյուրին կերպով կատարելու համար: Մեջբերումները համարակալված են, որպեսզի ավելի հեշտ լինի աշխատելը:

1-ին մեջբերումը «Ես» պատմությունից է: Նկարների շարքում է ԵՍ բառը և, եթե երեխաները նույնիսկ չհիշեն, թե մեջբերումը որ դասանյութից է, ապա ԵՍ բառը կհուշի: Նույնը երկրորդ մեջբերման դեպքում. Այստեղ արդեն պարզ երևում է գաղտնավանկի Ը-ն, որ գլխարկը հանել ու ողջունում է իրեն դիտողներին: 3-րդ մեջբերման համար պատկերված է ներկապնակը: 4-րդ մեջբերումը երգելու մասին է, ուրեմն պիտի միանա սաղմոս ասող երգչին՝ կաքավին: Վերջին՝ 5-րդ մեջբերումն ինքնըստինքյան միանում է պարը ներկայացնող նկարին:

Այսպիսով, բոլոր դասանյութերը հիշվեցին: Եվ եզրակացությունն այն է, որ մարդիկ տարբեր միջոցներով կարող են արտահայտել իրենց հույզերն ու զգացմունքները՝ խոսքով, նկարչությամբ, երգով, պարով: Այսինքն՝ գլխագրի երկրորդ կետի նպատակը այս առաջադրանքով իրականացված է լիովին:

ԳՐԱԳԱՐԱԿ

ՈԶՆԻՆ ՈՒ ՓՈՒՉԻԿԸ

– Ես ուզում եմ փուչիկ գնել,
Ձեռքիս բռնել, ուրախ քայլել:
– Բայց փշերդ այնքան սուր են,
Որ ջանքերդ շատ իզուր են:

– Ես կգնեմ մի մե՜ծ գլխարկ,
Որ փշերս ծածկեմ հատ-հատ:–
Ասաց ոզնին, գնեց գլխարկ,
Դրեց գլխին, քայլեց հպարտ:

Բայց իր բնին դեռ չհասած,
Քամին փչեց, իր երգն ասաց,
Գլխարկն առավ, քշեց տարավ,
Ու փուչիկը փուչ-փուչ դառավ:

**2** Այս թեմայի հերոսներից յուրաքանչյուրն ի՞նչ միջոց է ընտրել մտքերն ու հույզերն արտահայտելու համար:

- Գրի՛ր բառազույգերով: Օրինակ՝ **հնչյուն – տառ:**
- Ո՞ր հերոսի արտահայտչամիջոցը քեզ ավելի շատ դուր եկավ:

| Հերոս | Միջոց |
|---|---|
| մարդիկ | տառ |
| բանաստեղծ | բառ |
| Լուսինե | երգ |
| հնչյուն | պար |
| կաքավիկ | նկարչություն |

**3** Դասարանում ընկերներիդ համար մնջախաղով ցո՛ւյց տուր, որ.

- ծիծաղում ես,
- զարմանում ես,
- ամաչում ես,
- տխուր ես,
- զայրացած ես,
- վախենում ես,
- սիրում ես,
- ուրախ ես:

**4** Օգտագործելով նույն պատկերը՝ **«Վարդանը, Ալվարդը, Վարդգեսը, Նվարդը մտան վարդանոց»** նախադասությունը ներկայացրո՛ւ նկարելուկի տեսքով:

**5** Վանդակներում գրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում: Ի՞նչ նկատեցիր:




**6** Նկարում պատկերված են գոյություն չունեցող կենդանիներ:

- Նկարի՛ր այդպիսի մի կենդանի:
- Անունների՛ դիր նրանց:





**Առաջադրանք 2.**

Այս թեմայի հերոսներից յուրաքանչյուրն ի՞նչ միջոց է ընտրել մտքերն ու հույզերն արտահայտելու համար:

• Գրի՛ր բառազույգերով: Օրինակ՝ հնչյուն – տառ:

• Ո՞ր հերոսի արտահայտչամիջոցը քեզ ավելի շատ դուր եկավ:

Այս առաջադրանքը նախորդ առաջադրանքի տրամաբանական շարունակությունն է:

| Հերոս | Միջոց |
|---|---|
| մարդիկ | տառ |
| բանաստեղծ | բառ |
| Լուսինե | երգ |
| հնչյուն | պար |
| կաքավիկ | նկարչություն |

Առաջին սյունակում ներկայացված են հերոսները, երկրորդում՝ այն միջոցները, որոնք նրանք օգտագործում են իրենց մտքերն ու հույզերը արտահայտելու համար:

Մարդիկ օգտագործում են բոլոր միջոցները՝ տառ, բառ, երգ, պար, նկարչություն:

Բանաստեղծը, ըստ դասանյութի, օգտագործում է նկարչությունը, սակայն, ընդհանրապես, նա ևս կարող է օգտագործել բոլոր միջոցները: Ըստ դասանյութի՝ Լուսինեն ուզում էր իր մտքերն ու հույզերն արտահայտել պարի միջոցով: Իսկ հնչյունը՝ տառի: Կաքավիկն էլ արտահայտվում էր երգի միջոցով:

Այս առաջադրանքը կարելի է օգտագործել ու մեկ անգամ ևս երեխաներին հնարավորություն ընձեռել, որ նրանք արտահայտվեն իրենց նպատակների ու ձգտումների մասին:

**Առաջադրանք 3.** Դասարանում ընկերներիդ համար մնջախաղով ցո՛ւյց տուր, որ.

- **ծիծաղում ես,**
- **զարմանում ես,**
- **ամաչում ես,**
- **տխուր ես,**
- **զայրացած ես,**
- **վախենում ես,**
- **սիրում ես,**
- **ուրախ ես:**

Առաջադրանքը կատարելիս երեխայի մեջ ձևավորվում են իր հույզերն ու մտքերը ժեստերի, դիմախաղի, մարմնի շարժումների միջոցով արտահայտելու կարողություններ:

**Առաջադրանք 4.** Օգտագործելով նույն պատկերը՝ «Վարդանը, Ալվարդը, Վարդգեսը, Նվարդը մտան վարդանոց» նախադասությունը ներկայացրո՛ւ նկարելուկի տեսքով:

Այս առաջադրանքը կնպաստի, որ երեխան կարողանա պարզ խորհրդանիշների միջոցով պատկերել իր ընթերցածը: Նա այստեղ պետք է բառերի մեջ **վարդ** տառակապակցության փոխարեն պարզապես նկարի վարդ: Կստացվի հետևյալ նկարելուկը.




### 3.7.3. Աշխատանք «Փոխակերպում» բառախաղի շուրջ

**Առաջադրանք 5**. Վանդակներում գրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում: Ի՞նչ նկատեցիր:




Այստեղ ներկայացված է փոխակերպում խաղը:

Այս բնույթի առաջադրանքներում տրված են սլաքներով իրար միացված բառաշարքեր: Ամեն անգամ բառի մեջ փոխելով մեկ տառ՝ պետք է ստանալ նոր բառ: Առաջադրանքները հեշտացնելու նպատակով երբեմն բոլոր քայլերն արդեն արված են լինում առաջադրանքում, մնում է մեկ քայլ, երբեմն բաց է թողնվում մեկ բառ կամ երկու բառ, երբեմն բառաշարքը ուղեկցվում է համապատասխան նկարներով: Այս խաղը նույնպես նպաստում է կարդալու, գրելու հմտությունների ամրապնդմանը, բառերը վերհիշելու, մտապահելու, մտքում տառերը փոխելու միջոցով նոր բառեր ստանալու, վերացարկելու կարողությունների ամրապնդմանը, բառապաշարի հարստացմանը: Բառի մեջ մեկ տառ փոխելով ուրիշ բառ ստանալը մեծ հրճվանք է պատճառում երեխաներին, մանավանդ երբ բոլոր վարժություններում ելակետային բառը և վերջին բառը իրար հետ կապված են որևէ հետաքրքիր առնչությամբ:

Հիշենք **մուկ**-ից **փիղ** ստանալը: Ուսուցիչը կարող է երեխաներին տալ որևէ բառ և առաջարկել, որ նրանք հերթով մեկ տառ փոխելով նոր բառ ստանան: Պետք է

խրախուսել ցանկացած նոր բառ ստանալը, այնուհետև բացատրել վերջնական բառն ստանալու ճիշտ ճանապարհը:

Այս առաջադրանքում հուշումները տրված են նկարների տեսքով:

Ստացվում է **հուր – սուր – սար – պար** բառաշղթան: Այսինքն՝ հուրը, կրակը պար է: Եթե հակառակ ուղղությամբ կարդանք բառաշղթան, կստացվի, որ պարը կրակ է, հուր է, կրակի նման բոցկլտուն է, շարժուն, սիրտը թրթռացնող:

**Առաջադրանք 6.** Նկարում պատկերված են գոյություն չունեցող կենդանիներ:

- Նկարի՛ր այդպիսի մի կենդանի:
- Անուններ դի՛ր նրանց:

Գլխագրի վերջին՝ «Կհորինես նոր բառեր» կետի նպատակը արտացոլված է այս առաջադրանքի մեջ: Երեխաները պետք է նկարեն գոյություն չունեցող մի կենդանի և արդեն ներկայացված կենդանիների ու դրա համար անուններ հորինեն: Առաջադրանքը կատակային բնույթ ունի, նպատակաուղղված է երեխաներին զվարթացնելու, երևակայությունը խթանելու, վերացարկելու կարողությունների զարգացմանը:

**ԿԵՏ**

Գրչիդ ծայրը հպես թղթին՝
Ի՞նչ կմնա թղթի վրա.
Փոքրի՜կ, փոքրի՜կ
Մեն մի հատիկ
Կետ կամ կետիկ,
Որ ձև չունի,
Չափում չունի,
Միայն իր կետ անունն ունի,
Վախենում է
Թացից, ջրից,
Ապրում է նա թղթի վրա,
Իսկ թե ով է, ով է նրա
Ընկերը մե՜ծ, անվանակից,
Որ չի ելնում ջրի միջից,
Ու խռով է կարծես մեզնից.
Ասա՝ ո՞վ է, ասա՝ ինչո՞ւ՝
Դա գիտես դու:

7 ○ Կարդա՛, վերհիշի՛ր «Աչքի առաջ» խորագրի բառերը:

Մարդիկ, դարձյալ, անընդհատ, աշխարհ, մինչև, վերջ, փորձել, բույն, վարդ, արև, բարև, հիանալ, թրթռալ, արթնանալ:

✧ Բառերը գրի՛ր աղյուսակի համապատասխան սյունակներում:

| Միավանկ | Երկվանկ | Եռավանկ |
|---|---|---|
| | | |

☼ Դո՛ւրս գրիր և պարունակող բառերը: Հաշվի՛ր այդ բառերի հնչյունների և տառերի քանակը:

8 Ինչ Նկարներում պատկերված հերոսներն ինչպե՞ս են արտահայտում իրենց սերը արևի նկատմամբ:
- Պատմի՛ր:
- Դո՞ւ ինչպես կներկայացնես. նկարի՛ր մի շնորհավորական բացիկ:

9 Հարցազրո՛ւյց վերցրու արևից: Կարդա՛ ընկերներիդ համար:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

54

### 3.7.4. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

**Առաջադրանք 7.** Գլխագրի առաջին կետը իրականացվում է այս առաջադրանքով: Երեխաները մեկ անգամ ևս կարդում են «Աչքի առաջ» խորագրի բոլոր բառերը, զանազան գործողություններ կատարում դրանց հետ, լրացնում աղյուսակը: Այդ բառերը տևական ժամանակ մնում են երեխաների տեսադաշտում և մտապատկերի մեջ: Այսինքն ամրապնդվում է դրանց ուղղագրությունը երեխաների հիշողության մեջ:

Առաջադրանքը «Դեպի վեր» բնույթի է;

○ Կետով երեխաները պետք է ուղղակի կարդան բառերը:

✧ Կետով պետք է բառերը մտովի վանկատեն և գրեն աղյուսակի համապատասխան սյունակներում:

| միավանկ | երկվանկ | եռավանկ |
|---|---|---|
| վերջ | մարդիկ | անընդհատ |
| բույն | դարձյալ | հիանալ |
| վարդ | աշխարհ | թրթռալ |
| | մինչև | արթնանալ |
| | փորձել | |
| | արև | |
| | բարև | |

✧ Կետով պետք է առանձնացվեն **և** պարունակող բառերը և հաշվվեն այդ բառերում հնչյունների ու տառերի քանակները:

մինչև - 5 տառ, 6 հնչյուն

արև - 3 տառ, 4 հնչյուն

բարև - 4 տառ, 5 հնչյուն

### 3.7.5. Աշխատանք նկարաշարի շուրջ

**Առաջադրանք 8.** Նկարներում պատկերված հերոսներն ինչպե՞ս են արտահայտում իրենց սերը արևի նկատմամբ:

- Պատմի՛ր:
- Դո՞ւ ինչպես կներկայացնես. նկարի՛ր մի շնորհավորական բացիկ:

Այս առաջադրանքը յուրատեսակ ամփոփում է հույզերն ու զգացմունքները արտահայտելու վերաբերյալ ներկայացված միջոցների մասին և լայն հնարավորություն է ընձեռում աշակերտներին արտահայտվելու այդ մասին, երևակայելու և իրենց մտքերը ներկայացնելու համար:

Առաջին նկարում տղան արևի նկատմամբ իր վերաբերմունքն ու սերը արտահայտում է **նկարելուկի** միջոցով՝ **բարև, արև**: Երկրորդ նկարում աղջնակը իր սերն արտահայտում է **պարելով**: Երրորդում՝ թռչնակը իր **երգն է** ձոնում արևին: Չորրորդում՝ երգիչ տղան է իր սերն արտահայտում **երգելով**: Հինգերորդում՝ փոքրիկ քանդակագործը **քանդակով է** իր սերն արտահայտում: Վեցերորդ նկարում պատկերված է արևածաղկի սերը, որը անընդհատ **հետևում է արևի ընթացքին** ու միշտ դեմքը պահում է դեպի արևը:

### 3.7.6. Հարցազրույց Արևի հետ

Դասի ավարտին երեխաները լրացնում են անավարտ նախադասությունները, արտահայտում իրենց կարծիքը, մասնակցում ուսուցչի կազմակերպած քննարկմանը:

**Առաջադրանք 9.** Հարցազրույց վերցրու արևից: Կարդա՛ ընկերներիդ համար:

Երեխաների մեջ հարցեր տալու ունակություններ ձևավորելու համար նախատեսված առաջադրանք է: Կարևոր չէ՝ զրուցակիցը արևն է, թե որևէ երևակայական հերոս: Երեխաները բոլորին էլ հարցեր ունեն տալու:

Հարցազրույցի օրինակ.

- Բարև՛, սիրելի Արև:
- Բարև՛:
- Կարելի՞ է մի քանի հարց տալ:
- Բայց ես շտապում եմ:
- Ոչի՛նչ, ես քիչ հարցեր կտամ:
- Բայց ինձ չնայես, վտանգավոր է:
- Գիտեմ: Ուզում եմ հարցնել, Դուք երեխաներ ունե՞ք:
- Իհարկե՛, մոլորակները իմ երեխաներն են: Երկիրը, որի վրա դու ապրում ես, իմ երրորդ երեխան է:
- Իսկ երեխաներդ դպրոց գնո՞ւմ են:
- Առանց դպրոցի ոչ մի կերպ հնարավոր չէ: Բոլորն էլ պարտադիր գնում են և լավ են սովորում: Թե չէ ամեն ինչ կխառնվեր իրար:
- Մենք էլ Ձեր թոռնիկնե՞րն ենք:
- Այո, ես ձեզ շատ եմ սիրում: Ամեն օր վառվելով՝ լույս ու ջերմություն եմ բերում ձեզ համար:
- Մենք էլ Ձեզ ենք շատ սիրում: Շնորհակալություն հարցազրույցի համար:
- Ապրե՛ս:

### 3.7.7. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)

Երեխաները լրացնում են անավարտ նախադասությունները, կարդում ընկերոջ համար:

Ես վերհիշեցի _____

Ես սովորեցի _____

Ինձ դուր եկավ _____

## *Գլուխ 4.* «ՈՐՏԵՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

## ԹԵՄԱՅԻ ԴԱՍԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

### 4.1. Աշխատանք «Որտեղ ենք մենք ժամանակի եվ տարածության մեջ» թեմայի սկզբնանկարի շուրջ




55

Նկարը ստեղծվել է ըստ «Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» թեմայի դասանյութերի: Փոքրիկ հերոսը մասնակից է Հայկի և Բելի մենամարտին: Նա Սասունցի Դավթի հետ Քուռկիկ Ջալալու գավակին նստած սլանում է թշնամու դեմ, նստած է քարագործ վարպետի կողքին, որը արձանագրություն է գրում Էրեբունի-Երևան քաղաքի հիմնադրման մասին, Մեսրոպ Մաշտոցի կողքին է, երբ նա Հայոց այբուբենն է ստեղծում, Հովհաննես Թումանյանի հետ շրջում է Հայաստանում, պապիկի հետ զբոսնում է այսօրվա Երևանում:

Սկզբնանկարը յուրօրինակ մուտք է, որով փոքրիկ հերոսը կարծես ժամանակի մեքենայով շրջում է ժամանակի ու տարածության մեջ, շփվում անցյալի հերոսների հետ, մասնակցում տեղի ունեցող իրադարձություններին և վերադառնում նորօրյա Հայաստան:

Երեխաները ուշադիր դիտում են նկարները, ստեղծում իրենց վարկածները նկարաշարի դրվագների վերաբերյալ: Սկզբնանկարի դրվագներին ծանոթանալուց հետո սկսվում է «Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը» դասի ուսումնասիրությունը:

## 4.2. ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏՆ ՈՒ ՓՈՔՐԻԿ ԱՐՄԵՆԸ

### 4.2.1. «Հրաշքների դաշտ» խաղը

*Խաղի նպատակն* է խթանել աշակերտների հետաքրքրությունն ու ուշադրությունը, կապ ստեղծել ուսուցանվող նյութի հետ:

*Խաղի ընթացքը*: Դասագրքերը փակ են: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին խաղալ «Հրաշքների դաշտ» խաղը:

Նախապես կարելի է գրատախտակին գծել կամ էկրանին ցուցադրել կամ փակցնել մեծադիր այս պատկերը.

Թաքնված երեքտառանի բառի (հայ) յուրաքանչյուր տառը գուշակելու համար ուսուցիչը առաջադրում է մեկ տառհանելուկ:

**1. Հեքիաթները մեր բոլոր**
**Սկսվում են նրանով,**
**Նրան վերջում կտեսնես,**
**Թե ճանապարհ դու ընկնես:**

**2. Մեր բակի մեջ շատ սիրուն**
**Նա պառկած է մեջտեղում,**
**Հենց որ այգի ենք մտնում,**
**Առջևից է նա գնում:**

**3. Ես կամ Հայկի, հայի մեջ,**
**Իմ Հայաստան աշխարհում:**
**Այսքան եղբայր, քույր ունեմ,**
**Սուրբ մաշտոցյան բույր ունեմ:**

Հանելուկները զուշակելուց հետո յուրաքանչյուր հանելուկի պատասխանը գրվում է համապատասխան վանդակում (տառը փակցնելով կամ գրելով) և ստացվում է «հայ» բառը: Ուսուցիչը բացատրում է, որ «հայ» բառը ստանալը ամենևին էլ պատահական չէր: Դա կերևա նոր դասն ուսումնասիրելիս:

Այս դասին դու.
- Կձանաչես Հայկ Նահապետին:
- Կիմանաս, թե ինչու է մեր երկիրը կոչվում Հայաստան:
- Կկազմես հակառակ իմաստով բառերի զույգեր:
- Կսովորես հարցեր տալ տեքստի շուրջ:

## ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏՆ ՈՒ ՓՈՔՐԻԿ ԱՐՄԵՆԸ

Վաչագան Ա. Սարգսյան

vachagan.am

**Երբևէ մտածե՞լ ես, թե ինչու ենք մեզ հայ անվանում, մեր երկիրը՝ Հայաստան, և մեր լեզուն՝ հայերեն:**

– Պապի՛կ, մեզ ինչո՞ւ ենք հայ ասում,– դպրոցից տուն մտնելով՝ հանկարծ հարցրեց Արմենը:

– Քեզ պատմել եմ, չե՞ս հիշում: Մենք մեզ հայ ենք անվանում Հայկ Նահապետի անունով:

– Ո՞վ էր նա:

– Հայկ Նահապետը ազատասեր, իմաստուն առաջնորդ էր: Նա քաջ էր, համարձակ և մեծ ուժի տեր:

– Բա հիմա որտե՞ղ է նա,– հարցրեց Արմենը:

– Երկնքում:

– Ինչպե՞ս,– զարմացավ Արմենը:

– Երբ գյուղ գնանք, ու երկինքը պարզ լինի, ցույց կտամ նրա աստղային տեսքը: Բայց մինչև երկինք գնալը նա մի մեծ գործ է արել երկրի վրա՝ հաղթել է Բելին:

– Բելն ո՞վ էր:

– Բելը մի հսկա և գոռոզ բռնակալ* էր, ուզում էր ստրկացնել* Հայկին և նրա որդիներին: Սակայն Հայկը հեռացավ նրանից, եկավ և Արարատ սարի փեշերի մոտ բնակություն հաստատեց:

– Բելը չհետապնդե՞ց Հայկին:

* **Բռնակալ** – դաժան իշխան, թագավոր:
* **Ստրկացնել** – իրեն ենթարկել, հնազանդեցնել:

### 4.2.2. Աշխատանք դասանյութի գլխագրի և մուտքի պատուհանիկի շուրջ

Ուսուցչի հրահանգով աշակերտները բացում են դասագիրքը, լուռ կարդում են դասի գլխագիրը: Այնուհետև ուսուցիչը կամ լավ ընթերցող աշակերտներից մեկն է բարձրաձայն կարդում դրանք: Քննարկում են, թե ինչ պետք է ուսումնասիրեն, ինչ նպատակներ են դրված իրենց առջև: Բացահայտում են, թե ով ինչ գիտի այդ մասին, արտահայտում իրենց կարծիքներն ու վերաբերմունքը գլխագրի կետերի մասին: Այնուհետև կարդում են մուտքի պատուհանիկի գրառումը:

**Երբևէ մտածե՞լ ես, թե ինչու ենք մեզ հայ անվանում, մեր երկիրը՝ Հայաստան, և մեր լեզուն՝ հայերեն:**

Ամփոփելով քննարկումը՝ ուսուցիչը առաջարկում է կարդալ տեքստը և տեսնել, թե փոքրիկ Արմենին ինչ է հետաքրքրում:

### 4.2.3. Տեքստի բարձրաձայն ընթերցում

Տեքստն ուսուցիչն ընթերցում է հատվածներով՝ ընթացքում բացատրելով նորաբանոթ բառերը:

**Բռնակալ**- դաժան իշխան, թագավոր

**Ստրկացնել** - իրեն ենթարկել, հնազանդեցնել:

**Հատված 1.** (Պատմվածքի սկզբից մինչև «հաղթել է Բելին» բառակապակցությունը)

### 4.2.4. Ուղղորդող հարցեր՝ հատվածի բովանդակությունը հասկանալու համար

- Այս հատվածում ի՞նչ բառերով է բնութագրվում Հայկը: (Ազատասեր, իմաստուն առաջնորդ, քաջ, համարձակ, մեծ ուժի տեր)
- Ի՞նչ մեծ գործ էր արել Հայկը: (Հաղթել էր Բելին)
- Ի՞նչ եք հասկանում «աստղային տեսք» ասելով: (Ուսուցիչը համառոտ կարող է խոսել Հայկի համաստեղության մասին՝ աշակերտների ուշադրությունը հրավիրելով նկարազարդման վրա)

**ՀԵՐՈՍ ՀԱՅԿԸ**

Հայկը՝ հեքիաթի հերոս,
Հրեշներին հաղթում է,
Հրեշատան հիմքերը
Հրաշալի հարթում է:

Հայկը հագնում է
Հագուստները հուր,
Հեծնում հովատակը
Հրաշունչ,
Հասնում է հրեշին
Հարվածում, հանում է հոգին:

– Ապրե՛ս, իմ խելոք թոռնիկ: Ճիշտ հարց ես տալիս: Բելը հավաքում է իր մեծաքանակ զորքը և գալիս Հայկի վրա պատերազմի:

Հայկն իր փոքրաթիվ մարդկանցով դուրս է գալիս Բելի անթիվ-անհամար զորքի դեմ:

Նա իր երեքթևանի նետով խոցում է զրահավորված Բելին:



Այնքան հզոր էր հարվածը, որ նետը ծակում-անցնում է զրահավորված Բելին ու խրվում հողի մեջ:

Բելի զորքը սարսափահար փախչում է:

Այդ օրվանից Հայկի անունով մեր երկիրը կոչվում է Հայաստան, իսկ մենք՝ հայ:

– Պապի՛կ, ի՞նչ քաջ է եղել Հայկը: Իսկ ես նույնիսկ մեր կողքի բակի շնիկից եմ վախենում: Բա ես հա՞յ եմ:

– Ոչի՛նչ, թոռնի՛կս: Դու քաջ ու ազնիվ ես Հայկի նման, հայի նման, իսկ երբ մեծանաս, նրա նման անվախ կդառնաս:

## Հարցեր

**1.** Ի՞նչ էր ուզում իմանալ Արմենը:

**2.** Բնագրից ընտրի՛ր և կարդա՛ հետևյալ հարցերի պատասխանները.

- Ո՞վ էր Հայկը:
- Ո՞վ էր Բելը:
- Ինչո՞ւ Հայկը հեռացավ Բելից:

**3.** Բելն ինչո՞ւ հարձակվեց Հայկի երկրի վրա:

**4.** Բնագրից կարդա՛ նկարագրդմանը համապատասխան հատվածը:

**5.** Ի՞նչ իմացավ Արմենը:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

առաջնորդ
հաղթել
փախչել

57

**Հատված 2.** («Բելն ո՞վ էր» բառակապակցությունից մինչև վերջ)

**4.2.5. Ուղղորդող հարցեր՝ հատվածի բովանդակությունը հասկանալու համար**

- Այս հատվածում ի՞նչ բառերով է բնութագրվում Բելը: (Հսկա բռնակալ, գոռոզ)

- Բելը ինչու՞ հավաքեց մեծաքանակ զորքը։ (Հավաքեց մեծաքանակ զորքը, որ պատերազմի Հայկի դեմ)

- Ի՞նչ զենքեր են օգտագործվել այդ ճակատամարտի ժամանակ։ (Երեքթևանի նետ, աղեղ, գուրզ, զրահ)

- Ի՞նչ հատկանիշներով է Արմենը նման Հայկին, հային։ (Արմենը խելացի ու ազնիվ է Հայկի և հայի նման, իսկ երբ մեծանա, նրա նման քաջ կդառնա)

Այնուհետև QR-կոդի միջոցով ուսուցիչը ներկայացնում է պատմության բեմականացումը՝ տեսահոլովակով։

### 4.2.6. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

- Ի՞նչ էր հետաքրքրում Արմենին։ (Ինչու՞ են մեզ հայ ասում։ Ո՞վ էր Հայկը)

- Բնագրից ընտրի՛ր և կարդա՛ հետևյալ հարցերի պատասխանները.

ա. Ո՞վ էր Հայկը : (Հայկ Նահապետը ազատասեր և իմաստուն առաջնորդ էր։ Նա քաջ էր, համարձակ ու մեծ ուժի տեր)

բ. Ինչո՞ւ Հայկը հեռացավ Բելից։ (Բելը ուզում էր ստրկացնել Հայկին և նրա որդիներին)

գ. Ո՞վ էր Բելը։ (Բելը հսկա բռնակալ էր։ Բելը մի հսկա էր, սակայն գոռոզ էր և վախկոտ)

- Ինչո՞ւ Բելը հարձակվեց Հայկի երկրի վրա։ (Բելը ուզում էր ստրկացնել Հայկին և նրա որդիներին)

Տեքստի ո՞ր տողերին է վերաբերում դասագրքի նկարազարդումը, ընտրի՛ր և կարդա՛ այդ տողերը։ (Երբ գյուղ գնանք, ու երկինքը պարզ լինի, ցույց կտամ նրա աստղային տեսքը)

- Ի՞նչ է պատկերված նկարազարդման մեջ, որ չկա տեքստում։ (Զենքեր՝ Բելի ձեռքի գուրզը, Բելի զինվորների ձեռքի նիզակները, Հայկի նետ ու աղեղը)

- Նկարագրի՛ր Հայկի և Բելի ճակատամարտը։ (Հայկը իր երեքթևանի նետով խոցում է զրահավորված Բելին։ Այնքան հզոր էր Հայկի հարվածը, որ նետը ծակումանցնում է զրահավորված Բելին ու խրվում հողի մեջ։ Նրա զորքը սարսափահար փախչում է)

- Ի՞նչ իմացավ Արմենը։ (Արմենը իմացավ, որ այդ կռվից հետո Հայկի անունով մեր երկիրը կոչվեց Հայաստան, մեր լեզուն՝ հայերեն, իսկ մենք՝ հայ)

- Ի՞նչ ես զգում դու՝ որպես հայ։ (Հպարտություն, արժանապատվություն, սեր հայրենիքի հանդեպ, ուրախություն, երջանկություն)

- Ի՞նչ կարող ես անել քեզ, քո շրջապատին, քո հայրենիքին օգտակար լինելու համար։ (Լավ սովորել, ճշմարտախոս, արդարացի և պարտաճանաչ լինել, ուժեղ լինել, անվախ և քաջ)

## 4.2.7. Աշխատանք լեզվական առաջադրանքների շուրջ

### Առաջադրանքներ

**1** Ինչպիսի՞ն էր Հայկը, ինչպիսի՞ն՝ Բելը:
Տրված բառերը վերագրի՛ր Հայկին ու Բելին.
**քաջ, հսկա, բռնակալ, հպարտ, գոռոզ, իմաստուն, ազատասեր:**

**2** **ԲԱՌԱՂՅՈՒՍԱԿ**

Աղյուսակից գտի՛ր հակառակ իմաստ ունեցող վեց զույգ բառեր և գրի՛ր:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| թ | ու | յ | լ | ք | ա | ջ |
| ճ | գ | ի | տ | ու | ն | վ |
| ու | ր | ա | խ | ճ | գ | ա |
| փ | ա | փ | ու | կ | ե | խ |
| ա | մ | ու | ր | ո | տ | կ |
| լ | ու | յ | ս | շ | ճ | ո |
| ճ | թ | ճ | ճ | տ | ճ | տ |

**3** Բառերից հանվել են ձայնավորները:
- Վերականգնի՛ր բառերը և գրի՛ր. **ոջնրդ, հղթլ, փխչլ:**
- Այդ բառերով կազմի՛ր բառակապակցություններ:

**4** ○ Գրի՛ր առարկաների ընդհանուր անվանումը.

- **Աժդահակ, Հատիս, Արագած, Արա, Մասիս**
- **Հրազդան, Արաքս, Քասաղ, Որոտան, Արփա**

✧ Թվարկիր առարկաներ, որոնց ընդհանուր անվանումն է.

- **Միրգ – ...,**
- **Բանջարեղեն – ...:**

☼ Դու էլ ստեղծի՛ր նման շարքեր:

**Գիտե՞ս, որ...**

Հայկի որդու անունը եղել է **Արամանյակ**, որի կրճատ ձևից էլ առաջացել է **Արմեն** անունը: Օտարները Հայաստանը կոչում են **Արմենիա**, այսինքն՝ արմենների երկիր:

**Առաջադրանք 1.** Ինչպիսի՞ն էր Հայկը, ինչպիսի՞ն՝ Բելը: Տրված բառերը վերագրի՛ր Բելին ու Հայկին. *քաջ, հսկա, վախկոտ, բռնակալ, հպարտ, գոռոզ, իմաստուն, ազատասեր:*

Առաջադրանքը կարելի է կատարել Վենի դիագրամի միջոցով: Կարելի է գրատախտակին գծել Վենի դիագրամը (կա՛մ փակցնել պատրաստի պաստառը, կա՛մ կիրառել էլեկտրոնային տարբերակը):

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:



Աշակերտները կպչուն թղթերի վրա բառերը գրելուց հետո փակցնում են համապատասխան շրջանում:

| | | |
|---|---|---|
| Հայկ | | Բել |
| քաջ | հսկա | |
| ազատասեր | ուժեղ | բռնակալ |
| հպարտ | | գոռոզ |
| իմաստուն | | |

### 4.2.8. Աշխատանք հակառակ իմաստ ունեցող բառերի շուրջ

**Առաջադրանք 2.** Բառաղյուսակ

Աղյուսակից գտի՛ր հակառակ իմաստ ունեցող վեց բառազույգ և գրի՛ր:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| թ | ու | յ | լ | ք | ա | ջ |
| ճ | գ | ի | տ | ու | ն | վ |
| ու | ր | ա | խ | ճ | գ | ա |
| փ | ա | փ | ու | կ | ե | խ |
| ա | մ | ու | ր | ո | տ | կ |
| լ | ու | յ | ս | շ | ճ | ո |
| ճ | թ | ճ | ճ | տ | ճ | տ |

Պետք է երեխաներին հիշեցնել, որ բառաղյուսակում բառերը կարդացվում են վերևից ներքև, կամ ձախից աջ: Գույնով առանձնացված է մեկ օրինակ:

Ստացվում են հետևյալ բառազույգերը.

*թույլ - ամուր*

*քաջ - վախկոտ*

*ուրախ-տխուր*
*փափուկ-կոշտ*
*լույս- մութ*
*գիտուն- անգետ*

### 4.2.9. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

**Առաջադրանք 3.**

Բառերից հանվել են ձայնավորները:

- Վերականգնի՛ր բառերը և գրի՛ր. ռջնրդ, հղթլ, փխչլ:
- Այդ բառերով կազմի՛ր բառակապակցություններ:

Երեխաները պետք է վերականգնեն «Աչքի առաջ» խորագրի բառերը՝ **առաջնորդ, հաղթել, փախչել:**

Եթե դժվարանան՝ կարելի է հուշել, որ նրանք օգտվեն «Աչքի առաջ» խորագրից:

Այնուհետև բառատետրում կազմում են բառակապակցություններ:

**առաջնորդ** – քաջ առաջնորդ, երիտասարդ առաջնորդ, առաջնորդի խոսք

**հաղթել** – հաղթել մարտում, արագորեն հաղթել, անընդհատ հաղթել

**փախչել** – փախչել հեռու, անմիջապես փախչել, կռվից փախչել

### 4.2.10. Աշխատանք ընդհանուր անունը գտնելու վերաբերյալ

**Առաջադրանք 4.** Այս առաջադրանքով պահանջվում է մեկ ընդհանրական բառով ներկայացնել տվյալ բառաշարքով արտահայտված առարկաները կամ երևույթները: Ընդհանուր անունը գտնելու վերաբերյալ առաջադրանքները կատարելու համար երեխան պետք է ըստ առարկաների էական հատկանիշների մտովի միավորի դրանք որևէ հասկացության մեջ:

Օրինակ՝ եթե նկարված են **առյուծ, գայլ, վագր, բորենի, աղվես,** ապա երեխաները պետք է մեկ բառով ասեն, թե ինչեր են նկարված՝ **գիշատիչներ:**

○ Գրի՛ր առարկաների ընդհանուր անվանումը՝.

1. Աժդահակ, Հատիս, Արագած, Արա, Մասիս - **սար**
2. Հրազդան, Արաքս, Քասաղ, Որոտան, Արփա – **գետ**

✧ Թվարկի՛ր առարկաներ, որոնց ընդհանուր անվանումն է.

1. **Միրգ** - ( տանձ, սալոր, ծիրան, խնձոր, խաղող, դեղձ, .....)
2. **Բանջարեղեն** –( կարտոֆիլ, գազար, կաղամբ, սոխ, սխտոր, ճակնդեղ, …)

✵ Դո՛ւ էլ ստեղծիր նման շարքեր:

Օրինակ՝ **կահույք** – պահարան, բազմոց, սեղան, աթոռ, բազկաթոռ, մահճակալ, զարդասեղան, և այլն:

### 4.2.11. Աշխատանք «Գիտե՞ս, որ…» խորագրի նյութի շուրջ

Հայկի որդու անունը եղել է Արամանյակ, որի կրճատ ձևից էլ առաջացել է Արմեն անունը: Օտարները Հայաստանը կոչում են Արմենիա, այսինքն՝ արմենների երկիր:

Աշակերտները կարդում են նյութը և նշում, թե ինչ գիտեին մինչև նյութը կարդալը, ինչ իմացան կարդալուց հետո:

**Արմեն** անվան ծագման վերաբերյալ կան տարբեր վարկածներ: Սա այդ վարկածներից մեկն է, որը հիշատակվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ:

5 ՍՈՎՈՐԻՐ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

**Պապիկի և Արմենի զրույցը**

• Կարդա՛ պապիկի պատասխանները և մտածի՛ր, թե ինչ հարցեր է տվել Արմենը:

– Գիշերային երկնքում կարելի է տեսնել պայծառ աստղերի խմբեր:
– Դրանք տարբեր պատկերներ են հիշեցնում՝ առյուծ, խեցգետին, կարապ, գայլ, կշեռք և այլն:
– Աստղերի այդպիսի խմբերն անվանում են համաստեղություններ:
– Այդ համաստեղություններից մեկը հույներն անվանել են Օրիոն:
– Հայերն այդ նույն համաստեղությունն անվանել են Հայկ:
– Հայկի համաստեղությունն առավել պայծառ է երևում նոյեմբեր–հունվար ամիսներին:

• Լրացրո՛ւ աղյուսակն ըստ նմուշի:

| Արմենի հարցերը | Պապիկի պատասխանները |
|---|---|
| – Ի՞նչ կարելի է տեսնել գիշերային երկնքում: | – Գիշերային երկնքում կարելի է տեսնել պայծառ աստղերի խմբեր: |
| | |

6 Արտագրի՛ր քառատողը: Ի՞նչ նկատեցիր:

Հայկը հուր է, հրեղեն,
Հայկը հող է, հողեղեն,
Հայկը՝ հերոս հաղթական,
Հայկը՝ հրաշք հայկական:

7 Հետաքրքրվի՛ր և իմացի՛ր, թե որտեղ է գտնվում Հայկի արձանը: Ո՞վ է արձանի հեղինակը:

59

### 4.2.12. Աշխատանք «Սովորի՛ր հարցեր տալ» առաջադրանքի շուրջ

**Առաջադրանք 5.**

**Պապիկի և Արմենի զրույցը**

**Կարդա՛ պապիկի պատասխանները և մտածի՛ր, թե ինչ հարցեր է տվել Արմենը:**

- Գիշերային երկնքում կարելի է տեսնել պայծառ աստղերի խմբեր:
- Դրանք տարբեր պատկերներ են հիշեցնում՝ առյուծ, խեցգետին, կարապ, գայլ, կշեռք և այլն:
- Աստղերի այդպիսի խմբերն անվանում են **համաստեղություն:**
- Այդ համաստեղություններից մեկը հույներն անվանել են Օրիոն:
- Հայերն այդ նույն համաստեղությունն անվանել են Հայկ:
- Հայկի համաստեղությունն առավել պայծառ է երևում նոյեմբեր – հունվար ամիսներին:

Կարելի է առաջադրանքը կատարել խմբային աշխատանքի միջոցով: Դասարանը պետք է բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին տալ տեքստի նախադասություններից 1-2-ը՝ թղթե շերտիկների վրա գրված: Աշակերտները կարդում են նախադասությունը, մտածում են հարցը, գրում են շերտիկի վրա: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, շերտիկների օգնությամբ ստանում են առաջադրանքի ամբողջական պատկերը՝

| **Արմենի հարցերը** | **Պապիկի պատասխանները** |
|---|---|
| Ի՞նչ կարելի է տեսնել գիշերային երկնքում: | Գիշերային երկնքում կարելի է տեսնել պայծառ աստղերի խմբեր: |
| Ի՞նչ պատկերներ են դրանք հիշեցնում: | Դրանք տարբեր պատկերներ են հիշեցնում՝ առյուծ, խեցգետին, կարապ, գայլ, կշեռք և այլն: |
| Ի՞նչ են անվանում աստղերի այդպիսի խմբերը: | Աստղերի այդպիսի խմբերն անվանում են **համաստեղություն:** |
| Ի՞նչ են անվանել հույներն այդ համաստեղություններից մեկը: | Այդ համաստեղություններից մեկը հույներն անվանել են Օրիոն: |
| Ի՞նչ են անվանել հայերն այդ նույն համաստեղությունը: | Հայերն այդ նույն համաստեղությունն անվանել են Հայկ: |
| Ե՞րբ է Հայկի համաստեղությունն առավել պայծառ երևում երկնքում: | Հայկի համաստեղությունն առավել պայծառ է երևում նոյեմբեր – հունվար ամիսներին: |

**Առաջադրանք 6.**

**Արտագրի՛ր քառատողը: Ի՞նչ նկատեցիր:**

*Հայկը հուր է, հրեղեն,*
*Հայկը հող է, հողեղեն,*

*Հայկը՝ հերոս հաղթական,*
*Հայկը՝ հրաշք հայկական։*

Երեխաները նկատում են, որ քառատողի բոլոր բառերն սկսվում են **Հ** տառով։ Կարելի է բացատրել **հրեղեն** և **հողեղեն** բառերը՝ հրից ծնված և հողից ծնված։

**Առաջադրանք 7.** Հետաքրքրվի՛ր և իմացի՛ր, թե որտեղ է գտնվում Հայկի արձանը։ Ո՞վ է արձանի հեղինակը։

Արձանը գտնվում է Երևանում, Նոր Նորքի զանգվածում, Գայի պողոտայի մոտ։ Արձանի հեղինակն է տաղանդավոր քանդակագործ Կառլեն Նուրիջանյանը։

## ԳՐԱԳԱՐԱԿ

### ՀԱՅԸ

Սիսին նստած մի Հ տառ,
Իսկ Մասիսին՝ մի Յ տառ,
Խորհում էին անդադար՝
Ինչպես դառնան մի լավ բառ։

Բայց ինչպես էլ կանգնեցին,
Բառ չստացվեց, տխրեցին։
– Մ՛,– ծոր տվեց ՀՈ տառը,–
Իջնենք մոտիկ անտառը,
Անտառի մեջ արևոտ
Ա-ն է ապրում առաջնորդ.
Ի՞նչ կասի մեզ սրտամոտ։

Յ-ն աջ կողմից մոտեցավ,
Հ-ն ձախ կողմից մոտեցավ,
Ու երբ հասան Ա տառին,
ՀԱՅ-ը ծնվեց այդ պահին։
Ծնվեց, ապրեց, ծովացավ,
Հայերենով զորացավ,
Կերտեց անմահ Հայաստան՝
Հոգու տունը հայության։

**8** Օգտվելով նկարներից՝ լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս քո ամենասիրելի բառերից մեկը:



Զորավար Անդրանիկ



Վիկտոր Համբարձումյան

Հայկ Նահապետ

Սասունցի Դավիթ

Մեսրոպ Մաշտոց

Կոմիտաս

Հովհաննես Թումանյան

Վահագն Վիշապաքաղ

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Դու իմացար, թե որտեղից ենք մենք գալիս, հասկացար, թե ինչու ենք մեզ հայ անվանում, մեր երկիրը՝ Հայաստան, մեր լեզուն՝ հայերեն:

60

### 4.2.13. Խաչբառի լրացում

**Առաջադրանք 8.** Օգտվելով նկարներից՝ լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս քո ամենասիրելի բառերից մեկը:

Համարակալումների և նկարատակերի գրառումների օգնությամբ համապատասխան նկարների անվանումներով լրացնելով խաչբառը՝ ընդգծված ուղղահայաց սյունակում երեխաները կարդում են **Հայաստան** բառը:

### 4.2.14. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

**Ես հասկացա----------**
**Ես սովորեցի----------**
**Ինձ հետաքրքրեց----------**
**Ես զգացի----------**

Դասի ավարտին ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներին հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, սովորած նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները: Ինչպես նաև համեմատելու գլխագրի նպատակները և ստացված արդյունքները:

Որպես ամփոփում երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկի գրառումը: **Դու իմացար՝ որտեղից ենք մենք գալիս, հասկացար, թե ինչու ենք մեզ հայ անվանում, մեր երկիրը՝ Հայաստան, մեր լեզուն՝ հայերեն:**

Կարծիքներ են փոխանակում և ուսուցչի ուղղորդմամբ կատարում քննարկում:

## 4.3. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

### 4.3.1. «Գտի՛ր զույգը» խաղը

Դասագրքերը փակ են: Ուսուցիչը գրատախտակին գրում է ***Սասունցի, Մսրա, Հայկ, Նահապետ, Դավիթ, Թուր, Ջալալի, Կեծակի, Քուռկիկ, Մելիք*** բառերը: Կարելի է նաև գրել առանձին թղթերի վրա և ամրացնել գրատախտակին: Այնուհետև հանձնարարում է աշակերտներին, որ նրանք կարդան բառերը և կազմեն բառազույգեր: Երեխաներն ազատ են բառազույգեր կազմելիս, ուսուցիչը չի ուղղորդում, մեկնաբանություններ չի անում: Ստացված բառազույգերը մնում են գրատախտակին մինչև տեքստի բարձրաձայն ընթերցման ավարտը:

**ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ՄԻ ՔԻՉ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ ԵՆՔ**

Փոքր թե մեծ՝ Դավթի հետ ենք,
Առու-առվակ՝ հզոր գետ ենք,
Լա՛վ սովորիր, ուժեղացի՛ր,
Դավթի նման հերո՛ս դարձիր:

Այս դասին դու.

• Խոսքում կտարբերես առարկա ցույց տվող բառերը:

• Կիմանաս, թե ով է Սասունցի Դավիթը:

• Կպատմես Դավթի սխրագործությունների մասին:

• Կհետևես Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի մենամարտին:

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

Վաչագան Ա. Սարգսյան

**Դու կծանոթանաս մի հերոսի, որը կզարմացնի քեզ: Նա հազարավոր տարիներ առաջ պայքարել է հայրենիքի թշնամիների դեմ, այսօր էլ է պայքարում և վաղը նույնպես պայքարելու է:**



Մսրա Մելիքը սարի չափ մի հսկա էր: Նա անթիվ-անհամար զորք ուներ: Մի օր կանչում է իր զորապետերին ու ասում.

– Հավաքե՛ք իմ ամբողջ զորքը. Սասունցի Դավթի վրա կռիվ եմ գնում:

Ու զորքն առած՝ գալիս է դեպի Հայաստան:

Զորքն այնքան մեծ է լինում, որ գետերի ջուրը խմելով ցամաքեցնում է:

Լուրը գալիս հասնում է Դավթին: Դավիթը վերցնում է Թուր Կեծակին, հեծնում է իր Քուռկիկ Ջալալի հրեղեն ձին: Գնում է Մելիքի դեմ կռվի:

Մսրա Մելիքն ասում է.

– Լա՛վ, կռվենք, բայց առաջինը ե՛ս քեզ խփեմ:

– Համաձայն եմ,– ասում է Դավիթը:

• Ո՞վ էր Մսրա Մելիքը:
• Ի՞նչ ասաց մի օր իր զորապետերին Մսրա Մելիքը:
• Ի՞նչ արեց Դավիթը, երբ լուրը հասավ իրեն:
• Քո կարծիքով՝ ինչո՞ւ Դավիթը համաձայնեց, որ առաջինը Մելիքը խփի:

61

### 4.3.2. Աշխատանք գլխագրի շուրջ

Այնուհետև երեխաները կարդում են գլխագիրը, որտեղ հանդիպում են **Սասունցի Դավիթ** և **Մսրա Մելիք** անուններին, համեմատում են իրենց կազմած բառազույգերին: Նրանք նախորդ դասից լավ գիտեն Հայկ Նահապետ անունը:

### 4.3.3. Աշխատանք մուտքի պատուհանիկի շուրջ

Երեխաները կարդում են մուտքի պատուհանիկի գրառումը և կռահում, որ խոսքը, հավանաբար, Սասունցի Դավթի մասին է:

«Որ նա թշնամու դեմ կռվել է հազարավոր տարիներ առաջ՝ հասկանալի է, իսկ ինչպես է կռվում հիմա և ինչպես պիտի կռվի հետո» հարցերի պատասխանների շուրջ կարելի է կազմակերպել քննարկում, որ երեխաներն արտահայտեն իրենց կարծիքները: Գալիս են եզրակացության, որ հերոսների արած գործերի, նրանց հերոսությունների մասին պատմություններն ու զրույցները մնում են մարդկանց սրտերում, հիշողությունների մեջ: Նրանք միշտ ոգևորում են մարդկանց, նրանց ուժ և հավատ ներշնչում ապրելու համար, հայրենիքը սիրելու համար:

### 4.3.4. Տեքստի ընթերցում

Նախքան տեքստի ընթերցումը պետք է հանձնարարել երեխաներին, որ նրանք ուշադիր լինեն տեքստը ընթերցելիս՝ իրենց կազմած բառազույգերի ճշտությունը ստուգելու նպատակով:

Տեքստն ընթերցվում է հատվածաբար: Յուրաքանչյուր հատվածից հետո տեքստի ընկալման նպատակով կազմակերպվում է հարցուպատասխան:

Առաջարկում ենք նախքան տեքստի ընթերցումը աշակերտներին բացատրել այն բառերը, որոնց իմացությունը անհրաժեշտ է տեքստի ընկալման համար: Օրինակ՝

**անհամար** – անթիվ, մեծաթիվ

**հրեղեն** – կրակից, հրից ծնված

**Առաջին հատված**՝ տեքստի սկզբից մինչև՝ «- *Համաձայն եմ, -ասում է Դավիթը.*» նախադասությունը:

Դավիթը կանգնում է դաշտի մեջ՝ մի բաց տեղում: Մելիքը երեք անգամ այնպես թափով է խփում Դավթին, որ երկրաշարժ է լինում, յոթ օր ու գիշեր փոշին երկինք է բարձրանում: Բայց Դավիթը մնում է կանգնած:

Խփելու հերթը հասնում է Դավթին: Մելիքը վախից մտնում է խոր հորի մեջ, հսկայական քարերով փակում հորի բերանը: Դավիթը վերցնում է Թուր Կեծակին, հեծնում է Քուռկիկ Ձալալուն ու խփում:

– Կենդանի՞ եմ, մի անգա՛մ էլ խփի՞ր,– գոռում է Մելիքը հորի միջից:

Դավիթը զարմանում է, ասում.

– Մելի՛ք, թա՛փ տուր քեզ:

Մելիքը թափ է տալիս իրեն. մի կեսը մի կողմ է ընկնում, մյուս կեսը՝ մյուս կողմ: Ու շունչը փչում է:

Դավիթը դառնում է Մելիքի զորքին և ասում.

– Գիտեմ, որ Մելիքը ձեզ զոռով է բերել մեզ վրա: Գնացե՛ք ձեր տները:

Դավթի ահից այլևս ոչ ոք չի հարձակվում մեր երկրի վրա:

## Հարցեր

**1.** Ի՞նչ է տեղի ունենում Մսրա Մելիքի հարվածներից հետո:
**2.** Ի՞նչ արեց Մելիքը, երբ հարվածելու հերթը հասավ Դավթին:
**3.** Ի՞նչ է տեղի ունենում Դավթի հարվածից հետո:
**4.** Ի՞նչ է ասում Դավիթը Մելիքի զորքին:
**5.** Քո կարծիքով՝ ինչո՞ւ Դավիթն ազատ արձակեց Մելիքի զորքը:
**6.** Կարդա՛ այն տողը, որտեղ երևում է Դավթի քաջությունը:
**7.** Կարդա՛ այն տողը, որտեղ երևում է Մելիքի վախկոտությունը:
**8.** Ընտրի՛ր և կարդա՛ այն տողերը, որոնք համապատասխանում են նկարագրությանը:
**9.** Ի՞նչ կլիներ, եթե Հայկ Նահապետն օգնության հասներ Դավթին:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*բարշրանալ*
*կենդանի*
*այլևս*
*առաջին*
*հարձակվել*



### 4.3.5. Տեքստի ընկալմանը նպաստող հարցեր

- *Ո՞վ էր Մսրա Մելիքը:* (Մսրա Մելիքը սարի չափ մի հսկա էր: Նա անթիվ - անհամար զորք ուներ)

- *Ի՞նչ ասաց մի օր իր զորապետերին Մսրա Մելիքը*։ (Մսրա Մելիքը իր զորապետերին ասաց, որ հավաքեն ամբողջ զորքը և գնան Հայաստանի դեմ կռվի)
- Ո՞վ էր Սասունցի Դավիթը։ (Սասունցի Դավիթը մի գեղեցկադեմ, գանգրահեր, մեծ ուժի տեր քաջ պատանի էր, Առյուծ Միհերի որդին)
- *Ի՞նչ արեց Դավիթը, երբ լուրը հասավ իրեն։* (Սասունցի Դավիթը վերցնում է Թուր Կեծակին, հեծնում է Քուռկիկ Ջալալի իր հրեղեն ձին ու գնում Մելիքի դեմ կռվի)
- *Քո կարծիքով՝ ինչո՞ւ Դավիթը համաձայնեց, որ առաջինը Մելիքը խփի։* (Դավիթը համաձայնեց, որովհետև նա քաջ էր, անվախ և խիզախ)

**Երկրորդ հատված՝** «*Դավիթը կանգնում է դաշտի մեջ*» նախադասությունից մինչև տեքստի ավարտը։

### 4.3.6. Տեքստի ընկալմանը նպաստող հարցեր

- *Ի՞նչ է տեղի ունենում Մսրա Մելիքի հարվածներից հետո։* (Մելիքը երեք անգամ այնպես թափով է խփում Դավթին, որ երկրաշարժ է լինում, յոթ օր ու գիշեր փոշին երկինք է բարձրանում։ Բայց Դավիթը մնում է կանգնած)
- *Ի՞նչ արեց Մելիքը, երբ հարվածելու հերթը հասավ Դավթին։* (Մելիքը վախից մտնում է խոր հորի մեջ, հսկայական քարերով փակում հորի բերանը)
- Ի՞նչ է տեղի ունենում Դավթի հարվածից հետո։ (Մելիքը թափ է տալիս իրեն. մի կեսը մի կողմ է ընկնում, մյուս կեսը՝ մյուս կողմ։ Ու շունչը փչում է)
- *Ի՞նչ ասաց Դավիթը Մելիքի զորքին։* (Գիտեմ, որ Մելիքը ձեզ զոռով է բերել մեզ վրա։ Գնացե՛ք ձեր տները)
- *Քո կարծիքով՝ ինչո՞ւ Դավիթը ազատ արձակեց Մելիքի զորքը։* (Դավիթը Մելիքի զորքն ազատ է արձակում, որովհետև գիտեր, որ Մելիքը նրանց զոռով է բերել կռվի։ Դավիթը խղճով էր, բարի և չէր ուզում կոտորել անմեղ մարդկանց)

Ընթերցումն ավարտելուց հետո անդրադարձ է կատարվում դասի սկզբում իրականացված աշխատանքին, ստուգվում են բառակապակցությունները, անհրաժեշտության դեպքում կատարվում են ուղղումներ։

Ստացվում են *Սասունցի Դավիթ, Մսրա Մելիք, Հայկ Նահապետ, Քուռկիկ Ջալալի, Թուր Կեծակի* բառակապակցությունները։

Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է այն բանին, որ ստացված բառակապակցությունները տեքստի հերոսներն էին, բացի Հայկ Նահապետից։

### 4.3.7. Հարցերի և առաջադրանքների օրինակներ

- Ինչո՞ւ է Մելիքը որոշում կռվի գնալ Դավթի դեմ։ (Ուզում էր հաղթել նրան)
- Ի՞նչը քեզ զարմացրեց տեքստն ընթերցելիս։ (Դավթի քաջությունը)
- Ինչի՞ց է երևում Դավթի հայրենասիրությունը։ (Նա անվախորեն կռվում է Մելիքի մեծաթիվ զորքի դեմ)

### 4.3.8. Կարդալու կարողությունների զարգացմանը նպաստող աջադրանքներ

• *Կարդա՛ այն տողերը, որտեղ արտացոլված է՝*

*ա) Դավթի քաջությունը:* (Դավիթը կանգնում է դաշտի մեջ՝ մի բաց տեղում)

*բ) Մելիքի վախկոտությունը:* (Մելիքը վախից մտնում է խոր հորի մեջ, հսկայական քարերով փակում հորի բերանը)

*գ) Դավթի մեծահոգությունը:* (Գնացե՛ք ձեր տները)

### 4.3.9. Աշխատանք «Աչքի առաջ» ծրագրի բառերի շուրջ

Ուսուցիչը «Աչքի առաջ» բառերը գրում է գրատախտակին՝ բաց թողնելով արտասանությամբ և գրությամբ տարբերվող տառերը, օրինակ.

**առա -ին, ամբող -, խ - ել, բար - բանալ , այլ - ս, հար - ակվել:**

Աշակերտները լրացնում են անհրաժեշտ տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին և բառատետրում, կազմում բառակապակցություններ կամ նախադասություններ:

**ՉԻՆՎՈՐԻԿԻ ԵՐԳԸ**

Չինվոր եմ ես,
Քայլում եմ, տե՛ս,
Զենքեր ունեմ,
Զենքեր պես-պես:

Է՛լ գնդացիր՝
Ձեզ լավ ծանոթ,
Է՛լ ինքնաթիռ,
Է՛լ թնդանոթ:

Տանկ էլ ունեմ
Իմ գրպանում.
Ափսոս, կարգին
Ձայն չի հանում:

Ես եմ նրան
Տեղ-մեղ տանում,
Նրա տեղը
Ձայներ հանում:

Ունեմ հրթիռ,
Թռչող սարքեր,
Երկինք, գետին
Խոցող արկեր:

Ես վատի դեմ
Կանգնել գիտեմ,
Կռվել գիտեմ,
Հաղթե՛լ գիտեմ:

Ես պստիկ եմ,
Բայց ճստիկ եմ,
Հայրենիքի
Չինվորիկ եմ:

## 4.3.10. Աշխատանք առաջադրանքների շուրջ

### Առաջադրանքներ

1 Արարքները բնութագրում են մարդուն: Տեսնենք, թե Դավթի և Մելիքի արարքներն ինչպես են բնութագրում նրանց:

Քո կարծիքով՝ ձախ սյունակի մտքերին աջ սյունակի բառերից որո՞նք են համապատասխանում:

| Արարք | Բնութագիր |
|---|---|
| Դավիթը կանգնում է դաշտի մեջտեղում: | հզորություն, ուժ |
| Դավիթը համաձայնում է, որ Մելիքն առաջինը խփի: | քաջություն |
| Մելիքի հարվածից երկրաշարժ է լինում: | վախկոտություն |
| Դավիթը ազատ է արձակում Մելիքի զորքը: | համարձակություն, ինքնավստահություն |
| Մելիքը մտնում է խոր հորի մեջ: | ներողամտություն, գթասրտություն |

2 Արտագրի՛ր տեքստի վերջին նախադասությունը: Վանկատի՛ր վերջից չորրորդ բառը:

3

Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:
Ըստ նկարի՝

- ինչպիսի՞ն է Դավիթը,
- ինչպիսի՞ն է Մսրա Մելիքը,
- ի՞նչ հարց կտաս Դավթին:

63

**Առաջադրանք 1.** Արարքները բնութագրում են մարդուն: Տեսնե՛նք, թե Դավթի և Մելիքի արարքները ինչպե՞ս են բնութագրում նրանց:

Քո կարծիքով՝ ձախ սյունակի մտքերին աջ սյունակի բառերից որոնք են համապատասխանում:

| Արարք | Բնութագիր |
|---|---|
| Դավիթը կանգնում է դաշտի մեջտեղում: | հզորություն, ուժ |
| Դավիթը համաձայնում է, որ Մելիքն առաջինը խփի: | քաջություն |
| Մելիքի հարվածից երկրաշարժ է լինում: | վախկոտություն |
| Դավիթը ազատ է արձակում Մելիքի զորքը: | համարձակություն, ինքնավստահություն |
| Մելիքը մտնում է խոր հորի մեջ: | ներողամտություն, գթասրտություն |

Առաջադրանք 1-ը կարելի է կատարել նաև զույգերով: Երեխաները ուշադիր կարդում են արարքը, ապա գտնում, թե որ բառն է բնութագրում արարքը: Նախապես իրենց բաժանված թերթիկների վրա գծանշումներ են անում, ապա բարձրաձայն կարդում և համեմատում իրենց ընկերների աշխատանքի հետ:

**Առաջադրանք 2**. Արտագրի՛ր տեքստի վերջին նախադասությունը: Վանկատի՛ր վերջից չորրորդ բառը:

Երեխաները արտագրում են «Դավթի ահից այլևս ոչ ոք չի հարձակվում մեր երկրի վրա» նախադասությունը և վանկատում **հարձակվել** բառը՝ **հար - ձակ - վել**: Այդ բառը ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերից է, և առաջադրանքի նպատակներից մեկն էլ այդ բառի ուղղագրությունն ամրապնդելն է: Այդ բառը գտնելու համար երեխաները պետք է կատարեն կարգային հաշիվ՝ գտնելով վերջից չորրորդ բառը: Սա ևս որոշակի հմտություններ է ձևավորում երեխաների մեջ, ապահովում միջառարկայական կապ:

**Առաջադրանք 3.**

Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:

Ըստ նկարի՝

- ինչպիսի՞ն է Դավիթը,
- ինչպիսի՞ն է Մսրա Մելիքը,
- ի՞նչ հարց կտաս Դավթին:

Նկարում Սասունցի Դավիթը՝ հեծած Քուռկիկ Ջալալուն, եկել է Մսրա Մելիքի վրանի մոտ, որ նրան հրավիրի մենամարտի: Նա անվախ կանգնել է Մելիքի դեմ, որը հսկա է և ուզում է փչելով Դավթին օդ թռցնել: Մելիքի ծառաները տեսնում են, որ Դավիթն անվախ կանգնել է ու տեղից չի շարժվում, զարմացել են ու վախեցել:

Դավթին տրվող հարցերի օրինակներ.

- Դու հենց սկզբից էլ գիտեի՞ր, որ հաղթելու ես:
- Ինչո՞ւ չկոտորեցիր Մելիքի զորքը:
- Կուզեի՞ր տանկեր, ինքնաթիռներ ունենալ:
- Դու շա՞տ ես սիրում քո հայրենիքը:
- Կուզեի՞ր, որ Մելիքը չհարձակվեր քո հայրենիքի վրա, ու դու էլ չսպանեիր նրան:
-

**4** ○ Անվանի՛ր նկարներում պատկերված առարկաները:



✧ Գրի՛ր առարկաների անվանումները:

✵ Դասավորի՛ր այբբենական կարգով:

**Հիշի՛ր. քո գրած բառերը առարկա ցույց տվող բառեր են:**

**5** Կազմի՛ր **հայ**-ից **սեր** ստանալու շղթան:

**հայ → հա□ → □ամ → կ□ր → կե□ → սեր**

**6** Տեքստից օգտվելով՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած առարկա ցույց տվող բառերը:

1. **Մսրա Մելիքը անթիվ անհամար _____ ուներ:**
2. **Դավիթը հեծնում է իր հրեղեն _____:**
3. **Յոթ օր ու գիշեր փոշին _____ է բարձրանում:**
4. **Մելիքը վախից մտնում է խոր _____ի մեջ:**
5. **_____ վերցնում է Թուր Կեծակին:**
6. **_____ը թափ է տալիս իրեն:**

### 4.3.11. Աշխատանք առարկա ցույց տվող բառերի շուրջ

**Առաջադրանք 4.**

Այս առաջադրանքի օգնությամբ երեխաները կծանոթանան առարկա ցույց տվող բառերին: Կանվանեն նկարներում պատկերված առարկաների անունները, կգրեն ***մարդ, սար, ձի, գետ, թուր, տուն*** բառերը, ապա կդասավորեն այբբենական կարգով:

***Գետ, թուր, ձի, մարդ, սար, տուն:***

Այնուհետև երեխաները կարդում են և իմանում, որ իրենց գրած բառերը **առարկա ցույց տվող բառեր են**:

**Առաջադրանք 5.** Կազմի՛ր **հայ**-ից **սեր** ստանալու շղթան:

Երեխաներն արդեն ծանոթ են ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ բառախաղին և հեշտությամբ կկազմեն **հայ-համ-կամ-կար-կեր-սեր** բառաշղթան:

**Առաջադրանք 6.** Տեքստից օգտվելով՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած առարկա ցույց տվող բառերը:

1. Մսրա Մելիքը անթիվ անհամար _____ ուներ:
2. Դավիթը հեծնում է իր հրեղեն _____:
3. Յոթ օր ու գիշեր փոշին _____ է բարձրանում:
4. Մելիքը վախից մտնում է խոր _____ի մեջ:
5. _____ վերցնում է Թուր Կեծակին:
6. _____ը թափ է տալիս իրեն:

Այս առաջադրանքը կնպաստի երեխաների խոսքի զարգացմանը: Հնարավորություն կտա նորածանոթ բառերը կիրառելու իրենց խոսքում:

Այս առաջադրանքը կատարելու համար երեխաները ևս մեկ անգամ աչքի կանցկացնեն տեքստը, կգտնեն համապատասխան նախադասությունները, կլրացնեն բաց թողած բառերը:

1. Մսրա Մելիքը անթիվ անհամար զորք ուներ:
2. Դավիթը հեծնում է իր հրեղեն ձին:
3. Յոթ օր ու գիշեր փոշին երկինք է բարձրանում:
4. Մելիքը վախից մտնում է խոր հորի մեջ:
5. Դավիթը վերցնում է Թուր Կեծակին:
6. Մելիքը թափ է տալիս իրեն:

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է իրենց լրացրած բառերի վրա և ասում, որ այդ բառերը առարկա ցույց տվող բառեր են:

**7** Կարդա՛ երգը: Երգից առանձնացրո՛ւ և գրի՛ր առարկա ցույց տվող բառերը:

**ԱՌԱՐԿԱ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԵՐԻ ԵՐԳԸ**

Ի՞նչ եմ, ո՞վ եմ,
Ի՞նչ եմ, ո՞վ եմ,
Հող եմ, ծով եմ,
Հուր եմ, օդ եմ,
Մարդ, կենդանի.
Այն ամենն եմ՝
Ինչ կա, չկա,
Ինչ կա, չկա,
Կա, չկա...
Ուրիշ խոսքով՝
Ցույց եմ տալիս
Ես առարկա:

**8** Որտե՞ղ է գտնվում Սասունցի Դավթի արձանը: Ո՞վ է արձանի հեղինակը:

Հետաքրքրվի՛ր և իմացի՛ր ձեր բնակավայրի որևէ հուշարձանի մասին:

**9** «Աչքի առաջ» խորագրի **առաջին, կենդանի, բարձրանալ, այլևս** բառերով կազմի՛ր մի փոքրիկ, զվարթ պատմություն:

Օրինակ: Առաջին անգամ տեսանք մի կենդանի, որը սարը բարձրանում էր գլխիվայր: Այլևս այդպիսի բան չտեսանք:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**



Դու էլ այսօր մի փոքրիկ Դավիթ ես: Դու պիտի իմանաս, որ խաղաղ ու երջանիկ ապրելու համար պետք է լավ սովորել, քաջասիրտ լինել:



**Առաջադրանք 7.**
Կարդա՛ երգը: Երգից առանձնացրո՛ւ և գրի՛ր առարկա ցույց տվող բառերը:

ԱՌԱՐԿԱ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԵՐԻ ԵՐԳԸ

*Ի՞նչ եմ, ո՞վ եմ,*
*Ի՞նչ եմ, ո՞վ եմ,*
*Հող եմ, ծով եմ,*
*Հուր եմ, օդ եմ,*
*Մարդ, կենդանի.*
*Այն ամենն եմ՝*
*Ինչ կա, չկա,*
*Ինչ կա, չկա,*
*Կա, չկա...*
*Ուրիշ խոսքով*
*Ցույց եմ տալիս*
*Ես առարկա:*

Երեխաները կարդում են ԱՌԱՐԿԱ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԵՐԻ ԵՐԳԸ:
Այնուհետև երգից առանձնացնում են առարկա ցույց տվող բառերը՝
**հող, ծով, հուր, օդ, մարդ, կենդանի, խոսք, առարկա:**

**Առաջադրանք 8.** Որտե՞ղ է գտնվում Սասունցի Դավթի արձանը: Ո՞վ է արձանի հեղինակը:
Հետաքրքրվի՛ր և իմացի՛ր ձեր բնակավայրի որևէ հուշարձանի մասին:

### 4.3.12. Փոքրիկ հետազոտական աշխատանք

Հետազոտական աշխատանքից պարզվում է, որ արձանը Սասունցի Դավթի արձանն է, գտնվում է Երևանում, կայարանամերձ հրապարակում: Հեղինակն է տաղանդավոր քանդակագործ Երվանդ Քոչարը:

**Առաջադրանք 9.**
«Աչքի առաջ» խորագրի առաջին, կենդանի, բարձրանալ, այլևս բառերով կազմի՛ր մի փոքրիկ, զվարթ պատմություն:
Օրինակ: Առաջին անգամ տեսանք մի կենդանի, որը սարը բարձրանում էր գլխիվայր: Այլևս այդպիսի բան չտեսանք:

Երեխաների գրավոր խոսքի, երևակայության զարգացմանը, մտքի ճկունության ձևավորմանն է ուղղորդված առաջադրանքը:
**Փոքրիկ պատմությունների օրինակներ:**
1. Առաջին կենդանին բարձրացավ ճանապարհով: Այլևս հույս չմնաց, որ կարող ենք այդ ճանապարհով գնալ:
2. Առաջին անգամ մեզ վարժված կենդանին այլևս չբարձրացավ մեր հետևից:

3. Այլևս չխոսես այդ մասին՝ ասաց կենդանիներ վարժեցնողն ու, առաջին անգամ բարձրացնելով գլուխը, նայեց մեզ:

### 4.3.13. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)

**Ես հասկացա----------**
**Ես իմացա----------**
**Ինձ զարմացրեց----------**
**Տանը կպատմեմ----------**

Երեխաները ըստ իրենց կատարած աշխատանքների լրացնում են նախադասությունները, արտահայտում կարծիքներ, կատարած աշխատանքները համեմատում գլխագրում արտացոլված նպատակների հետ:

Այնուհետև անդրադառնում են ամփոփիչ պատուհանիկի գրառմանը:

Դու էլ այսօր մի փոքրիկ Դավիթ ես: Դու պիտի իմանաս, որ խաղաղ և երջանիկ ապրելու համար պետք է լավ սովորել, քաջասիրտ լինել ու պայքարել:
Երեխաները կարդում են գրառումը, արտահայտում իրենց կարծիքը:

## 4.4. ԵՐԵՎԱՆ

### 4.4.1. «Փորձի՛ր գուշակել» վարժությունը

Վարժության նպատակն է խթանել աշակերտների երևակայությունը, ուշադրությունն ու հետաքրքրությունը և կապ ստեղծել ուսուցանվող նյութի հետ:

Դասագրքերը փակ են: Կարելի է նախապես գրատախտակին գրել (կամ փակցնել) *ծնվել, անուն ստանալ, մեծանալ, ապրել* բառերը և աշակերտներին առաջարկել գուշակել, թե ինչն է ծնվում, անուն ստանում, մեծանում, ապրում:

Երեխաներն անկաշկանդ արտահայտում են իրենց կարծիքը, հիմնավորում: Բոլոր առաջարկվող տարբերակները *(կենդանի, բույս, մարդ, ծաղիկ և այլն)* լսելուց հետո ուսուցիչն աշակերտներին կարող է հուշում անել հարցի տեսքով. այդտեղ ապրում են մարդիկ, և այդ տեղի անունը որ կողմից էլ կարդաք՝ նույնն է: Տարբեր պատասխաններից հետո նա երեխաների ուշադրությունը հրավիրում է *քաղաք* տարբերակի վրա՝ եթե չեն նշել այդ տարբերակը: Այնուհետև ուսուցիչն ասում է, որ քաղաքներն էլ են ծնվում, անուն ստանում, մեծանում և ապրում: Ապա կարելի է ցուցադրել Երեբունի քաղաքի սեպագիր արձանագրությունը, ասել, որ սա էլ մի քաղաքի ծննդյան վկայական է (կամ անձնագիր), որի մասին այսօր պետք է կարդան:

Այս դասին դու.

• Հարցերի օգնությամբ կառանձնացնես անձ և իր ցույց տվող բառերը:

• Կիմանաս, թե ով է կառուցել Էրեբունին, և ինչպես է այն դարձել այսօրվա Երևանը:

• Սիրով և պատասխանատվությամբ կվերաբերվես մայրաքաղաք Երևանին:

## ԵՐԵՎԱՆ

**Վաչագան Ա. Սարգսյան**

vachagan.am

**Զարմանալի է, որ քաղաքներն էլ են ծնվում, անուն ստանում, մեծանում և ապրում:**



– Պապի՛կ, ինչո՞ւ է իմ անունն Արգիշտի:

– Ես եմ դրել քո անունը:

– Իսկ քո անունն ո՞վ է դրել:

– Իմ անունն էլ իմ պապն է դրել՝ Արամը:

– Իսկ ինչո՞ւ է մեր քաղաքի անունը Երևան:

– Այդ անունը դու ես դրել, մոռացե՞լ ես:

– Ե՞ս:

– Դո՛ւ: Դու Արգիշտի հզոր թագավորն ես: Շա՜տ ու շա՜տ տարիներ առաջ դու կառուցեցիր այս քաղաքը և անունն Էրեբունի դրեցիր:

– Բա ասում ես՝ Երևան եմ դրել:

– Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան:

– Իսկ ի՞նչ գիտենք, որ Արգիշտին է կառուցել Երևանը:

– Այս մասին նա քարի վրա գրել է շատ տարիներ առաջ: Այդ քարը մինչև հիմա պահպանվել է:

• Ի՞նչ իմացավ թոռնիկը Երևանի մասին:

• Ինչպե՞ս է Էրեբունին դարձել Երևան:

• Քո կարծիքով՝ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում:



### 4.4.2. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Ուսուցչի հրահանգով աշակերտները բացում են դասագիրքը, լուռ կարդում են դասանյութի գլխագիրը և մուտքի պատուհանիկը: Այնուհետև ուսուցիչը կամ լավ ըն-

թերցող աշակերտներից մեկն է բարձրաձայն կարդում դրանք։ Երեխաները ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը ընթերցված կետերի վերաբերյալ։

Առաջարկվում է տեքստն ընթերցել հատվածներով՝ ուսուցչի կողմից՝ զուգահեռ բացատրելով նորածանոթ բառերը.

**Կառք**- ծածկ ունեցող երկանիվ կամ քառանիվ հարմարավետ սայլ։

**Բերնեբերան**- այստեղ՝ մեկը մյուսին պատմելով, հաղորդելով։

**Մրգանույշ**- մրգից պատրաստված քաղցր ուտելիք, մուրաբա։

**Հատված 1.** (Պատմվածքի սկզբից մինչև «Այդ քարը մինչև հիմա պահպանվել է» նախադասությունը)

• *Ի՞նչ իմացավ թոռնիկը մայրաքաղաք Երևանի մասին։*

(Հզոր թագավոր Արգիշտին շա՛տ ու շատ տարիներ առաջ կառուցեց մեր քաղաքը և անունը Էրեբունի դրեց)

• *Ինչպե՞ս է Էրեբունին դարձել Երևան։*

(Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան)

**Հատված 2** («Իսկ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում» նախադասությունից մինչև «Երևի տխուր քաղաք է եղել Էրեբունին» նախադասությունը)

• *Քո կարծիքով՝ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում։*

(Իմ կարծիքով՝ դպրոցներ միշտ եղել են։ Ուղղակի շատ քիչ են եղել։ Քիչ մարդիկ են սովորել այնտեղ)

• *Ի՞նչ պատմեց պապիկը դպրոցների մասին։*

*(Պապիկը պատմեց, որ Էրեբունիում այսօրվա դպրոցների նման դպրոցներ չեն եղել, բայց հայերը շատ վաղուց են գրել–կարդալ իմացել։ Գրել են քարերի և կավե սալիկների վրա)*

• *Որտեղի՞ց գիտենք, որ Արգիշտին է կառուցել Երևանը։*

*(*Այս մասին նա քարի վրա գրել է շատ տարիներ առաջ, և այդ քարը մինչև հիմա պահպանվել է*)*

• *Ի՞նչ եք կարծում, տխո՞ւր քաղաք է եղել Էրեբունին։*

*(Իմ կարծիքով՝ քաղաքները ուրախ կամ տխուր են, երբ ուրախ կամ տխուր են այնտեղ ապրողները)*

**Հատված 3.** («Չէ՛, ի՛նչ ես ասում» նախադասությունից մինչև վերջ)

• *Ինչե՞ր կային Էրեբունի քաղաքում։*

(Էրեբունի քաղաքում կային կառքեր, մարտակառքեր, արագավազ ձիեր։ Կային նաև շատ հետաքրքիր խաղեր, հեքիաթներ ու հեքիաթասացներ, երգ ու պար կար, լուրեր տանող-բերող սուրհանդակներ կային։ )

• *Ի՞նչ խոստացավ պապն Արգիշտի թոռնիկին։*

(Պապն Արգիշտի թոռնիկին խոստացավ տանել «Էրեբունի» թանգարան, որ նա տեսնի, թե ինչպես են ապրել հայերը հազարավոր տարիներ առաջ)

• *Ինչու՞ էին Արգիշտին և պապը սիրում Երևանը:*

(Պապը սիրում է Երևանը, որովհետև այն Հայաստանի մայրաքաղաքն է, աշխարհի ամենամեծ քաղաքը, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն)

### 4.4.3. Տեքստի ընտրովի ընթերցանություն՝ բովանդակության ընկալումը խորացնելու նպատակով

• Ընթերցե՛ք այն տողերը, որտեղ խոսվում է հայկական դպրոցների, հայերեն գիր ու տառի մասին:

(- Իսկ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում:

- Այսօրվա դպրոցների նման՝ ոչ: Բայց մենք շա՛տ վաղուց գրել-կարդալ գիտեինք, ճիշտ է՝ մի քիչ այլ կերպ էինք գրում:

Օրինակ, այսօրվա մեր Ա վանկը գրում էինք այսպես՝ ▼▼:

• Ի՞նչ էր հետաքրքրում փոքրիկ Արգիշտիին: Ընթերցե՛ք նրա հարցերը:

(- Պապի՛կ, ինչո՞ւ է իմ անունն Արգիշտի:

- Իսկ քո անունն ո՞վ է դրել:

- Իսկ ինչու՞ է մեր քաղաքի անունը Երևան:

- Բա ինչի՞ վրա էին գրում:

- Իսկ Էրեբունիում պաղպաղակ կա՞ր)

Տեքստից ընտրի՛ր և կարդա՛ այն հատվածը, որտեղ պատմվում է, թե.

- ինչպես են գրել Էրեբունիում,
- ինչպիսի քաղաք է եղել Էրեբունին,
- ինչու են Երևանը շատ սիրում:

### 4.4.4. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

- Ո՞ւմ միջև է զրույցն ընթանում: (Թոռնիկի և պապի միջև է զրույցն ընթանում)
- Ի՞նչ է թոռնիկի անունը: (Թոռնիկի անունը Արգիշտի է)
- Ինչու՞ է հենց այդ անունը տրվել նրան: (Տրվել է ի պատիվ Արգիշտի թագավորի)
- Ո՞վ էր Արգիշտի թագավորը: (Հզոր թագավոր էր Արգիշտին, և նա է կառուցել Էրեբունի քաղաքը)
- Ինչպե՞ս է առաջացել Երևան անունը: (Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան)
- Ի՞նչ նոր բաներ իմացավ Արգիշտին Երևանի մասին: (Իմացավ, որ Երևանի նախկին անունը եղել է Էրեբունի, որ այն կառուցել է հայ հզոր թագավոր Արգիշտին:

Իմացավ նաև Էրեբունու փոխադրամիջոցների մասին: Իմացավ, որ նախկինում մարդիկ գրել են կավե սալիկների, քարերի վրա:

Իմացավ, որ հայ թագավորները սիրել են ուտել մրգանույշ)

• Ի՞նչ եք կարծում, թոռնիկը հավանե՞ց պապիկի նկարագրած Էրեբունին: Հիմնավորի՛ր կարծիքդ:

• Ի՞նչ կարող ես անել քո մայրաքաղաքին, քո բնակավայրին, քո դպրոցին օգտակար լինելու համար:

(Լավ սովորել, դառնալ պիտանի մարդ, մաքուր պահել շրջապատը, լինել հոգատար և ուշադիր)

Այնուհետև ուսուցիչը QR-կոդի միջոցով ներկայացնում է տեքստի բեմականացման տեսահոլովակը:

### 4.4.5. Դերերով ընթերցանություն՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով

Ուսուցչի առաջարկով աշակերտները կարող են կարդալ տեքստը դերերով՝ պահպանելով կետադրական նշանները, կարդալ այնպես, որ զգացվեն Արգիշտիի անկեղծ զարմանքն ու պապի սերը Երևանի նկատմամբ:

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**ԹՇՆԱՄՈՒ ՆԿԱՐԸ**

Վեցոտանի մի կարիճ
Ուզեց դառնալ նկարիչ,
Գնեց ներկեր ու վրձին,
Կավիճներն էլ՝ առանձին:

Ի՞նչ նկարի՝ չգիտի.
Ոտքը դրեց ճակատին,
Միտք է անում, մտմտում,
Մի սիրուն բան չի գտնում:

Մտմտում էր կարիճը՝
Ձեռքին բռնած կավիճը,
Նկարում էր ու ջնջում,
Ինքն իր ներսում խրխնջում:

– Գուցե մկնի՞կ նկարեմ,
Ճատ սոված եմ, տկար եմ,
Կամ մի ոզնի խզբզեմ,
Վրեժ լուծեմ՝ գզմզեմ:

Մեկ էլ տեսավ, թե ինչպես,
Ոզնին եկավ տանկի պես,
Մեր կարիճը փախավ ցած՝
Ներկ ու կավիճ մոռացած:

Թե ուզում ես գործ անել՝
Քո թշնամուն կործանել,
Ձենքդ ամո՛ւր, ձի՛գ բռնիր,
Նկարի՛ դեմ մի կռվիր:



– Իսկ դպրոցներ կայի՞ն էրեբունիում:

Պապիկը ժպտալով ասաց.

– Էրեբունիում այսօրվա դպրոցների նման դպրոցներ չեն եղել: Բայց մենք շա՜տ վաղուց գրել-կարդալ գիտեինք, ճիշտ է՝ մի քիչ այլ կերպ էինք գրում: Օրինակ, այսօրվա մեր Ա վանկը գրում էինք այսպես՝ [illegible]:

– Բա ինչի՞ վրա էին գրում:

– Քարերի, կավե սալիկների:

– Իսկ էրեբունիում պաղպաղակ կա՞ր:

– Եղած կլինի: Մեր թագավորներն ու թագուհիները սառույցով, կարագով ու մրգերով պատրաստված մրգանույշ էին ուտում:

– Ինքնաթիռներ, ավտոմեքենաներ չկային, հեռուստացույց չկար, հեռախոս չկար, համակարգչային խաղեր չկային, կինո չկար, երգող շատրվաններ ու ցայտաղբյուրներ չկային:

Երևի տխուր քաղաք է եղել էրեբունին:



• Ի՞նչ պատմեց պապիկը դպրոցների մասին:

• Որտեղի՞ց գիտենք, որ Արգիշտին է կառուցել Երևանը:

• Ի՞նչ ես կարծում, տխո՞ւր քաղաք է եղել Էրեբունին:

Երևանի հիմնադրման մասին սեպագիր արձանագրությունը:



– Չէ՛, ի՞նչ ես ասում: Կառքեր կային, մարտակառքեր և արագավազ ձիեր կային, շատ հետաքրքիր խաղեր կային, հեքիաթներ ու հեքիաթասացներ կային, երգ ու պար կար, լուրեր տանող-բերող սուրհանդակներ կային...

– Շա՜տ կուզենայի տեսնել Էրեբունի քաղաքը:

– Երևանում կա «Էրեբունի» թանգարան: Մի օր կգնանք, և դու կտեսնես, թե հայերն ինչպես են ապրել հազարավոր տարիներ առաջ:

– Պապի՛կ, գիտե՞ս, ես շատ եմ սիրում Երևանը:

– Ե՛ս էլ, չէ՞ որ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է, աշխարհի ամենամեծ քաղաքը, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*կարագ*
*թանգավոր*
*Երևան*
*բարձել*
*կառք*
*ավտոմեքենա*

## Հարցեր

1. Ինչե՞ր կային Էրեբունի քաղաքում:
2. Ի՞նչ խոստացավ պապն Արգիշտի թոռնիկին:
3. Ինչու՞ էին Արգիշտին և պապը սիրում Երևանը:
4. Պատկերացրո՛ւ, որ Արգիշտի արքան հայտնվել է այսօրվա Երևանում: Զրուցի՛ր նրա հետ:

## Առաջադրանքներ

1 Ուշադի՛ր դիտիր տեքստի նկարազարդումները և գտի՛ր Երևանի սիրելի վայրերը:

Երևանի «ուրախ ավտոբուսը»

68

**Առաջադրանք 1.** Ուշադիր դիտի՛ր տեքստի նկարազարդումները և գտի՛ր Երևանի սիրելի վայրերը:

Նկարներում պատկերված են Հանրապետության հրապարակը, Էրեբունի թանգարանը, Մատենադարանը, Ծիծեռնակաբերդը, Մարզահամերգային համալիրը, Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքը, բժշկական ինստիտուտի շենքը, կայարանամերձ հրապարակը՝ Սասունցի Դավթի արձանով:

**2** Ժամանակի ընթացքում ի՞նչն է փոխվել մեր քաղաքում: Միացրո՛ւ սլաքներով:

| Էրեբունիում կային | Երևանում կան |
|---|---|
| Կառքեր | Գրքեր |
| Մարտակառքեր | Հեռուստացույց, հեռախոս |
| Քարե, կավե սալիկներ | Ավտոմեքենաներ |
| Սուրհանդակներ | Տանկեր |
| Արքաներ | Նախագահ, վարչապետ |

**3** Տեքստից օգտվելով՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած բառերը:

- **...., հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է ....:**
- **Երևանը .... մայրաքաղաքն է:**
- **Երևանում բոլորը խոսում են ...., ծիծաղում են ...., սիրում ու ապրում են ....:**

**4**
- Արտագրի՛ր բանաստեղծությունը:
- Լրացրո՛ւ աղյուսակը:

**ԷՐԵԲՈՒՆԻ**

– Էմի՛ն, գնա՞նք Էրեբունի:
– Գնա՛նք, Արա՛,
Բայց չգիտեմ տեղը նրա:
– Ա՜յ քեզ Էմին, դու չգիտե՞ս,
Որ հնամյա Էրեբունին
Երևանի անունն է հին:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ջ | | | | | | |
| | մ | ի | ն | | | | |
| ա | փ | ս | | | | | |
| հ | ա | ս | ց | | | | |
| | ր | և | ա | ն | | | |
| | ր | | բ | ու | ն | ի | |
| | ջ | մ | ի | ա | ծ | ի | ն |



**Առաջադրանք 2.** Ժամանակի ընթացքում ի՞նչն է փոխվել մեր քաղաքում: Միացրո՛ւ սլաքներով:

Ի՞նչն է փոխվել ժամանակի ընթացքում: Երեխաները պետք է մտովի կամուրջ կառուցեն հնադարյան Էրեբունի քաղաքի և այսօրվա Երևանի միջև ու տեսնեն փոփոխությունների մի քանի օրինակ:

Էրեբունիում կառքեր էին, Երևանում այսօր ավտոմեքենաներ են, մարտակառքերին փոխարինել են տանկերը, քարե, կավե սալիկներին՝ գրքերը, սուրհանդակներին՝ հեռուստացույցը, հեռախոսը, համակարգիչը, արքաներին՝ նախագահը, վարչապետը:

| Էրեբունիում կային | Երևանում կան |
|---|---|
| Կառքեր | Գրքեր |
| Մարտակառքեր | Հեռուստացույց, հեռախոս |
| Քարե, կավե սալիկներ | Ավտոմեքենաներ |
| Սուրհանդակներ | Տանկեր |
| Արքաներ | Նախագահ, վարչապետ |

**Առաջադրանք 3.** Տեքստից օգտվելով՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած բառերը:

Ուսուցիչը աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացրած նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները:

- Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան:
- Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է:
- Երևանում բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

Առաջադրանքը նպաստում է տեքստի բովանդակության յուրացմանը, ինչպես նաև այն բանին, որպեսզի աշակերտը մտապահի, հիշողության մեջ ամրագրի, որ Երևան անունը առաջացել է Էրեբունի անունից, որ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

**Առաջադրանք 4:**

- Արտագրի՛ր բանաստեղծությունը:
- Լրացրո՛ւ աղյուսակը:

### 4.4.6. *Է*-ի *Ե*-ի ուղղագրության ամրապնդում

Է-ի Ե-ի ուղղագրության իմացության ամրապնդման համար երեխաները, օգտվելով փոքրիկ բանաստեղծությունից, նկարներից և անցած դասանյութերից, լրացնում են աղյուսակը.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| է | ջ | | | | | | |
| է | մ | ի | ն | | | | |
| ա | փ | ս | ե | | | | |
| հ | ա | ս | ց | ե | | | |
| Ե | ր | և | ա | ն | | | |
| է | ր | ե | բ | ու | ն | ի | |
| է | ջ | մ | ի | ա | ծ | ի | ն |

## 5 ՍՈՎՈՐԻՐ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

• Կարդա՛ պապիկի պատասխանները: Մտածիր, թե ինչ հարցեր է տվել Արգիշտին:

• Լրացրո՛ւ աղյուսակը: Քեզ օգնության կգան ընդգծված բառերը:

| Արգիշտիի հարցերը | Պապիկի պատասխանները |
|---|---|
| | Երևանը **Հայաստանի մայրաքաղաքն է**: |
| | **Էրեբունին կառուցել է** հզոր թագավոր Արգիշտին: |
| | **Երևանի քարե անձնագիրը պահվում է** Էրեբունի թանգարանում: |
| | **Երևանի շենքերը** կառուցված են վարդագույն տուֆից: |

**Գիտե՞ս, որ...**

Երևանն ունի դրոշ, զինանշան, օրհներգ:

**Երևանի զինանշանը**

**Երևանի օրհներգը**

*Խոսքը՝ Պ. Սևակի*
*Երաժշտությունը՝ Է. Հովհաննիսյանի*

vachagan.am

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

**Երևանի դրոշը**



### 4.4.7. Աշխատանք «Սովորի՛ր հարցեր տալ» առաջադրանքի շուրջ

**Առաջադրանք 5.** Կարդա՛ պապիկի պատասխանները: Մտածիր, թե ինչ հարցեր է տվել Արգիշտին:

• Լրացրո՛ւ աղյուսակը: Քեզ օգնության կգան ընդգծված բառերը:

Ինչպես արդեն նշել ենք նման բնույթի առաջադրանքները նպաստում են երեխաների մեջ հարցեր տալու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Հարցերը ճիշտ ձևակերպելը նպաստում է երեխաների քննադատական մտածողության զարգացմանը: Դասագրքում տրված այսօրինակ առաջադրանքները ամենապարզունակն են և ներկայացվող պատասխանները ենթադրում են միարժեք հարցեր: Սրանք երեխաների մեջ հարցեր տալու կարողություններ ձևավորելու նախնական միջոցներ են:

**Արգիշտին կարող էր տալ այսպիսի հարցեր.**

| | |
|---|---|
| Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը: | Երևանը **Հայաստանի մայրաքաղաքն է:** |
| Ո՞վ է կառուցել Էրեբունին: | **Էրեբունին կառուցել է** հզոր թագավոր Արգիշտին: |
| Որտե՞ղ է պահվում Երևանի քարե անձնագիրը: | **Երևանի քարե անձնագիրը պահվում է** Էրեբունի թանգարանում: |
| Ի՞նչ քարերով են կառուցված Երևանի շենքերը: | **Երևանի շենքերը** կառուցված են վարդագույն տուֆից: |

Կարելի է առաջադրանքը կատարել խմբային կամ զույգային աշխատանքի միջոցով: Դասարանը բաժանել խմբերի կամ զույգերի: Յուրաքանչյուր զույգին կամ խմբին տալ թղթե շերտիկների վրա գրված պատասխան-նախադասությունները: Աշակերտները լուռ կարդում են նախադասությունը, մտածում են հարցը և գրում շերտիկի վրա: Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը կամ զույգերը ներկայացնում են իրենց գրած հարցերը: Հնարավոր է, որ աշակերտները նույն պատասխանի համար ձևակերպեն տարբեր հարցեր: Ուսուցիչը պետք է ուշադիր լսի, հնարավորության տա արտահայտվելու բոլոր խմբերին, ապա միայն, քննարկելով աշակերտների հետ, կատարի ճշգրտումներ: Պետք է խրախուսել աշակերտների մասնակցությունը, առանձնացնել ճիշտ ձևակերպած հարցերը:

### 4.4.8. Աշխատանք «Գիտե՞ս, որ...» խորագրի նյութի շուրջ

Նախքան «Գիտե՞ս, որ…» խորագրին անդրադառնալը կարելի է միացնել Երևանի օրհներգը (QR): Ուսուցիչը աշակերտներին բացատրում է, որ օրհներգը պաշտոնական տոների, արարողությունների ժամանակ հնչող հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է կամ երգ: Ուսուցչի հրահանգով աշակերտները, ոտքի կանգնած, ուշադիր լսում են երգը:

### 4.4.9. Ծանոթացում Երևանի զինանշանին և դրոշին

Կապույտ ֆոնին հայերեն բրոնզագույն մեծատառերով մակագրված «ԵՐԵՎԱՆ» պատվանդանին կանգնած, գլուխը հետ շրջած, իշխանության խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է՝ մեջտեղից բարձրացող Կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով: Առյուծի կրծքին՝ հավերժության նշանի վրա, Արարատ լեռան պատկերն է: Ողջ պատկերը երիզված է ուղղանկյունաձև վահանակով: Գործածված են բրոնզագույն և կապույտ գույները:

Դրոշի կենտրոնում պատկերված է կապույտով երիզված բրոնզագույն Երևանի զինանշանը՝ շրջապատված 12 կարմիր եռանկյուններով, որոնք խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները:

6 Կարդա՛ տրված բառերը:

թագավորներ

տղա

խոհարար

պաղպաղակներ

ձի

հեռուստացույց

Անձ ցույց տվող **խոհարար, տղա, թագավորներ** բառերը պատասխանում են **ո՞վ, ովքե՞ր** հարցերին:

Իր ցույց տվող **հեռուստացույց, ձի, պաղպաղակներ** բառերը պատասխանում են **ի՞նչ, ինչե՞ր** հարցերին:

Հիշի՛ր:
Առարկա ցույց տվող բառերը պատասխանում են **ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր** հարցերին:

7 Բառերը խմբավորի՛ր ըստ պահանջվող հարցերի:

**Երկրներ, տղա, ձկնորսներ, առյուծ, աղջիկ, շուն, գիրք, մրգեր, կատուներ, վարորդներ, գյուղացի, երգիչ, քույրեր, մայրեր, տատիկներ, եղբայր, աղվես, բաժակ:**

| Ո՞վ | Ովքե՞ր | Ի՞նչ | Ինչե՞ր |
|---|---|---|---|
| տղա | ձկնորսներ | առյուծ | երկրներ |
| | | | |

71

**Առաջադրանք 6.** Կարդա՛ տրված բառերը:

Առաջադրանքի միջոցով, գործնական եղանակով ներմուծվում են առարկա ցույց տվող բառերին տրվող **ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր** հարցերը:

«Հիշի՛ր» խորագրով ներկայացվում է գործնական ճանապարհով սովորածի ընդհանրացումը:

**Առաջադրանք 7.** Բառերը խմբավորի՛ր ըստ պահանջվող հարցերի:

Այս առաջադրանքով ապահովվում է ստացված գիտելիքի գործնական կիրառումը: Երեխաները պետք է լրացնեն աղյուսակը.

| **ո՞վ** | **ովքե՞ր** | **ի՞նչ** | **ինչե՞ր** |
|---|---|---|---|
| տղա | ձկնորսներ | առյուծ | երկրներ |
| աղջիկ | վարորդներ | շուն | մրգեր |
| գյուղացի | քույրեր | գիրք | կատուներ |
| երգիչ | մայրեր | աղվես | |
| եղբայր | տատիկներ | բաժակ | |

Պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել այն բանին, որ հայերենում կենդանիներին ևս տրվում են **ի՞նչ, ինչե՞ր** հարցերը:

## ԳՐԱԳԱՐԱԿ

### Ի՞ՆՉԸ Ո՞Վ Է

Փոքրիկ Հայկը մի հեքիաթ էր կարդում:

*«Մի անգամ չգիտես թե ինչպես, չգիտես թե որտեղ հանդիպեցին Վինի Թուխն ու Պինգվին Վինը:*

*– Դու ո՞վ ես,– հարցրեց Պինգվին Վինը Վինի Թուխին:*

*– Ես արջուկ եմ,– պատասխանեց Թուխը:– Բա դո՞ւ ով ես:*

*– Ես պինգվին եմ»:*

Հայկը հանկարծ հայացքը կտրեց թղթից ու դիմեց մեծ եղբորը:

– Ես «Մայրենի–2» դասագրքում կարդացել եմ, որ կենդանիներին տրվում է *ի՞նչ* հարցը: Իսկ այստեղ կենդանիներն իրար հարցնում են՝ դու ո՞վ ես:

– Դրանք հեքիաթի հերոսներ են, այդ պատճառով էլ անձի նման են: Ասում ես՝ *ո՞վ՝* Վինի Թուխը, Պինգվին Վինը: Իսկ երբ նրանք սովորական կենդանիներ են, ապա ասում ես՝ *ի՞նչ՝* արջուկ, պինգվին:

Ի՞նչ լավ է մեծ եղբայր ունենալը:

**Գիտե՞ս, որ...**

Մի անգամ թշնամին հարձակվում է մեր երկրի վրա: Ավերում է մեր քաղաքներն ու գյուղերը, վանքերն ու գրադարանները: Երկու հայ կին այրվող վանքի գրադարանից փրկում են մի հսկայական գիրք ու բերում-հասցնում Էջմիածին: Այժմ այդ գիրքը պահվում է Երևանի Մատենադարանում*: Այդ գիրքը գրելու համար օգտագործել են 600 հորթի կաշի:

**8** Ուս

«Աչքի առաջ» խորագրի բառերով հորինի՛ր մի փոքրիկ, զվարթ պատմություն:

Օրինակ: Մի թագավոր կարագ շատ էր սիրում: Նա ծառային կառքով ուղարկում էր Երևան. այդ ժամանակ ավտոմեքենա չկար: Ծառան կարագը բարձում էր կառքը և շտապ վերադառնում թագավորի մոտ:

## ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես իմացա

Ես հասկացա

Ես զգացի



Ես որոշեցի

**Դու հասկացար, թե ժամանակի ընթացքում ինչքան բան է փոխվել, մինչև հին Էրեբունին դարձել է նոր Երևան: Այսօր դու էլ պետք է քո հոգատարությամբ, ուշադրությամբ այնպես անես, որ շարունակվի Երևանի գեղեցիկ կյանքը:**

* **Մատենադարան** – հին ձեռագիր և տպագիր գրքերի պահոց:



«Գիտե՞ս, որ...» խորագրի նյութը երեխաները կարդում են ինքնուրույն, ապա արտահայտում իրենց կարծիքները կարդացածի մասին: Ուսուցիչը լսում է բոլորին, ապա ընդհանրացնում աշակերտների եզրահանգումները:

Ուսուցիչը բացատրում է, որ հին ժամանակներում գրքեր պատրաստում էին կենդանիների մշակված կաշիներով:

### 4.4.10. Աշխատանք «Աչքի առաջ» բառերի շուրջ

Երեխաներին պետք է հորդորել, որ նրանք պատմությունը ստեղծեն հումորով, որ իրենց գրածը կատակային բնույթ ունենա, ինչպես օրինակում է: Սակայն՝ չպարտադրել:

Կարելի է «Աչքի առաջ» խորագրի բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝

**Եր-ան, թա-ավոր, միր-, ա-տոմեքենա:**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին և բառատետրում, կազմում բառակապակցություններ կամ նախադասություններ:

**Երևան**- վարդագույն Երևան, Երևանի հուշարձաններ

**թագավոր**- հզոր թագավոր, թագավորի զգեստ

**բարձել**- բեռները բարձել, բարձել ավտոմեքենան

**ավտոմեքենա**- մարդատար ավտոմեքենա, ավտոմեքենայի ղեկ

**կառք**- արագընթաց կառք, կառք նստել, ձիերը լծել կառքին

**կարագ**- դեղին կարագ, կարագը հալել, կարագով ճաշ եփել

### 4.4.11. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ (անդրադարձ և ամփոփում)

**Ես իմացա**, թե ով է կառուցել Էրեբունին, և այն ինչպես է դարձել Երևան)
**Ես հասկացա,** որ ավելի մեծ սիրով ու պատասխանատվությամբ կվերաբերվեմ նրան)
**Ես զգացի** սեր և հպարտություն:
**Ես որոշեցի** երբեք չաղտոտել իմ սիրելի քաղաքը, ծնողներիս հետ այցելել «Էրեբունի» թանգարան:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ խորագրի տակ ներկայացվող արտահայտությունների նկարագարդումները մեկ անգամ ևս երեխաներին հիշեցնում են Երևանի խորհրդանիշները և խորհրդանիշ դարձած հուշարձանները:

**Դասի ավարտին** երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրվածը, արտահայտում են իրենց կարծիքը: Ուսուցիչը կազմակերպում է փոքրիկ քննարկում:

## 4.5. ԳԻՐՔԸ (ԳԻՐՔԸ ՀԱՄՈԶՈՒՄ Է ԱՐԱՅԻՆ)

### 4.5.1. «Կարդալ կինոժապավենի կադրը» վարժություն

Վարժության նպատակն է հետաքրքրություն և կապ ստեղծել ուսուցանվող նյութի հետ:

Դասագրքերը փակ են: Ուսուցիչը կարող է նախապես A4 չափի թղթից պատրաստել կինոժապավենի տեսք ունեցող պաստառիկներ, որը կա՛մ կփակցվի գրատախտակին, կա՛մ էլ կցուցադրվի էլեկտրոնային տարբերակով: Ժապավենի վրա հերթականությամբ կլինեն **ժայռապատկերի, կավե սալիկի, տերևի, մագաղաթի, գրոտած թղթի, էկրանի** նկարներ: Աշակերտները, ուշադրությամբ դիտելով յուրաքանչյուր կադրում պատկերված նկարը, կփորձեն գուշակել, թե ինչ է պատմում նկարաշարը:

Այնուհետև ուսուցիչը կկարդա մուտքի պատուհանիկում գրված հանելուկը.

**Ինձ նկարել, փորել են քարերի վրա,**

**Հետո խազել են կավերի վրա,**

**Գրել են տերևի ու կաշվի վրա,**

**Փայտից ստացած ճերմակ թղթերին,**

**Հիմա տեսնում եք կապույտ էկրանին:**

Աշակերտները կփորձեն կապ գտնել կինոժապավենի կադրերի և մուտքի պատուհանիկի հանելուկի միջև: Այդ նպատակով ուսուցիչը կհանձնարարի աշակերտներին բացել դասագրքերը և լուռ, ապա բարձրաձայն կարդալ մուտքի պատուհանիկի հանելուկը և գտնել պատասխանը՝ ժապավենի հուշող կադրերի օգնությամբ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Համակարգչով շարում են,
Տպարանում կարում են,
Շապիկ ունի նա հագին,
Ուղեկիցն է մեր անգին:

Ճիշտ է՝ խոսել չի իմանում,
Բայց քո լեզվով քեզ հետ խոսում,
Շատ բաներ է նա քեզ ասում,
Տանը լինես, թե դպրոցում:

Երկար ճամփա է անցել,
Քարից, կավից հեռացել,
Թղթե շորերն է հագել,
Հիմա արդեն նորացել,
Չրո ու մեկ է դարձել:

Ես ունեմ թևեր,
Կհանեմ քեզ վեր,
Քո առաջ բաց եմ,
Քո մտքի հացն եմ:

Այս դասին դու.

• Կիմանաս, որ առարկաները լինում են եզակի և հոգնակի:

• Կարտահայտես քո վերաբերմունքը գրքի նկատմամբ:

• Կտեսնես, որ երբ գիրքը բացես, նա քեզ կասի՝ բարև:

## ԳԻՐՔԸ

Վաչագան Ա. Սարգսյան

Ինձ նկարել, փորել են քարերի վրա,
Հետո խազել են կավերի վրա,
Գրել են տերևի ու կաշվի վրա,
Փայտից ստացած ձերմակ թղթերին,
Հիմա տեսնում ես կապույտ էկրանին:

### ԳԻՐՔԸ ՀԱՄՈԶՈՒՄ Է ԱՐԱՅԻՆ

Երբ Արան դասագիրքը վերցրեց ձեռքը և բացեց, հանկարծ մեկն ասաց.

– Բարև՛:

Շուրջբոլորը ոչ ոք չկար: Արան մի քիչ զարմացավ, մի քիչ շփոթվեց, նույնիսկ մի քիչ վախեցավ, բայց ասաց.

– Բարև՛: Ո՞վ է:

– Մի՛ զարմացիր, ե՛ս եմ, քո ձեռքի գիրքը:

– Դու ի՞նչ է, խոսե՞լ գիտես:

– Ես խոսում եմ, երբ դու ինձ կարդում ես: Կարդա՛ ինձ, խնդրում եմ, ես շատ եմ սիրում զրուցել:

– Ես այնքան էլ չեմ սիրում զրուցել, այն էլ գրքի հետ,– պատասխանեց Արան:

– Շատ զարմանալի բաներ եմ պատմելու,– շարունակում էր համոզել գիրքը:

– Ինձ զարմացնելն այնքան էլ հեշտ չէ,– չէր հանձնվում Արան:

– Բայց դու արդեն զարմացար, որ ես խոսեցի,– ասաց գիրքը:

– Լա՛վ, ի՞նչ ես պատմելու,– մեղմացավ Արան,– ասա՛:

– Պատմելու եմ, թե ես ի՞նչ երկար ճանապարհ եմ անցել, մինչև այս տեսքն եմ ստացել ու հասել քեզ,– խորհրդավոր ձայնով ասաց գիրքը:

– Բայց քեզ ինչո՞ւ է թվում, թե դա ինձ հետաքրքիր է,– չէր համոզվում Արան:

73

### 4.5.2. Աշխատանք տեքստի վերնագրի և գլխագրի շուրջ

Ուսուցիչը հանձնարարում է կարդալ դասանյութի գլխագիրը և վերնագիրը:

Բոլոր կետերի վերաբերյալ աշակերտները արտահայտում են իրենց կարծիքները:

Առաջին կետի վերաբերյալ հավանական է, որ որևէ աշակերտ կարծիք չհայտնի, կամ, առավելագույնը, հարցեր տա, թե ինչ են եզակին ու հոգնակին: Իսկ հարցեր տալն արդեն իսկ լավ է, նշանակում է նրանք հետաքրքրված են դա իմանալու: Թեև կարող են լինել երեխաներ, որ գիտեն դա:

Երկրորդ կետը ինչ-որ չափով լուսաբանվեց արդեն դասի մուտքի ժամանակ:

Երրորդ կետի մասին երեխաները անպայման կարտահայտեն իրենց կարծիքները. նրանք գիտեն, թե գիրքն ինչ է:

Չորրորդ կետի շուրջ, որը ինչ-որ առումով իր մեջ «սադրանք» է պարունակում, անպայման կարծիքների տարափ կլինի: Պետք է լսել բոլոր կարծիքները և երեխաներին ուղղորդել տեքստը կարդալուն:

Նաև կարելի է անցկացնել քննարկում «Ձեր կարծիքով՝ գիրքը ի՞նչ ճանապարհ է անցել» հարցի շուրջ: Կարելի է օգտագործել ԳՈՒՍ աղյուսակը՝ նախնական պատկերացումները պարզելու նպատակով:

| Գիտեմ | Ուզում եմ իմանալ | Սովորեցի |
|---|---|---|
| | | |

Աշակերտները կկարդան աղյուսակի առաջին սյունակը և կխոսեն, թե ինչ գիտեն գրքի ստեղծման պատմության, անցած ճանապարհի մասին և ապա կլրացնեն ***գիտեմ*** սյունակը կպչուն թերթիկներով: Հաջորդիվ ուսուցիչը աշակերտներին հարցնում է, թե նրանք ինչ են ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացվում է ***ուզում եմ իմանալ*** սյունակը: Դասի վերջում լրացվում է ***սովորեցի*** սյունակը:

ԳՐԱԳԱՐԱԿ

ՑԱՆՑ ՈՒ ՀԱՄԱՑԱՆՑԸ

Համացանցով մտա մեծ ծով,
Ձուկ բռնեցի մկան ցանցով,
Ձկան պոչի մի հարվածից
Ջուրը լցվեց համակարգիչ:

Հետո հոսեց գետի նման,
Տունը լցրեց ջուր ու ավազ,
Քշեց բերեց ձկներ վազան,
Տունս դարձավ ձկնավազան:

Համացանցը անջատեցի,
Բայց չի լինում գետն անջատել,
Փրկարարներ շուտ կանչեցի,
Ինձ այդ ցանցից ազատեցին:

– Չգիտեմ: Մի բան ասեմ, եթե հետաքրքրեց, կշարունակեմ: Մարդիկ շատ հին ժամանակներում գրում էին պալերի վրա,– ասաց գիրքն ու, սպասողական դիրք բռնելով, լռեց:

– Պալն ի՞նչ է,– զարմացավ Արան:

– Հետաքրքրե՞ց,– ժպտաց գիրքը:

– Այո՛,– խոստովանեց Արան:

– Ուրեմն՝ պատմեմ: Պալերը հսկայական քարեր են, ժայռի կտորներ: Մարդիկ հարթ պալերի վրա գրում ու նկարում էին այ այսպես.



Այդպիսի պալեր այսօր էլ կարող ենք տեսնել Հայաստանի լեռների լանջերին:

**ԱՉՔԻ ՍՈՒԱՋ**

*ճանապարհ*
*խորհրդավոր*
*շուրջբոլորը*

## Հարցեր

1. Ո՞ւմ հետ էր զրուցում Արան:
2. Ինչո՞ւ զարմացավ Արան:
3. Ե՞րբ է խոսում գիրքը:
4. Ինչո՞ւ էր գիրքը չարաճճիորեն ժպտում:
5. Քո կարծիքով՝ ինչո՞ւ էր գիրքն ուզում, որ Արան իր հետ զրուցի:

## Առաջադրանքներ

1 Տեքստից օգտվելով՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած բառերը:

- Արան մի քիչ ____, մի քիչ ____, նույնիսկ մի քիչ ____:
- Մարդիկ շատ հին ժամանակներում գրում էին ____ վրա:
- Պալերը հսկայական ____ են, ժայռի ____:

74

### 4.5.3. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Առաջին ընթերցման ժամանակ տեքստի բովանդակության ընկալումն ապահովելու համար կարելի է բացատրել նորածանոթ բառերի իմաստը նախօրոք.

**պալ** - հսկայական քարեր, ժայռի կտորներ:

Առաջարկվում է նախ տեքստը կարդալ լուռ, ապա բարձրաձայն՝ ուսուցչի կամ լավ ընթերցող աշակերտների կողմից։

### 4.5.4. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

- Ճի՞շտ էին արդյոք գրքի անցած ճանապարհի մասին ձեր ունեցած տեղեկությունները։ (Երեխաները պատմում են իրենց իմացածի և սովորածի մասին)
- Ու՞մ հետ էր զրուցում Արան։ (Արան զրուցում էր Գրքի հետ)
- Ինչու՞ զարմացավ Արան։ (Արան զարմացավ, որովհետև շուրջբոլորը ոչ ոք չկար, և իրեն մեկը բարևեց)
- Ե՞րբ է խոսում գիրքը։ (Գիրքը խոսում է այն ժամանակ, երբ իրեն կարդում են)
- Ի՞նչ պատմեց Գիրքը Արային։ (Գիրքը պատմեց, թե ինչ երկար ճանապարհ է անցել, մինչև այս տեսքն է ստացել ու հասել Արային)
- Պալն ի՞նչ է։ (Պալերը հսկայական քարեր են, ժայռի կտորներ, քարաժայռեր)
- Ինչո՞ւ էր Գիրքը չարաճճիորեն ժպտում։ (Գիրքը չարաճճիորեն ժպտում էր, որովհետև շարժել էր Արայի հետաքրքրությունը)
- Քո կարծիքով՝ ինչու՞ էր Գիրքն ուզում, որ Արան իր հետ զրուցի։ (Գիրքն ուզում էր, որ Արան իր հետ զրուցի, որ կարդա իրեն, որ Արան դառնա ավելի խելացի ու ընթերցասեր։ Գիրքն ուզում էր, որ Արան իր հետ զրուցի, որ իմանա իր ստեղծման, երկար ճանապարհի պատմությունը և խնամքով վերաբերվի իրեն)
- Տեքստից գտի՛ր և կարդա՛ համապատասխան տողերը.

  Ա. Ի՞նչ էր սիրում Գիրքը։ (Կարդա ինձ, խնդրում եմ, ես շատ եմ սիրում զրուցել)

  Բ. Ի՞նչ չէր սիրում Արան։ (Ես այնքան էլ չեմ սիրում զրուցել, այն էլ գրքի հետ)

### 4.5.5. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ.

**խոր-րդավոր, հար-, ճանապար-, խն-րել, բար- :**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին և բառատետրում, կազմում բառակապակցություններ։

**Խորհրդավոր**- խորհրդավոր ընթրիք, խորհրդավոր խոսել

**Հարթ**- հարթ սեղան, հարթ ճանապարհ

**Ճանապարհ**- ճանապարհ բացել, ճանապարհի քար

**Խնդրել**- խնդրել գիրք, նորից խնդրել

**Բարև**- բարև աշխարհին, բարև ասել։

### 4.5.6. Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ

**Առաջադրանք 1**. Օգտվելով տեքստից՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած բառերը։

Առաջադրանքը նպաստում է, որ երեխան ավելի ուշադիր կարդա տեքստը և, գտնելով համապատասխան տողերը, կարողանա ըստ դրանց լրացնել նախադասությունները:

Արան մի քիչ (զարմացավ), մի քիչ (շփոթվեց), նույնիսկ մի քիչ (վախեցավ):

Մարդիկ շատ հին ժամանակներում գրում էին (պալերի) վրա:

Պալերը հսկայական (քարեր) են, ժայռերի (կտորներ):

**2** Շարունակի՛ր ըստ օրինակների:

| | |
|---|---|
| **լանջ – լանջեր** | **ձանապարհ – ձանապարհներ** |
| **քար –** | **կտոր –** |
| **պալ –** | **ժամանակ –** |
| **բառ –** | **կաշի –** |
| **սար –** | **տերև –** |

Դու նկատեցիր, որ.

- Առարկան կարող է լինել մեկ հատ՝ **եզակի թվով**:
- Առարկան կարող է լինել մեկից ավելի՝ **հոգնակի թվով**:
- Միավանկ բառերի հոգնակին ստացվում է բառին **-եր** մասնիկ ավելացնելով:
- Բազմավանկ բառերի հոգնակին ստացվում է բառին **-ներ** մասնիկ ավելացնելով:

**3** Երգից դո՛ւրս գրիր եզակի և հոգնակի թվով առարկա ցույց տվող բառեր:

**ԵԶԱԿԻԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻԻ ԵՐԳԸ**

Մեկը՝ եզակի,
Շատը՝ հոգնակի,
Մի սիրտ՝ եզակի,
Սրտեր՝ հոգնակի,
Ծաղիկ՝ եզակի,
Ծաղիկներ՝ հոգնակի,
Շուշաններ, մեխակներ,
Զանգակներ՝ հոգնակի:
Միավանկը՝ **-եր**,
Բազմավանկը՝ **-ներ**,
Անշուշտ կան նաև
Բացառություններ:

**4** Ըստ օրինակի գրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում:




**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Ես իմացա _____

Ես կարողացա _____

Ինձ զարմացրեց _____

### 4.5.7. Աշխատանք հոգնակերտ մասնիկների շուրջ

**Առաջադրանք 2** . Շարունակի՛ր ըստ օրինակների.

լանջ - լանջ**եր**

քար - քարեր

պալ - պալեր

բառ - բառեր

սար - սարեր

ճանապարհ - ճանապարհ**ներ**

կտոր - կտորներ

ժամանակ - ժամանակներ

կաշի - կաշիներ

տերև - տերևներ

Բառաշարքերը լրացնելուց հետո ուսուցիչը հարցնում է երեխաներին, թե նրանք ինչ օրինաչափություն նկատեցին: Ինչո՞ւ բառերի մի մասին ավելացրին **-եր** մասնիկը, մյուս խմբին՝ **-ներ** մասնիկը: Եթե դժվարանան պատասխանել, կարելի է տալ հուշող հարց. ինչպիսի՞ բառեր էին **-եր** ստացողները, ինչպիսի՞ բառեր էին **-ներ** ստացողները: Կարող են հնչել տարբեր պատասխաններ: Ուսուցիչը շարունակում է հուշող հարցադրումը, առաջարկելով, որ երեխաները բառերը վանկատեն: Երեխաները տեսնում են, որ միավանկ բառերին ավելացել է **-եր** մասնիկը, իսկ բազմավանկ բառերին՝ **-ներ** մասնիկը:

Դու նկատեցիր, որ.

- Առարկան կարող է լինել մեկ հատ՝ եզակի թվով:
- Առարկան կարող է լինել մեկից ավելի՝ հոգնակի թվով:
- Միավանկ բառերի հոգնակին ստացվում է բառին **-եր** մասնիկ ավելացնելով:
- Բազմավանկ բառերի հոգնակին ստացվում է բառին **-ներ** մասնիկ ավելացնելով:

Ուսուցիչը պաստառի օգնությամբ բացատրում է հոգնակիի կազմությունը, որից հետո ընթերցում են գրքում գրվածը:

**Եզակիի և հոգնակիի երգը**

*Մեկը՝ եզակի,*

*Շատը՝ հոգնակի,*

*Մի սիրտ՝ եզակի,*

*Սրտեր՝ հոգնակի,*

*Ծաղիկ՝ եզակի,*

*Ծաղիկներ՝ հոգնակի,*

*Շուշաններ, մեխակներ,*

*Զանգակներ՝ հոգնակի:*

*Միավանկը՝ **-եր**,*

*Բազմավանկը՝ **-ներ**,*

*Անշուշտ կան նաև*

*Բացառություններ:*

Նախ լուռ, ապա բարձրաձայն ընթերցում են երգը:

**Առաջադրանք** 4. Ըստ օրինակի գրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում:

Երեխաները գրում են, թե ինչ են տեսնում նկարներում: Ինքնաբերաբար ստացվում են բառերի եզակին ու հոգնակին:

ձի-ձի**եր**

սեղան-սեղան**ներ**

### 4.5.8. Դասից քաղած իմ պտուղները

Երեխաները անդրադառնում են **ես իմացա, ես կարողացա, ինձ զարմացրեց** դասի արդյունքները հանրագումարի բերող արտահայտություններին, արտահայտում են իրենց կարծիքները, թե ինչ գիտելիքներ, ինչ կարողություններ, հմտություններ են ձեռք բերել:

Տեսնում են գլխագրի կետերի և քաղած պտուղների կապը: Նշում են, որ իմացան, թե ինչ են եզակին ու հոգնակին, կարողացան կազմել բառերի հոգնակին, սովորեցին ԵԶԱԿԻԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻԻ ԵՐԳԸ, զարմացան, որ գիրքն էլ խոսել, զրուցել գիտի, և այլն:

## 4.6. ԳԻՐՔԸ (ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ)

### 4.6.1. «Այո-ոչ» խաղը

Գիտենք, որ երեխաները սիրում են գաղտնիքներ և ցանկանում են բոպեներ առաջ բացահայտել դրանք: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց և շարժում միտքը: Հետևաբար՝ ուսուցիչը կարող է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.

«Ես մտապահել եմ մի առարկա, որը մեր այսօրվա դասի հերոսներից է: Դուք պետք է ինձ հարցեր տաք: Ես հարցերին կարող եմ պատասխանել միայն «այո» կամ

«ոչ»: Դուք պետք է հարցերն այնպես ձևակերպեք, որ «այո» կամ «ոչ» պատասխանները ձեզ օգնեն հասկանալու, թե ինչ եմ պահել մտքիս մեջ»:

Այս հնարը կօգնի, որ երեխաները գտնեն մտքում պահած բառը՝ ԱՅԲՈՒԲԵՆ:

Մի քանի խոսք ԱՅՈ–ՈՉ խաղի մասին

Մեկը մտապահում է որևէ առարկա: Մյուսները հարցերի միջոցով պետք է գտնեն, թե ինչ առարկա (բառ) է մտապահվել:

Բառը մտապահողը պատասխանում է միայն ԱՅՈ կամ ՈՉ: Մյուսները զանազան հարցեր տալով պետք է գտնեն մտապահված բառը: Եթե այնպիսի հարց է տրվում, որ հնարավոր չէ պատասխանել այո կամ ոչ, ապա հարց տվողը պետք է վերաձևակերպի հարցը: Աստիճանաբար երեխաների մտքին պետք է հասցնել այն, որ նրանք նվազագույն հարցերի միջոցով կամ ժամանակի գործոնը հաշվի առնելով գտնեն մտապահված բառը: Ուստի, մի քանի փորձից հետո, երեխաների հետ պետք է մշակվի մտապահված բառը գտնելու օրինակելի քայլաշար՝ կենդանի՞ է, չորքոտանի՞ է, ընտանի՞ է, ջրո՞ւմ է ապրում, մա՞րդ է, զինվորակա՞ն է, պաշտոնյա՞ է, արվեստագե՞տ է, շինարա՞ր է, բո՞ւյս է, ի՞ր է, ուտելի՞ է, որտե՞ղ է ապրում, կա՞ արդյոք դասարանում, դասարանի ա՞ջ մասում է, մարդու ստեղծա՞ծ է, գործի՞ք է, կառո՞ւյց է և այլն:

Խաղը սովորեցնում է դասակարգել, համակարգել և վերլուծել տեղեկույթը, զարգացնում է ուժեղ, սուր հարցեր տալու ունակությունը, որոնք նեղացնում են փնտրտուքի շրջանը:

Խաղի ընթացքում երեխաները սովորում են լսել ընկերներին, մտապահել նրանց ասածը, չտալ կրկնվող հարցեր, ճիշտ հետևություններ անել պատասխաններից, նորանոր հատկանիշներ բացահայտելով անընդհատ նեղացնել փնտրտուքի շրջանակը և, ի վերջո, գտնել մտապահված առարկան:

Պետք է պայմանավորվել, թե հարցերից հետո քանի կոնկրետ անվանում կարելի է տալ՝ երկու, երեք, չորս և այլն, ինչպես նաև բառի հոմանիշը գտնելը համարվո՞ւմ է ճիշտ պատասխան, թե՞ ոչ:

Դիտարկենք մի օրինակ: Ենթադրենք՝ մտապահվել է **ցանկապատ** բառը:

**Հարցեր – պատասխաններ.**
Շնչավո՞ր է – ոչ:
Ուտելի՞ է – ոչ:
Դասարանում կա՞ – ոչ:
Պի՞նդ նյութից է պատրաստված – այո:
Մա՞րդն է ստեղծում – այո:
Գործի՞ք է – ոչ:
Կառո՞ւյց է – այո:
Մարդիկ ապրո՞ւմ են դրա ներսում – ոչ:
Պաշտպանվելու համա՞ր է – այո:
Ճանապա՞րհ է – ոչ:

Պարի՞սպ է – այո:
Ցանկապա՞տն է – այո:

Այս դասին դու.
• Կիմանաս եզակի և հոգնակի թվով առարկաներին տրվող հարցերը:
• Կբացահայտես, թե ինչպես է գիրքը փոփոխվել ժամանակի ընթացքում:
• Կշարունակես ծանոթանալ գրքի անցած ճանապարհին:

## ԳԻՐՔԸ

### ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Գիրքը հարմար տեղավորվեց Արայի ձեռքերի մեջ և մի շնչով շարունակեց.

– Հետո մարդիկ սկսեցին կավից* սալիկներ պատրաստել և սուր փայտիկներով գրել թաց սալիկների վրա: Կավե սալիկները չորացնում էին, և «գիրքը» պատրաստ էր:

– Երևի դժվար է եղել այդպիսի «գրքերով» դպրոց գնալը,– սրամտեց Արան:



– Այո,– ծիծաղը զսպելով՝ շարունակեց գիրքը:– Սակայն մարդիկ սովորեցին գրել նաև տերևների, ծառերի կեղևների, պապիրուսների* վրա: Սկսեցին գրել նաև փոքրիկ տախտակների վրա:



Գիրքը զգաց, որ Արան ուշադիր լսում է իրեն ու շարունակեց.

– Մարդիկ սկսեցին գրել նաև կենդանիների կաշվի վրա: Ոչխարների, այծերի, հորթերի կաշին լավ մաքրում էին, հարթեցնում, հավասար մասերի բաժանում և փետուրե գրիչներով գրում: Այդպիսի կաշիներն անվանում էին **մագաղաթ**: Հետո կարում էին այդ էջերը, կազմում, և ձեռագիր գիրքը պատրաստ էր:

– Մենք է՞լ ենք այդպիսի գրքեր գրել,– զարմանքով հարցրեց Արան:

* **Կավ** – հողի նման նյութ, որը թրջելիս դառնում է խմորի նման: Նրանից պատրաստում են ամաններ, կարասներ և այլն:
* **Պապիրուս** – պապիրուս բույսից պատրաստված թղթանման նյութ:

### 4.6.2. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Ուսուցչի հրահանգով աշակերտները բացում են դասագիրքը, լուռ կարդում են դասանյութի գլխագիրը և վերնագիրը: Հասկանում են, որ պատմության հերոսներից մեկը հենց ԱՅԲՈՒԲԵՆՆ է:

Որպեսզի աշակերտներն ավելի լավ ընկալեն տեքստի իմաստը, ուսուցիչը այն ընթերցում է հատվածներով՝ կատարելով նորածանոթ բառերի բացատրություն:

**Կավ** - հողի նման նյութ, որը թրջելիս դառնում է խմորի կամ պլաստիլինի նման: Նրանից պատրաստում են ամաններ, կարասներ, կժեր և այլն:

**Հատված 1.** (Պատմվածքի սկզբից մինչև «Սկսեցին գրել նաև փոքրիկ տախտակ-ների վրա» նախադասությունը)

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է գրքի առաջին հատվածի նկարազարդման վրա և առաջադրում է հարցեր.

• Ինչպե՞ս կավե սալիկները գիրք դարձան:

(Մարդիկ սկսեցին կավից սալիկներ պատրաստել և սուր փայտիկներով գրել թաց սալիկների վրա: Դրանք չորացնելուց հետո «գիրքը» պատրաստ էր)

• Մարդիկ էլ ինչերի՞ վրա սովորեցին գրել: (Մարդիկ սովորեցին գրել նաև տերևների վրա, ծառերի կեղևների՝ պապիրուսների վրա, նաև՝ փոքրիկ տախտակների վրա)

**ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ**

Հավերժության մեր ճամփան
Այբուբենն է մեսրոպյան,
Ուժ է տալիս մեր բազկին,
Միասնություն՝ մեր ազգին:

Տապանն է մեր փրկության,
Ապաստանը հայության,
Նա տոնն է մեր գոյության,
Պահապանն է էության:

Նա աղոթք է մեր հոգում,
Ահեղ սուր է պայքարի,
Նրանով է նորոգվում
Տաճարը մեր քանքարի:

– Իհա՛րկե: Առաջին անգամ հայերեն այդպիսի գիրք գրել է Մեսրոպ Մաշտոցը: Գիտե՞ս, թե ով է նա:

– Հայոց տառերն ստեղծողը,– հպարտությամբ ասաց Արան:

– Այո՛: Մեսրոպ Մաշտոցը մեծ ուսուցիչ էր, մեծ հանճար: Նա մեր առաջին ուսուցիչն էր: Նրա ստեղծած այբուբենը մինչև այսօր ծառայում է մեզ: Այդ տառերը դու հիմա տեսնում ես իմ էջերում:

– Ես մի քառատող գիտեմ հայոց այբուբենի մասին,– ուրախ ասաց Արան.

Հավերժության մեր ճամփան
Այբուբենն է մեսրոպյան,
Ուժ է տալիս մեր բազկին,
Միասնություն՝ մեր ազգին:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**
*երևի, կեղև*

– Կեցցե՛ս,– հիմա էլ գիրքը զարմացավ:
Նույնիսկ մի քիչ հուզվեց:

## Հարցեր

1. Թվարկի՛ր՝ ինչերի՞ վրա էին գրում մարդիկ:
2. Ինչպե՞ս էին մարդիկ գրում կավե սալիկների վրա, կարդա՛:
3. Ինչպե՞ս էր պատրաստվում ձեռագիր գիրքը:
4. Ինչո՞ւ հպարտացավ Արան:
5. Ինչպե՞ս է քառատողում բնութագրվում հայոց այբուբենը:
6. Ո՞վ էր Մեսրոպ Մաշտոցը:

vachagan.am

Դիտի՛ր «Հայոց այբուբեն» («Տառահանդես») երգի տեսահոլովակը:
Քո սովորած ո՞ր դասը հիշեցրեց քեզ այս նկարը:



**Հատված 2.** («Գիրքը զգաց, որ Արան ուշադիր լսում է իրեն ու շարունակեց» նախադասությունից մինչև «-Հայոց տառեր ստեղծողը,- հպարտությամբ ասաց Արան» նախադասությունը)

### 4.6.3. Ինչպե՞ս մարդիկ ձեռագիր գիրքը ստացան

(Մարդիկ ոչխարների, այծերի, հորթերի կաշին լավ մաքրում էին, հարթեցնում, հավասար մասերի բաժանում և փետուրե գրիչներով գրում: Հետո կարում էին այդ էջերը, կազմում և այդպիսով ստանում ձեռագիր գիրքը: )

• Մագաղաթ ի՞նչն են անվանում:

(Կենդանիների մշակված կաշին անվանում են **մագաղաթ**)

• Ո՞վ է առաջին անգամ հայերեն այդպիսի գիրք գրել:

(Առաջին անգամ հայերեն այդպիսի գիրք է գրել Մեսրոպ Մաշտոցը)

**Հատված 3.** («Այո՛» նախադասությունից մինչև պատմվածքի վերջը)

• Արային ի՞նչ պատմեց Գիրքը Մեսրոպ Մաշտոցի մասին:

(Գիրքը պատմեց, որ Մեսրոպ Մաշտոցը մեծ հերոս էր ու մեծ հանճար, նա մեր առաջին ուսուցիչն էր: Նրա ստեղծած այբուբենը մինչև այսօր ծառայում է մեզ)

• Ինչու՞ գիրքը զարմացավ և հուզվեց: (Գիրքը զարմացավ և հուզվեց, երբ Արան հայոց այբուբենի մասին քառատող արտասանեց)

### 4.6.4. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

• Թվարկիր՝ ինչերի՞ վրա սկսեցին գրել մարդիկ: (Մարդիկ սկսեցին գրել կավե սալիկների, տերևների, ծառերի կեղևների, պապիրուսների, կենդանիների կաշվի՝ մագաղաթի վրա)

• Ինչպե՞ս էին մարդիկ գրում կավե սալիկների վրա, կարդա՛: (Հետո մարդիկ սկսեցին կավից սալիկներ պատրաստել և սուր փայտիկներով գրել թաց սալիկների վրա: Կավե սալիկները չորացնում էին, և «գիրքը» պատրաստ էր)

• Ինչպե՞ս էր պատրաստվում ձեռագիր գիրքը: Կարդա՛: (Ոչխարների, այծերի, հորթերի կաշին լավ մաքրում էին, հարթեցնում, հավասար մասերի բաժանում և փետուրե գրիչներով գրում: Այդպիսի կաշիները անվանում էին մագաղաթ: Հետո կարում էին այդ էջերը, կազմում, և ձեռագիր գիրքը պատրաստ էր)

• Ինչո՞ւ հպարտացավ Արան: (Արան հպարտացավ, որովհետև գիտեր, թե ով է ստեղծել հայոց տառերը)

• Ինչպե՞ս է քառատողում բնութագրվում հայոց այբուբենը: (Մեսրոպյան հայոց այբուբեն)

### 4.6.5. Դերերով ընթերցանություն՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով

Ուսուցչի առաջարկով աշակերտները կարող են տեքստը կարդալ դերերով, Արայի և Գրքի երկխոսությունը՝ պահպանելով կետադրական նշանները։ Կարդալ այնպես, որ զգացվեն Գրքի անկեղծ զարմանքն ու հուզմունքը և Արայի հպարտությունը։

### 4.6.6. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» բառերը գրել էլեկտրոնային կամ սովորական գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ.

**եր - ի, կեղ - :**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին կամ բառատետրում, կազմում բառակապակցություններ և նախադասություններ։

**Երևի** – երևի կգնամ, երևի կկարդամ

Այսօր երևի կգնամ հյուր։

**Կեղև**- ծառի կեղև, կեղևի հաստություն

Ծառի կեղևը բարակ էր։

Դասագրքի 77-րդ էջի վերջին նկարում Մեսրոպ Մաշտոցն է իր ստեղծած տառերի բանակով: Երեխաներին առաջարկվում է QR-կոդի միջոցով դիտել Հայոց այբուբենին նվիրված գեղեցիկ տեսահոլովակը:

Այս նկարը հիշեցնում է «Տա՞ռն էլ գլխարկ ունենա» դասը, որտեղ Մեսրոպ Մաշտոցը ստեղծում էր հայերենի տառերը:

Աշակերտների ուշադրության կենտրոնացմանը, տեքստի բովանդակության ավելի լավ ըմբռնմանն է նպատակաուղղված այս առաջադրանքը: Ինչպես նաև գիտելիքներ է հաղորդում և վերաբերմունք ձևավորում:

Պապիրուսը *տերևների, ծառերի կեղևների* վրա գրված գիրք է:
Մագաղաթը *կենդանիների մշակված կաշիների* վրա գրված ձեռագիր գիրք է:

Այս առաջադրանքը կարելի է կազմակերպել որպես զույգերով աշխատանք: Երեխաները առաջադրանքը նախ կատարում են բանավոր, ապա գրավոր։

## Առաջադրանքներ

**1** Օգտվելով տեքստից՝ շարունակի՛ր նախադասությունները:

- **Մարդիկ սովորեցին գրել** _____:
- **Մագաղաթը** _____:

### ԿԱՐԴԱ՛ ԵՎ ՍՈՎՈՐԻ՛Ր

երգիչ – **ո՞վ** երգիչներ – **ովքե՞ր** | պատ – **ի՞նչ** պատեր – **ինչե՞ր**

Դու նկատեցիր, որ **եզակի թվով** առարկաները պատասխանում են **ո՞վ, ի՞նչ** հարցերին, **հոգնակի թվով** առարկաները պատասխանում են **ովքե՞ր, ինչե՞ր** հարցերին:

**2** **Նկարիչ, սագ, ընթերցող, կարապ, ուսուցիչ, մատիտ, սար, վարորդ, հող, աշակերտ** բառերը դարձրո՛ւ հոգնակի և գրի՛ր պահանջվող հարցերը:

Օրինակ՝ **սագ (ի՞նչ) – սագեր (ինչե՞ր),**
**ընթերցող (ո՞վ) – ընթերցողներ (ովքե՞ր)**:

### ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես սովորեցի _____ Ես իմացա _____ Ինձ զարմացրեց _____



### 4.6.7. Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ

**Առաջադրանք** 1. Օգտվելով տեքստից՝ շարունակի՛ր նախադասությունները:

### 4.6.8. Կարդա՛ և սովորի՛ր

Այս խորագրով մատչելի, խաղային եղանակներով, գործնական ճանապարհով բացատրվում են ծրագրով նախատեսված լեզվական հասկացությունները: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է եզակի և հոգնակի թվով առարկաներին տրվող հարցերին:

Դու նկատեցիր, որ

- եզակի թվով առարկաները պատասխանում են *ո՞վ, ի՞նչ* հարցերին,
- հոգնակի թվով առարկաները պատասխանում են *ովքե՞ր, ինչե՞ր* հարցերին:

Այս առաջադրանքը ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, որպեսզի նրանք նախ կարդան լուռ, ապա՝ բարձրաձայն:

Այնուհետև հարցերի օգնությամբ պարզաբանում և ամրապնդում է աշակերտների սովորածը:

**Առաջադրանք 2. Նկարիչ, սագ, ընթերցող, կարապ, ուսուցիչ, մատիտ, սար, վարորդ, հող, աշակերտ** բառերը դարձրո՛ւ հոգնակի և գրի՛ր պահանջվող հարցերը:

Գրատախտակին և տետրերում կարելի է գծել աղյուսակ, այնուհետև գրատախտակի մոտ կանչելով երկու աշակերտի, հանձնարարել նրանց, որ տրված բառերից ընտրեն մեկական բառ և լրացնեն աղյուսակի համապատասխան սյունակում: Այդպես մինչև բառերի ավարտը:

| Ի՞նչ – ինչե՞ր | Ո՞վ – ովքե՞ր |
|---|---|
| սագ - սագեր | ընթերցող - ընթերցողներ |
| սեղան - սեղաններ | նկարիչ - նկարիչներ |
| բաժակ - բաժակներ | ուսուցիչ - ուսուցիչներ |
| հող - հողեր | պարող - պարողներ |
| սար - սարեր | վարորդ - վարորդներ |
| կարապ - կարապներ | աշակերտ - աշակերտներ |

### 4.6.9. Դասից քաղած իմ պտուղները

Ես սովորեցի _____

Ես իմացա _____

Ինձ զարմացրեց _____

Դասի վերջում անդրադարձ է կատարվում ամփոփիչ նախադասություններին: Երեխաները արտահայտում են իրենց կարծիքները, լրացնում կիսատ նախադասությունները:

## 4.7. ԳԻՐՔԸ (ԱՅՍՕՐՎԱ ԳԻՐՔԸ)

### 4.7.1. «Գուշակել դասի վերնագիրը» վարժությունը

Վարժության նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրությունը և կապ ստեղծել ուսուցանվող նյութի հետ:

Դասագրքերը փակ են: Ուսուցիչը կարող է նախապես թերթիկների վրա գրել դասի վերնագրի քանդված վանկերը՝ խառը դասավորված.

**Այս գիր վա քը օր**

Նա առաջարկում է աշակերտներին բառերի քանդված վանկերը ճիշտ դասավորելով՝ գուշակել դասի վերնագիրը:

**ՇՈՒՆԸ, ԽՈԶԸ ԵՎ ՀԱՎԸ**

Մի օր շունը պարծեցավ.

– Բոլորը գիտեն, թե ինչ համով բան է ստացվում, երբ իմ անունը հակառակ ենք կարդում՝ **շուն – նուշ**:

– Ես էլ բույս եմ դառնում,– խռխռաց խոզը՝ **խոզ – զոխ**:

– Մի կում ջուր եմ դառնում, երբ կատու եմ տեսնում,– ճստճստաց մուկը՝ **մուկ – կում**:

– Վա՜հ, զարմացրիք,– կչկչաց հավը:– Բա ես ի՞նչ ասեմ՝ **հավ – վահ**:

– Ի՞նչ եք զուր տեղը հպարտանում,– ասաց ջրարջը:– Ինձ նման անուն կունենան. որ կողմից կարդաս, նույնն է՝ **ջրարջ**:

Կենդանիների վեճը լսում էին **ԱՆՆԱ, ՆԱՋԱՆ** անուններով աղջիկները և **ՏԱՃԱՏ** անունով տղան:

Նրանք ժպտում էին: Ինչո՞ւ:



Այս դասին դու.

• Կբացահայտես, որ այսօրվա գրքերը կարող են նաև թղթից չլինել:

• Կհասկանաս, որ գիրքը քո լավ բարեկամն է և խորհրդատուն:

• Կիմանաս, թե ինչպես երջանկացնել գրքին:

## ԳԻՐՔԸ

### ԱՅՍՕՐՎԱ ԳԻՐՔԸ

Գիրքը տեսավ, որ ինքն արդեն հարազատ է դարձել Արային, ուրախացավ ու շարունակեց.

– Հետագայում մարդիկ սովորեցին փայտից թուղթ ստանալ: Փետուրե գրիչներով գրում էին այդ թղթերի վրա, թղթերը կարում իրար, կազմում, և գիրքը պատրաստ էր: Սակայն մի գիրքը ձեռքով գրելու համար շատ ժամանակ էր պետք: Մարդիկ մտածեցին ու ստեղծեցին հատուկ մեքենաներ, որոնց օգնությամբ գրքերը սկսեցին տպագրվել թղթերի վրա՝ տպարաններում: Դրանք այն գրքերն են, որ դուք հիմա կարդում եք: Դրանցից մեկն էլ ես եմ:

Արան, որը համբերատար լսում էր, ասաց.

– Բայց ես ուրիշ տեսակի գրքեր էլ գիտեմ: Դրանք թղթից չեն:

– Այո՛,– հոգոց հանեց գիրքը:– Այսօր արդեն ստեղծվում են էլեկտրոնային կրիչներով գրքեր, որոնք հնարավոր է կարդալ համակարգչով, հեռախոսով, պլանշետով, էլեկտրոնային գրքով:

– Ես այդ գրքերն էլ եմ սիրում,– ժպտալով ասաց Արան:

Գիրքը կարծես տխրեց, լուռ էր:

– Սակայն քեզ ամենաշատն եմ սիրում,– գոչեց Արան ու գիրքը սեղմեց կրծքին:

Դասը շարունակվում է գլխագրի ընթերցմամբ: Երեխաները կարդում են գլխագրի կետերը, արտահայտում իրենց կարծիքները: Բացահայտում են, թե ինչպիսի գրքեր կան և ինչպես երջանիկ դարձնել գրքերին:

### 4.7.2. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Առաջին ընթերցման ժամանակ տեքստի բովանդակության ընկալումն ապահովելու համար կարելի է բացատրել նորածանոթ բառերի իմաստը նախօրոք:

**Հոգոց հանել** – խոր շունչ քաշելով արտաշնչել, հառաչել:

Առաջարկվում է նախ տեքստը կարդալ լուռ, ապա բարձրաձայն՝ ուսուցչի կամ լավ ընթերցող աշակերտների կողմից:

### 4.7.3. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

- Ճի՞շտ էին արդյոք գրքի անցած ճանապարհի մասին ձեր իմացած տեղեկությունները:

- Ո՞ւմ հետ էր շարունակում զրուցել Արան: (Արան շարունակում էր զրուցել Գրքի հետ)

- Ինչո՞ւ Գիրքն ուրախացավ ու շարունակեց իր պատմությունը: (Գիրքն ուրախացավ, որովհետև ինքն արդեն հարազատ էր դարձել Արային)

- Մարդիկ ինչպե՞ս պատրաստեցին ձեռագիր գիրքը: Կարդա՛ համապատասխան տողերը: (Մարդիկ սովորեցին փայտից թուղթ ստանալ: Փետուրե գրիչներով գրում էին այդ թղթի վրա, թղթերը կարում իրար, կազմում, և գիրքը պատրաստ էր)

- Մարդիկ ինչո՞ւ ստեղծեցին տպագրական սարքեր: (Գիրքը ձեռքով գրելու համար շատ ժամանակ էր պահանջվում: Մարդիկ հատուկ մեքենաներ ստեղծեցին, որոնց օգնությամբ գրքերը սկսեցին տպագրել թղթերի վրա՝ տպարաններում)

- Արան ուրիշ տեսակի ի՞նչ գրքեր գիտեր: (Էլեկտրոնային կրիչներով գրքեր, որոնք կարդում են համակարգչով, հեռախոսով, պլանշետով, էլեկտրոնային գրքով)

- Քո կարծիքով՝ ինչո՞ւ Գիրքը տխրեց: (Գիրքը տխրեց, որովհետև Արան սիրում էր էլեկտրոնային գրքերը)

- Քո կարծիքով՝ ինչո՞ւ Գիրքը հոգոց հանեց: (Գիրքը հոգոց հանեց, որովհետև իրեն փոխարինելու էին եկել էլեկտրոնային գրքերը)

**ԳՐԱԳԱՐԱԿ** **ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ**

Գրիգորի գրքերը գրկած՝
Գագիկը գոհ-գոհ գնաց:

Գիրք է Քաջիկը գնել,
Բաց է արել ու քնել:

Քեռին գեղեցիկ գիրք կգնի,
Քնարը գիրքը կգրկի, կքնի:

– Ես մի լավ գիրք կգնեմ:
– Ես էլ հանգիստ կքնեմ:

## Հարցեր

1. Ինչպե՞ս էին պատրաստում ձեռագիր գիրքը:
2. Մարդիկ ինչո՞ւ ստեղծեցին տպագրական սարքեր:
3. Արան ուրիշ տեսակի ի՞նչ գրքեր գիտեր:
4. Քո կարծիքով՝ ինչո՞ւ գիրքը տխրեց:

## Առաջադրանքներ

1 Կարդա՛ և լրացրո՛ւ աղյուսակը:

| Ինչպիսի՞ գրքեր ես սիրում կարդալ | Ո՞րն է քո ամենասիրելի գիրքը | Ի՞նչ ես անում, որ գիրքն ուրախ լինի |
|---|---|---|
| | | |
| | | |

2 Նկարների անունները գրի՛ր այնպիսի հաջորդականությամբ, որ ստացվի գրքի անցած ճանապարհը ըստ տեքստի:

սալիկ

թուղթ

մագաղաթ

տերև

համակարգիչ

տախտակ

Սրանք բոլորը նույնպես առարկա ցույց տվող բառեր են: Հիշի՛ր, թե որ հարցերին էին պատասխանում առարկա ցույց տվող բառերը:

3 Գրի՛ր, թե ինչով և ինչի վրա են գրել մարդիկ: Կազմի՛ր նախադասություններ:

**Ինչո՞վ**
հատիչ, մուրճ, փայտե ձողիկներ, փետուր, գրիչ, մատիտ, ստեղնաշար
**Ինչի՞ վրա**
կավե սալիկներ, պալեր, մագաղաթ, համակարգիչ, թուղթ

Օրինակ՝ **Հատիչով, մուրճով գրել են պալերի վրա:**



### 4.7.4. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ.

**օ - նություն, համ - երատար**:

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին և բառատետրում, կազմում բառակապակցություններ կամ նախադասություններ:

**Օգնություն**- մեծ օգնություն, օգնություն ցույց տալ

Ընկերս մեծ օգնություն ցույց տվեց ինձ:

**Համբերատար**- դիմանալով սպասող, իրեն զսպող

Համբերատար սպասել, համբերատար մարդ

Ձկնորսը համբերատար սպասում էր, որ ձուկը կուլ տա խայծը:

### 4.7.5. Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ

**Առաջադրանք 1.** Կարդա՛ և լրացրո՛ւ աղյուսակը:

Երեխաները կարդում են աղյուսակի հարցերը, արտահայտվում, այնուհետև լրացնում աղյուսակը:

**Ինչպիսի՞ գրքեր ես սիրում կարդալ:**

Հավանական պատասխաններ՝ *մանկական, գունազարդ, դինոզավրերի մասին, հեքիաթներ, դասագրքեր, կենդանիների մասին* և այլն:

**Ո՞րն է քո ամենասիրելի գիրքը:**

Երեխաները նշում են իրենց սիրելի գրքերի անունները, որոնց թվում կարող է լինել նաև դասագիրքը:

**Ի՞նչ ես անում, որ գիրքն ուրախ լինի:**

Երեխաները հիշում են գրքի մասին պատմությունից, որ գրքերը երջանիկ, ուրախ են լինում, երբ իրենց կարդում են, ուսումնասիրում. չէ՞ որ այդ դեպքում նրանք զգում են իրենց օգտակարությունը, իրենց կարևոր լինելը, իրենց ունեցածը ուրիշին տալու բերկրանքը:

Այս առաջադրանքը կարելի է նաև հանձնարարել որպես ինքնուրույն աշխատանք: Աշխատանքն ավելի մատչելի դարձնելու նպատակով ուսուցիչը կարող է աշակերտներին առաջարկել, որ նրանք հարցերին նախ պատասխանեն բանավոր, ապա՝ գրավոր:

**Առաջադրանք 2**. Այս առաջադրանքի կատարմամբ երեխաները վերհիշում են գրքի անցած ճանապարհը, նկար-բառերը: Հասկանում են, որ սրանք ևս առարկա ցույց տվող բառեր են, մեկ անգամ ևս ամրապնդում են նրանց տրվող հարցերի իմացությունը:

Այս առաջադրանքը նախ կարելի է կատարել բանավոր, այնուհետև գրավոր՝ որպես ինքնուրույն կամ զույգերով աշխատանք։

Դասավորելուց հետո ստացվում է հետևյալ շարքը.

**քար, տերև, տախտակ, մագաղաթ, թուղթ, համակարգիչ:**

Այս շարքի բոլոր բառերը պատասխանում են **ի՞նչ** հարցին։

**Առաջադրանք 3.** Ինչո՞վ և ինչի՞ վրա են գրել մարդիկ։ Ընտրի՛ր համապատասխան բառազույգը և կազմի՛ր նախադասություն։

**Ինչո՞վ**

հատիչ, մուրճ, փայտե ձողիկներ, գրիչ, մատիտ, ստեղնաշար, փետուր

**Ինչի՞ վրա**

կավե սալիկներ, պալեր, մագաղաթ, համակարգիչ, թուղթ

Օրինակ: **Հատիչով, մուրճով գրել են պալերի վրա:**

Այս առաջադրանքը կարելի է կատարել նաև խմբային աշխատանքի միջոցով։

Առաջին խմբի աշակերտները գրատախտակին գրում են առաջադրանքի «Ինչո՞վ» բառերի շարքը.

- հատիչ, մուրճ
- փայտե ձողիկներ
- գրիչ, մատիտ
- փետուր
- ստեղնաշար

Երկրորդ խմբի աշակերտները «Ինչի՞ վրա» բառերի շարքը.

- պալեր
- կավե սալիկներ
- մագաղաթ
- թուղթ
- համակարգիչ

Առաջադրանքն ավարտելուց հետո կարելի է կատարել աշխատանքի ստուգում՝ բարձրաձայն ընթերցմամբ։

Հատիչով, մուրճով գրել են պալերի վրա։

Փայտե ձողիկներով գրել են կավե սալիկների վրա։

Փետուրներով գրել են մագաղաթի վրա։

Գրչով գրում են թղթի վրա։

Ստեղնաշարով գրում են համակարգչի վրա։

**4** Ինչպես տեսար, գիրքը բավականին երկար և դժվար ճանապարհ է անցել մինչև քեզ հասնելը:

- Պատմի՛ր, թե ինչ ես անում, որ այդ գրքերը երկար ապրեն:
- Ավարտի՛ր նախադասությունը.

**Գիրքը երջանիկ է, երբ...**

**5** • Արտագրի՛ր քառատողը: Դո՛ւրս գրիր առարկա ցույց տվող բառերը և գրի՛ր դրանց տրվող հարցերը:

• Ի՞նչ հարց կտաս գրքին:

**Երկու թև ունեմ ու անթիվ երես,**
**Շատ բան կպատմեմ, եթե ինձ սիրես:**
**Սիրի՛ր ինձ, մանկի՛կ, թերթի՛ր ինձ վստահ,**
**Քո լավ ընկերը, այդ ե՛ս եմ՝ գիրքը:**

*Վռամ Հովսեփյան*

**6** Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

vachagan.am

**Գիրք է Քաջիկը գնել,**
**Գիրկն է դրել ու քնել:**

**7** Ենթադրենք հանդիպել ես մեկին, որը չգիտի, թե ինչ է գիրքը: Այնպե՛ս բացատրիր, որ հասկանա:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

**Թեև գիրքն իր ճանապարհին փոխում է տեսքը, բայց մնում է գիտելիքների աղբյուր և մեր սիրելի ու բանիմաց խորհրդատուն:**

81

**Առաջադրանք 4.** Ինչպես տեսար, գիրքը բավականին երկար ճանապարհ է անցել մինչև քեզ հասնելը:

- Պատմի՛ր, թե ինչ ես անում, որ այդ գրքերը երկար ապրեն:
- Ավարտի՛ր նախադասությունը՝

Գիրքը երջանիկ է, երբ.....

Այս առաջադրանքը միտված է աշակերտների բանավոր և գրավոր խոսքը զարգացնելուն: Ինչպես նաև երեխաների մեջ զարգացնում է պատասխանատվություն գրքի պահպանման նկատմամբ: Նրանք զգում են, թե ինչքան ջանքեր են ներդրվել այսօրվա գիրքը ստեղծելու համար:

**Առաջադրանք 5.**

- Արտագրի՛ր քառատողը:
- Դո՛ւրս գրիր առարկա ցույց տվող բառերը և գրի՛ր դրանց տրվող հարցերը:
- Ի՞նչ հարց կտաս գրքին:

Երկու թև ունեմ ու անթիվ երես,
Շատ բան կպատմեմ, թե ինձ սիրես:
Սիրի՛ր ինձ, մանկի՛կ, թերթի՛ր ինձ վստահ,
Քո լավ ընկերը, այդ ե՛ս եմ՝ գիրքը:

*Վռամ Հովսեփյան*

Այս առաջադրանքը կարելի է հանձնարարել որպես ինքնուրույն աշխատանք՝ աշակերտների գիտելիքները և կարողությունները ստուգելու նպատակով: Հաջորդիվ՝ կատարել փոխստուգում:

Առաջին կետով երեխաները պետք է քառատողից դուրս գրեն **թև, երես, բան, մանկիկ, ընկեր, գիրք բառերը:**

Երկրորդ կետով երեխաները, հիշելով անցած դասերի գիրք-հերոսին և քառատողի գիրք-հերոսին, պետք է հարցեր տան նրան:

Հավանական հարցերի օրինակներ.

- Դու գիտե՞ս, թե քեզ ով է գրել:
- Ես էլ եմ ուզում գիրք գրել: Ինչի՞ց սկսեմ:
- Ես գիրք կարդալ չեմ սիրում, ի՞նչ անեմ:
- Դասերս շատ են, չեմ հասցնում գիրք կարդալ: Ի՞նչ անեմ:
- Քեզ քանի՞ հոգի է արդեն կարդացել:
- Որո՞նք են քո թևերը;
- Քո երեսները էջե՞րն են: Բայց նրանք անթիվ չեն:

### 4.7.6. Անդրադարձ շուտասելուկին

**Առաջադրանք 6.** ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Երեխաները փորձում են արագ արտասանել կատակային շուտասելուկը, որը զվարթություն է բերում ամբողջ դասարանին: Այնուհետև QR-կոդով լսում են շուտասելուկի ասմունքը, ուրախանում, հրճվում ու զարմանում:

**Առաջադրանք 7.** Ենթադրենք հանդիպել ես մեկին, որը չգիտի, թե ինչ է գիրքը: Այնպե՛ս բացատրիր, որ հասկանա:

Ուղեկցող նկարում երեխան հանդիպել է մի այլմոլորակայինի և փորձում է նրան բացատրել, թե ինչ է գիրքը:

Այս առաջադրանքը կարելի է բեմականացնել: Մի քանի զույգ է ընտրվում, որոնցից մեկը չգիտե, թե ինչ է գիրքը: Մյուսը բացատրում է նրան:

Օրինակ: Զույգերից մեկը բացատրում է մյուսին. «Երբ դու խոսում ես, ի՞նչ են լինում քո խոսքերը: Անհետանում են օդում: Հետո դու դժվար թե հիշես, թե ինչ խոսքեր ես ասել: Որպեսզի ճշգրիտ հիշես, դրանք պետք է գրես: Գրել՝ նշանակում է խոսքերը դարձնել բառեր: Իսկ բառերը կարելի է գրել թղթի վրա: Հետո այդ թղթերը միացնում ես իրար, կարում ու… գիրքը պատրաստ է: Այս ամենը հետագայում սկսեցին անել զանազան սարքերով»:

### 4.7.7. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Գիրքն ինձ պատմեց _____
Գիրքն ինձ համոզեց _____
Գիրքն ինձ զարմացրեց _____

Ուսուցիչը աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասերի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացված նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները:

### 4.7.8. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» շուրջ

Դասի ավարտին երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկի միտքը, կարծիքներ հայտնում:

**Թեև գիրքն իր ճանապարհին փոխում է տեսքը, բայց մնում է գիտելիքների աղբյուր և մեր սիրելի ու բանիմաց խորհրդատուն:**

## 4.8. ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

### 4.8.1. «Կրկնվող բառի գուշակում» վարժություն

**Դասի սկզբում** ուսուցիչը գրատախտակին նախապես գրում է Հրաչյա Մաթևոսյանի գրած քառատողը՝ բաց թողնելով կրկնվող *հայրենիք* բառը:

Աջ եմ նայում՝ ..... է,
Ձախ եմ նայում՝ ..... է,
Մոտ եմ նայում՝ ..... է ,
Հեռուներում ..... է:

Հանձնարարում է կարդալ քառատողը և գուշակել միակ կրկնվող բառը: *Պատասխանները կարող են տարբեր լինել, ուսուցիչը պետք է լսի և խրախուսի աշակերտների բոլոր պատասխանները*: *Հայրենիք* բառը գտնող աշակերտին հանձնարարում է մեկ անգամ բարձր և արտահայտիչ կարդալ քառատողը:

Աջ եմ նայում՝ հայրենիք է,
Ձախ եմ նայում՝ հայրենիք է,
Մոտ եմ նայում՝ հայրենիք է,
Հեռուներում հայրենիք է:

Ուսուցիչը գրատախտակին գրում է **Հայրենիք** բառը: Երեխաներին առաջարկում է նայել գրատախտակին ամրացրած նկարներին և փորձել հայրենիքը նկարներով ճանաչել: (Գրատախտակին նախապես պետք է ամրացնել երեք նկարախումբ, որոնցից երկուսը խորհրդանշում են Հայաստանը, մեկը չի խորհրդանշում Հայաստանը:)

Աշակերտները մոտենում են գրատախտակին, վերցնում իրենց ընտրած նկարը և ամրացնում *Հայրենիք* բառի մոտ: Ուսուցիչը կարող է նաև նկարել Հայաստանի քարտեզի ուրվագիծը, որպեսզի երեխաները դրա վրա ամրացնեն իրենց ընտրած նկարները: Աշակերտները փորձում են նաև հիմնավորել իրենց ընտրությունը:

Օրինակ՝

*- Ես ընտրել եմ Մեսրոպ Մաշտոցի նկարը, որովհետև նա է ստեղծել հայերենի այբուբենը:*

*- Ես ընտրել եմ լավաշը, որովհետև լավաշը հայկական հացատեսակ է:*

Ուսուցիչն ամփոփում է խթանման փուլն ու հանձնարարում բացել գրքերը և միասին կարդալ մուտքի պատուհանիկի գրառումը:

Այնուհետև անդրադառնում են դասի գլխագրի կետերին:

Հետաքրքրություն կառաջացնի առաջին կետը, որում ասվում է, թե կարդալու են իրենց հասակակիցների կարծիքները հայրենիքի մասին:

Երկրորդ կետը բորբոքում է երևակայությունը՝ ի՞նչ նկարներ են, որոնք չկային իրենց փակցրած նկարների շարքում:

Երրորդ կետի վերաբերյալ աշակերտների ասածները կհամեմատվեն դասն ավարտելուց հետո նրանց ասածների հետ:

Փոքրիկ «սադրանք» է պարունակում 4-րդ կետը՝ իրենք ինչպե՞ս են հայտնվելու ուրիշի երազի մեջ:

Այս ամենը նպաստում է, որ երեխաները հետաքրքրությամբ սկսեն ուսումնասիրել դասանյութը:

ՄԻՏՔ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Հայրենիքը մի գագաթ է, որից հեռանալիս միշտ իջնում ես:

Այս դասին դու.

• Կկարդաս քո հասակակիցների մտքերը հայրենիքի մասին:

• Կծանաչես քո հայրենիքը նկարներով:

• Կպատմես, թե ինչ է հայրենիքը քեզ համար:

• Կհայտնվես Անահիտի երազում:

## ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Սուրեն Մուրադյան

**Ա՜յ քեզ բան, ուր նայում եմ՝ հայրենիք է:**

**Աջ եմ նայում . . . է,**
**Ձախ եմ նայում . . . է,**
**Մոտ եմ նայում . . . է,**
**Հեռուներում . . . է:**

**Կարդա՛ քառատողը:**
**Գուշակի՛ր միակ կրկնվող բառը:**

### Առաջադրանքներ

1 Այստեղ մեր հայրենիքը պատկերող նկարներ են:

• Ընտրի՛ր քեզ հարազատ մի քանի նկար և ստեղծի՛ր հայրենիքի քո անկյունը:

• Ավելացրո՛ւ ևս մի քանի նկար և ստեղծի՛ր «Հայրենիքը նկարներում» քո գիրքը:

ընտանիք

ընկերներ

դպրոց

մայրաքաղաք Երևան

աստղադիտարան

Մատենադարան

Հայկ Նահապետ

Սասունցի Դավիթ

Մեսրոպ Մաշտոց

Էջմիածին



Էրեբունի

Գառնի

Արարատ

Արագած

Սևանա լիճ

83

**Առաջադրանք 1.** Այստեղ մեր հայրենիքը պատկերող նկարներ են:

- Ընտրի՛ր քեզ հարազատ մի քանի նկար և ստեղծի՛ր հայրենիքի քո անկյունը:
- Ավելացրո՛ւ ևս մի քանի նկար և ստեղծիր «Հայրենիքը նկարներում» քո գիրքը:

### 4.8.2. «Հայրենիքը նկարներում» գրքի ստեղծում

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունն է հրավիրում առաջադրանք 1-ի նկարներին: Օգտվելով նկարների ներքևում գրված բառերից՝ երեխաները թվարկում են նկարների անունները: Կարճ դիտարկումներ են անում, եթե ծանոթ նկարներ են, իսկ եթե ծանոթ չեն, ուսուցիչն է 1-2 նախադասությամբ ներկայացնում նկարները:

Որպես փոքրիկ հետազոտական աշխատանք երեխաները դասագրքի նկարներից ընտրում են իրենց դուր եկած նկարները և տանը ավելացնելով մի քանի նկար ևս (կարող են նույնիսկ իրենք նկարել), ստեղծում են «Հայրենիքը նկարներում» իրենց փոքրիկ գիրքը:

**ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ**

Իմ հայրենիքն իմ մայրիկն է,
Իմ տունն է ու իմ հայրիկն է,
Իմ փողոցն է, իմ դպրոցն է,
Իմ բակն է, իմ ծաղկանոցն է:

Իմ հայրենիքն իմ տատիկն է,
Հեքիաթասաց իմ պապիկն է,
Իմ արջուկն է, իմ ջութակն է:
Իմ փայտե ձին, իմ թութակն է:

Իմ հայրենիքն իմ սահնակն է,
Իմ խաղընկեր ժիր Սահակն է,
Երկինք հասնող բարդի ծառն է,
Միշտ ձյունապատ Մասիս սարն է:

Իմ հայրենիքն իմ Սևանն է,
Զվարթնոցն* ու Երևանն է,
Հեքիաթներն են Թումանյանի,
Հրաշքները՝ Հայաստանի:



**Հարցեր**

1. Ըստ բանաստեղծության՝ ինչ է հայրենիքը:
2. Հայրենիքի մասին բանաստեղծական մտքերից որը.
   - գիտեիր,
   - քեզ զարմացրեց,
   - շատ սիրեցիր:
3. Քո կարծիքով՝ ուրիշ ինչը կարող է հայրենիք լինել:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

արջուկ
Սևան
խաղընկեր

2 Բանաստեղծությունից դուրս գրիր անձ և իր ցույց տվող բառեր: Նշի՛ր, թե որ հարցին են պատասխանում այդ բառերը:

* **Զվարթնոց** – հուշարձան Հայաստանում:

84

### 4.8.3. Բանաստեղծության բարձրաձայն ընթերցում

Առաջին անգամ բանաստեղծությունը կարդում է ուսուցիչը՝ բարձրաձայն և առոգանությամբ: Կատարվում է **բառաբացատրական աշխատանք**:

**Զյունապատ** - ձյունով ծածկված

**Ժիր** - աշխույժ, կայտառ

**Զվարթնոց** - հուշարձան Հայաստանում

Ուսուցիչը սովորաբար նախապես առանձնացնում է դասանյութի ենթադրելի անծանոթ բառերը, սակայն դիմում է նաև աշակերտներին՝ նրանց համար անծանոթ բառերը վեր հանելու և անծանոթ բառերի շարքը համալրելու համար:

Անծանոթ բառերի բացատրությունը կարելի է կատարել տարբեր արդյունավետ եղանակներով: Պետք է ստեղծել այնպիսի առաջադրանքներ կամ ձևակերպել այնպիսի հարցեր, որ երեխան իր գրավոր կամ բանավոր խոսքում գործածի նորածանոթ բառերը: Բառաբացատրական աշխատանքից հետո անցնում են «Աչքի առաջ» բառերի ուսուցմանը:

Նախ աշակերտները կարդում են գրված բառերը (**արջուկ, Սևան, խաղընկեր**): Ուսուցիչը հանձնարարում է բանաստեղծության մեջ գտնել այդ բառերը:

-Ո՞ր քառատողում են գրված բառերը: Գտե՛ք և գրե՛ք տետրերում:

### 4.8.4. Աշխատանք տեքստի շուրջ

***Հարցերի և առաջադրանքների օրինակներ:***

**1**.Թվարկի՛ր՝ ինչ է հայրենիքը ըստ բանաստեղծության: (Մայրիկ, հայրիկ, տուն, փողոց, բակ, ծաղկանոց, տատիկ, պապիկ, արջուկ, և այլն):

**2**.Հայրենիքի մասին բանաստեղծության մտքերից ո՞րը .

ա. գիտեիր

բ. քեզ զարմացրեց

գ. շատ սիրեցիր

3. Քո կարծիքով՝ էլ ի՞նչը կարող է հայրենիք լինել: (Քույրիկը, եղբայրը, մանկապարտեզը, բնությունը, ուսուցիչը, և այլն:)

### 4.8.5. Աշխատանք լեզվական գիտելիքի շուրջ

**Առաջադրանք 2.** Բանաստեղծությունից դուրս գրի՛ր անձ և իր ցույց տվող բառեր: Նշի՛ր, թե որ հարցին են պատասխանում այդ բառերը:

Առաջադրանքը նախատեսված է անձ և իր ցույց տվող բառերի մասին գիտելիքների ամրապնդման համար:

| **անձ** *(ո՞վ)* | **իր** *(ի՞նչ)* |
|---|---|
| մայրիկ | հայրենիք |
| հայրիկ | տուն |
| տատիկ | փողոց |
| պապիկ | դպրոց |

| | |
|---|---|
| խաղընկեր | բակ |
| Սահակ | ծաղկանոց |
| Թումանյան | արջուկ |
| | ջութակ |
| | ձի |
| | թութակ |
| | սահնակ |

3 Կարդա՛, թե ինչ է գրում քո հասակակից Աստղիկը հայրենիքի մասին: Դո՛ւ էլ գրիր, թե ինչ է հայրենիքը քեզ համար:

Բարև, ես Աստղիկն եմ: Սիրում եմ գյուղում: Ինձ համար հայրենիքը իմ սիրելի ընտանիքն է, իմ ընկերներն են, իմ գյուղն է: Նաև ասեմ, որ շատ եմ սիրում մեր կենդանիներին՝ շանը, կատվին, գառնուկներին: Մեսնեես դրանք մտնում են հայրենիքի մեջ: Ես շատ կուզեի, որ այդպես լիներ:

4 Պատկերացրո՛ւ, թե քեզ հյուր է եկել օտարերկրացի քո հասակակիցը:

- Ի՞նչ ցույց կտայիր նրան քո բնակավայրում:
- Ի՞նչ հարցեր կտայիր նրան: Համեմատի՛ր ընկերոջդ տված հարցերի հետ:

5 Ըստ բանաստեղծության՝ ինչպիսի՞ն էր պապիկը, ինչպիսի՞ն էր Մասիս սարը:

Գրի՛ր ստացված բառակապակցությունները:

_____ **պապիկ**

_____ **Մասիս սար**

Քո գրած բառակապակցությունները գործածի՛ր նախադասությունների մեջ:

6 Ընտանիքիդ անդամներին հարցրո՛ւ, թե ինչ է հայրենիքը նրանց համար: Նշումնե՛ր արա և համեմատի՛ր ընկերոջդ նշումների հետ:

**Առաջադրանք 3.** Կարդա՛, թե ինչ է գրում քո հասակակից Աստղիկը հայրենիքի մասին: Դու էլ գրի՛ր, թե ինչ է հայրենիքը քեզ համար:

*Բարև, ես Աստղիկն եմ: Ապրում եմ գյուղում: Ինձ համար հայրենիքը իմ սիրելի ընտանիքն է, իմ ընկերներն են, իմ գյուղն է: Նաև ասեմ, որ շատ եմ սիրում մեր կենդանիներին՝ շանը, կատվին, գառնուկներին: Տեսնես դրանք մտնո՞ւմ են հայրենիքի մեջ: Ես շատ կուզեի, որ այդպես լիներ:*

Երեխաները կարդում են նամակը, արտահայտում իրենց կարծիքը և գրում, թե ինչ է հայրենիքը իրենց համար:

**Առաջադրանք 4.** Պատկերացրու՛, թե քեզ հյուր է եկել օտարերկրյա քո հասակակիցը:

- Ի՞նչ ցույց կտայիր նրան քո բնակավայրում:
- Ի՞նչ հարցեր կտայիր նրան: Համեմատի՛ր ընկերոջդ տված հարցերի հետ:

Այս առաջադրանքը կարող են կատարել որպես գործնական աշխատանք: Ուսուցչի հանձնարարությամբ երեխաները կարող են պատրաստել պաստառ և ներկայացնել իրենց բնակավայրում գտնվող տեսարժան վայրերը: Այս առաջադրանքի կատարումը կնպաստի երեխաների խոսքի զարգացմանը, երեխաները մեկ անգամ ևս կհիշեն հայրենիքի՝ իրենց սիրելի գողտրիկ անկյունները, կպատմեն նրանց մասին, կարժևորեն ազգային հարստությունները: Ինչպես նաև կսովորեն իրենց համար ոչ սովորական իրավիճակում հարցեր տալ:

Միաժամանակ առաջադրանքը նպաստում է այն բանին, որ երեխաները մեծահասակներից հետաքրքրվեն և իմանան իրենց բնակավայրի հուշարձանների, գեղատեսիլ վայրերի մասին:

**Առաջադրանք 5.** Ըստ բանաստեղծության՝ ինչպիսի՞ն էին պապիկը, Մասիս սարը:

Գրի՛ր ստացված բառակապակցությունները:

_____ պապիկ

_____ Մասիս սար

Քո գրած բառակապակցությունները գործածի՛ր նախադասությունների մեջ:

**հեքիաթասաց պապիկ**

**ձյունապատ Մասիս**

**Նախադասությունների օրինակներ.**

Ես շատ եմ սիրում իմ հեքիաթասաց պապիկին:

Ձյունապատ Մասիսը տեսել եմ միայն նկարներում:

**Առաջադրանք 6.** Ընտանիքիդ անդամներին հարցրո՛ւ, թե ինչ է հայրենիքը նրանց համար: Նշումներ արա՛ և համեմատի՛ր ընկերոջդ նշումների հետ:

Սա փոքրիկ հետազոտական աշխատանք է հիշեցնում: Երեխաները դասի միջոցով իրենց յուրացրածը կիրառում են գործնականում, տեսնում են արդյունքները և համեմատում ընկերների նույնանման արդյունքների հետ, անում եզրակացություններ:

Ուսուցիչը հանձնարարում է կարդալ էջ 86-ի «Ի՞նչ է հայրենիքը քո հասակակիցների աչքերով» թեմայով գրված երեխաների շարադրություններից հատվածներ: Վերջում կարող են համեմատել իրենց հնչեցրած մտքերի հետ:

**8** Տեքստից ընտրի՛ր անձ և իր ցույց տվող բառերը: Աղյուսակում դրանք լրացրո՛ւ համապատասխան հարցերի տակ:

## ԱՆԱՀԻՏԻ ԵՐԱԶԸ

Արտերկրից եկած ընկերուհուս հետ այցելեցինք գազանանոց: Այնտեղ բժիշկ Այբոլիտը բուժում էր հիվանդ կենդանիներին: Վանդակների մոտ շատ երեխաներ կային: Այցելուներն ուզում էին տեսնել, թե ինչպես է Այբոլիտը բուժում գայլին: Կապիկի վանդակի մոտ էլ շատ փոքրիկներ էին հավաքվել: Մի փոքրիկ տղա մայրիկի ձեռքը բռնած ուշադիր նայում էր հսկա ուղտերին:

| ո՞վ | ովքե՞ր | ի՞նչ | ինչե՞ր |
|---|---|---|---|
| ընկերուհի | այցելուներ | արտերկիր | ուղտեր |
| | | | |

## ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես հասկացա

Ես բացահայտեցի

Ես կհիշեմ

Հայրենիքը ես եմ, դու ես, մենք ենք: Ի՜նչ երջանկություն է հայրենիք ունենալը:

**Առաջադրանք 7.** Տեքստից ընտրի՛ր անձ և իր ցույց տվող բառերը: Աղյուսակում դրանք լրացրո՛ւ համապատասխան հարցերի տակ:

Առաջադրանք 7-ի աղյուսակը կարող են գծել տետրում կամ գրատախտակին, ապա բարձրաձայն կարդալ «Անահիտի երազը» տեքստը և բառերը լրացնել համապատասխան սյունակներում:

| **ո՞վ** | **ովքե՞ր** | **ի՞նչ** | **ինչե՞ր** |
|---|---|---|---|
| Անահիտ | երեխաներ | արտասահման | կենդանիներ |
| ընկերուհի | այցելուներ | գազանանոց | ուղտեր |
| բժիշկ | փոքրիկներ | գայլ | |
| Այբոլիտ | | կապիկ | |
| տղա | | վանդակ | |
| մայրիկ | | ձեռք | |

### 4.8.6. Դասից քաղած իմ պտուղները

Դասի ամփոփման համար ուսուցիչը երեխաներին կարող է բաժանել թղթեր, որոնց վրա գրված են անավարտ նախադասություններ.

Ես հասկացա....

Ես բացահայտեցի.....

Ես կհիշեմ....

### 4.8.7. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» շուրջ

Ուսուցիչը լսում է բոլորի մտքերը, խրախուսում և ամփոփում դասը:

Երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված մտքերը, արտահայտում իրենց կարծիքը:

Հայրենիքը ես եմ, դու ես, մենք ենք: Ի՜նչ երջանկություն է հայրենիք ունենալը:



## 4.4. «ՈՐՏԵՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

### «ՈՐՏԵՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու.

- Կվերհիշես թեմայի դասանյութերի հերոսներին:
- Կամրապնդես քո սովորած բառերի ճիշտ գրությունը:
- Կպարզես, թե որքան ես սիրում հայրենիքդ:

**Առաջադրանքներ**

**1** Հիշի՛ր, թե որ խոսքը ով է ասել:

– Ավելի լավ է մեռնել կռվում, քան ծառայել Բելին:
– Մելի՛ք, թա՛փ տուր քեզ:
– Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան:
– Շա՜տ կուզենայի տեսնել Էրեբունի քաղաքը:
– Մեսրոպ Մաշտոցը մեծ հերոս էր, մեծ հանճար:
– Սակայն քեզ ամենաշատն եմ սիրում:



**2** Թերթի՛ր այս թեմայի դասանյութերը: Գտի՛ր, թե որ դասանյութի նկարներին են վերաբերում մեջբերված տողերը:

1. Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարհք տեսած ու բանագետ.
Տղե՛րք, ասավ, ձամփա՛ տվեք,
Գնամ խոսեմ ես Դավթի հետ:
– Թագավորն է քու թշնամին,
Կռիվ ունես – իր հետ արա:
*Հովհ. Թումանյան*

2. Հայերենի այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Այբուբենի տառերը գինվորներ են, ինչպես և դու:

88

### 4.4.1. Գլխագրի կետերի ընթերցում և քննարկում

Այնուհետև անդրադարձ **առաջադրանք 1**-ին:

Երեխաները, օգտվելով նկարներից, վերհիշում են, թե որ խոսքը որ հերոսն է ասել և երբ. 1. Հայկը, 2. Սասունցի Դավիթը, 3. Արգիշտիի պապիկը, 4. Արգիշտի թոռնիկը, 5. Արան, 6. Արան:



3 Վերծանի՛ր նկարելուկները՝ հիշելով տառանունները.

կ դ ‘ ’

պ=գ

‘

1=մ

4 Վերծանի՛ր խառնագրերը. **քակռ, ղևեկ, լյասև, ևտրե**:

5 Կազմի՛ր նախադասություն՝ գործածելով **ավտոմեքենա, Երևան, բարձրանալ, ձանապարհ** բառերը:

6 Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողած տառերը.

**Ս□ան, առա□ին, շու□ջբոլորը, Ջվար□նոց, խոր□դավոր, եր□ի, խաղ□նկեր**:

7 Նկարներում պատկերված առարկաների անուններով լրացրու խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս քո ամենասիրելի բառերից մեկը:

89

### 4.4.2. Աշխատանք նկարագրման շուրջ

**Առաջադրանք 2.** Թերթի՛ր այս թեմայի դասանյութերի էջերը և գտի՛ր, թե որ նկարներին են վերաբերում մեջբերված տողերը:

1. Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարհք տեսած ու բանագետ.
Տղե՛րք, ասավ, ճամփա՛ տվեք,
Գնամ խոսեմ ես Դավթի հետ։
– Թագավորն է քու թշնամին,
Կռիվ ունես – իր հետ արա։
Հովհ. Թումանյան

2. Հայերենի այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը։ Այբուբենի տառերը զինվորներ են, ինչպես և դու։

Կարդալով 1-ին կետի չափածոն, որը Հովհանես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմից մի փոքրիկ մեջբերում է, և թերթելով դասանյութի էջերը՝ երեխաները գալիս են այն եզրակացությանը, որ դա 62-րդ էջի վերևի ձախ անկյունում տեղադրված նկարն է: Այդ նկարում Սասունցի Դավիթը Քուռկիկ Ջալալիին հեծած կռվում է Մելիքի զորքի դեմ: Նկարում երևում է, թե ինչպես մի ալևոր՝ սպիտակած մազերով մի ծերունի զինվոր, ուզում է ինչ-որ բան ասել Դավթին:

2-րդ կետի նկարը ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ դասանյութի նկարներից է (էջ 77): Նկարում Մեսրոպ Մաշտոցը քայլում է իր ստեղծած տառերի հետ, որոնք զինվորների նման հետևում են նրան:

### 4.4.3. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի նյութերի շուրջ

**Առաջադրանք 3-ը, 4-ը, 5-ը, 6-ը** վերաբերում են «Աչքի առաջ» խորագրի բառերին:

**Առաջադրանք 3**-ում նկարելուկների տեսքով ներկայացված են **կենդանի, արջուկ, մարդիկ, կարագ** բառերը: Լուծելով նկարելուկները և ստանալով պատասխան բառերը՝ երեխաների հիշողության մեջ անպայման կամրագրվի այդ բառերի ճիշտ գրությունը:

**Առաջադրանք 4**-ում **կառք, կեղև, այլևս, տերև** բառերի խառնագրերն են, որոնց վերծանումը դարձյալ կնպաստի, որ երեխաները լավ հիշեն տվյալ բառերի ուղղագրությունը:

**Առաջադրանք 5.**

Նախադասության օրինակ. «Ավտոմեքենան Երևանից ոլորապտույտ ճանապարհով բարձրանում էր Սևան»:

**Առաջադրանք 6:** Երեխաները պետք է լրացնեն դատարկ վանդակները և ստանան **Սևան, առաջին, շուրջբոլորը, Զվարթնոց, խորհրդավոր, երևի, խաղընկեր** բառերը:



8 Պատասխանի՛ր հարցերին և պարզի՛ր, թե որքան ես սիրում հայրենիքդ:

| Հարցեր | Պատասխաններ | | |
|---|---|---|---|
| | Այո | Երբեմն | Ոչ |
| 1. Օգնո՞ւմ ես ընտանիքիդ անդամներին տնային գործերում: | | | |
| 2. Հարևաններին հանդիպելիս հարգալից բարևո՞ւմ ես: | | | |
| 3. Օգնո՞ւմ ես ընկերոջդ նեղության պահին: | | | |
| 4. Խնամո՞ւմ ես շրջապատի բույսերը: | | | |
| 5. Խնամքո՞վ ես վերաբերվում բակի գույքին: | | | |
| 6. Ձմռանը կերակրո՞ւմ ես թռչուններին: | | | |
| 7. Մաքո՞ւր ես պահում քո շրջապատը: | | | |
| 8. Հետևո՞ւմ ես, որ ծորակի ջուրը անտեղի չհոսի: | | | |
| 9. Աղբը գցո՞ւմ ես աղբամանը: | | | |
| 10. Բարեխղճորեն կատարո՞ւմ ես ուսումնական հանձնարարություններդ: | | | |

Եթե քո պատասխաններում ավելի շատ «այո» կա, քան «երբեմն» կամ «ոչ», ապա ամեն ինչ լավ է:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես կարողացա

Ես հասկացա

Ինձ զարմացրեց

90

### 4.4.4. Աշխատանք աղյուսակով

**Առաջադրանք 7.** Պատասխանի՛ր հարցերին և պարզի՛ր, թե որքան ես սիրում հայրենիքդ:

Թեմայի ամփոփման համար նախատեսված այս առաջադրանքը կոնկրետ գործողություններ է ենթադրում, որոնց միջոցով երեխան արտահայտում է իր սերը:

Այստեղ սիրո առարկան հայրենիքն է, սակայն նմանատիպ աղյուսակ կարող է լինել ընտանիքի, ծնողների, դպրոցի, ուսման, ընկերների և այլնի մասին: Կարևորը, որ երեխաները հասկանան, որ սերը կոնկրետ արարքներ է ենթադրում, գործողություններ, որոնք առաջին հայացքից կարող են շատ հասարակ լինել, սակայն խորքում դրանք զգացմունքը արտահայտելու ցուցիչներ են:

Այստեղ կարևոր է, որ երեխաները անկեղծ պատասխանեն հարցերին և «չվախենան» սխալ հասկացվելուց:

### 4.4.5. «Հայրենիք» խաչբառի լրացում

**Առաջադրանք 8.**

8 Նկարներում պատկերված առարկաների անուններով լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս քո ամենասիրելի բառերից մեկը:




Նկարներում Հայաստանը բնորոշող նկարներ են: Երեխաները պետք է լրացնեն խաչբառը՝ նրա տողերում գրելով հետևյալ բառերը.

**հասկ, լավաշ, խոյակ, գիրք, նետ, նուռ, ծիրան, խաչքար:**

Ընդգծված սյունակում կկարդան **հայրենիք** բառը:

## *Գլուխ 5.* «ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

### 5.1. Աշխատանք «Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում» սկզբնանկարի շուրջ

91

Սկզբնանկարում ներկայացված է յոթ նկար: Դրանք թեմայի հինգ դասանյութերից վերցրած դիպաշարային նկարներ են, որոնց շուրջ հնարավոր է զրուցել, պատմել, թե ինչ է պատկերված նկարներում, կռահումներ անել դասանյութերի վերաբերյալ: Երեք նկարը ներկայացնում են մի դասանյութ: Կարելի է երեխաներին հանձնարարել, որ նրանք գտնեն այդ երեք նկարը: Նկարներից պարզ երևում է, որ դրանց բոլորի ներսում Չ տառն է հերոսը:

Սկզբնանկարի շուրջ զրույցը նպաստում է երեխաների խոսքի, երևակայության զարգացմանը, օգնում է, որ երեխաները նկարչական լեզվով կատարվածը պատմեն, կռահումներ անեն և դասանյութերը ուսումնասիրելուց հետո համեմատեն իրենց կռահումները դասանյութերի պատմությունների բովանդակության հետ:

## 5.2. ՉԱՐԱՃՃԻՆ (ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ)

### 5.2.1. Դասի թեմայի կռահում և նպատակի ձևակերպում

Դասագրքերը փակ են: Ուսուցիչը ընթերցում է մուտքի պատուհանիկի քառատողը:

*Դուռս թակեց մի ծուռ տառ՝*
*Շատ եմ ուզում քեզ հյուր գալ:*
*Դուռը սիրով բացեցի,*
*Ինչ որ պատմեց, գրեցի:*

Այնուհետև դիմում է աշակերտներին, ասելով.

-Պատկերացնո՞ւմ եք, ինչպես աշխարհում ամեն բան, տառերն էլ ունեն իրենց բնավորությունը: Տեսա՞ք՝ մի տառ կա, որը նույնիսկ ուզում է հյուր գալ և պատմել, թե ո՛վ է ինքը:

Այժմ ձեզ կառաջարկեմ մի հանելուկ, որի պատասխանը գուշակելով՝ կիմանաք, թե որ տառի մասին է խոսքը:

*Տե՛ս՝ ինչ տառ եմ ես.*
*Կամակորի պես*
*Չեմուչում կանեմ,*
*Կան կլինի չկա,*
*Իսկ տեսը՝ չտես:*
*Ասելը՝ չասել,*
*Ուզելը՝ չուզել,*
*Անելը՝ չանել:*

Երեխաները զանազան պատասխաններ կարող են տալ՝ հիմնավորելով այդ պատասխանները: Վերջում եզրակացնում են, որ խոսքը Չ տառի մասին է:

Այս դասին դու.

• Կծանոթանաս Ջ-ի արկածներին, երբ նա ընկերների հետ էր:

• Կսովորես «Ջ-ի երգը»:

## ՉԱՐԱՃՃԻՆ

Վաչագան Ա. Սարգսյան

vachagan.am

Դուռս թակեց մի ծուռ տառ՝
Շատ եմ ուզում քեզ հյուր գալ:
Դուռը սիրով բացեցի,
Ինչ որ պատմեց, գրեցի:

### ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Մեր տառերն իրենց ստեղծման օրվանից մինչև այսօր ապրում են մի համերաշխ ընտանիքում: Նրանք բառեր են կազմում, նախադասություններ ու շրջում աշխարհով մեկ: Նրանք ամեն օր մեզ հյուր են գալիս, խաղում մեզ հետ, մտնում մեր տուն ու դպրոց:

Տառերն էլ են չարաճճիություններ անում, ուրախանում կամ տխրում: Նրանցից մեկը երևի ամենաչարաճճին է:

Ասենք՝ տեսնում է, որ դպրոցում գրված է՝ «Երեխանե՛ր, լավ սովորեք»: Իսկույն խցկվում* է նախադասության մեջ ու կանգնում ս տառից առաջ: Ստացվում է. «Երեխանե՛ր, լավ չսովորեք»: Կամ գնում-կանգնում է հեռախոսի մոտ: Հենց մեկն ասում է. «Ա-լո՛, ալո՛», իսկույն թռչում է բառերի առաջ, ու մյուս կողմից լսում են՝ «Չալո՛, Չալո՛»: Իհարկե, դուք իմացաք, թե որ տառի մասին է խոսքը:

Նրա պատճառով ուտել-ը դառնում է չուտել, խմել-ը՝ չխմել, գնալ-ը՝ չգնալ, և այլն և չայլն:

Սա բառերին դուր չի գալիս: Չ-ն ինքն էլ է տխրում, չի ուզում ընկերներին նեղացնել: Մի քիչ խաղում է, մի քիչ ամանչաման* կոտրում, ինչ կա-չկա՝ խառնում իրար ու հեռանում:

* **Խցկվել** – մի կերպ ներս մտնել:
* **Ամանչաման** – բոլոր ամանները, սպասքը:



### 5.2.2. Աշխատանք գծագրի շուրջ

Ուսուցչի հորդորով երեխաները բացում են դասագրքերը և կարդում գլխագրի երկու կետերի գրառումները: Արտահայտում են իրենց կարծիքը: Առաջին կետը կարդա-

լով, հասկանում են, որ կարդալու են հեքիաթ Չ տառի արկածների մասին: Երկրորդ կետը կարդալով իմանում են, որ Չ-ի մասին էլ երգ կա, որ իրենք կարող են լսել այդ երգը և կարդալ:

### 5.2.3. Տեքստի բարձրաձայն ընթերցում

Նախքան տեքստի բարձրաձայն ընթերցումը ուսուցիչը կարող է QR-կոդի կամ համապատասխան հղման միջոցով (vachagan.am) աշակերտներին ցուցադրել «Չարաճրճին» տեքստի «Ընկերների հետ» տեսահոլովակը:

Ընթերցվում է **մեկնաբանություններով**: Իրականացվում է նաև **բառաբացատրական** աշխատանք՝ անծանոթ բառերի իմաստների ճշգրտում և բացատրություն.

**խցկվել** - մի կերպ, դժվարությամբ ներս մտնել

**աման-չաման** - բոլոր ամանները, սպասքը

**ԴՈԴՈՇԸ, ՏԱՏՐԱԿՆ ՈՒ ԹՈՒԹԱԿԸ**

– Տատրա՜կ տատիկ, տատրա՜կ տատիկ, բա դդումը թթո՞ւ է,– ղունղունաց տատրակիկը:

– Չէ՛, չէ՛, չէ՛, դդումը թթու չէ, իմ տաղանդավոր թոռնիկ:

– Բա էն Դոդոշը երդվում է, թե դդումը թթու է:

– Դոդոշը թող իր բրդոտ որդերն ուտի, դդումի համը նա ի՞նչ գիտի:

– Տատի՛կ, երեկ թութակի նման զարդարված մի բադիկ տեսա, դանդաղ-մանդաղ քայլում էր: Ի՞նչ է, նա թռչել չգիտի՞:

– Մարդկանց մոտ ապրողները արդեն մոռացել են թռչելը: Թռչելն արդեն բարդ բան է նրանց համար: Դարձել են ընտանի կենդանիներ,– բացատրեց տատրակը:

Թութակը, որ լսում էր նրանց խոսակցությունը, վրդովված ասաց.

– Դուք ինձ միայն վանդակում եք տեսնում ու միայն իմ գույնզգույն փետուրների մասին եք խոսում: Ես բոլորիցդ էլ լավ եմ թռչում:

– Կներեք ինձ,– քաղաքավարի ներողություն խնդրեց տատրակիկը:– Իսկ դժվար չէ՞ առանց թռչելու ապրելը,– հարցրեց նա:

– Մենք եթե դադարենք թռչելուց, երկնքի արդար օդը չշնչենք, էլ հավք չենք լինի, կդառնանք հավ,– տխուր ասաց Տատրակը:

## Հարցեր

1. Ի՞նչ են անում տառերը:
2. Ի՞նչ չարաճճիություններ էր անում Չ տառը:
3. Ինչո՞ւ բառերին դուր չեն գալիս Չ-ի չարաճճիությունները:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*չարաճճի*
*թռչել*
*խցկվել*

## Առաջադրանքներ

1 Կարդա՛ «Չ-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը:

### Չ-Ի ԵՐԳԸ

vachagan.am

ՉԱ տառն եմ ես.
Ինչ սիրուն եմ, տե՞ս,
Չուտես, չխմես,
Երեսիս նայես:
Սակայն ինչքան էլ
Դու ինձ փայփայես,

Կամակորի պես
Չեմուչում կանեմ,
Հոգի կհանեմ.
Կա-ն կդառնա չկա,
Ասելը՝ չասել,
Ուզելը՝ չուզել,
Անելը՝ չանել:

○ Կարդա՛ «Չ-ի երգը»:

✧ Երգից դո՛ւրս գրիր հակառակ իմաստ ունեցող բառազույգերը: Օրինակ՝ կա – չկա:

☼ Այդ բառազույգերից երկուսով կազմի՛ր նախադասություններ:

2 Արտագրի՛ր «Մուտքի պատուհանիկի» քառատողը: Նկարազարդի՛ր:

### ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

_____ _____ _____

93

### 5.2.4. Աշխատանք տեքստի վերաբերյալ հարցերի շուրջ

Տեքստն ընթերցելուց հետո երեխաները պատասխանում են տեքստին վերաբերող հարցերին:

**Տեքստի բովանդակության շուրջ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով կարելի է առաջարկել նմանատիպ հարցեր.**

- Որտե՞ղ և ինչպե՞ս են ապրում տառերը իրենց ծննդյան օրից մինչ այսօր: (Ապրում են մի համերաշխ ընտանիքում)
- Ինչո՞վ էր տարբերվում նրանցից մեկը: (Նրանցից մեկը շատ չարաճճի էր)
- Ինչո՞ւ է հեղինակը նրա՛ն ամենաչարաճճի անվանել: (Նա շատ տարօրինակ բաներ էր անում)
- Ինչո՞ւ էր տխրում Չ-ն: (Չէր ուզում ընկերներին նեղացնել իր չարաճճիություններով)

Ուսուցիչը լսում է բոլորի պատասխանները, հնարավորություն է տալիս սովորողներին ազատ, անկաշկանդ արտահայտվելու և հիմնավորելու իրենց խոսքը:

### 5.2.5. Աշխատանք «Չ-ի երգը» առաջադրանքի շուրջ

**Առաջադրանք 1.**


Կարդա՛ «Չ-ի երգը» և դիտի՛ր տեսահոլովակը:

Չ-Ի ԵՐԳԸ

ՉԱ տառն եմ ես.
Ինչ սիրուն եմ տե՞ս,
Չուտես, չխմես
Երեսիս նայես:
Սակայն ինչքան էլ
Դու ինձ փայփայես,
Կամակորի պես
Չեմուչում կանեմ,
Հոգի կհանեմ.
Կա-ն կդառնա չկա,
Ասելը՝ չասել,
Ուզելը՝ չուզել,
Անելը՝ չանել:

Կարդա՛ «Չ-ի երգը»:
Երգից դո՛ւրս գրիր հակառակ իմաստ ունեցող բառազույգերը:
Օրինակ՝ կա – չկա:
Այդ բառազույգերից երկուսով կազմի՛ր նախադասություններ:

Առաջադրանքը «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

Բոլորը կարդում են Չ-ի երգը: Այնուհետև լսում և դիտում են այդ երգի գեղեցիկ տեսահոլովակը:

Երգից դուրս են գրում **կա-չկա, ասել-չասել, ուզել-չուզել, անել-չանել** բառազույգերը, կազմում են նախադասություններ:

### 5.2.6. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Անդրադարձ «Դասից քաղած իմ պտուղները» խորագրին և անավարտ նախադասությունների լրացում:

*Ես սովորեցի* _____ *Ես իմացա* _____ *Ինձ զարմացրեց* _____

Երեխաները ազատ և անկաշկանդ կարտահայտեն իրենց կարծիքները: Կներկայացնեն, թե ինչ սովորեցին, ինչ իմացան, ինչն իրենց զարմացրեց:

Կարժևորեն կարգ ու կանոնի պահպանման կարևորությունը:

## 5.3. ՉԱՐԱՃՃԻՆ (ՄԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ)

Այս դասին դու.

• Կտարբերես առարկա և գործողություն ցույց տվող բառերը:

• Կգնահատես անտվոր իրավիճակներում ելքեր գտնելը:

• Կհասկանաս, թե որքան կարևոր է բարի գործեր կատարելը:

vachagan.am

### ՉԱՐԱՃՃԻՆ

#### ՄԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ




Ուզում է բարի գործեր անել, բայց չգիտի՝ ինչպես:

Մի օր տեսնում է՝ մի սոված մարդ է կանգնած ճամփին՝ կողքին շատ իրեր: Զգուշորեն մոտենում է ու կանգնում մի իրի կողքին: Ա՜յ քեզ հրաշք: Իրն անմիջապես դառնում է չիր: Մարդը սկսում է չիր ուտել, Չ-ին էլ է հյուրասիրում, ապա ուրախ-ուրախ հեռանում է:

Չ-ն էլ է ուրախանում, որ կարողացավ մարդուն օգնել:

Մի անգամ էլ անտառում Չ-ն տեսնում է մի որսորդի, որ նշան էր բռնել որսին: Վազում կանգնում է որսի առաջ և որս-ը դառնում է չորս: Որսորդի աչքերը չորս են դառնում, զարմանում է, թողնում-հեռանում:

Անցնում են օրեր: Փչում է աշնան քամին՝ ո՜ւռ՜ւռ՜ւ: Չ-ն գույնզգույն տերևների հետ թռչում է անտառով մեկ: Հետո մի ծառի բնի մոտ տեղավորվում է տերևների տակ, որ չմրսի:

Գալիս է ձմեռը: Չ-ն սառած տերևների տակից մի կերպ դուրս է գալիս ու, ցրտից դողդողալով, նայում է ծառին:



### 5.3.1. Անդրադարձ գլխագրին

Դասի սկզբում ուսուցչի հորդորով երեխաները բացում են դասագրքերը և կարդում գլխագրի երեք կետերի գրառումները: Արտահայտում են իրենց կարծիքը:

Առաջին կետի վերաբերյալ կարող են ասել, որ իրենք արդեն ճանաչում են առարկա ցույց տվող բառերը: Կռահումներ են անում, թե ինչ են գործողություն ցույց տվող բառերը:

Երկրորդ կետի շուրջ կարծիքների փոխանակման և զրույցի ընթացքում պատկերացում են կազմում, թե ինչ է անսովոր իրավիճակը, բերում են օրինակներ, առաջարկում են ելքեր:

Երրորդ կետի շուրջ զրուցելիս ներկայացնում են բարի գործեր անելու մասին իրենց պատկերացումները:

Նախքան տեքստի ընթերցումը երեխաները կարող են դիտել ՉԱՐԱՃՃԻՆ տեքստի ՄԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ հատվածի տեսահոլովակը:

### 5.3.2. Տեքստի բարձրաձայն ընթերցում

Ընթերցվում է **մեկնաբանություններով**: Իրականացվում է նաև **բառաբացատրական** աշխատանք՝ անծանոթ բառերի իմաստների ճշգրտում և բացատրություն.

**փչակ** - ծառի բնի մեջ առաջացած խոռոչ,

**երախ** - կենդանիների բերան:

Տեսնում է, որ ծառը դուռ ունի, իսկ դռան վրա ցուցանակ է կախված՝ «Փակ է»: Ի՞նչ անի: Կանգնում է է տառից առաջ, ստացվում է՝ «Փակ չէ»: «Որ փակ չէ, բա ի՞նչ է»,– մտածում է Չ-ն ու այս անգամ հնարամտորեն խցկվում է Փ տառից հետո: «Փչակ է»,– ուրախանում է Չ տառը: Ու հենց փչակում էլ մնում է ամբողջ ձմեռ:

Հենց գարունը բացվում է, օրերը տաքանում են, տառերը գալիս են անտառ խաղալու: Մի քիչ վազվզում են, թռչկոտում, պահմտոցի խաղում, մեկ էլ հանկարծ տեսնում են, որ գայլն ուզում է նապաստակին ուտել:

Տառերը ճչում են՝ չուտե՞ս: Բայց Չ-ն չկար, ու գայլը լսում է՝ ուտե՞ս: «Հենց դա էլ ուզում եմ անել»,– մտածում է գայլը ու երախը* բացում: Չ-ն տեսնում է այս ամենն ու խիզախորեն կանգնում գայլի ծնոտների արանքում՝ պինդ պահելով դրանք, որ չփակվեն: Տառերը նորից են գոռում՝ չուտե՞ս, ու գայլը, լսելով հրամանը, հեռանում է:

Բոլորը, և բոլորի հետ նաև Չ-ն, հասկանում են, որ առանց համագործակցելու, առանց բարի գործեր անելու չեն կարող ապրել:

## Հարցեր

1. Քո կարծիքով՝ ինչո՞ւ էր Չ-ն ուզում բարի գործեր անել:
2. Ինչպե՞ս Չ-ն օգնեց սոված մարդուն:
3. Ինչո՞ւ որսորդի աչքերը չորս դարձան:
4. Ի՞նչ հնարամտություն ու քաջություն ցուցաբերեց Չ տառը:
5. Չ-ն ինչպե՞ս կարողացավ ձմեռելու տեղ գտնել:
6. Ինչպե՞ս տառերը փրկեցին նապաստակին:
7. Կարդա՛ և մեկնաբանի՛ր տեքստի վերջին նախադասությունը:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**
*համփոր առաջ*

* **Երախ** – կենդանիների բերան:



**5.3.3. Հարցերի և առաջադրանքների օրինակներ.**

• Ի՞նչ էր ուզում անել Չ-ն: (Բարի գործեր անել)

• Ի՞նչ բարի գործեր արեց Չ-ն: (Օգնեց սոված ճամփորդին: Օգնեց, որ որսը փախչի: Գայլի ձեռքից ազատեց նապաստակին)

• Որտե՞ղ և ինչպե՞ս ձմեռեց Չ-ն: (Չ-ն ձմեռեց ծառի փչակում)

• Չ-ի ո՞ր չարաճճիությունները քեզ դուր եկան: (Բարի, սրամիտ չարաճճիությունները)

• Ի՞նչ հասկացավ Չ-ն: (Չ-ն հասկացավ, որ առանց համագործակցելու, առանց բարի գործեր կատարելու չեն կարող ապրել)

• Ինչպե՞ս Չ-ն փրկեց նապաստակին: (Չ-ն կանգնեց գայլի երախում, գայլը չկարողացավ բերանը փակել ու հարձակվել նապաստակի վրա, ստիպված թողեց հեռացավ)

• Քո կարծիքով, որսորդի համար Չ-ի արած գործը բարի՞ էր, թե՞ ոչ: (Կարող են հնչել տարբեր կարծիքներ: Որսորդի համար չար գործ էր, որովհետև զրկվեց որսից: Այնքան էլ չար չէր. որսորդն էլ, հնարավոր է, ուրախանա, որ մի կյանք փրկվեց, գուցե այդ օրը նա էլ շատ չէր ուզում սպանել որսին)

### 5.3.4. Տեքստի ընտրովի ընթերցանություն

***Հարցեր և առաջադրանքներ.***

• Ընթերցի՛ր տեքստի այն հատվածները, որոնք պատկերված են նկարներում:

• Կարդա՛ այն հատվածները, որտեղ Չ-ն չարաճճիի դեր է կատարում:

• Տեքստի ո՞ր հատվածում էր Չ-ն կարգապահի դեր կատարում: Կարդա՛ այդ հատվածը:

• Չ-ն ինչպե՞ս ուրախացրեց ճանապարհորդին, նապաստակին: Պատասխանը հիմնավորի՛ր համապատասխան տողերը կարդալով:

• Ի՞նչ հնարամտություն ու քաջություն ցուցաբերեց Չ տառը: Կարդա՛ համապատասխան տողերը:

• Կարդա՛ և մեկնաբանի՛ր տեքստի վերջին նախադասությունը:

### 5.3.5. Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար

**Աշխատանք նկարաշարի շուրջ**

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է, որ նրանք ուշադիր նայեն էջերի նկարազարդումներին: Ընտրեն նկարաշարի որևէ դրվագ և պատկերացնեն, որ հայտնվել են նկարաշարի այդ դրվագում:

Այնուհետև ընտրած դրվագի բովանդակությանը համապատասխան պատմեն, թե ինչպես կվարվեին իրենք այդ իրավիճակում:

Այս աշխատանքի նպատակն է, որ աշակերտները իմաստավորեն բարության, փոխօգնության, կարգ ու կանոնի պահպանման կարևորությունը մարդկային հարաբերությունների մեջ: Կարողանան տեքստը վերարտադրել՝ այնտեղ տեսնելով նաև իրենց և նկարագրեն իրենց գործողությունները՝ միահյուսված տեքստի իրադարձություններին:

1 Օգտվելով տեքստից՝ լրացրո՛ւ նախադասությունները:

Չ-ն _____ նապաստակին, որովհետև _____:

Չ-ն _____ ընկերներին, որովհետև _____:

Չ-ն հասկացավ, որ _____:

2 Քո կարծիքով՝ ո՞ւմ համար ինչ-պիսի՞ն էր Չ-ի արարքը.

- որսորդի համար,
- որսի համար,
- Չ-ի համար,
- քեզ համար:

3 ՆԿԱՐԵԼՈՒԿ

**Կարդա՛, թե ինչ բառեր են պատկերված նկարելուկներով:**

Չ Չ

4 Գրի՛ր, թե ինչ են անում Հայկը, Անուշը, Արամը և Ծովինարը:

Հիշի՛ր: Դու գրեցիր **գործողություն ցույց տվող բառեր**:

5 Առարկա ցույց տվող բառերից ստացի՛ր գործողություն ցույց տվող բառեր: Օրինակ՝ **մտրակ – մտրակել**:

**Առաջադրանք 1.** Օգտվելով տեքստից՝ լրացրո՛ւ նախադասությունները:

Չ-ն _____ նապաստակին, որովհետև _____:
Չ-ն _____ ընկերներին, որովհետև _____:

Չ-ն հասկացավ, որ _____:

Օգտվելով տեքստից և դասի բովանդակության իրենց ընկալումից երեխաները լրացնում են նախադասությունները:

Չ-ն փրկեց նապաստակին, որովհետև ուզում էր բարի գործ կատարել:

Չ-ն միացավ ընկերներին, որովհետև ուզում էր ապրել տառերի համերաշխ ընտանիքում:

Չ-ն հասկացավ, որ առանց համագործակցելու, առանց բարի գործեր անելու չեն կարող ապրել:

Դուք տեսաք, որ անգամ Չ-ն կարող է ընկերանալ տառերի հետ և կատարել տարբեր գործեր: Դուք էլ կարող եք բարի գործեր կատարել միասին: Ձեր կատարած բարի գործերով կարող եք ճանաչել և արժևորել մեկմեկու:

### 5.3.6. Մեդիագրագիտություն

**Առաջադրանք 2.**

Քո կարծիքով՝ ո՞ւմ համար ինչպիսի՞ն էր չ-ի արարքը՝

- որսորդի համար
- որսի համար
- չ-ի համար
- քեզ համար

Այստեղ կարող է առաջանալ կարծիքների բախում: Բոլորն ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը նշված հարցերի վերաբերյալ:

Որսորդի համար Չ-ի արարքը կարող է գնահատվել թե՛ բացասական, թե՛ դրական: Բացասական, որովհետև Չ-ն փախցրեց որսը, և որսորդը դատարկաձեռն մնաց: Դրական, որովհետև կենդանիներ սպանելը լավ բան չէ, և որսորդը, հնարավոր է, փոխի իր որոշումը և այլևս կենդանիներ չսպանի: Դա իր համար էլ շատ լավ կլինի:

Որսի համար, պարզ է, որ Չ-ի արածը մեծ բարություն էր:

Չ-ն իր արածից շատ գոհ էր, որովհետև շատ էր ուզում բարի գործ անել և արեց:

Աշակերտներից ոմանք կարող են պնդել, որ Չ-ի արածը վատ բան էր իրենց համար, քանի որ նա որսորդին զրկեց ապրուստի միջոցից: Մի մասն էլ կպնդի, որ Չ-ն շատ բարի գործ արեց:

**Առաջադրանք 3.**

Աշակերտները վերծանում են նկարելուկները և կարդում **չիր, շունչ** բառերը:

### 5.3.7. Գործողություն ցույց տվող բառեր

**Առաջադրանք 4.**

4 Գրի՛ր, թե ինչ են անում Հայկը, Անուշը, Արամը և Ծովինարը:

Հիշի՛ր: Դու գրեցիր **գործողություն ցույց տվող բառեր**:

Այս առաջադրանքով գործնականորեն ներմուծվում է գործողություն ցույց տվող բառերի մասին հասկացությունը:

Երեխաները հեշտությամբ կազմում են նախադասություններ.

Հայկը **երգում է:**

Անուշը **պարում է:**

Արամը **աղոցում է:**

Ծովինարը **կարդում է:**

**Երգում է, պարում է, աղոցում է, կարդում է** բառերը ցույց են տալիս գործողություն՝ մի բան անել, մի բան կատարել:

**Առաջադրանք 5.**

5 Առարկա ցույց տվող բառերից ստացի՛ր գործողություն ցույց տվող բառեր: Օրինակ՝ **մտրակ – մտրակել**:

Դարձյալ գործնական ճանապարհով երեխաներին տրվում են առարկա և գործողություն ցույց տվող բառերը, դրանց կապերը.

մեխ-**մեխել**

աղոց-**աղոցել**

նկար-**նկարել**

մտրակ-**մտրակել**

փոցխ-**փոցխել**

զանգ-**զանգել:**

6 • Կարդա՛ հանելուկը:

Թեև մեկ եմ, բայց երկուս եմ,
Բառը «գրկող» մի նշան եմ,
Թե՛ բացվում եմ և թե՛ փակվում,
Գտի՛ր ինձ այս հանելուկում:

• Արտագրի՛ր հանելուկը: Պատասխանը գրի՛ր չակերտներում:

7 Կարդա՛ շուտասելուկները, դիտի՛ր տեսահոլովակները և արտասանի՛ր:

Ճչան կաչաղակը
Ճչում է, թող ճչա,
Չի ճչում, թող չճչա:

vachagan.am

Չղջիկները թռչում են,
Չ են դարձել, ճչում են:

8 Տեքստում գտի՛ր և կարդա՛ չակերտներում գրված նախադասությունները:

9 Սա տխուր 8 է՝ :

• Օգտվելով նկարից՝ գրի՛ր «ուրախություն»:
• Ընկերոջդ բացատրի՛ր, թե դու ինչպես կատարեցիր առաջադրանքը:

**ԲԱՌԸ ԱՓԻ ՄԵՋ**

**Չարաճճի** բառն այսօր նշանակում է *աշխույժ, զվարթ, շարժուն, անվնաս չարություններ անող:* Հետաքրքիր է, որ բառը կազմված է **չար** և **ճիճու** բառերից:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Ամեն մեկը իր դերն ունի,
Իր գործով է ճանաչելի,
Թեկուզ փոքրիկ մի Չ լինի,
Պիտի օգնի, չար չլինի:

97

## 5.3.8. Աշխատանք հանելուկի շուրջ

**Առաջադրանք 6.**

• Կարդա՛ հանելուկը.

*Թեև մեկ եմ, բայց երկուս եմ,*
*Բառը «գրկող» մի նշան եմ,*

*Թե՛ բացվում եմ և թե՛ փակվում,*
*Գտի՛ր ինձ այս հանելուկում:*

- Արտագրի՛ր հանելուկը: Պատասխանը գրի՛ր չակերտներում:

Սա հանելուկ է **չակերտների** մասին:

Կարելի է երեխաներին բացատրել, որ որոշ կետադրական նշաններ բաղկացած են երկու առանձին մասերից: Այս հանելուկի պատասխանը կարող էր լինել նաև փակագիծը: Նա էլ է բաղկացած երկու մասից, բացվում է և փակվում: Նա էլ է բառը «գրկում»: Այդ դեպքում ինչի՞ց է երևում, որ հանելուկի միակ պատասխանը չակերտն է: Երեխաները կարող են տարբեր կարծիքներ հայտնել: Պետք է հորդորել, որ նրանք մեկ անգամ ևս ուշադիր կարդան հանելուկը: Այնտեղ շատ պարզ երևում է պատասխանը: Երեխաները հայտնաբերում են, որ պատասխանը թաքնված է հանելուկի երկրորդ և չորրորդ տողերում: «Գտի՛ր ինձ այս հանելուկում» տողը հուշում է, որ հանելուկում կա այդ նշանը, և դա երկրորդ տողում երևացող **չակերտն** է:

### 5.3.9. Աշխատանք շուտասելուկի շուրջ

**Առաջադրանք 7.**
Կարդա՛ շուտասելուկները, դիտի՛ր տեսահոլովակները և արտասանի՛ր.

*Ճչան կաչաղակը*
*Ճչում է, թող ճչա,*
*Չի ճչում, թող չճչա:*

*****

*Չղջիկները թռչում են,*
*Չ են դարձել, ճչում են:*

Շուտասելուկը կարող են լսել և դիտել QR-կոդի միջոցով՝ սովորական ընթերցման արագությամբ, արագ և գերարագ:

**Առաջադրանք 8.**
Տեքստում գտի՛ր և կարդա՛ չակերտներում գրված նախադասությունները.

«Երեխանե՛ր, լավ սովորեք»:
«Երեխանե՛ր, լավ չսովորեք»:
«Ալո՛, ալո՛»:
«Չալո՛, Չալո՛»:
«Փակ է»:
«Փակ չէ»:
«Որ փակ չէ, բա ի՞նչ է»:

«Փչակ է»:
«Հենց դա էլ ուզում եմ անել»:

### 5.3.10. Պարզ նշաններով հույզերի արտահայտում

**Առաջադրանք 9.**

Առաջադրանքը նպաստում է այն բանին, որ երեխաները կարողանան պարզ նշանների միջոցով արտահայտել իրենց զգացածը:

«Ուրախություն» գրելու համար երեխաները պետք է կռահեն, որ անհրաժեշտ է նկարել ուրախ 8՝ ☺: ☺-ի կողքին գրելով -**յուն** տառակապակցությունը՝ կստանան ☺ յուն= **ուրախություն:**

Առավել բանիմաց երեխաները առաջադրանքը կարող են կատարել՝ կազմելով նկարելուկ. ☺ ☹: Այսինքն՝ -**յուն** մասնիկն ստանան **Տ** տառի անունից. տյուն - տ = յուն:

### 5.3.11. Աշխատանք «Բառը ափի մեջ» խորագրի շուրջ

«Բառը ափի մեջ» խորագրով ներկայացվում են բնագրում հանդիպող բառերի ստուգաբանական հետաքրքրաշարժ բացատրություններ: Երեխաների համար բառը բացվում է բոլորովին այլ կողմերով, բացահայտվում են նրա մեջ թաքնված գաղտնիքները:

Խորագրի ներքո տրված նյութերը կզարմացնեն երեխաներին և հետաքրքրություն առաջ կբերեն հայոց լեզվի նկատմամբ:

### 5.3.12. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)

Երեխաները, ի մի բերելով դասանյութից քաղած իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ, լրացնում են կիսատ նախադասությունները՝ ազատորեն արտահայտելով իրենց կարծիքները: Համեմատում են գլխագրի կետերում ներկայացված նպատակների հետ:

Ես իմացա _____
Ինձ հետաքրքրեց _____
Ես կհիշեմ _____
Ես կպատմեմ _____

Այնուհետև անդրադառնում են ամփոփման պատուհանիկի քառատողին.

*Ամեն մեկը իր դերն ունի,*
*Իր գործով է ճանաչելի,*
*Թեկուզ փոքրիկ մի Չ լինի,*
*Բարիք գործի, չար չլինի:*

Կարդում են, արտահայտում իրենց կարծիքները:

Այս դասին դու.

• Կլսես «Գործողություն ցույց տվող բառի երգը»:

• Կիմանաս, թե ինչով են նման և ինչով են տարբեր պատմվածքի հերոսները:

• Կհասկանաս, որ դու էլ ընտանիքում ունես քո դերն ու պատասխանատվությունը:

• Կգրես ընտանիքում քո կատարած գործերի մասին:

## Ե՛Վ ՆՄԱՆ ԵՆՔ, Ե՛Վ ՏԱՐԲԵՐ

Գեղեցիկ Մովսիսյան

**Մտածի՛ր և ասա՝ մարդիկ ինչո՞վ կարող են նման լինել և ինչո՞վ՝ տարբեր:**

Այժմ տեսնենք, թե մեր հերոսներն ինչով են նման և ինչով են տարբեր:

Լուսիկն ու Սուսիկը երկվորյակներ* էին և անչափ նման իրար: Այնքան նման, որ երբ միասին նայում էին հայելու մեջ, նույնիսկ իրենք էին իրենց շփոթում:

Հարևանները երբեք չէին կարողանում նրանց տարբերել:

Սակայն մայրիկը նրանց չէր շփոթում, թեև միատեսակ էր հագցնում:

– Մայրի՛կ, դու մեզ ինչպե՞ս չես շփոթում,– մի օր հարցրին քույրերը:

– Ձեզնից մեկն ավելի գեղեցիկ է,– պատասխանեց մայրը,– իսկ թե ով՝ կասեմ երեկոյան: Իսկ այժմ հարկավոր է ջրել ծաղիկները, մաքրել բակը, դասավորել խաղանկյունը:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*երկվորյակ*
*երբեք*

• Ի՞նչ էին ուզում իմանալ երկվորյակ քույրիկները:

• Ի՞նչ պայման դրեց մայրիկը:

* **Երկվորյակներ** – նույն մորից միասին ծնված երկու երեխաներ:

### 5.4.1. Աշխատանք գլխագրի, վերնագրի և «Մուտքի պատուհանիկի» շուրջ

Երեխաները կարդում են դասի գլխագիրը, արտահայտում իրենց կարծիքը: Գլխագրի կետերի շուրջ ուսուցիչը կազմակերպում է քննարկում: Այնուհետև ուսուցիչն ընթերցում է դասի վերնագիրը՝ «Ե՛վ նման ենք, և՛ տարբեր», և մուտքի պատուհանիկի գրառումը: Երեխաներին հանձնարարում է մտածել, թե, իրենց կարծիքով, մարդիկ ինչո՞վ կարող են նման լինել և ինչո՞վ՝ տարբեր:

Աշակերտները ազատ, անկաշկանդ արտահայտում են մտքեր, իսկ ուսուցիչը ընդունում է արտահայտած մտքերը առանց քննարկման, դրանք գրում է գրատախտակին՝ երկու սյունակով:

| **Նման են** | **Տարբեր են** |
|---|---|
| արտաքինով | արտաքինով |
| բնավորության գծերով | բնավորության գծերով |
| սիրած զբաղմունքով | սիրած զբաղմունքով |
| սիրած երաժշտությունով | սիրած երաժշտությունով |
| սովորելով | սովորելով |
| սիրած խաղերով | սիրած խաղերով |
| անուններով | անուններով |
| հասակով | հասակով |
| կատարած գործերով | կատարած գործերով |

Ինչպես տեսնում ենք, մարդկանց նմանություններն ու տարբերությունները արտահայտվում են նույն բաղադրիչներով:

Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները կարող են մեկնաբանել իրենց պատասխանները՝ բերելով օրինակներ:

### 5.4.2. Աշխատանք նկարազարդման շուրջ

Մինչև տեքստի ընթերցումը ուսուցիչն աշակերտներին առաջարկում է դիտել էջի նկարազարդումը և կատարել ենթադրություններ, թե պատկերված աղջիկները ինչով են նման և ինչով են տարբեր:

Աշակերտները կարող են հայտնել տարբեր կարծիքներ: Այս դեպքում կարևոր է, որ բոլորը մասնակցեն և մոտիվացվեն դեպի ընթերցվելիք նյութը, ուշադիր լինեն ընկերների հնչեցրած կարծիքներին:

(Նկարազարդման մեջ աղջիկների դեմքերը նույնն են, նույն հագուստով են, սակայն տարբերվում են մազակալներով, կատարած գործերով: Նրանցից մեկը խնամում է ծաղիկները, մյուսն զբաղված է իր խաղալիքներով ու հեռախոսով)

### 5.4.3. «Դադարներով ընթերցանություն» մեթոդական հնարը

Ուսուցիչը տեքստը բաժանում է 2 հատվածի և տեքստի ընկալման նպատակով յուրաքանչյուր հատվածի համար առաջադրում է հարցեր:

**1-ին հատված** (մինչև «Դասավորել խաղանկյունը»).

• Ի՞նչ էին ուզում իմանալ երկվորյակ քույրիկները:

• Ի՞նչ պայման դրեց մայրիկը։

**2-րդ հատված** (Կարդում են մինչև վերջ։)

### 5.4.3. Տեքստի բովանդակության շուրջ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով առաջարկվող հարցեր

Ովքե՞ր էին պատմվածքի հերոսները։ (Մայրիկը, Սուսիկն ու Լուսիկը)

Մայրիկն ինչո՞ւ միանգամից չպատասխանեց աղջիկների հարցին։ (Նա ուզում էր, որ աղջիկներն իրենք հասկանան, իրենք գլխի ընկնեն՝ իրենց կատարած գործերին նայելով)

Ի՞նչ արեց աղջիկներից յուրաքանչյուրը մինչև մայրիկի վերադարձը։ (Լուսիկը կարգի բերեց տունը, իսկ Սուսիկը զբաղվեց խաղերով)

Ինչպիսի՞ն էր Լուսիկը։ (Կարգապահ, մայրիկին օգնող գեղեցիկ աղջիկ։)

• Ինչպիսի՞ն էր Սուսիկը։ (Տան հոգսերով չհետաքրքրվող գեղեցիկ աղջիկ։)

• Քո կարծիքով՝ իրո՞ք մայրիկը չէր հիշում, թե ով է կատարել բոլոր գործերը։ (Իհարկե հիշում էր։ Նա ուզում էր, որ Սուսիկը հասկանա իր սխալը)

• Քո կարծիքով ինչո՞ւ էր մայրիկի հարցերին միայն Սուսիկը պատասխանում։ (Որովհետև հասկացել էր, որ ինքը սխալ է վարվել, չի օգնել Լուսիկին)

• Ինչո՞ւ կարմրեց Սուսիկը։ (Հասկացավ, որ ինքը լավ չի վարվել, որ մարդը նաև աշխատանքով է գեղեցիկ)

• Քո կարծիքով՝ էլ ինչի՞ց կարելի է կարմրել։ (Ամաչելուց, տաքանալուց, վազելուց, զայրանալուց, և այլն)

• Ինչո՞ւ էր Լուսիկն ավելի գեղեցիկ։ (Նրանք երկուսն էլ գեղեցիկ էին։ Ուղղակի Սուսիկը ճիշտ չպահեց իրեն, բայց վերջում հասկացավ ու անպայման կուղղի իր սխալը)

• Ինչո՞վ էին քույրիկները նման և ինչո՞վ էին տարբեր։ (Նման էին արտաքինով, տարբեր էին արածներով)

• Քո կարծիքով՝ կցանկանա՞ր Սուսիկը նմանվել Լուսիկին, ինչո՞ւ։ (Այո։ Նա հասկացավ, որ պետք է օգնի մայրիկին, քույրիկին)

• Մայրիկը շարունակեց սիրել աղջիկներին, ինչո՞ւ։ (Նա միշտ էլ սիրում էր իր աղջիկներին։ Սուսիկը ևս Լուսիկի նման լավն էր, պարզապես չէր հասկանում, որ եթե ապրում ես ընտանիքում, պետք է ընտանիքի հոգսը մի քիչ էլ դու վերցնես քեզ վրա։ Իսկ մայրիկը գիտեր, որ այդ դասից հետո Սուսիկը փոխվելու է)

Մինչ Սուսիկը խաղում էր ջրի հետ, Լուսիկն արդեն ջրել էր ծաղիկները, մաքրել բակը, նաև դասավորել խաղալիքները:

Երեկոյան, ընթրիքից հետո, երեխաները հարցրին.

– Ասա՛, մայրի՛կ, ո՞վ է մեզանից գեղեցիկ:

Մայրիկը նայեց աղջիկներին, նայեց ու ասաց.

– Ես լավ չեմ հիշում. առավոտյան ո՞վ ջրեց ծաղիկները:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը:

– Ո՞վ մաքրեց բակը:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը:

– Ո՞վ դասավորեց խաղալիքները:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը:

– Ուրեմն, ո՞վ է ավելի գեղեցիկ:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը և կարմրեց:

Նա հասկացավ, թե ինչու է Լուսիկն իրենից գեղեցիկ:

## Հարցեր

1. Ովքե՞ր էին պատմվածքի հերոսները:
2. Ի՞նչ էր անում աղջիկներից յուրաքանչյուրը մինչև մայրիկի վերադարձը:
3. Ինչո՞վ էին աղջիկները նման իրար:
4. Ինչո՞ւ կարմրեց Սուսիկը: Է՞լ երբ են կարմրում:
5. Ինչո՞ւ էր Լուսիկն ավելի գեղեցիկ:
6. Կցանկանա՞ր Սուսիկը նմանվել Լուսիկին: Ինչո՞ւ:
7. Ի՞նչ կպատմի Սուսիկը աշխատանքից նոր տուն վերադարձած հայրիկին:

2 Գտի՛ր 5 տարբերություն:

## Առաջադրանքներ

1 Օգտվելով տեքստից՝ ավարտի՛ր նախադասությունները:

Մինչ Սուսիկը խաղում էր, Լուսիկը _____:

Սուսիկը հասկացավ, որ _____:



### 5.4.4. Աշխատանք ընթերցողական կարողությունների զարգացման շուրջ

Ուսուցիչը առաջարկում է տեքստը ընթերցել.

✓ *դերերով*

✓ *ընտրովի*

- Կարդա՛ այն տողերը, որոնք պատմում են Լուսիկի բնավորության մասին:

- Կարդա այն տողերը, որոնցից երևում է, որ Սուսիկը հասկացավ իր սխալը: Խրախուսվում է արտահայտիչ ընթերցանությունը:

### 5.4.5. Աշխատանք տեքստի ընթերցումից հետո

Կարելի է տեքստը վերարտադրել տարբեր ձևերով.

✓ *դերային խաղով*

✓ *ստեղծագործաբար*

(պատմել մայրիկի անունից, պատմել Սուսիկի, Լուսիկի անունից)

**Առաջադրանք 1.** Օգտվելով տեքստից՝ ավարտի՛ր նախադասությունները.

*Մինչ Սուսիկը խաղում էր, Լուսիկը* _____:

*Սուսիկը հասկացավ, որ* _____:

Նմանատիպ առաջադրանքները նպաստում են ընթերցողական կարողությունների զարգացմանը, տեքստը հասկանալով ընթերցելուն, ուշադրության զարգացմանը, տեքստում արագ կողմնորոշվելու կարողության զարգացմանը:

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է մեկ անգամ ևս ուշադիր ընթերցել տեքստը:

Մինչ Սուսիկը խաղում էր, Լուսիկը տան գործերն էր անում:

Սուսիկը հասկացավ, որ սիրելի, գեղեցիկ դառնալը ապացուցվում է նաև կատարած գործերով:



ԳՐԱԳԱՐԱԿ

ԺԱՄԱՆԱԿ

Արև ծագեց՝ առավոտ է,
Արթնանալը արդեն մոտ է,
Դե շտապիր, գործեր ունես,
Մինչ երեկո պիտ հասցնես:

Թե արևը պտույտ չտա,
Ժամանակը ի հայտ չի գա,
Օր չի լինի, ամիս, տարի,
Ժամանակը լուռ կմարի:

Վաթսուն րոպեն ժամ չի դառնա,
Ժամերը՝ օր, օրը՝ շաբաթ,
Շաբաթն ամիս չի արարի,
Իսկ ամիսը՝ կլոր տարի:

Դե շուտ վեր կաց, ժամին նայիր,
Ժամանակդ միշտ խնայիր:
Հեռախոսով խա՞ղ ես խաղում.
Հաշվի՛ր՝ ինչքա՞ն չես խնայում:
Թե ամեն օր մի ժամ խաղաս,
Ամսվա մեջ ի՞նչ կստանաս:

**Առաջադրանք 2.** Գտի՛ր 5 տարբերություն: Առաջադրանքը նշված է **ՈՒԽ** պայմանանշանով: Նշանակում է, որ այն զվարթ բնույթ ունի: Այս առաջադրանքը նպաստում է, որ սրվի երեխաների ուշադրությունը, որ նրանք կարողանան ուշադրությունը երկարատև լարել որևէ առաջադրանք կատարելիս:

3 Կարդա՛ երգը և դի-տի՛ր տեսահոլովակը: Երգից դո՛ւրս գրիր գործողություն ցույց տվող բառեր:

vachagan.am

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԻ ԵՐԳԸ

Ես մի բառ եմ, երեք տառ եմ,
Ինձ ասում են, որ ես բայ եմ,
Ցույց եմ տալիս գործողություն,
Ամեն ինչը գործի գցում:

Ես կարող եմ թե՛ նկարել,
Թե՛ սովորել, թե՛ լավ պարել,
Հազար-հազար գործ կատարել,
Ինչ կատարվի՝ բառ հորինել:

4 Տեքստից գտի՛ր երկու բառ, որոնք տարբերվում են մեկ տառով:

5 Տեքստը պատմի՛ր Լուսիկի կամ Սուսիկի անունից:

6 Գրի՛ր՝ ինչ գործեր ես դու անում քո ընտանիքում:

7 ՈՒԽ Արամը :

-ն պատկերիր այնպե՛ս, որ ստացվի՝ Արամն ուրախ է:

8 Վերծանի՛ր նկարելուկը: Գրի՛ր ստացված բառը:

2

ու=վ դ=յ

ԱՌԱԾ

Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն:

Ընկերոջդ բացատրի՛ր, թե ինչպես ես հասկանում առածը:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես սովորեցի...
Ես կարողացա...
Ես հասկացա...

Մարդը գեղեցիկ է իր արած գործերով:

100

### 5.4.6. Աշխատանք «Գործողություն ցույց տվող բառի երգի» շուրջ

**Առաջադրանք 3.**

Կարդա՛ երգը և դիտի՛ր տեսահոլովակը: Երգից դո'ւրս գրիր գործողություն ցույց տվող բառեր:

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԻ ԵՐԳԸ**

Ես մի բառ եմ, երեք տառ եմ,
Ինձ ասում են, որ ես բայ եմ,
Ցույց եմ տալիս գործողություն,
Ամեն ինչը գործի գցում:

Ես կարող եմ թե՛ նկարել,
Թե՛ սովորել, թե՛ լավ պարել,
Հազար-հազար գործ կատարել,
Ինչ կատարվի՝ բառ հորինել:

Երեխաները կարդում են երգը, այնուհետև QR-կոդի միջոցով լսում և դիտում են տեսահոլովակը:

Դասագրքում հայոց տառերի, լեզվական որոշ հասկացությունների մասին գրվել են երգեր: Դրանցից ինը ներկայացված են շատ գեղեցիկ տեսահոլովակներով: Ներկայացված են բոլորովին նոր տեսանկյունից: Երգերում զուգակցված են լեզվական տվյալ հասկացությունների գործառնական նշանակությունները գեղարվեստական ձևի մեջ: Ինչ-որ առումով սրանք ուսումնական բանաստեղծություններ են, որոնք շատ դեպքերում համեմվում են հումորով, հետաքրքրաշարժ մեկնաբանություններով, անսպասելի զուգորդություններով:

Աննկատ, առանց առաջին պլան մղելու, տրվում է այս կամ այն տառի, լեզվական որևէ հասկացության լեզվաբանական գործառույթը, նրա պատմությունը, ինչով է յուրահատուկ նա, և այլն:

**Գործողություն ցույց տվող** բառերն են.

| |
|---|
| ասում են |
| տալիս եմ |
| գցել |
| կարող եմ |
| նկարել |
| սովորել |
| պարել |
| կատարել |
| հորինել |

### 5.4.7. Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար

**Առաջադրանք 4.** Տեքստից գտի՛ր երկու բառ, որոնք տարբերվում են մեկ տառով:

Պատասխանն է՝ *Լուսիկ, Սուսիկ:*

Առաջադրանքը կատարելու համար երեխաները պետք է մեկ անգամ ևս ուշադիր կարդան տեքստը, մտապահեն որոշ բառեր: Սա տեքստը առավել կենտրոնացած կարդալու վարժանք է նաև:

### 5.4.8. Տեքստի պատմում որևէ հերոսի անունից

**Առաջադրանք 5.**

Տեքստը պատմի՛ր Լուսիկի կամ Սուսիկի անունից:

***Պատմությունը պատմում է Լուսիկը:***

*Ես ու Սուսիկը երբեմն վիճում էինք, թե մեզանից ով է ավելի գեղեցիկ: Հաճախ կատակով էինք վիճում, երբեմն էլ՝ առանց կատակի:*

*– Որ շատ չվիճենք, արի մայրիկին հարցնենք, – մի օր ասաց Սուսիկը:*

*– Լա՛վ, – ասացի ես:*

*Հարցրինք: Մայրիկն ասաց, որ երեկոյան կպատասխանի: Մինչև երեկո դեռ շատ ժամանակ կար: Ես մտածեցի, որ լավ կլինի մի քիչ տունը կարգի բերեմ, ծաղիկները ջրեմ, բակը մաքրեմ: Սկսեցի աշխատել: Լուսիկին էլ ասում էի, որ օգնի: Լուսիկն էլ հեռախոսը գրկել էր ու ընկել խաղերի գիրկը:*

*«Հիմա գալիս եմ, էս մասն էլ անցնեմ, շատ դժվար տեղ եմ հասել»,- անընդհատ ասում էր Սուսիկը: Հետո հոգնեց ու քնեց: Երբ աչքերը բացեց, ես արդեն ամեն ինչ արել էի: Երեկոյան մայրիկը հարցրեց, թե ով է այսքան գործը արել: Սուսիկը խոստովանեց, որ ամեն բան ես եմ արել: Թեև ես ուզում էի ասել, որ Սուսիկն ուզում էր օգնել, բայց հոգնած էր: Մայրիկը Սուսիկին ասաց.*

*– Հիմա հասկացա՞ր, թե ով է ավելի գեղեցիկ:- Սուսիկը կարմրեց: Նա արդեն հասկացել էր: Ճիշտն ասած, ես էլ մի քիչ ամաչեցի, որ այդպես ստացվեց. Չէ՞ որ մենք քույրիկներ ենք: Ես համոզված եմ, որ Սուսիկն այլևս այդպես չի վարվի:*

### 5.4.9. Փոքրիկ հետազոտական աշխատանք

**Առաջադրանք 6.** Գրի՛ր քո փոքրիկ գործերի մասին: Ի՞նչ գործեր ես դո՛ւ անում, որով տարբերվում ես քո ընտանիքի մյուս անդամներից:

Երեխաները պետք է ուշադիր լինեն, վերհիշեն, հարցնեն ծնողներին, ուսուցիչներին, թե իրենք ինչ գործեր են կատարում և այդ մասին գրեն տետրերում:

### 5.4.10. Աշխատանք նկարելուկի շուրջ

**Առաջադրանք 7.**

Վ ե ր ծ ա ն ի՛ ր նկարելուկը: Գրի՛ր ստացված բառը:

Այս նկարելուկով ներկայացված է «Աչքի առաջ» խորագրի **երկվոր յակ** բառը:

Ներկայացված է ժողովրդական մի առած՝ «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն»: Այս փոքրիկ պատմությունը այդ առածի ներկայացումն է: Այսինքն՝ մարդը գեղեցիկ է դառնում իր արած օգտակար աշխատանքով ու գործերով:

### 5.4.11. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)

Անդրադարձ է կատարվում դասանյութի յուրացման ընթացքում կատարած աշխատանքին, վեր հանվում գլխավոր իմաստը, որ թեև քույրերն արտաքինով իրար շատ նման են, սակայն տարբեր են իրենց կատարած գործերով:

Երեխաները կարդում են անավարտ նախադասությունները, որոնց միտքը պետք է ավարտել: Արտահայտում են իրենց կարծիքը՝ թե ինչ սովորեցին, ինչ կարողացան անել, ինչ հասկացան:

Ես սովորեցի _____
Ես կարողացա _____
Ես հասկացա _____

Այնուհետև կարդում են ամփոփման պատուհանիկի գրառումը և ազատ ու անկաշկանդ արտահայտում իրենց կարծիքն այդ մասին:

**ԳԵՂԵՑԻԿԸ (հեքիաթ)**

Երկու աղջիկ մթերքով լի պայուսակներով գնում են: «Ես ամենագեղեցիկն եմ աշխարհում,– մտածում է նրանցից մեկը՝ շուրջբոլորը նայելով:– Ափսո՜ս, չկա մեկը, որ ինձ ասի դա»:

Մյուս աղջիկը ևս գեղեցիկ էր ու մտածում էր՝ շուտ տուն հասնի, ծնողներին խնամի, տան գործերն անի, ազատ ժամանակ գտնի, գորգ գործի և տան փոքրիկներին հեքիաթ պատմի: Հանկարծ նրանց դեմ դուրս եկավ մի տատիկ ու ասաց.

– Մի քիչ ուտելիք կտա՞ք, քաղցած եմ:

Աղջիկներից մեկը հարցրեց.

– Նախ ասա, թե մեր երկուսից ով է ավելի գեղեցիկ:

– Լավ,– ասաց տատիկը,– կասեմ:

Մյուս աղջիկն ուտելիք տվեց նրան: Տատիկն ասաց.

– Գեղեցիկը նա է, ով բարի գտնվեց, ով առանց որևէ բան պահանջելու բարի գործ արեց: Իսկ առանց բարության գեղեցկությունը նման է շողացող սառույցի,– ասաց տատիկն ու անհետացավ:

## 5.5. ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆԱ ԿՈՒՏԻ

### 5.5.1. Աշխատանք տեքստի վերնագրի վերաբերյալ հանելուկի շուրջ

Դասը կարելի է սկսել հանելուկի գուշակությամբ: Ուսուցիչը կարդում է հանելուկը.

*Թեև ունի զույգ թևեր,*
*Բայց չի կարող վեր թռել,՝*
*Ջուր է խմում կում, կում, կում*
*Ու գլուխն է վեր ձգում:*

Աշակերտները փորձում են գուշակել հանելուկի պատասխանը: Զանազան պատասխաններ են հնչեցնում: Գյուղական վայրերի երեխաների համար հանելուկի պատասխանը գտնելը դյուրին է: Նրանք ամեն օր տեսնում են, թե ինչպես է հավը կտուցով ջուր վերցնում ու գլուխը վերև պարզում, որ ջուրը ներս հոսի: Իսկ քաղաքներում ապրողների համար կարող է բարդ թվալ հանելուկի լուծումը: Այդ պատճառով ուսուցիչը կարող է հուշումներ անել, երեխաների միտքը ուղղորդել գերադասելի ուղղությամբ:

Հանելուկը գուշակելուց հետո ուսուցիչը գրատախտակին փակցնում է հավիկի նկարը և հարցնում է, թե աշակերտները ինչ գիտեն հավիկի մասին: Աշակերտները պատասխանում են, ուսուցիչը ուշադիր լսում է նրանց և խրախուսում: Այնուհետև կարդում է մուտքի պատուհանիկի գրառումը:

*Պարզվում է՝ հավիկը կարող է ոչ միայն ձու ածել, այլև հաց թխել:*

«Մտածե՛ք, թե հավիկը ինչպես պետք է հաց թխի»,- ասում է ուսուցիչը: Աշակերտները մտածում են, հետո բարձրաձայնում իրենց մտքերը:

Նրանք զանազան պատասխաններ կարող են տալ: Այսօր շատ ու շատ հեքիաթներ են մուլտֆիլմերի վերածվել, և երեխաները այդ առումով բավականաչափ տեղեկություններ ունեն: Նրանք հեշտությամբ են կենդանիներին վերագրում մարդկային հատկանիշներ և ըստ այդմ դատողություններ անում: Երեխաները նախ պետք է իմանան, թե հացը ինչպես են թխում և որտեղ: Այս աշխատանքը հետաքրքրություն է առաջացնում դասի նկատմամբ, երեխաներին մղում դասը հետաքրքրությամբ կարդալուն:

**Ներկայանում են հերոսները**

– Աշխատում եմ օրնիբուն,
Ձու եմ ածում իմ բնում,
Կչկչում եմ ու քնում...
– Ես էլ իմ գործն եմ անում,
Ճստճստում եմ, ձագ հանում,
Նրանց պահում, խնամում...
– Ես պստիկ եմ, թռչում եմ,
Ծառի վրա բույն ունեմ,
Թուխ-մոխրագույն գույն ունեմ...

Այս դասին դու.

• Առարկա ցույց տվող բառերից կստանաս գործողություն ցույց տվող բառեր:

• Կսովորես հարցեր տալ:

• Կտեսնես, թե ինչպես է ցորենի հատիկը դառնում հաց:

• Կիմանաս, որ Մկնիկը Խանձած բեղերի ցեղից էր:

## ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆԱ ԿՈՒՏԻ

**Հեքիաթ**

**Պարզվում է՝ հավիկը կարող է ոչ միայն ձու ածել, այլև հաց թխել:**



Մի խրճիթում* ապրում էին Մուկիկը, Ցիտիկը և Հավիկը: Մի օր քուջուջ անելիս* Հավիկը մի հատիկ գտավ ու կանչեց.

– Հատի՜կ եմ գտել, հատի՜կ եմ գտել: Ո՞վ կտանի աղալու:

– Ես՝ չէ,– ասաց Մուկիկը:

– Ես էլ՝ չէ՛,– ասաց Ցիտիկը:

Ի՞նչ աներ Հավիկը: Հատիկը ջրաղաց տարավ, աղաց:

– Ալյուրն ո՞վ տուն կտանի,– հարցրեց Հավիկը:

– Ես՝ չէ,– ասաց Ցիտիկը:

– Ես էլ՝ չէ՛,– ասաց Մուկիկը:

Հավիկն ալյուրը շալակեց, տուն տարավ:

– Ո՞վ խմոր կանի,– հարցրեց Հավիկը:

– Ես՝ չէ,– ասաց Մուկիկը:

– Ես էլ՝ չէ՛,– ասաց Ցիտիկը:

Հավիկը խմոր հունցեց*:

– Թոնիրն* ո՞վ կվառի,– հարցրեց Հավիկը:

* **Խրճիթ** – գյուղական փոքրիկ տնակ:
* **Քուջուջ անել** – ձանկերով գետինը փորել՝ կեր որոնելու համար:
* **Հունցել** – ալյուրն ու ջուրը իրար խառնելով՝ ստացված խմորը լավ շաղախել:
* **Թոնիր** – գետնափոր վառարան՝ հաց թխելու, ձաշ եփելու համար:



### 5.5.2. Աշխատանք գլխագրի շուրջ

Այնուհետև, ուսուցչի հանձնարարությամբ, կարդում են գլխագրի կետերը և բարձրաձայնում իրենց կարծիքները: Առաջին և երկրորդ կետերի աշխատանքներին նրանք արդեն ծանոթ են նախորդ դասերից: Երրորդ կետը ավելի քան հետաքրքրական

կարող է լինել: Իսկ չորրորդ կետը դարձյալ փոքրիկ «սադրանք» է պարունակում՝ ի՞նչ Մկնիկ, ի՞նչ Խանձած բեղերի ցեղ:

### 5.5.3. Աշխատանք տեքստի շուրջ

Աշակերտներն ընթերցում են դասը և ընթացքում դուրս են գրում կամ ընդգծում այն բառերը, որոնց իմաստը չգիտեն: Հնարավոր է, որ աշակերտներին կարիք լինի բացատրելու **խրճիթ, քուջուջ, թոնիր, հունցել** բառերը: Հարկ եղած դեպքում ուսուցիչը աշակերտների օգնությամբ կատարում է բառաբացատրական աշխատանք:

**Քուջուջ անել** - ճանկերով գետինը, աղբը և այլն փորել՝ կեր որոնելու համար:

**Խրճիթ** - խղճուկ տուն, հյուղակ, տնակ:

**Թոնիր** - գետնի մեջ պատրաստած գլանաձև վառարան, որի մեջ հաց են թխում, ինչպես և ճաշ եփում:

**Հունցել** – ալյուրն ու ջուրը իրար խառնելով՝ ստացված խմորը լավ շաղախել:

### 5.5.4. Աշխատանք նորածանոթ բառերի շուրջ: «Թակարդ» խաղը

Նորածանոթ բառերի իմացությունն ամրապնդելու համար կարելի է կազմակերպել «Թակարդ» խաղը: Ուսուցիչը կարդում է նախադասությունը, որի մեջ նորածանոթ բառը փոխարինված է նույն նշանակությամբ այլ բառով: Աշակերտները գտնում են, թե որ բառն է ուսուցիչը փոխել:

Օրինակ. **Մի փոքրիկ տան** մեջ ապրում էին Մուկիկը, Ծիտիկը և Հավիկը:

Երեխաները պետք է կռահեն, որ **խրճիթ** բառի փոխարեն գործածվել է **փոքրիկ տուն** բառակապակցությունը:

– Ես՝ չէ,– ասաց Մուկիկը:
– Ես էլ՝ չէ՛,– ասաց Ծիտիկը:
Հավիկը թոնիրը վառեց:
– Հացն ո՞վ կթխի,– հարցրեց Հավիկը:
– Ես՝ չէ,– ասաց Մուկիկը:
– Ես էլ՝ չէ՛,– ասաց Ծիտիկը:
Հավիկը հացը թխեց, դրեց սեղանին:
– Հացն ո՞վ կուտի,– հարցրեց Հավիկը:
– Ե՜ս,– գոչեց Ծիտիկը և մոտեցավ սեղանին:
– Ե՜ս,– գոչեց Մուկիկը և մոտեցավ սեղանին:

Ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս վարվեց Հավիկը:

## Հարցեր

1. Ովքե՞ր էին ապրում խրճիթում:
2. Հավիկը ցորենից ինչպե՞ս հաց ստացավ:
3. Բնութագրի՛ր հեքիաթի հերոսներին:
4. Քո կարծիքով՝ ինչո՞ւ Մուկիկը և Ծիտիկը չաշխատեցին:
5. Մեկական հա՛րց տուր Մուկիկին, Ծիտիկին ու Հավիկին:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

ապրել
խրճիթ
փուզուզ

## Առաջադրանքներ

**1** Ցորենից ստացի՛ր հաց:

○ Լրացրո՛ւ բաց թողած բառերը:

**Ցորեն, ջրաղաց, □□□□□, ջուր, □□□□, թոնիր, հաց:**

✧ **Աղալ, մաղել, հունցել, թխել, վառել, լցնել** բառերով կազմի՛ր բառակապակցություններ՝ օգտվելով վերևում ստացված բառաշարքից:

✲ Այդ բառակապակցություններից երկուսը գործածի՛ր նախադասության մեջ:

**2** **ՄՐՑՈՒՅԹ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ**

**Աշխատասեր** բառի տառերով կազմե՛ք նոր բառեր: Համեմատե՛ք մյուս խմբերի կազմած բառերի հետ:



### 5.5.5. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

1. Ովքե՞ր էին ապրում խրճիթում: (Մուկիկը, Ծիտիկը և Հավիկը)
2. Հավիկը ցորենից ինչպե՞ս հաց ստացավ:

Այս հարցին պատասխանելու համար ուսուցիչը գրատախտակին գրում է **հատիկ, թոնիր, ջրաղաց, խմոր, թխել, հունցել** բառերը և առաջարկում է դասավորել բառերը ըստ հացը թխելու հերթականության: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել, որ աշակերտները մեկ անգամ ևս ընթերցեն տեքստի համապատասխան հատվածը:

**Առաջադրանք 1.** Ցորենից ստացի՛ր հաց:

Ինչպես տեսնում ենք «Դեպի վեր» առաջադրանքներից է, որը նախատեսված է տարբեր կարողություններ ունեցող երեխաների համար:

○ Կետով տրված է մի բառաշղթա, որի մեջ բաց է թողնված երկու բառ: Պետք է տրամաբանորեն մտածել և գտնել, թե որ բառերն են բաց թողնված: Երեխաները կմտածեն այսպես. ցորենը ջրաղացում դառնում է **ալյուր,** որը խառնելով ջրին՝ դառնում է **խմոր,** որը թոնիրում դառնում է հաց:

✧ Կետով կազմվում են այսպիսի բառակապակցություններ.

**ցորեն աղալ, ալյուր մաղել, խմոր հունցել, թոնիր վառել, հաց թխել:**

☼ Կետի պահանջի համաձայն կարելի է կազմել բազմաթիվ նախադասություններ:

Օրինակ. Ցորենը աղում են ջրաղացում: Հացը թխում են թոնրի մեջ:

**Առաջադրանք 2.**

### 5.5.6. ՄՐՑՈՒՅԹ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

**Աշխատասեր** բառի տառերով կազմե՛ք նոր բառեր: Համեմատե՛ք մյուս խմբերի կազմած բառերի հետ:

«Բառքամոցի» խաղը մեծ տարածում ունի ինչպես աշակերտների, այնպես էլ մեծահասակների շրջանում: Փորձը ցույց է տվել, որ երեխաները մեծ հաճույքով են կատարում այս բնույթի առաջադրանքները: Սա նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանը, օգնում է արագ կողմնորոշվելուն, զարգացնում է համակցական մտածողությունը, սեր արթնացնում լեզվի նկատմամբ, դաստիարակում է որևէ գործ մինչև վերջ հասցնելու համառություն, արթնացնում է առողջ մրցակցային ոգի:

Խաղը բավականին պարզ է. անհրաժեշտ է նշված բառի տառերով կազմել (բառից քամել) եզակի թվով, ուղղական հոլովով հասարակ գոյականներ: Տվյալ դեպքում երեխաներին պետք է ասել, որ բառի տառերով պետք է կազմել միայն **առարկա ցույց տվող բառեր**:

Նշենք, որ նոր կազմվող բառի մեջ չի կարող լինել ասենք՝ 2 հատ **ա** եթե առաջարկվող բառի մեջ **ա**-ն մեկն է և այլն: Այս խաղի հիմնական նպատակներից մեկն էլ նոր բառերի ուսուցումն է, այնպես որ պետք է խրախուսվեն այն աշակերտները, որոնք գրել են այնպիսի բառեր, որոնք ոչ ոք չի գրել:

Խաղը կարելի է հանձնարարել ինչպես դասարանում, այնպես էլ տալ որպես տնային հանձնարարություն:

Տարիների փորձը ցույց է տվել, որ երեխաները մեծ հաճույքով են խաղում այս խաղը: Այն զվարթություն է մտցնում դասի մեջ, շատ հարմար է խմբային աշխատանքի համար, մեծապես նպաստում է միասին աշխատելու հմտությունների ձևավորմանը:

Առաջադրանքը կարելի է կազմակերպել զույգերով: Որ զույգը ավելի շատ բառ կքամի: Առաջադրանքը ավարտելուց հետո ուսուցիչը **աշխատասեր** բառը գրում է գրատախտակին, աշակերտները կարդում են իրենց գրած բառերը, իսկ ուսուցիչը դրանք գրում է գրատախտակին: Այստեղ կարևոր է, որ աշակերտները շատ ուշադիր լսեն ընկերների քամած բառերը և չկրկնեն, ասեն այն բառերը, որոնք դեռ չեն ասվել: Ընթացքում աշակերտները և՛ կարդում են իրենց գրած բառերը, և՛ ավելացնում են իրենց գրածին այն բառերը, որոնք չէին գրել:

**Աշխատասեր** բառից կարելի է կազմել այսպիսի բառեր: Նկատենք, որ բառերի մի մասը այդ տարիքի երեխաների բառապաշարից դուրս է: Դրանք տրվում են խաղի ընդհանուր պատկերը ամբողջացնելու համար: Երեխաներին պետք է հատուկ զգուշացնել, որ *հայերեն տառանունները ևս առարկա ցույց տվող բառեր են* և կարող են քամվել:

| | |
|---|---|
| ախտ | խրատ |
| աշխետ | շա |
| աշտե | շախ |
| ար | շար |
| արա | շերտ |
| արատ | սար |
| արտ | սեխ |
| երախ | սեր |
| երաշտ | տեր |
| խաշ | տրեխ |
| խե | րե |

3

## ՍՈՎՈՐԻՐ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

**Գրի՛ր հարցեր, որոնց պատասխաններն այս նախադասություններն են:**

- Ծիտիկն ու Հավիկը ապրում էին մի խրճիթում:
- Քուջուջ անելիս Հավիկը գտավ մի հատիկ:
- Հավիկն ալյուրը շալակեց, տուն տարավ:
- Ծիտիկն ու Մուկիկը մոտեցան սեղանին:

Օրինակ: **Հավիկն ալյուրը շալակեց, տուն տարավ:**
Հավիկն ի՞նչ արեց:
Հավիկն ի՞նչ շալակեց:
Հավիկն ո՞ւր տարավ ալյուրը:

4 Աջ սյունակի բառերը դի՛ր ճիշտ տեղերում և ստացի՛ր նախադասություններ: Նախադասությունները դասավորի՛ր ըստ հաց ստանալու ընթացքի:

| | |
|---|---|
| Ցորենը | վառում են |
| Թոնիրը | թխում են |
| Հացը | աղում են |
| Խմորը | մաղում են |
| Ալյուրը | հունցում են |

5 Ըստ օրինակի՝ լրացրո՛ւ աղյուսակը:

Օրինակ՝ **ծիտիկ – ծիտիկներ**:

| Եզակի (մեկ) | Հոգնակի (շատ) |
|---|---|
| մուկ | |
| կատու | |
| հատիկ | |
| խրճիթ | |



### 5.5.7. ՍՈՎՈՐԻ՛Ր ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

**Առաջադրանք 3.** Գրի՛ր հարցեր, որոնց պատասխաններն այս նախադասություններն են:

- Ծիտիկն ու Հավիկը ապրում էին մի խրճիթում:
- Քուջուջ անելիս Հավիկը գտավ մի հատիկ:
- Հավիկն ալյուրը շալակեց, տուն տարավ:
- Ծիտիկն ու Մուկիկը մոտեցան սեղանին:

Օրինակ: Հավիկն ալյուրը շալակեց, տուն տարավ:

Հավիկն ի՞նչ արեց:

Հավիկն ի՞նչ շալակեց:

Հավիկն ո՞ւր տարավ ալյուրը:

### 5.5.8. Աշխատանք «Սովորիր հարցեր տալ» խորագրի շուրջ

Աշխատանքը կարելի է կազմակերպել խմբային աշխատանքի ձևով:
**Աշխատանքի քայլաշարը**

- Դասարանը բաժանել խմբերի:
- Յուրաքանչյուր խմբին տալ առանձին թղթի վրա գրված նախադասություններից մեկը և մի որևէ գույնի թանաքամատիտ:
- Հանձնարարել , որ յուրաքանչյուր խումբ այդ նախադասության վերաբերյալ ձևակերպի մի այնպիսի հարց, որի պատասխանը լինի տվյալ նախադասությունը:
- Հետո թղթերը շրջանաձև փոխանցել խմբից խումբ (թանաքամատիտը մնում է խմբում):
- Մյուս խմբերը եթե տեսնում են, որ այլ հարց հնարավոր չէ տալ, ուղղակի + են դնում, իսկ եթե կարծում են, որ հարցը սխալ են ձևակերպել, կամ կարելի էր այլ հարց տալ, կամ կարելի էր ավելի ճիշտ ձևակերպել, ապա այդպես էլ անում են:
- Երբ թղթերը պտտվում են բոլոր խմբերով, և բոլոր խմբերը գրում են իրենց հարցերը կամ դիտարկումները, ապա արդյունքները դրվում են ընդհանուր քննարկման:

Տվյալ պատասխաններին կարելի է տալ այսպիսի հարցեր.

1. Որտե՞ղ էին ապրում Ծիտիկն ու Հավիկը:
   Ծիտիկն ու հավիկը ինչպիսի՞ պալատում էին ապրում:
   Ովքե՞ր էին ապրում հսկա պալատում:

2. Մուկիկը ի՞նչ էր անում:

   Ինչի՞ց էր վախենում Մուկիկը:
   Մուկիկը վախենում էր, որ ո՞վ վրա կտա:

3. Ի՞նչ արեց Հավիկը:

Հավիկը ի՞նչը տուն բերեց:
Հավիկը պարկը ո՞ւր տարավ:

4. Ի՞նչ արեց Հավիկը:
Հավիկը թոնիրը ի՞նչ արեց:
Ո՞վ վառեց թոնիրը:

**Առաջադրանք 4.**

Աջ սյունակի բառերը դի՛ր ձիշտ տեղերում և ստացի՛ր նախադասություններ: Նախադասությունները դասավորի՛ր ըստ հաց ստանալու ընթացքի:

| | |
|---|---|
| Ցորենը | վառում են |
| Թոնիրը | թխում են |
| Հացը | աղում են |
| Խմորը | մաղում են |
| Ալյուրը | հունցում են |

Ըստ տեքստի և նախորդ առաջադրանքների՝ երեխաները արդեն պատկերացրել են հաց ստանալու քայլաշարը:

Առաջադրանքը կատարելու համար ուսուցիչը գրատախտակի մի կողմում գրում է առարկա ցույց տվող *ցորեն, թոնիր, հաց, խմոր, ալյուր* բառերը, մյուս կողմում խառը հերթականությամբ՝ գործողություն ցույց տվող բառերը՝ *վառում են, թխում են, աղում են, մաղում են, հունցում են:* Առաջարկում է առարկա ցույց տվող բառերը համապատասխանեցնել գործողություն ցույց տվող բառերին՝ ըստ նրանց իմաստների, և կազմել նախադասություններ: Որից հետո աշակերտները կարդում են նախադասությունները՝ ըստ հաց ստանալու հերթականության:

*Ցորենը աղում են, ալյուրը մաղում են, խմորը հունցում են, թոնիրը վառում են, հացը թխում են:*

Կարելի է նաև առաջադրանքը ցույց տալ ոչ խոսքային հաղորդակցմամբ՝ մնջախաղով:

Վերջում կստացվի այսպիսի աղյուսակ.

| |
|---|
| Ցորենը աղում են: |
| Ալյուրը մաղում են: |
| Խմորը հունցում են: |
| Թոնիրը վառում են: |
| Հացը թխում են: |

### 5.5.9. Եզակիի և հոգնակիի իմացության ամրապնդում

**Առաջադրանք 5.**

5 Ըստ օրինակի՝ լրացրո՛ւ աղյուսակը:

Օրինակ՝ **ծիտիկ – ծիտիկներ**:

| Եզակի (մեկ) | Հոգնակի (շատ) |
|---|---|
| մուկ | |
| կատու | |
| հատիկ | |
| խրճիթ | |

Ամրապնդում է եզակիի և հոգնակիի մասին իմացությունը: Ինչպես նաև երեխաներն իմանում են, որ **մուկ** բառի հոգնակին կազմվելիս **ու**-ն դառնում է գաղտնավանկի **ը՝ մուկ-մկներ**:

Առաջադրանքը կատարելուց առաջ աշակերտները վերհիշում են.

- ինչ է նշանակում եզակի (մեկ առարկա):
- ինչ է նշանակում հոգնակի (շատ առարկաներ):
- Վերհիշում են թե, ինչպես է եզակիից կազմվում հոգնակին՝ ուշադրության կենտրոնում պահելով գրքում բերված օրինակը.

*մուկ - մկներ*

*կատու - կատուներ*

*հատիկ - հատիկներ*

*խրճիթ - խրճիթներ*

**Խնդուկ-խնդմնդուկ**

Ուսուցչուհին հարցնում է երեխաներին.
– Ո՞վ կարող է մեկ բառով ասել «հաց» և «թխել» բառերը:
– Մայրի՜կ, մայրի՜կ,– պատասխանում են ոմանք:
– Հավիկ մայրի՜կ,– ասում է Լուսինեն:
– Հացաթուխ,– ասում է Տիգրանը:
– Հացթուխ,– գլխի է ընկնում Հայկը:

6 ▶▶ ✍ **ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

vachagan.am

Տե՛ս, թե ինչպես, բառի մեջ մի-մի տառ փոխելով, **շուն**-ից ստանում ենք **կով**.

**շուն – հուն – հոն – հով – կով:**

Այժմ դու **հավ**-ից ստացի՛ր **մուկ**.

**հավ – հով – հո□ – հուր – □ուր – մուկ:**

vachagan.am

7 Կարդա՛, թե ինչպես է Մուկիկը պատմում այս հեքիաթը: Դու էլ հեքիաթը պատմի՛ր Ծիտիկի կամ Հավիկի անունից:

**ՊԱՏՄՈՒՄ Է ՄՈՒԿԻԿԸ**

Ես, Ծիտիկն ու Հավիկը ապրում էինք մի հսկա պալատում:

Մի օր Հավիկը քուջուջ անելիս մի հատիկ գտավ: Հատիկ մի ասա, մի մե՜ծ սար ասա:

– Ո՞վ կտանի աղալու,– ասաց հավիկը:

Ես ու Ծիտիկը նայեցինք իրար. էս հսկա սարը մենք տեղից ո՞նց շարժենք:

– Չե՛նք կարող,– ասացինք մենք:

Հավիկին ի՜նչ կա: Կտուցով բռնեց հսկա հատիկն ու տարավ ջրաղաց:

Ջրաղացը մի քանի օր աղում էր ու աղում: Մի մե՜ծ պարկ ալյուր դուրս եկավ:

– Եկեք ալյուրը տարե՛ք,– զանգեց Հավիկը:

– Ես չեմ կարող, վախենում եմ ճամփին կատուն վրա տա,– ասացի ես:

– Ես էլ չեմ կարող, ոտքս փուշ է մտել, չեմ կարողանում թռչել,– ծլվլաց Ծիտիկը:

Հավիկը քթի տակ կչկչաց, պարկը շալակեց, տուն բերեց:

– Խմոր պիտի հունցեմ,– ասաց Հավիկը,– ջո՛ւր բերեք:

104

### 5.5.10. «Փոխակերպում» բառախաղը

**Առաջադրանք 6.** Այս բնույթի առաջադրանքների մասին նախորդ դասերում բավականին մանրամասն խոսվել է: Պարզապես հիշեցնենք, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր քայլին միայն մեկ տառ փոխել և ստանալ նոր բառ: Այդ նոր բառում ևս մեկ տառ փոխել՝ հաշվի առնելով հաջորդ բառի տառերը, և ստանալ նոր բառ: Այդպես մինչև

ելակետային բառից վերջնական բառը ստանալը: Այս ամենը ուսուցիչը բացատրում է երեխաներին, գրատախտակին գրելով փոխակերպման շղթան. **շուն - հուն - հոն - հով - կով:**

Հետո առաջարկում է աշակերտներին, որ նրանք ինքնուրույն լրացնեն **հավ**-ից **մուկ** ստանալու շղթայում բաց թողնված տառերը:

**Հավ - հով - հոր - հուր - մուր - մուկ**:

Կա այս առաջադրանքի էլեկտրոնային տարբերակը:

### 5.5.11. «Փոխակերպում» բառախաղի էլեկտրոնային տարբերակի նկարագրությունը

Էկրանին երևում է, թե ինչպես է **շուն** բառից ստացվել **կով** բառը:

**Հավ** բառից **մուկ** ստանալու համար երեխան սեղմում է Օ-ով բառի վանդակին: Բացվում են **կ, հ, մ** տառերը: Դրանցից նա պետք է ընտրի **հ** տառը: **Կ** կամ **մ** ընտրելիս՝ լսվում է արգելող ազդանշան: **Հ** տառը ընտրելիս՝ գրվում է **հով** բառը: Այդպես մինչև լրանա ամբողջ բառաշղթան.

**հավ – հով – հոր – հուր – մուր – մուկ:**

### 5.5.12. Աշխատանք պատմելու կարողությունների զարգացման շուրջ

Աշակերտները հեքիաթը նախ պատմում են հեղինակի անունից, ապա կարող են նաև դերային խաղով ներկայացնել:

Ուսուցիչը հանձնարարում է տեքստը ընթերցել դերերով: Աշակերտները կարող են իրենք ընտրել որևէ մեկի դերը և ընթերցել: Դերերով ընթերցանությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է նախապես հարցնել, թե քանի հերոս կա տեքստում, առանձնացնել հեղինակի խոսքը: Առաջին ընթերցման ժամանակ ուսուցիչն ինքը կարող է կարդալ հեղինակի խոսքը, որպեսզի աշակերտները կարողանան հստակ առանձնացնել այն: Իսկ հետո՝ հաջորդ ընթերցման ժամանակ աշակերտներից մեկը կարողանա հստակ կարդալ հեղինակի խոսքը:

### 5.5.13. Տեքստի պատմում որևէ հերոսի անունից

Կարդում են առաջադրանք 7-ում գրված հեքիաթը, որը պատմել էր Մուկիկը:

Ուսուցիչն իր հայեցողությամբ կարող է կամ սկզբում երեխաներին ցուցադրել «Պատմում է մուկիկը» տեքստի տեսահոլովակը, կամ երեխաների կարդալուց հետո:

### 5.5.14. Հարցեր և առաջադրանքներ կարդացածի վերաբերյալ

1. Քո կարծիքով՝ ինչո՞ւ Մուկիկն ու Ծիտիկը չաշխատեցին: (Ալարկոտ էին, ծույլիկներ էին: Մտածում էին՝ Հավիկը, ինչպես միշտ, բոլորի փոխարեն կաշխատի: Հե-

քիաթում նրանք ներկայացված են աշխատել չսիրող հերոսներ: Իրական կյանքում Մուկիկն էլ Ծիտիկն էլ շատ աշխատասեր են)

2. Ինչպե՞ս արդարացավ Ծիտիկը: (Ասաց, որ ոտքը փուշ է մտել, չի կարող թռչել: Ասաց, որ ոտքը փուշ է մտել, լուցկին ո՞նց բռնի)

3. Ինչպե՞ս արդարացավ Մուկիկը: (Ասաց, որ վախենում է, որ կատուն ճամփին վրա կտա: Ասաց, որ իր պապերը բեղերը խանձել են թոնիր վառելիս)

Այս հարցերը աշակերտներին մղում են վերլուծելու, դատողություններ անելու, կարծիք հայտնելու և կապակցված ու հիմնավոր պատասխանելու:

Այնուհետև իրենք պատմում են Ծիտիկի կամ Հավիկի անունից: Կարելի է կազմակերպել խմբային աշխատանք՝ հանձնարարել, որ խումբն ընտրի այն հերոսին, ում անունից ցանկանում է պատմել:

## ԳՐԱԳԱՐԱԿ

### Բառքամոցի

– Մի նոր խաղ եմ սովորել, հայրի՛կ: Արի՛ իրար հետ խաղանք, ի՞նչ կլինի:

– Հիմա՞:

– Չէ՛, լա՛վ, ճաշդ վերջացրո՛ւ, հետո,– անհամբերությունից վառվող աչքերով ասաց Աստղիկը:

– Ի՞նչ խաղ է,– արդեն գրասեղանի մոտ հարցրեց հայրիկը:

– «Բառքամոցի»:

– Հա՜, ես էլ եմ ժամանակին խաղացել, ինձ էլ է դուր գալիս:

– Վա՜յ, ի՞նչ լավ է, սկսե՞նք:

– Բայց բառը ես եմ ասելու,– ասաց հայրիկը:

– Մի անգամ՝ դու, մի անգամ՝ ես,– համաձայնեց Աստղիկը:

– Դե գրի՛ր բառը՝ **բերդաձորակ**:

– Էդպիսի բա՞ռ կա:

– Հետո բառարանով կստուգենք: Բայց մի պայման էլ եմ դնում:

– Լավ, էլի՜, հայրիկ: Դա արդեն երկրորդ պայմանն է:

– Պիտի քո գրած բոլոր բառերում անպայման լինի **ձ** տառը:

– Լա՜վ:

– Տրվում է 5 րոպե: Ով շատ բառեր գրեց՝ հաղթում է,– ասաց հայրիկը:

Հինգ րոպե հետո Աստղիկը գրել էր **բարձր, դերձակ, բարձ, ձոր** բառերը: Իսկ հայրիկը գրել էր **բարձր, դերձակ, բարձ, ձոր, որձ, դարձ, արձակ, բարձակ, ձար, ձա**:

– Ես չգիտեմ **բարձակ, ձար, ձա** բառերը,– գրեթե լացակումած ասաց Աստղիկը:

– Սրանցից մեկը քեզ շատ ծանոթ է:

– Ո՞ր մեկը:

– **Ձա** բառը դու շատ լավ գիտես:

– Չգիտե՜մ:

– Իսկ գիտե՞ս, որ տառերի անուններն էլ կարելի է գրել:

– Չէ՛, չգիտեի:

– Դե՞:

– **Ձա**-ն **ձ** տառի անունն է:

– Ապրե՛ս: **Ձարը** ձիու պոչի մազն է:

– Իսկ **բարձա՞կը**:

– Դա էլ ինքնուրույն գտի՛ր ու հիշի՛ր՝ «Բառքամոցի» խաղը նոր բառեր սովորելու համար է նաև: Այսօրվա մեր խաղի մեջ մի գաղտնիք էլ կար թաքնված:

– Ի՞նչ գաղտնիք:

– Բացի **ձա, ձոր** և **ձար** բառերից, մնացած բառերում **ձ**-ն այնպես է հնչում, կարծես **ց** լինի:

– Հասկացա՜,– ուրախացավ Աստղիկը:– Այդ բոլոր բառերում **ձ**-ն **ր**-ից հետո է:

– Ես գիտեի, որ դու շատ խելացի ես, ապրե՛ս, ճիշտ է:

– Իսկ ինչո՞ւ ենք **ձ** գրում, բայց **ց** ասում:

– Մաշտոցի ժամանակներում **ձ** գրվում և **ձ** էլ արտասանվում էր: Հետո փոխվեց:

– Ինչո՞ւ փոխվեց հետո:

– Դա էլ հետո կիմանաս,– ժպտաց հայրիկը:

Ես ու Օիտիկը մի շաբաթ ջուր էինք կրում, բայց տեղ չէինք կարողանում հասցնել, ճամփին ծարավում էինք, խմում:

Հավիկն ինքը մի մեծ տակառ ճարեց, ջուրը բերեց, խմորը հունցեց, ասաց.

– Դե թոնիրը վառեք, մինչև ես խմորից գնդեր անեմ:

Ես լսել էի, որ պապիս պապը մի անգամ ուզեցել է թոնիր վառի, բեղերը խանձել է, քիչ է մնացել շունչը փչի: Էդ օրվանից մեր ցեղի անունը մնացել է Խանձած բեղեր:

– Էդ իմ խելքի բանը չի,– ասացի ես:

Օիտիկն էլ ասաց, որ ոտքը փուշ է մտել, լուցկին ո՞նց բռնի:

Հավիկը հագավ հրշեջի հագուստը, գլխին դրեց հրշեջի սաղավարտը, թոնիրը վառեց, հացը թխեց:

– Ո՞վ կուտի,– հարցրեց նա:

Ես դեռ բերանս չէի բացել, ոտքը փուշ մտած Օիտիկը մի լոշիկ առավ, թռավ գնաց:

Մի բոքոն էլ կարող էի ես թռցնել, բայց չուզեցի. ամոթից գետինը մտա, այսինքն՝ գնացի գետնի տակի իմ տունը:

Նկարազարդումը համեմատի՛ր տեքստի հետ:

8 ՈՒՍ Ի՞նչ ես տեսնում նկարում: Գտի՛ր նկարչի սխալները:

### 5.5.15. Աշխատանք «սխալ» նկարի շուրջ

**Առաջադրանք 8.** Ի՞նչ ես տեսնում նկարում: Գտի՛ր նկարչի սխալները:

Երեխաներին զվարթացնելու, հեքիաթին այլ աչքերով նայելու, նրանց երևակայությունը խթանելու համար է ստեղծվել այս ուրախ, սխալներով լեցուն նկարը:

Իսկ ի՞նչ սխալներ է արել նկարիչը: Երեխաները հերթով թվարկում են իրենց նկատած սխալները:

*Լավաշները աճում են ծառի վրա:*

*Հավիկը լավաշները քաղում է ծառից:*

*Գրտնակները թևեր ունեն ու ծիտիկի հետ թռչում են:*

*Մուկը Հավիկի քաղած լավաշները բարձել է սայլին, կատվին լծել է սայլին ու մտրակը ձեռքին սայլը քշում է դեպի խրճիթ:*

*Երկու մուկ ողջունում են նրան: Մկներից մեկը գերանդի ունի ուսին, մյուսը՝ փոցխ:*

## ԳՐԱԳԱՐԱԿ

### Դարբին Սերոբը

Ուրբաթ կամ շաբաթ օրերին դարբին Սերոբը համբերատար սպասում էր երեխաներին: Երբ նրանք գալիս էին, նա մուրճը դնում էր սալին, սրբում էր ճակատի քրտինքը ու նրանց բացատրում երկաթի հետ աշխատելու նրբությունները:

– Երկաթին ու կրակին հնարավոր չէ խաբել: Պետք է նրանց հետ նուրբ վարվել,– ասում էր նա:

Երեխաները հիացմունքով էին նայում, թե նա ինչպես էր կրակի ու մուրճի միջոցով հաղթում կամակոր երկաթին: Դարբին Սերոբը շատ հետաքրքիր զրույցներ էր պատմում, հանելուկներ, շուտասելուկներ առաջադրում նրանց:

Մեկ էլ կասեր մի հանելուկ.

*Ի՞նչն է, ի՞նչը.*
*Փափուկ բամբակը*
*Տան բակը փակում,*
*Հենց արև տեսներ,*
*Լալիս էր թաքուն:*

Կամ կասեր մի շուտասելուկ.

*Փամբակում, Բաբկենի բակում բամբակ կա փափուկ:*

Հաղթողներին իրավունք էր տրվում մուրճով հարվածելու կարմրատակած երկաթին:

«Մենք երբեք չենք մոռանա մեր սիրելի դարբին Սերոբին ու նրա դարբնոցում անցկացրած մեր օրերը»,– մտածում էին երեխաները:

**9** Առարկա ցույց տվող բառերից ստացի՛ր գործողություն ցույց տվող բառեր և դրանցով լրացրո՛ւ խաչբառը:
Օրինակ՝ **տեղ – տեղալ**:

**Սյունակներով.**
1. քանդակ
2. մեխ
4. նվագ
6. երգ
7. թերթ
9. լող

**Տողերով.**
3. սանր
4. ներկ
5. պար
8. մեներգ
10. տեղ
11. խաղ



**10** • Բեմականացրե՛ք խնդուկը:

Նարեն խոսում է տիկնիկի հետ.
– Տիկնի՛կ ջան, արի՛, ճաշդ կե՛ր:
– Ճաշդ դո՛ւ կեր, իսկ ես գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:
– Տիկնի՛կ ջան, խելո՛ք մնա:
– Դո՛ւ խելոք մնա, իսկ ես գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

• Մեկ նախադասությամբ գնահատի՛ր ընկերներիդ խաղը:

**11** **ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿ-ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ**

Կարդա՛, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

vachagan.am

Կատուն ածեց երեք ձու,
Հավը ասաց՝ բերեք ձյուն,
Ձյունը վառեմ, եփեմ ձուն:
Մուկը լսեց, փախավ տուն:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Ես կարողացա _____

Ես իմացա _____

Ես հասկացա _____

Քո կարծիքով՝ տրված առածներից որն է ավելի դիպուկ արտահայտում հեքիաթի իմաստը:

• Աշխատանքը մայրն է ամեն բարիքի:
• Աշխատելիս հիվանդ է, ուտելիս՝ առողջ:
• Ով ալարի, ոչ դալարի:



### 5.5.16. Խաչբառի լրացում: Առարկա և գործողություն ցույց տվող բառեր

**Առաջադրանք 9.** Առաջադրանքը նպաստում է առարկա և գործողություն ցույց տվող բառերի իմացության ամրապնդմանը: Առկա է հետաքրքրություն առաջացնող

գործոնը՝ խաչբառը: Երեխաները հաճույքով կկատարեն առաջադրանքը: Ընտրված են առարկա ցույց տվող այնպիսի բառեր, որոնցից հեշտությամբ կազմվում են գործողություն ցույց տվող բառեր: Կարևոր է նկատել, որ ընտրված են այնպիսի բառեր, որ նրանց մի մասը գործողություն ցույց տվող բառ է դառնում **-ել** վերջավորությամբ, մի մասը՝ **-ալ**:

Առաջադրանքը կատարելուց առաջ ուսուցիչը աշակերտներին առաջադրում է մի քանի բառ, օրինակ՝ *նկար, մեխ, ջուր,* և միասին այդ բառերից ստանում են գործողություն ցույց տվող բառեր՝ *նկարել, մեխել, ջրել*: Վերհիշում են, թե ինչպես կարելի է առարկա ցույց տվող բառերից ստանալ գործողություն ցույց տվող բառեր, այնուհետև անցնում են խաչբառի լրացմանը: Կարելի է առաջադրանքը կազմակերպել զույգերով, հետո կազմել չորսհոգանոց խմբեր և ստուգել:

| **Սյունակներով** | **Տողերով** |
|---|---|
| 1. քանդակ - քանդակել | 3. սանր – սանրել |
| 2. մեխ – մեխել | 4. ներկ – ներկել |
| 4. նվագ – նվագել | 5. պար – պարել |
| 6. երգ – երգել | 8. մեներգ – մեներգել |
| 7. թերթ – թերթել | 10. տեղ - տեղալ |
| 9. լող - լողալ | 11. խաղ - խաղալ |

### 5.5.17. Խնդուկի բեմականացում

**Առաջադրանք 10.**

Դասագրքում մեծ տեղ է հատկացվում երեխաների ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ մասնավորապես զանազան տեքստերի բեմականացումների միջոցով: Դա դյուրինացնում է երեխաների սոցիալականացումը, որը նպաստում է նրանց ազատ հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանը և, ի վերջո, ուսման մեջ առաջադիմությանն ու մտավոր առաջընթացին:

Բեմականացումները բարենպաստ պայմաններ են ստեղծում ինչպես երեխաների ակտիվ շփումների առումով, այնպես էլ դասերը դարձնում են ավելի հետաքրքրաշարժ ու զվարթ, բարձրացնում են երեխաների շահագրգիռ մոտեցումները ուսման նկատմամբ:

Բեմականացումները նաև նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը, ներկայացվող դասանյութը լավ հիշելուն, ուշադրության կենտրոնացմանը:

Աշակերտները կարդում են խնդուկը, մտածում են, թե որ հեքիաթի որ հերոսի նման է մտածում տիկնիկը: Եթե չեն հիշում, ուսուցիչը պարզաբանում է՝ Հովհաննես Թումանյանի ԾԻՏԸ հեքիաթի ծիտիկն է այդպես ասում:

Այս առաջադրանքը կարող են ներկայացնել մի քանի զույգ, որոնցից մեկը աղջիկն է, մյուսը՝ տիկնիկը: «Հանդիսատեսը», այսինքն՝ դասարանը, ծափերով որոշում է ամենալավ «դերասաններին»:

### 5.5.18. Աշխատանք սուտասելուկ-շուտասելուկի շուրջ

**Առաջադրանք 11.**

Երեխաները կարդում են սուտասելուկ-շուտասելուկը, որի հերոսներն են կատուն, հավը, մուկը: Այնուհետև լսում և դիտում են տեսահոլովակը: Աշխատում են նույնքան արագ արտասանել, ինչպես տեսահոլովակում է: Դասարանում ստեղծվում է զվարթ մթնոլորտ:

### 5.5.19. Աշխատանք «Աչքի առաջ» բառերի շուրջ

Աշակերտները կարդում և գրում են **ալյուր, խրճիթ, քուջուջ** բառերը, սովորում դրանց գրելաձևը:

Կարելի է նաև հանձնարարել, որ երեխաները այդ բառերը բաժանեն վանկերի, կազմեն բառակապակցություններ:

Կարելի է նաև գրատախտակին գրել

Փոքր տնակ----------

Գետինը ճանկերով փորելը----------

Աղալով փոշենման դարձրած հացահատիկ ----------

արտահայտությունները և հանձնարարել, որ երեխաները դրանց կողքին գրեն «Աչքի առաջ» խորագրի համապատասխան բառերը:

### 5.5.20. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Դասի ավարտին ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներին հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, սովորած նյութը և լրացնելու

**Ես կարողացա _____**
**Ես իմացա _____**
**Ես հասկացա _____**
անավարտ նախադասությունները:

### 5.5.21. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» գրառման շուրջ

Երեխաները կարդում են «Ամփոփման պատուհանիկի» գրառումը:

Ուսուցիչը հարցնում է, թե նրանք ինչպես են հասկանում առածների իմաստը: Երեխաները արտահայտում են իրենց կարծիքը, իրենց կարողացածի չափով բացատրում են առածները: Ուսուցիչն ընդհանրացնում է երեխաների բացատրությունները:

Այդ աշխատանքն անելուց հետո երեխաներն ընտրում են հեքիաթին առավել բնորոշ առածը: Թեև հնարավոր է, որ բոլոր երեք առածներն էլ համարվեն շատ բնորոշ:

Հետո մեկ անգամ էլ են կարդում դասի վերնագիրը և հիմնավորում, թե ինչու է հերոինակը այդպիսի վերնագիր ընտրել հեքիաթի համար:

Ուսուցիչը բացատրում է, որ հեքիաթի վերնագիրը ևս առած է:

## 5.6. Ո՞ՒՄ ԾԱՌՆ Է

### 5.6.1. Անդրադարձ նախորդ դասի վերնագրին

Դասը կարելի է սկսել անդրադարձ կատարելով նախորդ դասի վերնագրին՝ «Ով աշխատի, նա կուտի», և հանձնարարել աշակերտներին, որ շարունակեն հետևյալ անավարտ միտքը.

Եթե ուզում ես խնձոր ուտել, ապա _____:

Աշակերտներն ազատ արտահայտում են մտքեր, եթե չի հնչում ծառ տնկելու գաղափարը, ուսուցիչն ուղղորդում է, և միասին գալիս են այն գաղափարին, որ անհրաժեշտ է նաև ծառ տնկել:

Կարելի է նաև ցուցադրել նկարներ (բառեր)՝ խառը հերթականությամբ.

**ծառ, հող, ջուր, փոս, տնկի, խնձոր:**

Առաջարկել աշակերտներին, որ նրանք նկարները, (բառերը) դասավորեն ըստ հողից խնձոր ստանալու հերթականության.

**հող, փոս, տնկի, ջուր, ծառ, խնձոր:**

Այնուհետև հարցնել, թե ինչ է անհրաժեշտ, որ տնկին ծառ դառնա:

**Բարդին ու բոխին**

Բարդին բացականչեց.

– Բարձրացե՛լ եմ, բարձրացե՛լ եմ, բոլորից բա՛րձր եմ:

Բոխին բարկացավ.

– Բավակա՛ն է: Բոլորից բա՛րձր եմ, բոլորից բա՛րձր եմ: Բարձրը բալենին է, բերք ու բարիք է բռնել, բալ է բաժանում բոլորին:

## 5.6.2. Աշխատանք դասանյութի գլխագրի և մուտքի պատուհանիկի շուրջ

Այս դասին դու.

• Կհարստացնես գործողություն ցույց տվող բառերի մասին քո գիտելիքները:

• Կիմանաս, թե ինչպես է տնկին ծառ դառնում:

• Կգնահատես բանաստեղծության հերոսների արարքները:

• Կկարևորես սկսած գործի նկատմամբ պատասխանատու և հետևողական լինելը:

• Կտեսնես, թե ինչպես ծառը ճանաչեց Աշոտին:

### Ո՞ՒՄ ԾԱՌՆ Է

**Նանսեն Միքայելյան**

**Մենք պատասխանատու ենք նրանց համար, ում ընտելացրել ենք:**

Տնկին* բերեց Աշխենը,
Փոսը փորեց Արմենը,
Ծառը տնկեց Կարենը,
Ջուրն էլ լցրեց Սուրենը:
Տնկեցին ու հեռացան,
Գնացին ու մոռացան:
Իսկ Աշոտը խնամեց,
Ցրտից, շոգից պաշտպանեց,
Նրա ձեռքով հոգատար
Փոքրիկ տնկին դարձավ ծառ:
Մի օր եկան ծառի մոտ
Մանուկները մեր ծանոթ,
Տեսան բացված թևերը,
Առողջ բունն ու տերևը:
– Իմ տնկին է զորացել*,–
Հպարտացավ Աշխենը:
– Ես եմ խորունկ փոս բացել,–
Աքլորացավ Արմենը:
– Իմ ձեռքով է ամրացել,–
Ջղայնացավ Սուրենը:
Աշոտն ասաց. «Ձեր տնկին
Ի՛նձ է միայն ճանաչում,
Նրա ամեն տերևին
Իմ քրտինքն է կանաչում»:



**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*հոգատար, շոգ*

* **Տնկի** – տնկելու համար նախատեսված փոքրիկ ծառ:
* **Զորանալ** – ուժեղանալ, աճել, մեծանալ:

Ուսուցչի հրահանգով աշակերտները բացում են դասագիրքը, լուռ կարդում դասանյութի գլխագիրը և մուտքի պատուհանիկը: Այնուհետև ուսուցիչը կամ լավ ընթերցող աշակերտներից մեկն է բարձրաձայն կարդում դրանք: Ուսուցիչը անցկացնում է քննարկում՝ անդրադառնալով գլխագրի կետերին:

Առաջին կետի վերաբերյալ աշակերտներից մի քանիսն ասում են, թե ինչ գիտեն գործողություն ցույց տվող բառերի մասին:

Երկրորդ կետը կարդալիս նախ պարզում են, թե ինչ է տնկին: Ասում են իրենց կարծիքը: Վերջում գալիս այն եզրակացության, որ տնկին փոքրիկ ծառիկ է: Այն տնկում են, որ մեծանա, դառնա իսկական ծառ:

Երրորդ կետը իր բովանդակությամբ ընդհանուր առմամբ ծանոթ է երեխաներին. նրանք հաճախ են բնութագրել հերոսներին, գնահատել նրանց արարքները:

Չորրորդ կետի շուրջ կարելի է մի փոքրիկ քննարկում անցկացնել այն մասին, թե երեխաներն ինչպես են պատկերացնում որևէ գործ կատարելու վերաբերյալ պատասխանատու լինելը:

Հինգերորդ կետը թեթևակի «սադրանք» է պարունակում, և երեխաները աշխուժորեն կքննարկեն այն ու կարտահայտեն իրենց կարծիքը:

### 5.6.3. Անդրադարձ «Մուտքի պատուհանիկի» գրառմանը

Ինչպե՞ս եք հասկանում «Մենք պատասխանատու ենք նրանց համար, ում ընտելացրել ենք» միտքը:

Երեխաներին նախ պետք է հարցնել, թե նրանք ինչ են հասկանում **ընտելացնել** ասելով: Լսելով երեխաների պատասխանները՝ պետք է գալ այն ընդհանուր եզրակացությանը, որ ընտելացնել նշանակում է որևէ մեկին մտերմանալ, նրան սովորեցնել միասին լինել, խնամել նրան, հոգ տանել նրա մասին: Այդքանից հետո, եթե դու լքես նրան, նա անպաշտպան կդառնա, չի կարողանա միայնակ հաղթահարել դժվարությունները: Եթե սովորեցրել ես նրան, որ դու հոգ կտանես, կխնամես նրան, նա ինչ-որ չափով արդեն կախված է քեզանից և առանց քեզ իր համար շատ դժվար կլինի: Այսինքն՝ դու պատասխանատու ես այն մեկի հանդեպ, ում ընտելացրել ես: Եթե չընտելացնեիր, նա ինքնուրույն կհոգար իր կարիքները, չէր մտածի, որ իր մտերիմը կխնամի իրեն, կօգնի իրեն: Օրինակ, ընտելացված կենդանիներին եթե նորից բաց ես թողնում բնության մեջ, նրանք, սովորաբար, չեն կարողանում ինքնուրույն որս անել, հարմարվել բնական մրցակցությանը և և կործանման եզրին են հասնում: Չէ՞ որ նրանք սովոր էին, որ իրենց կերակրելու են, խնամելու են, նրանք ընտելացել էին այդ ամենին:

Այդպիսի մեկի մասին է բանաստեղծությունը: Եթե նա ինքնուրույն ծլեր, աճեր, ապա կսովորեր պայմաններին, ինքն իր մասին հոգ կտաներ: Իսկ երբ դու նրան տնկել ես, աճեցրել ես, նա արդեն քեզանից խնամք է սպասում, ինքնուրույն չի կարողանում ապրել և կչորանա, եթե չխնամես նրան:

Ամփոփելով քննարկումը՝ ուսուցիչն առաջարկում է կարդալ տեքստը և տեսնել, թե ինչի մասին է բանաստեղծությունը:

### 5.6.4. Տեքստի բարձրաձայն ընթերցում

Նախքան բանաստեղծության ընթերցումը կարելի է բացատրել **տնկի, զորացել** բառերը կամ բանաստեղծությունը ընթերցելուց հետո, կատարել բառաբացատրական աշխատանք:

Աշակերտների օգնությամբ բացատրվում է.

**Տնկի** – տնկելու համար նախատեսված փոքրիկ ծառ:

**Զորանալ** - ուժեղանալ, աճել, մեծանալ:

Կարելի է բանաստեղծությունն ընթերցել բարձրաձայն և գրատախտակին փակցնել հերոսների անունները կամ նկարները:

Հանձնարարել, որ երեխաներն ընթերցեն բանաստեղծությունը, և հարցնել, թե հերոսներից ով ինչ գործ է արել: Բանաստեղծությունից ընտրեն և կարդան նրանց կատարած գործերի մասին: Այս աշխատանքը հնարավորություն է տալիս մի քանի անգամ ընթերցելու բանաստեղծությունը, նպաստում է տեքստի ընկալմանը, զարգացնում է ուշադրությունը և արագ կողմնորոշվելու կարողությունը: Կարելի է նաև խառնել հերոսների անունների հերթականությունը և առաջարկել ըստ տեքստի դասավորել հերոսներին ըստ նրանց կատարած գործերի հաջորդականության: Կարելի է նաև որևէ հերոսի նկար (անուն) թաքցնել և առաջարկել գտնել, թե որ հերոսը չկա և գտնելուց հետո ասել նրա կատարած գործողությունը:

### 5.6.5. Աշխատանք նորածանոթ բառերի շուրջ

Նորածանոթ բառերի իմացությունն ամրապնդելու համար կարելի է կազմակերպել «Թակարդ» խաղը: Ուսուցիչը կարդում է բանաստեղությունը՝ նորածանոթ բառի փոխարեն կարդալով նույնիմաստ մեկ այլ բառ: Աշակերտները գտնում են, թե որ բառերն է ուսուցիչը փոխել: Օրինակ. «Տնկաշիվը բերեց Աշխենը», «Իմ տնկին է հզորացել» նախադասություններում ուսուցիչը **տնկի** բառը փոխել է **տնկաշիվ** բառով, իսկ **զորացել** բառը՝ **հզորացել** բառով:

**«Մաթեմատիկոս» Աշոտը**

– Աշո՛տ, ծառի վրա տասը ծիտ կար: Որսորդը կրակեց: Ծտերի կեսը թռավ-փախավ: Ծառի վրա քանի՞ ծիտ մնաց:

– Ոչ մի ծիտ: Բոլորն էլ փախած կլինեն:

– Լա՛վ: Ծառի վրա տասը տանձ կար: Քամին կեսը գցեց ցած: Ծառին քանի՞ տանձ մնաց: Տանձերն էլ հո չե՞ն կարող թռչել-փախչել:

– Ծառը բարձր է, լավ էլ չի երևում, ո՞նց հաշվեմ,– արդարացավ Աշոտը:

## Հարցեր

1. Ովքե՞ր մասնակցեցին ծառատունկին:
2. Ի՞նչ է անհրաժեշտ, որ տնկին ծառ դառնա:
3. Քո կարծիքով՝ երեխաներից ո՞վ էր իրավացի:
4. Ե՞րբ են ծառ տնկում: Ինչո՞ւ:
5. Դու երբևէ մասնակցել ես ծառատունկի:

## Առաջադրանքներ

1 • Բանաստեղծությունից օգտվելով՝ լրացրո՛ւ աղյուսակը: Գնահատի՛ր յուրաքանչյուրի կատարած գործը 1, 2 կամ 3 միավորով:
• Ո՞ւմ ավելի շատ միավոր տվեցիր: Ինչո՞ւ:

| Ո՞վ | Ի՞նչ արեց | Միավորը |
|---|---|---|
| Աշխեն | | |
| Արմեն | | |
| Կարեն | | |
| Սուրեն | | |
| Աշոտ | | |

2 Նկարի՛ր տխուր ամպ և ուրախ արև:
Օգտվելով այդ նկարներից.
• պատկերի՛ր հետևյալ նախադասությունը.

Տխուր Ամպը ծածկեց ուրախ Արևին:

• ընկերոջդ բացատրի՛ր, թե ինչպես կատարեցիր առաջադրանքը:

3 Վերականգնի՛ր առածը:

վերջն է բանի գովելի: Ամեն

4 **ԲԱՌՔԱՄՈՑԻ**

**Հոգատար** բառի տառերով կազմի՛ր նոր բառեր:

5 Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը:

Շոգին՝ հագած,
Ցրտին՝ մերկ,
Մի ոտք ունի,
Հազար ձեռք:

### 5.6.6. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

1. Ովքե՞ր մասնակցեցին ծառատունկին: (Ծառատունկին մասնակցեցին Աշխենը, Արամը, Կարենը, Սուրենը, Աշոտը)

2. Ի՞նչ է անհրաժեշտ, որ տնկին ծառ դառնա: (Խնամել, ջրել, ցրտից, շոգից, կենդանիներից պաշտպանել)

3. Քո կարծիքով՝ երեխաներից ո՞վ էր իրավացի: (Իրավացի էր Աշոտը, որովհետև ծառը տնկելը բավարար չէ, պետք է նաև խնամել)

4. Ե՞րբ են ծառ տնկում: Ինչո՞ւ: (Ծառ տնկում են վաղ գարնանը, որ հնարավոր լինի խնամել)

5. Դու երբևէ մասնակցե՞լ ես ծառատունկի: (Երեխաները պատասխանում են, թե երբ են մասնակցել, ում հետ են ծառ տնկել, քանի ծառ են տնկել, կամ չեն մասնակցել)

### 5.6.7. Աշխատանք «Աչքի առաջ» բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ունեցող տառեր, օրինակ՝

**հո- ատար, շո-**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը բառատետրում:

**Առաջադրանք 1.**

1 • Բանաստեղծությունից օգտվելով՝ լրացրո՛ւ աղյուսակը: Գնահատի՛ր յուրաքանչյուրի կատարած գործը 1, 2 կամ 3 միավորով:
• Ո՞ւմ ավելի շատ միավոր տվեցիր: Ինչո՞ւ:

| Ո՞վ | Ի՞նչ արեց | Միավորը |
|---|---|---|
| Աշխեն | | |
| Արմեն | | |
| Կարեն | | |
| Սուրեն | | |
| Աշոտ | | |

Աշակերտները նախ առաջադրանքը կատարում են ինքնուրույն, հետո իրենց գրած միավորները համեմատում ընկերոջ գրած միավորների հետ: Այս առաջադրանքը նաև միջառարկայական կապ է ապահովում մայրենիի ու մաթեմատիկայի միջև:

**Առաջադրանք 2.**

Նկարի՛ր տխուր ամպ և ուրախ արև:
Օգտվելով այդ նկարներից՝ պատկերի՛ր հետևյալ նախադասությունը.

Տխուր Ամպը ծածկեց ուրախ Արևին:

**Առաջադրանք 3.**

Աշակերտները վերականգնում են առածը. «Ամեն բանի վերջն է գովելի» և մեկնաբանում ըստ բանաստեղծության բովանդակության: Այսինքն, եթե որևէ բան ես նախաձեռնում, պետք է դա մինչև վերջ շարունակես և արդյունքը տեսնես: Եթե արդյունքը բավարար է, ապա արածդ գործը գովելի է, իսկ եթե վերջը բավարար չէ, արդյունքի չես հասել, ուրեմն ձախողել ես գործը:

### 5.6.8. Բառքամոցի

**Առաջադրանք 4.** Առաջադրանքը կարելի է կազմակերպել զույգերով: Որ զույգը ավելի շատ բառ կքամի: Առաջադրանքը ավարտելուց հետո ուսուցիչը **հոգատար** բառը գրում է գրատախտակին, աշակերտները կարդում են իրենց գրած բառերը, իսկ ուսուցիչը դրանք գրում է գրատախտակին: Այստեղ կարևոր է, որ աշակերտները շատ ուշադիր լսեն ընկերների քամած բառերը և չկրկնեն, ասեն մեկ այլ բառ, որ դեռ չեն ասել: Ընթացքում աշակերտները և՛ կարդում են իրենց գրած բառերը, և՛ ավելացնում են իրենց գրածին այն բառերը, որոնք չէին գրել:

**Հոգատար** բառից կարելի է կազմել այսպիսի բառեր: Նկատենք, որ բառերի մի մասը այդ տարիքի երեխաների բառապաշարից դուրս է: Դրանք տրվում են խաղի ընդհանուր պատկերը ամբողջացնելու համար: Երեխաներին պետք է հատուկ զգուշացնել, որ հայերեն տառանունները ևս առարկա ցույց տվող բառեր են և կարող են քամվել:

| | |
|---|---|
| ազահ | գահ |
| առրտա | գորտ |
| ար | հատ |
| արա | հարգ |
| արատ | հոտ |
| արոտ | հոր |
| արտ | |

«Բառքամոցի» խաղը կարելի է կազմակերպել զույգերով: Որ զույգը ավելի շատ բառեր կքամի:

Այստեղ պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ քամված բառերը պետք է լինեն առարկա ցույց տվող բառեր:

### 5.6.9. Աշխատանք հանելուկի շուրջ

**Առաջադրանք 5.**

Կարելի է հանձնարարել, որ երեխաները հանելուկը արտագրեն տետրում և սովորեն անգիր: Կարելի է նաև աշակերտներին հանձնարարել հանելուկը գրել ինքնաթելադրությամբ: Նրանց պետք է մեկ անգամ ևս հիշեցնել՝ որպեսզի տնկին այսպիսի ծառ դառնա, նրա մասին հանելուկ գրեն, տնկիին անհրաժեշտ են խնամք և հոգածություն:

**6** Բառերը դասավորիր այնպես, որ ստացվեն նախադասություններ:

1. **հավաքվեցին** **մոտ:** **Մանուկները** **ծառի**
2. **դարձավ:** **ջանքերի** **ծառ** **Աշոտի** **տնկին** **շնորհիվ**

**7** Գործողություն ցույց տվող **չվել, դեղնել, շողալ** բառերը տեղադրի՛ր նախադասություններում:

- Արևը (ի՞նչ է անում) երկնքում:
- Ծառերի տերևները (ի՞նչ են լինում) աշնանը:
- Թռչունները (ի՞նչ են անում) տաք երկրներ:

Քո գրած նախադասություններին ավելացրո՛ւ ևս մի քանի նախադասություն և ստեղծի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

**8**

Արտագրի՛ր բանաստեղծության վերջին չորս տողը: Քանի՞ բառ արտագրեցիր: Թիվը գրի՛ր տառերով:

**9** Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը:

Ես նշան եմ կլորիկ,
Տառի գլխին՝ գլորիկ,
Հարց եմ տալիս միշտ ընտիր,
Պատասխաններ դու գտի՛ր:



### 5.6.10. Աշխատանք նախադասության ուղղագրության շուրջ

**Առաջադրանք 6.** Բառերը դասավորիր այնպե՛ս, որ ստացվեն նախադասություններ:

Այս առաջադրանքի միջոցով երեխաները վերհիշում են, թե ինչ է նախադասությունը, որ նախադասությունը սկսվում է մեծատառով, և նրա վերջում դնում են վերջակետ:

Աշակերտները ինքնուրույն դասավորում են բառերը և ստանում նախադասություն: Ավարտելուց հետո կարդում են իրենց գրած նախադասությունները ընկերոջ համար:

Նախադասությունների օրինակներ.

**Մանուկները հավաքվեցին ծառի մոտ:**

**Աշոտի ջանքերի շնորհիվ տնկին ծառ դարձավ:**

**Առաջադրանք 7.**

Գործողություն ցույց տվող չվել, դեղնել, շողալ բառերը տեղադրի՛ր նախադասություններում:

- Արևը (ի՞նչ է անում) երկնքում:
- Ծառերի տերևները (ի՞նչ են լինում) աշնանը:
- Թռչունները (ի՞նչ են անում) տաք երկրներ:

Նախադասությունները կազմելիս օգտվի՛ր նկարից:

Առաջադրանքը կատարելուց առաջ կարելի է նախ՝ աշակերտների ուշադրությունը հրավիրել առաջադրանքի մոտ եղած նկարին, ապա ասել, թե ինչ են տեսնում նկարում, տարվա որ եղանակն է պատկերված:

Ինչ են անում երեխաները, ինչ են անում թռչունները: Որից հետո գրատախտակին գրել **չվել, դեղնել, շողալ** բառերը:

Այնուհետև աշակերտներին առաջադրել, որ այդ բառերի համար հարցեր ձևակերպեն, և հիշել, որ դրանք գործողություն ցույց տվող բառեր են: Դրանից հետո բառերը տեղադրել նախադասությունների մեջ:

- **Արևը շողում է երկնքում:**
- **Ծառերի տերևները դեղնում են աշնանը:**
- **Թռչունները չվում են տաք երկրներ:**

**Առաջադրանք 8.** Արտագրի՛ր բիանաստեղծության վերջին չորս տողը: Քանի՞ բառ արտագրեցիր: Թիվը գրի՛ր տառերով:

Այս առաջադրանքով երեխաները հմտանում են տեքստի փոքրիկ հատվածներ արտագրելու մեջ: Սա նպաստում է բառապատկերները երկարատև մտապահելուն, կետադրական նշանները ճիշտ գործածելուն, կարդալու կարողությունները զարգացնելուն: Առաջադրանքում առկա է լրացուցիչ կետ. երեխաները պետք է հաշվեն իրենց արտագրած բառերի քանակը՝ 15: Երեխաներին պետք է բացատրել, որ բառ է նաև **է**-ն:

**Առաջադրանք 9. ՀԱՆԵԼՈՒԿ**

*Ես նշան եմ կլորիկ,*
*Տառի գլխին՝ գլորիկ,*

*Հարցեր ունեմ ես ընտիր,*
*Պատասխաններ դո՛ւ գտիր:*

Հանելուկը լուծելու համար, երեխաները պետք է ուշադիր լինեն: Յուրաքանչյուր տող կարդալիս տեսնեն պատկերը: Առաջին տողը կարդալիս հասկանան, որ խոսքը երևի ինչ-որ կլորիկ կետադրական նշանի մասին է: Երկրորդ տողով հասկանան, որ այդ նշանը կլորիկ է ու դրվում է տառի գլխին, այսինքն՝ տառի վրա: Երրորդ տողով բացահայտվում է, որ այդ նշանը հարցեր ունի: Իսկ ո՞ր նշանը հարցեր ունի. պարզ է՝ հարցական նշանը: Եվ վերջին տողը կարդալիս նրանք արդեն կիմանան պատասխանը:

Հանելուկը վերաբերում է պարույկ (հարցականի նշան) կետադրական նշանին:

## ԳՐԱԳԱՐԱԿ

### Սարգսի հետաքրքրաշարժ խաղը

Շոգ օր է: Գրիգորը, Սարգիսը, Գևորգն ու Պարգևը պատշգամբում նստած միրգ են ուտում:

– Եկե՛ք մի հետաքրքիր խաղ խաղանք,– առաջարկեց Սարգիսը:

– Ի՞նչ խաղ,– ուրախացան ընկերները:

– Այս տուփի մեջ լցրել եմ առանձին թղթերի վրա գրված բառեր: Յուրաքանչյուրս, առանց նայելու, հանում է երեք բառ և, այդ բառերն օգտագործելով, կազմում ենք նախադասություն:

– Հետո՞,– հարցրեց Գևորգը:

– Ով ավելի կարճ նախադասություն կազմի, նա էլ կհաղթի:

– Լավ,– համաձայնեցին ընկերները:

Առաջինը տուփին մոտեցավ Գրիգորը: Նա տուփից հանեց **թագավոր, ուրագ, մարգարիտ** բառերը:

Գևորգին բաժին ընկան **երգ, անգամ, ձագ** բառերը:

Պարգևը, երկար շոշափելուց հետո, հանեց **հոգս, կարագ, շոգ** բառերը:

Սարգսին մնացին **օգնել, կարգ, ձիգ** բառերը:

Տղաները առանձին-առանձին կազմեցին նախադասությունները և, նստելով սեղանի շուրջը, բացեցին իրենց գրածները:

Գրիգորի կազմած նախադասությունն էր. **«Թագավորը զայրացավ և ուրագով ջարդեց մարգարիտները»:**

Գևորգինը. **«Անգամ սոխակի ձագը երգել գիտի»:**

Պարգևինը. **«Շոգ օրը առանց սառնարանի կարագ պահելը հոգս է»:**

Սարգսինը. **«Օգնի՛ր ձիգ կապենք. կարգն այդպիսին է»:**

Ձեր կարծիքով՝ ո՞վ հաղթեց:

**10** • Բեմականացրե՛ք խնդուկը:

Մեկը նայում է, թե ինչպես երկու մարդ աշխատում են այգում: Մեկը փոսերը փորելով գնում է, մյուսը հողը նորից լցնում է այդ փոսերը: Զարմացած մոտենում է և հարցնում.

– Էս ի՞նչ եք անում:
– Ծառ ենք տնկում:
– Էսպես էլ ծառ տնկե՞լ կլինի:
– Դե իմ գործը փորելն է, ընկերոջս գործը՝ փոսը լցնելը:
– Բա տնկին ո՞ւր է:
– Տնկի բերողն այսօր գործի չի եկել:

• Մեկ նախադասությամբ գնահատի՛ր ընկերներիդ խաղը:

**11** ՓՈՔՐԻԿ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
Աշխատանքի քայլաշարը.

• Ցորենի հատիկները լցրո՛ւ ամանի մեջ դրված թրջած բամբակի վրա:
• Դի՛ր մի լուսավոր տեղ:
• Ջրի՛ր ամեն օր: Մի քանի օրից ծիլեր դուրս կգան:
• Հետևի՛ր ծիլերի աճման ընթացքին:
• Կատարի՛ր չափումներ:
• Գրանցի՛ր տեղորում:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես հասկացա

Ես սովորեցի

Ինձ հետաքրքրեց

Ինչ տնկել եք կամ ցանել,
Պարտավոր եք հոգ տանել,
Պահել, սիրով խնամել,
Գործը մինչև վերջ անել:



### 5.6.11. Խնդուկի բեմականացում

**Առաջադրանք 10.** Բեմականացրե՛ք խնդուկը:

Առաջադրանքը կարելի է կազմակերպել մրցույթի ձևով. «Ով ավելի վարժ ու արտահայտիչ կկարդա»: Ուսուցիչը ժամանակ է հատկացնում, որպեսզի աշակերտները

մի քանի անգամ կարդան, հետո կարդան զույգերով: Այնուհետև խմբեր կազմեն, դերաբաժանում կատարեն և նորից կարդան:

Ուսուցիչը հետևում է, որ կարդան համապատասխան հնչերանգով: Որից հետո ընտրում է ամենավարժ և արտահայտիչ ընթերցողներին, որոնք էլ բեմականացնում են խնդուկը:

Խնդուկի միջոցով ցույց է տրվում, որ տվյալ գործի մեջ ներգրավված մարդիկ բոլորը պետք է կատարեն իրենց գործը: Եթե խմբի մեջ որևէ մեկը չի կատարում իրեն հանձնարարվածը, ապա մնացածների գործը դառնում է անիմաստ: Չպետք է առանց մտածելու անել գործը, պետք է անհրաժեշտության դեպքում կարողանալ փոխարինել ընդհանուր գործի մեջ ներգրավված մեկ ուրիշին, որ ընդհանուր արդյունքը զրոյի չհավասարվի:

**Առաջադրանք 11. ՓՈՔՐԻԿ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

*Աշխատանքի քայլաշարը.*

- Ցորենի հատիկները լցրո՛ւ ամանի մեջ դրված թրջած բամբակի վրա:
- Դի՛ր մի լուսավոր տեղ:
- Զրի՛ր ամեն օր: Մի քանի օրից ծիլեր դուրս կգան:
- Հետևի՛ր ծիլերի աճման ընթացքին:
- Կատարի՛ր չափումներ:
- Գրանցի՛ր տետրում:

Հետազոտական աշխատանքը կատարելուց առաջ ուսուցիչը նախ բացատրում է, որ ցանկացած աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է սահմանել գործողությունների կատարման հերթականություն (քայլաշար): Դասարան է բերում բամբակ, ցորենի հատիկներ, ափսե, ջուր: Հանձնարարում է աշակերտներին կարդալ քայլաշարը: Այնուհետև աշակերտները հերթով բարձրաձայնում են գործողությունների հերթականությունը, իսկ ուսուցիչը կատարում է: Հետո հանձնարարում է, որ աշակերտները տանը կատարեն աշխատանքը նույն հերթականությամբ և հետևեն ցորենի աճին ու կատարեն գրառումներ: Ուսուցիչը կարող է մշակել աղյուսակի մի նմուշ և տրամադրել աշակերտներին, որ աշակերտները գրառումները գրեն այնտեղ:

Օրինակ:

| **Ամիս, ամսաթիվ** | **Ցորենի աճը՝ մմ-ով** |
|---|---|
| | |

### 5.6.12. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Դասի ավարտին ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներին հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, սովորած նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները.

**Ես հասկացա** _____
**Ես սովորեցի**_____
**Ինձ հետաքրքրեց**_____

Աշակերտները ազատորեն արտահայտում են իրենց կարծիքները, թե ինչ հասկացան, ինչ սովորեցին, ինչն իրենց հետաքրքրեց դասանյութերը ուսումնասիրելիս:

Այնուհետև աշակերտները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված քառատողը և հասկանում, որ միայն հոգատար վերաբերմունքի շնորհիվ կարելի է սկսած գործը ավարտին հասցնել:

## 5.7. ԿՈՐԱԾ ՕՐԸ

### 5.7.1. Նկարագրություն մեկ նախադասությամբ

Դասի սկզբում կարելի է աշակերտներին հանձնարարել, որ մեկ նախադասությամբ նկարագրեն իրենց երեկվա օրը: (Հյուր են գնացել, դաս են պատրաստել, ոչինչ չեն արել, շանը տարել են զբոսանքի, աղբն են թափել, ծաղիկներն են ջրել, իրենց անկյունն են կարգի բերել, գիրք են կարդացել, հեռուստացույց են դիտել, օգնել են մայրիկին, նկարել են, զբոսնել են պապիկի հետ, և այլն, և այլն)

Աշակերտները ստանում են թղթի շերտեր, որոնց վրա մեկ նախադասությամբ գրում են իրենց կատարած գործերից մեկի մասին:

Այնուհետև ուսուցիչը գրատախտակին եզրագծում է **օր** բառը: Աշակերտները կարդում են իրենց գրածները, և ուսուցիչը դրանք փակցնում է եզրագծվածի վրա:

Որից հետո հարցնում է աշակերտներին, թե ինչ պատկեր ստացան:

Երեխաները տեսնում են, որ ստացան փայլող արև:

Միասին պարզում են, թե ինչպիսին կլիներ օրը,

եթե իրենք այդքան գործեր չկատարեին:

(Արևը չէր փայլի, օրը տխուր կլիներ)

Այս դասին դու.

• Կամրապնդես գործողություն ցույց տվող բառերի իմացությունը:

• Կիմանաս, թե երբ է օրը «կորչում»:

• Կհասկանաս, թե ինչպես պետք է կազմակերպել քո օրվա գործերը:

## ԿՈՐԱԾ ՕՐԸ

ըստ Վալենտինա Օսեևայի

**Շատ բան կարող է կորչել. օրինակ՝ դրամը, գրիչը, գլխարկը, նույնիսկ՝ օրը:**

Արթուրի եղբոր մոտ եկավ նրա ընկերը: Նա գլխարկը նետեց մի կողմ և դժգոհ ձայնով ասաց.

– Ամբողջ օրս կորավ:

Երբ ընկերը գնաց, Արթուրը եղբորը հարցրեց.

– Ինչպե՞ս կարող է օրը կորչել: Մի՞թե բոլոր օրերը մեկ չեն:

– Այո՛, ժամանակի տեսակետից բոլոր օրերը մեկ են,– պատասխանեց եղբայրը,– բայց նրանք տարբեր են լինում ըստ գործի: Այն օրը, որի ընթացքում մարդ ոչ մի օգտակար գործ չի արել կամ ոչինչ չի սովորել, կորած օր է:

Դրանից հետո Արթուրը քնելուց առաջ եղբորը պատմում էր այն ամենի մասին, ինչ արել էր օրվա ընթացքում, և միշտ հարցնում էր.

– Այսօրվա օրը կորած չէ, չէ՞:

### Հարցեր

1. Ինչո՞ւ էր դժգոհ Արթուրի եղբոր ընկերը:
2. Ինչի՞ց զարմացավ Արթուրը:
3. Ի՞նչ բացատրեց եղբայրը Արթուրին:
4. Ինչպե՞ս պետք է ապրես, որ օրդ չկորչի:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

ընթացք է

111

### 5.7.2. Աշխատանք դասանյութի գլխագրի և մուտքի պատուհանիկի շուրջ

Ուսուցչի հրահանգով աշակերտները բացում են դասագիրքը, լուռ կարդում դասանյութի գլխագիրը և մուտքի պատուհանիկը:

Այնուհետև ուսուցիչը կամ լավ ընթերցող աշակերտներից մեկն է բարձրաձայն կարդում դրանք:

Գլխագրի առաջին կետի բովանդակությունը ծանոթ է երեխաներին:

Երկրորդ կետը հետաքրքրություն կառաջացնի նրանց մեջ: Կարելի է լսել նրանց պատկերացումները այդ մասին:

Երրորդ կետի վերաբերյալ երեխաների դատողությունները լսելուց հետո կարելի է անդրադառնալ մուտքի պատուհանիկի գրառմանը, որի վերաբերյալ խոսվեց գլխագրի երկրորդ կետում:

Ուսուցիչը անցկացնում է քննարկում՝ անդրադառնալով «Մուտքի պատուհանիկին»: Հարցնում է, թե երեխաներն ինչպես են հասկանում *«օրը կարող է կորչել»* միտքը: Ամփոփելով քննարկումը ուսուցիչը առաջարկում է կարդալ տեքստը և տեսնել, թե ինչի մասին է պատմվածքը:

**5.7.3. Տեքստի ընթերցում**

Տեքստն ընթերցում են «Դադարներով»: Աշակերտներն ընթերցում են մինչև «Մի՞թե բոլոր օրերը մեկ չեն» նախադասությունը և պատասխանում են իրենց ուղղված հարցին:

• Ի՞նչ էր ուզում Արթուրը իմանալ եղբորից: (Նա հարցնում էր՝ մի՞թե բոլոր օրերը մեկ չեն, ինչպե՞ս կարող է օրը կորչել)

• Քո կարծիքով՝ ինչպե՞ս են օրերը իրարից տարբերվում: (Կան օրեր, երբ շատ բան ես անում այդ օրերին, կան օրեր, որ՝ քիչ: Կան օրեր, որ ուղղակի հանգստանում ես: Կան օրեր, որ տխուր ես լինում, կան օրեր՝ ուրախ, և այլն)

Ուսուցիչը լսում է աշակերտների կարծիքները, և շարունակում են տեքստը ընթերցել մինչև վերջ:

Մինչև վերջ կարդալուց հետո պատասխանում են տեքստի հարցերին.

**1. Ինչու՞ էր դժգոհ Արթուրի եղբոր ընկերը:** (Նա բողոքում էր, որ իր օրը կորավ)

**2. Ինչի՞ց զարմացավ Արթուրը:** (Զարմացավ, որ օրն էլ կարող է կորչել)

**3. Ի՞նչ բացատրեց եղբայրը Արթուրին:** (Օրը կորած չէ, երբ մի օգտակար գործ ես արել)

**4. Ինչպե՞ս պետք է ապրես, որ օրդ չկորչի:** (Օրդ կորած չի լինի, եթե այդ օրվա ընթացքում դու որևէ օգտակար բան անես քո կամ քո շրջապատի համար: Հիշիր նաև, որ եթե օգտակար գործ ես անում շրջապատի համար, դա նաև քեզ համար է օգտակար դառնում: Օգտակար բանը տարբեր երեսներ ունի: Կարող ես այդ օրը հանգստանալ, գիրք կարդալ, օգնել տան գործերում, մարզվել, օգնել որևէ մեկին ինչ-որ գործ անելիս, և այլն, և այլն)

### 5.7.4. Աշխատանք հարցերի և առաջադրանքների շուրջ

Ուսուցիչը հանձնարարում է մտածել, հետո գրել այն բոլոր գործերը, որոնք կատարելուց հետո կարելի է համարել, որ օրը կորած չէ: Աշակերտները գրում են և կարդում միմյանց համար: Մտքերը գրվում կամ փակցվում են գրատախտակին:

### 5.7.5. Աշխատանք «Աչքի առաջ» բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ունեցող տառեր, օրինակ՝

*ըն - ացիկ, չ -*

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին և բառատետրում:

## ՀԱՐԱՁԱՏ ՀՈԳԻՆ

Ի՞նչն է, որ հարսանիքում միշտ առաջինն է հպարտ-հպարտ կանգնում, ու ձայնը շատ լավ լսվում է: Հենց ճանապարհ են ընկնում՝ ձայնը հազիվ է լսվում, մի կերպ քարշ է գալիս վերջից: Շնորհներ շատ ունի, բայց համեստորեն գրեթե լռում է, շատ խոնարհ է, որ չտեսնեն նրան, չեն էլ իմանա, որ այդտեղ է նա՝ վերջում կանգնած ու ինչ-որ բան է քթի տակ մրմնջում: Այդպիսին է նա աշխարհում:

Սակայն եթե որևէ բան պետք լինի պահել, նա ձայնը կբարձրացնի ու առանց ահի, իրենից գոհ, մեծահոգաբար կպահի: Նա շատ յուրահատուկ է: Եթե հարկ լինի՝ կառաջնորդի հային դեպի հաղթանակ, կհամախմբի, հպարտ-հպարտ առաջինը կքայլի՝ ձեռքին հայկական դրոշն ու հայոց այբուբենը:

Նրա համբավն այնքա՜ն է տարածվել, որ բոլոր հրաշքները նրան են առաջնորդ ընտրել: Նա մեր հացն է ստեղծում, մեր հույսն ու հավատը ապրում են նրա գլխավորությամբ:

Չեմ կասկածում, որ բոլորդ հինգ մատի նման ճանաչում եք նրան: Այդ պատճառով էլ հարկ չեմ համարում ներկայացնելու այդ համով-հոտով պստիկ-ճստիկին:

## Առաջադրանքներ

1 Թվարկվածներից որո՞նք ես դու կատարում դպրոցից տուն գալուց հետո, ի՞նչ հերթականությամբ: Գրի՛ր տետրում:

**ՕՐՎԱ ԳՈՐԾԵՐԸ**

- Խաղում եմ դրսում:
- Դասերս եմ պատրաստում:
- Գիրք եմ կարդում:
- Հեռուստացույց եմ դիտում:
- Օգնում եմ մայրիկիս:
- Լվացվում եմ:
- Ճաշում եմ:
- Նկարում եմ:
- Ընթրում եմ:
- Խաղում եմ տանը:

2 **Մրցույթ դասարանում**

Ի՞նչ կարող ես անել հետևյալ առարկաներով.
**ինքնաթիռ, մեխ, մկրատ, մտրակ, թմբուկ, ամրակ:**

Ո՞վ կարող է ավելի շատ տարբերակներ ասել:

Օրինակ: **Մկրատով կարելի է կտրել տարբեր բաներ, որպես կարկին օգտագործել, խոտ հնձել, ձուկ բռնել, հող փորել, որպես ցից խփել գետնին, օղակները կտրել և պատրաստել ականջօղեր, կախել պատից որպես նկար, պատրաստել տիկնիկ, նվեր տալ մեկին, արջի դեմ կռվել:**

3 Ուշադի՛ր դիտիր դասանյութի նկարազարդումը: Գտի՛ր գործողություն ցույց տվող բառեր և գրի՛ր:

4 Տրված առածներից ո՞ր մեկը կընտրեիր դասանյութի վերնագիր: Հիմնավորի՛ր ընտրությունդ:

- Այսօրվա գործը վաղվան մի՛ թող:
- Ժամանակը ոսկի է:
- Ամեն ինչ իր ժամանակն ունի:



### 5.7.6. Աշխատանք լեզվական առաջադրանքների շուրջ

**Առաջադրանք 1.** Առաջադրանքը անհրաժեշտ է կատարել անհատապես: Աշակերտները նախ կարդում են առաջադրանքում գրված գործողությունները, մտածում են, թե դրանցից որոնք են իրենք կատարում, ընդգծում կամ առանձնացնում են այդ գործողությունները և կազմում իրենց օրվա ռեժիմը: Այստեղ կարելի է առաջարկել, որ երեխաները նաև ավելացնեն այն գործողությունները, որոնք իրենք կատարում են, բայց գրքում գրված չէ: Անհրաժեշտ է երեխաներին հիշեցնել, որ օրակարգին նրանք ծանոթ են «Ես և շրջակա աշխարհը» առարկայից:

Դրանից հետո կարելի է հանձնարարել, որ երեխաները գրեն իրենց օրակարգը: Կարելի է նաև հանձնարարել, որ գրեն տանը, իսկ հաջորդ օրը համեմատեն ընկերների գրածի հետ:

### 5.7.7. Մրցույթ դասարանում

**Առաջադրանք 2.** Ի՞նչ կարող ես անել հետևյալ առարկաներով.

**ինքնաթիռ, մեխ, մկրատ, մտրակ, թմբուկ, ամրակ:**

Ո՞վ կարող է ավելի շատ տարբերակներ ասել:

**Օրինակ. Մկրատով կարելի է կտրել տարբեր բաներ, որպես կարկին օգտագործել, խոտ հնձել, ձուկ բռնել, հող փորել, որպես ցից խփել գետնին, օղակները կտրել և պատրաստել ականջօղեր, կախել պատից որպես նկար, պատրաստել տիկնիկ, նվեր տալ մեկին, արջի դեմ կռվել:**

Առաջադրանքը կատարելուց առաջ ուսուցիչը ցուցադրում է առաջադրանքի առարկաները կամ դրանց նկարները. *գդալ, թմբուկ, ամրակ, մեխ, մկրատ* և առաջարկում է մտածել, թե այս առարկաներով ինչ կարող են անել, բացի նրանց հիմնական նշանակությամբ օգտագործելը: Այստեղ շատ կարևոր է, որ աշակերտները կարողանան, բացի առարկայի բուն նշանակությունից, թվարկել նաև այլ կիրառություններ: Դա զարգացնում է աշակերտների ոչ ստանդարտ մտածողությունը: Այնուհետև, ուսուցչի ուղղորդմամբ, աշակերտները կարդում են մկրատի համար գրված տարբերակները: Հետո կազմակերպվում է մրցույթ: Աշակերտները բաժանվում են խմբերի և մտածում առարկաների կիրառման շատ տարբերակներ: Գրում են տարբերակները, վերջում հաշվում: Հաղթում է այն խումբը, որն ավելի շատ տարբերակներ է գրել:

### 5.7.8. Աշխատանք նկարագրության շուրջ

**Առաջադրանք 3.** Ուշադիր դիտի՛ր դասանյութի նկարագրությունը: Գտի՛ր գործողություն ցույց տվող բառեր և գրի՛ր:

Առաջադրանքը նախատեսված է ինքնուրույն աշխատելու համար: Աշակերտները անհատապես տեքստի նկարագրության մեջ գտնում և դուրս են գրում գործողություն ցույց տվող բառերը, որից հետո համեմատում են ընկերոջ դուրս գրած բառերի հետ, կատարում լրացումներ:

Աշակերտները կարող են գրել այսպիսի բառեր.

**կարդալ, ներկել, գնել, քայլել, զրուցել**:

### 5.7.9. Անդրադարձ դասի վերնագրին

**Առաջադրանք 4.**

Տրված առածներից ո՞րը կընտրեիր դասանյութի վերնագիր: Հիմնավորի՛ր ընտրությունդ:

- Այսօրվա գործը վաղվան մի՛ թող:
- Ժամանակը ոսկի է:
- Ամեն ինչ իր ժամանակն ունի:

Առաջադրանքը կարելի է կատարել խմբերով: Խմբերը կարդում են դասագրքում գրված առածները, ընտրում են դրանցից մեկը դասանյութի վերնագիր և հիմնավորում ընտրությունը:

## ՍԵՎԱՆԻ ԱՓԻՆ

– Մա՛մ, իմ աչքերը ի՞նչ գույնի են,– աչքերը չարաճճիորեն փակելով՝ հարցրեց Ծովինարը:

– Ծավի,– չարաճճիորեն պատասխանեց մայրիկը:

– Ծավի՞,– աչքերը զարմանքից լայն բացելով՝ հարցրեց Ծովինարը:

– Այո՛, ծավի,– հաստատեց մայրիկը:

– Ծավին ի՞նչ գույն է:

– Ծավին անուշ կապույտն է, ծովագույնը:

– Ուրեմն իմ աչքերը ծովե՞ր են:

– Իհա՛րկե, չէ՞ որ դու Ծովինարն ես:

– Բա Արեգի՞ աչքերն ինչ գույնի են,– ցույց տալով փոքրիկ եղբորը՝ հարցրեց Ծովինարը,– արեգակի՞:

– Ո՛չ,– ծիծաղեց մայրիկը,– երկնագույն են:

– Երկնքի գույնի՞:

– Այո՛: Իսկ Սևանն ի՞նչ գույնի է հիմա:

– Կապուտուկ,– վստահ ասաց Ծովինարը:

– Կապուտուկ-խելքի պուտուկ,– ծիծաղեց մայրիկը:– Ուզում ես ասել կապուտա՞կ:

– Հա՛, կապուտա՛կ, կապուտա՛կ, ի՞նչ ես նստել ծառի տակ: Մա՛մ, կապուտակ նապաստակ լինո՞ւմ է:

– Ո՛չ, չի լինում: Եթե նապաստակները ծովում ապրեին, կապուտակ էլ կլինեին, կապտավուն էլ:

– Ծովում այդպիսի կենդանիներ կա՞ն:

– Իհա՛րկե՝ կապույտ կետ և շատ կապույտ ձկներ:

– Այսօր ինչքա՜ն գույներ սովորեցի:

– Դրանք բոլորն էլ նույն գույնի երանգներն են:

– Երանգները երեխանե՞րն են:

– Թող լինի այդպես:

– Որ տուն գնանք, կգրեմ, որ չմոռանամ,– ինքն իրեն խոստացավ Ծովինարը:

5 Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

vachagan.am

Ժամը ժամից անցել է, տես,
Ժիր Ժիրայրը քնած է դեռ:

6 Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը:

Ոչ ոք նրա տերը չէ,
Նա գնում է, մերը չէ,
Հազար թևով չվում է,
Իսկ մեզ միայն թվում է:

7 Երբ ընկերը գնաց, ի՞նչ հարցրեց Արթուրը եղբորը: Արտագրի՛ր այդ տողերը:

8 Կարդա՛, թե ինչ նախադասություն է պատկերված նկարելուկով:

Ժ Ը Է

5=Մ

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես հասկացա _____ Ես կանեմ _____ Ես կարևորեցի _____

Շատ բան կարող ես կորցնել և գտնել, բայց եթե օրը կորցրիր, էլ չես գտնի:

113

5.7.10. Աշխատանք շուտասելուկի շուրջ

**Առաջադրանք 5.** Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

**Ժամը ժամից անցել է, տես,**
**Ժիր Ժիրայրը քնած է դեռ:**

Աշակերտները նախ կարդում են շուտասելուկը, փորձում են ասել այն, հետո լսում են և դիտում տեսահոլովակը: Նորից են փորձում արտասանել ավելի արագ: Ավելի արագ արտասանող աշակերտը խրախուսվում է:

### 5.7.11. Աշխատանք հանելուկի շուրջ

**Առաջադրանք 6.** Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը.

**Ոչ ոք նրա տերը չէ,**
**Նա գնում է, մերը չէ,**
**Հազար թևով չվում է,**
**Իսկ մեզ միայն թվում է:**

Հանելուկը կարդում են, փորձում են գուշակել պատասխանը: Հանելուկը բավականին դժվար գուշակելի է: Կարելի է մի քանի պատասխան առաջարկել երեխաներին՝ **քամի, ամպ, ժամանակ, ինքնաթիռ, արծիվ, օր:** Այնուհետև առաջարկել, որ նրանք այդ պատասխաններից ընտրեն որևէ մեկը և հիմնավորեն իրենց ընտրությունը: Սովորաբար հանելուկի պահանջին բավարարում են մի քանի համանման առարկաներ, սակայն դրանցից միայն մեկն է ամենաբնորոշը: Երեխաները այս դեպքում ևս կարող են նշված առարկաներից մեկն ընտրել և հիմնավորել: Պետք է նրանց ասածները ի մի բերել և ուղղորդել դեպի դասի տեքստը: Տվյալ դեպքում հանելուկի պատասխանն է ժամանակը, որը պատմվածքում հանդես է գալիս որպես օր, որը նույն ժամանակն է:

Այսինքն՝ երեխաները պետք է գիտակցեն, որ ժամանակը անցնում է աննկատ: Մենք ուզենք, թե չուզենք, պետք է հասցնենք օգտակար գործեր անել, որ իզուր չանցնի ժամանակը՝ մեր ունեցած ամենամեծ գանձը:

### 5.7.12. Աշխատանք նկարելուկի շուրջ

**Առաջադրանք 7**. Երբ ընկերը գնաց, ի՞նչ հարցրեց Արթուրը: Տեքստից գտի՛ր և արտագրի՛ր այդ տողերը:

Երեխաները տեքստից գտնում և արտագրում են «- Ինչպե՞ս կարող է օրը կորչել: Մի՞թե բոլոր օրերը մեկ չեն» նախադասությունները:

**Առաջադրանք 8.** Նկարելուկը լուծելու համար նախ պետք է պարզել, թե ինչ առարկաներ են պատկերված նկարներում՝ **աման, ակ, կարագ, թռչուն**: Այնուհետև բառ առ բառ կարդալ նախադասությունը՝ **Ժամանակը արագ է թռչում:**

Այն աշակերտը, որն արագ ավարտում է, օգնում է ընկերոջը:

**Անդրադարձ և ամփոփում**

### 5.7.13. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Դասի ավարտին ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներին հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, սովորած նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները.

**Ես հասկացա**_____
**Ես կանեմ**_____
**Ես կարևորեցի**_____

Դասի վերջում աշակերտները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված միտքը: Արտահայտում են իրենց կարծիքը: Հասկանում են, որ ժամանակը չի կարելի անտեղի վատնել, որ շատ բան կարող են կորցնել և գտնել, բայց եթե օրը կորցնեն, այն այլևս չեն կարող գտնել:

## ԱՏԼԱՆՏԸ, ԱՐՏՈՒՏԻԿԸ ԵՎ ԴՈՒ

Հիշո՞ւմ եք արտուտիկի մասին հայտնի զրույցը: Նա, իմանալով որ երկինքը փուլ է գալու, պառկում է մեջքի վրա ու ոտքերը պարզում երկինք՝ պահելու համար փլվող երկինքը: Երբ նրա վրա ծիծաղում են ու ասում, թե նա ինչ կարող է պահել իր պստլիկ, բարալիկ ոտքերով, նա պատասխանում է՝ **ես իմ բաժին երկինքն եմ պահում**:

Հնում մարդկանց թվում էր, թե ինչ-որ ուժեր պահում են երկինքը, որ նա փուլ չգա երկրի վրա: Օրինակ, ըստ հին հունական դիցաբանության, երկինքը պահում էր հզոր ուժով օժտված Ատլանտը:

Դարերի ընթացքում մարդիկ հասկացան, որ երկինքը պահելու հարկ չկա, որ երկինքը չի կարող փուլ գալ:

Սակայն միամիտ արտուտիկը չգիտեր դա և պահում էր իր բաժին երկինքը:

Դու էլ, արտուտիկն էլ մի-մի ատլանտ եք:

Յուրաքանչյուր մարդ պետք է իր գործով «պահի երկինքը», որ երկինքը փուլ չգա, այսինքն՝ մեծ դժբախտություն, մեծ փորձանք չպատահի ամբողջ մարդկությանը:

## 5.8. «ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԹԵՄԱՅԻ» ԱՄՓՈՓՈՒՄ

### «ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու.

- Կիմանաս, թե ինչ են սովորեցնում միմյանց դասանյութերի հերոսները:
- Կսովորես, թե ինչպես պետք է կազմակերպել հանգիստը բնության գրկում:
- Նամակ կգրես այս թեմայի քո սիրելի հերոսին:
- Կամրապնդես քո սովորած բառերի ճիշտ գրությունը:

**Առաջադրանքներ**

### ՀԵՐՈՍՆԵՐՆ ԻՐԱՐԻՑ ԻՆՉ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ

1 • Օգտվելով աշխատել, հասցնել, օգնել, անել, լինել, օգտվել բառերից՝ պատասխանի՛ր «Հարցերի մոլորակի» հարցերին: Պատասխանները գրի՛ր «Պատասխանների մոլորակում»:

**ՀԱՐՑԵՐԻ ՄՈԼՈՐԱԿ**

1. Ի՞նչ սովորեց Ջ տառը տառերի իր ընտանիքից:
2. Ի՞նչ սովորեցին Արմենը, Կարենը, Սուրենը և Աշխենը Աշոտից:
3. Ի՞նչ սովորեց Սուսիկը Լուսիկից:
4. Ի՞նչ սովորեցին Ծիտիկն ու Մուկիկը Հավիկից:
5. Ի՞նչ սովորեց Արթուրի եղբայրը Արթուրից:

**ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՄՈԼՈՐԱԿ**

1. Ընտանիքում միասնական _____:
2. Սկսած գործը կիսատ չթողնել, ավարտին _____:
3. Տնային գործերում _____ մայրիկին:
4. Եթե չես _____, բարիքներից չես կարող _____:
5. Պիտի ամեն օր մի օգտակար գործ _____:

• Դո՞ւ ինչ սովորեցիր հերոսներից:

114

Դասի սկզբում երեխաները կարդում են գլխագիրը, արտահայտում իրենց կարծիքը գլխագրի կետերի վերաբերյալ: Ուսուցչի ուղղորդմամբ փոքրիկ քննարկումից հետո անցնում են առաջադրանք 1-ին:

### 5.8.1. Աշխատանք գլխագրի շուրջ

**Առաջադրանք 1.** Օգտվելով **աշխատել, հասցնել, օգնել, անել, լինել, օգտվել** բառերից՝ պատասխանի՛ր «Հարցերի մոլորակի» հարցերին: Պատասխանները գրի՛ր «Պատասխանների մոլորակում»:

Առաջադրանքի միջոցով երեխաները վերհիշում են թեմայի դասանյութերի հերոսներին, նրանց կատարած գործողությունները: Նրանք մտաբերում են, թե հերոսները ինչ են սովորել միմյանցից:

Լրացնելուց հետո «Պատասխանների մոլորակը» ստանում է հետևյալ տեսքը.

1. Ընտանիքում միասնական լինել:
2. Սկսած գործը կիսատ չթողնել, ավարտին հասցնել:
3. Տնային գործերում օգնել մայրիկին:
4. Եթե չես աշխատում, չես կարող բարիքներից օգտվել:
5. Պիտի ամեն օր մի օգտակար գործ անել:

«Դո՞ւ ինչ սովորեցիր հերոսներից» հարցին երեխաները պատասխանում են թե՛ ըստ առաջադրանք 1-ի պատասխանների, թե՛ դասից քաղած պտուղների եզրահանգումներով, թե՛ գլխագրի նպատակներից ելնելով:

**ԳՐԱՇՐՋՈՒՄ-ՇՐՋԱԳՐՈՒՄ**

*(Այս պատմության մեջ որոշ բառեր փոխարինված են իրենց գրաշրջումներով՝ նույնտառիկներով: Կարդացե՛ք և վերականգնե՛ք իրական պատմությունը:)*

Խոր անուշ էր: Մի կերաշատ քայլում էր անտառով: Հանկարծ տեսավ մրջյունների մի սյունաշար, որն ուզում էր անցնել տեգը: Կերաշատի բերանը մարզանքից բաց մնաց: Տեգի վար ջրամուկ արկ:

Ջրամուկի ամրակը ճաքել էր: Մրջյուններն իրենց մարմիններից ջրամուկ էին սարքել ամրակի ճաքի վար:

**Պատասխան**

Խոր աշուն էր: Մի աշակերտ քայլում էր անտառով: Հանկարծ տեսավ մրջյունների մի շարասյուն, որն ուզում էր անցնել գետը: Աշակերտի բերանը զարմանքից բաց մնաց: Գետի վրա կամուրջ կար:

Կամուրջի կամարը ճաքել էր: Մրջյուններն իրենց մարմիններից կամուրջ էին սարքել կամարի ճաքի վրա:

## 5.8.2. Աշխատանք նկարաշարի շուրջ

2 Պատմի՛ր՝ ի՞նչ ես տեսնում նկարներում: Դո՞ւ ինչպես կվարվես:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՍԻՐ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՉԽԱՆԳԱՐԵՍ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

ԱՂԲԸ ՀԱՎԱՔԻՐ

ԽԱՐՈՒՅԿ ՎԱՌԻՐ ՃԻՇՏ ՏԵՂՈՒՄ

115

Այս նկարաշարը պատկերավոր կերպով, հետաքրքիր միջոցներով, հումորային նրբերանգներով ցույց է տալիս, թե ինչպես պետք է կազմակերպել հանգիստը բնության գրկում: Ի՞նչ անել, որ քո հանգիստը լինի ապահով, և դու չխանգարես մյուս հանգստացողներին:

Առաջին նկարազույգի (նկարազույգերը միացված են երկկողմանի սլաքներով) առաջին նկարում պատկերված է, թե ինչպես չպետք է հանգստյան գոտում լսել երաժշտություն՝ բարձրախոսները դնել մեքենայի վրա և ինչքան հնարավոր է բարձրացնել երաժշտության ձայնը՝ խլացնելով շրջապատում ամեն բան՝ թռչունների ու այլ կենդանիների, մարդկանց զրույցն ու մարդկանց: Նկարում մարդկանց ու կենդանիներին մոծակին հեծած օգնության է հասել ամենահաս Չ-ն: Նկարազույգի երկրորդ նկարում արդեն խաղաղություն է տիրում: Բոլորը գոհ են՝ թե՛ բարձր երաժշտություն սիրողը, թե՛ մարդիկ ու կենդանիները և թե՛ Չ-ն, որի ջանքերով ամեն բան կարգավորվել էր:

Երկրորդ նկարազույգի առաջին նկարում ներկայացված է, թե հանգստացողները ինչպես են աղտոտում շրջապատը, ինչքան անխնա վերաբերմունք են ցուցաբերում բնության նկատմամբ: Կենդանիները զարմացած են ու զայրացած: Նորից օգնության է հասնում մողեսին նստած Չ տառը: Երկրորդ նկարում արդեն կարգ ու կանոն է տիրում: Աղբը հավաքել, տեղավորել են մեքենայի բեռնոցում, բոլորը գոհ են: Մողեսներն ու թռչունները շնորհակալություն են հայտնում ամենահաս Չ-ին:

Երրորդ նկարազույգի առաջին նկարում տեսնում ենք, թե ինչպես են ուզում խարույկ վառել չոր խոտով ծածկված բացատում, ինչը շատ վտանգավոր է՝ հնարավոր է հրդեհ բռնկվի: Հրշեջի սաղավարտը գլխին դարձյալ օգնության է հասնում Չ-ն: Հաջորդ կադրում ցույց է տրված, թե ինչպես պետք է վարվել նման դեպքերում: Անհրաժեշտ է նախ խոտից մաքրել մի շրջանաձև տարածք այնպես, որ խարույկի կայծերը դրանից դուրս չգան և քարերով առանձնացնել այդ տարածքը: Արդեն ապահով կլինի խարույկ վառելը: Իսկ Չ-ն ուրախ-ուրախ հրաժեշտ է տալիս:

## ՉԱՏԻԿԻ ԵՐԱԶԸ

Մի պարտեզում ապրում էին Չատիկն ու Լուսիկը: Լուսիկի իսկական անունը անձնագրով Լուսատտիկ էր, բայց նրան կարճ Լուսիկ էին ասում: Իսկ Լուսատտիկ էին դրել նրա անունը, որովհետև նրա տուտը՝ պոչը, լույս էր տալիս գիշերները, մեղմ սպիտակ, լուսնային լույս:

Չատիկն ուզում էր ընկերանալ Լուսիկին, հիանալ նրա լույսով, Լուսիկին ցույց տալ սև պուտերով իր կարմիր շորիկը, զրուցել նրա հետ արևի ու ծաղիկների մասին: Սակայն Լուսիկը պարտեզում հայտնվում էր լուսնի հետ՝ երեկոյան: Ու Չատիկը միայն երազում էր տեսնում Լուսիկին:

**3** Հիշո՞ւմ ես՝ արարքը բնութագրում է մարդուն: Չ-ի գործողություններին համապատասխան ընտրի՛ր նրան բնութագրող բառեր:

| Գործողություն | Բնութագրող բառը |
|---|---|
| Զգուշորեն մոտենում է ու կանգնում մի իրի կողքին: | խիզախություն |
| Խցկվում է Փ տառից հետո: | բարություն |
| Չ-ն կանգնում է գայլի ծնոտների արանքում: | հնարամտություն |

**4** Պատկերացրո՛ւ՝ հանդիպել ես այս թեմատիկ շարքի հերոսներից մեկին: Ի՞նչ կասեիր նրան: Գրի՛ր: Կարող ես սկսել այսպես՝

*Բարև՛, սիրելի՛ _____: Ես մեծ հետաքրքրությամբ կարդացի քո մասին պատմությունը: Իմացա, որ _____: Ուզում եմ ասել _____:*

**5** Արտագրի՛ր բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը.

**թ□չել, ձամ□ա, խ□կվել, օ□նել, ամբող□, եր□եք, խ□ձիթ, հո□ատար, շո□, ե□բայր, գույն□գույն, □րս:**

## ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

## ԻՆՉՊԵՍ ԵՄ ԵՍ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՄ ՍՈՎՈՐԱԾԸ



116

**Առաջադրանք 3.** Երեխաները պետք է Չ-ի գործողությունները համապատասխանեցնեն բնութագրումներին: Գայլի ծնոտների արանքում կանգնելը խիզախություն է: Փ տառից հետո կանգնելը հնարամտություն է, որովհետև կարողացավ **փչակ** ստեղծել և ձմեռելու տեղ գտավ իր համար: Իրի կողքին կանգնելը և՛ հնարամտություն է, և՛ բարություն, քանի որ կարողացավ հնարամտորեն կերակուր ստեղծել թե՛ իր, թե՛ ճամփորդի համար:

### 5.8.3. Հանդիպում հերոսի հետ

**Առաջադրանք 4.** Ենթադրենք հանդիպել է Սուսիկին:

Բարև՛, սիրելի՛ Սուսիկ: Ես մեծ հետաքրքրությամբ կարդացի քո մասին պատմությունը: Իմացա, որ դու հասկացար քո սխալը: Ճիշտն ասած, ես էլ մեկ-մեկ այդպես եմ վարվում: Բայց, քեզ նման, ես էլ որոշեցի օգտակար գործեր անել. չէ՞ որ ես էլ եմ ուզում ավելի գեղեցիկ լինել: Ուզում եմ ասել, որ հասկացա ու սիրեցի քեզ:

### 5.8.4. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

**Առաջադրանք 5.** Այս առաջադրանքով ամփոփվում և ստուգվում է «Աչքի առաջ» խորագրի բառերի ճիշտ գրության իմացությունը:

**Թռչել, ճամփա, խցկվել, օգնել, ամբողջ, երբեք, խրճիթ, հոգատար, շոգ, եղբայր, գույնզգույն, որս**:

### 5.8.5. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

ԻՆՉՊԵՍ ԵՄ ԵՍ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՄ ՍՈՎՈՐԱԾԸ

Ինքնագնահատականը մի գնահատական է, որ մարդը (տվյալ դեպքում աշակերտը) նշանակում է իրեն իր հնարավորությունների, իր կարողությունների, իր գործունեության համար: Զարգացման նախնական փուլում երեխան գնահատում է իր ֆիզիկական կարողությունները: Զանազան խաղերը, ուսումը, շփումը հասակակիցների, ուսուցիչների, ընտանիքի անդամների հետ նպաստում են, որ երեխան անընդհատ գնահատի իր արածները, ձեռքբերումները, ունակությունները, այսինքն՝ ինքնագնահատական տա իրեն այս կամ այն չափով: Դասագրքում այս թեմայի յուրացման վերաբերյալ երեխաների ինքնագնահատականները ներկայացված են ինչ-որ չափով կատակային նկարների և համապատասխան գրառումների միջոցով:

«Ես չեմ կարծում, թե շատ բան սովորեցի» ինքնագնահատականը կարող են իրենց տալ որոշակի թվով աշակերտներ: Այդ դեպքում ուսուցիչը պետք է բացահայտի նման գնահատական տալու պատճառները, նշի դրանք հաղթահարելու միջոցները և խրախուսի թեկուզ փոքր ձեռքբերումները:

«Ես սովորեցի որոշ բաներ» ինքնագնահատականը ևս կարող են իրենք իրենց տալ որոշակի թվով աշակերտներ: Նույնպես պետք է պարզաբանել, թե ինչու են նման գնահատական տվել իրենք իրենց և ինչ պետք է անել ավելիին հասնելու համար: Պետք է յուրաքանչյուր աշակերտ պարզաբանի իր ասելիքը, և ուսուցիչը պետք է գնահատի, պարզաբանի, խրախուսի:

«Ես շատ բան սովորեցի» ինքնագնահատականը, ինչպես նաև մյուս երկուսը, երկու կողմ ունեն և, բնականաբար, կարող են լինել թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ: Կարևորը դրանք չպետք է իրականությունից շատ կտրված լինեն: Ուսուցիչը հենց իրենց՝ աշակերտների հիմնավորումներով, մեղմում է գնահատականների սուբյեկտիվությունը և, միաժամանակ, խրախուսում բոլոր աշակերտներին:

*Գլուխ 6.* «Ինչպես է աշխատում աշխարհը» թեմայի դասերի մեթոդական մշակումները

## 6.1. «ԻՆՉՊԵՍ Է ԱՇԽԱՏՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ» ՍԿԶԲՆԱՆԿԱՐ

117

### 6.1.1. Աշխատանք սկզբնանկարի շուրջ

Այս սկզբնանկարում ևս ուսումնասիրվող դասերի նկարազարդումներից հատվածներ են: Կարելի առաջարկել, որ երեխաները կռահումներ անեն նկարազարդումների շուրջ: Իսկ նկարներում զարմանահրաշ բաներ կան՝ դինոզավրեր են արածում մի նկարում, մյուսում՝ ստորջրյա քաղաքում երեխաները հիանում են օվկիանոսի բնակիչներով, մեկ այլ նկարում ձյան փաթիլը՝ նստած սառցի բյուրեղի վրա, հեռախոսով խոսում է ջրի կաթիլի հետ, մեկ ուրիշում՝ իրենց հասակակից մի մանուկ սեղանին շարել է համակարգիչ, հեռախոս, պլանշետ, հեռատեսիլ, ականջակալ և խիստ տոնով նրանց ինչ-որ բան է ասում, իսկ մի նկարում էլ երեխաները հսկա աստղադիտակով նայում են երկինք:

Երեխաները աշխուժորեն քննարկում են, ստեղծում իրենց պատմությունները:

Թեմայի ավարտին, կամ յուրաքանչյուր դասի ավարտից հետո, կարելի է թռուցիկ անդրադառնալ նրանց կռահումներին, ստեղծած պատմություններին և համեմատել դասագրքում եղածի հետ:

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**Ջ-Ի ԵՐԳԸ**

Ես **ՋԵ**-ն եմ, ջուրը,
Ծաղիկ եմ դարձնում
Արևի հուրը:

Ես Ջրահարս եմ
Ջրերում լուսե,
Ինչքա՜ն հեքիաթ են
Իմ մասին հյուսել:

Ես ջրաղաց եմ,
Թոնիրների մեջ
Ջերմացող հաց եմ:

Ես ջերմություն եմ,
Ձեր ձեռքի ջահը,
Ջանում եմ ցրել
Խավարն ու ահը:

Ես երջանիկ եմ,
Որ աջի մեջ եմ,
Որ ջանասեր եմ
ՈՒ գրքի էջ եմ:

Ո՛չ առաջինն եմ,
Ո՛չ էլ վերջինն եմ,
Ես ամբողջինն եմ:

---

**ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ**

Մեկը պառկել ձորի մեջ,
Մի ծով ջուր է փորի մեջ:
*(ջրամբար)*

Ամեն օր երկինք է ելնում
Ու նորից իջնում,
Երբեք չի հոգնում,
Նրան միայն արևն է օգնում:
*(ջուր)*

## 6.2. ՋՈՒՐԸ

Այս դասին դու.

• Կծանոթանաս հատկանիշ ցույց տվող բառերին:

• Կիմանաս, թե ինչպես է ջուրը ձամփորդում բնության մեջ:

• Կկարևորես ջրի դերը մեր կյանքում:

• Այլմոլորակայինին կբացատրես, թե ինչ է ջուրը:

vachagan.am

### ՋՈՒՐԸ

Վաչագան Ա. Սարգսյան

vachagan.am

**ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ**

Որ չդառնա չրի ծառ,
Ջրի՛ր ծառը, ա՛յ Պայծառ:

Երբևէ մտածե՞լ ես՝ ինչ է լինում ջուրը, երբ ջրում ես ծառը:

Ջերմ արևը նայեց ծովին,
Ծովից ջուրը բարձրացավ,
Կաթիլ-կաթիլ նստեց շողին
Ու երկնքում ամպ դարձավ:

Ամպը գնաց, կանգնեց սարին,
Կայծակ տվեց, գոռգոռաց,
Ամպի ջուրը կաթիլ-կաթիլ,
Անձրև դարձած, իջավ ցած:

Ու սարերում ջրվեժ* դարձած՝
Առվակները խոսեցին,
Միանալով՝ գետեր դարձան
Ու մայր ծովը հոսեցին:



**Հարցեր**

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**
*իջնել, անչրև*

1. Ի՞նչ արեց արևը:
2. Ինչպե՞ս երկնքում ամպ առաջացավ:
3. Ամպի ջուրն ինչպե՞ս վերադարձավ ծով:
4. Ինչի՞ մասին կարող են խոսել առվակները հանդիպելիս:

* **Ջրվեժ** – բարձրությունից թափվող ջուր:



### 6.2.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Երեխաները հերթով կարդում են գլխագրի կետերը:

Առաջին կետի վերաբերյալ ուսուցիչը ասում է, որ նրանք արդեն ծանոթ են առարկա և գործողություն ցույց տվող բառերին, իսկ այսօր կծանոթանան բառերի մի նոր տեսակի:

Երկրորդ կետը կարդալուց հետո երեխաները արտահայտում են իրենց վերաբերմունքը ջուրը խնայողաբար օգտագործելու մասին:

Երրորդ կետը, պարզ է, մեծ հետաքրքրություն կառաջացնի և կբորբոքի երեխաների երևակայությունը: Այլմոլորակայինի հետ հանդիպումը «պատասխանատու գործ է»:

### 6.2.2. Աշխատանք դասանյութի «Մուտքի պատուհանիկի» շուրջ

***Մինչ տեքստի ընթերցումը*** ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները կարդան մուտքի պատուհանիկում գրված շուտասելուկը, լսեն և տեսնեն շուտասելուկի մասին ուրախ տեսահոլովակը: Իրենք փորձեն արագ արտասանել: Այնուհետև անդրադառնում են «Երբևե մտածե՞լ ես՝ ինչ է լինում ջուրը, երբ նրանով ջրում ես ծառը» մտքին: Արտահայտում են իրենց կարծիքը:

Ուսուցիչը լսում է աշակերտների պատասխանները, ապա մի քանի նախադասությամբ մատչելի բացատրում երեխաներին, որ բոլոր բույսերը գրեթե ամբողջությամբ բաղկացած են ջրից (95 տոկոսով): Ջուրը օգնում է բույսերին, որ նրանք լինեն ճկուն, դիմանան շոգին: Ջուրը ապահովում է բույսի համար անհրաժեշտ սննդանյութերի տեղաշարժը արմատներից մինչև տերևներ:

Այնուհետև հրահանգում է, որ երեխաները լուռ, դանդաղ և ուշադիր կարդան բանաստեղծությունը: Բանաստեղծությունը կարդալուց հետո, ուսուցիչը QR-կոդի կամ համապատասխան հղումով ներկայացնում է ՋՈՒՐԸ տեսահոլովակը:

### 6.2.3. Տեքստի նախնական ընկալումը պարզելու նպատակով տրվող հարցեր

1. Ինչի՞ց հասկացանք, որ սա բանաստեղծություն է: (Ունի կարճ, իրար հավասար տողեր, վերջին բառերը իրար նման են հնչում, բոլոր տողերում վանկերը նույնքան են)
2. Բանաստեղծությունն ընթերցելիս ի՞նչ պատկերներ տեսաք: (Արևը նայում է ծովին, ջուրը բարձրանում է, կաթիլներով նստում է արևի շողին, կաթիլները ամպ են դառնում, ամպը կանգնում է սարին, կայծակ տալիս, անձրև է գալիս, առվակները ջրվեժ են դառնում, գետ են դառնում, հոսում են ծով)
3. Ովքե՞ր էին բանաստեղծության հերոսները: (Արևը, ծովը, ջուրը, ամպը, սարը, կայծակը, անձրևը, ջրվեժը, առվակները, գետերը)
4. Որտեղի՞ց ո՞ւր հասավ ջուրը: (Ծովից բարձրացավ երկինք, անձրև դարձավ, թափվեց ներքև, գետեր դարձավ ու նորից հոսեց լցվեց ծովը)

### 6.2.4. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Բանաստեղծությունը կարդում են բարձրաձայն, կատարվում են մեկնաբանություններ և բառաբացատրական աշխատանք։

**Ջրվեժ** – բարձրությունից թափվող ջուր։

### 6.2.5. Զրույց տեքստի բովանդակության շուրջ

1. Ի՞նչ արեց արևը։ (Ջերմորեն նայեց ծովին)
2. Ինչպե՞ս երկնքում ամպ առաջացավ։ (Արևի շողերին նստած և երկինք բարձրացած ջրի մանր կաթիլներից)
3. Ամպի ջուրն ինչպե՞ս վերաարձավ ծով։ (Անձրև դարձավ, թափվեց ցած, գետեր դարձավ ու հասավ ծով)
4. Ի՞նչ է ուզում ասել հեղինակը «**կաթիլ-կաթիլ նստեց շողին»** արտահայտությամբ։ (Թե ինչպես է արևի շողերից ծովի ջուրը գոլորշանում)
5. Ի՞նչ նկատի ունի հեղինակը, երբ ասում է, որ **առվակները խոսեցին**։ (Առվակները քչքչալով հոսեցին)
6. Ինչի՞ մասին կարող են խոսել առվակները հանդիպելիս։ Ներկայացրե՛ք առվակների զրույցը։ (Առվակները երբ հանդիպեն, նրանց ջրերի կաթիլները կճանաչեն իրար. չէ՞ որ նրանք նույն անձրևի կաթիլներն են։ Կուրախանան, կպատմեն, թե ինչպես են անձրևի հետ իջել ամպերից, թե ինչքան շատ կաթիլներ գնացին հողի տակ, և այլն)

### 6.2.6. Տեքստի ընթերցումից հետո

• Դերային խաղով ներկայացրո՛ւ առվակների երկխոսությունը։

• **Աշխատանք նկարազարդման շուրջ**

• Հարցեր.

• Ինչի՞ մասին է նկարը։ (Նկարը ջրի շրջապտույտի մասին է)

• Ինչպե՞ս այն կվերնագրեիք։ (Ամպի ցնցուղը)

• Ուրա՞խ նկար է, թե՞ տխուր։ (Ուրախ նկար է։ Թմբլիկ ամպը իր ցնցուղով ջրում է գետերն ու դաշտերը)

• Ի՞նչ գույներ է օգտագործել նկարիչը։ (Գարնանային գույներ՝ կանաչ, սպիտակ, երկնագույն, մոխրագույն, շագանակագույն)

## Առաջադրանքներ

1 Ենթադրենք՝ հանդիպել ես այլմոլորակայինի, որը չգիտի, թե ինչ է ջուրը:

- Այնպե՛ս նկարագրիր, որ հասկանա:
- Ի՞նչ հարցեր կտաս նրան:

2 **ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

Բառերի մեջ մի-մի տառ փոխելով՝ **ջուր**-ից ստացի՛ր **կաթ**.

**ջուր – հու□ – հ□ր – □որ – կոթ – կաթ:**

3 Ինչպիսի՞ն են **արևը, ամպը, ջուրը**:

**ՎՀիտ, անձրևաբեր, պայծառ, սառնորակ, թուխ, գնդաձև, քաղցրահամ, ոսկեշող, ձերմակաթև** բառերը գրի՛ր համապատասխան սյունակներում:

| Արև | Ամպ | Ջուր |
|---|---|---|
| | | |

Քո գրած բառերը ցույց են տալիս առարկայի հատկանիշ և պատասխանում են ինչպիսի՞ հարցին:

4 Կարդա՛ հանելուկը, արտագրի՛ր և գուշակի՛ր պատասխանը:

Առանց թևի թռչում են,
Երկինք, գետին թրջում են,
Նրանց մոտից թե նայես,
Մարդիկ կարծես մրջյուն են:




**ԱՌԱԾ**

Ջուրն իր ճամփան կգտնի:





### 6.2.7. Ստեղծագործական աշխատանք

**Առաջադրանք 1**. Ենթադրենք՝ հանդիպել ես այլմոլորակայինի, որը չգիտի, թե ինչ է ջուրը:

- Այնպե՛ս նկարագրիր, որ հասկանա։
- Ի՞նչ հարցեր կտաս նրան։

Կարելի է մի այսպիսի երևակայական հանդիպում նկարագրել և աշակերտներին ասել, որ նրանք լրացնեն, թե էլ ինչ կարելի էր ասել։

Ենթադրենք այլմոլորակայինը մի այնպիսի մոլորակից է եկել, որտեղ ջուր չկա։ Հանդիպել է երկրորդ դասարանցի Արմենին։ Նա էլ այլմոլորակային սկսեց նկարագրել, թե ինչ է ջուրը։

- Ջուրը հեղուկ է։
- Մեր մոլորակի մեծ մասը պատված է ջրով։
- Ջուրը մենք խմում ենք։
- Ջուրը ծովերից բարձրանում է երկինք։
- Ջուրը ամպերի միջից թափվում է ներքև։
- Ջուրը խմում են կենդանիներն ու բույսերը։
- Անգույն է։
- Համ չունի, անհոտ է։
- Ջրով մենք լվացվում ենք։
- Ջրի մեջ լողում ենք։
- Ջրերի մեջ շատ կենդանիներ են ապրում։
- Ջուրը ցրտից սառչում է։
- Ջուրը ամպ է դառնում ու լողում երկնքով։
- Մենք առանց ջրի չենք կարող ապրել։

Այլմոլորակայինը գլուխը բռնեց և ուզում էր փախչել։ Արմենը մի շիշ ջուր հանեց իր դպրոցական պայուսակից ու, ցույց տալով այլմոլորակայինին, խմեց։ Մի քիչ էլ թափեց ներքև։ Այլմոլորակայինին առաջարկեց, որ խմի։ Սա վախեցած վերցրեց շիշը ու ուզում էր վազել դեպի իր աստղանավը։ Սակայն Արմենը նրան ասաց, որ մի քանի հարց ունի նրան տալու։ Այլմոլորակայինը նստեց մի քարի վրա, և Արմենը սկսեց հարցեր տալ նրան։

-Դու հայերեն որտե՞ղից գիտես։

-Ո՞ր աստղից ես եկել։

-Ինչո՞ւ ես եկել։

-Ձեզ մոտ դպրոցներ կա՞ն։

-Քո անունն ի՞նչ է։

-Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

-Աստղանա՞վն է վնասվել, թե՞ վառելիքն է վերջացել։

-Հասկացա՞ր, թե ինչ է ջուրը։

-Դե ձեր լեզվով մի բան գրիր, որ հասկացել ես: Կարո՞ղ ես գրել:

-Դուք ի՞նչ եք ուտում աստղանավի մեջ:

-Մենա՞կ ես եկել:

Մինչև Արմենը հաջորդ հարցն էր մտածում, այլմոլորակայինը սլացավ դեպի իր աստղանավն ու չքացավ:

Առաջադրանքը նպաստում է երեխաների խոսքի, անկաշկանդ արտահայտվելու ձևավորմանն ու զարգացմանը, ամենասովորական թվացող առարկաները ըստ էական հատկանիշների նկարագրելու դժվարությունների հաղթահարմանը, զարգացնում է առարկաներին հատկանիշներ վերագրելու նրանց ունակությունները:

### 6.2.8. Աշխատանք «Փոխակերպում» բառախաղի շուրջ

**Առաջադրանք 2**.

Փոխակերպում խաղի նպատակներից մեկն էլ երեխաների բառապաշարի հարստացումն է: Կարելի է ցույց տալ, որ նույն նպատակին հնարավոր է հասնել տարբեր ճանապարհներով:

Կարող են լինել, օրինակ, այսպիսի բառաշղթաներ.

**ջուր – մուր – մութ – կութ - կաթ**

**ջուր – հուր – հոր – կոր – կոթ - կաթ**

### 6.2.9. Աշխատանք հատկանիշ ցույց տվող բառերի շուրջ

**Առաջադրանք 3**. Ինչպիսի՞ն են արևը, ամպը, ջուրը:

Կարելի է կազմակերպել որպես խմբային աշխատանք:

Ուսուցիչը գրատախտակին գծում է այսպիսի աղյուսակ.

| Արև | Ամպ | Ջուր |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

Կպչուն թղթերի վրա ուսուցիչը նախօրոք գրում է առաջադրանքում տրված **վճիտ, անձրևաբեր, պայծառ, սառնորակ, թուխ, գնդաձև, քաղցրահամ, ոսկեշող, ճերմակաթև** բառերը և փակցնում առաջադրանքների ծառին: Դասարանը բաժանում է 3 խմբի: Յուրաքանչյուր խմբից 3-ական աշակերտ հերթով մոտենում են առաջադրանքների ծառին, վերցնում որևէ բառ, բարձրաձայն կարդում այն, հնչեցնում հարցը և տեղադրում աղյուսակի համապատասխան սյունակում: Կարևոր է նշել, որ երեխաները կարող են որևէ հատկանիշ վերագրել մի այնպիսի առարկայի, որն առաջին հայացքից ոչ միայն անսովոր է, այլև կարող է սխալ թվալ: Ուսուցիչը չպետք է ասի, որ այդ առարկան չի կարող այդպիսին լինել: Նա պետք է համբերատար լսի, թե ինչ հիմնավորում է տալիս աշակերտը, ինչ բացատրություն: Օրինակ, երեխան կարող է կազմել **ճեր-**

**մակաթև արև** բառակապակցությունը, որն առաջին հայացքից սխալ թվա: Սակայն երեխան կարող է բացատրել, որ արևը ճերմակ թևեր ունի ու այդ թևերով է նա թռչում երկնքում, և այլն: Կարևորը այն է, որ երեխան հասկանա, թե ինչ բան է որևէ առարկային ամենաբնորոշ հատկանիշը:

Կարելի է երեխաներին տալ որևէ առարկայի անվանում և առաջարկել, որ նրանք ասեն այդ առարկային բնորոշ հատկանիշներ: Աշակերտները տեսնում են, որ իրեն տեղադրած բոլոր բառերը պատասխանեցին **ինչպիսի՞** հարցին:

Ուսուցիչն ասում է, որ այդ բառերը ցույց են տալիս առարկայի հատկանիշ, այսինքն, թե ինչպիսին է առարկան: Աշակերտներն այս առաջադրանքը կարող են գրել իրենց տետրերում:

Այսպիսով, գործնական ճանապարհով ներմուծվում է **հատկանիշ ցույց տվող բառեր** հասկացությունը:

### 6.2.10. Աշխատանք հանելուկի շուրջ

**Առաջադրանք 4.**

Կարդա՛ հանելուկը, արտագրի՛ր և գուշակի՛ր պատասխանը:

Առանց թևի թռչում են,
Երկինք, գետին թրջում են,
Նրանց մոտից թե նայես,
Մարդիկ կարծես մրջյուն են:

Երեխաները առանց մեծ դժվարության, նկարից օգտվելով, կգտնեն հանելուկի պատասխանը՝ **ամպեր**:

### 6.2.11. Աշխատանք «Գիտե՞ս, որ...» խորագրի շուրջ

«Գիտե՞ս, որ…» խորագրով երեխաներին ներկայացվում է բնության զարմանահրաշ երևույթներից մեկը՝ ամպը: Միջին անձրևաբեր ամպը կշռում է մի քանի միլիոն տոննա: Եվ այդ ահռելի զանգվածը մնում է օդում:

### 6.2.12. Անդրադարձ առածին

***Ջուրն իր ճամփան կգտնի առածը*** վերաբերում է ջրին: Քանի որ բնության մեջ ջրերը հոսում են վերևից ներքև ծանրության ուժի ազդեցությամբ, ապա նրանք որևէ խոչընդոտի առջև կանգ չեն առնում, անընդհատ իջնում են: Եթե խոչընդոտը մեծ է լինում, ջուրը կուտակվում է, դուրս գալու ելք է գտնում ու հասնում մայր ծով: Այս երևույթն էլ նկատվել ու առած է դարձել: Նշանակում է, որ որևէ բան, որևէ գործ, որևէ նպատակ, որը բնական է, ճիշտ է, ինչքան էլ խոչընդոտների հանդիպի, անպայման իր ճանապարհը կգտնի, անպայման կիրականանա:

Այսինքն՝ ճիշտ գործը, լավ արարքը, խելացի մարդը իրենց համար ճանապարհ կհարթեն, ինչքան էլ դժվարությունների ու խոչընդոտների հանդիպեն:

5 ○ Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում նկարում:



✧ Օգտվելով բանաստեղծությունից և նկարազարդումից՝ գրի՛ր, թե ինչ բառեր պետք է գրել դատարկ շրջանակներում.

**ծով → ջուր → արև → ամպ → □□□□□ → առու → □□□**

✲ Քո լրացրած առարկա ցույց տվող բառերի համար գրի՛ր հատկանիշ ցույց տվող բառեր:

6 Արտագրի՛ր բանաստեղծության առաջին քառատողը: Սովորի՛ր անգիր, գրի՛ր ինքնաթելադրությամբ:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**



**Մի ճամփորդ է ջուրը մեր,**
**Ցած է իջնում, ելնում վեր,**
**Բազում ձևեր է առնում,**
**Բերք ու բարիք է դառնում:**



**Առաջադրանք 5**. Սա «Դեպի վեր» առաջադրանք է, որը պարունակում է բարդության տարբեր աստիճաններ՝ պարզ, միջին բարդությամբ և բարդ: Առաջադրանքը նախատեսված է տարբեր կարողությունների տեր աշակերտների համար: Ուսուցիչը

պետք է հետամուտ լինի, որ աշակերտները հնարավորության դեպքում կարողանան աստիճանաբար կատարել դրանք:

Առաջին պահանջով երեխաները պետք է պատմեն, թե ինչ են տեսնում նկարում:

Դասագրքում կան առաջադրանքներ, որտեղ երեխաներին ներկայացվում են կոմպոզիցիոն նկարներ, և երեխաները պետք է պատմեն, թե ինչ են տեսնում նկարում: Սա կարող է լինել թե՛ անհատական, թե՛ խմբային առաջադրանք: Այնուհետև համեմատեն իրենց գրածները իրար հետ:

Նպատակն է երեխաների մեջ ձևավորել նկարը «կարդալու», նրա մեջ արտահայտված միտքն ու զգացական աշխարհը զգալու կարողություն՝ հասնելու համար այն բանին, որ երեխաները սկսեն ճիշտ «կարդալ» նկարը, յուրացնեն երևույթը նկարչական լեզվով ներկայացնելու նրբությունները: Սա, սկզբունքորեն, բանաստեղծության նկարագրումն է: Արևը ծովից ջրի կաթիլները բարձրացնում է երկինք իր շողերով: Դրանք երկնքում ամպ են դառնում, կանգնում սարի վրա: Որոտում են, կայծակ տալիս ու անձրև դարձած թափվում են ներքև: Սարի լանջերով առուներ են հոսում, որոնք միանում են իրար, դառնում գետեր, և ջուրը նորից վերադառնում է ծով: Այսինքն, երեխաները բնության նույն երևույթը տեսնում, ընկալում և վերարտադրում են մի դեպքում բառերով, մեկ այլ դեպքում՝ նկարի միջոցով:

Երկրորդ պահանջով լրացվում է բառաշղթան, որը նկարի խոսքային արտահայտությունն է.

*ծով – ջուր – արև - ամպ – **անձրև** - առու – **գետ:***

Երրորդ պահանջով պետք է հատկանիշներ վերագրել անձրև և գետ բառերին.

հորդառատ, ուժեղ, տեղատարափ, վարար **անձրև,**
հորդառատ, վարար, արագընթաց, խշշացող, ջրառատ, սակավաջուր **գետ**:

**Առաջադրանք 6**. Արտագրի՛ր բանաստեղծության առաջին քառատողը: Սովորի՛ր անգիր, գրի՛ր ինքնաթելադրությամբ:

Ուսուցիչը կարող է կազմակերպել, որ երեխաները այդ քառատողը գրեն ինքնաթելադրությամբ: Ինքնաթելադրությունը զարգացնում է աշակերտների հիշողությունը, ուշադրությունը, ձևավորում է սեփական մտքերը կառավարելու ունակություն:

### 6.2.13. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» խորագրի բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը.

**ի-նել, ար-, անձր-**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են բառատետրում և կազմում բառակապակցություններ:

**Իջնել** - ներքև իջնել, իջնել արագ

**Անձրև** - հորդառատ անձրև, անձրևի կաթիլ

### 6.2.14. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Ուսուցիչը դասի ավարտին աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացված նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները:

- Աշակերտները լրացնում են անավարտ նախադասությունները:
- Լրացնելուց հետո բարձրաձայն կարդում են իրենց գրառումները:

Օրինակ.

**Ինձ հետաքրքրեց**, թե ջուրն ինչպես է շրջանառություն կատարում բնության մեջ: Թե ինչպես է հսկայական քանակությամբ ծանր ջուրը ամպի տեսքով լողում երկնքում:

**Ես ինքնուրույն կատարեցի** ջուր-ից կաթ ստանալու առաջադրանքը:

**Ես բացահայտեցի** ջրի հետ կապված շատ գաղտնիքներ:

Դասի վերջում երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված քառատողը, մեկնաբանում, եզրակացություններ անում:

Մի ճամփորդ է ջուրը մեր,
Ցած է իջնում, ելնում վեր,
Բազում ձևեր է առնում,
Բերք ու բարիք է դառնում:

## 6.3. ԱՐԵՎՆ ՈՒ ԾԻԱԾԱՆԸ

### 6.3.1. Աշխատանք «Պատասխանը՝ վերջում» հնարի կիրառմամբ

Դասի սկզբին կարելի է կիրառել «Պատասխանը՝ վերջում» մեթոդական հնարը: Ուսուցիչը կարդում է մի բանաստեղծություն, որտեղ հանելուկի ձևով տրված է դասանյութի թեմային առնչվող առարկա կամ երևույթ: Թե որ առարկայի, երևույթի մասին է խոսքը, աշակերտները կիմանան, երբ լսեն քառատողը և փորձեն գուշակել նրա վերջին բառը:

**Կաթիլ ու շող միացան**
**Դարձան գունեղ մի կաձան,**
**Մարդիկ տեսան, հիացան,**
**Անվանեցին ...:**

Աշակերտները, հնարավոր է, անմիջապես գտնեն **ծիածան** բառը: Եթե դժվարանան, ուսուցիչը ուղղորդող հարցերի օգնությամբ կհասնի դրան:

Այս դասին դու.

• Կամրապնդես առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերի իմացությունը:

• Կբացահայտես բնության զարմանալի երևույթներից մեկը՝ ծիածանը:

• Կկարևորես շրջապատն ուշադիր դիտելը և բնության երևույթները տեսնելը:

• Կտեսնես, որ արևը հայերեն գիտի:

## ԱՐԵՎՆ ՈՒ ԾԻԱԾԱՆԸ

Վաչագան Ա. Սարգսյան

vachagan.am

**Կարմրաթևիկը նստեց դեղնած կանաչին,**
**երազեց կապույտ մանուշակներ:**
**Կարդա՛ նախադասությունը:**
**Մտածի՛ր՝ ինչ կապ ունի այն ծիածանի հետ:**



Մի օր Արևը խաղաղ անցնում էր ծովերի, դաշտերի ու այգիների վրայով: Կակաչը, աչքերը կկոցելով*, թփերի տակից նայեց արևին ու ասաց.

– Ի՜նչ կլինի, ինձ ներկի՛ր:

Արևը շատ զարմացավ, որ կակաչը հայերեն գիտի ու նրան իր արյան գույնով կարմիր ներկեց:

Նարինջն ասաց.

– Ի՜նձ էլ:

– Քո գույնը շատ լավն է, մնա՛ նարնջագույն,– ասաց Արևը:

Դեղձը դեղին ներկեց, իսկ խոտը՝ կանաչ:

Մի ծաղիկ կար, որը մոռանում էր, թե ինքն ինչ գույնի է:

– Քեզ երկնագույն եմ ներկում ու, որ չմոռանաս, անունդ Անմոռուկ եմ դնում,– համբուրելով նրան՝ ասաց Արևը: Նա արդեն չէր զարմանում, որ ծաղիկները հայերեն են խոսում: Նա հասկացավ, որ դրանք Հայաստանի ծաղիկներն են:

* **Կկոցել** – աչքերը կիսախուփ անել:

121

### 6.3.2. Աշխատանք գլխագրի շուրջ

Այնուհետև երեխաները ուսուցչի հանձնարարությամբ բացում են դասագրքերը և կարդում գլխագրի կետերը:

Առաջին կետի վերաբերյալ կարելի է կարճ հարցում կատարել, թե ինչ են առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը և հանձնարարել, որ բերեն օրինակներ:

Երկրորդ կետով կարելի է բացահայտել երեխաների գիտելիքները ծիածանի մասին: Դա կօգնի, որ երեխաները մուտքի պատուհանիկի հարցադրմանը ավելի արագ և ճիշտ պատասխանեն:

Երրորդ կետի վերաբերյալ աշակերտները կարտահայտեն իրենց կարծիքներն ու վերաբերմունքը բնության երևույթների վերաբերյալ:

Չորրորդ կետը դարձյալ «սադրանք» պարունակող կետ է, և երեխաները կցանկանան բոպե առաջ իմանալ, թե արևը որտեղից հայերեն գիտի:

### 6.3.3. Աշխատանք դասանյութի վերնագրի, նկարազարդման և մուտքի պատուհանիկի շուրջ

Մինչ տեքստի ընթերցումը ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները ընթերցեն տեքստի վերնագիրը և դիտեն նկարազարդումը: Երբ երեխաները ավարտում են հանձնարարությունը, ուսուցիչը հարցնում է, թե ինչ կապ կարող են ունենալ արևն ու ծիածանը: Աշակերտները արտահայտում են իրենց կարծիքները: Այնուհետև ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է մուտքի պատուհանիկում գրվածի վրա: Նրանք կարդում են նախադասությունը և փորձում են կռահել, թե այն ինչ կապ ունի ծիածանի հետ:

Ուսուցիչը լսում է աշակերտների բոլոր պատասխանները, խրախուսում, ապա հրահանգում լուռ կարդալ տեքստը՝ ստուգելով իրենց կանխագուշակումները տեքստի բովանդակության վերաբերյալ: Ուսուցիչը QR-կոդի միջոցով կարող է ներկայացնել հեքիաթ-պատմության տեսահոլովակը:

### 6.3.4. Տեքստի նախնական ընկալումը պարզելու նպատակով տրվող հարցեր

1. Հաստատվեցի՞ն ձեր կանխատեսումները տեքստի բովանդակության վերաբերյալ (երեխաները հիշում են իրենց կանխատեսումները, համեմատում տեքստի հետ):

2. Ովքե՞ր էին տեքստի հերոսները: (Արևը, կակաչը, նարինջը, դեղձը, խոտը, անմոռուկը, մանուշակը, ծովը, անձրևը, ծիածանը)

3. Ի՞նչ կապ ունեին իրար հետ արևն ու ծիածանը: (Արևից ու անձրևից ծնվում է ծիածանը)

4. Հիմա իմացա՞ք, թե ինչ էին նշանակում մուտքի պատուհանիկում գրված գույները: (Երեխաները հասկանում են, որ այդ գույները ծիածանի գույներն են)

### 6.3.5. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Տեքստը կարդում են բարձրաձայն, կատարվում են մեկնաբանություններ և բառաբացատրական աշխատանք:

**Կկոցել** – աչքերը կիսախուփ անել:

– Ինձ էլ կապո՜ւյտ ներկիր,– խնդրեց Մանուշակը՝ քամուց օրորվելով:

– Չէ՛, կապույտով ծովն եմ ներկելու, իսկ քեզ թողնում եմ մանուշակագույն,– գործը վերջացրած համարեց Արևը և մտավ ամպերի մեջ: Քիչ անց սկսեց անձրև տեղալ:

Իսկ երբ արևն ու անձրևը միանում են, ծիածան է ծնվում՝ իր յոթ գույներով՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն:

## Հարցեր

1. Ի՞նչ ծաղիկներ ներկեց Արևը:
2. Ուրիշ ի՞նչ ներկեց Արևը և ի՞նչ գույնով:
3. Ինչպե՞ս է ծնվում բնության երևույթը՝ ծիածանը, և ի՞նչ գույներ ունի:
4. Ի՞նչ կլիներ, եթե.
   - Արևը չներկեր աշխարհը,
   - Արևն աշխարհը ներկեր մեկ գույնով:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*դեղջ*
*խնդրել*
*վերջացնել*
*օրորվել*

## Առաջադրանքներ

1 Գրի՛ր՝ ինչ ես տեսնում նկարներում:

Վերականգնի՛ր նախադասությունը:

**ծիածան, արևն, միանում են, քամի, ծնվում է, երբ, ու, անձրևը:**

Ո՞ր բառը չգործածեցիր:

Այդ բառին վերագրի՛ր հատկանիշներ:





6.3.6. Զրույց տեքստի բովանդակության շուրջ

1. Քանի՞ հերոս կա հեքիաթում: (Արևը, կակաչը, նարինջը, դեղձը, խոտը, անմոռուկը, մանուշակը, ծովը, անձրևը, ծիածանը)

2. Ի՞նչու զարմացավ Արևը: (Զարմացավ, որ ծաղիկները հայերեն գիտեն)

3. Ի՞նչ ծաղիկներ ներկեց Արևը: (Կակաչ, անմոռուկ, մանուշակ)

4. Ուրիշ ի՞նչ ներկեց Արևը և ի՞նչ գույնով: (Նարինջը թողեց նարնջագույն, դեղձը՝ դեղին, խոտը՝ կանաչ, ծովը՝ կապույտ)

5. Ինչո՞ւ Արևը իր գործն ավարտած համարեց: (Որովհետև ծիածանի բոլոր գույներով արդեն ներկել էր)

6. Ի՞նչ կլիներ, եթե.

- Արևը չներկեր աշխարհը: (Աշխարհը միագույն ու տխուր կլիներ)
- Արևն աշխարհը ներկեր մեկ գույնով: (Աշխարհը միագույն ու տխուր կլիներ)

7. Ինչպե՞ս է ծնվում բնության երևույթը՝ ծիածանը, և ի՞նչ գույներ ունի: (Արևն ու անձրևը ծնում են յոթգույնանի ծիածան՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն)

8. Ե՞րբ սկսեց անձրև տեղալ: (Երբ Արևն իր գործն ավարտեց)

9. Արևն ինչու՞ ծաղկի անունը Անմոռուկ դրեց: (Որ ծաղիկը չմոռանա իր անունը)

10. Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է այստեղ իրական, ի՞նչը անիրական: (Ամեն բան անիրական է և ամեն բան՝ իրական)

### 6.3.7. Տեքստի արտահայտիչ ընթերցանություն՝ կարդալու որակական բոլոր հատկանիշների պահպանումով

Ուսուցիչը աշակերտների ընթերցանական կարողությունները զարգացնելու նպատակով կարող է հանձնարարել, որ երեխաները կարդան Արևի և Նարինջի երկխոսությունը՝ համապատասխան հնչերանգով:

- Գտնեն այն տողը, որը ներկայացնում է Անմոռուկի մտածմունքը: Ընթերցեն համապատասխան հնչերանգով:
- Իրենց ցանկությամբ բաշխեն դերերը և ընթերցեն՝ օգտագործելով համապատասխան շարժումներ և դիմախաղ:

### 6.3.8. Աշխատանք նկարազարդման շուրջ

Տեքստի և նկարազարդման կապը ցույց տալու համար կարելի է տալ այսպիսի հարցեր.

Ի՞նչ եք տեսնում նկարում: (Ինչպես է արևը երկնքից նայում ծաղիկներին ու մրգերին)

Ի՞նչ ծաղիկներ ու մրգեր են նկարված: (Կակաչ, մանուշակ, անմոռուկ, նարինջ, դեղձ)

Ուրախ նկար է, թե՞ տխուր: (Ուրախ է, արևը ժպտում է)

Ի՞նչ գույներ է օգտագործել նկարիչը: (Ծիածանի բոլոր գույները)

### 6.3.9. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» խորագրի բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝

**Խա-աղ, նարին-, դեղ-, խն-րել, վեր-ացնել, հա-բուրել, օր-րվել:**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը բառատետրում և կազմում բառակապակցություններ:

**դեղձ**- թավշյա դեղձ, դեղձի հյութ
**խնդրել**- խնդրել գրիչ, կամաց խնդրել
**արագ**- արագ սլանալ, արագ վերջացնել գործը
**համբուրել** - համբուրել մայրիկին, ջերմ համբուրել
**օրորվել**- օրորվել օդում, հանգիստ օրորվել

### 6.3.10. Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ

**Առաջադրանք 1**. Սա «Դեպի վեր» առաջադրանք է, որը պարունակում է բարդության տարբեր աստիճաններ՝ պարզ, միջին բարդությամբ և բարդ: Առաջադրանքը նախատեսված է տարբեր կարողությունների տեր աշակերտների համար: Ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ աշակերտները հնարավորության դեպքում կարողանան աստիճանաբար կատարել դրանք:

○ Գրի՛ր՝ ի՞նչ ես տեսնում նկարներում: (Ծիածան, արև, քամի, անձրև)

✧ Վերականգնի՛ր նախադասությունը: Ո՞ր բառը չօգտագործեցիր: (Երբ արևն ու անձրևը միանում են, ծնվում է ծիածան: Չգործածվեց **քամի** բառը)

Առաջադրանքը կարելի է կատարել նախ՝ բանավոր, ապա՝ գրավոր:

✵ Այդ բառին վերագրի՛ր հատկանիշներ և գրի՛ր:

Օրինակ՝ *կատաղի քամի, սրընթաց քամի, մեղմ քամի:*

**2** **Ամպ, կյանք, աչք** բառերից ո՞րը կտեղադրես նախադասությունների մեջ: Ինչո՞ւ:

Ջուրը ☐ է տալիս բոլորին: Դո՛ւ էլ խնայիր բոլորին ☐ տվողին:

**3** Նկարներով և **գույն** բառով կազմի՛ր հատկանիշ ցույց տվող բառեր:




Օրինակ՝

**+ գույն = շագանակագույն**:

**4** Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները և բաժանի՛ր երկու խմբի: Հիմնավորի՛ր բաժանումդ:

**Առաջադրանք 2. Ամպ, կյանք, աչք** բառերից ընտրի՛ր ամենահամապատասխանը: Տեղադրի՛ր նախադասությունների մեջ և գրի՛ր:

Ջուրը **կյանք** է տալիս բոլորին: Դու էլ խնայիր բոլորին կյանք տվողին:

**Առաջադրանք 3**. Նկարներով և գույն բառով կազմի՛ր հատկանիշ ցույց տվող բառեր.

Այս աշխատանքը կարելի է կազմակերպել որպես խմբային աշխատանք՝ համագործակցային հարաբերությունները զարգացնելու նպատակով: Աշակերտներին բաժանել 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալ 2-ական նկար-բառ: Խումբը նախ առաջադրանքը կկատարի բանավոր, այնուհետև՝ գրավոր:

Ըստ տրված օրինակի և նկարի՝ երեխաները կկազմեն հետևյալ գույների անունները.

**մանուշակագույն, բալագույն, մոմագույն, ծիրանագույն, կրակագույն, (հրագույն, բոցագույն), արևագույն:**

**Առաջադրանք 4**. Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները և բաժանի՛ր երկու խմբի: Հիմնավորի՛ր բաժանումդ:

Այս առաջադրանքը նախ կկատարեն բանավոր՝ կընթերցեն բառ-նկարները, այնուհետև կառանձնացնեն խմբերի: Կարելի է կազմակերպել որպես զույգային աշխատանք:

Առարկաները կարելի է բաժանել այսպիսի խմբերի.

**բնության երևույթներ**- անձրև, քամի, ձյուն, ծիածան,

**սարքեր**- հեռուստացույց, հեռախոս, ռոբոտ, ինքնաթիռ:

Հնարավոր են խմբերի բաժանումներ՝ ըստ բաղաձայնով սկսվող, ձայնավորով սկսվող առարկաների անվանումների, ըստ մարդու ստեղծած առարկաների և բնության երևույթների, և այլն:

## ԳՐԱԳԱՐԱԿ

**ԾԻԱԾԱՆ** *(սուտասելուկ)*

Կաթիլ ու շող միացան,
Դարձան գունեղ մի կածան,
Մարդիկ տեսան, հիացան,
Անվանեցին ծիածան:
Այդպիսի մի ծիածան
Տեսա երեկ ես անձամբ:
«Զարմանալի ի՞նչ կա որ»,–
Ինձ հարց տվեց մի որոր:
Զարմանալին այն է, որ
Իմ տեսածը, ա՛յ որոր,
Մինչև գիշեր լողում էր,
Մութ երկնքում շողում էր:

**ԾՈՎԸ ՈՒ ԾԻԱԾԱՆԸ**

Ծովը ծփում է ծուփ-ծուփ,
Ծիածան է ծնվում ծովից,
Ծիծաղում է ծովը ծուփ-ծուփ,
Ծաղիկներ են ծնվում ծովից:

5 Ի՞նչ առարկաների գույներով կներկես քո՛ ծիածանը:

6 Վերականգնի՛ր բառերը.

**այբմենպե, եչրեկենինինուքե, ծաինիայբծաայբնու:**

7 **Նարինջ, դեղձ, խնդրել, վերջացնել** բառերով հորինի՛ր մի փոքրիկ պատմություն:

Օրինակ:

– Խնդրում եմ, ինձ նարինջ տվեք:
– Ցավոք, նարինջը վերջացել է:
– Այդ դեպքում դե՛ղձ տվեք:

8 Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

Օիծաղում է ծովը ծուփ-ծուփ,
Օիաշան է ծնվում ծովից:

vachagan.am

9 Կարդա՛ հանելուկը և գուշակի՛ր պատասխանը:

Յոթ գույները միացան,
Դարձան սիրուն .....:

10 **ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

Բառերի մեջ մի-մի տառ փոխելով՝ **ջուր**-ից ստացի՛ր **լող**.

**ջուր – հու□ – □որ – լ□ր – լող:**

124

### 6.3.11. Ստեղծագործական բնույթի առաջադրանքներ

**Առաջադրանք 5**. Ի՞նչ առարկաների գույներով կներկես քո՛ ծիածանը: Կարելի է օգտագործել «Մտածի՛ր, զույգե՛ր կազմիր, մտքե՛ր փոխանակիր» հնարը:

Երեխաները կարող են ընտրել առարկաներ ըստ ծիածանի՝ իրենց սովորած գույների հերթագայության, և այդ առարկաներով «նկարել» իրենց ծիածանը: Օրինակ.

**կարմիր** – վարդ, կակաչ, խնձոր, ելակ, փետուր, թել, զատիկ, կեռաս, տերև

**նարնջագույն** – նարինջ, մանդարին, թուրինջ, վարդ, տերև, գնդակ

**դեղին** – արև, տերև, կեռաս, տանձ, վարդ, նարգիզ, ծիրան, կիտրոն, հասկ

**կանաչ** – խոտ, ձմերուկ, վարունգ, տերև, համեմ, սամիթ, կոտեմ, հազար

**երկնագույն** – ժապավեն, հիրիկ, փուչիկ, անմոռուկ, թել, ճարճատուկ

**կապույտ** – սալոր, հիրիկ, գրքի կազմ, թել, փուչիկ, գնդակ, զանգակ

**մանուշակագույն** – մանուշակ, եղրևանի, մամուխ, թել, ժապավեն, խաղող

**Առաջադրանք 6.** Վերականգնի՛ր բառերը.

**այբմենպե, եչրեկենինինուքե, ծաինիայբծաայբնու**

Տառանունների իմացության ամրապնդմանն է ուղղորդված այս առաջադրանքը:

Աշակերտները վերհիշում, գրքերից ընթերցում են տառանունները և համապատասխան տառերը գրելով, վերականգնում են բառերը.

**ամպ, երկինք, ծիածան**:

Ուսուցիչը կարող է նաև հանձնարարել աշակերտներին, որ նրանք կազմեն մի նախադասություն, որտեղ կօգտագործվի այդ երեք բառը միասին:

Օրինակ. **Անամպ երկնքում ծիածան կա:**

**Առաջադրանք 7**. **Նարինջ, դեղձ, խնդրել, վերջացնել** բառերով հորինի՛ր մի փոքրիկ պատմություն: Այս առաջադրանքի կատարումով աշակերտները մեկ անգամ ևս կրկնում են «Աչքի առաջ» խորագրի բառերի ուղղագրությունը: Այն կարելի է կազմակերպել որպես խմբային աշխատանք:

### 6.3.12. Աշխատանք շուտասելուկի շուրջ

**Առաջադրանք 8**. Շուտասելուկ

Երեխաները նախ շուտասելուկը կարդում են դանդաղ, այնուհետև փորձում են արտասանել արագ: Որոշ փորձերից հետո ուսուցիչը QR-կոդի միջոցով կարող է ցուցադրել տեսահոլովակը, որտեղ ասմունքողը այն ներկայացնում է նախ կարդալով, ապա արագ, իսկ վերջում՝ գերարագ: Երեխաները տեսնում, լսում են, թե ինչ մեծ արագությամբ է հնարավոր արտասանել շուտասելուկը: Դա զարմանք, ուրախություն ու զվարթություն է բերում նրանց:

**Առաջադրանք 9.** Հանելուկը, ինչպես բոլոր դասերին, այստեղ ևս նվիրված է դասանյութի հերոսին, տվյալ դեպքում՝ ծիածանին: Այս երկտող հանելուկով փորձարկվում է ոչ միայն երեխաների իմացածի գործնական կիրառումը, այլև ձևավորվում է հանգեր կազմելու, հանգը զգալու երեխաների ունակությունը:

**Առաջադրանք 10. Փոխակերպում**

Երեխաները արդեն ծանոթ են այս բառախաղին: Նրանք հեշտությամբ կստանան հետևյալ շղթան.

**Ջուր – հուր – հոր – լոր – լող:**

**11** Նկարներում պատկերված առարկաների գույների անուններով լրացրո՛ւ խաչբառը: Ո՞ր գույնը ծիածանի գույն չէ:










**12** Դու արդեն ծանոթ ես շատ պայմանանշանների: Այժմ ի՛նքդ հորինիր պայմանանշաններ սիրտ, արև, լուսին, աստղ, տուն առարկաների համար:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Եթե ուշադիր դիտես, բնության հետաքրքիր երևույթներ կբացահայտես:



**Առաջադրանք 11**. Նկարներում պատկերված առարկաների գույների անուններով լրացրո՛ւ խաչբառը: Ո՞ր գույնը ծիածանի գույն չէ:

Երեխաները տրված մրգերի ու ծաղիկների անուններով պետք է լրացնեն խաչբառի համապատասխան սյունակներն ու տողերը:

1. Ծիրան – դեղին
2. Անմոռուկ – երկնագույն
3. Նարինջ – նարնջագույն
4. Մանուշակ – մանուշակագույն
5. Տերև - կանաչ
6. Նուռ – կարմիր
7. Վարդ - վարդագույն
8. Սալոր – կապույտ

Երեխաները ընտրում են ծիածանի գույները և առանձնացնում **վարդագույնը,** որը ծիածանի գույն է, սակայն աչքով տեսանելի գույն չէ:

### 6.3.13. Աշխատանք տեքստի վերարտադրման շուրջ

Կարելի է կիրառել տեքստի վերարտադրման տարբեր տեսակներ.

- Ամբողջական կամ շարունակելով
- Ստեղծագործաբար
- Որևէ հերոսի անունից

**Օրինակ՝ տեքստը պատմում է Անմոռուկը:**

Մի օր աչիկներս բացել նայում էի Արև մայրիկին: Նրան խնդրեցի, որ ինձ նորից ասի իմ անունը ու այնպես անի, որ ես չմոռանամ: Արև մայրիկը ժպտաց ինձ, համբուրեց ու ասաց, որ ինձ երկնագույն կներկի ու իմ անունը Անմոռուկ կդնի: Իմ ուրախությանը չափ չկար: Ես անընդհատ կրկնում էի՝ Անմոռո՛ւկ, Անմոռո՛ւկ: Այնքան ասացի, որ մի գառնարած տղա լսեց իմ շշնջոցը ու բոլորին ասաց, որ իմ անունը Անմոռուկ է: Հիմա բոլոր մարդիկ ինձ Անմոռուկ են ասում: Նույնիսկ ինձ նվիրում են իրենց սիրելիներին, որ նրանք չմոռանան իրենց:

### 6.3.14. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ (անդրադարձ և ամփոփում)**

Ուսուցիչը դասի ավարտին աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացված նյութը և լրացնելու անավարտ նախադասությունների միտքը:

Ես բացահայտեցի...

Ես մտապահեցի...

Ես կարողացա...

Այնուհետև երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված միտքը:

**Եթե ուշադիր դիտես, բնության հետաքրքիր երևույթներ կբացահայտես:**

Ազատորեն ու անկաշկանդ արտահայտում են իրենց կարծիքները բնության իրենց իմացած երևույթների, նրանց միջև կապերի մասին:

## 6.4. ՍԱՌՑԻ ԲՅՈՒՐԵՂԸ, ԱՄՊԻ ՓԱԹԻԼՆ ՈՒ ԾՈՎԻ ԿԱԹԻԼԸ

### 6.4.1. Հանելուկների գուշակում

**Դասը կարելի է սկսել «Ըստ նկարների՝ գուշակենք հանելուկները»** մեթոդական հնարով: Ուսուցիչը նախապես դասարանի տարբեր անկյուններում փակցնում է հանելուկների պատասխան–նկարները՝ սառցի բյուրեղի, ամպի փաթիլի, ջրի կաթիլի: Աշակերտները կարդում են մուտքի պատուհանիկում գրված հանելուկները, այնուհետև գուշակած հանելուկի պատասխան–նկարները գտնում և փակցնում են գրատախտակին:

*Իջնում է նա հեզիկ-նազիկ,*
*Թևիկներն են աղվամազիկ,*
*Սառն է, թեթև,*
*Ունի վեց թև:* (փաթիլ)

*Ձմռան ցրտին բաց եմ լինում,*
*Ձյունը գնաց՝ լաց եմ լինում:* (սառույց)

*Կաթ-կաթ կաթում եմ,*
*Ներքև ընկնում՝ պայթում եմ,*
*Ընկած տեղս մաքրում եմ:* (կաթիլ)

**ԾՈՎԻ ԿԱԾԱՆԸ**

Այծը նստած ծիածանին՝
Հասավ ծովի կածանին,
Բայց ի՞նչ կածան, ծիածան էր,
Այծն էլ ջրե մի արձան էր:
Ծածանն այսպես զարմացած՝
Ծիածանով իջավ ցած:

**ԽՆԴՈՒԿ**

Դասարանում զրուցում են անձրևի մասին: Ուսուցչուհին ասում է, որ գրատետրում պատկերված ամպից կաթիլները պետք է ուղիղ իջեցնեն ծաղիկներին:

Աշակերտներից մեկը թեք է քաշում գծերը:

Ուսուցչուհին հարցնում է.

– Ինչո՞ւ ես թեք քաշում գծերը:

– Մեր գեղումը անձրևը ծուռտիկ ա գալի:

Այս դասին դու.

• Կխմբավորես առարկաներն ըստ նշանակության:

• Կգուշակես հանելուկները և կճանաչես բանաստեղծության հերոսներին:

• Կկարողանաս ջրից սառույց, սառույցից գոլորշի ստանալ:

• Կբացահայտես, թե որքան բազմազան ու զարմանահրաշ է քեզ շրջապատող աշխարհը:

## ՍԱՌՈՒՅՑԻ ԲՅՈՒՐԵՂԸ, ԱՄՊԻ ՓԱԹԻԼՆ ՈՒ ՇՈՎԻ ԿԱԹԻԼԸ

Վաչագան Ա. Սարգսյան

**Թե կռահես հանելուկների պատասխանները, կիմանաս բանաստեղծության հերոսների անունները:**

**Իջնում է նա հեզիկ-նազիկ,**
**Թևիկներն են աղվամազիկ,**
**Սառն է, թեթև,**
**Ունի վեց թև:**

**Կաթ-կաթ կաթում եմ,**
**Ներքև ընկնում՝ պայթում եմ,**
**Ընկած տեղս մաքրում եմ:**

**Ձմռան ցրտին բաց եմ լինում,**
**Ձյունը գնաց՝ լաց եմ լինում:**

– Հեռախոսի մոտ Ամպի Փաթի՞լն է:
– Այո՛, լսո՛ւմ եմ, ո՞վ է հարցնում:
– Քեզ զանգ տվողը Ցովի Կաթիլն է,
Քեզ հյուր են կանչում, ի՞նչ կա բարձրում:

– Ամեն բան լավ է, կգամ անպայման:
– Դե որ այդպես է, զանգեմ Սառույցին,
Երեքով նստենք, խոսենք սրտաբաց,
Խանգարող չկա մեր լավ զրույցին:

Նրանք չգիտե՞ն, թե՞ չեն կասկածում,
Որ իրենք նույնն են, տարբեր են թեև,
Ձևեր են փոխում միայն արտաքուստ*,
Ներքևում լինեն, թե գնան վերև:

Ամպից բացի էլ ով կարող է ականջ դնել Կաթիլի և Փաթիլի խոսակցությանը:

* **Արտաքուստ** – դրսից, դրսի կողմից:



### 6.4.2. Աշխատանք դասանյութի գլխագրի և մուտքի պատուհանիկի շուրջ

***Մինչ տեքստի ընթերցումը*** ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները կարդան դասի գլխագիրը և ազատորեն արտահայտեն իրենց կարծիքը:

Այնուհետև կազմեն մեկ նախադասություն իրենց գուշակած՝ **փաթիլ, սառույց, կաթիլ** բառերով:

Ուսուցիչը լսում է երեխաների կազմած նախադասությունները, ապա հանձնարարում է դրանք համեմատել մուտքի պատուհանիկում գրվածի հետ՝ **«Մի օր ձյան Փաթիլը՝ նստած Սառցաբյուրեղի վրա, լողում էր Կաթիլի ջրաշխարհով: Երևի հյո՞ւր էր եկել»:**

Աշակերտներն ուսուցչի հրահանգով լուռ, դանդաղ և ուշադիր կարդում են բանաստեղծությունը:

### 6.4.3. Տեքստի նախնական ընկալումը պարզելու նպատակով տրվող հարցեր

5. Ինչի՞ց հասկացանք, որ սա բանաստեղծություն է: (Ունի կարճ, իրար հավասար տողեր, վերջին բառերը իրար նման են հնչում, բոլոր տողերում վանկերի քանակները նույնն են)

6. Ովքե՞ր էին բանաստեղծության հերոսները: (Սառույցի բյուրեղը, Ձյան փաթիլը և Ջրի կաթիլը)

7. Ո՞ւմ էր զանգել Ծովի կաթիլը: (Ձյան փաթիլին)

### 6.4.4. Տեքստի բարձրաձայն ընթերցանություն՝ բառաբացատրական աշխատանքով

Բանաստեղծությունը կարդում են բարձրաձայն, կատարվում են մեկնաբանություններ և բառաբացատրական աշխատանք:

*Սրտաբաց* – 1. սիրտը բաց, ջերմ, մտերմիկ վերաբերմունք ունեցող, 2. զվարթացնող, անկեղծ, պարզ:

*Արտաքուստ* - 1. դրսից, դրսի կողմից, 2. արտաքին տպավորությամբ, արտաքին տեսքից դատելով:

### 6.4.5. Աշխատանք նկարի և նկարատակի գրառման շուրջ

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է նկարի և նկարատակի գրության վրա: Նկարում Ամպի Փաթիլը հեռախոսով զրուցում է Ծովի Կաթիլի հետ: Նրանց խոսակցությանը կարող են ականջ դնել ամպերը, ծովի ալիքները, ձկները, ծովում ապրող այլ կենդանիներ, քամին, և այլն:

### 6.4.6. Զրույց տեքստի բովանդակության շուրջ

1. Ովքե՞ր էին զրուցում հեռախոսով: (Ծովի Կաթիլն ու Ամպի Փաթիլը)

2. Ինչի՞ մասին էին զրուցում: (Պայմանավորվում էին հանդիպել, զրուցել)

3. Ո՞ւմ էր պատրաստվում զանգելու Ծովի կաթիլը: (Սառցի Բյուրեղին)

4. Եթե նրանք երեքով հանդիպեն, ապա ինչի՞ մասին սրտաբաց կզրուցեն: (Օրինակ, կզրուցեն, որ իրենք բոլորն էլ Ծովի զավակներն են, թեև առանձին են ապրում, որ իրենք հաճախ են իրար հյուր գնում)

5. Ինչո՞վ էին նման բանաստեղծության հերոսները, իսկ ինչո՞վ՝ տարբեր: (Նրանք նման են, որովհետև բոլորն էլ ջուր են, տարբեր են արտաքուստ)

6. Ինչո՞ւ համաձայնեց հյուր գնալ կաթիլը: (Օրինակ, համաձայնեց հյուր գնալու, որովհետև հարևաններ են)

7. Ե՞րբ հյուր կգա ամպի փաթիլը: (Օրինակ՝ երբ շատ մրսի և ուզենա զրուցել իր ընկերների հետ)

8. Ի՞նչը կարող է խանգարել նրանց զրույցին: (Օրինակ՝ քամին, ծովի կատաղի ալիքները)

9. Կարդա՛ բանաստեղծության վերջին քառատողը: Ի՞նչ ես կարծում՝ իսկ գուցե Սառցաբյուրեղը, Փաթիլը և Կաթիլը գիտեի՞ն, որ իրենք նույնն են: (Օրինակ՝ եթե իմանային, որ նույնն են, ապա իրար հյուր չէին գնա. մարդն ինքն իրեն հյուր չի գնա: Եթե իմանային, որ տարբեր են, ապա ինչպե՞ս է, որ երբ իրար հյուր են գնում, դառնում են նույնը՝ կաթիլը դառնում է փաթիլ, փաթիլը դառնում է կաթիլ, կաթիլը դառնում է բյուրեղ)

- **Տեքստի ընթերցումից հետո** կարելի է բանաստեղծությունը ներկայացնել դերային խաղով:

### 6.4.7. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

Կարելի է «Աչքի առաջ» խորագրի բառերը գրել գրատախտակին՝ բաց թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝

**բար-ր, ներ-և, բ-ուրեղ**

Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը բառատետրում և կազմում բառակապակցություններ:

**Բարձր- բարձր սար, բարձր կանչել**

**Ներքև- ներքև նայել, ներքև իջնել**

**Բյուրեղ- թափանցիկ բյուրեղ, սառցի բյուրեղ**

Այն ինչն է, ինչը.
Հուրը գցես՝ չի վառվի,
Ջուրը գցես՝ չի սուզվի,
Բռնես՝ ափերդ կայրի,
Այտդ հպես՝ կսառչի:
*(սառույց)*

**ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ**

Առանց թևի թռչում են,
Երկինք-գետին թրջում են,
Նրանց մոտից թե նայես,
Մարդիկ կարծես մրջյուն են:
*(ամպեր)*

Գալիս է հուշիկ,
Դառնում են կարմիր
Ականջ ու թուշիկ,
Մեծը մրսում է,
Փոքրը դրսում է:
*(ձյուն)*

## Հարցեր

**1.** Ովքե՞ր էին զրուցում հեռախոսով:

**2.** Ի՞նչ էին պայմանավորվում զրուցակիցները:

**3.** Ո՞վ կարող էր խանգարել նրանց զրույցը:

**4.** Ինչպե՞ս ես հասկանում «Ձևեր են փոխում միայն արտաքուստ» միտքը: Հիմնավորի՛ր:

**ԱՇՔԻ ԱՌԱՋ**

*բարշր*
*ներքև*
*բյուրեղ*

## Առաջադրանքներ

**1** **ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

Հիշո՞ւմ ես, թե ինչպես **ջուր**-ից ստացար **կաթ**: Հիմա **ջուր**-ից ստացի՛ր **ծով**.

**ջուր – հու□ – հ□ր – հո□ – ծով**:

**2** **Սովորենք մի դարձվածք**

**ՄԱՂՈՎ ՋՈՒՐ ԿՐԵԼ**
Անօգուտ, անիմաստ գործ անել:

Բացատրի՛ր, թե ինչու է նկարիչը դարձվածքը ներկայացրել շախմատի խաղով:

**3** Մտածի՛ր, թե ինչպես կարելի է մաղով ջուր կրել:

**4** Ենթադրենք՝ դու Կաթիլն ես, իսկ ընկերդ՝ Փաթիլը: Ի՞նչ հարցեր կտաս նրան: Համեմատի՛ր ընկերոջդ տված հարցերի հետ:



### 6.4.8. Աշխատանք լեզվական առաջադրանքների շուրջ

**Առաջադրանք 1.** ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Բառերի մեջ մի-մի տառ փոխելով՝ **ջուր**-ից ստացիր **ծով**:

**Ջուր- հուր-հոր-հով-ծով**

Այս աշխատանքը կարելի է կազմակերպել որպես զույգային աշխատանք՝ միջանձնային հարաբերությունները զարգացնելու նպատակով:

Կարելի է երեխաներին առաջարկել, որ նրանք գտնեն **ջուր**-ից **ծով** ստանալու այլ ճանապարհներ:

### 6.4.9. Դարձվածք՝ «Մաղով ջուր կրել»

**Առաջադրանք 2.** Սովորենք մեկ դարձվածք՝ ՄԱՂՈՎ ՋՈՒՐ ԿՐԵԼ:

Նախ կարելի է երեխաներին առաջարկել, որ նրանք նկարում գտնեն մաղը, այնուհետև փորձեն բացատրել, թե ինչ է մաղը: Վերջում բացատրել, որ մաղը մի աշխատանքային գործիք է, որի մեջ լցնում են զանազան բույսերի հատիկներ, ալյուր և այլն: Այնուհետև շարժում են մաղը և նրա ծակոտկեն հատակից օգտակար հատիկները, ալյուրը թափվում են ներքև՝ մաքրվելով մաղի մեջ մնացած անպետք բաներից: Սա էլ անվանում են մաղել:

Այնուհետև կարելի է հարցնել՝ ի՞նչ կլինի, եթե մաղի մեջ ջուր լցնենք: Երեխաները կարող են տարբեր պատասխաններ տալ: Վերջում գալիս են այն եզրակացության, որ ջուրը չի մնա մաղի մեջ: Դրանից հետո կարելի է հարցնել, թե ինչ է նշանակում **մաղով ջուր կրել** արտահայտությունը, դարձվածքը: Երեխաները դարձյալ տարբեր պատասխաններ կարող են տալ: Ընդհանրացնելով պետք է բացատրել, որ մաղով ջուր կրել հնարավոր չէ. չէ՞ որ ջուրը չի մնա մաղի մեջ: Այսինքն՝ անօգուտ գործ է, անիմաստ գործ: Նկարում երկուսը շախմատ են խաղացել և շախմատի տախտակին մնացել են միայն արքաները: Խաղը շարունակելն անօգուտ է և անիմաստ, իսկ խաղացողները շարունակում են մտածել ու խաղում են:

**Առաջադրանք 3**. Մտածի՛ր, թե ինչպես կարելի է մաղով ջուր կրել:

Այս առաջադրանքը ինչ-որ չափով «սադրանք» պարունակող առաջադրանք է. Չէ՞ որ երեխաները հենց նոր սովորեցին, որ հնարավոր չէ մաղով ջուր կրել: Եթե երեխաները դժվարանան պատասխանել, ուսուցիչը պետք է երեխաների ուշադրությունն ուղղորդի դասին: Նրանք սովորեցին, որ ջուրը կարող է լինել նաև պինդ՝ սառույցի տեսքով: Արդեն երեխաները հեշտությամբ կարող են գտնել առաջադրանքի պատասխանը. ***ջուրը սառույց դարձնելով***:

**Առաջադրանք 4**. Ենթադրենք՝ դու Կաթիլն ես, իսկ ընկերդ՝ Փաթիլը: Ի՞նչ հարցեր կտաս նրան: Երեխաների մեջ հարցեր տալու ունակությունների ձևավորմանն է նպատակաուղղված առաջադրանքը:

Հարցերի օրինակներ.

- Փաթի՞լ, դո՞ւ ես:
- Ի՞նչ ես անում մեր բակում:
- Այսո՞ր պիտի գայիր:
- Հիշո՞ւմ ես՝ անցած անգամ ինչքան խաղացինք:

- Մենա՞կ ես եկել, թե՞ ընկերներով եք:
- Նստե՞նք ծառի ճյուղին, օրորվենք:
- Գիշերը մնալո՞ւ ես:
- Թե՞ դառնալու ես ինձ նման կաթիլ:

**5** ○ Ինչո՞վ են նման և ինչո՞վ՝ տարբեր պատկերված առարկաները:



✧ Արտաքուստ իրար նման, բայց իրարից բոլորովին տարբեր առարկաներից խմբե՛ր կազմիր և գրի՛ր:

մատիտ

օղակ

շվի

օղաբլիթ

խողովակ

փրկօղակ

✲ Խմբավորի՛ր արտաքուստ իրարից շատ տարբեր, բայց իրականում նույն առարկաները:

**Առաջադրանք 5**. Սա «Դեպի վեր» առաջադրանք է, որը պարունակում է բարդության տարբեր աստիճաններ՝ պարզ, միջին բարդությամբ և բարդ: Առաջադրանքը նախատեսված է տարբեր կարողությունների տեր աշակերտների համար: Ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ աշակերտները հնարավորության դեպքում կարողանան աստիճանաբար կատարել դրանք:

○ Գտնելու են պատկերված առարկաների նմանություններն ու տարբերությունները: (Առաջին նկարում պատկերված է երկու ծաղիկ՝ կակաչ և մանուշակ: Նրանք նման են, որովհետև երկուսն էլ ծաղիկ են, բուսնում են գարնանը, ունեն տերևներ, ցողուն, ծաղկաթերթիկներ: Տարբեր են, որովհետև ունեն տարբեր անուններ, կակաչի թերթիկները կարմիր են, մանուշակինը՝ մանուշակագույն, կակաչի տերևները այլ ձև ունեն, մանուշակինը՝ այլ, կակաչի ցողունը ավելի հաստ է մանուշակի ցողունից, կակաչը ավելի բարձր է մանուշակից, կակաչը շատ հոտավետ չէ, մանուշակը հոտավետ է, և այլն:

Երկրորդ նկարում պատկերված է երկու շիշ: Դրանք նման են իրար, որովհետև երկուսն էլ շիշ են՝ զանազան հեղուկներ պահելու համար են, երկուսն էլ ապակուց են, երկուսն էլ ունեն բերան ու կափարիչ: Դրանք իրարից տարբեր են, որովհետև ունեն տարբեր գույներ, մեկը երկար է, մյուսը՝ կարճ, մեկը կլոր իրան ունի, մյուսը՝ տափակ, մեկի բերանը մեծ է, մյուսինը՝ փոքր, մեկի բերանը կափարիչով է փակվում, մյուսինը՝ խցանով, և այլն:

Երրորդ նկարում պատկերված է երկու արդուկ: Դրանք նման են, որովհետև երկուսն էլ արդուկ են, երկուսով էլ հագուստ, կտորեղեն են արդուկում, երկուսն էլ ունեն բռնակ, երկուսի հատակն էլ հարթ է և այլն: Տարբեր են, որովհետև մեկը հին է, մյուսը՝ նոր, հին արդուկը տաքացվում էր շիկացած ածխով, նորը՝ էլեկտրական հոսանքով, հինը ավելի ծանր էր, նորը ավելի թեթև է ու ավելի գեղեցիկ և այլն:)

Կարող են կատարել նախ բանավոր, ապա՝ գրավոր:

✧ Առանձնացնելու են խմբերով արտաքուստ իրար նման, բայց իրարից բոլորովին տարբեր առարկաները: Առաջադրանքը նույնպես կարելի է կատարել նախ բանավոր, ապա՝ գրավոր: Խմբավորելու են արտաքուստ իրար նման, բայց իրարից բոլորովին տարբեր առարկաներ:

Խմբեր կարելի է կազմել ըստ արտաքին հատկանիշների. մանրացված, աղացած՝ **շաքարավազ, սոդա, աղ, ալյուր,** կլոր՝ **փրկօղակ, օղակ, օղաբլիթ,** երկարավուն՝ **մատիտ, խողովակ, սրինգ**:

✵ Խմբավորելու են արտաքուստ իրարից խիստ տարբեր, բայց իրականում նույն առարկաները: Առաջին խմբում կլինեն **ջուրը, գոլորշին և սառույցը**: Երկրորդ խմբում՝ **լավաշը** և **մատնաքաշը**: Երրորդ խմբում՝ հին ու նոր **հեռախոսները**:

Մարդիկ էլ իրարից կարող են արտաքինով տարբեր լինել՝ լինել սպիտակ, լինել սև, լինել դեղին: Սակայն, միևնույն է, նրանք բոլորն էլ մարդ են, և նրանց բոլորի արյունը կարմիր է:

6 **Ջուր** բառի առաջին տառը փոխելով՝ ստացի՛ր նոր բառեր:
Օրինակ՝ **ջուր** – **դուր**:

7 «Աչքի առաջ» խորագրի բառերով և **նետել, նայել, ձայն, սար, թափանցիկ, պարիսպ, փայլփլուն** բառերով կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր:
Օրինակ՝ **թափանցիկ բյուրեղ**:

8 Փորձի՛ր ինքդ:

Ջրից սառույց, սառույցից՝ գոլորշի ստանալու քայլաշար

- Ջուրը լցնել սառցամանի մեջ և սառեցնել:
- Սառույցի հատիկները լցնել թեյամանի մեջ:
- Տաքացնել մինչև գոլորշու դուրս գալը:

Ուշադրությո՛ւն. փորձը կատարել ծնողների մասնակցությամբ:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Աշխարհը փոփոխվում ու զարգանում է իր օրենքներով: Բացահայտելով այդ օրենքները՝ դու ավելի լավ կճանաչես աշխարհը և ինքդ քեզ:
Աշխարհը բացահայտողներից մեկն էլ դու ես:

129

**Առաջադրանք 6**. Ջուր բառի առաջին տառը փոխելով՝ ստացի՛ր նոր բառեր:

Կարելի է հանձնարարել որպես խմբային աշխատանք: Խմբերը կմրցեն միմյանց հետ իրենց կազմած բառերի քանակով:

Ջուր բառի առաջին տառը փոխելով՝ կստանանք հետևյալ բառերը.

**ջուր, դուր, զուր, թուր, լուր, հուր, մուր, սուր, տուր:**

### 6.4.10. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

**Առաջադրանք 7**. Երեխաները պետք է «Աչքի առաջ» խորագրի բառերով և տրված բառերով կազմեն բառակապակցություններ և գրեն:

Այս աշխատանքը կարելի է կազմակերպել որպես խմբային աշխատանք: Ստեղծվում է 3 խումբ: Յուրաքանչյուր խմբին ուսուցիչը տալիս է «Աչքի առաջ» խորագրի բառերից մեկը՝ **բարձր, ներքև, բյուրեղ**: Խմբերը պետք է կազմեն համապատասխան բառակապակցություններ և գրեն:

Օրինակ, **բյուրեղ** բառով՝ **թափանցիկ բյուրեղ, փայլփլուն բյուրեղ, սառույցի բյուրեղ, փոքրիկ բյուրեղ:**

**Ներքև** բառով՝ **նայել, ներքև գլորվել, ներքև իջնել, ներքև սահել:**

**Բարձր** բառով՝ **բարձր շենք, բարձր ձայն, բարձր սար, բարձր պարիսպ:**

### 6.4.11. Հետազոտական-փորձարարական աշխատանք

**Առաջադրանք 8**. Ուսուցիչը հանձնարարում է տանը փորձել «Ջրից՝ սառույց, սառույցից՝ գոլորշի ստանալու քայլաշարը» և զգուշացնում՝ փորձը կատարել ծնողների մասնակցությամբ:

### 6.4.12. Աշխատանք «Եղել է, դարձել է» խաղի շուրջ

**Անդրադարձ և ամփոփում**

Ամփոփելիս կարող են խաղալ ***«Եղել է, դարձել է»*** խաղը:

_____ ջուր _____ (փաթիլ, սառույց, գոլորշի)

_____ալյուր _____ (խմոր, հաց, թխվածք)

_____ բուրդ _____ (գուլպա, գլխարկ, ձեռնոց)

_____ ծառ _____ (աթոռ, թուղթ, պահարան)

Օրինակ: Եղել է ջուր, դարձել է սառույց, փաթիլ, գոլորշի:

Դասի ավարտին կարելի է երեխաներին առաջարկել, որ նրանք նոր վերնագիր դնեն բանաստեղծությանը:

### 6.4.13. Աշխատանք «Դասից քաղած իմ պտուղները» խորագրի շուրջ

Ես իմացա...

Ես կարողացա...

Ես բացահայտեցի...

Ես համոզվեցի...

Ուսուցիչը դասի ավարտին աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացված նյութը և լրացնելու անավարտ նախադասությունների միտքը:

Երեխաները վերջում կարդում են ամփոփման պատուհանիկի գրառումը, արտահայտում իրենց կարծիքը: Ուսուցիչը կազմակերպում է փոքրիկ քննարկում:

### 6.4.14. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» շուրջ

*Աշխարհը փոփոխվում ու զարգանում է իր օրենքներով, բացահայտելով այդ օրենքները՝ ավելի լավ կճանաչես աշխարհը և ինքդ քեզ:*

*Աշխարհը բացահայտողներից մեկն էլ դու ես:*

## 6.5. ԱՍՏՂԵՐ

### 6.5.1. Հանելուկի գուշակում

Դասի առաջին իսկ րոպեից երեխաների ուշադրությունը գրավելու և դասի արդյունավետ ընթացքի համար ուսուցիչը երեխաներին կարող է առաջարկել մի հանելուկ: Հանելուկը կարող է գրված լինել գրատախտակին, կամ փակցված առանձին թղթի վրա, կամ էլ երևա էլեկտրոնային գրատախտակին:

**Երբ ցերեկ է,**
**Աչքը մեկ է,**
**Եկավ գիշեր՝**
**Աչքեր ունի**
**Հազար ու մի:**

Երեխաները կարող են բազմաթիվ պատասխաններ տալ: Պետք է լսել բոլոր պատասխանները և դրանց հիմնավորումները: Եթե դժվարանան, անհրաժեշտ է ուղղորդել փոքրիկ հուշումներով: Ի վերջո երեխաները գուշակում են հանելուկի պատասխանը՝ **երկինք**: Ինչպես նաև ասում են, թե որոնք են գիշերային երկնքի հազար ու մի աչքերը՝ **աստղերը**:

### 6.5.2. Աշխատանք դասի գլխագրի և վերնագրի շուրջ

**Աստղեր** բառը գուշակելուց հետո ուսուցիչը առաջարկում է բացել դասագրքերն ու կարդալ նոր դասի գլխագիրն ու վերնագիրը:

Այս դասին դու.

• Կառանձնացնես տրված բառերի ընդհանուր մասը:

• Կիմանաս հետաքրքիր տեղեկություններ աստղերի մասին:

• Կպարզես, թե որքանով ես դու երազկոտ:

• Քո նկարած աստղանավով կթռչես դեպի աստղերը:

## ԱՍՏՂԵՐ

Վաչագան Ա. Սարգսյան

**Երբ նայում ես աստղերին, ի՞նչ ես մտածում:**



– Ո՞վ է ապրում մեզնից վերև,– հարցրեց Գոռը:
– Սահակենք,– պատասխանեց Ծովինարը:
– Իսկ Սահակենցից վերև՞ ինչ կա:
– Նրանցից վերև արդեն շենքի տանիքն է:
– Իսկ տանիքից վերև՞:
– Օդում թռչող ծիտիկները:
– Իսկ ծիտիկներից վերև՞:
– Ամպերը:
– Ամպերից վերև՞:
– Արևը:
– Արևից այն կո՞ղմ:
– Աստղերը:
– Աստղերն ի՞նչ են:
– Հեռո՜ւ, հեռու արեգակներ են, այնքան հեռու, որ շատ փոքր ու աղոտ* են երևում, թեև աստղերից շատերն Արևից էլ մեծ են:
– Մենք կարո՞ղ ենք հասնել աստղերին:
– Եթե նստենք այսօրվա ամենաարագ սլացող աստղանավը* և գնա՜նք, գնա՜նք մինչև տատիկ ու պապիկ դառնալը, դարձյալ չենք հասնի նրանց:
– Իսկ կարո՞ղ ենք հաշվել, թե քանի աստղ կա երկնքում:

* Աղոտ – թույլ, նվազ:
* Աստղանավ –





Աշակերտները կարդում են գլխագրի կետերը, արտահայտում իրենց կարծիքը:

Առաջին կետում գրված է, որ իրենք կառանձնացնեն տրված բառերի ընդհանուր մասը: Երեխաները կարող են մի քանի դատողություն անել, թե ինչ է նշանակում դա:

Ուսուցիչը ընդհանրացնելով կասի, որ այդ մասին առավել մանրամասն կխոսեն դասի ընթացքում:

Երկրորդ կետի վերաբերյալ երեխաները ազատորեն կարող են ներկայացնել իրենց իմացածը: Ուսուցիչը լսում է բոլոր արտահայտվել ցանկացողների ասածները և ասում, որ նրանք իրենց իմացածը կլրացնեն դասի ընթացքում:

Երրորդ և չորրորդ կետերը թեթևակի «սադրանք» են պարունակում:

Պարզվում է, որ ըստ երրորդ կետի երեխաները կարող են պարզել, թե իրենք որքանով են երազկոտ: Սա, իհարկե, հետաքրքրություն կարող է առաջացնել երեխաների մեջ: Նրանք կցանկանան բոպե առաջ տեսնել, թե դա ինչպես է որոշվելու:

Վերջին՝ չորրորդ կետը ավելի բուռն հետաքրքրություն կառաջացնի երեխաների մեջ և բազմաթիվ կարծիքներ կարող են հնչել դրա վերաբերյալ:

### 6.5.3. Աշխատանք «Մուտքի պատուհանիկի» շուրջ

Ուսուցիչը կարդում է մուտքի պատուհանիկում գրված նախադասությունը:

**Երբ նայում ես աստղերին, ի՞նչ ես մտածում:**

Երեխաներին առաջարկում է փակել աչքերը և պատկերացնել, որ գիշեր է, որ նրանք նայում են աստղազարդ երկնքին: Այնուհետև հարցնում է, թե երեխաները ինչ մտածեցին, ինչ երևակայեցին:

Աշակերտների պատասխանները լսելուց, քննարկելուց հետո, հանձնարարում է լուռ ընթերցել դասանյութը, գծամատիտով նշել անծանոթ բառերը:

Այնուհետև ուսուցիչը աշակերներից մեկին հանձնարարում է, որ նա կարդա Գոռի խոսքերը, մյուսին՝ հեղինակի: Իսկ Ծովինարի խոսքերը կարդում է ինքը:

### 6.5.4. Բառային աշխատանք

Ուսուցիչը սովորաբար նախապես առանձնացնում է դասանյութի ենթադրելի անծանոթ բառերը, սակայն դիմում է նաև աշակերտներին՝ նրանց համար անծանոթ բառերը վեր հանելու և անծանոթ բառերի շարքը համալրելու համար:

Անծանոթ բառերի բացատրությունը կարելի է կատարել տարբեր արդյունավետ եղանակներով:

Գրատախտակին դուրս են գրում իրենց ընդգծած անհասկանալի բառերը: Ուսուցչի օգնությամբ կատարում են բառաբացատրական աշխատանք.

**աղոտ** - թույլ, նվազ

**աստղանավ** - դեպի աստղերը գնացող տիեզերանավ

**պլանալ** – արագ ընթանալ:

Դուրս են գրում նաև ուղղագրական արժեք ունեցող **վերև, օդ, արև, այսօր, թեև** բառերը:

Բառատետրում գրում են «Աչքի առաջ» խորագրի բառերը՝ **ամենաարագ, ուղղել**:

– Դա հաշվում են աստղադիտարանում:
– Աստղադիտարանն ի՞նչ է:
– Մի շենք է, որի մեջ աստղադիտակ կա:
– Աստղադիտակն ի՞նչ է:
– Հատուկ հեռադիտակ է, որով նայելիս աստղերը շատ մոտ են երևում:
– Հայաստանում կա՞ աստղադիտարան:
– Այո, գտնվում է Արագածի լանջին, Բյուրական գյուղում: Հիմնադրել է հայ մեծ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:
– Ի՞նչ են անում աստղադիտարանում:
– Դիտում են աստղերը, որոշում նրանց ջերմաստիճանը: Հաշվում են, թե երբ են ծնվել նրանք: Անուններ են դնում նրանց: Այսօր հնարավոր է նաև հեռախոսը գիշերով ուղղել որևէ աստղի վրա և իմանալ հետաքրքիր տեղեկություններ այդ աստղի մասին:
– Իսկ աստղադիտարանի գիտնականները գիտե՞ն, թե ինչպես հասնել աստղերին:
– Նրանք էլ դեռ չգիտեն: Այնպես որ՝ լա՛վ սովորիր, մեծացի՛ր. գուցե դո՛ւ պարզես, թե ինչպես հասնենք աստղերին...



**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*ամենաարագ, ուղղել*

## Հարցեր

1. Թվի՛ր, թե ինչ կա ամպերից վերև:
2. Ինչո՞ւ են աստղերը փոքր երևում:
3. Որտե՞ղ է մեր աստղադիտարանը:
4. Ի՞նչ են անում գիտնականներն աստղադիտարանում:
5. Ինչպե՞ս կարող են աստղերն օգնել մեզ:



### Գիտե՞ս, որ...

Արեգակը նույնպես աստղ է: Իսկ Երկիրը, որի վրա մենք ապրում ենք, Արեգակի մոլորակն* է: Մյուս 7 մոլորակների նման Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը: Մի պտույտը տևում է մեկ տարի:

Գիտնականները փորձում են իմանալ՝ արդյոք կա՞ն ուրիշ մոլորակներ, որոնց վրա նույնպես կյանք կա:

* **Մոլորակ** – Արեգակի շուրջը պտտվող երկնային մարմին, օրինակ՝ մեր Երկիրը:



### 6.5.5. Հարցեր դասանյութի ընկալումը բացահայտելու վերաբերյալ

Բառային աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը հարցեր է ուղղում աշակերտներին, որպեսզի պարզի, թե երեխաներն ինչպես են ընկալել դասանյութը:

-Թվեք՝ ի՞նչ կա ամպերից վերև: (Արև, աստղեր)

- Ինչո՞ւ են աստղերը փոքր երևում: (Աստղերը շատ հեռու են գտնվում)

-Որտե՞ղ է մեր աստղադիտարանը: (Մեր աստղադիտարանը գտնվում է Բյուրականում)

-Ի՞նչ են անում գիտնականներն աստղադիտարանում: (Աստղադիտարանում գիտնականները դիտում են աստղերը և որոշում են նրանց ջերմաստիճանը, հաշվում են, թե երբ են ծնվել, անուններ են տալիս նրանց)

-Ինչպե՞ս կարող են աստղերն օգնել մեզ: (Եթե մոլորվես, աստղերը կարող են քեզ ճանապարհը ցույց տալ: Աստղերը գիշերը լուսավորում են երկինքը)

### 6.5.6. Աշխատանք «Գիտե՞ս, որ...» խորագրի շուրջ

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է «Գիտե՞ս, որ...» խորագրի նյութին: Երեխաները կարդում են նյութը, արտահայտում իրենց կարծիքը: Ուսուցիչը կազմակերպում է քննարկում կարդացած նյութի վերաբերյալ:

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**ԵՐԿՆՔԻ ԲՈԼՈՐ ԱՍՏՂԵՐԸ ՃԱՆԱՉՈՒՄ ԷԻՆ ՆՐԱՆ**

Հին-հին օրերից մինչև այսօր հայ ժողովուրդը շատ նշանավոր մարդիկ է ծնել, որոնք զարմացրել ու հիացրել են ամբողջ աշխարհին: Այդպիսի մարդկանցից էր Վիկտոր Համբարձումյանը: Նա դեռևս հինգ տարեկանում ազատ խոսում էր հայերեն և ռուսերեն, գրում էր և կարդում:

1913 թվականին ընդամենը հինգ տարեկան Վիկտորը պետք է ընդունվեր գիմնազիա: Տնօրենը սկսեց հարցուփորձը.

– Ո՞րն է ամենամեծ թիվը:

– Ամենամեծ թիվ չկա: Ինչ թիվ էլ ասեք, ես նրան կգումարեմ 1 և կստանամ ավելի մեծ թիվ:

– Ինչի՞ վրա է հենված երկրագունդը և քանի՞ անգամ է մեծ արևից:

– Երկրագունդը ոչ մի բանի վրա էլ հենված չէ: Եվ արևն է երկրագնդից միլիոն անգամ մեծ: Նա մի հեռու աստղ է և այդ պատճառով էլ փոքր է երևում:

Շա՜տ ու շատ այլ հարցերի էլ պատասխանեց ապագա գիտնականը, և բոլորը հիացան նրա խելքով, երևակայությամբ, տրամաբանությամբ:

Նա հետագայում դարձավ աշխարհահռչակ աստղագետ, ապացուցեց, որ աստղերը ծնվում են նաև այսօր՝ մեր աչքի առջև, որ տիեզերքում տեղի են ունենում մեծ պայթյուններ, և աստղերը սփռվում են տիեզերքում, որ աստղերը տիեզերքում ապրում են առանձին խմբերով, ինչպես կղզիներն օվկիանոսում:

Նա հետագայում Արագած լեռան լանջերին պիտի կառուցեր Բյուրականի աստղադիտարանը և բացահայտեր աստղերի գաղտնիքները:

Մեծ աստղագետ Վիկտոր Համբարձումյանը մեծ հայ էր և մեծ հայրենասեր: Նա զարմացրեց ամբողջ աշխարհին: Ցույց տվեց, որ հայ մարդը կարող է դառնալ աշխարհի ամենամեծ գիտնականներից մեկը:

## Առաջադրանքներ

1 ○ Թվարկի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները:



✧ Բառերը գրի՛ր համապատասխան սյունակներում.

| Լուսատուներ | Փոխադրամիջոցներ | Աշխատանքային գործիքներ | Նվագարաններ |
|---|---|---|---|
| | | | |

☼ Ամենաարագ պացող առարկայի անունով կազմի՛ր մի նախադասություն:

2 Արտագրի՛ր բառերը: Ընդգծի՛ր ընդհանուր բառամասը.

**աստղիկ, աստղային, անաստղ, աստղով, աստղոտ, աստղավոր:**

3 **ԲԱՌ-ՔԱՄՈՑԻ**

**Աստղադիտարան** բառի տառերով կազմի՛ր նոր բառեր:

### 6.5.7. Աշխատանք լեզվական գիտելիքի շուրջ

**Առաջադրանք 1.** Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է նկարներին: Երեխաները թվարկում են նկարների անունները: Կարճ դիտարկումներ են անում, եթե ծանոթ նկարներ են, իսկ եթե ծանոթ չեն, ուսուցիչն է 1-2 նախադասությամբ

ներկայացնում նկարները: Այնուհետև այդ առարկաների անուններով լրացնում են այունակները:

| | | | |
|---|---|---|---|
| արև | ուղղաթիռ | մուրճ | դաշնամուր |
| աստղեր | աստղաթիռ | կացին | կիթառ |

Ամենաարագ սլացող առարկայի անունով (աստղանավ, տիեզերանավ, աստղաթիռ) կազմում են նախադասություն:

Օրինակ: Աստղաթիռը սլանում է տիեզերքով:

Աստղանավի անձնակազմը դիտում է երկինքը:

Տիեզերանավը մեծ էր, ընդարձակ:

**Առաջադրանք 2.** Երեխաները պետք է արտագրեն բառերն ու ընդգծեն ընդհանուր բառամասը՝ **աստղ**: Երեխաներին ուսուցիչը հիշեցնում է, որ գլխագրի մեջ նրանք կարդացել էին այդ մասին:

Այս առաջադրանքով, գործնական ճանապարհով նախապատրաստվում է **բառի արմատ** հասկացության ներմուծումը:

**Առաջադրանք 3.** Բառքամոցի խաղը երեխաները մեծ հետաքրքրությամբ և ոգևորությամբ են խաղում: Խաղը նպաստում է բառապաշարի հարստացմանը, զարգացնում է համակցային մտածողությունը, արագ կողմնորոշվելու, տառերի խմբերից բառեր կազմելու ունակությունը, մարզում և ճկուն է դարձնում միտքը:

### 6.5.8. «Բառքամոցի» խաղը

Ուսուցիչը կարող է դասարանը բաժանել խմբերի և մրցութային կարգով կազմակերպել բառախաղը: Կհաղթի այն խումբը, որը առավելագույն քանակով ճիշտ բառեր կկազմի:

**Աստղադիտարան** բառից հնարավոր է բազմաթիվ բառեր քամել, օրինակ.

| | | |
|---|---|---|
| աղ | դատարան | սանր |
| աղա | դար | սատար |
| աղանդ | դարան | սար |
| աղտ | դարս | սարդ |
| աստղ | դի | սղարան |
| ար | դիտարան | սիրտ |
| արա | իր | տաղ |
| արատ | իրան | տաղանդ |
| դաղ | դատ | տաղարան |
| դաս | նիստ | տատ |
| դասարան | սան | տղա |
| դատ | սանդ | |

4 Արտագրի՛ր նախադասությունները: **Ամենաարագ, դեռևս, ամենադանդաղ, ուղղեց, արդեն, ծռեց** բառաշարքից ընտրի՛ր և բաց թողած տեղերում գրի՛ր համապատասխան բառերը:

vachagan.am

- _____ **շարժվող կենդանին համրուկն է:**
- _____ **շարժվող կենդանին վագրակատուն է:**
- _____ **ձյուն չի եկել:**
- _____ **ձմեռ է:**
- **Աշակերտն** _____ **սխալը:**
- **Դարբինը** _____ **երկաթը:**

5 Նկարի՛ր մի աստղանավ, որի նավապետը դու ես և թռչում ես դեպի աստղերը:

6 ՇԱՐՈՒՆԱԿԻՐ

Ի՞նչը կարող է երկար լինել՝ **պարանը, ...**

Ի՞նչն է վերևում՝ **արևը, ...**

ԽՆԴՈՒԿ

– Մայրի՛կ, արևը ձեռքեր ունի՞:
– Ինչո՞ւ ես հարցնում, տղա՛ ջան:
– Տատիկն ասաց. «Արևի տակ շատ մի՛ խաղա. գլխիդ կխփի»:

7 • Բեմականացրեք խնդուկը:
• Մեկ նախադասությամբ գնահատի՛ր ընկերներիդ խաղը:

133

### 6.5.9. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

**Առաջադրանք 4.** Այս առաջադրանքով երեխաները գործնականորեն վերհիշում են «Աչքի առաջ» խորագրով տրվող բառերի ուղղագրությունը: Նրանք, լրացնելով նա-

խաղասություններում բաց թողած բառերը, նաև ձեռք են բերում ճանաչողական հետաքրքրաշարժ տեղեկություններ:

Նախադասությունները լրացնելուց հետո ստացվում է հետևյալ պատկերը.

*Ամենադանդաղ շարժվող կենդանին համրուկն է:*

*Ամենաարագ շարժվող կենդանին վագրակատուն է:*

*Դեռևս ձյուն չի եկել:*

*Արդեն ձմեռ է:*

*Աշակերտն ուղղեց սխալը:*

*Դարբինը ծռեց երկաթը:*

### 6.5.10. «Աչքի առաջ» առաջադրանքի էլեկտրոնային տարբերակի նկարագրությունը

Խաղացողը՝ պայմանում կապույտ գույնով տրված **ամենաարագ, դեռևս, ամենադանդաղ, ուղղեց, արդեն, ծռեց** բառերից որևէ մեկը բռնելով մկնիկով դնում է, իր կարծիքով, ճիշտ տողի վրա: Եթե ընտրությունը ճիշտ է, ապա աջ կողմում գրվում է՝ «Կեցցե՛ս, ճիշտ է» և երևում է համապատասխան լուսանկարը:

Եթե սխալ է, ապա լսվում է արգելող ձայնային ազդանշանը, և խաղը գալիս է ելակետային վիճակի:

Ճիշտ լրացնելուց հետո ստացվում են պահանջվող նախադասությունները:

### 6.5.11. Աշխատանք լեզվական գիտելիքի շուրջ

**Առաջադրանք 5.** Նկարի՛ր մի աստղանավ, որի նավապետը դու ես և թռչում ես դեպի աստղերը:

Առաջադրանքի կատարումը կնպաստի երեխաների երևակայությունն ու ստեղծագործական կարողությունները զարգացնելուն: Զվարթ մթնոլորտ ստեղծելու նպատակով կարելի է կազմակերպել «Լավագույն աստղանավ» մրցույթ: Երեխաների նկարած բոլոր աստղանավերն էլ խրախուսվում են: Դրանցով ճամփորդելը՝ նույնպես: Ընդհանուր կարծիքների հիման վրա ընտրվում են մեկը կամ երկուսը: Նկատի են առնվում «հարմարավետությունը», «երկարատև ճամփորդության համար նախատեսված հարմարությունները», կատարման «վարպետությունը» և այլն: Դրանցով ամբողջ դասարանով են մեկնում ճամփորդության: Ովքեր չեն ուզում, կարող են կողքից իրենց աստղանավերով ուղեկցել՝ պաշտպանելով մեծ աստղանավը:

Առաջադրանքը կնպաստի երեխաների համագործակցության, միմյանց վստահելու, ընկերասիրության, միմյանց հետ «կարևոր» գործ կատարելու, համերաշխ լինելու մղումների ձևավորմանն ու զարգացմանը:

**Առաջադրանք 6**. ՇԱՐՈՒՆԱԿԻ՛Ր
Ի՞նչը կարող է երկար լինել՝ պարանը, ...
Ի՞նչն է վերևում՝ արևը, ...

Երեխաները թվարկում են, թե իրենց կարծիքով ինչը կարող է երկար լինել: Օրինակ՝ միջանցքը, քանոնը, մատները, լեզուն, պոչը, ոտքերը, և այլն: Հնարավոր են այնպիսի պատասխաններ, որ առաջին հայացքից անընդունելի թվան, սակայն պետք է ընդունել դրանք և խնդրել, որ ասողը մեկնաբանի ու հիմնավորի իր ասածը:

«Ի՞նչն է վերևում» հարցի համար դարձյալ կարող են զանազան պատասխաններ հնչել՝ լուսինը, աստղերը, թռչող ինքնաթիռը, ամպերը, թռչունները, և այլն: Այս դեպքում ևս հնարավոր են այնպիսի պատասխաններ, որ առաջին հայացքից անընդունելի թվան, սակայն պետք է ընդունել դրանք և խնդրել, որ ասողը մեկնաբանի ու հիմնավորի իր ասածը:

### 6.5.12. Խնդուկի բեմականացում

**Առաջադրանք 7**.

Ուսուցիչը հանձնարարում է կարդալ խնդուկը, որը երեխաներին զվարթություն կպարգևի: Այնուհետև երեխաներից մի քանիսը բեմականացնում են խնդուկը՝ դերերը փոխելով: Նպաստում է խոսքի զարգացմանը, խոսքը համապատասխան առոգանությամբ հնչեցնելու կարողությունների զարգացմանը:

Այս փոքրիկ բեմականացմամբ հնարավորություն կտրվի, որ երեխաները բացահայտեն բոլորի առաջ առանց բարդութավորման, համապատասխան հնչերանգով խոսք հնչեցնելու իրենց կարողությունները: Անկասկած, դասարանում կտիրի բարձր տրամադրություն:

ԶՐՈՒՅՑ

– Ինչո՞ւ են աստղերը լույս տալիս:
– Որ մենք տեսնենք նրանց:
– Տեսնենք՝ ի՞նչ անենք:
– Իմանանք, որ նրանք կան:
– Որ իմացանք՝ նրանց համար ի՞նչ:
– Նրանք հույս ունեն, որ մի օր կհասնենք իրենց:
– Նրանք մեզ սպասո՞ւմ են:
– Իհա՛րկե: Չէ՞ որ երբ գիշեր է գալիս, մենք էլ նրանց ենք սպասում:

## ԵՐԱԶԱՆՔԻ ԱՂՅՈՒՍԱԿ

**8** Պատասխանի՛ր հարցերին՝ նշում կատարելով համապատասխան սյունակում:

| Հարց | Հաճախ | Մեկ-մեկ | Այլ պա-տասխան |
|---|---|---|---|
| 1. Երեկոյան նայո՞ւմ ես երկնքին: | | | |
| 2. Փորձո՞ւմ ես աստղերը հաշվել: | | | |
| 3. Ամպերին նայելիս պատկերներ տեսնո՞ւմ ես: | | | |
| 4. Աստղերին նայելիս երազանք պահո՞ւմ ես: | | | |
| 5. Երազո՞ւմ ես դառնալ հեքիաթի հերոս: | | | |
| 6. Երազո՞ւմ ես ճամփորդել աստղանավով: | | | |
| 7. «Արդյոք այլ մոլորակների վրա էլ կյանք կա՞» հարցը հուզո՞ւմ է քեզ: | | | |

Հաշվի՛ր նշումներիդ քանակը, համեմատի՛ր ընկերոջդ նշումների հետ: Մտածի՛ր՝ ինչ են ցույց տալիս քո արած նշումները:

**9** Ի՞նչ հարց կավելացնես աղյուսակի հարցերին:

## ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ



Աստղերը մեզ լույս են տալիս,
Ճամփաներ են մեզ ցույց տալիս:
Երազում ենք հասնել նրանց,
Երազանքի հույս են տալիս:

**Առաջադրանք 8.** Այս առաջադրանքի կատարումը կնպաստի երեխաների երևակայության զարգացմանը, նրանց կմղի առավել ուշադիր լինելու բնության երևույթների նկատմամբ, տեսնելու դրանք, մտածելու դրանց մասին:

Այս աղյուսակը լրացնելիս երեխաները պետք է ազատ ու անկաշկանդ լինեն: Կարևոր են «Այլ պատասխան» սյունակի գրառումները, որտեղ երեխան սահմանափակված չէ նախորդ սյունակների գնահատականներով և կարող է ազատորեն արտահայտել իր կարծիքը:

**Առաջադրանք 9.** Ի՞նչ հարց կավելացնես աղյուսակի հարցերին: Երեխաները ազատ և անկաշկանդ կարող են աղյուսակի հարցերին ավելացնել նմանաբնույթ հարցեր:

Օրինակ: Երբևէ տեսե՞լ ես, թե Լուսինն ինչպես է դուրս գալիս ամպերի տակից:

Անձրևի ժամանակ երկնքում տեսե՞լ ես կայծակներ:

### 6.5.13. Դասից քաղած իմ պտուղները

Դասի ամփոփման համար ուսուցիչը երեխաներին կարող է բաժանել թղթեր, որոնց վրա գրված են անավարտ նախադասություններ.

**Ինձ հաջողվեց....**

**Ինձ զարմացրեց....**

**Ես իմացա….**

**Ես երազեցի....**

Երեխաները լրացնում են նախադասություններն ու կարդում:

Կարելի է այս նախադասությունների պատասխանները համեմատել գլխագրում երեխաների կարդացածների հետ և անել անհրաժեշտ հետևություններ: Արդյո՞ք գլխագրի բոլոր կետերում դրված նպատակները իրականացվեցին դասի ընթացքում:

Ուսուցիչը լսում է բոլորի մտքերը, խրախուսում և ամփոփում դասը:

### 6.5.14. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» գրառման շուրջ

Այնուհետև երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված քառատողը:

**Աստղերը մեզ լույս են տալիս,**
**Ճամփաներն են մեզ ցույց տալիս:**
**Երազում ենք հասնել նրանց,**
**Երազանքի հույս են տալիս:**

Արտահայտում են իրենց կարծիքը, բարձրաձայնում իրենց մտորումները այդ մասին:

## 6.6. ԻՆՉՈՒ ԴԻՆՈԶԱՎՐԵՐԸ ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՉՈՒՆԵԻՆ (Պապն ու թոռնիկը)

### 6.6.1. Պատմության հորինում՝ ըստ նկարների

Դասի առաջին իսկ րոպեից երեխաների ուշադրությունը գրավելու և դասի արդյունավետ ընթացքի համար ուսուցիչը երեխաներին բաժանում է խմբերի: Յուրաքանչյուր խումբ ստանում է ծրար, որի մեջ փազլի պես կտրտած տարբեր նկարներ են: Ծրար մեկ՝ դինոզավրի կտրտվածքներ, ծրար երկու՝ տարբեր գույներ ունեցող նկարի կտրտվածքներ, ծրար երեք՝ մարդու նկարի կտրտվածքներ, ծրար չորս՝ հեռուստացույցի կտրտվածքներ, ծրար հինգ՝ **երազել** բառի տառերը: Ուսուցիչը երեխաներին տալիս է երեք րոպե ժամանակ, որից հետո արդեն թղթին ամրացրած ամբողջական պատկերները գրատախտակին են ամրացնում:

Երեխաները մեկ անգամ էլ բարձրաձայն ասում են, թե ինչ նկարներ ու բառեր ստացան: Ստանում են դինոզավրի նկար, գունավոր մի նկար, մարդու նկար, հեռուստացույցի նկար և **երազանք** բառը: Այնուհետև ուսուցիչն առաջարկում է հորինել մի պատմություն՝ օգտագործելով **դինոզավր, գունավոր, մարդ, հեռուստացույց, երազել** բառերը:

**Պատմության օրինակներ:**

1. Մի **մարդ երազում** էր **գունավոր հեռուստացույցով** դիտել **դինոզավրի** մասին կինոնկար:

2. **Դինոզավրը** կարո՞ղ էր **երազել**, որ **մարդը գունավոր հեռուստացույցով** կդիտի իրեն:

3. «Ափսոս **երազել** չգիտեմ, թե չէ **մարդու** նման **գունավոր հեռուստացույց** կունենայի»,– մտածում էր **դինոզավրը**:

«Կանխագուշակումներ հենակետային բառերով» մեթոդով աշխատանքները երեխաներին շատ են դուր գալիս: Նրանք ունենում են երևակայելու հնարավորություն և յուրովի են կապ ստեղծում առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող բառերի հետ:

Կարող են աշխատել զույգերով կամ համագործակցային փոքր խմբերով: Աշակերտների գուշակությունները և փոքրիկ պատմությունները լսելուց հետո ուսուցիչը խրախուսում է նրանց, ապա առաջարկում բացել գրքերն ու կարդալ նոր դասի գլխագիրն ու վերնագիրը:



Այս դասին դու.

• Կիմանաս, որ բառերն էլ արմատներ ունեն, ինչպես ծառերը:

• Կհամոզվես, որ երազելը կարող է կյանքն ավելի հետաքրքիր ու գունեղ դարձնել:

## ԻՆՉՈ՞Ւ ԴԻՆՈԶԱՎՐԵՐԸ ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՉՈՒՆԵԻՆ

Վաչագան Ա. Սարգսյան

**Թե ինչպես մի մարդ կարողացավ աշխարհը տեղավորել մի գունավոր տուփի մեջ:**

### ՊԱՊԻԿՆ ՈՒ ԹՈՌՆԻԿԸ




– Պապի՛կ, հարյուր տարի առաջը ե՞րբ է:

– Դու քանի՞ տարեկան ես, Արե՛գ:

– Ութ:

– Դա նշանակում է, որ ութ տարի առաջ դու դեռ չէիր ծնվել, պատկերացրի՞ր:

– Չգիտեմ: Իսկ դո՞ւ քանի տարեկան ես, պապիկ:

– Յոթանասուն:

– Այսինքն՝ յոթանասուն տարի առաջ դու դեռ չէիր ծնվել:

– Ապրե՛ս, ճի՛շտ ես: Իսկ հարյուր տարի առաջ նույնիսկ իմ հայրը չկար:

– Այսինքն՝ հարյուր տարին շա՞տ հեռու է:

– Այնքան հեռու է, որ այդ ժամանակներում չկար գունավոր կինո, չկար հեռուստացույց, չկային քո իմացած բոլոր խաղասարքերը, չկային այսօրվա խելացի հեռախոսները, համակարգիչները, չկային խոսող ժամացույցները, որ կապում եք ձեր ձեռքերին ու խոսում ում հետ կամենաք:

– Դինոզավրեր կայի՞ն գոնե,– չարաճճիորեն հարցրեց Արեգը:

– Չէ՛, դրանք շատ վաղուց են եղել ու վերացել,– լուրջ պատասխանեց պապիկը:

– Ինչո՞ւ:

– Երևի երազել չեն իմացել:



### 6.6.2. Աշխատանք գլխագրի շուրջ

Աշակերտները կարդում են գլխագրի կետերը, արտահայտում իրենց կարծիքը:

Առաջին կետում գրված է, որ բառերն էլ ծառերի նման արմատներ ունեն: Երեխաները կարող են մի քանի դատողություն անել, թե ինչ է նշանակում դա: Ուսուցիչն ընդհանրացնելով կասի, որ այդ մասին առավել մանրամասն կխոսեն դասի ընթացքում:

Երկրորդ կետը թեթևակի «սադրանք» է պարունակում:

Պարզվում է, որ ըստ երկրորդ կետի երեխաները կարող են պարզել, թե ինչպես կարող են երազելով կյանքն ավելի հետաքրքիր դարձնել: Սա ևս, իհարկե, հետաքրքրություն կարող է առաջացնել երեխաների մեջ:

### 6.6.3. Աշխատանք տեքստի վերնագրի և «Մուտքի պատուհանիկի» շուրջ

Ուսուցիչը կարդում է դասանյութի վերնագիրը.

**«Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին (Պապիկն ու թռռնիկը)»**

Ուսուցիչը խնդրում է երեխաներին պատասխանել այդ հարցին: Լսում է մի քանի աշակերտի կարծիք, ապա կարդում մուտքի պատուհանիկում գրված նախադասությունը:

**Թե ինչպես մի մարդ կարողացավ աշխարհը տեղավորել մի գունավոր տուփի մեջ:**

Այնուհետև երեխաներին հարցնում է, թե ինչպես հասկացան այդ միտքը, ինչպես է հնարավոր ամբողջ աշխարհը տեղավորել մի տուփի մեջ:

Երեխաները ազատորեն կարող են արտահայտել իրենց կարծիքները, դատողություններ անել:

Որոշ երեխաներ գուցե կռահեն, որ խոսքը հեռուստացույցի մասին է, քանի որ հենակետային բառերի մեջ կար այդ բառը:

Վերջում, ընդհանրացնելով երեխաների կարծիքները, ասում է, որ այդ մասին կկարդան տեքստում:

### 6.6.4. Տեքստի բարձրաձայն ընթերցում

Աշակերտներն ընթերցում են դասանյութը՝ զուգահեռ ուշադրություն դարձնելով կետադրական նշաններին: Դասանյութում նորածանոթ բառեր, արտահայտություններ չկան, երեխաներին ծանոթ բառեր են:

Այնուհետև ուսուցիչը աշակերտներից մեկին հանձնարարում է, որ նա կարդա Արեգի խոսքերը, մյուսին՝ պապիկի, իսկ երրորդ աշակերտին ասում է, որ կարդա հեղինակի խոսքերը:

### 6.6.5. Բառային աշխատանք

Գրատախտակին դուրս են գրում ուղղագրական արժեք ունեցող ***մարդիկ, համակարգիչ, չէիր, երբ, երևի, օդ, կեցցե, այսօր, առաջ, հարյուր*** բառերը:

Բառատետրում գրում են այս բառերը:

– Բա եթե այդ ամենը չկար, մարդիկ ինչո՞վ էին զբաղվում:

– Ապրում էին ու, ի տարբերություն դինոզավրերի, երազում էին:

– Երազում էին այդ ամենն ստեղծե՞լ:

– Կեցցե՛ս: Կուզե՞ս այդ երազողներից մեկի մասին քեզ պատմեմ:

– Ի՞նչ է ստեղծել որ:

– Գունավոր հեռուստատեսության հիմքն է դրել:



## Հարցեր

1. Թվարկիր՝ ի՞նչ չկար հարյուր տարի առաջ:
2. Ըստ տեքստի՝ ինչո՞ւ են վերացել դինոզավրերը:
3. Ինչի՞ մասին էին մարդիկ երազում:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*հարյուր* *կեցցե՛ս*

*այսօր*

## Առաջադրանքներ

1 ՈՒՆ Պատկերացրո՛ւ՝ ժամանակի մեքենայով հայտնվել ես հարյուր տարի առաջ: Հանդիպել ես մեկին, որը չգիտի, թե ինչ է հեռուստացույցը:

- Այնպե՛ս բացատրիր և ներկայացրու, որ նա հասկանա:
- Ի՞նչ հարցեր կտաս նրան:

2 Մեծահասակներին հարցրո՛ւ, թե ինչ չկար նրանց կյանքում, երբ նրանք քո տարիքին էին: Նշումնե՛ր արա և համեմատի՛ր ընկերներիդ գրածների հետ:



### 6.6.6. Հարցեր տեքստի ընկալման վերաբերյալ

Բառային աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը հարցեր է ուղղում աշակերտներին, որպեսզի պարզի՝ ինչպես են ընկալել դասանյութը:

– Թվարկեք՝ ի՞նչ չկար հարյուր տարի առաջ: (Գունավոր կինո, հեռուստացույց, էլեկտրոնային խաղասարքեր, խելացի հեռախոսներ, համակարգիչներ, խոսող ժամա-

ցույցներ: Երեխաները կարող են ավելացնել նաև առարկաներ, որոնք չկան դասանյութում: Օրինակ՝ ռոբոտներ, փոշեկուլ, սպասք լվանալու մեքենա, էլեկտրական ինքնագլոր և այլն)

– Ըստ տեքստի՝ ինչո՞ւ են վերացել դինոզավրերը: (Երևի երազել չեն իմացել)

–Ինչի՞ մասին են մարդիկ մտածում: Այս հարցը հնարավորություն կտա մտածելու իրենց երազանքների մասին)

### 6.6.7. Ճամփորդություն ժամանակի մեքենայով

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում՝ առաջադրանք 1-ին:

**Առաջադրանք 1.** Պատկերացրո՛ւ՝ ժամանակի մեքենայով հայտնվել ես հարյուր տարի առաջ: Հանդիպել ես մեկին, որը չգիտի, թե ինչ է հեռուստացույցը:

- Այնպե՛ս բացատրիր և ներկայացրու, որ հասկանա:
- Ի՞նչ հարցեր կտաս նրան:

Այս առաջադրանքը կարելի է նաև բեմադրել:

Թե ինչ է հեռուստացույցը, պատմում է երկրորդ դասարանցի Արեգը, որը ժամանակի մեքենայով հայտնվել է հարյուր տարի առաջ:

Ճիշտն ասած, ես էլ չգիտեմ, թե ինչ է հեռուստացույցը: Միայն գիտեմ, որ նրանով գունավոր կինոներ, մուլտֆիլմեր են ցույց տալիս: Իսկ ինչպես է աշխատում, ինչպես է այդքան բան տեղավորվում նրա մեջ, լավ չգիտեմ, նույնիսկ բոլորովին չգիտեմ: Հիմա դուք սև-սպիտակ կինո եք նայում. հայրիկս է ասել, որ հարյուր տարի առաջ սև ու սպիտակ կինո կար: Պատկերացրեք, որ դա գունավոր է: Պատկերացրեք, որ այդ կինոն մի ներկած ապակիներով տուփի մեջ է: Ոնց որ պատուհանից նայես փողոցին: Այդ տուփը էլեկտրականությամբ է աշխատում: Բայց շատ էլ պետք չի նայել, թե ինչ է ցույց տալիս այդ տուփը: Հայրիկս ասում է, որ այդ տուփը ժամանակ է սպանում, այսինքն՝ աննկատ քեզանից ժամանակ է խլում: Ես էլ շատ չեմ նայում:

**Առաջադրանք 2.** Մեծահասակներին հարցրո՛ւ, թե ինչ չկար նրանց կյանքում, երբ նրանք քո տարիքին էին: Նշումնե՛ր արա և համեմատի՛ր ընկերներիդ գրածների հետ:

Առաջադրանքը նպաստում է, որ երեխաների մեջ ձևավորվեն մարդկանց հետ շփվելու, հարցեր տալու, պատասխաններ լսելու, նշումներ կատարելու և իր ստացած արդյունքները ընկերների արդյունքների հետ համեմատելու ունակություններ:



## ԿԱՐԴԱ՛ ԵՎ ՍՈՎՈՐԻ՛Ր

Դու գիտես, որ ծառերն ունեն արմատներ և ճյուղեր՝ այ, այսպես.



Իմացի՛ր՝ բառերն էլ ունեն արմատներ և ճյուղեր՝ այ, այսպես.



**Երազել, երազկոտ, երազանք, երազային, երազող, աներազ** բառերում **երազ** բառը ցույց է տալիս նրանց հիմնական իմաստը: Դա էլ հենց **բառի արմատն** է:

**3**

○ Արտագրի՛ր բառերը. **փայտե, պոչավոր, երկաթե, ձյունե, արևային, երգարան, ուրախություն**:

✧ Ընդգծի՛ր բառերի արմատները:

✡ Այդ արմատներով կազմի՛ր նոր բառեր:

**4**

**Կարդա՛, թե ինչ բառ է պատկերված նկարելուկով:**



**5**

**Մայր** արմատով կազմի՛ր նոր բառեր և գրի՛ր: Օրինակ՝ **մայրական**:

### ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

### 6.6.8. Աշխատանք լեզվական գիտելիքի շուրջ

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է «Կարդա՛ և սովորի՛ր» խորագրի նկարներին:

Երեխաները կարճ դիտարկումներ են անում, որ բառերն էլ ծառերի նման ունեն արմատներ և ճյուղեր: Տեսնում են, թե ինչպես **երազ** բառը ճյուղեր է տվել ու ստացվել են **երազել, երազկոտ, երազանք, երազային, երազող, աներազ** բառերը:

Եվ այդպես, գործնական, հետաքրքրաշարժ միջոցով ներմուծվում է **բառի արմատ** լեզվական հասկացությունը:

**Առաջադրանք 3:**

Այս առաջադրանքը «Դեպի վեր» բնույթի եռաշերտ առաջադրանք է՝ կազմված **պարզից բարդ** սկզբունքով:

Առաջին շերտով պետք է արտագրեն տրված բառերը: Սա նաև ամենաթույլ կարողություն ունեցող երեխաների համար է:

Երկրորդ շերտով պետք է գտնեն տրված բառերի արմատները և ընդգծեն. **փայտ, պոչ, երկաթ, պար, արև, երգ, ուրախ**:

Երրորդ շերտով կազմեն նոր բառեր: Օրինակ.

փայտ – փայտից, փայտանալ, փայտյա, փայտիկ, փայտանոց:

պոչ – պոչատ, անպոչ, պոչիկ, պոչուկ:

երկաթ – երկաթից, երկաթյա:

պար – պարային, պարող:

արև - արևոտ, արևանալ, արևաբար, արևելք, արևիկ:

երգ – երգել, երգող, երգիչ, երգային:

ուրախ – ուրախանալ, ուրախացնել, ուրախացնող:

### 6.6.8. Աշխատանք նկարելուկի շուրջ

**Առաջադրանք 4**. Կարդա՛, թե ինչ բառ է գրված նկարելուկով:

Նկարելուկներ լուծելը աշկերտներին արագ կողմնորոշվելու, նկարները վերծանելու և բառեր կազմելու ունակություն է ձևավորում, մարզում և ճկուն է դարձնում միտքը:

Նկարելուկում թաքնված է **արմատ** բառը:

**Առաջադրանք 5. Մայր** արմատով կազմի՛ր նոր բառեր և գրի՛ր:

Օրինակ՝ մ**այրիկ:**

Աշակերտները կարող են տետրում կամ թղթերի վրա նկարել ծառ, արմատի մոտ գրել **մայր** և, այնուհետև, կազմել **մայր** բառի ճյուղեր. **մայրենի, մայրություն, մայրական, անմայր, մայրաբար, մայրանալ:**

### 6.6.9. Դասից քաղած իմ պտուղները

**Դասի ամփոփման** համար ուսուցիչը երեխաներին կարող է բաժանել թղթեր, որոնց վրա գրված են անավարտ նախադասություններ.

**Ինձ զարմացրեց....**
**Ինձ հետաքրքրեց ...**
**Ինձ հաջողվեց...**

Երեխաները լրացնում են նախադասություններն ու կարդում:

Կարելի է այս նախադասությունների պատասխանները համեմատել գլխագրում երեխաների կարդացածների հետ և անել անհրաժեշտ հետևություններ: Արդյո՞ք գլխագրի բոլոր կետերում դրված նպատակները իրականացվեցին դասի ընթացքում:

Ուսուցիչը լսում է բոլորի մտքերը, խրախուսում և ամփոփում դասը:

Այս դասին դու.
• Կկարդաս զարմանալի տեղեկություններ հեռուստացույցի մասին:
• Կծանոթանաս մի երազող մարդու հետ:

## ԻՆՉՈ՞Ւ ԴԻՆՈԶԱՎՐԵՐԸ ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՉՈՒՆԵԻՆ

### ԵՐԱԶՈՂԸ

Արեգին շատ հետաքրքրեց պապիկի ասածը, ու նա զարմացած ասաց.

– Ուրեմն հարյուր տարի առաջ գունավոր հեռուստատեսությո՞ւն կար:

– Ո՛չ: Կար մի հանճարեղ մարդ՝ Հովհաննես Ադամյան: Նրա ստեղծած «Հեռատես» սարքով հնարավոր էր գունավոր պատկերներ ուղարկել մի տեղից մեկ այլ տեղ:

– Դա հեռուստացո՞ւյց էր:

– Ո՛չ, դա մեծ գյուտ էր, որի մասին ամբողջ աշխարհն իմացավ: Հետագայում այդ գյուտի հիման վրա ստեղծվեց գունավոր հեռուստացույց:

– Ուրեմն Հովհաննես Ադամյանը իսկական երազո՞ղ էր:

– Այո՛: Երազող մի հայ էր, գյուտարար:

– Գյուտարարն ի՞նչ է:

– Մարդ է, որը հայտնագործում է, հնարում է մի նոր, անծանոթ բան:

– Այդ մի՞ գյուտն է արել նա:

– Ո՛չ, նա քսանմեկ գյուտ է արել: Շատ լավ է սովորել դպրոցում: Նա նշանավոր գյուտարար էր, հիանալի ջութակահար, հրաշալի նկարիչ էր ու շախմատիստ:

– Ես էլ շախմատ խաղալ գիտեմ, համ էլ կարատեի եմ գնում:

– Գիտեմ, ապրե՛ս: Պիտի նաև շատ լավ սովորես:

– Այսօր երազելու բաները վերջացե՞լ են արդեն, պապի՛կ,– խոսքն ուրիշ կողմ թեքեց Արեգը:

– Չէ՛, ի՞նչ ես ասում, հենց մարդիկ դադարեն երազելուց, դինոզավրերի նման կվերանան աշխարհի երեսից:

– Պապի՛կ, դե արի շուտ-շուտ երազենք, որ չվերանանք:

– Արի՛: Ես մտածում եմ, որ հարյուր տարի հետո մարդիկ քաղաքներ կկառուցեն ջրի տակ՝ «փուչիկների» մեջ,– երազեց պապիկը:

## 6.7. ԻՆՉՈՒ ԴԻՆՈԶԱՎՐԵՐԸ ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՉՈՒՆԵԻՆ (Երազողը)

### 6.7.1. «Այո-ոչ» խաղը

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ հիմա խաղալու են մի շատ հետաքրքիր խաղ՝ «Այո-ոչ»: Այնուհետև բացատրում է խաղի կանոնները: Ինքը մտապահում է մի առարկա: Այն վերաբերում է այսօրվա դասին: Աշակերտները պետք է հարցեր տան իրեն: Ինքը հարցերին պատասխանելու է միայն «այո» կամ «ոչ»: Աշակերտները պետք է հարցերն այնպես ձևակերպեն, որ «այո» կամ «ոչ» պատասխաններն օգնեն, որ նրանք հասկանան, թե ինչ է մտապահել ինքը:

Ուսուցիչը մտապահում է **հեռուստացույց** բառը:

Որպես օրինակ դիտարկենք հարցուպատասխանների մի շարան, որի միջոցով հնարավոր է գտնել **հեռուստացույց** բառը:

**Հարցեր-պատասխաններ**

Շնչավո՞ր է – ոչ:
Ուտելի՞ է – ոչ:
Դասարանում կա՞- ոչ՝ եթե չկա, այո՝ եթե կա:
Պինդ նյութի՞ց է պատրաստված – այո:
Մա՞րդն է ստեղծում – այո:
Գործի՞ք է - ոչ:
Սա՞րք է – այո:
Դրանով տաքացնո՞ւմ են – ոչ:
Դրանով ինչ-որ բա՞ն են ցուցադրում – այո:
Էլեկտրոնային գրատախտա՞կն է – ոչ:
Հեռուստացո՞ւյցն է - այո:

Գուշակելուց հետո **հեռուստացույց** բառը կամ հեռուստացույցի նկարը փակցվում է գրատախտակին: Ապա դրա կողքին փակցվում են «Հովհաննես Ադամյան» անուն-ազգանունը և Հովհաննես Ադամյանի նկարը:

Ի՞նչ եք կարծում, ո՞վ է այս մարդը և ի՞նչ է արել նա:

Աշակերտները ենթադրում են, որ անունն ու ազգանունը նկարում պատկերված մարդունն են, իսկ հեռուստացույցը, հավանաբար, նա է ստեղծել:

– Երեխանե՛ր, հիշո՞ւմ եք, որ Արեգի պապիկն ուզում էր անցած դասին մեզ մի երազող մարդու հետ ծանոթացնել: Եկեք գրքերը բացենք և կարդանք այդ հետաքրքիր պատմության շարունակությունը:

### 6.7.2. Աշխատանք գլխագրի շուրջ

Երեխաները կարդում են դասի գլխագիրը:

Առաջին կետում ասվում է, որ կիմանան հետաքրքիր տեղեկություններ հեռուստացույցի մասին: Երեխաները պատմում են իրենց իմացածը այդ մասին:

Երկրորդ կետում ասվում է, որ երեխաները կծանոթանան մի երազող մարդու հետ: Երեխաները կարող են տարբեր կարծիքներ հայտնել այդ կետի վերաբերյալ. բոլոր մարդիկ էլ երազկոտ են, հետաքրքիր է, թե ինչ է երազել այդ մարդը, որի երազներին ուզում են ծանոթացնել մեզ:

### 6.7.3. Տեքստի բարձրաձայն ընթերցում և բառաբացատրական աշխատանք

Այնուհետև ուսուցիչը կարդում է դասը (ԵՐԱԶՈՂԸ): Դադարներ է տալիս և մեկնաբանում այն հատվածները, որոնք, ըստ իրեն, երեխաների համար կարող են բարդ կամ քիչ հասկանալի լինել:

Կարդալուց հետ ուսուցիչը հարցեր է ուղղում աշակերտներին, որ պարզի, թե ինչպես են ընկալել դասանյութը:

– Ի՞նչ գյուտ է արել Հովհաննես Ադամյանը: (Գունավոր հեռուստացույցի կառուցվածքով սարքի գյուտն է արել)

– Է՞լ ինչ իմացար Հովհաննես Ադամյանի մասին: (Հովհաննես Ադամյանը քսանմեկ գյուտի հեղինակ է, լավ է սովորել դպրոցում, շախմատիստ է եղել, նկարիչ էր և ջութակահար)

Ուսուցիչը կարող է կատարել նաև այս հատվածում առկա որոշ բառերի բառաբացատրական աշխատանք:

**Հանճարեղ** - ստեղծագործական բացառիկ ընդունակություններ, ձիրք ունեցող մարդ:

## ՀԵՌԱԽՈՍԸ

Մի հեռախոս գնեցի,
Մեջը սիրուն նստեցի,
Դեպի սարը քշեցի:
Սարը տեսավ, վախեցավ,
Վազեց, ծառը բարձրացավ:
Ծառին փղի մի բույն կար՝
Մեջը՝ փղի երեք ձագ.
Կտուցները բաց արած՝
Ծվվում էին շատ սոված:
Մի գետաձի մեծբերան
Օրորում էր փղերին՝
Նստած բարակ ճյուղերին:
Մեկ էլ հանկարծ այդ պահին
Հեռախոսը զնգաց իմ:
Հեռախոսը որ զնգաց,
Սարը ծառից թմփաց ցած,
Սև բզեզը մոտեցավ,
Գլորելով տուն տարավ:
Հեռախոսը որ զնգաց,
Թռավ ամպին գետաձին,
Փղիկները մնացին:
Հեռախոսը որ զնգաց,
Զանգի ձայնից բռնելով՝
Ես էլ ծառից իջա ցած:
Ցածում մի ձուկ ինձ ասաց.
– Հեռախոսդ մոռացար:
– Բա ո՞նց անեմ,– ասացի,
Ու կամացուկ սուլեցի:
Հեռախոսը սրաձայն
Ծառից ներքև սլացավ:
Շուտ նստեցի, եկա տուն,
Իսկ սա գրեց մեր կատուն:

– Ես կարծում եմ, որ հարյուր տարի հետո ռոբոտները շատ նման կլինեն մարդկանց ու շատ գործեր կանեն,– երազեց Արեգը:– Նույնիսկ մեր փոխարեն դաս կսովորեն:

– Դա չեղավ,– հակառակվեց պապիկը:– Ամեն մեկը պետք է ինքն իր դասը սովորի:

– Լավ,– համաձայնեց Արեգը:– Կարծում եմ՝ կլինեն թռչող ավտոմեքենաներ:

– Կլինեն լուսին թռչող ավտոբուսներ՝ լուսնաթիռներ,– շարունակեց պապիկը:

– Կկառուցեն երկինք հասնող շենքեր,– ասաց Արեգը:

– Քաղաքները շատ մաքուր կլինեն,– լրացրեց պապիկը:

– Ուտելիքն էլ ջրի նման կլինի. կբացես ծորակը, և ի՜նչ ուզում ես, կգա,– ինքն իր երազածից զարմացած՝ ասաց Արեգը:

Այդպես պապիկ ու թոռ դեռ երկա՜ր-երկար երազում էին:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**

*Հովհաննես*
*գյուտարար*
*կառուցված*
*ամբողջ*
*փորձ*
*դադարել*

## Հարցեր

1. Ի՞նչ գյուտ է արել Հովհաննես Ադամյանը:
2. Էլ ինչ իմացար Հովհաննես Ադամյանի մասին:
3. Ինչպե՞ս ես հասկանում պապիկի՝ «Ամեն մեկը պետք է ինքն իր դասը սովորի» խրատը:
4. Դո՞ւ ինչ երազանքներ ունես:



Նախքան հեռուստացույցի գյուտը մարդիկ իրար տեղեկություններ էին հաղորդում ռադիոյով, հեռախոսով, հեռագրով, նամակով:



– Ինչպե՞ս եք հասկանում պապիկի՝ «Ամեն մեկը պետք է ինքն իր դասը սովորի» խրատը: (Յուրաքանչյուր մարդ միայն ինքը կարող է իր դասը սովորել, ուրիշը որևէ մեկի փոխարեն չի կարող տառեր սովորել, գրել-կարդալ սովորել, կրթվել, աշխատել ու ապրել: Ամեն մեկն իր կյանքն ունի)

– Դո՞ւք ինչ երազանքներ ունեք: (Երեխաները թվարկում են իրենց երազանքները և ասում, թե ինչպես կարող են հասնել դրանց)

Ուսուցիչը լսում է աշակերտների պատասխանները, խրախուսում:

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է էջ 139-ի նկարներին:

Վերևի նկարում պապիկի երազած ստորջրյա քաղաքն է: Իսկ ներքևի նկարի մասին տեղեկացնում է, որ նախքան հեռուստացույցի գյուտը մարդիկ իրար հետ շփվում էին, տեղեկություններ հաղորդում հեռախոսով, հեռագրով, նամակով: Նկարներում դուք տեսնում եք, թե ինչպես են հեռագրով տեղեկություններ հաղորդում և ընդունում:

### 6.7.4. Բառային աշխատանք

«Աչքի առաջ» խորագրի բառերը *(Հովհաննես, գյուտարար, կառուցվածք, ամբողջ, փորձ, դադարել)* ուսուցիչը կարող է գրել նախ գրատախտակին, ապա մեկ անգամ ևս աշակերտների ուշադրությունը հրավիրել դրանց ճիշտ գրության վրա: Ապա հանձնարարել, որ աշակերտները դրանք խնամքով գրեն տետրերում:

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է դիտել 139-րդ էջի նկարը, գտնել, թե բնագրի որ հատվածն է պատկերված և կարդալ այդ հատվածը: (Պատկերված է պապիկի երազած ստորջրյա քաղաքը)

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**ՆԵՐՍԵՍԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ներսեսը դպրոցից տուն վերադարձավ: Լվացվեց, ճաշեց և ուզում էր դասերը պատրաստել: Հանկարծ լսեց, որ փողոցում ընկերները գնդակ են խաղում: «Լա՛վ, մի քիչ գնդակ խաղամ, հետո դասերս կպատրաստեմ»:

Խաղաց, հետո տուն եկավ ու նստեց գրասեղանի առաջ: Բայց այդ պահին Գոռը նրան կանչեց հեծանիվ քշելու: «Լա՛վ, մի քիչ հեծանիվ քշեմ, հետո դասերս կպատրաստեմ»,– մտածեց Ներսեսը:

Հեծանիվ քշելուց հոգնած՝ Ներսեսը տուն եկավ, լվացվեց, ընթրեց ու նստեց գրասեղանի մոտ:

Բայց հեռուստացույցով սկսվեց նրա սիրելի մուլտիկը: «Լա՛վ, մուլտիկ նայեմ, հետո»,– ինքն իրեն ասաց Ներսեսը: Սակայն այնքան էր հոգնել, որ չիմացավ, թե ինչպես քնեց:

Հաջորդ օրը դասի ժամանակ ուսուցչուհին դիմեց Ներսեսին.

– Ներսե՛ս, կարդա՛, թե դու տանը ինչ նախադասություններ ես կազմել «գնդակ», «հեծանիվ» և «հեռուստացույց» բառերով:

– Ե՛ս, ե՛ս...– կարմրելով՝ կմկմաց Ներսեսը,– ես «հեռուստացույցով» «գնդակ» ու «հեծանիվ» բառերով նախադասություններ եմ... խաղացել:

## Առաջադրանքներ

**1** Օգտվելով տեքստից՝ ավարտի՛ր նախադասությունը:

- Գյուտարարը մարդ է, որը _____:
- Հենց մարդիկ դադարեն երազելուց, _____:
- Հարյուր տարի հետո ռոբոտները _____:
- Հարյուր տարի հետո մարդիկ _____:

**2** ○ Կարդա՛ զվարթ պատմությունը:

### ՀԱՅԿԻ ՀԱՐԱՋԱՏ ՀՅՈՒՐԵՐԸ

Հայկը հազիվ է հասցնում հանգստանալ. հեռախոսը հրապուրում է, հեռուստացույցը հմայում է, համակարգիչը հրավիրում է, հեռատեսիլը* հուզում է, համացանցը* հետաքրքրում է:

Հինգն էլ հերթով հրամայում են Հայկին:

Հայկը հասկացավ՝ հարկավոր է հինգին էլ հանդարտեցնել:

Հայկի հրավերով հինգն էլ հավաքվեցին հյուրասենյակում:

– Հարգելի՛ հյուրեր, հարազատնե՛րս, համը հանում եք: Հիշե՛ք, հինգիդ հրամանատարն էլ Հայկն է: Հայկն է հրամայելու հինգիդ էլ, հասկացա՞ք:

– Հասկացա՛,– հառաչեց Հեռախոսը:

– Հասկացա՛,– հաստատեց Հեռուստացույցը:

– Հասկացա՛,– հոգոց հանեց Համակարգիչը:

– Հասկացա՛,– հուզվեց Հեռատեսիլը:

– Հասկացա՛,– հավատացրեց Համացանցը:

– Հիանալի է,– հայտարարեց Հայկը:

– Հուսով եմ՝ հետագայում համը չեք հանի:

✧ Ի՞նչ օրինաչափություն նկատեցիր:

✡ Ի՞նչ պետք է անել, որ խելացի սարքերը «համը չհանեն»: Մտածի՛ր, քննարկի՛ր ընկերոջդ հետ:

* **Հեռատեսիլ** – փոքրիկ համակարգիչ:
* **Համացանց** – ինտերնետ:



### 6.7.5. Նախադասությունների ամբողջացում՝ ըստ տեքստի

**Առաջադրանք 1.**

Առաջադրանքը կարելի է կատարել փոքրիկ խմբերով:

Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ կարող են ակտիվ չլինել: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «Ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկել, որ նա խմբային աշխատանքի վերջում ներկայացնի սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքը:

Աշակերտները խմբերում լրացնում են անավարտ նախադասությունները:

• Գյուտարարը մարդ է, որը գյուտեր է անում, հնարում է մի նոր, անծանոթ բան:

• Հենց մարդիկ դադարեն երազելուց, դինոզավրերի նման կվերանան աշխարհից:

• Հարյուր տարի հետո ռոբոտները շատ նման կլինեն մարդկանց ու շատ գործեր կանեն:

• Հարյուր տարի հետո մարդիկ քաղաքներ կկառուցեն ջրի տակ:

**Առաջադրանք 2.** «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

○ Երեխաները կարդում են «Հայկի հարազատ հյուրերը» զվարթ պատմությունն ու մտորում, քննարկում խմբում այս հարցերի շուրջ:

✧ Ի՞նչ օրինաչափություն նկատեցիր: (Բոլոր բառերն սկսվում են **h**-ով)

✧ Ի՞նչ պետք է անել, որ խելացի սարքերը «համը չհանեն»: Մտածի՛ր, քննարկի՛ր ընկերոջդ հետ:

Ուսուցիչը խմբային աշխատանքի համար տալիս է ժամանակ, մեկ անգամ ևս հիշեցնում խմբային աշխատանքի կանոնները:

Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց ստացած նախադասությունները և ամփոփում հարցերի պատասխանները:

**3** **Երկու նկարով սովորենք մի դարձվածք**

**ՀԱՄԸ ՀԱՆԵԼ**
1. Ցանձրացնել, զզվեցնել:
2. Տհաճ բան անել, չափն անցնել:

**4** Արտագրի՛ր բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը.

**Հովհա□նես, կառուցվա□ք, ամբող□, փոր□, դա□արել, գ□ուտարար:**

**5** Գտի՛ր և գրի՛ր, թե որ արմատն է «ձյուղեր տվել» ու ստեղծել **խաղացող, խաղալ, խաղալիք, խաղիկ, խաղարան, խաղացնել** բառերը:

**6** Արտագրի՛ր «Հայկի հարազատ հյուրերը» պատմության առաջին նախադասությունը: Հ-ով սկսվող քանի՞ բառ գրեցիր: Թիվը գրի՛ր տառերով:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Թե սովորես դու սիրով,
Գյուտեր կանես նորանոր,
Կօգնես մարդկանց՝ ամենքին,
Կջերմանա քո հոգին:

141

### 6.7.6. Անդրադարձ «Համը հանել» դարձվածքին

Դարձվածքն անդրադարձ է «Հայկի հարազատ հյուրերը» պատմությանը: Ցույց է տրվում, որ պետք է ճանաչել, օգտվել ժամանակակից էլեկտրոնային միջոցներից, բայց

չպետք է «համը հանել», այսինքն՝ չպետք է չափն անցնել, անընդհատ դրանց մասին մտածել, այնպես անել, որ դրանք սկսեն իշխել քեզ:

**Առաջադրանք 3.** Նկարների և բացատրությունների օգնությամբ երեխաները կընկալեն «Համը հանել» դարձվածքը:

**Առաջադրանք 4.** Այս բառերին երեխաներն արդեն հանդիպել են դասանյութում և աշխատանք կատարել դրանց վերաբերյալ: Նրանք արդեն կարող են ինքնուրույն լրացնել բաց թողած տառերը և մեկ անգամ ևս ամրապնդել «Աչքի առաջ բառերի» ուղղագրությունը:

**Առաջադրանք 5.** Այս առաջադրանքը կամրապնդի նախորդ դասին երեխաների սովորած լեզվական գիտելիքները: Կեզրակացնեն, որ **խաղացող, խաղալ, խաղալիք, խաղիկ, խաղարան, խաղացնել** բառերի արմատը նույն **խաղ** բառն է:

**Առաջադրանք 6.** Արտագրի՛ր «Զվարթ պատմություն» տեքստի առաջին նախադասությունը: Քանի՞ **h**-ով սկսվող բառ գրեցիր: Թիվը գրի՛ր տառերով:

Երեխաները արտագրում են նախադասությունը, հաշվում բառերի քանակը՝ 14, գրում տառերով՝ **տասնչորս**:

### 6.7.7. Դասի ամփոփում

Ուսուցիչը կարող է ընտրել «Նշեք երկու բան» հնարը: Երեխաներին կարող է բաժանել թղթեր, որոնց վրա գրված են անավարտ նախադասություններ.




Ուսուցիչը լսում է բոլորի մտքերը, խրախուսում և ամփոփում դասը:

**Թե սովորես դու սիրով,**
**Գյուտեր կանես նորանոր,**
**Կօգնես մարդկանց՝ ամենքին,**
**Կջերմանա քո հոգին:**

Այս փոքրիկ քառատողը կարելի է անգիր սովորեցնել երեխաներին և դարձնել դասարանի նշանաբանը:

## 6.8. «Ինչպես է աշխատում աշխարհը» թեմայի ամփոփում

### «ԻՆՉՊԵՍ Է «ԱՇԽԱՏՈՒՄ» ԱՇԽԱՐՀԸ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու.

- Լուծելով խաչբառը՝ կկրկնես «Աչքի առաջ» բաժնի բառերի գրությունը:
- Կվերհիշես քեզ հանդիպած բնության երևույթները:
- Կմասնակցես յուրահատուկ մրցույթի:
- Կգնահատես, թե ինչպես են գյուտերը փոփոխում քո աշխարհը:

1 ○ Բնության ի՞նչ երևույթների հանդիպեցիր այս թեմայի դասերին: Թվարկի՛ր՝ օգտվելով նկարից:

✧ Ընտրի՛ր դրանցից մեկը և ներկայացրո՛ւ մնջախաղով:

✡ Նկարագրի՛ր բնության երևույթներից մեկը՝ ըստ տրված ձևանմուշի:

Ես *Համպև եմ:*

Բնավորությամբ *ուրախ եմ, առատաշնորհ, երբեմն՝ լայկան:*

Ազգականներս են *զուրը, արևը, օդը:*

Սիրում եմ *ծովը, արևն ու երկինքը:*

Վախենում եմ *խամռոց, ամպեր կրող սարքերից:*

Տալիս եմ *անշրև, ամպրոպ, հով:*

Ուզում եմ տեսնել *մաքուր բնություն, ուրախ ծաղիկներ, վարար գետակներ:*

Բնակվում եմ *երկնքում:*

Ազգանունս է *Ողորյան:*

142

### 6.8.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Երեխաները կարդում են դասի գլխագիրը:

Ըստ առաջին կետի, երեխաները կլուծեն մի հետաքրքրաշարժ խաչբառ, որի թե՛ տողերում, թե՛ սյունակներում գրվում են «Աչքի առաջ» խորագրի բառերը: Այսպիսի լուծումը հնարավորություն է տալիս նախ վերհիշելու այդ բառերի գրությունը, ինչպես նաև առավել ամրապնդելու դրանց ուղղագրության իմացությունը: Երեխաները հաճույքով են լուծում խաչբառերը, մանավանդ, եթե դրանց հարցերը տրվում են բազմազան եղանակներով:

Երկրորդ կետի շուրջ երեխաները կհիշեն, թե բնության ինչ երևույթների են հանդիպել թեմայի դասանյութերը ուսումնասիրելիս:

Երրորդ կետով աշակերտները տեղեկանում են, որ կմասնակցեն յուրատեսակ մրցույթի: Սա ևս հետաքրքրական է երեխաների համար և շահագրգռող:

Չորրորդ կետում երեխաները, հնարավոր է, առաջին անգամ են հանդիպում «գյուտ» բառին: Անշուշտ, դա կհետաքրքրի նրանց: Երեխաները կարտահայտեն իրենց կարծիքը այդ մասին:

### 6.8.2. Բնության երևույթների նկարագրում

**Առաջադրանք 1.**

Առաջադրանքը «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

Առաջին կետով երեխաները, օգտվելով նկարներից, պետք է թվարկեն, թե բնության ինչ երևույթների հանդիպեցին թեմայի դասերն ուսումնասիրելիս:

Նրանք, թե՛ հիշելով դասերը, թե՛ օգտվելով նկարներից, թվարկում են.

**աստղեր, անձրև, ձյուն, ծիածան, արև, սառույց, գոլորշի, ջրվեժ:**

Դրանցից մնջախաղով ներկայացնելու համար հարմար են ծիածանը, ջրվեժը, գոլորշին: Թեև երեխաները կարող են ընտրել ցանկացածը և իրենց վառ երևակայությամբ ցուցադրել:

Երրորդ կետով երեխաները, ըստ ձևանմուշի, կարող են նկարագրել ցանկացած երևույթ:

Ներկայացնենք, թե ինչպես է հնարավոր ներկայացնել, օրինակ՝ ջրվեժը:

Ես ջրվեժն եմ:

Բնավորությամբ զվարթ եմ:

Ազգականներս են սառույցը, անձրևը;

Սիրում եմ գլխիվայր նետվել ժայռերից, խշշալ, շառաչել:

Վախենում եմ, որ իմ գետերի ջուրը պակասի: Կամ իմ ջուրը լցնեն խողովակները տանեն, ու ես մեռնեմ:

Տալիս եմ զովություն, ուրախություն, հրճվանք:

Ուզում եմ տեսնել մաքուր շրջապատ, ուրախ ու զվարթ մարդկանց, ինձնից ջուր խմող, իմ շողերի տակ լվացվող թռչուններ:

Բնակվում եմ ժայռերից մինչև գետին տարածության մեջ:

Ազգանունս է Շառաչունի:

2 • Վերհիշի՛ր թեմայի ստեղծագործությունների հերոսներին:
• Ո՞ր խոսքը ո՞ր հերոսները կասեն:

Նայի՛ր երկնքին և հիացի՛ր ինձնով:

Դիմի՛ր ինձ, երբ կարոտել ես հարազատներիդ:

Խնայողաբա՛ր օգտագործիր ինձ:

Շարունակի՛ր երազել, սովորել և գյուտեր անել:

Աշխարհին նայի՛ր ինձ նման:

3 Գյուտերն օգնում են հասկանալու, թե ինչպես է «աշխատում» աշխարհը:

Դո՞ւ ինչ ես երազում ստեղծել:

4 **Մրցույթ դասարանում**

Գյուտե՛ր արա, մի՛տքդ փորձիր,
Այս առարկան օգտագործի՛ր:

Ի՞նչ կարող ես անել հետևյալ առարկաներով.
**հեռախոս, հեռուստացույց, հեծանիվ, կոտրած ոտքով աթոռ, գնդակ, փուչիկ:**

Ո՞վ կարող է ավելի շատ տարբերակներ ասել:

5 Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները: Այդ բառերին ավելացրո՛ւ -ավոր, -ենի, -որդ, -ից մասնիկները և ստացի՛ր նոր բառեր:



Օրինակ՝
սալոր – սալորենի:



### 6.8.3. Խոսքը և հերոսը

**Առաջադրանք 2.** «Նայի՛ր երկնքին և հիացի՛ր ինձնով» կասեն.

արևը, ծիածանը, աստղերը, ամպերը, ամպերից թափվող ձյունը, անձրևը:

«Խնայողաբար օգտագործի՛ր ինձ» կասի ջուրը:

«Դիմի՛ր ինձ, երբ կարոտել ես հարազատներիդ» կասեն հեռախոսը, համակարգիչը, հեռատեսիլը:

«Շարունակի՛ր երազել, սովորել և գյուտեր անել» կասեն մեծ գյուտարար Հովհաննես Ադամյանը, Արեգի պապիկը:

«Աշխարհին նայիր ինձ նման» կասի Արևը:

**Առաջադրանք 3.**

Գյուտերն օգնում են հասկանալու, թե ինչպես է «աշխատում» աշխարհը:

Դո՞ւ ինչ ես երազում ստեղծել:

Կարելի է կազմակերպել որպես աշխատանք զույգերով: Թղթի կպչուն շերտերի վրա երեխաները գրում են, թե ինչ են ուզում ստեղծել, կարդում են ընկերոջ համար: Այնուհետև բոլորն իրենց գրածները փակցնում են գրատախտակին:

### 6.8.4. Մրցույթ դասարանում

**Առաջադրանք 4.**

Գյուտե՛ր արա, մի՛տքդ փորձիր,
Այս առարկան օգտագործի՛ր:

Ի՞նչ կարող ես անել հետևյալ առարկաներով.
**հեռախոս, հեռուստացույց, հեծանիվ, կոտրած ոտքով աթոռ, գնդակ, փուչիկ:**

Ո՞վ կարող է ավելի շատ տարբերակներ ասել:

Երեխաները երևակայում են, թե ինչ կարող են անել նշված առարկաներով: Նպաստում է հնարամտության ու սրամտության ձևավորմանը, երևակայության, ստեղծարար մտածողության զարգացմանը:

Օրինակ, դիտարկենք, թե ինչ կարելի է անել կոտրած ոտքով աթոռով:

Նախ կարելի է կոտրած ոտքը կպցնել և օգտագործել: Կարելի է աթոռի կոտրած ոտքը և մյուս ոտքերը մանր-մանր կտրատել ու շրջանակներ սարքել խաղի համար: Կարելի է ամբողջ աթոռը սիրուն կտրատել ու վառելափայտ դարձնել: Կարելի է հանձնել հնավաճառին: Կարելի է փոքրիկ խաղալիքներ սարքել աթոռի տարբեր մասերից, և այլն:

**Առաջադրանք 5.** Երեխաները գրում են **ձի, նկար, բալ, սալոր, դահուկ** բառերը: Ավելացնելով **-ավոր, -ենի, -որդ, -իչ** մասնիկները՝ ստանում են **ձիավոր, նկարիչ, բալենի, սալորենի, դահուկորդ** բառերը:

Առաջադրանքը **ածանցավոր բառեր** հասկացության կրկնման և ամրապնդման համար է նախատեսված: Երեխաները նախ գրում են նկարում պատկերված առարկաներ անունները, ապա յուրաքանչյուրի դիմաց ավելացնում են նրան պատշաճ ածանցը:



6 Այս թեմայի «Աչքի առաջ» բաժնի բառերով լրացրո՛ւ խաչբառը:

2.
3.
4.
14.
19.
20. 100

Գրի՛ր մեկ բառով.

7. գյուտեր անող
16. դադար առնել

21. (անունը)

Գրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառը.

9. ցածր
10. հրամայել
17. ամենադանդաղ
18. պայծառանալ
22. բարձրանալ
23. սկսել
24. վերև

Լրացրո՛ւ բաց թողած բառերը.

1. □□□□-շորոր անել
12. հետ ու □□□□ անել
13. երեկ, □□□□□, վաղը

Լուծի՛ր նկարելուկները.

5. 4=ա
6. 3=ղ

Լրացրո՛ւ բաց թողած տառերը.

8. ամբող□, 11. համ□ուրել, 15. կա□ուցվա□ք

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ինձ հետաքրքրեց ...

Ես կհիշեմ ...

Ես կպատմեմ ...

144

## 6.8.5. Խաչբառի լրացում

**Առաջադրանք 6.** Խաչբառի սյունակներում և տողերում գրվելիք բառերը գտնելու համար երեխաները պետք է կատարեն բազմազան և հետաքրքրաշարժ առաջադրանքներ. *լուծեն նկարելուկներ, գտնեն հակառակ իմաստն արտահայտող բառեր, արտահայտությունը գրեն մեկ բառով, լրացնեն բառերի մեջ բաց թողնված տառերը, արտահայտությունների մեջ բաց թողնված բառերը, գրեն, թե ինչ է պատկերված նկարներում:*

Խաչբառի սյունակները և տողերը լրացվում են հետևյալ բառերով.

| **սյուներով** | **տողերով** |
|---|---|
| 1. օրոր | 2. անձրև |
| 3. նարինջ | 7. գյուտարար |
| 4. բյուրեղ | 9. բարձր |
| 5. խաղաղ | 11. համբուրել |
| 6. ուղղել | 12. առաջ |
| 8. ամբողջ | 14. դեղձ |
| 10. խնդրել | 17. ամենաարագ |
| 13. այսօր | 20. հարյուր |
| 15. կառուցվածք | 21. Հովհաննես |
| 16. դադարել | 23. վերջացնել |
| 18. աղոտանալ | 24. ներքև: |
| 19. արեգակ | |
| 22. իջնել | |

### 6.8.6. Դասից քաղած իմ պտուղները

Երեխաները լրացնում են անավարտ նախադասությունները, ներկայացնում իրենց յուրացրածը:

Ինձ հետաքրքրեց _____
Ես կհիշեմ _____
Ես կպատմեմ _____

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՊՐՈՒՄ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ
ԻՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

145

## 7.1. Աշխատանք «Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում» թեմայի սկզբնանկարի շուրջ

Սկզբնանկարում ներկայացված է մի դասարան: Էկրանի վրա երևում է վեց նկար: Նկարների մասին պատմում են երեխաներին քաջածանոթ հերոսներ Լուսիկն ու Սուսիկը: Դասարանում նստածների մեջ է կախարդական գլխարկը հանած Ը-ն: Անծանոթ է գույնզգույն ժպտադեմ փիղը: Ծանոթ հերոսներից է նաև մանուկը: Շունն ու կատուն թե՛ նստած են դասարանում, թե՛ երևում են էկրանին: Դասարանում նստածներին Լուսիկն ու Սուսիկը պատմում են, թե երեխաները ինչ են սովորելու այս թեմայի շրջանակներում:

Իսկ ինչո՞ւ են նկարները ներկայացնում Լուսիկն ու Սուսիկը: (Սուսիկը հասկացել է, որ ինքը պետք է օգտակար գործեր անի: Նա եկել է իր քույրիկի հետ ու նաև այդ մասին է պատմում երեխաներին)

Երեխաները ստեղծում են իրենց փոքրիկ պատմությունները նկարների մասին, գունավոր փղիկի մասին: Պատմում են, թե ինչու է դասարանում հայտնվել գաղտնավանկի Ը-ն: (Նա բոլոր դասերին էլ մասնակցում է՝ լինի գլխարկով, թե առանց գլխարկի)

## 7.2. ԷԼՄԵՐԸ (ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՓՂԱԳՈՒՅՆ)

### 7.2.1. Աշխատանք «Տրամադրության գորգ» մեթոդական հնարով

- Նախապես ուրվագծված փղի նկարը բաժանել 4-6 մասի (կախված խմբերի քանակից)։
- Յուրաքանչյուր մասն էլ իր հերթին մատիտով բաժանել 3 մասի՝ ոչ ուղիղ գծերով։
- Դասարանը բաժանել խմբերի։
- Յուրաքանչյուր խմբի տալ փղի նկարի մի մասը և տրամադրություն արտահայտող երեք նախադասություն (բոլոր խմբերին միևնույն նախադասությունները)։

Օրինակ՝ Այսօր առավոտից անձրև էր գալիս։
Կեսօրին ամպերը ցրվեցին։
Երկնքում շողաց յոթնագույն ծիածանը։

- Երեխաներին հանձնարարել յուրաքանչյուր նախադասության արտահայտած տրամադրությանը համապատասխան գունավորել նկարի՝ իրենց խմբին բաժին հասած երեք մասերը։
- Աշխատանքն ավարտելուց հետո ցուցադրել ստացված գունագեղ նկարները։
- Նկարների մասերը ուսուցչի օգնությամբ գրատախտակին կամ պաստառին ամրացնել այնպես, որ ստացվի ամբողջական փիղը։
- Ծավալել զրույց՝ կարո՞ղ է արդյոք փիղը լինել գույնզգույն, ինչպես պաստառի փղիկն է ստացվել։
- Ընդհանրացնել, որ ճիշտ է, բնության մեջ չեն լինում գունավոր փղեր, իսկ, այ, հեքիաթներում, մուլտֆիլմերում կարող են լինել։

Այս դասին դու.

- Կձանաչես պարզ բառերը:
- Կծանոթանաս մի երջանիկ փղիկի:
- Կկարդաս, թե ինչպես էին փղերը համերաշխ ապրում իրենց ընտանիքում:

## ԷԼՄԵՐԸ

**Դևիդ Մակքի**

Հետաքրքիր է, գույնզգույն փիղ լինո՞ւմ է:
Կարդա՛ քառատողը: Քննարկի՛ր ընկերոջդ հետ:

vachagan.am

Փի՞ղն էլ լինի գույնզգույն,
Տեսնես ի՞նչ է նա զգում,
Ուրա՞խ է նա, թե՞ տխուր,
Արի՛ գնանք նրան հյուր:

### ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՓՂԱԳՈՒՅՆ

Հեռավոր մի երկրում ապրում էր փղերի մի մեծ, համերաշխ ընտանիք: Այդ ընտանիքի փղերը շատ տարբեր էին: Կային նիհար ու գեր, բարձրահասակ ու ցածրահասակ, ծեր ու երիտասարդ փղեր: Բայց նրանք մի ընդհանուր բան ունեին՝ բոլորն էլ երջանիկ էին: Մի ընդհանուր բան էլ կար. բոլորն էլ միագույն էին: Բոլորը, բացի էլմեր փղից:

Նրա գույնը բոլորովին փղի գույն չէր: Էլմերը նման էր տարբեր գույնի կտորներից կարված գույնզգույն վերմակի:

Էլմերն այստեղ հաշվել է փղի 16 ոտք:
Դո՞ւ քանիսը հաշվեցիր:
Ինչո՞ւ է սխալվել Էլմերը:

146

### 7.2.2. Աշխատանք գլխագրի շուրջ

Երեխաները բացում են դասագրքերը և կարդում գլխագրի կետերը:

Երեխաները կարդում են առաջին կետը, զարմանում, որ բառերն էլ կարող են պարզ լինել: Դատողություններ են անում, թե ինչ կարող է նշանակել դա:

Երկրորդ կետում կարդում են, որ իրենք շուտով երջանիկ փիղ կտեսնեն: Կարծիքներ են հայտնում, թե փիղը երբ կարող է երջանիկ լինել:

Երրորդ կետով բավականին հուշվում է, թե փիղը երբ կարող է երջանիկ լինել՝ երբ ապրում է համերաշխ ընտանիքում: Կարելի է բացատրել, որ փղերի խումբն անվանում են ընտանիք:

## 7.3. ԷԼՄԵՐԸ (ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՓՂԱԳՈՒՅՆ)

### 7.3.1. Աշխատանք տեքստի վերնագրի և «Մուտքի պատուհանիկի» շուրջ

Երեխաները կարդում են դասի վերնագիրը: Փորձում են կռահել, թե ինչ է Էլմերը:

Իրենց կարծիքներն հայտնելուց հետո կարդում են մուտքի պատուհանիկի քառատողը:

Հետաքրքիր է, գույնզգույն փիղ լինո՞ւմ է:

*Քննարկի՛ր ընկերոջդ հետ:*

Մտածում են առաջադրված հարցի շուրջ: Քննարկում են ընկերոջ հետ: Կարդում են քառատողը:

Փի՞ղն էլ լինի գույնզգույն,
Տեսնես ի՞նչ է նա զգում,
Ուրա՞խ է նա, թե՞ տխուր,
Արի գնանք նրան հյուր:

Տեքստի շուրջ աշխատանք կատարելուց առաջ կամ հետո (դա որոշում է ուսուցիչը՝ ելնելով դասարանի առանձնահատկություններից) կարելի է դիտել «Էլմեր. ինչպես դառնալ փղագույն» տեսահոլովակը:

### 7.3.2. Տեքստի բարձրաձայն ընթերցում: Անդրադարձ հարցերին

Կարելի է տեքստը կարդալ հատվածներով: Յուրաքանչյուր հատվածից հետո աշակերտները պատասխանում են առաջադրված հարցերին:

I հատված *(մինչև հետևյալ նախադասությունը՝ գիշերով նա հեռացավ)*

• Ինչպիսի՞ն էր փղերի ընտանիքը: *(Մեծ, համերաշխ, երջանիկ, կատակասեր, ուրախ)*

• Ինչպիսի՞ փղեր էին ապրում այդ ընտանիքում: *(Նիհար, գեր, բարձրահասակ, ցածրահասակ, ծեր, երիտասարդ, տարբեր, միագույն և մի գույնզգույն՝ Էլմերը)*

Այստեղ երեխաները արդեն կռահում են, որ էլմերը գույնզգույն փղի անունն է:

• Ինչո՞վ էր Էլմերը տարբերվում մյուս փղերից: (*Էլմերը մյուսներից տարբերվում էր իր գույնով՝ փղագույն չէր, նման էր գույնզգույն վերմակի: Նա ուրախ էր, կատակասեր, սրամիտ, չարաճճի, ուրախացնում էր բոլորին)*

• Ինչո՞ւ էր փղերի ընտանիքը երջանիկ: *(Որովհետև ընտանիքում ապրում էր Էլմերը, միշտ կատակներ էին անում, ծիծաղում էին, ուրախանում)*

• Ինչո՞ւ Էլմերը որոշեց հեռանալ: *(Նա մտածում էր, որ ծանր բան է ուրիշներից տարբեր լինելը և որոշեց նմանվել ընտանիքի մյուս անդամներին)*

### 7.3.3. Աշխատանք տեքստի նկարազարդման շուրջ

Ըստ նկարատակի գրության, Էլմերը նկարում հաշվել էր փղի 16 ոտք:

Նա չէր նկատել հեռվում երևացող փղիկին: Այսինքն՝ կլինի 20 ոտք:

Սակայն, եթե Էլմերն էլ է եղել ներկա. Չէ՞ որ նա է հաշվել փղերի ոտքերը, ապա իր ոտքերն էլ եթե հաշվեր, կստացվեր՝ 24:

Հենց էլմերի շնորհիվ էր, որ ընտանիքի բոլոր փղերը երջանիկ էին: Երբեմն ինքն էր կատակում փղերի հետ, երբեմն փղերն էին իր հետ կատակում: Որտեղ էլմերը հայտնվում էր, այնտեղ խինդ և ուրախություն էր լինում: Օրերից մի օր էլմերը մտածեց, որ ծանր բան է ուրիշներից տարբեր լինելը և որոշեց նմանվել իր ընտանիքի մյուս անդամներին: Գիշերով նա հեռացավ:



• Ինչպիսի՞ն էր փղերի ընտանիքը:
• Ինչպիսի՞ փղեր էին ապրում այդ ընտանիքում:
• Ինչո՞վ էր Էլմերը տարբերվում մյուս փղերից:
• Ինչո՞ւ էր փղերի ընտանիքը երջանիկ:
• Ինչո՞ւ Էլմերը որոշեց հեռանալ:

Սկսեց թափառել ջունգլիում: Բոլորը նրան ճանաչում էին, բարևում.
– Բարև՛, էլմե՛ր:
– Բարև՛,– պատասխանում էր էլմերը:
Վերջապես նա գտավ մի թուփ, որի վրա աճում էին փղագույն պտուղներ: Նա թափ տվեց թուփը, թավալվեց պտուղների մեջ, իրեն ամբողջովին ներկեց փղագույն:

ԱՉՔԻ ԱՌԱՋ
*երբեմն ընդհանուր*

Տունդարձի ճանապարհին նրա տված բարևին բոլորը պատասխանում էին.
– Բարև՛, փղի՛կ:
Էլմերը ժպտում էր: Նա գոհ էր, որ իրեն չեն ճանաչում:

• Ինչպե՞ս էին ողջունում ջունգլիի կենդանիները Էլմերին: Ինչո՞ւ:
• Ինչպե՞ս Էլմերը դարձավ փղագույն:
• Ի՞նչ էր զգում Էլմերը, երբ նմանվել էր բոլորին:



II հատվածի ընթերցում *(մինչև վերջ):*

• Ինչպե՞ս էին ողջունում ջունգլիի կենդանիները Էլմերին: Ինչո՞ւ: *(Դիմում էին նրան անունով, քանի որ բոլորը ճանաչում էին Էլմերին)*

• Ինչպե՞ս Էլմերը դարձավ փղագույն: *(Նա գտավ փղագույն պտուղներով թուփ, թափ տվեց այն և թավալվեց այդ պտուղների մեջ)*

• Ի՞նչ էր զգում Էլմերը, երբ նմանվել էր բոլորին: *(Նա գոհ էր, որ իրեն չեն ճանաչում)*

## Առաջադրանքներ

**1** Կազմի՛ր 3 եռավանկ բառ՝ յուրաքանչյուր փղիկի պատկերից ընտրելով մեկ վանկ: Եթե ճիշտ միացնես վանկերը, կիմանաս, թե ինչպիսի ընտանիքում էր ապրում Էլմերը:




**2** Ընդգծի՛ր **մայրիկ, մայրենի, մայրանալ, անմայր, մայրական, մայրաբար** բառերի արմատը:

**3** Ուշադի՛ր կարդա բառերը, ընդգծի՛ր արմատները.

**անտուն, հայրենի, հավիկ, նավակ, դահուկորդ, լավություն, զանգակ, ուլիկ:**

Դու ընդգծեցիր միայն արմատից կազմված պարզ բառեր:

### ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ինձ զարմացրեց ...

Ինձ ուրախացրեց ...

Ինձ անհանգստացրեց ...

### 7.3.4. Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ

**Առաջադրանք 1.**

Կազմի՛ր 3 եռավանկ բառ՝ յուրաքանչյուր փղիկի պատկերից ընտրելով մեկ վանկ: Եթե ճիշտ միացնես վանկերը, կիմանաս, թե ինչպիսի ընտանիքում էր ապրում Էլմերը:

Կարելի է աշխատանքը կազմակերպել հետևյալ քայլաշարով.

- Դասարանը բաժանել խմբերի:
- Աշակերտների խմբերին տալ գունավոր փղի նկարով ծրարներ (բոլոր խմբերին նույն աշխատանքը), որոնց մեջ դրված են վանկերը՝ *հա, եր, մի, ա, ջա, մե, գույն, բաշխ, նիկ:*
- Հանձնարարել ծրարից հանել բառերի մասերը և միացնելով համապատասխան մասերը՝ կազմել բառեր: (Ստացվում են *համերաշխ, երջանիկ, միագույն* բառերը)
- Կարդալ ստացված բառերը և փակցնել նախապես կտրտած թղթե շերտիկների վրա: (Ուսուցիչը նախապես պատրաստած է լինում շերտիկների մեծադիր տարբերակը, որոնց վրա գունավոր տառերով գրված են այդ բառերը)
- Շերտիկները փակցնել խթանման փուլում ստացված գունավոր փղի շուրջ:
- Ամփոփել՝ Էլմերը ապրում էր համերաշխ, երջանիկ, միագույն ընտանիքում:

### 7.3.5. Աշխատանք պարզ բառերը ճանաչելու շուրջ

**Առաջադրանք 2.**

Երեխաները առանց դժվարության գտնում են տրված բառերի ընդհանուր մասը՝ արմատը (**մայր**): Այս առաջադրանքը հող է նախապատրաստում հաջորդ աշխատանքը կատարելու և **պարզ բառերը** ճանաչելու համար:

**Առաջադրանք 3.** Կատարելով առաջադրանքը՝ երեխաները գտնում են տրված բառերի արմատները՝ **տուն, հայր, հավ, նավ, զանգ, ուլ, կար, դահուկ, լավ,** որոնք էլ հենց պարզ բառերն են:

Այսպիսով, գործնական ճանապարհով երեխաներին մատուցվում է, թե ինչ են **պարզ բառերը:**

### 7.3.6. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)

Երեխաները լրացնում են նախադասություններն ու կարդում:

Ինձ զարմացրեց …..

Ինձ ուրախացրեց …..

Ինձ անհանգստացրեց ….

Կարելի է այս նախադասությունների պատասխանները համեմատել գլխագրում երեխաների կարդացածների հետ և անել անհրաժեշտ հետևություններ: Արդյո՞ք գլխագրի բոլոր կետերում դրված նպատակները իրականացվեցին դասի ընթացքում:

Ուսուցիչը լսում է բոլորի մտքերը, խրախուսում և ամփոփում դասը:

## 7.4. ԷԼՄԵՐ (ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷԼՄԵՐԸ ՋՈՒՆԳԼԻՈՒՄ ԿՈՐՑՐԵՑ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԻՑ ԳՏԱՎ)

Այս դասին դու.

- Կիմանաս, թե փղերեն ինչ է նշանակում Էլմեր:
- Կպարզես, որ մյուսներից տարբեր լինելն այնքան էլ վատ բան չէ:
- Կծանոթանաս ածանցավոր բառերին:

vachagan.am

### ԷԼՄԵՐԸ

#### ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷԼՄԵՐԸ ՋՈՒՆԳԼԻՈՒՄ ԿՈՐՑՐԵՑ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԻՑ ԳՏԱՎ



Երբ էլմերը վերադարձավ ընտանիք, բոլորն անտարբեր նայեցին նրան. չէ՞ որ նա սովորական մի փիղ էր դարձել: Էլմերը հանկարծ զգաց, որ ինչ-որ բան այն չէ, թեև ամեն բան նույնն էր՝ և՛ ջունգլին, և՛ երկինքը, և՛ անձրևաբեր ամպերը, և՛ փղերը, որոնք անշարժ կանգնած էին: Նա իր ընտանիքի փղերին երբեք այդքան լուրջ չէր տեսել: Էլմերը նայում էր նրանց ու ծիծաղը հազիվ էր զսպում:

- Ինչո՞ւ էին բոլորը անտարբեր նայում Էլմերին:
- Ինչո՞ւ էր Էլմերը հազիվ զսպում ծիծաղը:
- Էլմերը կուզե՞ր, որ իրեն նորից դիմեն անունով:

Էլմերը կնճիթը վեր ցցեց ու ինչքան ուժ ուներ փողհարեց*.

– Ո՜ւուուուուու՜ւ...

Փղերը մի պահ ցնցվեցին, հետո հասկացան, որ փողհարողը Էլմերն է:

Մինչ փղերը ծիծաղում էին, ուժեղ անձրև սկսվեց, և փղերի ընտանիքում նորից հայտնվեց գույնզգույն փիղը:

– Օ՜, Էլմե՜ր,– ասաց ավագ փիղը,– սա քո ամենալավ կատակն էր:

Փղերը որոշեցին ամեն տարի դիմակահանդես անել ու նշել այդ օրը, իրենք իրենց կներկեն գույնզգույն, իսկ Էլմերն իրեն կներկի փղագույն: Եթե այդ օրը դու տեսնես փղագույն մի փիղ, իմացիր՝ դա Էլմերն է:

- Ինչպե՞ս փղերն իմացան, որ սովորական փղիկը Էլմերն է:
- Ի՞նչ կատարվեց փղերի հետ, երբ Էլմերը փողհարեց:
- Ի՞նչ որոշեցին փղերը:

* **Փողհարել** – այստեղ՝ կնճիթը վերև բարձրացնելով՝ բարձր ու ձիգ ձայն հանել:

### 7.4.1. Աշխատանք գլխագրի շուրջ

**Դասի սկզբում** երեխաները կարդում են գլխագրի կետերը:

**Առաջին կետով** նրանք կիմանան թե փղերեն ինչ է նշանակում Էլմեր: Սա դարձյալ փոքրիկ «սադրանք» պարունակող կետ է, և երեխաները անպայման կցանկանան իմանալ դա:

**Երկրորդ կետի** շուրջ երեխաների կարծիքները կարող են տարբեր լինել: Ուսուցիչը կարող է ասել, որ պատմության շարունակությունը կարդալուց հետո կտեսնենք, թե այդ հարցը ինչպես է լուծել պատմության հեղինակը:

**Երրորդ կետում** երեխաները կարդում են, որ կլսեն «Ածանցավոր բառերի երգը», որը, բնականաբար, կխթանի նրանց երևակայությունը: Նրանք կզարմանան, որ ածանցավոր բառերն էլ ունեն իրենց երգը:

### 7.4.2. Աշխատանք տեքստի վերնագրի շուրջ

Այնուհետև ուսուցիչը կազմակերպում է քննարկում վերնագրի շուրջ՝ երեխաներին ուղղելով հետևյալ հարցերը:

*Հնարավո՞ր է արդյոք կորցնել անունը:*

*Ի՞նչ կարող է լինել այդ դեպքում:*

Այստեղ QR-կոդի միջոցով ուսուցիչը երեխաներին կարող է ցուցադրել ԷԼՄԵՐԸ պատմության երկրորդ մասի տեսահոլովակը:

### 7.4.3. Աշխատանք տեքստի շուրջ

Տեքստն ընթերցվում է հատվածներով, յուրաքանչյուր հատվածից հետո պատասխանում են հարցերին:

I հատված (մինչև «…ծիծաղը հազիվ էր զսպում»):

• Ինչո՞ւ էին բոլորը անտարբեր նայում Էլմերին: (Նա դարձել էր սովորական մի փիղ)

• Ինչո՞ւ էր Էլմերը հազիվ զսպում ծիծաղը: (Որովհետև փղերն անշարժ և լուրջ կանգնած էին, իրեն չէին ճանաչում)

• Էլմերը կուզե՞ր, որ իրեն նորից դիմեն անունով: (Այո, որովհետև Էլմերը կուզեր, որ իրեն ճանաչեն, անունով դիմեն, իր կատակներից ուրախանան, շարունակեն կատակել իր հետ)

II հատված (մինչև վերջ):

Ինչպե՞ս փղերն իմացան, որ սովորական փղիկը Էլմերն է: (Էլմերը կնճիթը վեր ցցեց ու ինչքան ուժ ուներ փողհարեց)

• Ի՞նչ կատարվեց փղերի հետ, երբ Էլմերը փողհարեց: (Նրանք մի պահ ցնցվեցին, հետո սկսեցին ծիծաղել)

• Ի՞նչ որոշեցին փղերը: (Փղերը որոշեցին ամեն տարի դիմակահանդես անել ու նշել այդ օրը: Որոշեցին, որ այդ օրը իրենք իրենց կներկեն գույնզգույն, իսկ Էլմերը իրեն կներկի փղագույն)

• Ի՞նչ կատակներ էին անում փղերն ու Էլմերը իրար հետ. ականջ դիր ու պատմիր:

• Էլմերը փոխեց իր ընտանիքի տրամադրությունը, իսկ դու կարողանո՞ւմ ես փոխել քո ընտանիքի անդամների տրամադրությունը: Ինչպե՞ս:

### 7.4.3. Աշխատանք տեքստի շուրջ

• Որտե՞ղ էին ապրում փղերը: (Ջունգլիում, հեռավոր երկրում)

• Ի՞նչ ընդհանուր բան ունեին նրանք: (Նրանք բոլորը երջանիկ էին)

• Ինչո՞վ էր Էլմերը տարբերվում մյուսներից: (Էլմերը մյուսներից տարբերվում էր իր գույնով՝ փղագույն չէր, նրա մաշկը նման էր գույնզգույն վերմակի: Նա ուրախ էր, կատակասեր, սրամիտ, չարաճճի, ուրախացնում էր բոլորին)

• Ինչու՞ Էլմերը որոշեց դառնալ բոլորի նման: (Որովհետև նրան թվում էր, թե շատ ծանր բան է ուրիշներից տարբեր լինելը, նրան հետաքրքիր էր՝ եթե ինքը մյուսներին նման լինի, ինչպիսի՞ն կլինի իր կյանքը)

• Ի՞նչ արեց նա մի անգամ գիշերով: (Էլմերը գիշերով հեռացավ և սկսեց թափառել ջունգլիում)

• Ի՞նչ էր փնտրում նա և ինչո՞ւ: (Նա հեռացավ, որպեսզի իրեն ներկի փղագույն և դառնա մյուսների նման)

• Ինչպե՞ս էին ողջունում ջունգլիի կենդանիները Էլմերին: Ինչո՞ւ: (Բոլորը Էլմերին ողջունում էին անունով, որովհետև բոլորը ճանաչում էին նրան)

• Ինչպե՞ս նա ներկվեց փղագույն: (Նա գտավ մի թուփ, որի վրա աճում էին փղագույն պտուղներ, թափ տվեց այդ պտուղները և մի լավ թավալվեց նրանց մեջ)

• Ինչպե՞ս վերաբերվեցին ընկերները Էլմերին, երբ նա ներկվեց փղագույն: (Ընկերները չէին ճանաչում Էլմերին, բարևելիս չէին դիմում նրան անունով)

• Ի՞նչ տրամադրություն էր փղերի ընտանիքում, երբ Էլմերը վերադարձավ: (Փղերը լուրջ էին և անշարժ կանգնած)

• Ինչպե՞ս փոխվեց փղերի ընտանիքում տրամադրությունը Էլմերի փողհարելուց հետո: (Փղերը մի պահ ցնցվեցին, հետո, հասկանալով, որ փողհարողը Էլմերն է, սկսեցին մի լավ ծիծաղել)

• Քո կարծիքով՝ զղջա՞ց Էլմերը, որ դարձել է բոլորի նման: (Այո, որովհետև, օրինակ՝ Էլմերը կուզեր, որ իրեն ճանաչեն, անունով դիմեն, իր կատակներից ուրախանան, շարունակեն կատակել իր հետ)

• Ի՞նչ որոշում կայացրին փղերը: (Նրանք որոշեցին ամեն տարի դիմակահանդես անել և նշել Էլմերի օրը)

• Էլմերը փոխեց իր ընտանիքի տրամադրությունը, իսկ դու կարողանո՞ւմ ես փոխել քո ընտանիքի անդամների տրամադրությունը: Ինչպե՞ս: (Ուսուցիչը լսում է երեխաների կարծիքները: Կարող են լինել տարբեր պատասխաններ, օրինակ՝ երբ ես կատակներ եմ անում, ծնողներս ուրախանում են, երբ սենյակս չեմ հավաքում, մայրիկս տխրում է և այլն)

• Ի՞նչ զգացմունքներ ունեցաք տեքստի առաջին հատվածը կարդալիս: (Կարող են լինել նմանատիպ պատասխաններ՝ ուրախացանք, զարմացանք, զգացինք, որ տարբեր լինելը հետաքրքիր էր, ծանր, բայց ուրախ և այլն)

• Ի՞նչ հասկացար հեքիաթի վերջին հատվածը ընթերցելիս:

*(Որ տարբեր լինելը վատ բան չէ, որ ինչքան էլ դու տարբեր ես, մեկ է՝ նման ես մյուսներին, որ լավ է, երբ քո շուրջը կան քեզանից տարբեր մարդիկ, որ եթե ինչ-որ բանով դու տարբեր ես, շատ բաներով էլ նման ես մյուսներին:)*

## Հարցեր

1. Գտի՛ր և կարդա՛.
   - ամենաուրախ հատվածը,
   - ամենագունեղ հատվածը:
2. Կարդա՛ այն հատվածը, որը համապատասխանում է նկարազարդմանը:
3. Ի՞նչ կատակներ էին անում փղերն ու էլմերը իրար հետ. ակա՛նջ դիր ու պատմի՛ր:

## Առաջադրանքներ

### Գիտե՞ս, որ...

Գիտե՞ս, որ...

Փղերը չորքոտանի միակ կենդանիներն են, որոնք ունեն չորս ծալվող ծունկ: Մնացած բոլոր չորքոտանի կենդանիներն ունեն երկու ծալվող ծունկ՝ առջևի ոտքերին:

### 1 ՄԻՆ ՈՒ ՁԻՆ

**ՓԻՂՆ ՈՒ ՁԻՆ**

Փիղն է միայն չորքոտանի,
Որ չորս ծալվող ծնկներ ունի.
Եկեք հաշվենք, թե միասին
Քանի ծալվող ծնկներ ունեն
Երկու փիղը և երկու ձին:

### 2

Կարդա՛ հանելուկը, արտագրի՛ր և գուշակի՛ր պատասխանը:

Կա մի հսկա կենդանի,
Ինչքան բարձես, կտանի:
Նրա քիթը կախ է միշտ,
Մի՞թե նա էլ ունի վիշտ:

### 3

- Կարդա՛, թե ինչ է գրված:
- Ընկերոջդ բացատրի՛ր, թե դու ինչպես լուծեցիր նկարելուկը:

2=L

3=Ր

### 7.4.5. «Գիտե՞ս, որ …» տեղեկատվական շարքի նյութի ընթերցում

Փղերը միակ չորքոտանի կենդանիներն են, որոնք ունեն 4 ծալվող ծունկ: Մնացած բոլոր չորքոտանի կենդանիներն ունեն 2 ծալվող ծունկ՝ առջևի ոտքերին:

Այս նյութը կարող է զարմանք առաջացնել երեխաների մեջ: Իրոք՝ բացառիկ են փղերը: Շատերին թվում, թե չորքոտանի կենդանիների վերջին ոտքերին էլ ծունկ կա: Սակայն այդպես չէ: Այդ ոտքերը պարզապես ունեն կորություն և չեն ծալվում:

**Առաջադրանք 1.**
**Փիղն ու ձին**
Փիղն է միայն չորքոտանի,
Որ չորս ծալվող ծնկներ ունի.
Եկեք հաշվենք, թե միասին
Քանի ծալվող ծնկներ ունեն
Երկու փիղը և երկու ձին:
(8 + 4 =12 ծունկ)

Այս առաջադրանքը միջառարկայական կապ է հաստատում մայրենիի և մաթեմատիկայի միջև:

**Առաջադրանք 2.** ՀԱՆԵԼՈՒԿ

Աշակերտները լուռ կարդում են հանելուկը և գուշակում պատասխանը: Բնական է, աշակերտները հեշտությամբ կգտնեն հանելուկի պատասխանը, կսովորեն իրենց դասի հերոսի մասին հանելուկ: Այստեղ նաև կարևոր է, որ երեխաները զգան թաքնված հումորը, որն արտահայտված է դարձվածքով՝ քիթը կախ:

Կա մի հսկա կենդանի,
Ինչքան բարձես, կտանի:
Նրա քիթը կախ է միշտ,
Մի՞թե նա էլ ունի վիշտ:
*(փիղ)*

**Առաջադրանք 3.** ՆԿԱՐԵԼՈՒԿ

Կարդա՛, թե ինչ է գրված: Երեխաներն արդեն գիտեն, որ եթե որևէ նկարի տակ գրված է 2=լ տիպի հավասարում, ապա պետք է նկարի անվանման մեջ 2-րդ տառը փոխարինել լ տառով: Այսինքն՝ նկարելուկով կարդացվում է **Էլմեր** բառը:



**4** **Անձրևաբեր, անձրևոտ, անձրևանոց, անձրևային** բառաշարքից ընտրի՛ր համապատասխան բառը և տեղադրի՛ր նախադասության մեջ:

Առավոտյան _____ եղանակ էր:
Երկնքում կուտակվեցին _____ ամպերը:
Այս տարվա գարունը շատ _____ էր:
Մայրիկը մի գեղեցիկ _____ նվեր ստացավ:

**5** **Հայր** բառով և տրված մասնիկներով կազմի՛ր նոր բառեր: Քո կազմած բառերի մեջ այդ մասնիկները՝ **ան-, -իկ, -ական, -աբար, -ենի, -ություն, ածանցներ** են:

*Օրինակ՝* **հայր + աբար = հայրաբար, ան + հայր = անհայր:**

Դու կազմեցիր **ածանցավոր** բառեր:

**6** Գտի՛ր բառի արմատը և ածանցը.

| | | | |
|---|---|---|---|
| նավակ | խոզուկ | ձմեռային | խմորեղեն |
| քարե | արևոտ | ձյուղավոր | երգիչ |
| այծիկ | տոնական | գազանանոց | անգին |
| ընկերուհի | գիշերային | ձաշարան | դժգույն |

*Օրինակ՝* **նավակ = նավ + ակ:**

**7** Արտագրի՛ր «Ածանցավոր բառերի երգի» ընդգծված բառերը: Առանձնացրո՛ւ արմատները և ածանցները:

*Օրինակ՝* պոչատ = պոչ + ատ:

**ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԵՐԳԸ**

**Անվախ, անգին** և **տոնական,**
**Դժգույն, պոչատ, սովորական,**
**Անբիծ, անկեղծ** և **մայրենի,**
**Լողորդ, նավակ** և **բալենի,**
Մեր բառերն են հնամենի:

Նման բառեր՝ ինչքան ուզեք,
Արմատ ունեն և ածանցներ:
Այս բառերին շատ ենք սովոր,
Դրանք բառ են **ածանցավոր:**



**Առաջադրանք 4.** Այս առաջադրանքով, գործնական եղանակով, երեխաներին մատուցվում է ածանցի գաղափարը՝ առանց նշելու **ածանց** տերմինը: Երեխաները տեսնում են, որ **անձրև** բառին ավելացվել են ինչ-որ վերջավորություններ, և **անձրև** բառը փոխել է իր իմաստը: Լրացնելուց հետո ստացվում են հետևյալ նախադասությունները:

Առավոտյան **անձրևային** եղանակ էր:

Երկնքում կուտակվեցին **անձրևաբեր** ամպեր;
Այս տարվա գարունը շատ **անձրևոտ** էր:
Մայրիկը մի գեղեցիկ **անձրևանոց** նվեր ստացավ:

**Առաջադրանք 5.**

Այս առաջադրանքի միջոցով ևս գործնական ճանապարհով ներմուծվում են **ածանց** և **ածանցավոր բառեր** հասկացությունները:

Ըստ տրված օրինակների՝ **հայր + աբար = հայրաբար, ան + հայր = անհայր,** երեխաները կազմում են **հայրիկ, հայրական, հայրենի, հայրություն** բառերը:

**Առաջադրանք 6.** Գտի՛ր բառի արմատը և ածանցը:

Ըստ տրված օրինակի՝ **նավակ = նավ + ակ**, երեխաները գտնում են մնացած բառերի արմատն ու ածանցը:

| | |
|---|---|
| քարե = քար + ե | ճյուղավոր = ճյուղ + ավոր |
| այծիկ = այծ + իկ | գազանանոց = գազան + անոց |
| ընկերուհի = ընկեր + ուհի | ճաշարան = ճաշ + արան |
| խոզուկ = խոզ + ուկ | խմորեղեն = խմոր + եղեն |
| արևոտ = արև + ոտ | երգիչ = երգ + իչ |
| տոնական = տոն + ական | անգին = ան + գին |
| գիշերային = գիշեր + ային | դժգույն = դժ + գույն |
| ձմեռային = ձմեռ + ային | |

### 7.4.6. Աշխատանք «Ածանցավոր բառերի երգի» շուրջ

**Առաջադրանք 7.**

Երեխաները կարդում են երգը: Երգի բառերն այնպես են ընտրված, որ բավարար քանակով ածանցավոր բառեր ներգրավված լինեն երգի մեջ: Երեխաները երգից դուրս են գրում ածանցավոր բառերը, առանձնացնում ածանցները: Երեխաներին պետք է բացատրել, որ **պոչատ** բառի մեջ -**ատ** ածանցը նշանակում է որևէ բան չունեցող, տվյալ դեպքում՝ պոչ չունեցող: Այդպիսի բառեր են՝ **գունատ** – գույն չունեցող, **փայլատ** – փայլ չունեցող, **պոզատ** – պոզ չունեցող, **քթատ** – քիթ չունեցող, **ակնատ** – աչք չունեցող, **քնատ** – քուն չունեցող:

Երգից դուրս են գրում այս բառերը.
**անվախ** = ան + վախ (վախ չունեցող)
**անգին** = ան + գին (գին չունեցող)
**տոնական** = տոն + ական (տոնին վերաբերող, տոնին հատուկ)
**դժգույն** = դժ + գույն (գույնը գցած, գունատ)
**պոչատ** = պոչ + ատ (պոչ չունեցող)
**սովորական** = սովոր + ական (շատ տարածված, հասարակ, ամենօրյա)
**անբիծ** = ան + բիծ (բիծ չունեցող)
**անկեղծ** = ան + կեղծ (կեղծություն չունեցող)
**բալենի** = բալ + ենի (բալի ծառ, բալ տվող ծառ)

**նավակ** = նավ + ակ (փոքրիկ նավ)
**ածանցավոր** = ածանց + ավոր (ածանց ունեցող)

8 • Մտածի՛ր՝ ինչով ես դու տարբերվում քո դասընկերներից և ավարտի՛ր նախադասությունը:

**Ե՛ս եմ մեր դասարանի Էլմերը, որովհետև ես** _____:

• Լսի՛ր ընկերներիդ և գրի՛ր, թե որ ընկերոջդ և ինչով ես դու նման:

**Ես և** _____ **նման ենք, որովհետև երկուսս էլ** _____:

9 Դու իմացար, որ հեռու-հեռվում ապրում է Էլմեր անունով մի փղիկ: Պատկերացնում ես, նա էլ քեզ նման օրագիր է պահում: Կարդանք նրա օրագրից մի էջ:

vachagan.am

**ԷԼՄԵՐԻ «ԲԱՐԵ՛Վ, ԵՍ ԵՄ» ՕՐԱԳԻՐԸ**

Բարև՛, ես էլմերն եմ: Կարող ես կարդալ մի պատմություն իմ օրագրից և ավելի լավ ճանաչել ինձ:

Երբ ես ծնվեցի, երկնքում կայծակներ էին խփում, ամպերը որոտում էին, անձրև էր գալիս: Մայրս նայեց երկնքին, կնճիթը բարձրացրեց ու փողհարեց:

Անձրևը կտրվեց, ու երկնքում երևաց ծիածանը: «Ի՜նչ սիրուն է, ես էլ եմ ուզում այդպիսին լինել»,– մտածեցի ես... Ու հանկարծ ծիածանն իջավ ներքև, դարձավ գույնզգույն վերմակ ու ծածկեց ինձ: Մայրս գորովանքով նայեց ինձ ու շշնջաց՝ էլմե՜ր, որը փղերեն նշանակում է «ծիածան»: Ես այդպես բոլորի համար դարձա էլմեր:

Մեր ընտանիքում շատ ենք կատակում, ծիծաղում, ուրախանում: Բոլորն ինձ ասում են ծիածան, իսկ ես նրանց ասում եմ մոխրագույն ամպեր: Շատ խնդալու է:

**Առաջադրանք 8.**

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, որ մտածեն և գրեն, թե ինչով են տարբերվում մյուսներից, ինչն է, որ իրենք ավելի լավ են անում, քան մյուսները, և հակառակը:

Երեխաները կիսատ նախադասությունները լրացնում են ըստ իրենց պատկերացումների. ինչո՞վ են նման իրենք իրենց հասակակիցներին, ինչո՞վ են տարբեր: Դա լա՞վ է, թե՞ վատ: Սկզբում դա կարելի է անել բանավոր, որպեսզի երեխաները արտահայտեն ու հիմնավորեն իրենց կարծիքները, այնուհետև՝ գրավոր: Բերում են նմանությունների ու տարբերությունների օրինակներ: Դատողություններ են անում, որ չնայած մարդիկ տարբեր են, բայց կարող են համերաշխորեն ապրել միասին:

Այս աշխատանքը նպատակահարմար է կատարել դասարանում, որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա ուղղորդելու, կանոնակարգելու, համակարգելու աշխատանքը, հետևելու երեխաների բանավոր ու գրավոր խոսքի ճիշտ կառուցմանը:

Ուսուցիչը հորդորում է, որ երեխաները ուշադիր լսեն միմյանց, որպեսզի բացահայտեն իրենց նմանություններն ու տարբերությունները:

Ամփոփելիս կարելի է նշել, որ դասարանի աշակերտները նման են և տարբեր, ինչպես ջունգլիում ապրող հեքիաթային փղերի ընտանիքը, սակայն պետք է ձգտել լինելու համերաշխ և սիրով, ինչպես Էլմերի ընտանիքը:

### 7.4.7. Աշխատանք տեքստի վերարտադրման շուրջ

Ոչ ստանդարտ մտածողությունը, երևույթներն անսովոր տեսանկյունից դիտարկելու կարողությունը, որոնք հիմք են հանդիսանում ստեղծարար մտածողության համար, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման նպատակով, կարելի է երեխաներին առաջարկել պատմել տեքստի հերոսների՝ Էլմերի, փղերի անունից, կամ պատմել այնպես, ասես հեքիաթի հերոսը ինքն է:

Էլմերի անունից տեքստը վերապատմելուց հետո ուսուցիչն աշակերտներին ասում է, որ այդ մասին Էլմերն էլ է գրել իր «Բարև՛, ես եմ» օրագրում և համաձայնել է, որ ծանոթանանք իր գրածին:

Այնուհետև առաջարկում է բացել դասագրքերը և կարդալ Էլմերի գրառումը:

### 7.4.8. Աշխատանք Էլմերի «Բարև՛, ես եմ» օրագրի շուրջ

**Առաջադրանք 9.** Կարելի է միանգամից QR-կոդի միջոցով լսել և դիտել Էլմերի «Բարև՛, ես եմ» օրագրի էջը:

Պետք է երեխաներին բացատրել, որ ինչ-որ մեկի անձնական գրառումները կարդալու համար պետք է ստանալ հեղինակի թույլտվությունը: Իսկ Էլմերի օրագիրը կարդալու թույլտվություն տվել է անձամբ Էլմերը:

Էլմերի «Բարև՛, ես եմ» օրագիրը

Երբ ես ծնվեցի, երկնքում կայծակներ էին խփում, ամպերը որոտում էին, անձրև էր գալիս: Մայրս նայեց երկնքին, կնճիթը բարձրացրեց ու փողհարեց:

Անձրևը կտրվեց, ու երկնքում երևաց ծիածանը: «Ի՜նչ սիրուն է, ես էլ եմ ուզում այդպիսին լինել» մտածեցի ես… Ու հանկարծ ծիածանն իջավ ներքև, դարձավ գույնզգույն վերմակ ու ծածկեց ինձ: Մայրս գորովանքով նայեց ինձ ու շշնջաց՝ Էլմե՛ր, որը փղերեն նշանակում է «ծիածան»: Ես այդպես բոլորի համար դարձա Էլմեր:

Մեր ընտանիքում շատ ենք կատակում, ծիծաղում, ուրախանում: Բոլորն ինձ ասում են ծիածան, իսկ ես նրանց ասում եմ մոխրագույն ամպեր: Շատ խնդալու է:

Մի օր ես էլ ուզեցի դառնալ մոխրագույն ամպիկ: Ջունգլիում բոլորն ինձ ճանաչում էին: Հարցուփորձ անելով գտա փղաթուփը, թափ տվեցի, թավալվեցի ու դարձա փղագույն: «Ի՜նչ լավ եղավ»,- մտածեցի ես: -Ինձ էլ ոչ ոք չի ճանաչի, ես կարծես թե անտեսանելի լինեմ: Երբ տուն էի վերադառնում, ինձ, իրոք, ոչ ոք չէր ճանաչում, բոլորն անտարբեր էին իմ նկատմամբ: Ես ուրախ էի, բայց տխուր էի: Եկա հասա մեր փղահովիտը: Մերոնք էլ ինձ չճանաչեցին: Տխուր ու լուրջ կանգնած էին՝ երևի մտածում էին էն մյուս Էլմերի մասին: «Ես այստեղ եմ»,- մտածեցի ես ու, կնճիթս վեր բարձրացնելով, փողհարեցի: Բոլորը զարմացած նայեցին ինձ ու գլխի ընկան, որ ես եմ՝ իրենց սիրելի Էլմերը: Իմ փողհարելուց ամպերը շարժվեցին, կայծակներ որոտացին, անձրև եկավ, ու բոլորը նորից տեսան իրենց սիրելի Ծիածանին:

## ՏԱՌԱՇԵՆ ՔԱՂԱՔԸ (հատված վիպակից)

Վիշապը, կախարդելով, փղին ու բորենուն միացրել էր իրար: Ստացվել էր Փղաբորենի զարհուրելի կենդանին: Նա կարող էր կծելով փշուր-փշուր անել ժայռը, հաստաբուն ծառերը պոկոտել բարակ խոտի նման: Նա այնքան ուժեղ էր, որ ինքն իրեն կարողանում էր կնճիթով օդ բարձրացնել: Վիշապը փղաբորենուն պահակ էր դրել բանտարկված Մ, Ս, Ն, Թ, Ց տառերի վրա:

Սակայն օգնության հասած արիասիրտ Ա-ն, ուժեղ ՈՒ-ն և իմաստուն Ի-ն ձայնավոր էին. սուլեցին՝ ա՜-ի՜-ո՜ւ և քամու նման ներս մտան խիտ ձաղերի արանքներով ու փաթաթվեցին իրենց բանտարկված բաղաձայն ընկերներին: Եվ… ա՜յ քեզ հրաշք. տառերը միացան, ու լույսի միջից զենք ու զրահը հագին դուրս եկավ ամենազորեղ ու ամենակարող ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ: Ահա թե ինչ զորեղ բառ դարձան Մ, Ս, Ն, Թ, Ց, Ի, Ա, ՈՒ տառերը միասին:

Փղաբորենին սուրաց դեպի ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ: Սակայն ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆՆ իր կախարդական սրով նրան բաժանեց երկու մասի՝ Փղի ու Բորենու: Փիղը հրձվանքից կնճիթը ցցեց ու շեփորեց ամրոցով մեկ: Բորենին այնքան էլ չուրախացավ. ատամները կրճտացնելով, պոչը քաշած մի կողմ փախավ:



Մի օր ես էլ ուզեցի դառնալ մոխրագույն ամպիկ: Ջունգլիում բոլորն ինձ ճանաչում էին: Հարցուփորձ անելով գտա փղաթուփը, թափ տվեցի, թավալվեցի ու դարձա փղագույն: «Ի՜նչ լավ եղավ»,– մտածեցի ես: Ինձ էլ ոչ ոք չի ճանաչի, ես կարծես թե անտեսանելի լինեմ:

Երբ տուն էի վերադառնում, ինձ, իրոք, ոչ ոք չէր ճանաչում: Ես ուրախ էի, բայց տխուր էի: Եկա-հասա մեր փղահովիտը: Մերոնք էլ ինձ չճանաչեցին: Տխուր ու լուրջ կանգնած էին. երևի մտածում էին էն մյուս էլմերի մասին: «Ես այստեղ եմ»,– մտածեցի ես ու, կնճիթս վեր բարձրացնելով, փողհարեցի: Բոլորը զարմացած նայեցին ինձ ու գլխի ընկան, որ ես եմ՝ իրենց սիրելի էլմերը: Իմ փողհարելուց ամպերը շարժվեցին, կայծակներ որոտացին, անձրև եկավ, ու բոլորը նորից տեսան իրենց սիրելի Ծիածանին:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ինչքան կուզես տար ու բեր,
Մենք նման ենք ու տարբեր,
Նման-տարբեր, ուս ուսի,
Ապրում ենք մենք միասին:

153

**7.4.9. Դասից քաղած իմ պտուղները (ամփոփում և անդրադարձ)**

Երեխաները կարդում են անավարտ նախադասությունները, արտահայտում իրենց կարծիքները և լրացնում նախադասությունները:

Ես իմացա_____

Ինձ զարմացրեց_____

Ես կարողացա_____

Ինձ դուր եկավ---------

*Անավարտ նախադասությունները լրացնելու օրինակներ:*

**Ես իմացա** որ, փղերն ունեն 4 ծունկ: Իմացա **գույնզգույն, երբեմն, երբեք, անձրև, ընդհանուր** բառերի ճիշտ գրությունը: Իմացա, թե ինչ են ածանցավոր բառերը, և այլն:

**Ինձ զարմացրեց**, որ կար գույնզգույն փիղ, որն ուզում էր միագույն դառնալ: Զարմացրեց, թե նա ինչպես ներկվեց փղագույն: Զարմացրեց, որ Էլմեր փղիկն էլ է մեզ նման օրագիր պահել ու սիրուն-սիրուն լրացրել: Զարմացա, որ ածանցավոր բառերի մասին էլ է երգ գրվել, և այլն:

**Ես կարողացա** դասը պատմել Էլմերի անունից, կարողացա բառերի մեջ առանձնացնել արմատն ու ածանցը, կարողացա անգիր սովորել «Ածանցավոր բառերի երգը», գուշակել փղի մասին հանելուկը, արագ գտնել փղերի ու ձիերի ոտքերի քանակը, և այլն)

**Ինձ դուր եկան** Էլմերի կատակները, Էլմերի վերադարձն ընտանիք, որ Էլմերը նորից դարձավ նախկինը, որ բոլորը սիրում էին Էլմերին, չնայած նա տարբեր էր, որ փղերի ընտանիքը համերաշխ էր, բոլորը իրար սիրում էին, խմբային աշխատանքը, գույնզգույն Էլմերի վրա գրված բառերը, վանկի երգը, և այլն:

Այնուհետև երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված քառատողը, արտահայտում են իրենց կարծիքը:

*Ինչքան կուզես տար ու բեր,*
*Մենք նման ենք ու տարբեր,*
*Նման-տարբեր, ուս ուսի,*
*Ապրում ենք մենք միասին:*

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**ՏԱՐԲԵՐՆԵՐԸ**

Ռնգեղջյուրը՝ քթով իր սուր,
Նոր է գնում մանկամսուր:
Ծոգ մսուրում կա մի կապիկ,
Մի գետաձի՝ հագած շապիկ:

Մի փղիկ կա, մի արջամուկ,
Մի ծեր թութակ, մի գայլաձուկ.
Երգում են շատ, արտասանում,
Իրար լեզու լավ հասկանում:

## 7.5. ՓՈՔՐԻԿԻ ՄԵԾ ԶԱՐՄԱՆՔԸ

Այս դասին դու.

- Կծանոթանաս բարդ բառերին, կկազմես բարդ բառեր:
- Կձանաչես քո իրավունքները:
- Կիմանաս, թե ինչպես է պետք վերաբերվել սխալներին:

### ՓՈՔՐԻԿԻ ՄԵԾ ԶԱՐՄԱՆՔԸ

Վաչագան Ա. Սարգսյան

– Լսե՞լ ես, Արամը շատ իրավունքներ ունի արդեն:
– Ծննդյան օրվա առթի՞վ են նվիրել:
– Չէ՛, ոնց որ հայրիկն է արտասահմանից բերել:
– Թե՞ մայրիկն է պատվիրել:
– Չգնա՞նք տեսնենք:
– Գնա՛նք:

1 Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում Արամի գրքի նկարներում: Օգտվի՛ր գրառումներից:

ապրել ընտանիքում

սովորել

բուժվել

խաղալ ընկերներով

կարծիք հայտնել

խոսել սեփական լեզվով

հանգստանալ

պաշտպանված լինել

154

### 7.5.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Դասի սկզբում երեխաները կարդում են դասի գլխագրի կետերը:

Առաջին կետի գրառումն ընթերցելիս ներկայացնում են, թե ինչ գիտեն բարդ բառերի մասին:

Երկրորդ կետի շուրջ կարելի է զրուցել, թե երեխաները ինչ են հասկանում երեխայի իրավունք ասելով: Կհայտնեն տարբեր կարծիքներ: Կարելի է կազմակերպել փոքրիկ քննարկում:

Երրորդ կետը դարձյակ փոքրիկ «սադրանք» է պարունակում: Նախ պարզում են, թե ինչ է սխալը և դրանից հետո արտահայտում իրենց վերաբերմունքը այս կամ այն սխալի մասին:

Այնուհետև երեխաները կարդում են մուտքի պատուհանիկի խնդուկը:

– Լսե՞լ ես, Արամը շատ իրավունքներ ունի արդեն:

– Ծննդյան օրվա առթի՞վ են նվիրել:

– Չէ՛, ոնց որ հայրիկն է արտասահմանից բերել:

– Թե՞ մայրիկն է պատվիրել:

– Չգնա՞նք տեսնենք:

– Գնա՛նք:

**Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ տեսան զրուցակիցները**:

Ծավալվում է աշխույժ քննարկում, երեխաներն ազատ ու անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը Արամի ստացած ***նվերի*** շուրջ:

### 7.5.2. Աշխատանք նկարաշարի շուրջ

**Առաջադրանք 1.** Օգտվելով գրառումներից՝ պատմի՛ր, թե ինչ ես տեսնում Արամի գրքի նկարներում:

Ուսուցիչն ասում է, որ երբ երեխաները հավաքվեցին Արամենց տանը, Արամը մի գիրք ցույց տվեց, որտեղ կար այս նկարաշարը:

Առաջարկում է երեխաներին ուշադիր դիտել նկարաշարը և կարդալ նկարների տակի գրառումները: Պատմել, թե ինչ են նշանակում դրանք և ինչ է պատկերված նկարներում:

Երեխաները պատմում են, արտահայտում իրենց կարծիքները: Ուսուցիչը ասում է, որ այդ նկարներում պատկերված է Արամի իրավունքների մի մասը: Որ այդ իրավունքները ունեն բոլոր երեխաները:

Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները կարդան բանաստեղծությունը:

## ՓՈՔՐԻԿԻ ՄԵԾ ԶԱՐՄԱՆՔԸ

Ինձ թվում էր՝ շատ բան գիտեմ,
Սակայն պարզվեց՝ միամիտ* եմ:
Զարմանալի բաներ կան դեռ,
Որ չգիտեմ, թեև յոթ եմ:

Մեր դպրոցում իմացա ես՝
Իրավունքներ ունեմ պես-պես,
Օրինակներ՝ ինչքան ուզես,
Մի քանիսը թվարկեմ, տե՛ս:

Իրավունքներ կյանքի, սիրո,
Սովորելու ու սիրվելու,
Աշխատելու, պաշտպանվելու,
Հայրենի տուն ունենալու:

Ընտանիքում ջերմ ապրելու
Եվ ապահով կյանք վարելու,
Իմ կարծիքը ձեզ հայտնելու,
Նույնիսկ մեկ-մեկ սխալվելու:

Վերջինը շատ դուրս եկավ,
Թե սխալվեմ, չեմ վիատվի,
Կուղղեմ արագ, կանցնեմ առաջ՝
Իմ սխալից դասեր քաղած:

**ԱՉՔԻ ԱՌԱՋ**
*վերջին*
*պաշտպանվել*

### Հարցեր

1. Ո՞վ էր բանաստեղծության հերոսը:
2. Փոքրիկն ի՞նչ զարմանալի բաներ իմացավ դպրոցում. գտի՛ր և կարդա՛ այդ տողերը:
3. Քեզ ո՞ր իրավունքը շատ դուր եկավ: Ինչո՞ւ:
4. Դու ի՞նչ իրավունքներ կավելացնես:
5. Կարդա՛ բանաստեղծության վերջին քառատողը և մեկնաբանի՛ր:

### ԲԱՌԸ ԱՓԻ ՄԵՋ

Այս բանաստեղծության մեջ ***միամիտ** բառը նշանակում է անփորձ, անտեղյակ, պարզ միտք, հոգի ունեցող: Միամիտ մարդը նա է, ով մտքից ուրիշ բան չի անցկացնում, դյուրահավատ է, հավատում է բոլորին առանց կասկածելու, անկեղծ է: Միամիտ մարդն ուղիղ միտք ունի, խորամանկ չէ:

### Առաջադրանքներ

**2** ՈՒՆ **ԽՆԴՈՒԿ**

– Էս ի՞նչ ես անում:
– Ծառին խնձոր եմ կախում:
– Այ դու ապրես, թե չէ ուրիշները քաղում են:

- Խնդուկի հերոսներից ո՞վ է խորամանկ, ո՞վ՝ միամիտ:
- Բեմականացրե՛ք խնդուկը:
- Մեկ նախադասությամբ գնահատի՛ր ընկերներիդ խաղը:



### 7.5.3. Աշխատանք տեքստի շուրջ

Աշակերտները նախ մտքում են կարդում տեքստը, ապա ընթերցում բարձրաձայն:

Կարելի է բանաստեղծության մեջ երեխաների հայտնաբերած իրավունքները համեմատել նկարազարդման մեջ ներկայացված իրավունքների հետ: Ապա թվարկել այն իրավունքները, որոնք պատկերված չէին, և այն իրավունքները, որոնք պատկերված էին նկարներով, սակայն չկան բանաստեղծության մեջ:

### 7.5.4. Հարցերի և առաջադրանքների օրինակներ

1. Ո՞վ էր բանաստեղծության հերոսը: (Փոքրիկ երեխա է, յոթ տարեկան աշակերտ)

2. Փոքրիկը ի՞նչ զարմանալի բաներ իմացավ դպրոցում. գտի՛ր և կարդա՛ այդ տողերը: (Իմացավ, որ շատ իրավունքներ ունի՝ խաղաղ ապրելու, սովորելու, աշխատելու, սիրվելու, կարծիք հայտնելու, սխալվելու)

3. Քեզ ո՞ր իրավունքը շատ դուր եկավ: Ինչո՞ւ: (Երեխաները ասում են, թե իրենց որ իրավունքը դուր եկավ և հիմավորում են ասածը)

4. Դու ի՞նչ իրավունքներ կավելացնես: (Խաղալու, հանգստանալու, հեռուստացույց դիտելու, համակարգչային խաղեր խաղալու, հյուր գնալու և այլն)

5. Կարդա՛ բանաստեղծության վերջին քառատողը և մեկնաբանի՛ր: (Յուրաքանչյուր մարդ կարող է սխալվել: Պետք չէ այդ սխալի պատճառով վհատվել, հուսահատվել, իրեն դժբախտ համարել: Հարկավոր է ուսումնասիրել սխալվելու պատճառները, հասկանալ, թե ինչու և ինչպես սխալվեցիր, հետևություններ անել և աշխատել չկրկնել նույն սխալը)

Կարելի է կազմակերպել աշխատանք զույգերով՝ մտաբերի՛ր և գրի՛ր այն իրավունքները, որոնցից դու օգտվել ես այսօր:

### 7.5.5. Բառաբացատրական աշխատանք

Երեխաները կարդում են «Բառը ափի մեջ» խորագրի գրառումը:

Միամիտ մարդը նա է, ով մտքից ուրիշ բան չի անցկացնում, չկասկածող է: Նա ուղիղ միտք ունի, խորամանկ չէ:

### 7.5.6. Աշխատանք խնդուկի շուրջ

**Առաջադրանք 2.** Խնդուկը վերաբերում է միամիտ մարդուն: **Միամիտ** բառը մանրամասն բացատրվեց ԲԱՌԸ ԱՓԻ ՄԵՋ խորագրում: Այս խնդուկում այդ բառը երևում է գործնականորեն՝ թե ինչպես է խորամանկ մարդը կարողանում խաբել դյուրահավատ, միամիտ մարդուն:

Խնդուկի բեմականացումը զվարթություն կառաջացնի դասարանում:

3

**Վերծանելով նկարելուկը՝ դու կգտնես այս դասին քո սովորած ամենակարևոր բառը:**

2=ՈՒ

4 Կան բառեր, որոնց մեջ մեկից ավելի արմատ կա. օրինակ՝ **օրագիր**: Տեսնում ենք, որ բառը կազմված է երկու արմատից՝ **օր** և **գիր**: Մեկից ավելի արմատներից կազմված բառերը **բարդ բառեր** են:

Ըստ օրինակի կազմի՛ր բարդ բառեր:

| | | | | |
|---|---|---|---|---|
| դեղ | + ա + | տուն | → | դեղատուն |
| արև | + ա + | ծաղիկ | → | |
| սղոց | + ա + | ձուկ | → | |
| գետ | + ա + | ձի | → | |

5
- Կարդա՛ «Բարդ բառի երգը»:
- Դո՛ւրս գրիր բարդ բառերը:

**ԲԱՐԴ ԲԱՌԻ ԵՐԳԸ**

Մեկից ավելի
Արմատ ունեմ ես,
Ամեն մի արմատ
Բառ է պարզապես:

**Դաս**-ը և **գիրք**-ը
Թե միավորես,
Բարդ բառ կդառնա՝
**Դասագիրք**-ն է, տե՛ս:

**Հաց**-ն ու **աման**-ը
Թե միավորես,
Բարդ բառ կդառնա՝
**Հացաման** է, տե՛ս:

Կարող ես այդպես
Կազմել բարդ բառեր.
Արմատներ պես-պես
Սպասում են քեզ:

6 Կազմի՛ր բարդ բառեր՝ օգտագործելով հետևյալ արմատները. **խաղ, ձուկ, ջուր, տառ, գայլ, սխալ, սենյակ, շաքար**:

### 7.5.7. Աշխատանք նկարելուկի շուրջ

**Առաջադրանք 3**.

Երեխաների հիշողության մեջ **իրավունք** բառը ամրակայելու միջոցներից մեկն էլ նկարելուկով այդ բառը ստանալն է: Երեխաներն արդեն գիտեն, որ եթե պատկերի աջ ու ձախ կողմերից կան ստորակետներ, ապա բառի առաջին և վերջին տառերը հանվում են: Այսինքն՝ **ծիրան** բառից հանվում են **Ծ** և **Ն** տառերը: Մնում է **իրա** տառակապակցությունը: Երկրորդ նկարի ներքևում գրված է՝ 2=ու: Սա նշանակում է, որ **վանք** բառի 2-րդ տառը պետք է կարդալ **ու**՝ կստացվի՝ **վունք** տառակապակցությունը: Այժմ, միացնելով իրար, կստանանք՝ **իրավունք** բառը:

**Առաջադրանք 4.**

Առաջադրանքում տրվում է, թե ինչ են բարդ բառերը, ինչ կազմություն ունեն: Այնուհետև երեխաները պետք է ըստ օրինակի կազմեն բարդ բառեր: Աշխատանքը հեշտացնելու նպատակով տրված են օգնող նկարներ: Երեխաները կազմում են **արևածաղիկ, սղոցաձուկ** և **գետաձի** բառերը:

**Առաջադրանք 5**.

- Կարդա՛ «Բարդ բառի երգը»:
- Դո՛ւրս գրիր բարդ բառերը:

Երեխաները կարդում են երգի տեքստը: **Ամա՛ն** բաղադրիչով բազմաթիվ բառեր կան: Երեխաները կազմում են ըստ իրենց կենսափորձի և բառակազմական հմտությունների: Հնարավոր է, որ նրանք կազմեն «գոյություն չունեցող» բառեր: Այդ դեպքում ևս պետք է խրախուսել երեխաներին և ասել, որ ճիշտ է, այդ բառերը դեռևս չկան բառարաններում, սակայն հնարավոր է հետագայում լինեն:

Իսկ բառարաններում այսօր ամրակայված են այսպիսի բառեր. **զարդաման, նավթաման, ծաղկաման, ասեղաման, սոխաման, յուղաման, ներկաման, ոտնաման, խաշաման, ճաշաման, շաքարաման, մեղրաման, ջրաման**, և այլն:

**Առաջադրանք 6**.

Կազմի՛ր բարդ բառեր՝ օգտագործելով հետևյալ արմատները. **խաղ, ձուկ, ջուր, տառ, գայլ, սխալ, սենյակ, շաքար**:

Երեխաները նախորդ առաջադրանքի օրինակների հիման վրա կազմում են **խաղասենյակ, շաքարաջուր, տառասխալ, գայլաձուկ** բարդ բառերը:

– Էմի՛ն, գնա՞նք Երեբունի:
– Գնանք, Արա՛,
Բայց չգիտեմ տեղը նրա:

ԵՐԵԲՈՒՆԻ

– Մ՛յ քեզ Էմին,
Դու չգիտե՞ս,
Որ հնամյա Երեբունին
Երևանի անունն է հին:

7 ՈՒԽ

Պարզ բառերից նկարելուկների օգնությամբ կազմի՛ր բարդ բառեր և տեղադրի՛ր խաչբառում:




**Սյունակներով.**

1 + գույն

2 +

3 +

5 +

**Տողերով.**

4 + գնալ

6 խաղ +

7 դաս + ցուցակ

8 +

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Քեզ համար իրավունքներ են գրվել, որ դու կարդաս, սովորես, դրանցից օգտվես և ինքդ քեզ պաշտպանես:

157

### 7.5.8. Խաչբառի լուծում

**Առաջադրանք 7**. Այս առաջադրանքի միջոցով հետաքրքրաշարժ եղանակով ամրապնդվում է բարդ բառեր կազմելու իմացությունը:

Երեխաներն ըստ նկարելուկների կազմում են բարդ բառեր և լրացնում խաչբառը.

***սյունակներով***
ծիրանագույն
սեղանատամ
աստղանավ
արևածաղիկ
***տողերով***
աստղագնաց
խաղագնդակ
դասացուցակ
օձաձուկ

### 7.5.9. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)

Ես իմացա _____
Ինձ հետաքրքրեց _____
Ես բացահայտեցի _____
Ես եզրակացրի _____
Այս նախադասությունները գրված են ԻՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ գրքի կազմի վրա:

*Անավարտ նախադասությունները լրացնելու օրինակներ:*

**Ես իմացա**, որ ունեմ բազմաթիվ իրավունքներ՝ սովորելու, կարծիք հայտնելու, ընտանիքում ապրելու, ընկերներով խաղալու, պաշտպանված լինելու, բուժվելու, հանգստանալու, նույնիսկ՝ սխալվելու: Իմացա, որ բառերը ոչ միայն պարզ են լինում, այլև բարդ, և այլն:

**Ինձ հետաքրքրեցին միամիտ** բառի բացատրությունը, նկարելուկը, խաչբառը, խնդուկի բեմադրումը, և այլն:

**Ես բացահայտեցի**, որ շատ բաներ կան, որ ես դեռ կսովորեմ իմ դասագրքով, բացահայտեցի, որ ես օգտվում եմ իմ իրավունքներից, բայց չգիտեմ այդ մասին, բացահայտեցի, որ ես շատ բարդ բառեր եմ իմացել, և այլն:

Ես եզրակացրի, որ պետք է լավ սովորել, իմանալ ինչ իրավունքներ ունեմ, որ կարող եմ սխալվել ու այդ սխալը շտկել, և այլն:

Այնուհետև երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված միտքը, արտահայտում են իրենց կարծիքը:



## 7.6. ԻՐԱՎՈՒՆՔՆ Է ԾՆՈՒՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս դասին դու.

- Կլուծես լեզվական հետաքրքիր առաջադրանքներ:
- Կբացահայտես քո պարտականությունները:
- Կպատմես քո պարտականությունների մասին:
- Կեզրակացնես, որ իրավունքներից ծնվում են պարտականություններ:

### ԻՐԱՎՈՒՆՔՆ Է ԾՆՈՒՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վաչագան Ա. Սարգսյան

Կարդա՛ և մտածի՛ր՝ ովքեր են զրուցում:

– Ես իրավունք ունեմ փողոցի մի մայթից մյուսն անցնելու:
– Բայց պարտավոր ես փողոցը անցնել անցումով:
– Ես իրավունք ունեմ բնության գրկում հանգստանալու:
– Բայց պարտավոր ես բնությունը մաքուր պահել:
– Ես իրավունք ունեմ ընտանի կենդանիներ պահելու:
– Բայց պարտավոր ես խնամել նրանց:

1 Վերծանի՛ր խառնագիրը և կիմանաս՝ ովքեր էին զրուցում:

(ra i vunq) (ta par ka tyun nu)

158

### 7.6.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Դասի սկզբում երեխաները կարդում են դասի գլխագրի կետերը:

Առաջին կետի վերաբերյալ նրանց կռահումները կարող են ստույգ լինել, քանի որ գրեթե բոլոր դասերին նրանք լուծել են նման առաջադրանքներ՝ խառնագիր, նկարելուկ, բառքամոցի, խաչբառ և այլն:

Երկրորդ կետի շուրջ երեխաները ներկայացնում են, թե ինչ են հասկանում **պարտականություն** ասելով:

Երրորդ կետը կարող է զարմացնել երեխաներին: Պետք ասել, որ այդ մասին կիմանան դասը ուսումնասիրելիս:

Չորրորդ կետի շուրջ ևս երեխաները ազատորեն կարտահայտեն իրենց կարծիքները:

Այնուհետև կարելի է կազմակերպել զրույց մուտքի պատուհանիկում գրված երկխոսությունների շուրջ:

– Ես իրավունք ունեմ փողոցի մի մայթից մյուսն անցնելու:
– Բայց պարտավոր ես փողոցը անցնել անցումով:
– Ես իրավունք ունեմ բնության գրկում հանգստանալու:
– Բայց պարտավոր ես բնությունը մաքուր պահել:
– Ես իրավունք ունեմ ընտանի կենդանիներ պահելու:
– Բայց պարտավոր ես խնամել նրանց:

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին, որ նրանք ընթերցեն պատուհանիկում գրված երկխոսությունները, մտածեն, թե ովքեր են զրուցում: Երկխոսությունները համեմատեն նկարների հետ, ասեն, թե որ երկխոսությունը որ նկարին է համապատասխանում, պատմեն թե ինչ է պատկերված նկարներում:

**Առաջադրանք 1.** Վերծանի՛ր խառնագիրը և կիմանաս, թե ովքեր էին զրուցում:

Ուսուցիչը լսում է երեխաներին, առաջարկում է վերծանել խառնագիրը՝ ճիշտ դասավորելով խառնված վանկերը:

Առաջին խառնագրում **իրավունք** բառն է թաքնվել, երկրորդում՝ **պարտականություն** բառը:

Նորից անդրադառնալով երկխոսություններին ու նկարներին, քննարկելով դրանք՝ աշակերտները հանգում են այն մտքին, որ պարտավորությունները հենց պարտականություններն են, և որ իրավունքները ծնում են պարտականություններ:

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**ԻՐԱՎՈՒՆՔ**

Դուք արդեն գիտեք, թե ինչ է բառի արմատը: Իմացեք նաև, որ **իրավունք** բառի արմատը **իր** բառն է: **Իր** նշանակում է *որևէ բան, որևէ առարկա:* **Իր** արմատից են նաև **իրոք** և **իրավ** բառերը, որոնք նշանակում են՝ «իսկապես», «արդար», «ճշմարիտ»: **Իրավ** բառից էլ **-ունք** ածանցով կազմվել է **իրավունք** բառը:

**ԲԱՌԸ ԱՓԻ ՄԵՋ**

## ԻՐԱՎՈՒՆՔՆ Է ԾՆՈՒՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրավունքներ ունեմ՝ մարդ եմ,
Ես այդ մասին գիտեմ արդեն,
Մի բառ էլ նոր սովորեցի,
Պարտա-կանու-թյուններ մեծի:

Սակայն շուտով ես հասկացա,
Որ մեծի չեն դրանք բնավ,
Ամեն մեկն էլ վաղուց գիտի՝
Ինչ-որ բաներ անի պիտի:

Ես, օրինակ, գիտեմ հաստատ՝
Պարտավոր եմ շուտ արթնանալ,
Թե՛ լվացվել, թե՛ հագնվել,
Նախաճաշել, դպրոց գնալ,
Ու ճիշտ ժամին ներկայանալ:

Իմ դասերը լավ պատրաստել,
Եվ հարցերից չխուսափել,
Ուրիշների կարծիքները
Հարգել, լսել: Ճի՛շտը ասել:

Պիտի օգնեմ նեղն ընկածին.
Էլ ո՞վ կանի ինձնից բացի:
Պարտավոր եմ ազնիվ լինել,
Սխալներս բեռ չշինել,
Տասը չափել ու մեկ կտրել՝
Բայց այս մեկը դժվար է դեռ:




159

### 7.6.2. Աշխատանք տեքստի շուրջ

Բանաստեղծությունն ընթերցելուց հետո ուսուցիչն առաջարկում է աշակերտներին, որ նրանք ուշադիր դիտեն նկարազարդումը և կապեր գտնեն բանաստեղծության տողերի ու նկարազարդման միջև:

Այնուհետև ուսուցիչն առաջարկում է երկրորդ անգամ ընթերցել բանաստեղծությունը և թվարկել այն պարտականությունները, որոնք կային բանաստեղծության մեջ,

բայց չկային նկարազարդման մեջ: (Նկարազարդումներում չկան ուրիշի կարծիքը հարգել, լսել, ճիշտը ասել, սխալները բեռ չշինել, «Տասը չափել ու մեկ կտրել» արտահայտությունը պատկերող նկարներ)

## Հարցեր

1. Ի՞նչ նոր բառ սովորեց բանաստեղծության հերոսը:
2. Ի՞նչ պարտականություններ էին թվարկված ստեղծագործության մեջ: Կարդա՛ համապատասխան տողերը:
3. Ի՞նչ նոր պարտականություններ իմացար: Թվարկի՛ր:
4. Կարդա՛ բանաստեղծության վերջին քառատողում թաքնված առածը և բացատրի՛ր:
5. Կարդա՛ այն տողերը, որոնք պատկերված են նկարազարդման մեջ:

## Առաջադրանքներ

2

**ԲԱՌ-ՔԱՄՈՑԻ**

**Իրավունք** և **պարտականություն** բառերի տառերով կազմի՛ր նոր բառեր:

**Օրինակ՝** իրավունք – վար, քնար...
պարտականություն – արթուն, նպատակ...

3

Հիշի՛ր և գրի՛ր քո պարտականություններից մի քանիսը, որոնք՝
**ա.** մշտապես կատարում ես սիրով,
**բ.** կատարում ես ոչ այնքան սիրով:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

**Մենք տարբեր ենք մեր պարտականություններով և, միաժամանակ, նման ենք մեր ունեցած իրավունքներով:**

### 7.6.3. Հարցերի և առաջադրանքների օրինակներ

• Ի՞նչ պարտականություններ էին թվարկված ստեղծագործության մեջ: Կարդա՛ համապատասխան տողերը: (Շուտ արթնանալ, լվացվել, հագնվել, նախաճաշել, դպրոց գնալ, ճիշտ ժամին ներկայանալ, դասերը լավ պատրաստել, հարցերից չխուսափել, ուրիշի կարծիքը հարգել, լսել, ճիշտը ասել, օգնել նեղն ընկածին, ազնիվ լինել, սխալները բեռ չշինել, տասը չափել ու մեկ կտրել)

• Ի՞նչ նոր պարտականություններ իմացար: Թվարկի՛ր: (Թվարկում են վերը մեջբերված պարտականություններից իրենց նոր իմացածները)

• Կարդա՛ բանաստեղծության վերջին քառատողում թաքնված առածը և բացատրի՛ր: *(«Տասը չափի՛ր ու մեկ կտրիր» առածով ասվում է, որ որևէ գործ անելուց առաջ լավ մտածիր, մի շտապիր, հաշվարկներ արա, հաշվի առ բոլոր հանգամանքները:)*

### 7.6.4. Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ («Բառքամոցի»)

**Առաջադրանք 2**. Իրավունք և պարտականություն բառերի տառերով կազմի՛ր նոր բառեր:

Օրինակ՝ իրավունք – վար, քնար...

պարտականություն – արթուն, նպատակ...

Ուսուցիչն առաջարկում է վերհիշել «բառքամոցի» խաղի կանոնները և **իրավունք** ու **պարտականություն** բառերից ստանալ նոր բառեր: Կարելի է կազմակերպել խմբային աշխատանք՝ որ խումբն ավելի շատ բառեր «կքամի»:

**Իրավունք** բառից կարող են քամվել, օրինակ, հետևյալ բառերը.

| | | | |
|---|---|---|---|
| ար | իրան | վար | ուրան |
| քար | նու | վարք | քնար |
| իր | վանք | ունք | քուրա |

**Պարտականություն** բառից կարող են քամվել, օրինակ, հետևյալ բառերը.

| | | | | |
|---|---|---|---|---|
| ակ | արտ | կապան | նպար | տապակ |
| ական | թակ | կար | նու | տնակ |
| այտ | թան | կարապ | պատ | տուն |
| այր | թույն | կութ | պար | տունկ |
| անութ | թուր | նյութ | պարտություն | ութնյակ |
| ապար | կանթ | նկար | պուտուկ | ունկ |
| ար | կապ | նյութ | տանկ | ուրան |
| արկ | կապա | նպատակ | տապ | ուրու |

Ինչպես տեսնում ենք, **պարտականություն** բառից անհամեմատ շատ բառեր են «քամվում», քան իրավունք բառից: Եթե կատակով ասենք՝ սա էլ է ցույց տալիս, որ մարդու պարտականություններն ավելի շատ են, քան իրավունքները, որ մի իրավունքից կարող են ծնվել բազում պարտականություններ:

**Առաջադրանք 3.**

**Հիշի՛ր և գրի՛ր քո պարտականություններից մի քանիսը, որոնք՝**

ա. մշտապես կատարում ես սիրով,

բ. կատարում ես ոչ այնքան սիրով:

Երեխաները գրում են, թե ինչ պարտականություններ են կատարում սիրով, ինչը՝ ոչ այնքան: Աշխատանքն ավարտելուց հետո ուսուցիչն աշակերտներին ժամանակ է տալիս, որպեսզի զույգերով համեմատեն իրենց գրածները, բացահայտեն նմանություններն ու տարբերությունները:

Այսպիսով, թեև բոլոր երեխաները տարբեր են, սակայն ունեն նույն իրավունքները, ինչպես և կարող են ունենալ տարբեր պարտականություններ:

### 7.6.5. Դասից քաղած իմ պտուղները (անդրադարձ և ամփոփում)

Ես իմացա…….

Ինձ զարմացրեց……..

Ինձ դուր եկավ……

Ես հասկացա…….

Անավարտ նախադասությունները լրացնելու օրինակներ:

**Ես իմացա**, որ ունեմ բազմաթիվ պարտականություններ՝ *շուտ արթնանալ, լվացվել, հագնվել, նախաճաշել, դպրոց գնալ, ճիշտ ժամին ներկայանալ, դասերը լավ պատրաստել, հարցերից չխուսափել, ուրիշի կարծիքը հարգել, լսել, ճիշտը ասել, օգնել նեղն ընկածին, ազնիվ լինել, սխալները բեռ չշինել, տասը չափել ու մեկ կտրել, և այլն:*

**Ինձ զարմացրեց,** *որ իրավունքից են ծնվում պարտականությունները և այլն:*

**Ինձ դուր եկան** *բառքամոցի խաղը, նկարազարդումը, և այլն:*

**Ես հասկացա**, որ շատ բաներ կան, որ ես դեռ կսովորեմ իմ դասագրքով, հասկացա, որ ես ունեմ շատ պարտականություններ, որոնցից մի քանիսի մասին գիտեի, մի քանիսի մասին՝ ոչ: Ես հասկացա, որ պետք է լավ սովորել, իմանալ, թե ինչ պարտականությունը ունեմ, որ որևէ գործ անելուց առաջ պետք է լավ մտածել, և այլն:

### 7.6.6. Աշխատանք «Ամփոփման պատուհանիկի» գրառման շուրջ

Այնուհետև երեխաները կարդում են ամփոփման պատուհանիկում գրված միտքը, արտահայտում են իրենց կարծիքը:

Մենք տարբեր ենք մեր պարտականություններով և, միաժամանակ, նման ենք մեր ունեցած իրավունքներով:

## 7.7. ՏՈՒՆԸ

### 7.7.1. Տեքստի հերոսների ի հայտ բերում հանելուկների միջոցով

Ուսուցիչը գրատախտակին նախօրոք փակցնում է մի տնակի նկար: Ասում է, որ եթե երեխաները ճիշտ գուշակեն հանելուկները, ապա կիմանան, թե սա ում տնակն է, և ովքեր են հյուր եկել նրան:

**Կենդանի է նա մաքրասեր,**
**Շատ է սիրում մածուն ու սեր,**
**Լվացվում է շատ խնամքով,**
**Այն էլ՝ միայն ճաշից հետո:** ***(կատու)***

**Հավատարիմ ընկեր է,**
**Տանը պահակ ու տեր է,**
**Վազվզելուց չի հոգնում,**
**Իր տիրոջն է միշտ օգնում:** ***(շուն)***

**Գնում է անվախ**
**Հոտի առաջից,**
**Մորուքը կախ-կախ,**
**Պոչիկը՝ միշտ ցից:** ***(այծ)***

**Օրոր-շորոր քայլում է,**
**Արևի տակ փայլում է,**
**Թռչել գիտի, լողում է,**
**Ջրում սուզվում, շողում է:** ***(բադ)***

Ուսուցիչը կարդում է հանելուկները: Դրանց պատասխանները նկարի տեսքով նույնպես փակցնում է գրատախտակին, տնակի շուրջ:

Այնուհետև հարցնում է՝ ի՞նչ եք կարծում, այս բոլոր կենդանիները կարո՞ղ են ապրել մեկ հարկի տակ, նույն տան մեջ:

Կարող են հնչել տարբեր պատասխաններ, օրինակ՝

- Շունը կարող է հաչել և իր հաչոցով արթնացնել բոլորին:
- Շունն ու կատուն կարող են կռվել:
- Կատուն կարող է հարձակվել բադի վրա:
- Չեն կարող, որովհետև իրար նման չեն, տարբեր են:

Այս դասին դու.

• Կամրապնդես նախադասության մասին քո գիտելիքները:

• Կհասկանաս, որ նույն բանի մասին կարող են տարբեր կարծիքներ լինել:

• Կտեսնես, թե շունը, կատուն և բադը ինչու էին ուզում փոփոխել այծի տունը:

• Քո կարծիքը կարտահայտես հերոսների մասին:

## ՏՈՒՆԸ

Հենրիկ Սևան

vachagan.am

Սիրելի է ամեն տուն,
Փչակ լինի, թե շան բույն,
Հյուր գնալու տեղ լինի,
Թեկուզ մի քիչ նեղ լինի:

Այծը տուն էր կառուցել,
Ուրախ սեղան էր բացել:

Բադը, շունը և կատուն
Հյուր գնացին այծի տուն:

– Հա՛ֆ-հա՛ֆ,– հաչեց շնիկը,–
Ափսոս, ցածր է տանիքը:

– Մյաո՛ւ,– մլավեց կատուն ծեր,–
Ափսոս նեղ է դուռը ձեր:

– Ղա՛-ղա՛,– ճչաց մայր բադը,–
Ափսոս, ծուռ է այս պատը:

– Ո՛ւշ է,– ասաց այծիկը,–
Էլ պետք չէ ձեր կարծիքը:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

*հյուր*

161

### 7.7.2. Աշխատանք գլխագրի և «Մուտքի պատուհանիկի» շուրջ

Երեխաները կարդում են գլխագրի կետերը:

Առաջին կետի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց ունեցած գիտելիքները նախադասության մասին՝ սկսվում է մեծատառով, վերջում դրվում է վերջակետ, և այլն:

Երկրորդ կետի գրառումը երեխաների հետ կարելի է քննարկել կոնկրետ օրինակի վրա: Ենթադրենք հանկարծակի հորդառատ անձրև է սկսում: Ավտոմեքենայի մեջ նստած մարդիկ չեն անհանգստանում, նույնիսկ ուրախանում են բնության այդ հրաշքով: Փողոցում անձրևանոց չունեցող մարդիկ թրջվում են և նույնիսկ՝ զայրանում: Բույսերն ուրախանում են: Մրջյունները վախենում են՝ հանկարծ անձրևը չհասնի՞ իրենց բնին: Ամպերն ուրախությունից գոռգոռում են. չէ՞ որ թեթևանում են, և այլն:

Երրորդ կետի վերաբերյալ երեխաները արտահայտում են իրենց կարծիքները, ենթադրում, թե ինչ կարող էին ասել շունը, կատուն և բադիկը այծիկի կառուցած տան մասին:

Չորրորդ կետի վերաբերյալ կարծիքներ երեխաները կասեն դասանյութը յուրացնելուց հետո:

Այնուհետև երեխաները կարդում են մուտքի պատուհանիկի քառատողը, արտահայտում իրենց կարծիքը: Ուսուցիչը հանձնարարում է, որ երեխաները մտքում լուռ կարդան տեքստը և պարզեն, թե շունը, կատուն և բադիկը ինչու էին հյուր գնացել այծին: (Այծը ուրախ սեղան էր բացել) Ուսուցիչը տեքստը ընթերցելուց առաջ կամ հետո կարող է QR-կոդով կամ համապատասխան հղումով երեխաներին ներկայացնել տեքստի մասին տեսահոլովակը:

### 7.7.3. Տեքստի բարձրաձայն ընթերցում: «Ուրվագծային աղյուսակի» լրացում

Ընթերցվում է մեկնաբանություններով: Յուրաքանչյուր տունն ընթերցելուց հետո ուսուցիչը երեխաներին ուղղում է կշռադատող հարցեր, և լրացվում է աղյուսակը:

| Ո՞վ | Ի՞նչ ասաց | Ինչո՞ւ |
|---|---|---|
| Շունը | | |
| Կատուն | | |
| Բադը | | |
| Այծը | | |

**7.7.4. Աշխատանք տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով** կարելի է երեխաներին տալ այսպիսի հարցեր

Քանի՞ հերոս է գործում հեքիաթում: (Այծը, Շունը, Կատուն, Բադը)

Ի՞նչ էր արել այծը: (Նոր տուն էր կառուցել և խնջույքի սեղան էր բացել)

Հավանեցի՞ն հյուրերը այծի տունը: (Ամեն մեկը իր կարծիքն ասաց, դժգոհեց)

Ձեզ դուր եկա՞վ հյուրերի պահվածքը: Ի՞նչ կարող եք ասել նրանց մասին: (Նրանք կարող էին ավելի բարեկիրթ լինել: Նրանք անկեղծորեն ասացին իրենց կարծիքը:

Նրանցից յուրաքանչյուրն ուզում էր, որ Այծը տունը կառուցեր իր ճաշակին համապատասխան)

Ի՞նչ կզգա Այծիկը հյուրերի կարծիքները լսելուց հետո: (Կզայրանա: Կմտածի, որ ճիշտ են ասում: Բանի տեղ չի դնի) Եթե դուք լինեիք հյուրը, ի՞նչ կասեիք Այծին: (Կասեի, որ շատ լավ տուն ես շինել, բայց լավ կլիներ դիմեիր ճարտարապետին) Ինչո՞ւ այդպես պատասխանեց այծը: (Որովհետև նա տունն արդեն կառուցել վերջացրել էր) Եթե դու լինեիր տանտերը, ի՞նչ կպատասխանեիր:

Հիմնավորեք ձեր ընտրությունը: (Ես կլսեի բոլորի կարծիքները, շնորհակալություն կասեի, վերջում կավելացնեի, որ ճիշտ է, հարգում եմ ձեր կարծիքները, բայց արդեն շատ ուշ է, ես տունս արդեն կառուցել եմ և ինձ համար հարմար տուն է:)

### 7.7.5. Բանաստեղծության բեմականացում

Կարելի է բանաստեղծությունը սովորել անգիր և բեմականացնել: Բանաստեղծությունը մեծ հնարավորություն է ընձեռում բեմականացման համար: Բեմականացումը կնպաստի տեքստի բովանդակության առավել լավ յուրացմանը, զվարթություն կառաջացնի դասարանում, կօգնի երեխաների ինքնարտահայտմանը:

## ԸՆԿԵՐՆԵՐԻ ՏՆԱԿԸ

Մի օր մուկը ժամը յոթին
Մի փոքրիկ տուն տեսավ ճամփին,
Դուռը ծեծեց, բայց մարդ չկար:
«Այստեղ կապրեմ»,– մտածեց նա:
Ու սկսեց ցորեն աղալ,
Մինչև ութը ապրեց խաղաղ,
Մեկ էլ տեսավ, որ տան բակում
Գորտն է ուրախ շատ աղմկում:

Մուկը ասաց ուրախ գորտին.
– Ինձ մո՛տ արի, ապրի՛ որդիդ,
Ես ցորենը այլուր անեմ,
Դու էլ գաթա՛ թխիր համեղ:

Ու երկուսով ուրախ-զվարթ,
Աշխատում են, երգում անդարդ,
Մեկ էլ հանկարծ ժամը տասին
Բակում կանգնեց ծանր տաքսին:

Նապաստակը իջավ տաքսուց,
Ծրջեց բակում՝ նախ սուսուփուս,
Հետո թակեց դուռը փայտե.
– Ինձ նե՛րս թողեք, ձեզ հետ ապրեմ:

Նապաստակին ներս թողեցին,
Իրար վրա ջուր ցողեցին,
Ու երեքով ընկեր դարձան,
Մի ժամ չանցած՝ մտերմացան:

Ժամը ուղիղ տասնմեկին
Դուռն է թակում մի աղվեսիկ,
Հյուր է եկել ընկերներին՝
Ձեռքին բռնած նվերը իր:

Արդեն չորսով քեֆ են անում,
Ուտում-խմում, ուրախանում,
Մեկ էլ հանկարծ տասներկուսին
Արջը եկավ փարչը ուսին:

– Ես եկել եմ,– ասաց արջը
Ու վեր պարզեց մեղրով փարչը:
Արջի ձայնից ցնցվեց տունը,
Փոխվեց փոքրիկ գետի հունը:
– Մի՛ բարկանա, ա՛յ արջ ախպեր,
Արի մեզ մոտ ու գաթա կեր,
Հինգով կապրենք այս տնակում,
Չէ՞ որ շատ ենք իրար հարգում:

## Հարցեր

1. Ովքե՞ր էին հեքիաթի հերոսները:
2. Ինչո՞ւ էին այծին հյուր գնացել կենդանիները:
3. Ինչո՞ւ այդպիսի առաջարկներ արեցին հյուրերը:
4. Եթե դու լինեիր հյուրը, ի՞նչ կասեիր այծին:
5. Եթե դու լինեիր տանտերը, ի՞նչ կպատասխանեիր:
6. Եթե այծը լսեր բոլորի կարծիքները, ապա ի՞նչ տուն կկառուցեր:

## Առաջադրանքներ

1 Եթե Այծիկը մեկ անգամ էլ տուն կառուցի, քո կարծիքով՝ ինչպե՞ս կվարվի: Հիմնավորի՛ր:

- Հաշվի կառնի բոլորի կարծիքները:
- Կլսի, բայց կկառուցի իր նախկին տան պես:
- Կդիմի ճարտարապետ ծիծեռնակին:

2 Նկարի՛ր՝ ինչպիսին կլիներ այծի տունը, եթե հյուրերը մինչև տունը կառուցելը հայտնեին իրենց կարծիքները:

3 Հեքիաթը պատմի՛ր որևէ հերոսի անունից:

4 Նկարում տեսնում ենք **չի, ծառից, ընկնում, հեռու, Պտուղը** բառերը:

Այդ բառերը գրի՛ր այնպիսի հերթականությամբ, որ ստացված բառաշարքը միտք արտահայտի:

Դու կազմեցիր **նախադասություն**:



**Առաջադրանք 1.** Եթե Այծիկը մեկ անգամ էլ տուն կառուցի, քո կարծիքով՝ ինչպե՞ս կվարվի.

- Հաշվի կառնի բոլորի կարծիքները:
- Կլսի, բայց կկառուցի իր նախկին տան պես:
- Կդիմի ճարտարապետ Ծիծեռնակին:

Երեխաներն արտահայտում են իրենց կարծիքը և հիմնավորում:

- **Հաշվի կառնի բոլորի կարծիքները:** (Քանի որ հյուրերը իր ընկերներն են, ապա հաշվի կառնի նրանց կարծիքը: Հաշվի չի առնի նրանց կարծիքը, քանի որ ինքը իր համար է տուն կառուցում և ոչ թե հյուրերի, տունը իրեն պետք է հարմար լինի: Եթե կարծիքները իր սրտով լինեն, հաշվի կառնի, և այլն)

- **Կլսի, բայց կկառուցի իր նախկին տան պես:** (Քանի որ Այծիկը կամակոր է, ապա ոչ մի կարծիք էլ չի լսի: Նա իր ուզածով կանի միայն: Նա չի սիրում կարծիքներ լսել, այդ պատճառով էլ իր տունը կարող է շատ վատը լինել, և այլն)

- **Կդիմի ճարտարապետ Ծիծեռնակին**: (Դժվար թե դիմի, չի ուզենա ծախս անել: Անպայման կդիմի, որ ժամանակակից տուն ունենա՝ բոլոր հարմարություններով: Կդիմի, բայց միգուցե չհավանի ծիծեռնակի նախագիծը ու չկառուցի ծիծեռնակի ասածի նման, և այլն)

**Առաջադրանք 2.**

Նկարի՛ր՝ ինչպիսի՞ն կլիներ այծի տունը, եթե հյուրերը մինչև տունը կառուցելը հայտնեին իրենց կարծիքները:

Առաջադրանքը կնպաստի երեխաների երևակայության, նկարչական հմտությունների զարգացմանը, միջառարկայական կապ կստեղծի մայրենիի ու նկարչության միջև, կբացահայտի երեխաների պատկերացումները որևէ մեկի համար հարմարավետ տուն կառուցելու մասին:

### 7.7.6. Տեքստի պատմում որևէ հերոսի անունից

**Առաջադրանք 3.** Հեքիաթը պատմի՛ր որևէ հերոսի անունից:

Այսպիսի առաջադրանքների երեխաները բազմիցս հանդիպել են նախորդ դասերն ուսումնասիրելիս: Այս բնույթի առաջադրանքները զարգացնում են երեխաների ստեղծագործական կարողությունները, ձևավորում են երևույթը այլ կողմից դիտելու ունակություններ:

**Շան անունից կարող է լինել այսպիսի մի պատմություն:**

Մի անգամ մեր բակում սովորականի պես հաչում էի հարևան բակի շան վրա: Հետո սկսեցի հաչել մեր աքլորի վրա: Աքլորը գլուխը տնկեց, գնաց իր հավերի մոտ: Չգիտեի՝ ո՞ւմ վրա հաչել: Սկսեցի հաչել ծառի վրա՝ բանի տեղ չդրեց, հաչեցի տան վրայով թռչող ծտերի վրա՝ բանի տեղ չդրեցին: Զայրացա, սկսեցի ինքս իմ վրա հաչել: Ահագին հաչեցի, հաչեցի՝ հանգստացա: Գնացի, որ մտնեմ բույնս, քնեմ: Մեկ էլ փոստատար Կաչաղակը մի նամակ բերեց Այծից: Նամակով այծն ինձ հրավիրում էր իր նոր կառուցած տան բացման խնջույքին: Ուրախ-ուրախ լվացվեցի, սանրվածքս փոխեցի ու՝ վազքով Այծի մոտ: Գնամ՝ ի՛նչ տեսնեմ՝ Կատուն էլ է հրավիրված, Բաղիկն էլ: Մեկ ուզում էի սրանց մի լավ դաս տալ, բայց ինձ զսպեցի՝ ինչքան չլինի հյուր եմ, պետք է ինձ շնավարի չպահեմ, այլ լինեմ քաղաքավարի: Հետո, որ տեսա այծի տունը, քիչ էր

մնում խնդալուց հաչելս մոռանայի: Ցածր տանիքով, ծուռտիկ-մուռտիկ մի պահարան կարծես լինել: Ուզում էի մի լավ ձեռ առնել, բայց սեղանին համեղ ուտելիքներ կային, ինձ զսպեցի: Միայն ասացի՝ ափսոս, տանիքը ցածր է: Այծը քիչ էր մնում պոզահարեր ինձ, բայց քանի որ տանտերն էր, իրեն զսպեց:

Կերանք-խմեցինք, ամեն մեկս գնաց իր գործին: Սակայն, ապրի այծը, ինչքան էլ որ տունը իմ սրտով չէր, բայց չէ՞ որ տունը Այծն իր ձեռքով էր կառուցել, չարչարվել էր կարգին: Այսպես մտածեցի, մտածեցի ու Այծիկին հարգեցի: Որպես հարգանքի նշան՝ պոչս սրտանց շարժեցի:

### 7.7.7. Աշխատանք նախադասության ուղղվածության շուրջ

**Առաջադրանք 4.**

Այս առաջադրանքով, գործնական ճանապարհով, երեխաներին տրվում է նախադասության ուղղագրությունը՝ սկսվում է մեծատառով, վերջում դրվում է վերջակետ, միտք է արտահայտում: Երեխաները ստանում են «Պտուղը ծառից հեռու չի ընկնում» նախադասությունը, բացատրում են, որ նախադասությունը սկսվում է մեծատառով, միտք է արտահայտում, վերջում դրվում է վերջակետ:

Ուսուցիչը կարող է հարցնել, թե ինչ է նշանակում այդ նախադասությունը: Հնարավոր է, որ երեխաներից ոմանք իմանան, որ դա առած է և իրենց բացատրությունը տան: Ամփոփելով՝ ուսուցիչն ասում է, որ այդ նախադասությունը առած է: Առածում ասվում է, որ ինչպես յուրաքանչյուր ծառ իր պտուղն է տալիս, այնպես էլ յուրաքանչյուր երեխա նմանվում է իր ծնողներին, իր ընտանիքից, իր շրջապատից վերցնում է իր բնավորության այս կամ այն հատկանիշը:

## ԿԱՏՎԻ ՊԱՏՄԱԾԸ

Բազմոցին նստած իմ սիրելի մուլտֆիլմն եմ նայում: Մեկ էլ հեռախոսս ծնգաց: Այծն էր: Հրավիրեց իր նոր տան բացմանը: Առաջ մենք միասին նույն բակում էինք ապրում: Ես տեղափոխվեցի նոր բնակարան, բայց բակի ընկերներիս հետ կապը պահում էի:

Կողքի սուպերմարկետից մի մեծ կապ այծախոտ գնեցի ու գնացի Այծի տուն: Գնամ՝ ի՜նչ տեսնեմ: Այծն իր ձեռքով է իր տունը կառուցել: Զգացվեց, որ իմ ընկեր Այծը այնքան էլ լավ շինարար չէ: Տան դուռը շատ նեղ էր արել: Հանկարծ տեսա՝ Շունն էլ է գալիս: Մտածեցի՝ էլի անտեղի հաչելու է ինձ վրա: բայց Շունն իրեն քաղաքավարի հյուրի պես պահեց: Պոչն իրեն քաշած նըստեց կողքիս:

Հետո օրոր-շորոր գալով, պատին ծուռ նայելով՝ մեզ միացավ նաև մեր ընկեր Բադիկը:

Նախքան սեղան կնստեինք՝ Այծին ասացինք մեր կարծիքները. դուռը նեղ է, տանիքը ցածր է, պատը ծուռ է: Այծը մի քիչ բարկացավ, որ դիտողություն ենք անում, սակայն վերջում ասաց.

– Ես ինձ համար մի հարմար տուն եմ կառուցել: Եթե դուք էլ ուզենաք ձեզ համար տուն կառուցել, կանչե՛ք, կգամ կօգնեմ:

Մենք գլուխներս կախեցինք, բայց ուրախ էինք, որ այդքա՜ն հրաշալի ընկեր ունենք:

5 Երկրաչափական պատկերներով կառուցի՛ր թռչնաբույն:

6 **ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

Բառի մեջ մի-մի տառ փոխելով՝ **ձյուն**-ից ստացի՛ր **հյուր**.

**ձյուն – ձյութ – □□□□ – հյուր:**

7 Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը և արտասանի՛ր:

vachagan.am

Այցի եկան այծին
Մի ձի, մի արծիվ:

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Ես իմացա,
• որ որքան մարդիկ, այնքան կարծիք
• _____

Ես կարողացա
• կարծիք լսել, կարծիք հայտնել
• _____

Ես կարևորեցի,
• որ կարծիքը պետք է հիմնավոր լինի
• _____

Դու մտածի՛ր երկար ու ձիգ,
Դասե՛ր քաղիր կարծիքներից,
Առա՛ջ անցիր այծիկներից:

Կարծիքներ կան շարան-շարան,
Ամեն կարծիք՝ մի-մի պարան,
Քեզ կկապեն՝ մի՛ վախեցիր,

163

**Առաջադրանք 5.** Երկրաչափական պատկերներով կառուցի՛ր թռչնաբույն:

Երեխաները երկրաչափական պատկերներով կառուցում են թռչնաբույն, որը կարող է գործնական կիրառություն ստանալ՝ երեխաները ծնողների օգնությամբ կառուցեն իրական թռչնաբույն:

**Առաջադրանք 6.** ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Երեխաները ծանոթ են այս բառախաղին: Նրանք կստանան **ձյուն – ձյութ – հյութ – հյուր** բառաշղթան:

**Առաջադրանք 7.** Կարդա՛ շուտասելուկը, դիտի՛ր տեսահոլովակը, արտասանի՛ր: Ուսուցիչը երեխաներին կարող է թե՛ սկզբում ցույց տալ տեսահոլովակը, թե՛ հետո:

### 7.7.8. Դասից քաղած իմ պտուղները

Երեխաները կարդում են անավարտ նախադասությունները, դրանց տակ գրված մտքերը և ներկայացնում են, թե դասանյութերը ուսումնասիրելիս իրենք ինչ իմացան, ինչ կարողացան անել, ինչը կարևորեցին:

### 7.7.9. Անդրադարձ «Ամփոփման պատուհանիկին»

Այնուհետև անդրադառնում են ամփոփման պատուհանիկի նյութերին՝ վեցատողին և նկարներին: Վեցատողը կարդալով՝ երեխաները արտահայտում են իրենց կարծիքները, հասկանում են, որ ցանկացած գործ անելիս միշտ էլ կլինեն տարբեր կարծիքներ այդ գործի վերաբերյալ՝ թե՛ լավ, թե՛ վատ: Պետք է լսել բոլոր կարծիքները, հետևություններ ու եզրակացություններ անել ու շարունակել գործը:

Առաջին նկարում պատկերված է մի թվանշան, որը տարբեր կողմերից նայելիս տարբեր թիվ է դառնում: Երեխաների մի մասը պնդում է, որ դա **9** թվանշանն է, մյուսները պնդում են, որ դա **6** թվանշանն է: Երկու կողմն էլ ճիշտ են: Մնում է, որ նրանք իրար հասկանան: Հասկանան, թե ինչու է դիմացինը համառորեն պնդում իր կարծիքը: Հարցը լուծելու համար բավական է, որ նրանք փոխեն իրենց տեղերը, և ամեն բան պարզ կդառնա: Նույնը երկրորդ նկարի դեպքում է: Այստեղ արդեն տարաձայնության պատճառ է տառը, որը մի կողմից կարդացվում է **Ս**, իսկ մյուս կողմից՝ **Ռ**: Նշենք, որ հայերենում երկու զույգ տառեր ևս այդպիսին են՝ **Ծ-Ջ** և **Ն-Ղ**:

Այսպիսով, տարբեր մարդիկ կարող են ունենալ տարբեր կարծիքներ, հարգանքո՛վ լսիր մինչև վերջ, իսկ ընդունել, թե ոչ, երկար մտածիր, հետո որոշիր:

ԳՐԱԴԱՐԱԿ

ԵՍ ՈՒՆԵՄ ՍԻՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

– Ո՞ւմ եք սիրում, ի՞նչ եք սիրում,– երեխաներին հարցրեց ուսուցիչը:
– Մայրիկիս,– ասաց Լուսինեն:
– Հայրիկիս,– ասաց Արմենը:
– Ընտանիքս,– ասաց Անուշը:
– Իմ քաղաքը,– ասաց Արամը:
– Իմ փիսիկին,– ասաց Արևիկը:
– Իմ հայրենիքը,– ասաց Հայկը:– Այնտեղ ապրում են հայրիկս ու մայրիկս, ընտանիքս, իմ քաղաքը, իմ փիսիկը:

## 7.8. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՆԵՐԸ

Այս դասին դու.

• Կհանդիպես համերաշխ ընկերների, որոնք քեզ հետ աննկատ անցել են մոլորակից մոլորակ:

• Կհասկանաս, թե որքան կարևոր են նրանք քո հույզերն ու մտքերը արտահայտելիս:

• Կլսես նրանց զրույցը:

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՆԵՐԸ

Վաչագան Ա. Սարգսյան

**Կծանոթանաս մի փոքրիկ բանակի: Նա միշտ օգնում է քեզ, որ դու քո ուզածն ասես ու գրես: Հետաքրքիր է՝ ի՞նչ բանակ է դա:**

Ինչպես բոլոր դպրոցներում, այս դպրոցում ևս դասամիջոցներին մեծ աշխուժություն է: Սովորողները վազվզում են, ուրախ ճչում, իրար հարցեր տալիս, ծիծաղում, ինչ-որ բան բացատրում միմյանց:

– Երեխանե՛ր, զգո՞ւյշ, բավակա՛ն է վազվզեք: Զանգը տվեց, բոլո՛ր դասարանները ձեր տեղերը,– ասաց Նախադասությունը և կետադրական նշաններին հրավիրեց դասարան:

– Ի՞նչ հարցեր ունեք,– հարցրեց նա:

– Հարցականը այնքան հարցեր է տալիս, որ չի թողնում մի բան էլ մենք ասենք,– գանգատվեց Բացականչականը:– Անընդհատ հարցնում է՝ ո՞վ է, ի՞նչ է, ինչո՞ւ, ինչպե՞ս, ե՞րբ, ո՞ւմ, և շատ ու շատ նման հարցեր է տալիս:

– Առանց Հարցականի հարցասեր երեխաներն իրար և մեծերին հարցեր չեն տա և պատասխաններ չեն լսի: Իսկ եթե պատասխաններ չլսեն, նոր հարցեր չեն ծնվի, և շատ բան չեն սովորի,– հանդարտ բացատրեց Նախադասությունը:

– Ե՛ս էլ եմ այդպես մտածում,– շեշտեց Շեշտը:

### 7.8.1. Աշխատանք գլխագրի շուրջ

**Դասի սկզբում** երեխաները կարդում են գլխագիրը:

Առաջին կետում երեխաները կարդում են, որ կհանդիպեն համերաշխ ընկերների, որոնք իրենց ուղեկցել են վեց մոլորակներով ճամփորդելիս: Զարմանում են, կռահումներ անում, թե ինչ ընկերների մասին է խոսքը:

Երկրորդ կետը կարդալիս ավելի է բորբոքվում նրանց հետաքրքրասիրությունը:

Երրորդ կետը արդեն չափազանց է՝ իրենք լսելու են նրանց զրույցը:

Այնուհետև կարդում են մուտքի պատուհանիկի գրառումը և մտածում, թե ինչ բանակ է դա:

Դասը կարելի է բաժանել երեք մասի. առաջին մասը սկզբից մինչև «-Ե՛ս էլ եմ այդպես մտածում, - շեշտեց Շեշտը» (էջ 164): Երկրորդ մասը՝ «սա գալիս ու խցկվում է ինձնից առաջ» (էջ 165): Երրորդ մասը՝ մինչև վերջ:

### 7.8.2. Աշխատանք տեքստի շուրջ

Առաջին անգամ տեքստի առաջին մասը կարդում է ուսուցիչը: Հետո լուռ կարդում են երեխաները:

### 7.8.3. Տեքստի առաջին մասի բովանդակության ըմբռնման վերաբերյալ հարցերի օրինակներ

1. Ովքե՞ր էին նախադասության սաները: Ի՞նչ բանակի մենք ծանոթացանք: (Կետադրական նշանները)

2. Քանի՞ կետադրական նշան պատասխանեց Նախադասության տված հարցին: (Երկու՝ Բացականչական նշանն ու Շեշտը)

3. Ի՞նչ կետադրական նշանի մասին էր խոսում Բացականչականը: (Հարցական նշանից էր բողոքում)

4. Ի՞նչ պատասխանեց Նախադասությունը: Կարդա՛ այդ հատվածը:

*– Առանց Հարցականի հարցասեր երեխաները իրար և մեծերին հարցեր չեն տա, և պատասխաններ չեն լսի: Իսկ եթե պատասխաններ չլսեն, նոր հարցեր չեն ծնվի, և շատ բան չեն սովորի,– հանդարտ բացատրեց Նախադասությունը:*

5. Ուսումնասիրի՛ր նկարազարդումը և հաշվի՛ր՝ քանի՞ աշակերտ կա դասարանում: (11)

6. Նրանցից քանի՞սն են քեզ ուղեկցել «վեց մոլորակներով քո ճամփորդության ժամանակ»: (Երեխաները ուշադիր ուսումնասիրում են նկարը և ճանաչում, մտաբերում իրենց իմացած կետադրական նշանները, որոնք նկարում կերպավորված են աշակերտների տեսքով)

Դասարանի կարողություններով պայմանավորված՝ ուսուցիչը կարող է շարունակել դասը և երեխաների հետ ուսումնասիրել նաև դասի երկրորդ հատվածը: Կարող է բավարարվել առաջին մասով և երկրորդ մասն ուսումնասիրել հաջորդ դասին:

## 7.8.4. Աշխատանք դասանյութի երկրորդ մասի հետ

– Իսկ Բացականչականին ասեմ,– շարունակեց Նախադասությունը,– որ ինքն էլ է Հարցականի նման: Պատկերացրո՛ւ, որ դու մի օր դպրոց չգաս: Երեխաներն ինչպե՞ս ուրախ գոռա՞ն, ճչա՞ն, իրար կանչե՞ն, հիանա՞ն միմյանցով, ուրախանա՞ն:

– Անհնա՛ր է,– շեշտեց Շեշտը:

– Դուք՝ Հարցականը, Բացականչականը և Շեշտը, միշտ վերևում եք լինում: Իսկ ես ու պստիկ **Միջակետը**՝ ներքևում,– դժգոհեց **Ստորակետը**:– Բառեր եմ իրարից բաժանում, ասում եմ՝ կարդալիս հենց ինձ տեսաք, մի քիչ դադար տվեք ու նոր շարունակեք:

– Ես ինչո՞ւ ինձ մոռացար. չէ՞ որ ես էլ եմ միշտ վերևում լինում,– դժգոհեց **Բութը**:– Եթե մի բառ հիվանդ է, չի կարողանում գալ Նախադասության դասերին, այդ բառին ե՛ս եմ փոխարինում, պետք լինի՝ բացատրո՛ւմ եմ:

– Ես փոքրի՛կ եմ, վերևներից վախենում եմ, ճիշտն ասած՝ ներքևներից էլ եմ վախենում,– մեջ ընկավ Միջակետը:– Կանգնում եմ երկու նախադասությունների արանքում, կամ էլ, երբեմն՝ Չակերտներից առաջ:

– Հա, էլի՛,– քթի տակ ասաց **Չակերտը**:– Հենց ուզում եմ ուրիշից մի խոսք մեջբերել, բացվում եմ, սա գալիս ու խցկվում է ինձնից առաջ:

– Իսկ այդ ի՞նչ գծիկներ են, որ դրվում են երկու բառերի արանքում, օրինակ՝ *ինչ-որ, ուրախ-ուրախ, քիչ-քիչ:* Չլինի՞, թե ինձ եք խցկում բառերի արանքում,– հարցրեց **Տողադարձը**:

– Ո՛չ: Դու բառերը բաժանում ես մասերի, իսկ նա՝ **Միության գծիկը**, ընդհակառակը՝ միացնում է:

– Իսկ այդ ի՞նչ գծեր են, որ դնում են իրար հետ զրուցողների խոսքերից առաջ,– հարցրեց Տողադարձը:

– **Անջատման գիծն** է,– ասաց Նախադասությունը:

– Ես ու ինքը լավ ընկերներ ենք,– ասաց Ստորակետը:– Երբ միասին ենք դրվում, հեղինակի խոսքն անջատում ենք ուրիշի խոսքից:

**165**

Տեքստի երկրորդ մասը կարդում է ուսուցիչը: Հետո լուռ կարդում են երեխաները:

### 7.8.5. Տեքստի երկրորդ մասի բովանդակության ըմբռնման վերաբերյալ հարցերի օրինակներ

1. Քանի՞ կետադրական նշան էին զրուցում: (Հինգ՝ Շեշտը, Ստորակետը, Բութը, Միջակետը և Չակերտը)

2. Ո՞ր կետադրական նշանի մասին էին շատ խոսում, իսկ նա այդպես էլ ոչ մի ձայն չհանեց, չխոսեց: (Հարցական նշանի)

3. Ինչո՞ւ դժգոհեց Բութը: (Որովհետև մոռացան, որ ինքն էլ է միշտ վերևում լինում)

4. Ո՞ր նշանն էր, որ իրեն պստիկ էր համարում, բայց ճստիկ էր՝ բաժանում էր նախադասություններ, կանգնում էր Չակերտներից առաջ: (Միջակետը)

5. Ո՞վ էր բողոքում, որ ինքը կարևոր գործ է անում՝ բառեր է իրարից բաժանում, կարդալիս շունչ քաշելու համար ժամանակ է տալիս, բայց միշտ ներքևում է: (Ստորակետը)

6. «Ուրիշի խոսք եմ «գրկում», բառերին «գրկում» ուրիշ իմաստ եմ տալիս, իմ մասին հանելուկ եք սովորել ձեր այս դասագրքում, մի մոռացեք ինձ»: Ո՞վ է բողոքում: (Չակերտը կամ Չակերտները)

**ԳՐԱԳԱՐԱԿ**

**ԿԱՀՄԵՔ ՃԻՇՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ**

Կախարդը երեխաներին փակել է մի մեծ դահլիճում:

– Դուք այստեղից կարող եք դուրս գալ, եթե լուծեք այս առաջադրանքը,– ասաց նա և երեխաներին պարզեց մի թուղթ: Թղթի վրա երկարուձիգ տառերի մի շարան էր: Ահա այդ թուղթը.

**ՍԴՆՇՔՆՇՆՄ**

– Պիտի կարդաք, թե ինչ նախադասություն է գրված: Ահա, տեսեք, այստեղ կա երկու հուշում՝ անուններ և բաժանել: Դրանք կօգնեն ձեզ,– չարախնդալով ասաց Կախարդը:

Սիրելի՛ աշակերտներ, եկեք օգնենք երեխաներին: Գտնենք լուծումը: Չէ՞ որ երեխաներն ուզում են տուն գնալ:

***Լուծում:*** *Պետք է գրել տառերի անունները և համապատասխան տեղերից բաժանել մասերի: Կստացվի հետևյալ նախադասությունը.*

**Սեդան ու Ծաքեն ուշանում են:**

Նախադասությունն ուրախությամբ լսում էր իր սաներին. «Արդեն ինչքա՜ն շատ բան գիտեն»,– մտքում ասաց ու հավելեց.

– Ավարտեցի՞ք ձեր հարցերը: Դե հիմա թող **Վերջակետը** գա և կանգնի իմ վերջում: Դասն ավարտված է:

## Հարցեր

1. Ովքե՞ր էին դասարանի աշակերտները:
2. Քանի՞ կետադրական նշանի հանդիպեցիր: Թվարկի՛ր:
3. Ի՞նչ կլիներ, եթե նրանք չուղեկցեին քեզ:

## Առաջադրանքներ

1 ✍

Ո՞ր նշանին կդիմես:

| Գործողություն | Նշան |
|---|---|
| Երբ հարցեր ես տալիս: | |
| Նախադասությունն ավարտելիս: | |
| Ընկերոջդ կանչելիս: | |
| Հիացմունքդ արտահայտելիս: | |
| Երբ բառը չի տեղավորվում տողում: | |
| Ուրիշի խոսքը մեջբերելիս: | |

2 ✍ **Ես ապրում եմ այս գեղեցիկ տանը:**

Ես **նախադասությունն** եմ:

Իմ ընտանիքի անդամներն են **ես, ապրում, եմ, այս, գեղեցիկ, տանը** բառերը:

Գրի՛ր **«Ջանասեր աշակերտը սովորեց դասը»** նախադասության անդամները:

### 4.8.6. Աշխատանք դասանյութի երրորդ մասի հետ

Տեքստի երրորդ մասը կարդում է ուսուցիչը: Հետո լուռ կարդում են երեխաները:

Այնուհետև հարցերի օգնությամբ ամրապնդվում է դասի բովանդակության յուրացումը:

### 7.8.7. Տեքստի բովանդակության ըմբռնման վերաբերյալ հարցերի օրինակներ

1. Քանի՞ կետադրական նշան էին զրուցում: (Երկու՝ Տողադարձը և Ստորակետը)
2. Ո՞ւմ մասին էին խոսում Նախադասությունը, Տողադարձն ու Ստորակետը: (Միացման գծիկի և Անջատման գծի)
3. Ինչո՞ւ զարմացավ Տողադարձը: (Որովհետև իրեն թվաց, թե Անջատման գիծը իրեն շատ է նման)
4. Ստորակետը ո՞ւմ էր համարում իր համար լավ ընկեր: (Անջատման գծին)

### 7.8.8. Ընդհանուր դասանյութի վերաբերյալ հարցերի օրինակներ

1. Ի՞նչ կարևոր գործեր են կատարում «կետադրական բանակի զինվորները»: (Նրանք բառերին հաղորդում են մեր հույզերն ու զգացմունքները, որ բառերը, նախադասությունները կարդացողը որքան հնարավոր է ճիշտ հասկանա բառերով, նախադասությունով արտահայտած մարդկային ապրումները)
2. Ի՞նչ կլինի, եթե կետադրական նշաններն անհետանան մեր խոսքից: (Մեր խոսքը կմնա նույնը, քանի որ մենք կետադրական նշաններով չէ, որ խոսում ենք: Կփոխվի գրավոր խոսքը: Այն չի արտահայտի մարդկային հույզերն ու ապրումները: Գրավոր խոսքը կդառնա միապաղաղ)
3. Ի՞նչ երկու իրար շատ նման նշանի հանդիպեցիր: (Տողադարձն ինքը խոստովանեց, որ շատ նման է Միացման գծիկին)
4. Ինչպե՞ս են միասին այդքան նշան ապրում մեկ ընտանիքում նախադասությունում: (Յուրաքանչյուր նշան անփոխարինելի է: Նրանք բոլորն աշխատում են, որ իրենց ընտանիքը կարողանա ճիշտ արտահայտել մարդկանց մտքերն ու զգացմունքները)
5. Քանի՞ «կետադրական բանակի զինվորի» անվան հանդիպեցիր ամբողջ տեքստն ուսումնասիրելիս: Հաշվի՛ր: (Հարցական, Բացականչական, Շեշտ, Միջակետ, Ստորակետ, Բութ, Չակերտ, Տողադարձ, Միացման գծիկ, Անջատման գիծ, Վերջակետ: Ընդամենը՝ 11)

**Առաջադրանք 1**. Երեխաների ունեցած գիտելիքները վեր հանելու և դասանյութի հանդեպ նրանց ունեցած հետաքրքրությունը մեծացնելու նպատակով կարելի է երեխաներին բաժանել «Ո՞ր նշանին կդիմես» քարտեր: Երեխաներն անհատապես աշխատելով լրացնում են աղյուսակը՝ նշելով, թե որ կետադրական նշանը երբ են օգտագործում:

Հնարավոր է, որ մեկ գործողության համար նշվի երկու նշան: Օրինակ, «Ընկերոջդ կանչելիս» տողում հնարավոր է նշել թե՛ բացականչական նշանը, թե՛ շեշտը: «Ուրիշի խոսքը մեջբերելիս» կարելի է նշել թե՛ անջատման գիծը, թե՛ չակերտը:

**Առաջադրանք 2**. Երեխաները ըստ օրինակի պետք է գրեն՝ **ջանասեր, աշակերտը, սովորեց, դասը** բառերը:

3 • Նայելով այս նկարին՝ կարող ենք կազմել այսպիսի նախադասություններ.

Կատուն վազում է:
Փոքրիկ կատուն վազում է:
Փոքրիկ ուրախ կատուն վազում է:
Փոքրիկ ուրախ կատուն վազում է ձանապարհով:
Փոքրիկ ուրախ կատուն վազում է տան ձանապարհով:

• Հարցերի օգնությամբ, ըստ նմուշի, ընդարձակի՛ր նախադասությունը:

Այծը | կառուցեց | : Այծը | կառուցեց | *(ի՞նչ)* | :

*(Ինչպիսի՞)* | այծը | կառուցեց | *(ի՞նչ)* | :

4 ՍՈՎՈՐԻՐ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

**Կարդա՛ պատասխանները և տուր հարցեր: Նույն պատասխանին կարող ես տալ մի քանի հարց:**

| Հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| | Նախադասությունը կետադրական նշաններին հրավիրեց դասարան: |
| | Հարցականը հետաքրքիր հարցեր է տալիս: |
| | Բացականչականն ուրախացնում է երեխաներին: |
| | Բութը միշտ վերևում է լինում: |
| | Տողադարձը մասերի է բաժանում բառերը: |

5 Ինչ Ո՞ր կետադրական նշանն են երեխաներն ամենաշատը օգտագործում ծնված օրվանից: Նկարի՛ր:



### 7.8.9. Աշխատանք նախադասության ընդարձակման շուրջ

**Առաջադրանք 3.** Ըստ նմուշի երեխաները ստանում են այսպիսի նախադասություններ:

Այծը կառուցեց:
Այծը կառուցեց տնակ:

Մորուքավոր Այծը կառուցեց տնակ:

**Առաջադրանք 4.**
Հարցերի օրինակներ

Նախադասությունը կետադրական նշաններին ի՞նչ արեց:
Նախադասությունը ինչերի՞ն հրավիրեց դասարան:
Նախադասությունը կետադրական նշաններին ո՞ւր հրավիրեց:
Նախադասությունը ո՞ր նշաններին հրավիրեց դասարան:

Ի՞նչ է անում հարցականը:
Հարցականը ինչպիսի՞ հարցեր է տալիս:
Հարցականը ի՞նչ է տալիս:
Ի՞նչն է հետաքրքիր հարցեր տալիս:

Ի՞նչն է ուրախացնում երեխաներին:
Բացականչականն ի՞նչ է անում:
Բացականչականն ո՞ւմ է ուրախացնում:
Բացականչականը երեխաներին ի՞նչ է անում:

Ի՞նչն է միշտ վերևում լինում:
Բութը որտե՞ղ է լինում:
Բութը ե՞րբ է վերևում լինում:
Բութը ի՞նչ է անում:

Տողադարձը ի՞նչ է անում բառերը:
Ի՞նչն է մասերի բաժանում բառերը:
Տողադարձը ինչերի՞ է բաժանում բառերը:

**Առաջադրանք 5.** Ո՞ր կետադրական նշանն է, որ երեխաներն ամենաշատն են օգտագործում ծնված օրվանից մինչև դպրոցն ավարտելը: Առաջադրանքը տրված է ՈՒԽ պայմանանշանով: Նշանակում է, որ այն ինչ-որ չափով կատակային բնույթ ունի: Երեխաները կարող են շատ տարբեր պատասխաններ տալ, և բոլորն էլ, ըստ էության, կարող են ճիշտ լինել: Վերջում գալիս են այն եզրակացության, որ հենց ծնվելու պահից նրանք բացականչում են՝ **ո՛ւա՛-ո՛ւա՛**: Հետո ուրախ ճչում են խաղալիս, կանչում են իրար և այլն: Ու միշտ իրենց օգնում է բացականչական նշանը:



**6**

○ Գրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարներում:

✧ Վանկատի՛ր գրածդ բառերը:

✧ Անտեսանելի **ը** ունեցող բառերով կազմի՛ր մեկական նախադասություն:

**7** Կարդա՛ հանելուկները և գուշակի՛ր պատասխանները:

Թե գործ չունեք անելու՝
Տնից բառ-մառ հանելու,
Կանչեք, դուռը փակեմ ես,
Հանգստանաք վերջապես:

Հիացմունք եմ բերում ես,
Խինդ ու ծիծաղ տալիս ձեզ,
Կանչում եմ ձեզ ու ճչում,
Մի՞թե ինձ չեք ճանաչում:

**8** ՈՒՍ

**ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

Դիտի՛ր տեսանյութը, փորձի՛ր ավելի արագ:

vachagan.am

**ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Նշանները նոր ու հին
Հույզ են տալիս մեր խոսքին,
Որ խոսքն այնքան պարզ դառնա,
Խոսքը լինի այնքան հարթ,
Որ հասկանա ամեն մարդ:

168

**Առաջադրանք 6.**

Սա «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

○ կետով երեխաները պետք է գրեն նկարներում պատկերված առարկաների անունները՝ **ընտանիք, ընձուղտ, չղջիկ, գնդակ**:

✧ կետով պետք է վանկատեն այդ բառերը՝ **ըն-տա-նիք, ըն-ձուղտ, չղջ-ջիկ, գընդակ:**

✵ կետով պետք է **չղջիկ** և **գնդակ** բառերով կազմեն մեկական նախադասություն:

Նախադասությունների օրինակներ:

Չղջիկները քնում են գլխիվայր:

Չղջիկը կաթով է կերակրում իր ձագերին:

Գնդակը իմ սիրելի խաղալիքներից է:

Մենք գնդակով շատ խաղեր ենք խաղում:

**Առաջադրանք 7.** Կարդա՛ հանելուկները և գուշակի՛ր պատասխանները:

Երեխաները, օգտվելով հանելուկների նկարազարդումներից, պետք է որոշեն, թե որ կետադրական նշանի մասին է խոսքը: Առաջին հանելուկը դուռը փակելու մասին է: Երեխաները հիշում են, որ Վերջակետն է «փակում դուռը»:

Երկրորդ հանելուկի պատասխանն էլ հեշտ գուշակելի է: Երեխաները տեքստից հիշում են, թե Նախադասությունն ինչ էր ասում Բացականչականի մասին:

### 7.8.11. Դասից քաղած իմ պտուղները

Երեխաները լրացնում են անավարտ նախադասությունները՝ ըստ դասանյութից քաղած իրենց գիտելիքների:

Ես իմացա_____

Ես բացահայտեցի_____

Ես կարևորեցի_____

Այնուհետև կարդում են ամփոփման պատուհանիկի հնգատողը: Արտահայտում են իրենց կարծիքը:

**ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ**

Ես բաժանում եմ բառերն իրարից,
Թիվը՝ թվերից, տառը՝ տառերից,
Լավ ընկերն եմ ես անջատման գծի,
Մի գլխիկ ունեմ, մի պոչիկ պստիկ:
*(ստորակետ)*

Հրամա՛ն եմ ես տալիս,
Արգելո՛ւմ եմ, չե՛մ լալիս,
Ես նշան եմ սեպի պես,
Կարգադիր եմ պետի պես:
*(շեշտ)*

**ՍՏՈՐԱԿԵՏԸ**

Մի չարագործի և մի անմեղ մարդու դատում էին: Թագավորը դատավորին ասաց.

– Կախե՛լ չի՛ կարելի ներել:

Դատավորը, որը լավ էր ճանաչում երկուսին էլ, դատավճռի մեջ չարագործի համար գրեց. «Կախե՛լ, չի՛ կարելի ներել»: Իսկ անմեղ մարդու համար գրեց. «Կախել չի՛ կարելի, ներել»:

Չարագործը մահվան դատապարտվեց: Անմեղ մարդը փրկվեց մի ստորակետի շնորհիվ:

## 7.9. «ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՊՐՈՒՄ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

### «ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՊՐՈՒՄ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու.

- Կամրապնդես բառերի մասին գիտելիքներդ:
- Կվերհիշես քո իրավունքներն ու պարտականությունները:
- Քո ձանաչած հերոսների օգնությամբ կլուծես «Ամփոփում» խաչբառը:
- Կկարևորես բնական պաշարները խնայողաբար օգտագործելը:

### Առաջադրանքներ

**1**

Քննարկի՛ր ընկերոջդ հետ: Մտածի՛ր՝ ինչպես կվարվես ստեղծված իրավիճակում:

Ի՞նչ կանես, եթե...



...տեսնես, որ ծառի ճյուղերը խիստ ճկվել են պտուղների ծանրությունից:

...տեսնես վիրավոր թռչուն:

...տեսնես, որ կատուն ուզում է փախցնել ծիտիկի ձագուկներին:

...տեսնես, որ թղթի կտորտանքները չեն լցվում թղթի թափոնի համար նախատեսված ամանի մեջ:

169

### 7.9.1. Աշխատանք գլխագրի շուրջ

Երեխաները կարդում են գլխագրի կետերը, արտահայտում իրենց կարծիքը, քննարկում միմյանց հետ:

Առաջին կետում ասվում է, որ երեխաները կամրապնդեն իրենց գիտելիքները բարդ բառերի մասին: Երեխաները արդեն բավականաչափ գիտելիքներ ունեն այդ մասին և կարող են ազատորեն կարծիք հայտնել, վերհիշել անցածը:

Երկրորդ կետը վերաբերում է նրանց իրավունքներին և պարտականություններին, որոնք բավականաչափ հետաքրքրական միջոցներով լուսաբանվեցին դասանյութերում: Երեխաները արտահայտվելու և կարծիք հայտնելու բավականաչափ պաշար և ասելիք ունեն այդ առումով:

Երրորդ կետը աշխուժություն կմտցնի երեխաների մեջ և հաճելի սպասման բերկրանք:

Չորրորդ կետով կիմանան, թե ինչպես կարելի է խնայել բնական պաշարները:

### 7.9.2. Աշխատանք նկարաշարի շուրջ

**Առաջադրանք 1**. Ի՞նչ կանես, եթե…

Նկարներում պատկերված են խնդրահարույց իրավիճակներ և տրված են իրավիճակների նկարագրությունները:

Երեխաները ուշադիր դիտում են նկարները, կարդում են նկարատակերի գրությունները և մտածում, թե ինչ կարող են անել տվյալ իրավիճակներում:

1. «… տեսնես, որ ծառի ճյուղերը խիստ ճկվել են պտուղների ծանրությունից»:
Կարող են լինել բազմազան պատասխաններ:
Գտնել ծառի տիրոջը, եթե ծառը այգու ներսում է:
Հենակներ դնել ճյուղերի տակ:
Քաղել պտուղները, եթե ճանաչում ես ծառի տիրոջը:
Ասել ծնողներին, և այլն:
2. «… տեսնես վիրավոր թռչուն»:
Տեղյակ պահել մեծահասակներին:
Պաշտպանել, մինչև օգնության կգան, և այլն:
3. «… տեսնես, որ կատուն ուզում է փախցնել ծիտիկի ձագուկներին»:
Կատվին փի՛շտ անել;
Պաշտպանել ձագուկներին, մինչև կգան մեծահասակները:
Կատվին կերակրել, և այլն:
4. «… տեսնես, որ թղթի կտորտանքները չեն լցվում թղթի թափոնի համար նախատեսված ամանի մեջ»:
Զգուշացնել, որ լցնեն:
Հավաքել թափոնները և լցնել:
Դիմել մեծահասակին, և այլն…

**ՀԱՆԵԼՈՒԿ**

Ինձ վերջում են միշտ էլ դնում,
Երբ ասելու բան չի մնում:
*(վերջակետ)*

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԽՆԱՅՈՂԱԲԱՐ ՎԵՐԱԲԵՐՎԵԼ ԲՆՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻՆ

2 Կարդա՛ հարցերը: Ընտրի՛ր պատասխանի քո տարբերակը՝ համապատասխան վանդակում դնելով + նշանը:

| Հարցեր | Այո | Երբեմն | Ոչ |
|---|---|---|---|
| Ատամները մաքրելու ընթացքում փակո՞ւմ ես ծորակը: | | | |
| Միշտ փակո՞ւմ ես ծորակը, որ ջուրն անտեղի չհոսի: | | | |
| Անտեղի վառ չե՞ս թողնում սենյակի լույսը: | | | |
| Ամանորին տանը արհեստակա՞ն եղևնի եք զարդարում: | | | |
| Կերակրո՞ւմ ես թռչուններին և ընտանի կենդանիներին: | | | |

Պատասխանները հաշվելու ժամանակն է:
Եթե քո պատասխաններում ավելի շատ է «այո» տարբերակը, ապա կեցցե՛ս, դու խնայողաբար ես վերաբերվում շրջապատիդ:
Եթե ավելի շատ են «երբեմն» կամ «ոչ» տարբերակները, ապա պետք է աշխատես և սովորես ավելի խնայող լինել:

3 ○ Վերհիշի՛ր թեմատիկ շարքի ստեղծագործությունների հերոսներին:

✧ Ո՞ր իրավունքը ո՞ր հերոսին կվերագրես.

- տուն կառուցելու,
- կարծիք հայտնելու,
- մյուսներից տարբերվելու,
- սխալվելու:

✡ Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ գիտես: Թվարկի՛ր:

170

### 7.9.3. Աշխատանք բնական պաշարներին խնայողությամբ վերաբերվելու շուրջ

**Առաջադրանք 2.** Առաջադրանքը միտված է երեխաներին հուշելու, որ նրանք խնայողաբար օգտագործեն ջուրը, էլեկտրաէներգիան, ծառն ու ծաղիկը, օգնեն մեր փոքրիկ բարեկամներին՝ կենդանիներին:

**Առաջադրանք 3.** «Դեպի վեր» բնույթի առաջադրանք է:

○ Ըստ առաջին կետի, երեխաները պետք է թվեն կամ գրեն թեմատիկ շարքի հերոսների անունները: (Էլմեր, իրավունք, պարտականություն, Այծ, Կատու, Բադ, Շուն, Նախադասություն:)

✧ Ըստ երկրորդ կետի.

Տուն կառուցելու իրավունք ունի Այծը:

Կարծիք հայտնելու իրավունք ունեն Շունը, Կատուն, Բադը, ինչպես նաև ցանկացած երեխա:

Էլմերը կարող է մյուսներից տարբերվել, ինչպես նաև բոլոր ցանկացողները:

Սխալվելու իրավունք ունեն բոլորը:

Իրենց սաներին համերաշխ ընտանիք կարող են համարել թե՛ նախադասությունը, թե բոլոր ուսուցիչները:

✲ Օրինակ՝ սովորելու, կյանքի, սիրո, սիրվելու, աշխատելու, պաշտպանվելու, հայրենի տուն ունենալու, ընտանիքում ապրելու, կարծիք հայտնելու, սխալվելու, բուժվելու, հանգստանալու, խաղալու, սեփական լեզվով խոսելու, և այլ իրավունքներ:

Օրինակ՝ դպրոցականը պարտականություններ ունի պահպանելու փողոցն անցնելու կանոնները, բնությունը մաքուր պահելու, շուտ արթնանալու, պահպանելու հիգիենայի կանոնները, դպրոց գնալու, ճիշտ ժամին ներկայանալու, լավ սովորելու, ուրիշների կարծիքները հարգելու, ճիշտ խոսելու, օգնելու նեղն ընկածին, ազնիվ լինելու, սխալները բեռ չշինելու, և այլն:

## ԵՐԵՔ ՃԻՇՏ ԲԱՌ

– Տիկի՛ն Վարդուհի, կներե՛ք, կարելի՞ է, ես ուշացել եմ,– դասարանի դուռը բացելով՝ հևասպառ ասաց Ռուբենը:

– Նե՛րս մտիր, Ռուբե՛ն: Ինչո՞ւ ես ուշացել:

– Մեր զարթուցիչը փչացել էր: Գիտե՞ք, թե ինչու: Կատուն գիշերը վայր էր գցել, մկները գլորել-տարել էին իրենց բույնը: Առավոտյան արթնացա զարթուցիչի՝ օգնություն կանչող ձայնից, բայց չգիտեի, թե ժամը քանիսն է: Զարթուցիչն ազատագրեցի, մկներին ու կատվին կերակրեցի: Զանգահարեցի Գոռին, որ իմանամ, թե ժամը քանիսն է. մկները սլաքներից իրենց համար սրեր էին պատրաստել՝ չտվեցին: Մարմնամարզություն արեցի, լվացվեցի, նույնիսկ չնախաճաշեցի: Արագ հագնվեցի ու դուրս թռա: Գիտե՞ք, քիչ էր մնում ընկնեի: Պարզվեց, որ շենքի աստիճանները գիշերը տարել էին նորոգելու: Վերելակով իջա: Ճանապարհին վերելակը փչացավ: Այնքան գոռգոռացի, մինչև ինձ մի կերպ դուրս հանեցին:

Փողոցում էլ այնքան շատ մարդ էր հավաքվել, որ չէի կարողանում քայլել: Մի մե՜ծ փիղ էին տանում գազանանոց: Ճանապարհները փակ էին: Հազիվհազ վազելով հասա դպրոց,– շուտասելուկի պես վրա տվեց Ռուբենը:

– Իսկ հիմա, Ռուբե՛ն, օգտագործիր քո ճիշտ խոսելու իրավունքը և ասա՝ քո այդ պատմության մեջ քանի՞ ճիշտ բառ կա:

– Երեք բառ,– հազիվ շունչ քաշեց Ռուբենը:

– Ո՞ր բառերը:

– Ես ուշացել եմ:

– Իսկ ինչո՞ւ ես ուշացել:

– Քնած էի մնացել:

4 Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողած տառերը: Քեզ կօգնեն քո սովորած բառերը:

Թե□ տոնական օրն անցել էր, սակայն մեր գյուղում դեռ հ□ուրեր էին շրջում: Գյուղի տարեց մար□իկ նրանց օ□նեցին գտնելու տեսարժան վայրեր տանող ճանապարհները:

Կես□ին անձր□ տեղաց: Անձր□ի վերջին կաթիլների հետ հայտնվեց գույն□գույն ծիածանը: Մար□իկ իրենց հայացքներն ու□□եցին դեպի երկինք: Բոլորի դեմքին զվար□ ժպիտ հայտնվեց:

5 Վերհիշի՛ր թեմայի դասանյութերից երկուսը:

• Պատասխանի՛ր աղյուսակի հարցերին:

| Ստեղծագործության վերնագիրը | Հեղինակը | Հերոսը | Ի՞նչ սովորեցիր այդ հերոսից |
|---|---|---|---|
| | | | |

• Ո՞ր հերոսը քեզ ամենաշատը դուր եկավ և ինչո՞ւ:

Մինչև չտնկես, չես կարող քաղել:

6 Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարներում:

7 Այս թեմատիկ շարքում դու իմացար քո իրավունքների և պարտականությունների մասին:

**Պետք է, կարող եմ** արտահայտությունները տեղադրի՛ր համապատասխան նախադասություններում:

Իրավունքն այն է, ինչ ես _____ անել:

Պարտականությունն այն է, երբ դա _____ անել:

171

### 7.9.4. Աշխատանք «Աչքի առաջ» խորագրի բառերի շուրջ

**Առաջադրանք 4**. Այս առաջադրանքը «Աչքի առաջ» խորագրի բառերի գրությունը վերհիշելու և դրանց ուղղագրությունը ամրապնդելու համար է:

Կատարելով առաջադրանքը՝ երեխաները վերհիշում են **թեև, հյուր, մարդ, օգնել, կեսօր, անձրև, գունագույն, ուղղել, զվարթ** բառերի ուղղագրությունը:

### 7.9.5. Աշխատանք առածի շուրջ

**Առաջադրանք 5**. Երեխաները զույգերով լրացնում են աղյուսակը:

ԱՌԱԾ
Մինչև չտնկես, չես կարող քաղել:
Առածը ներկայացված է նկարաշարով:

**Առաջադրանք 6.**

Առաջին նկարում մարդը ծառ է տնկում: Երկրորդ նկարում մարդը խնամում է իր տնկած ծառը՝ ջրում է, քամիներից է պաշտպանում, փխրեցնում է ծառաբնի հողը:

Երրորդ նկարում ծառն արդեն ծաղկել է: Երևում է, որ մարդը շարունակում է խնամել ծառը: Նա սպիտակեցրել է ծառի բունը՝ վնասատու միջատներից ծառը պաշտպանելու նպատակով: Չորրորդ նկարում ծառն արդեն բերք է տվել և նրանից օգտվում են թե՛ մարդը, թե՛ ամբողջ ընթացքում մարդու գործին հետևող թռչունը:

**Առաջադրանք 7**.

Այս թեմատիկ շարքում դու իմացար քո իրավունքների և պարտականությունների մասին:

Պետք է, կարող եմ արտահայտությունները տեղադրի՛ր համապատասխան նախադասություններում:

Իրավունքն այն է, ինչ ես _____ անել:
Պարտականությունն այն է, երբ դա _____ անել:

Երեխաները, վերհիշելով իրավունքների ու պարտականությունների մասին, դասերը լրացնում են նախադասությունները:

Իրավունքն այն է, ինչ ես **կարող եմ** անել:
Պարտականությունն այն է, որ ես **պետք է** անեմ:

**ԼՈՂԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՉԽԵՂԴՎԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Երկու ընկեր զրուցելով քայլում էին: Նրանց առջև հանկարծ բացվեց մի շատ գեղեցիկ լճակ: Ընկերներից մեկն ասաց, որ ուզում է լողալով հասնել լճակի մեջ երևացող կղզին: Կղզու վրա մի չքնաղ պալատ կար՝ դրախտային պարտեզով: Մյուս ընկերն ասաց.

– Բայց լա՛վ մտածիր, դու լողալ գիտե՞ս:

– Ի՞նչ է, իրավունք չունե՞մ լողալու,– ասաց կղզի հասնել ցանկացողն ու նետվեց ջուրը:

Մի քիչ լողալուց հետո սկսեց խեղդվել ու օգնություն կանչել:

Ընկերը ճարպիկ լողորդ էր. հասավ ու փրկեց նրան:

– Դու իրավունք ունես լող տալու,– ասաց նա:– Սակայն այդ իրավունքից օգտվելու համար դու պարտավոր ես հաշվի առնել քո ուժերը:

8 Մտածի՛ր՝ կա՞ն պարտականություններ, որոնք դու չունեիր մի քանի տարի առաջ:

9 ԽԱՉԲԱՌ «ԱՄՓՈՓՈՒՄ»

Խաչբառը լրացրո՛ւ թեմատիկ շարքի հերոսների անուններով և երկու բանալի բառով:

1. Ի՞նչ է ծնում իրավունքը:

5. Ի՞նչ են սրանք՝ դպրոց գնալ, սովորել, աշխատել, ընտանիք, հայրենի տուն ունենալ, կարծիք հայտնել:

3.

7. -ի անունը:

8. Սկսվում է մեծատառով, վերջում դրվում է վերջակետ:



6.

9.



4.



2.

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես կարևորեցի

Ես հասկացա



Ես կկնայեմ

172

**Առաջադրանք 8.**

Մտածի՛ր՝ կա՞ն պարտականություններ, որոնք դու չունեիր մի քանի տարի առաջ:

Օրինակներ. Մի քանի տարի առաջ ես դեռևս դպրոցական չէի և չունեի դպրոցականի այն բոլոր պարտականությունները, որոնք կապված են սովորելու հետ:

**Առաջադրանք 9**.

1.Պարտականություն: 2.Այծ: 3.Էլմեր: 4.Բադ: 5.Իրավունք: 6.Շուն: 7.Ըթ: 8.Կատու: 9.Նախադասություն:

### 7.9.6. Դասից քաղած իմ պտուղները

Երեխաները լրացնում են անավարտ նախադասությունները՝ ըստ դասանյութից քաղած իրենց գիտելիքների:

Ես կարևորեցի _____

Ես հասկացա _____

Ես կխնայեմ _____

ԴԱՍԱԳՐՔԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Սիրելի՛ երկրորդ դասարանցի:

Դու ավարտեցիր քո ճամփորդությունը իմ վեց մոլորակներով: Ինչպես խոստացել էի ամենասկզբում, այդ ճամփորդության ժամանակ դու կարդացիր շատ հետաքրքիր պատմություններ: Ծանոթացար շատ ու շատ հերոսների: Ջրուցեցիր նրանց հետ քեզ հուզող հարցերի մասին: Ծանոթացար քո իրավունքներին ու պարտականություններին: Ավելի լավ ճանաչեցիր քեզ ու քեզ շրջապատող աշխարհը:

Բարի՛ երթ դեպի երրորդ դասարան:

Թեկուզ մենք հրաժեշտ ենք տալիս միմյանց, բայց ես միշտ կլինեմ քեզ հետ, քո մտքում ու քո սրտում:

vachagan.am



1 Ի՞նչ հարց կտաս «տիեզերագնացներին»:

173

## 7.10. ԴԱՍԱԳՐՔԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Ուսուցիչը երեխաների համար կարդում է ԴԱՍԱԳՐՔԻ ՀՐԱԺԵՇՏԸ նյութը: Հնարավոր է նաև QR-կոդի միջոցով լսել:

Երեխաների հետ հիշում են, թե ինչ հետաքրքիր պատմություններ կարդացին, հետաքրքրաշարժ առաջադրանքներ լուծեցին: Թե ինչպես ամբողջ ուսումնական տարում դասագիրքը ուղեկցեց իրենց, ավելի մտերմացրեց միմյանց: Թե ինչքա՛ն նոր բան իմացան թե՛ իրենց, թե՛ շրջապատող աշխարհի ու մարդկանց մասին: Թե ինչքա՛ն տարբեր հերոսների հանդիպեցին, ծանոթացան նրանց գործերին, սիրեցին ու մտերմացան, ինչքան շատ բան սովորեցին նրանցից:

Ուսուցիչը և աշակերտները շնորհակալություն են հայտնում դասագիրքն ստեղծողներին, դասագրքին:

Ուսուցիչը բարի մաղթանք է հղում աշակերտներին երկրորդ դասարանն ավարտելու և երրորդ դասարան փոխադրվելու առթիվ:

**Առաջադրանք 1.** Ի՞նչ հարց կտաս «տիեզերագնացներին»:

Հարցերի օրինակներ:

– Ո՞ր մոլորակը ձեզ ավելի շատ դուր եկավ:

– Մենք բազմիցս հանդիպեցինք իրար, հիշո՞ւմ եք:

– Դասագիրքը ինձ շատ դուր եկավ, իսկ ձե՞զ:

– Ի՞նչ չկար դասագրքում, որ կուզեիք լիներ:

– Կա՞ր նյութ, որը ձեզ դուր չեկավ:

– Հերոսներից ո՞ր մեկին ամենաշատը սիրեցիք ու կհիշեք:

– Դասագիրքն օգնե՞ց, որ դուք ավելի լավ ճանաչեք ձեզ:

– Ո՞ր դասանյութը կուզենայիք շարունակություն ունենար երրորդ դասարանի դասագրքում:

– Ի՞նչ եք կարծում՝ ձեր իրավունքները կավելանա՞ն, երբ փոխադրվեք երրորդ դասարան:

### ՀՐԱԺԵՇՏ ԴԱՍԱԳՐՔԻՆ

Մենք սիրեցինք շատ
Մեր դասագիրքը,
Նկարով առատ,
Հեքիաթով լիքը:

Լուծեցինք խաչբառ,
Լսեցինք երգեր,
Գրքի հետ դարձանք
Մենք լավ ընկերներ:

Շատ կային այնտեղ
Ուրախ խնդուկներ,
Շուտասելուկներ
Ու հանելուկներ:

Իմացանք՝ ունենք
Մենք իրավունքներ
Ու պարտավոր ենք
Միշտ լավ սովորել:

### Ցանկ 1. ՈՐՈՇ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Էջ 9: Առ. 4 – դեղատուն, ներկատուն, հացատուն: Առ. 6 – դու ես:
Էջ 17: Առ. 7 – արի, կտրիձ:
Էջ 19: Առ. 2 – այծ-այտ-արտ-արջ: Կով-կավ-կաթ:
Էջ 27: Առ. 2 – հոգատարություն, ուշադրություն, բարություն, փոխօգնություն:
Էջ 32: Առ. 2 – համբուրել, հեքիաթ, դարձնել, նաև, պաշտպանել, կարդալ, տերև, վերադառնալ, առողջանալ, երգել, հիանալ, արդեն, նկարագրել, թեև, եղբայր: Առ. 4 – ոգնի:
Էջ 36: Առ. 2 – մենք:
Էջ 37: Առ. 6 – անուն:
Էջ 43: Առ. 2 – բարդ, դարդ, զարդ, հարդ, մարդ, ջարդ, սարդ: Գույն, թույն, հույն, նույն, սույն:
Էջ 53: Առ. 5 – հուր-սուր-սար-պար:
Էջ 58: Առ. 2 – թույլ-ամուր, լույս-մութ, քաջ-վախկոտ, ուրախ-տխուր, փափուկ-կոշտ, գիտուն-անգետ:
Էջ 64: Առ. 5 – հայ-համ-կամ-կար-կեր-սեր:
Էջ 89: Առ. 3 – կենդանի, արջուկ, մարդիկ, կարագ: Առ. 4 – կառք, կեղև, այլևս, տերև: Առ. 7 – հայրենիք:
Էջ 96: Առ. 3 – չիր, շունչ:
Էջ 97: Առ. 6 – չակերտ: Առ. 9 – Ցլուն:
Էջ 100: Առ. 8 – երկվորյակ:
Էջ 104: Առ. 6 – հավ-հով-հոր-հուր-մուր-մուկ:
Էջ 109: Առ. 9 – հարցականի նշան:
Էջ 113: Առ. 6 – ժամանակ: Առ. 8 – ժամանակը արագ է թռչում:
Էջ 119: Առ. 2 – ջուր-հուր-հոր-կոր-կոթ-կաթ: Առ. 4 – ամպեր:
Էջ 124: Առ. 9 – ծիածան: Առ. 10 – ջուր-հուր-հոր-լոր-լող:
Էջ 125: Առ. 11 – վարդագույն:
Էջ 127: Առ. 3 – ջուրը դարձնելով սառույց:
Էջ 129: Առ. 6 – թուր, լուր, հուր, մուր, սուր:
Էջ 137: Առ. 4 – արմատ:
Էջ 148: Առ. 1 – համերաշխ, երջանիկ, միագույն:
Էջ 150: Առ. 2 – փիղ: Առ. 3 – Էլմեր:
Էջ 156: Առ. 3 – իրավունք:
Էջ 168: Առ. 7 – վերջակետ, բացականչական նշան:

### Ցանկ 2. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ԴԱՍԱԳՐՔՈՒՄ


Հնչյուն-տառ – 8, 9, 15, 23, 29, 38, 50, 54
Ձայնավոր-բաղաձայն հնչյուն-տառեր – 12, 13, 14, 15, 58
Է-ի, Ե-ի ուղղագրություն – 20, 29, 69
Օ-ի, Ո-ի ուղղագրություն – 26, 27, 29
Ը-ի ուղղագրություն – 38, 40, 41, 168
և-ի ուղղագրություն – 50
Այբբենական կարգ – 64
Տառանուններ – 124
Վանկ – 9, 10, 27, 36, 40, 47, 54, 63, 148, 168
Բառ – 8, 9, 10, 12, 15, 17, 18, 19, 20, 23, 29, 32, 35, 40, 41, 43, 50, 53, 54, 58, 64, 65, 69, 71, 72, 74, 78, 81, 84, 89, 90, 96, 100, 102, 104, 108, 109, 116, 119, 120, 123, 124, 127, 129, 132, 137, 141, 143, 148, 150, 151, 156, 158, 160, 171
Բառակապակցություն – 23, 29, 58, 85, 102, 129
Հակառակ իմաստ ունեցող բառեր – 24, 58, 85, 93, 144
Նույն իմաստ ունեցող բառեր – 17
Առարկա ցույց տվող բառեր – 64, 65, 67, 71, 80, 81, 96, 106, 128, 132, 143
Եզակի-հոգնակի – 71, 75, 78, 103
Անձ և իր ցույց տվող բառեր – 84, 87
Գործողություն ցույց տվող բառեր – 96, 100, 101, 106, 109, 112
Հատկանիշ ցույց տվող բառեր – 119, 120, 122, 123
Բառի արմատ – 132, 137, 141, 148, 151, 156
Ածանց – 143, 151
Պարզ բառեր – 148, 157
Բարդ բառեր – 156, 157
Դարձվածք – 127, 141
Նախադասություն – 8, 10, 13, 15, 17, 19, 21, 24, 26, 30, 37, 41, 43, 44, 46, 47, 50, 51, 53, 54, 60, 63, 64, 65, 69, 72, 74, 75, 78, 81, 85, 87, 89, 96, 97, 99, 10, 102, 103, 106, 109, 110, 113, 116, 120, 122, 125, 129, 133, 134, 137, 140, 141, 144, 148, 151, 152, 153, 157, 160, 162, 163, 164, 166, 168, 172
Կետադրական նշաններ – 97, 109, 164, 165, 166, 167, 168




Դասագրքի այս էջում զետեղված է երկու ցանկ: Առաջին ցանկում տրված են որոշ առաջադրանքների պատասխանները: Թեև այդ պատասխաններն առավել մանրամասն ներկայացված են այս ձեռնարկում, այնուամենայնիվ, հարկ համարեցինք որոշ առաջադրանքների պատասխաններ զետեղել դասագրքում; Դրանից կարող են օգտվել թե՛ աշակերտները, թե՛ ծնողները, որոնք ձեռքի տակ չունեն սույն ձեռնարկը:

Երկրորդ ցանկում զետեղված են ծրագրային լեզվական տարրական գիտելիքների անվանումներն ու այն էջերը, որտեղ հանդիպում են դրանք՝ առարկայացանկ: Այդ ցանկը օգտակար կարող է լինել թե՛ դասավանդող ուսուցչին, թե՛ ծնողին ու աշակերտին: Դրանով ուսուցիչները կարող են պարզ տեսնել լեզվական գիտելիքների մատուցման ընթացքը և համակարգել իրենց աշխատանքը, կրկնություններ կազմակերպել և կատարել այլ աշխատանքներ:

# ՄԱՍ 3

## ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

Այս նյութերը դասակարգված են ըստ թեմաների և դասանյութերի: Ներկայացված են դասագրքում առկա առաջադրանքները լրացնող լեզվական առաջադրանքներ, ինչպես նաև գրական և ոչ գրական ստեղծագործություններ, տեսանյութեր, ձայնագրություններ, հետաքրքրաշարժ առաջադրանքներ, ուսումնական խաղեր:

**Թեմա 1**

| ***«Ով ենք մենք»*** | |
|---|---|
| ***Դասանյութեր*** | ***Ուսումնական նյութեր*** |
| Բարի գալուստ<br>«Ով ենք մենք» մոլորակ | • Մոլորակների երգ/ժեստերի լեզվով թարգմանված/YT/ https://www.youtube.com/watch?v=F_AvfbzQFFw<br>29.05.2023թ[6]<br><br>• «Մոլորակ» երգ ուսումնական տեսահոլովակ/YT/ https://www.youtube.com/watch?v=qvfCYqp1rzg |
| Բա՛րև, ես եմ | Սկիզբն է միայն |
| Ո՞վ եմ ես: Ես մանուկ եմ | Ի՞նչ կդառնամ |
| Ես սիրում եմ | Կարծում եք, թե կատա՞կ է<br>Առավոտը գյուղում<br>Շունը |
| Ես քաջ եմ | Որսորդները<br>Կիկլիկո |
| Ընկերները | Հայկական մուլտֆիլմ «Ո՞վ է քո ընկերը» /YT/<br>https://www.youtube.com/watch?v=Ckqn_XoEFyM<br><br>Կապույտ տերևներ<br>Ո՞ր մեկս կամաչի<br>Ինչպես է շունը մարդուն ընկեր դարձել<br>Ի՞նչ է հուշում բնությունը |

[6] Բոլոր youtube.com հղումներով վերջին անգամ մուտք ենք գործել 29.05.2023 թ.

**Լիպարիտ Սարգսյան**

**ՍԿԻԶԲՆ Է ՄԻԱՅՆ**

Հայկը դպրոց է գնում,
Աշակերտ է նա արդեն,
Սիրով գրում է, կարդում
Պատմվածքներ, հեքիաթներ:

Արդեն գիտի, թե հայոց
Տառերն ով է հնարել,
Թե ում են շատ սիրելով՝
Իր անունը Հայկ դրել...

Գիտի, որ Հայկը մեր մեծ
Նահապետն է նետաձիգ,
Ով մեզ անուն պարգևեց,
Երկիր ու հող՝ Հայրենիք...

Հայկը դպրոց է գնում
Ընդամենը մի տարի,
Բայց շատ բան կա աշխարհում,
Որ նոր պիտի սովորի:

Սա դեռ սկիզբն է միայն,
Մի նե՞ղ, փոքրիկ արահետ.
Չէ՞ որ ուղին գիտության
Չունի վերջ ու վերջակետ...

**Խաչիկ Մանուկյան**
**ԻՆՉ ԿԴԱՌՆԱՄ**

Խոհարար եմ դառնալու
Կամ էլ՝ խիզախ նավավար,
Բայց ֆուտբոլիստը կարծես
Ինձ ավելի է հարմար:

Տատիկս ասում է՝ բժիշկ,
Պապիկը թե՝ այգեպան,
Ու հիմա իմ մտքի մեջ
Խառնվել է ամեն բան:

Թե այդ բոլոր գործերին
Ես չլինեմ հարկավոր –
Էհ, ի՞նչ արած, ստիպված
Պիտի դառնամ թագավոր:

**Խաչիկ Մանուկյան**
**ՈՐՍՈՐԴՆԵՐԸ**

Երկար չեմ խոսի՝
Ես ու հայրիկս
Գնում էինք որսի,
Անցանք ձորի կողքով,
Տեսանք աղվեսին,
Հայրիկն ասաց՝ զարկեմ,
Ես ասացի՝ պետք չէ,
Այնպես բղավեցի,
Որ աղվեսը փախչեր:
Հայրիկը չէր ուզում
Ինձ հետ իզուր վիճել,
Մի քիչ առաջ անցանք,
Տեսանք փոքրիկ լիճ է,
Մեջը արեգակի
Ժպիտն է շողշողում,
Վրան երկու սիրուն
Բադիկներ են լողում:
Հայրիկն ասաց՝ զարկեմ,
Ես ասացի՝ պետք չէ,
Այնպես ուզում էի

Բադիկները թռչեն:
Հայրս գրկեց, ասաց՝
Լավ սիրտ ունես, որդիս,
Բայց քեզ հաջորդ անգամ
Չեմ տանելու որսի:

**Հովհաննես Թումանյան**

**ՇՈՒՆԸ**

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես
Հա՛ֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես:
Թե գա մեզ մոտ
Մի հին ծանոթ,
Մոտն եմ վազում,
Պոչս շարժում:
Բայց թե մի գող,
Չար կամեցող
Ուզի թաքուն
Մտնի մեր տուն,
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես.
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես:

**Գրիգոր Եղիկյան**

**ԿԻԿԼԻԿՈ**

Կար կիկլիկո,
Ծիկ-ծիկլիկո՝
Գոռոզ, ճչան,
Մեծ-մեծ փչան:
Տեսավ բադին,
Կարմիր թաթին.
Լիճը մտած
Լող է տալիս,
Արևի տակ
Շող է տալիս:
Այս ի՞նչ բան է,
Ա՛յ քեզ օյին,
Ամոթ ինձ պես
Կիկլիկոյին,
Ես չլողամ,
Բա՞դը լողա,
Սատկես լավ է,
Աքլոր տղա...
Ասաց, իրեն
Գցեց լիճը,
Խեղճից մնաց
Միայն ճիչը...

**Սիլվա Կապուտիկյան**

**ԿԱՐԾՈՒՄ ԵՔ, ԹԵ ԿԱՏԱ՞Կ Է**

Այսօր ուրիշ է կարգը.
Ե՞ս եմ մաքրել հատակը:
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, ի՞նչ արիք,
Սենյակ ինչո՞ւ ոտք դրիք:
Տեղներումդ քարացե՛ք,
Նորից շարժվել չփորձե՛ք:
Ջուր չխմե՛ք,
Կկաթի:
Հաց-մաց չուտե՛ք,
Կթափվի:
Լուսամուտը չբացե՛ք,
Փոշի կգա, իմացե՛ք:

Ոչ ոք ուժեղ չշնչի,
Թե չէ փայլը կկորչի։

Ի՞նչ է, մաքրել հատակը,
Կարծում եք, թե կատա՞կ է...

**Մշակումը՝ Ղազարոս Աղայանի**

## ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Արեգակը դուրս է եկել՝
Պըսպղալով,
Շողքը հերթից ներս է ընկել
Շողշողալով.
Ծիտը ծառին կըչկըչում է
Ծըլվըլալով.

Զորում առուն քըչքըչում է
Վըշվշալով.
Ծույլ տղայի քունն է տարել
Խըռմփալով.
Կոշիկները շունն է տարել
Մըռմըռալով։

**Վալենտինա Օսեևա**

## ԿԱՊՈՒՅՏ ՏԵՐԵՎՆԵՐ

Անին երկու կանաչ մատիտ ուներ, իսկ Սոնան ոչ մի հատ չուներ։

Մի օր Սոնան խնդրեց Անիին.

- Քո կանաչ մատիտը տո՛ւր, նկարներս ներկեմ։
- Մայրիկիս հարցնեմ, հետո, - պատասխանեց Անին։

Մյուս օրը Սոնան հարցրեց.

- Մայրիկդ թույլ տվե՞ց։
- Մայրիկս թույլ տվեց, բայց ես վախենում եմ՝ դու մատիտը կոտրես։
- Ես զգույշ կլինեմ, - ասաց Սոնան։
- Տե՛ս, - խրատեց Անին, - չսրես, ամուր չսեղմես և շատ էլ չներկես։
- Ես միայն ծառերի տերևները պիտի ներկեմ և մեկ էլ՝ կանաչ խոտը։
- Դա շատ է, - հոնքերը կիտելով՝ ասաց Անին։

Սոնան նայեց նրան ու հեռացավ՝ առանց մատիտը վերցնելու։

Անին զարմացավ, վազեց Սոնայի հետևից.

- Հը՛, ի՞նչ եղավ։ Վերցրո՛ւ։
- Հարկավոր չէ, - պատասխանեց Սոնան։

Դասի ժամանակ ուսուցչուհին հարցրեց.

- Սոնա՛, ինչո՞ւ են քո ծառերի տերևները կապույտ։
- Կանաչ մատիտ չունեմ։
- Իսկ ինչո՞ւ ընկերուհուցդ չվերցրիր։

Սոնան լռեց, իսկ Անին կարմրելով ասաց.

- Ես մատիտը տալիս էի, բայց նա չվերցրեց։

Ուսուցչուհին նայեց Անիին և ասաց.

- Այնպե՛ս պետք է տայիր, որ նա վերցներ:

## Ո՞Ր ՄԵԿՍ ԿԱՄԱՉԻ

### Ժողովրդական զրույց

Երկու ընկեր գնում են անապատով: Մեկը շատ է ծարավում, ուժասպառ ընկնում է ավազներին: Մյուսը ջուր ունենում է, բայց չի տալիս ընկերոջը, թողնում գնում է:

Մի քարավան է անցնում այդ կողմերով: Տեսնում են ուշագնաց տղային, ջուր են տալիս: Տղան ոտքի է կանգնում, գնում հասնում է ընկերոջը: Ոչինչ չի ասում նրան: Միասին շարունակում են ճանապարհը: Ջուրը չտվող ընկերը հանկարծ սայթաքում է, ընկնում ու ոտքը կոտրում: Մյուս ընկերը շալակում է նրան ու հասցնում քաղաք:

- Դե, մնաս բարով, - ասում է նա: - Քանի դեռ ապրում ենք, դու քո ջրի՛ց խոսիր, ես՝ իմ շալակելուց: Տեսնենք՝ որ մեկս կամաչի:

## ԻՆՉՊԵՍ Է ՇՈՒՆԸ ՄԱՐԴՈՒՆ ԸՆԿԵՐ ԴԱՐՁԵԼ

### Հեքիաթ

Վաղո՛ւց, շա՛տ վաղուց շունն անտառում մենակ էր ապրում: Որոշում է մի ընկեր ճարել: Դիմում է նապաստակին.

- Նապաստա՛կ, արի՛ միասին ապրենք:
- Շա՛տ բարի, - համաձայնում է նա:

Սկսում են միասին ապրել:

Շունը գիշերը հաճախ հաչում է:

- Շո՛ւն, մի՛ հաչիր, գայլը կգա և մեզ կուտի, - ասում է նապաստակը:
- Վախկոտի՛ մեկը, - բացականչում է շունը և գնում գայլի մոտ:

Երբ գիշերը նորից սկսում է հաչել, գայլը վախեցած շշնջում է.

- Շո՛ւն, ձայնդ կտրի՛ր, արջը կգա և կպատառոտի մեզ:

Թողնելով գայլին՝ շունը վազում է, վազում և, հանդիպելով արջին, ասում է.

- Ա՛րջ, շա՛տ եմ խնդրում, ե՛կ միասին ապրենք:

Արջը համաձայնում է: Գիշերը, ըստ իր սովորության, շունը նորից է սկսում հաչել:

- Շո՛ւն, շատ եմ խնդրում, մի՛ հաչիր, մարդը, լսելով քո հաչոցը, մեր կողմը կգա, - ասում է արջը:

«Սա ի՞նչ բան է, բոլորն էլ վախենում են», - մտածում է շունը: Եվ արջից նույնպես բաժանվում է:

Երկար ճանապարհ անցնելուց հետո հանդիպում է մարդուն:

- Մա՛րդ, արի՛ միասին ապրենք:
- Լա՛վ, - համաձայնում է մարդը:

Ինչպես միշտ, շունը գիշեր դարձայալ հաչում է: Մարդն արթնանում է և ասում.

- Ապրե՛ս, հաչի՛ր, հաչի՛ր, ինչքան ուզում ես: Արջն ու գայլը կվախենան և մեր կողմը չեն գա:
- Օ՜հ, ի՜նչ լավ է, - բացականչում է շունը՝ ուրախությունից պոչը շարժելով, - վերջապես ինձ համար ընկեր ճարեցի:

**Յուրի Սահակյան**

**Ի՞ՆՉ Է ՀՈՒՇՈՒՄ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ**

Եթե սունկը միոտանի
Ունի մի գլուխ,

Եթե մարդը երկոտանի
Ունի մի գլուխ,

Եթե շունը չորքոտանի
Ունի մի գլուխ,

Թե մրջյունը վեցոտանի
Ունի մի գլուխ,
Հազարոտնուկը մինչև իսկ
Ունի մի գլուխ.

Գուցե ինչ-որ իմաստ ունի,
Որ համառորեն
Բնությունը նույն միտքն է մեզ
Հուշում մի գլուխ:

**Թեմա 2**

**Դասանյութեր** **Ուսումնական նյութեր**

| ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ | |
|---|---|
| Խոսքի ուժը | Օգնել ու հոգնել<br>Լևոնի լողալը<br>Քաղաքավարի տղան<br>Սառը խոսքեր և սառած խոսքեր<br>Երգ «Շնորհակալություն» – Արփինե Բաբախանյան /YT/<br>https://www.youtube.com/watch?v=uCYFEpoCeO0 |
| Մի հեքիաթ ոզնու մասին | Որսորդները<br>Ով-ովքերի երգը<br>Ոզնին ու փուչիկը<br>Հետաքրքիր փաստեր ոզնիների մասին, / YT/<br>https://www.youtube.com/watch?v=mq51lmnMSpw<br><br>Աուդիո հեքիաթ «Ինչպես ոզնին դարձավ փշոտ» /YT/<br>https://www.youtube.com/watch?v=fmw4xOKsFOE |
| Ես | Ոչ մի բանից մարդուկը<br>Թռչունի մտածմունքը<br>Զարմանալի բառը<br>Սխալ բառը, Հանելուկ, Խնդուկ |

| | Բառերը |
|---|---|
| Տա՞ռն էլ գլխարկ ունենա | Ե- կատուն ու Չէ- կատուն, հանելուկ, խնդուկ<br>Տառը<br>Հողմաբլիթ կերե՞լ ես դու, ջրաբոքոն տեսե՞լ ես դու |
| Նկարչություն | Մայրիկի ծաղիկը<br>Զարմանալի են մայրիկները<br>Իմ ստերը<br>Նկար ասֆալտին<br>Նկարիչ արևը<br>Երգ՝ **Մայրիկ** LI VOICE /YT/<br>https://www.youtube.com/watch?v=PUTVoHBdess<br><br>Մուլտֆիլմ՝ Մայրիկի օգնականը<br>https://www.youtube.com/watch?v=SIPGvpdx3A0 |
| Կաքավի գովքը | Անիմացիոն մուլտֆիլմ՝ 2D «Հովհաննես Թումանյան» /YT/<br>https //www.youtube.com/watch?v=av4vtOu6gXQ<br><br>Հեքիաթ-մուլտֆիլմ՝ «Թռչուններ» /YT/<br>https://www.youtube.com/watch?v=siSlI6_By6U&t=211s<br><br>Երգ՝ Կաքավիկ / Արփի և Արամ /YT/<br>https://www.youtube.com/watch?v=w2dBhwbUA1w<br>Թումանյանն ու Անդրանիկը (ավանդություն)<br>Քո տունը<br>Զամբյուղը<br>Բկլիկ ձկնիկը<br>Ծտի ահը<br>Խլուրդն ու ոզնին |
| Փոքրիկ պարուհին | Երգ՝ Փոքրերի աշխարհ<br>https://www.youtube.com/watch?v=n8U_aspmEuk<br><br>Երգ- մուլտֆիլմ՝ Հեքիաթների աշխարհում /խոսքերը՝ Հ. Խրիմյանի, երաժշտությունը՝ Ե. Գևորգյանի//YT/<br>https://www.youtube.com/watch?v=uaVIbH6OeH4<br><br>Քամին |

**Էդվարդ Միլիտոնյան**

## ՕԳՆԵԼ ՈՒ ՀՈԳՆԵԼ

Մայրիկին օգնում եմ,
Օգնելուց հոգնում եմ,
Հոգնելուց նստում
Ու նստած երգում եմ:

Եվ այնքան եմ երգում,
Որ երգից հոգնում եմ,
Ու նորից ելնում,
Մայրիկին օգնում եմ:

## ԼԵՎՈՆԻ ԼՈՂԱԼԸ

**«Ծիծեռնակից»**

Լևոնը հիվանդ պառկած էր: Հանկարծ լսեց, որ ընկերները կանչում են:

- Լևո՛ն, Լևո՛ն, գնանք լողալու:

Լևոնը լողալ շատ էր սիրում: Իսկույն մոռացավ հիվանդությունը և ընկերների հետ վազեց լողալու: Երբ տուն դարձավ, մայրիկը բարկացավ:

- Ինչո՞ւ ես գնացել լողալու: Չէ՞ որ փորդ ցավում էր:

- Մայրի՛կ, ազնիվ խոսք, ես միայն մեջքիս վրա էի լողում, - արդարացավ Լևոնը:

**Ս. Պոգորելովսկի**

## ՔԱՂԱՔԱՎԱՐԻ ՏՂԱՆ

Բոլորն արդեն քնել էին:

Հանկարծ Վահանն արթնացավ և ձայն տվեց մայրիկին:

Մայրիկը վախեցած վեր թռավ ու հարցրեց:

- Ի՞նչ է պատահել, Վահա՛ն:

- Ոչի՛նչ, մայրիկ:

- Քեզ վա՞տ ես զգում:

- Ո՛չ:

- Վատ երա՞զ ես տեսել:

- Ո՛չ:

- Իսկ ինչու՞ արթնացրիր:

- Մոռացել էի քեզ բարի գիշեր ասել:

**Վաչագան Ա. Սարգսյան**

## ՍԱՌԸ ԽՈՍՔԵՐ ԵՎ ՍԱՌԱԾ ԽՈՍՔԵՐ

Եթե մեկի նկատմամբ սառը վերաբերմունք ունես՝ զայրացած ես նրա վրա, հիասթափված ես նրանից, չես ուզում նրա հետ ընկերություն անել, ապա հանդիպելիս սառը խոսքեր ես ասում նրան, զգացնում ես քո սառնությունը։ Իսկ մեկ ուրիշի նկատմամբ քո ջերմությունը, ջերմ վերաբերմունքն արտահայտում ես ջերմ խոսքերով։

Սակայն իմացիր, որ հեքիաթային այս կյանքում սառչել կարող են թե՛ սառը խոսքերը, թե՛ ջերմ խոսքերը։

**Վաչագան Ա. Սարգսյան**

## ԲԱՌԵՐԸ

Այնքան ցուրտ է այս ձմեռ,
Որ բերանիդ գոլորշին
Շրթունքիցդ կառչում է,
Հենց դուրս եկավ՝ սառչում է։

Ինչո՞ւ միայն գոլորշին՝
Բառերն էլ են սարսռում,
Կախվում մոտիկ կտուրից,
Սառցաշիթեր են դառնում։

Բայց փոխվում է ամեն ձև,
Գարուն կգա, տաք անձրև,
Սառույցները կհալվեն,
Կաթիլ-կաթիլ բառերը

Սառցե գրկից կհառնեն,
Կապանքներից ազատված՝
Նորից ազատ կշնչեն,
Ու ձայները թև առած
Օդում նորից կհնչեն։

Հիմա ուշիմ եղիր դու՝
Ձմռանն այնպես չխոսես,
Որ գարնանը հալվելուց
Բառերն այնպես վատ հնչեն,
Որ դու զղջաս, ամաչես։

**Վաչագան Ա. Սարգսյան**

## ՈՐՍՈՐԴՆԵՐԸ

Որսորդ Ոզնին ոսկեհատիկ ողկույզներ էր որոնում որթի ոստերին։

Որքան որոնեց՝ ոչ մի ողկույզ։

Որթի ոստերին որկրամոլ Որդը ողկույզ էր որոճում։

Որտեղից որտեղ Որորը ողջունեց Ոզնուն.

– Ողջո՛ւյն, որսո՛րդ Ոզնի։

– Ողջո՛ւյն, որսո՛րդ Որոր։

– Որ ողկույզներ որսաս՝ որթի ոստերի որկրամոլ որդերը որսա, որոնք ոչնչացնում են ողկույզները։

Որսորդ Ոզնին ոգևորվեց, ոստնեց, որսաց ողկույզն ու որդը։

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ՈՎ-ՈՎՔԵՐԻ ԵՐԳԸ**

Կարդանք բառեր սովորական՝
Ոզնի, ողկույզ, որս ու որսկան,
Որոր, ոսկոր, ոսկի, ոստայն,
Որոտ, ոչխար, որսորդական։

Հիմա կարդանք՝ ով ու ովքեր,
Տեսնո՞ւմ եք, որ տարբեր ենք մենք,
Միայն այստեղ՝ բառասկզբում,
Ո գրվում է, օ կարդացվում։

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ՈԶՆԻՆ ՈՒ ՓՈՒՉԻԿԸ**

- Ես ուզում եմ փուչիկ գնել,
Ձեռքիս բռնել, ուրախ քայլել։
- Բայց փշերդ այնքան սուր են,
- Որ ջանքերդ շատ իզուր են։
- Ես կգնեմ մի մե՛ծ գլխարկ,
Որ փշերս ծածկեմ հատ-հատ։

Ասաց ոզնին, գնեց գլխարկ,
Դրեց գլխին, քայլեց հպարտ։
Բայց իր բնին դեռ չհասած,
Քամին փչեց, իր երգն ասաց,
Գլխարկն առավ, քշեց տարավ,
Ու փուչիկը փուչ-փուչ դառավ։

**Ավետիք Իսահակյան**
**ԽԼՈՒՐԴՆ ՈՒ ՈԶՆԻՆ**

Ձմեռնամուտին Ոզնին խնդրեց Խլուրդին, որ սա իր բնի մեջ նրան մի փոքր տեղ տա պատսպարվելու։ Խլուրդը համաձայնեց։ Ոզնին էլ մի լավ տեղավորվեց, և լայն ու արձակ փռեց իր փշերը։ Բայց տանտերը շուտով հասկացավ իր սխալը, որովհետև ամեն մի շարժվելունց նրա մարմինը ծակծկվում էր հյուրի փշերից։

Եվ նա ստիպված եղավ խնդրել Ոզնուն, որ հեռանա իր բնից, սա էլ ծիծաղեց նրա վրա, ասելով. – Եթե քեզ այստեղ դուր չի գալիս, դու հեռացիր, ես շատ գոհ եմ և մնում եմ։

**Ջաննի Ռոդարի**

## ՈՉ ՄԻ ԲԱՆԻՑ ՄԱՐԴՈՒԿԸ

Լինում է, չի լինում՝ ոչ մի բանից մարդուկ է լինում: Ոչ մի բանից մարդո՞ւկ: Այո, նրա քիթն էլ էր ոչ մի բանից, բերանն էլ: Հագին բա՛ն չկար, կոշիկներն էլ ոչ մի բանից էին:

Մի օր մարդուկը քայլում է ճանապարհով, որ ոչ մի տեղ չէր տանում, և հանդիպում է ոչ մի բանից մկնիկի:

- Էսի՛ր, – ասում է մարդուկը,- դու կատուներից չե՞ս վախենում:

- Ո՛չ, -պատասխանում է մկնիկը: - Այս երկրում կատուներն էլ են ոչ մի բանից, նրանց բեղերն էլ, ճանկերն էլ: Իսկ ես պանիր եմ սիրում: Ես ուտում եմ միայն անցքերը: Ճիշտ է, նրանք հոտ չունեն, բայց քաղցր են:

- Իմ գլուխը պտտվեց, - ասում է ոչ մի բանից մարդուկը:

- Եվ եթե նույնիսկ գլուխդ պատին տաս, ոչ մի բան էլ չի լինի:

Մարդուկը որոշեց փորձել. մի պատ գտավ, որ գլուխը պատին տա: Բայց տես, թե ինչ դուրս եկավ. պատն էլ էր ոչ մի բանից: Եվ քանի որ մարդուկն ուժեղ էր թափ առել, խփելիս անցավ պատի մյուս կողմը: Այնտեղ ոչի՛նչ չկար:

Մարդուկն այնքան հոգնեց այդքան ոչ մի բանից, որ քնեց:

Երազում տեսավ՝ իբր ինքը ոչ մի բանից մարդուկ է, քայլում է ոչ մի տեղ չտանող ճանապարհով, հանդիպում ոչ մի բանից մկնիկի:

Երազում մարդուկը նույնիսկ պանրի անցքեր կերավ: Ճիշտ էր ասում մկնիկը՝ այդ անցքերը իսկապես հոտ չունեին և քաղցր էին:

**Հովհաննես Թումանյան**

## ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ՝
Առատ ու անփույթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղևը՝ կապույտ:

Նրանից հետո աչքս բաց արի
Մի փոքրիկ բնում,
Տեսա՝ աշխարհքը հարդից է շինած,
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բնից գլուխս հանած,
Նայում եմ դես-դեն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած,
Մեր բունը՝ վրեն։

Հիմի թրռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,
Ամեն տեղ գնում,
Բայց թե աշխարհքը ինչի՞ց է շինած,
Էլ չեմ հասկանում։

**Վաչագան Ա. Սարգսյան**
**ԶԱՐՄԱՆԱԼԻ ԲԱՌԸ**

Նա մի բառ է,
Ճիշտ չորս տառ է,
Կապում է նա
Անիվ, օղակ,
Գունդ ու գնդակ։

Թե առջևում
Դնես մի տառ՝
Կմերկանա
Նա անպատճառ։

**Վաչագան Ա. Սարգսյան**
**ՍԽԱԼ ԲԱՌԸ**

Մի անուղղելի բառ կա մեր լեզվում,
Չորս տառ ունի նա, հինգ լսվող հնչյուն,
Երեխաները հուզվեն-չհուզվեն,
Սխալ են գրում՝ ուզեն, թե չուզեն։
Ա՛յ, որ իմանաս՝ ինչն է պատճառը,
Ուշադիր նայես, կգտնես բառը։

**Հանելուկ**

Բաժանում եմ բառը ես,
Կեսը տանում հաջորդ տող,
Որ ինձ դու ճիշտ կատարես,
Բառը պիտի վանկատես։

**Խնդուկ**

- Արա՛, այս մի տառն ինչո՞ւ ես տողադարձ արել:
- Իսկ ի՞նչ անեի. թղթից արդեն ցած էր ընկնում:

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ՏԱՌԸ**

Անին թռչուններ էր նկարել:

Նկարների տակ գրել էր՝ արագիլ, ծիծեռնակ, կրունկ:

- Ես չգիտեի, որ կրունկներն էլ են թռչում,- ծիծաղեց Սոնան:

- Ինչու՞ ես ծիծաղում – զայրացավ Անին:

- Որովհետև կռունկնե՛րն են թռչում: Իսկ իմ ու քո կրունկները շա՞տ-շատ կարող են թռչկոտել:

- Մեկ չէ՞,- ասաց Անին:- Մի տառ է , էլի՞:

- Դե նայի՛ր, թե մի տառն ինչ կարող է անել,- ասաց Սոնան: - Հիմա ես բառը ր-ով կասեմ, իսկ դու այն դարձրու ռ-ով: Տե՛ս, թե ինչ կստացվի:

- Դու լավ չես վարվում:

- Գնացի սարը ջուր խմելու:

- Այս տարի գեղեցկության մասին խոսել ենք:

**Յուրի Սահակյան**
**Ե-ԿԱՏՈՒՆ ՈՒ ՉԷ-ԿԱՏՈՒՆ**

Ե-կատուն ու Չէ-կատուն
Տան տանիքից իջան տուն:

- Ուռաաա՛,- ասաց Ե-կատուն,-
Ահա և ես եկա տուն:
- Ուռաաա՛,- ասաց Չէ-կատուն,-
Ես էլ ահա եկա տուն...

- Ո՞նց թե,- ասաց Ե-կատուն,-
Չէ որ ես եմ Ե-կատուն:

- Գիտեմ,- ասաց Չէ-կատուն,-
Գիտեմ, դու ես Ե-կատուն:
Ասելիքս այն է, որ
Ես էլ քեզ պես եկա տուն:

- Օ՛ֆ,- մլավեց Ե-կատուն,-
Ճիշտ է, մեկտեղ եկանք տուն,
Բայց մի՛ կրկնիր դու անվերջ՝
Եկա՛ տուն, հա եկա՛ տուն...

- Բա ո՞նց,- ասաց Չէ-կատուն,-
Եթե իրոք եկա տուն,
Հո չեմ ասի, թե՝ ուռաաա՛,
Ես էլ ահա չեկա տուն...

- Զզվեցրի՛ր: - Սրտնեղած
Պառկեց թախտին Ե-կատուն...

Էլ չեն շրջում միասին,
Միասին չեն դառնում տուն,

Որովհետև խռով են
Ե-կատուն ու Չէ-կատուն:

**Յուրի Սահակյան**

## ՀՈՂՄԱԲԼԻԹ ԿԵՐԵ՞Լ ԵՍ ԴՈՒ, ՋՐԱԲՈՔՈՆ ՏԵՍԵ՞Լ ԵՍ ԴՈՒ...

- Ինձ ո՞վ կասի,
Ինձ ո՞վ կասի,
Ի՞նչ է աղում ջրաղացը:
- Բա՛ն հարցրեց,
Ո՞վ չգիտի,
Ջուր է աղում ջրաղացը...

- Ճիշտ չէ, ճիշտ չէ,
Սուտ է ասում:
Ջուր չի աղում ջրաղացը:

- Դե լավ, հիմա ինքդ ասա,
Ի՞նչ է աղում մսաղացը:
- Ո՞վ չգիտի, միս է աղում,
Հաստատ գիտեմ, միս է աղում,
Միս է աղում մսաղացը:
- Բա էլ ինչ կա տարօրինակ,
Թե ջուր աղա ջրաղացը...

Ինձ ո՞վ կասի,

Ինձ ո՞վ կասի,

Ի՞նչ է աղում հողմաղացը:

- Բա՛ն հարցրեց,
Պա՞րզ չէ միթե.
Հողմ է աղում հողմաղացը...
- Ճիշտ չէ, ճիշտ չէ,
Սուտ է ասում:
Հողմ չի աղում հողմաղացը:

- Դե լավ, հիմա ինքդ ասա,
Ի՞նչ է աղում սրճաղացը:
- Դե իհարկե, սուրճ է աղում,
Ո՞վ չգիտի, սուրճ է աղում,
Սուրճ է աղում սրճաղացը...

Բա էլ ի՞նչ կա տարօրինակ,
Թե հողմ աղա հողմաղացը...

- Այդ բոլորը ճիշտ են կարծես,
Բայց ես ինչ որ չեմ հավատում...
- Լավ ես անում՝ չես հավատում,-

Խոսեց հանկարծ ալրոտ կատուն,-

Հողմաբլիթ կերե՞լ ես դու,

Ջրաբոքոն տեսե՞լ ես դու...

Հավատա, որ քեզ պես ես էլ

Ո՛չ կերել եմ,

Ո՛չ էլ տեսել...

**Զորայր Խալափյան**
**ՄԱՅՐԻԿԻ ԾԱՂԻԿԸ**

Մայրիկի ծննդյան օրն Արփենիկն ասաց.
- Գնամ դաշտ, մի ծաղիկ բերեմ մայրիկիս:

Գնաց դաշտ, տեսավ գույնզգույն շա՛տ ծաղիկներ՝ դեղին, կապույտ, կարմիր, սպիտակ:

Մոտեցավ, որ դեղին ծաղիկը պոկի։ Հեռվից մի դեղին թիթեռ եկավ, իջավ ծաղկին, ասաց.

- Վա՜յ, վա՜յ, այդ ի՞նչ ես անում, դեղին ծաղիկն իմ տնակն է։ Եթե պոկես, ես որտե՞ղ ճաշ ուտեմ, ջուր խմեմ, երգեմ, ծափ տամ ու պարեմ ամբողջ օրը։

Արփենիկը մոտեցավ կապույտ ծաղկին, բայց նրա վրա մի կապույտ թիթեռ կար։

- Չպոկե՜ս կապույտ ծաղիկը, - ճչաց կապույտ թիթեռը։ - Սա իմ տնակն է։

Արփենիկը ցանկացավ մայրիկի համար սպիտակ ծաղիկ տանել, ապա կարմիր ծաղկին մոտեցավ, բայց բոլոր ծաղիկների վրա թիթեռներ կային՝ամեն մեկն իր տնակի գույնի։

- Լավ, թիթեռնիկնե՛ր, - ասաց նա, թող մնան ձեր գունավոր տնակները, ես ոչ մի ծաղիկ չեմ պոկի, որ դուք առանց տնակի չմնաք։

Եկավ տուն, պատմեց մայրիկին, թե ինչու նրա համար ծաղիկ չի բերել։ Մայրիկը ծիծաղեց, գրկեց նրան, համբուրեց ու ասաց.

- Դո՛ւ ես իմ ծաղիկը։

**Էդվարդ Միլիտոնյան**

**ԻՄ ՍՏԵՐԸ**

Ով ինչ սուտ ասեր՝
Հավատում էին,
Իսկ իմ ստերը
Բռնվում էին։
Մտածում էի,
Թե դա ինչից է,
Գուցե պատմելո՞ւց
Կամ իմ տեսքից է։
Եվ մի օր մայրս
Կասկածս ցրեց.
Ստերիս մասին
Գաղտնիքը բացեց։
Ասաց՝ ստերդ
Պոզով-պոչով են,
Ասես թե նրանք
Աղվես ու կով են,
Երբ որ խոսում են,
Երևում են պարզ
Սուր-սուր պոզերը,
Պոչը՝ թավամազ։

**Մարո Աբրահամյան-Թաթիկյան**

**ԶԱՐՄԱՆԱԼԻ ԵՆ ՄԱՅՐԻԿՆԵՐԸ**

Զարմանալի են մայրիկները։ Երբեք չես կարող նրանց խաբել։ Ասենք՝ մի վատ բան ես արել և ուզում ես թաքցնել։ Չես կարող. մայրիկը կնայի աչքերիդ մեջ և անմիջապես կիմանա։

Իսկ Նունեն դա չգիտեր։ Նա սովորություն ուներ սենյակում, ձեռքերը տարածած, պտտվել ու պտտվել։ Մինչդեռ մայրիկը բացատրել էր. «Զգո՛ւյշ եղիր։ Պտտվելիս հանկարծ կընկնես ու կվնասվես»։

Մի օր մայրիկը տանը չէր։ Նունեն սկսեց պտտվել։ Պտտվեց, պտտվեց և հետո իրեն չկարողացավ պահել։ Ձեռքը դիպավ պահարանին։ Կոտրվեց մայրիկի սիրած սկահակը։

Նունեն լաց եղավ։

Այդ պահին ներս մտավ մայրիկը։

- Ի՞նչ է պատահել։ Այս ո՞վ է արել։

Նունեն հեկեկալով ասաց.

- Ար... Ար... Արմինեն։
- Ես ձեր աչքերից հիմա կիմանամ, - ասաց մայրիկը։

Եվ մայրիկը Կարինեի, Արմինեի աչքերին նայելուց հետո դարձավ Նունեին.

- Հապա ի՜նձ նայիր, փոքրի՛կս։

Նունեն ուզում էր ինչպես միշտ ուղիղ նայել մայրիկի աչքերին, բայց չկարողացավ։

- Եվ դու ասում ես՝ Արմինեն է արել, - բարկացավ մայրիկը։

Նունեն ամոթից աչքերը փակեց ու գլուխը կախեց...

Զարմանալի են մայրիկները։ Երբեք չես կարող նրանց խաբել։

**Երվանդ Պետրոսյան**

**ՆԿԱՐ ԱՍՖԱԼՏԻՆ**

Ես ասֆալտին այսօր
Մի տանկ նկարեցի։
Հայրս ասաց – Ջնջի՛ր
Ու նկարի՛ր դու ձի։

Տանկից ,- հայրս ասաց,-
Կռվի հոտ է փչում,
Տանկից երգը, ախր,
Միշտ հեռու է փախչում։

- Ջի՛ էլ կնկարեմ,
Երգը թող չփախչի...
Բայց,- ասացի,- հայրի՛կ,
Տանկը ես չեմ ջնջի։

Որ թշնամին տեսնի
Ու մոտ չգա էլ մեզ...
Հայրս ժպտաց, ասաց.
- Գուցե ճիշտը դո՛ւ ես։

**Արմեն Մարտիրոսյան**
**ՆԿԱՐԻՉ ԱՐԵՎԸ**

Ինչ որ արավ, արևն արավ,
Մանուշակից կապույտ տարավ
Ու շաղ տվեց երկնքի մեջ,
Ու գույն առավ երկինքը մեծ։

Ինչ որ արավ, արևն արավ,
Իր շողերով գույներ տարավ,
Ու գույները մեկ-մեկ վառեց,
Ծիածանի աչք նկարեց։

Ինչ որ արավ, արևն արավ,
Պապիկներից հոնքեր տարավ,
Իրար վրա հոնքեր շարեց
Եվ երկնքում ամպ նկարեց։

Հոնքեր առավ, ամպեր փռեց,

Գույներ առավ, աչք նկարեց,
Ու տես, հիմա ինքն է լողում
Իր նկարած կապույտ ծովում:

Թեքվում է աջ ու նկարում,
Թեքվում է ձախ , գույներ
շարում.
Վրձին – շողով ամենատես
Բացեց մի մեծ ցուցահանդես:

## ԹՈՒՄԱՆՅԱՆՆ ՈՒ ԱՆԴՐԱՆԻԿԸ

**(ավանդություն)**

1919 թվականին Թումանյանի տանը նշում էին նրա ծննդյան 50-ամյակը: Հրավիրվածների մեջ էր նաև Զորավար Անդրանիկը: Թումանյանն իր բաժակաճառի մեջ ասում է. «Երեսուն տարի առաջ մի հայ ժողովուրդ էր, մի Խրիմյան Հայրիկ: Անցավ երեսուն տարի, հիմի էլ մի հայ ժողովուրդ է, մի Անդրանիկ…»:

Անդրանիկը նստած տեղից վրա է բերում. «Կանցնի էլի մի երեսուն տարի, ո՛չ Խրիմյան կլինի, ո՛չ Անդրանիկ, կմնա… «Շունն ու կատուն»»:

**Լիպարիտ Սարգսյան**

## ՔՈ ՏՈՒՆԸ

Ճուտը ասաց ճնճղուկ մորը.

- Չյուն է գալու,

Ցրտեց օրը:
Ուրիշների նման՝ ինչո՞ւ
Տաք աշխարհ չենք մենք էլ թռչում:
- Ինչպես ասեմ,-

Տխրեց մայրը,-
Լայն ու մեծ է
Այս աշխարհը,
Բայց սովոր է
Միշտ մեր ցեղը՝
Ապրել միայն
Ծնված տեղը:
Տանել ձմռան
Բուքն ու ձյունը,
Բայց չլքել
Իր հին բույնը:
Դու փոքր ես դեռ,
Կմեծանաս,
Ասածներս
Կհասկանաս:
Երբ քո տանն ես
Ցուրտը տանում,
Տունն ավելի է
Քաղցրանում:

**Երվանդ Պետրոսյան**

## ԶԱՄԲՅՈՒՂԸ

Զամբյուղս վեր նետեցի,
Մնաց ծառի ճյուղին:
Մինչև կեսօր լացեցի,
Արցունքս ընկավ հողին:

Հողից մի ծիլ դուրս եկավ
Ու տարավ ինձ վերև.
Նայեցի իմ զամբյուղին՝
Մեջը լիքը արև:

Եվ արևի մեջ մի ծիտ
Երկու ձու էր ածել:
Զագերն ելան, հարցրին,
Թե ինչո՞ւ եմ լացել:

Ամաչեցի, որ ասեմ՝
Իմ զամբյուղն եմ ուզում:

- Գնանք, խաղանք,- ասացի,-
Ձե՛զ եմ սպասում:

**Խաչիկ Մանուկյան**

**ՔԱՄԻՆ**

Իսկ դուք գիտե՞ք, որ քամին
Նման է մեծ՝ թռչունի,
Մի թափանցիկ թռչուն է,
Որ ոչ մի տեղ բույն չունի:
Սվսվում է,
Շվվում է,
Վերուվարում,
Սուլում է,
Հե՜յ, կանչում է,
Շո՛ւտ արեք,
Ինձ համար էլ
Բույն ճարեք...
Հենց որ բակ եմ դուրս գալիս՝
Շուրջս թավալ է տալիս,
Փոշեկոլոլ թռչկոտում,
Ուղեկցում է մինչև տուն:
Թողած գիրք ու խաղալիք՝
Թռչո՛ւմ,
Հասնում է երկինք,
Քաշում ամպի փշերից,
Իջնում,
Պարո՛ւմ է նորից:
Թե մոռանաս
Ու հանկարծ
Պատուհանը թողնես բաց՝
Նա կխուժի իսկույն ներս,
Կփռի շուրջդ հանդես՝
Օդում պարող թերթերի,
Գրքերի ու տետրերի...
Այդ պատճառով՝
Նրան ես
Էլ չեմ թողնում,
Որ գա ներս:

**Խնկո Ապեր**
**ԲԿԼԻԿ-ՁԿՆԻԿ**

Ձկնիկ, լո՛ղ տուր, լո՛ղ արա,
Դրսի որսը թող արա,
Իջի՛ր ջրի հատակը,
Մինչև անցնի վտանգը:

Տե՛ս, փորձանք կա քո գլխին,
Մի լավ մտիկ երեխին,
Որդ է խփել իր կարթին.
Ձմոռանաս էդ որդին:

Ինձ չլսեց շեկլիկը,
Ինձ չլսեց բկլիկը,
Հո՛պ, կուլ տվեց նա որդը,
Կարթը մնաց կոկորդը:

**Յուրի Սահակյան**
**ԾՏԻ ԱՀԸ**

- Աչքդ լո՛յս, ծի՛տ,- ծառը ասաց,-
Քո երազած օրն էլ հասավ:

Ճուտիկներդ արդեն թռչում,
Բարձունքներից չեն երկնչում...

- Այո, նրանք էլ ահ չունեն:
Ահն իրենց ինձ են պահ տվել:

**Թեմա 3**

| **Դասանյութեր** | **Ուսումնական նյութեր** |
|---|---|
| **Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ** | |
| Հայկ Նահապետն ու փոքրիկ Արմենը | Տանկը թանգարանում<br>Հայկ Նահապետի արձանը/YT/<br>https://www.youtube.com/watch?v=JLu_4RNJvr0<br><br>Լուռ վկաները- Հայկ Նահապետ /YT/<br>https://www.youtube.com/watch?v=adn-zS4tn3Q<br><br>Հայկ և Բել / ARM//YT/ ՝ մուլտֆիլմ<br>https://www.youtube.com/watch?v=2Qut-ecjYmY |
| Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ | Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ- /նկարաշար<br>Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի մենամարտը/<br>/ ֆիլմից մի հատված//YT/<br>https://www.youtube.com/watch?v=Z4bnh8vMkmo&t=57s<br><br>«Սասնա ծռեր» համառոտ/YT/<br>https://www.youtube.com/watch?v=bHrThp5Qltg<br><br>Մուլտֆիլմ՝ Սասունցի Դավիթ/YT/<br>https://youtu.be/d-nZIUCnkyo<br><br>Սասունցի Դավիթ արձանը/YT/<br>https://www.youtube.com/watch?v=iHzvAcxI4O8&feature=share |
| Երևան | Փակ աչքերով<br>Կռվողներից ի՞նչ երամ<br>Երգ «Էրեբունի-Երևան»<br>Տեսանյութ՝ Հետաքրքիր տեղեկություններ Երևանի մասին<br><br>https://www.youtube.com/watch?v=-OR1Ms7pDgk |
| Գիրքը | Իմ այս գիրքը |

| | |
|---|---|
| | Գիրք<br>Պատմվածքն ընթերցող էր փնտրում<br>Արջն ու գիրքը |
| Հայոց Այբուբենը | Եկեք ներենք |
| Այսօրվա գիրքը | Գիրք նվիրելու օր/YT/<br>https://www.youtube.com/watch?v=0UuVH0EYvpo<br><br>Մանկական երգ՝ «Գրքի հեքիաթային աշխարհը»<br>https://www.youtube.com/watch?v=SfvDXw2d1yo<br><br>Երգ՝ «Հեքիաթների գիրքը» Մանուկների մոլորակ, խոսք և երաժշտություն՝ Զ. Սարիբեկյանի<br>Երգ՝ Գիրք /YT/ /Սիրուշո/<br>https://www.youtube.com/watch?v=E95TyQnuQpk |
| Իմ հայրենիք | Լավաշը<br>Երգեր՝ «Հայրենիք», Սարգիս Ավետիսյան<br>https://www.youtube.com/watch?v=JEgjsDhWY3U<br>Մուլտֆիլմ՝ Լավաշի լեգենդը<br>https://youtu.be/s8lYqn_xihA<br><br>Տեսաֆիլմ՝ Հայաստան աշխարհ։<br>https://www.youtube.com/watch?v=F64I-YwS310 |

**Ռաֆայել Հայրապետյան**
**ՏԱՆԿԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ**

Տանկը տարան թանգարանում
Մի հարմար տեղ կանգնեցրին։
Կային այտեղ զենքեր բազում՝
Թուր, գնդացիր, քարե կացին։

Տանկը նայեց մեկ ձախ, մեկ աջ,
Ո՞ւր եմ ընկել, այս ի՞նչ տեղ է,
Ինչպե՞ս գնամ ետ ու առաջ,
Օ՜, չափազանց տեղս նեղ է։

- Մի վրդովվիր, այ տանկ
  եղբայր,-
Հրացանը ասաց նրան,-
Գոհ եղիր, որ մեզ մոտ ընկար,
Այստեղ լավ է, քան ձուլարան։

Դու չե՞ս լսել, որ զենքերը
Ողջ աշխարհը պիտի հալեն
Ու մի-մի հատ ամեն մեկից
Թանգարանում պիտի պահեն։

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

**(Դյուցազներգություն)**

-Մեզ մի՛ կոտորիր, - ասաց ծերունին, քո թշնամին Մսրա Մելիքն է:

-Մելի՛ք, դու՛ս արի կռվենք,- ասաց Դավիթը: Մելիքը փչեց, որ Դավթին թոցնի:

Մելիքը Դավթին խաբեց, գցեց հորը: Վրան դրեց քառասուն ջաղացի քար:

Ձենով Օհանը ձայն տվեց Դավթին: Ձայնը, սարեր-ձորեր անցնելով, հասավ Դավթին:

Դավիթը դուրս թռավ հորի միջից: Մելիքը շատ վախեցավ:

Առաջինը Մելիքը խփեց Դավթին: Յոթ օր ու գիշեր երկինքը փոշի էր բռնել:

-Դավի՛թ, մի զարկդ ինձ բաշխի՛ր,- ասաց Մելիքի մայրը:

Դավիթը Թուր Կեծակիով խփեց հորի մեջ թաքնված Մելիքին, մեջտեղից կիսեց:

**Արմեն Շեկոյան**

**ՓԱԿ ԱՉՔԵՐՈՎ**

Կռունկների մի երամ
Թռավ, որ գա Երևան:
Ավագ կռունկը տարեց
Ներկա-բացակա արեց,
Ասաց. «Մեկը պակաս է,
Բայց չենք կարող սպասել.
Շատ երկար է մեր ճամփան,
Թող պատժվի ծույլն անբան»:
Կռունկների մի երամ
Թռավ հասավ Երևան:
Թռան հասան փոքր ու մեծ,
Տեսան՝ ընկերը իրենց՝
Այն բացակա կռունկը,
Դիմավորում է իրենց:
Ասին. «Կռո՛ւնկ հարևան,
Ինչպե՞ս մենակ, քեզուքեզ
Եկա՛ր հասար Երևան»:
Ասաց. «Կռունկ ընկերներ,
Դուք այդ ի՞նչ եք ինձ ասում,
Իմ սիրելի քաղաքն է,
Աչքերս փակ եմ հասնում»:

**Արմեն Շեկոյան**

## ԿՌՈՂՆԵՐԻՑ Ի՞ՆՉ ԵՐԱՄ

Երեք թռչուն միացան,
Երամ կազմել ցանկացան:

Մեկը էսպես խոսեց՝ ասաց.
- Ես կթռչեմ ձեր առջևից,
Իսկ երկուսդ՝ իմ հետևից:
Դամասկոսի տեղը գիտեմ.
Բարեհաջող կառաջնորդեմ:

Երկրորդն էսպես խոսեց՝ ասաց.
- Շատ էլ մեծ-մեծ դու մի խոսիր,
Գիտեմ տեղը Եգիպտոսի:
Ես կթռչեմ ձեր առջևից,
Իսկ երկուսդ՝ իմ հետևից:

Երրորդն ասաց. ի՞նչ մարդ եք,
Կռիվ արիք դուք արդեն:
Չէ, երևի ես մնամ,
Կռվողներից ի՞նչ երամ:

**Ռազմիկ Դավոյան**

## ԻՄ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Իմ այս գրքում
Կա ամեն ինչ,
Ամեն ինչից՝
Մի քիչ-մի քիչ:
Մի քիչ գարուն,
Մի քիչ ամառ,
Անսահման լույս,
Մի քիչ խավար:
Կան բալիկներ
Եվ անպատճառ՝
Մի քիչ խելոք
Ու մի քիչ չար:
Իմ գիրքն արթուն,
Աշխույժ այսպես,
Մեծ մի տուն է,
Ու մեջը՝ ես:
Մի քիչ աշուն,
Մի քիչ ձմեռ,
Մի քիչ նախշուն
Հովիտ ու լեռ:

**Վռամ Հովսեփյան**

## ԳԻՐՔ

Բացում եմ քո դեմ ես մի ողջ աշխարհ,
Տանում եմ քեզ հանդի ու ծովի գիրկը,
Քեզ համար դառնում լույսի ճանապարհ,
Քո ուղեկիցը այդ ե՛ս եմ՝ գիրքը:
Երկու թև ունեմ ու երկու երես.
Շատ բան կպատմեմ, եթե ինձ սիրես:
Սիրի՛ր ինձ, մանկի՛կ, թերթի՛ր ինձ վստահ,
Քո լավ ընկերը այդ ես եմ՝գիրքը:

**Հոբոս Ապեր**

## ԱՐՋՆ ՈՒ ԳԻՐՔԸ

Խիտ անտառում մի բրդոտ,
Տրորելով ծիլ ու խոտ,
Որոնում է պտուղ, միրգ,
Բայց գտնում է մի լավ գիրք։
Գիրքն առնում է, հոտոտում,
Շուռ է տալիս, փնթփնթում.
-Տեսնեմ՝ ինչ է, որ այդքան
Մարդիկ գովում են սրան...

Ծամում, ծամում, ծամծմում,
Բայց ոչ մի համ չի առնում։
-Տեսե՛ք՝ անհամ է որքան,
Արժե՞ գովել բա սրան.
Եթե լիներ մի լավ տանձ,
Ես կասեի՝ գա՜նձ է, գա՛նձ։
Իսկ սրանից ի՞նչ օգուտ,-
Փնթփնթում է արջը բութ։

**Յուրի Սահակյան**

## ԵԿԵՔ ՆԵՐԵՆՔ

Եկեք ներենք լացկաններին,
Ծույլիկներին չներենք։

Եկեք ներենք ծույլիկներին,
Վախկոտներին չներենք։

Եկեք ներենք վախկոտներին,
Սուտլիկներին չներենք։

Եկեք ներենք սուտլիկներին,
Բկլիկներին չներենք։

Եկեք ներենք բկլիկներին,
Ու բոլորին էլ ներենք,
Ներենք, ներենք ու սպասենք,
Սպասելով համբերենք...

Մեր ներել ու չներելով
Գուցե նրանք հասկանան,
Որ միմիայն ուղղվելով
Մեզնից պատիվ կստանան։

**Ռեյն Ռուադ**

## ՊԱՏՄՎԱԾՔՆ ԸՆԹԵՐՑՈՂ ԷՐ ՓՆՏՐՈՒՄ

Լինում է չի լինում՝ մի Պատմվածք է լինում։ Պատմվածքն ընթերցող է փնտրում, որն իրեն կարողանա կարդալ։ Գնում է անտառ։ Հանդիպում է Նապաստակին։

-Նապաստա՛կ, Նապաստա՛կ, դու կարդալ գիտե՞ս,- հարցնում է Պատմվածքը։

-Գիտե՛մ,- վախեցած պատասխանում է Նապաստակը։

-Որ գիտես, կարդա՛ ինձ,- խնդրում է պատմվածքը։

- Չէ՛, չեմ կարդա։ Ես այսօր լավ չեմ կարողանում կարդալ,- ասում է Նապաստակը։

Պատմվածքն առաջ է գնում։ Հանդիպում է Աղվեսին։

- Աղվե՛ս, Աղվե՛ս,- ասում է Պատմվածքը,- դու կարդալ գիտե՞ս։

- Իհարկե գիտեմ,- խորամանկ ժպտալով պատասխանում է Աղվեսը։

- Ի՜նչ կլինի, կարդա՛ ինձ,- խնդրում է Պատմվածքը։

- Չէ՛, չեմ կարդա։ Ակնոցս մոռացել եմ հավաբնում,- ասում է Աղվեսը։

Պատմվածքն առաջ է գնում։ Հանդիպում է երկրորդ դասարանցի Արային։ «Գուցե վերջապես բախտս բերի»,- մտածում է Պատմվածքն ու դիմում նրան.

- Դու կարդալ գիտե՞ս, փոքրի՛կ։

- Այո՛, գիտեմ,- պատասխանում է Արան։

- Կարդա՛ ինձ,- խնդրում է Պատմվածքը։

Եվ խելացի Արան առանց դժվարության կարդում է.

-Լինում է, չի լինում՝ մի Պատմվածք է լինում...

**Հայկ Խաչատրյան**

## ԼԱՎԱՇԸ

Մի հնդիկ իշխան երկար ճանապարհ էր կտրել և Հնդկաստանից եկել հասել հայոց հին մայրաքաղաք Դվին։ Նա զարմացած շրջում էր հայկական շուկայում և արհեստավորների տներում։ Դվինում նրան շատ բան դուր եկավ։ Բայց ամենից շատ հիացրեց լավաշը։ Նա չէր կարծում, թե աշխարհում կարող է այդքան բարակ ու այդքան համեղ հաց լինել։ Մի անգամ հնդիկը գնաց շուկայի հացթուխի մոտ ու ասաց.

- Բարեկա՛մ, ձեր այս լավաշը քանի՞ օրվա կյանք ունի։

- Ինչքան պահես, կմնա ,- պատասխանեց հացթուխը,- թարմությունը պահում է հինգ-վեց ամիս, նույնիսկ մինչև մեկ տարի։

- Հավատալս չի գալիս։

- Իզու՛ր։

- Լսի՛ր, բարեկա՛մ, վերցրու՛ այս փողը և հարյուր լավաշ տուր ինձ, ես պիտի փորձեմ քո ասածը։

Հնդիկը Դվինում մնաց վեց ամիս և, փորձելով իր գնած լավաշների համը, համոզվեց, որ հայկական լավաշը շատ երկար ժամանակ կարող է մնալ առանց փչանալու։ Նա ևս հինգ հարյուր հատ լավաշ գնեց ու հետը տարավ Հնդկաստան։

**Թեմա 4**

| Դասանյութեր | Ուսումնական նյութեր |
|---|---|
| **ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ** | |
| Չարաճճին | Լուսինը<br>Չարաճճի թզուկը<br>Չեմ կարողանում ուտել |
| Ե՛վ նման ենք, և՛ տարբեր | Այո-ն և Ոչ-ը<br>Զրույց հեռախոսով<br>Հարուստն ու հովիվը<br>Մուլտֆիլմ «Շնորհակալություն» /YT/<br>https://www.youtube.com/watch?v=uCYFEpoCeO0 |
| Ով աշխատի, նա կուտի | Տղան ու մրջյունը<br>Սագն ու աղվեսը<br>Մլավ կատուն<br>Մուլտի կատուն<br>Շուննու հավը |
| Ո՞ւմ ծառն է | Ցորենի հատիկ<br>Ծառի խնդրանքը<br>Թագավորն ու հողագործը |
| Կորած օրը | Ժամացույց<br>Ժամացույցը<br>Արդուկն ու մարդուկը<br>Գիրքը հրաշք է՝ քնած լինես, թե արթուն |

**Վաչագան Ա. Մարգսյան**

**ԼՈՒՍԻՆԸ**

Պայուսակը գցած ուսիս՝
Երեկոյան տուն եմ գալիս,
Մեկ էլ տեսնեմ՝ մի մեծ լուսին
Զրափոսում լող է տալիս։

«Ի՜նչ լավ եղավ», - մտածեցի,-
Տանը լուսին չունենք իսկի»։
Զրափոսից դուրս հանեցի,
Պայուսակիս մեջ դրեցի։

Հանկարծ մթնեց երկինք-գետին,
Մարդիկ ահով վեր նայեցին,
Տեսան՝ չկա այնտեղ լուսին,
Մնացել են աստղի հույսին։

Ես հասկացա՝ լավ բան չարի.
Բոլորինն է լույսը բարի,
Պայուսակս պտտեցի,
Դեպի երկինք շպրտեցի։

Նորից շողաց մութ երկնքում
Լույսը առատ ու բարեգութ,
Ուրախ-ուրախ տուն եմ գնում,
Եվ ստվերս հետ չի մնում։

**Վաչագան Ա. Սարգսյան**

## ՉԱՐԱՃՃԻ ԹԶՈՒԿԸ

Ծեր թզուկը անհանգիստ
Առավոտ վաղ արթնացավ,
Ընկերներին ասաց խիստ.
– Երեկ օրը լավ չանցավ,
Այսօր ահա կարթն առած
Ես իջնում եմ դեպի ցած՝
Գետը շատ չի վարարած։
Երբ հետ եկավ, շատ ուշ էր,
Դրսում արդեն մշուշ էր։

– Քանի՞ ձուկ ես դու բռնել,–
Հարց տվեցին թզուկին՝
Ձկնորս դարձած գժուկին։
– Չէ՛, չեմ ասի՝ քանի հատ են,
Թվով զույգ չեն, ոչ էլ կենտ,
Ապուր կուտեմ ես ձեզ հետ։
Քանի՞ ձուկ է բերել տուն
Ծեր թզուկը մեր գիտուն։

**Ղուկաս Սիրունյան**

## ԱՅՈ-Ն ԵՎ ՈՉ-Ը

Դալար հովտում բուրում էր Ծաղիկը: Նրա դիմաց հանդիպեցին երկու բլոճ: Նա, որ աջից էր եկել, ասաց՝ ես **այո**-ն եմ: Նա, որ ձախից էր եկել, ասաց՝ ես **ոչ**-ն եմ: Աջից եկածը նայեց Ծաղկին, կուրծքը ցցեց ու հոխորտանքով բղավեց՝ այո՜: Ձխից եկածը նույնպես նայեց Ծաղկին և ավելի բարձր ու ամբարտավան որոտաց՝ ոչ: Սրանք սկսեցին կռվշտել և իրար երեսի շպրտել՝ այո, ոչ, այո, ոչ... Հետո բլոճները բաժանվեցին: Այո-ն, որ աջից էր եկել, գնաց ձախ և դարձավ **ոչ**: Ոչ-ը, որ ձախից էր եկել, դարձավ **այո**:

Ծաղիկը նայեց նրանց հետևից՝ մեղմ տարուբերեց չքնաղ գլուխը և ծաղկերենով շշնջաց՝ ցանցառներ:

## ՉԵՄ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՈՒՏԵԼ

**Խնդուկ**

– Մամ, կարտոշիկ եմ ուզում,– ասում է Նարեն։

– Հա՛, հիմա կտամ,– պատասխանում է մայրիկը։

– Մամ, կարտոշիկ եմ ուզում,– քիչ անց նորից է ասում Նարեն։

– Հիմա՛, հիմա՛։

Մի տասը րոպե Նարեն ձայն չի հանում։ Հետո մոտենում է մայրիկին ու ասում.

– Մա՛մ, ես կարտոշիկ չեմ կարողանում ուտել։

– Ինչո՞ւ։

– Որովհետև չես տալիս։

**Լևոն Միրիջանյան**

## ԶՐՈՒՅՑ ՀԵՌԱԽՈՍՈՎ

Զանգ տվեցի մի օր մեր տուն,
Լսափողը վերցրեց կատուն։
-Ի՞նչ կա, Փիսի՛կ, ի՞նչ ես անում։
-Մուկ եմ տեսել ես մառանում,
Այնտեղ պիտի այնքան ճաամ,
Մինչև բռնեմ, հանգստանամ։
-Շա՛տ լավ, Փիսի՛կ, գործի՛դ գնա,
Շնիկն ո՞ւր է, թող մոտենա։
Շունը եկավ.
-Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ...
-Ի՞նչ կա, Շնի՛կ, ի՞նչ ես հաչում։
Քո տիրոջը չե՞ս ճանաչում։
-Մարդ կա բակում, մի՛ խանգարիր,
Հաչեմ, պրծնեմ, զանգահարի՛ր...
Ես, ինձ վրա խիստ բարկացած,
Լսափողը դրեցի ցած.
«Ի՞նչ եմ նրանց ես խանգարում,
Ո՞վ կա պարապ այս աշխարհում,
Թե՛ մարդ լինի, թե՛ կենդանի՝
Ամեն մեկը իր գործն ունի»։

## ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ

**Ժողովրդական զրույց**

Լինում է, չի լինում՝ մի հարուստ մարդ է լինում։ Ամեն ինչ ունենում է ու չի աշխատում։

Օրերից մի օր այդ հարուստը հիվանդանում է։ Ոչ մի բժիշկ չի կարողանում նրան բուժել։

Իսկ գյուղի հովիվը հարուստ չէր, բայց շատ առողջ էր։ Հարուստը հարցնում է հովվին.

- Հովի՛վ ախպեր, քո կերածն ի՞նչ է, որ այդքան առողջ ես։ Ես ինչ ասես ուտում եմ, բայց էլի հիվանդ եմ։

Հովիվն ասում է.

- Դու քո մի օրվա ուտելիքը վերցրու՛, գնանք սարերը։ Ես սարերում կպատասխանեմ քո հարցին։

Հարուստը շատ ու շատ ուտելիք է վերցնում, ու գնում սարերը։ Նստում են հաց ուտելու։ Հովիվը կաթ է կթում, հացը բրդում մեջը և ուտում։ Հարուստն էլ իր բերածից է ուտում։ Ուտելուց հետո հովիվը հարուստին ասում է.

- Քո ուտելիքը դի՛ր մի տեղ, գնանք մի քիչ ման գանք։

Հովիվն էլ կաթ է կթում, դնում սառը աղբյուրի մոտ։

Գնում են, երեք-չորս ժամ սարերում ման են գալիս։ Էս հարուստի շունչը կտրվում է, չի կարողանում քայլել։ Իսկ հովիվն իրեն շատ լավ է զգում։ Չորս ժամ հետո գալիս են աղբյուրի մոտ։ Տեսնում են՝ հովվի կաթը սեր է բռնել, սառը, լավ մնացել։ Իսկ հարուստի ուտելիքը շոգից թթվել, փչացել է։

Հովիվն ասում է.

- Քո հարցի պատասխանը քո կերածն է: Քո կերածը քո մեջ փչանում է ու քեզ հիվանդացնում, քանի որ ուտելուց հետո դու չես աշխատում: Աշխատանքն է մարդուն առողջ պահում: Եթե չես ուզում հիվանդանալ, պիտի չափավոր ուտես ու աշխատես:

**Լիպարիտ Սարգսյան**

## ՏՂԱՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

- Փոքրի՛կ մրջյուն, ժի՛ր մրջյուն,
Ի՞նչ ես վազում օրնիբուն,
Կանգ չես առնում մի վայրկյան,
Դու օր չունե՞ս հանգստյան:

Արտում ցորենն այսքան շատ,
Այգին լի դեղձ ու փշատ,
Որքան կուզես՝ գնա կե՛ր,
Ի՞նչ ես իրար խառնվել:

-Խելո՛ք տղա, լա՛վ տղա,
Գնա՛ անհոգ դու խաղա,
Չես հասկանում, փոքր ես դեռ,
Առջևում կա ցուրտ ձմեռ:

Տաք օրերը կգնան,
Այգում էլ բան չի մնա,
Այն ժամանակ որտեղի՞ց
Ես ուտելիք գտնեմ ինձ:

Ես իմ գործը լավ գիտեմ,
Իսկ դու հիշի՛ր այսքանը.
Հիմա պիտի աշխատեմ,
Որ վայելեմ ձմռանը:

**Վաչագան Ա. Սարգսյան**

## ՍԱԳՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Սագն ու Սագիկը Սագաշեն գյուղի ցորենը տարան աղալու:

– Ղա՛, ղա՛, աղա՛ Աղվես, մեր աղունը աղա՛, տո՛ւր մեզ,– ասաց Սագը:

– Աղա՛մ, աղա՛մ, սանամե՛ր Սագ, կաղա՛մ էլ, գյուղ էլ կհասցնեմ,– ասաց Աղվեսը:

– Գյուղ հասցնել պետք չէ:

– Ինչո՞ւ, մայրի՛կ,– հարցրեց Սագիկը: – Չէ՞ որ Աղվեսն ուզում է օգնել մեզ:

– Հենց Աղվեսն իմանա մեր գյուղի տեղը, այնտեղ մենք չենք կարողանա ապրել:

Իսկ դո՞ւ ինչ ես կարծում:

**Լյուդվիգ Դուրյան**

## ՄԼԱՎ ԿԱՏՈՒՆ

Ես մի կատու ունեմ
Անունը Մլավ,
Շատ է սիրում ուտել
Բրնձով փլավ:

Փողոցն անցնում է նա

Զգույշ, անվտանգ
Ու չի ընկնում երբեք
Մեքենայի տակ:
Նստում է վերելակ,
Իջնում մեր հարկում,
Մեր շենքում բոլորն են
Մլավին հարգում:

Խաղալիք իմ մուկը
Փամփլիկ է, չաղլիկ...
Չի գնում մոտ, գիտե
Մուկն է խաղալիք...

Երբ որ մլավում է,
Հասկանում եմ լավ,
Գիտեմ, որ ուզում է
Բրնձով փլավ:

**Երվանդ Պետրոսյան**
**ՄՈՒԼՏԻ ԿԱՏՈՒՆ**

Մուլտի կատուն
Թաքուն, թաքուն,
Մուլտից ելավ,
Եկավ մեր տուն:

Բայց մայրիկս
Ասաց՝ «Ո՛ւշ է,
Փոքրիկներին՝
Բարի գիշեր»:

Շա՞տ նեղացավ
Մուլտի կատուն,
- Գնամ,- ասաց, -
Ուրիշի տուն:

**Երվանդ Պետրոսյան**
**ՇՈՒՆՆ ՈՒ ՀԱՎԸ**

Շունը հաչեց՝ հա'ֆ, հա'ֆ, հա'ֆ...
Մոտիկ եկավ մի սև հավ:

Ասաց՝ «Ի՞նչ ես դու կանչում,
Ինձնից ի՞նչ ես պահանջում»:

Շունը լռեց, չկար ելք...
Ասաց՝ «Ա՜յ քեզ հավի խելք:
Կչկչալում մի հատ ես,
Բայց տառերը չգիտես:

Հեռո՛ւ գնա, անխելք հավ,
Ես հաչում եմ ինձ համար.
Ես ասում եմ ոչ թե **հավ**,
Այլ՝ լա'վ լսիր՝ **հա'ֆ... հա'ֆ... հա'ֆ**...»:

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ՑՈՐԵՆԻ ՀԱՏԻԿ**

Ցոլակը ցորենի
Մի հատիկ ցանեց,
Մի հասկ հայտնվեց,
ՈՒ հասկի վրա

Կար տասը հատիկ։
Ցոլակը ցորենի
Հատիկներ ցանեց,
Ցորենի սիրուն
Մի արտ հայտնվեց։

**Պատվական Խաչատրյան**

**ԾԱՌԻ ԽՆԴՐԱՆՔԸ**

Մի՛ կոտրատիր իմ ճյուղերը,
Որդիներն են նրանք իմ հեզ,
Ես այնպես եմ սիրում նրանց,
Ինչպես մայրդ սիրում է քեզ։
Տերև անգամ թե պոկես,
Սիրտս ցավից կմղկտա,
Թե որ դու ինձ չպահպանես,
Պատրաստի ծառ քեզ ո՞վ կտա։

**Սողոմոն Մկրտչյան**

**ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ**

Գարնանային արևոտ մի օր թագավորն իր շքախմբով որսի էր գնում։ Տեսավ, որ մի զառամյալ ծերունի ընկուզենի է տնկում առվի ափին։ Նրա կնճռապատ ճակատը ողողված էր քրտինքի կաթիլներով, որոնք գոհարների պես շողշողում էին արևի տակ։

Թագավորը սանձահարեց իր նժույգը, ողջունեց ծերունուն ու հարցրեց.

- Բարի՛ հայրիկ, ի՞նչն է քեզ ստիպում այդպես չարչարվել ու քրտինք թափել։ Չէ՞ որ ընկուզենին շատ ուշ է պտուղներ տալիս, և դու դժվար թե պտուղները վայելես։

- Տե՛ր արքա,- ասաց ծերունին,- եթե քո թագավոր պապը քեզ ժառանգություն չթողներ ոսկով ու ակնեղենով լի գանձարան, կալվածքներ, զենքեր ու զինանոցներ, դու ինչպե՞ս կարող էիր կառավարել քո ժողովրդին և դիմադրել թշնամիներին։ Հայրենի ծառն ու այգին էլ հողագործի գանձերն են։ Մեր պապերը ծառեր են տնկել, որոնց պտուղը մենք վայելում ենք, մենք էլ նույնը պիտի անենք մեր զավակների ու թոռների համար։

- Կեցցե՛ս, իմաստո՛ւն ծերուկ,- ասաց թագավորը և վեզիրին հրամայեց, որ գեղջուկին պարգևի տասը ոսկի։

Ծերունին ոսկիները վերցրեց, շնորհակալություն հայտնեց թագավորին և, դառնալով դեպի նոր ծառը, ինչ-որ բան մրմնջաց;

-Ի՞նչ ասացիր ծառին,- հարցրեց թագավորը։

- Գոհ եմ քեզնից, իմ փոքրի՛կ ընկուզենի, թո՛ղ քո պտուղն անսպառ լինի, կյանքդ՝ երկար,- պատասխանեց ծերունին։

- Ինձ օրհնելու փոխարեն ծա՞ռն ես օրհնում, ծերու՛կ,- ասաց թագավորը։

- Ախր սա ինձ բարիք տվեց ոչ թե հինգ կամ տասը տարի հետո, այլ հենց հիմա,- պատասխանեց ծերունին։

Այս խելոք խոսքի համար թագավորը հրամայեց, որ վեզիրը ծերունուն պարգևի ևս տասը ոսկի։

- Ահա՛ և լիովին ստացա իմ վարձը,- ասաց ծերունին,- Թող օրինյա՛լ լինի իմ փոքրիկ տունկը, որ մեկ օրում երկու անգամ առատ բերք պարգևեց ինձ։

**Վաչագան Ա. Սարգսյան**

## ԺԱՄԱՑՈՒՅՑ

Պարզ երևում է, որ բառը կազմված է **ժամ** և **ցույց** արմատներից, նշանակում է ժամ ցույց տվող։ Այսօր ժամացույց կա ամեն քայլափոխի։ Սլաքներով և առանց սլաքի, էլեկտրոնային և մեխանիկական, մեծ և փոքր, տարբեր ձևեր ունեցող։

Մեր այսօրվա ժամացույցների մեծ մասը մի հիսուն տարի առաջ չկար։ Իսկ ավելի վաղ ժամանակներում օգտագործում էին ավազի ժամացույցներ։ Մեր եկեղեցիների պատերին այսօր էլ կարող ենք տեսնել շատ հին ժամանակներում կերտված արևի ժամացույցներ։

Կային նույնիսկ ջրի ժամացույցներ։ Կարծիք կա, որ «Շատ ջրեր են հոսել» արտահայտությունը հենց այդպիսի ժամացույցների օգտագործումից է ծնվել։

## ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

**(Ըստ Տատյանա Կովալի)**

Շուտ արթնացե՛ք, դա՛շտ ու անտառ,
Արթնացե՛ք գայլ ու նապաստակ,
Ժամը վեցն է՝ բացվեց օրը,
Եվ ուրախ են շուրջբոլորը։

Սկյուռները ժամը յոթին
Միացել են, դարձել մի թիմ,
Ե՛վ թռչում են, և՛ ցատկոտում,
Մարզանք անում մաքուր օդում։

Մեծ սլաքը ժամացույցի
Մի մեծ պտույտ, տե՛ս, կատարեց,
Նապաստակը ժամը ութին
Նախաճաշիկ շուտ պատվիրեց։

Ժամացույցը տկտկում է,
Փայտփորիկը սանրվում է,
Ժամը իննին հյուրեր ունի,
Ամեն մեկը՝ հազար գույնի։

Մեծ սլաքը պտույտ արեց,
Ժամը տասը ազդարարեց,

Բադիկն առած ճուտիկներին
Լող է տալիս գետում մոտիկ։

Արեգակն է ձեռքով անում,
Դաշտ ու անտառ քնից հանում,
Որ չուշանաս ոչ մի բանից,
Արևի հետ ելիր տանից։

**Էդվարդ Միլիտոնյան**

**ԱՐԴՈՒԿՆ ՈՒ ՄԱՐԴՈՒԿԸ**

Կար աշխարհում մի մարդուկ,
Ուներ նա մի մեծ արդուկ։
Այդ արդուկով ամեն օր
Արդուկում էր սար ու ձոր։

Մտնում էր նա տները,
Արդուկում էր դռները։
Մտնում էր նա գյուղերը,
Արդուկում էր հողերը։

Չէր խնայում ձեռքն ընկած
Թռչուններին ու մարդկանց։
Արդուկում էր ամեն բան,
Որ հարթ լինի իր ճամփան։

**Գոռ Սարգսյան**

**ԳԻՐՔԸ ՀՐԱՇՔ Է՝ ՔՆԱԾ ԼԻՆԵՍ, ԹԵ ԱՐԹՈՒՆ**

**(դպրոցական շարադրություն)**

Ես ամեն օր կարդում էի «Փոքրիկ Իշխանը» գիրքը, որը դրված էր իմ գրասեղանին։ Սակայն մի օր, երբ ուզում էի վերցնել գիրքը, տեսա, որ գրասեղանիս վրայից անհետացել է։ Շատ փնտրեցի, սակայն չգտա։ Արդեն ուշ էր։ Պառկեցի քնելու ու երազումս...

Ես հայտնվեցի գրքերի տիեզերքում։ Այդ մութ ու լույսի մեջ կային շատ մոլորակներ՝ գրքերի անուններով։ Այնտեղ տեսա «Քաջարի զինվոր Շվեյկի արկածները» մոլորակը, որը, սակայն, դեռ կիսատ էր։ Պատճառն այն էր, որ ես նոր էի սկսել կարդալ։ Ես այդ մոլորակի վրա տեսա Շվեյկին։ Նա նույնպես կիսատ էր։ Շվեյկն ինձ ասաց.

-Գո՛ռ, շուտ կարդա՛ ինձ, վերջացրո՛ւ։ Ես արդեն հոգնել եմ այսպես կիսատ մնալուց։

Զարմանալին այն էր, որ ես հայտնվում էի այն մոլորակների վրա, որոնց անունով գրքերը կարդացել էի։ Դրանցից էին «Փոքրիկ շրջմոլիկը», «Վինի Թուխը և բոլորը, բոլորը», «Ոսկե բանալին, կամ Բուրատինոյի արկածները», «Չիպոլինոյի արկածները», «Գանձերի կղզին» և այլն։ Երբ հայտնվեցի «Փոքրիկ Իշխանը» մոլորակի վրա, տեսա Փոքրիկ Իշխանին և հարցրի.

- Փոքրի՛կ Իշխան, ինչո՞ւ ես չեմ կարողանում գնալ, օրինակ, «Կառլսոնը, որն ապրում էր տանիքում» մոլորակ:

Նա պատասխանեց.

- Դու չես կարողանում գնալ այնտեղ, որովհետև չես կարդացել այդ գիրքը: Դու կարող ես լինել միայն այն մոլորակների վրա, որոնց գրքերը կարդացել ես:

Հետո հարցրի.

- Իսկ ո՞ւր է իմ «Փոքրիկ Իշխանը» գիրքը: Այն միշտ իմ գրասեղանին էր, իսկ այժմ չկա:

Նա խորհրդավոր ժպտաց:

Այդ պահին լսեցի մայրիկիս ձայնը.

- Գո՛ռ, ուշանում ես դպրոցից, վե՛ր կաց:

Ես բացեցի աչքերս և անմիջապես նայեցի գրասեղանին: Գիրքն այնտեղ էր:

**Թեմա 5**

**Դասանյութեր** **Ուսումնական նյութեր**

| **Ինչպես է աշխատում աշխարհը** | |
|---|---|
| Ջուրը | Անձրևը<br>Ջուր կրել մաղով<br>Շաքարաջուր գետակը<br>Կռվարարները<br>Սոնան Սևանում<br>Մուլտֆիլմ (Ջրի շրջապտույտ)<br>https://www.youtube.com/watch?v=yVsridICshI |
| Արևն ու ծիածանը | Երեք անգամ ասա<br>Անձրև ու աղբեր<br>Ծոփն ու ծիածանը<br>Երգ՝ Ծիածան, Արևիկ<br>https://www.youtube.com/watch?v=bKqK7L-8TxI<br>Մուլտֆիլմ՝ Ծիածան<br>https://www.youtube.com/watch?v=44_hN98KWd0<br><br>Մուլտֆիլմ (Ինչպես է առաջանում ծիածանը)<br>https://www.youtube.com/watch?v=TPdJgLxYxzA |
| Սառույցի բյուրեղը, ամպի փաթիլն ու ծովի կաթիլը | Ամպիկը<br>Կաթիլը |
| Աստղադիտարան | Մուլտֆիլմ «Աստղագիտություն փոքրերի համար» / YT/<br>https://www.youtube.com/watch?v=O9kUsBDHoh8<br><br>Արև և լուսին / ժողովրդական ավանդություն<br>Երկնքի բոլոր աստղերը ճանաչում էին նրան: Առաջ. 1,2, 5 |

| | |
|---|---|
| Ինչո՞ւ դինոզավրերը գունավոր հեռուստացույց չունեին | Մուլտֆիլմ «Դինոզավրերի աշխարհում» /YT/ https://www.youtube.com/watch?v=o7X0lhn3WZ8<br>Մուլտֆիլմ (Հայկական գյուտեր)<br>Հովհաննես Ադամյան<br>https://www.youtube.com/watch?v=1krNyE6s1Lg |

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ԱՆՁՐԵՎԸ**

Մի երիտասարդ անձրև, ամպին նստած, իր համար երգելով, գնում էր երկնքով:

- Մի քիչ ջուր կտա՞ս,- խնդրեց գետակը:

Անձրևը զարմացավ, որ գետակը խոսել գիտի, ու ասաց.

- Ջուրն ի՞նչ ես անելու: Դու ջու՛ր ես , էլի՛:

- Ես ջուրը տալիս եմ արտերին ու այգիներին, մարդկանց ու կենդանիներին: Իսկ մսացածը տանում- հասցնում եմ ծով: Իսկ ծովը քեզ նորի՛ց ջուր է տալիս,- ասաց գետակը:

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ՋՈՒՐ ԿՐԵԼ ՄԱՂՈՎ**

Պարտքը ուրանալ,
Չեղյալ համարել,
Նույնն է, թե՝ ջրել,
Սառույցին գրել:

Ապարդյուն գործի,
Անօգուտ փորձի
Անունն են դրել՝
Մաղով ջուր կրել:

Մաղով ջուր կրել:

Խնդիրն այս պետք չէ
Սառույցին գրել
Կամ էլ շուտ ջրել.
Լուծումը գտի՛ր՝
Ինչպե՞ս կարող ես
Մաղով ջուր կրել:

## ՇԱՔԱՐԱՋՈՒՐ ԳԵՏԱԿԸ

**(ավանդություն)**

Մի հովիվ ունենում է Շուշան անունով մի աղջիկ, որի նմանը չկար աշխարհում: Երբ նա ծիծաղում էր, սարերում շուշաններ էին բացվում, երբ լաց էր լինում, արտասուքներն աղբյուրներ էին դառնում: Ասում են, թե այս գետակը Շուշանի արտասուքներից է գոյացել: Ջրի քաղցրահամ լինելու պատճառով գետակը կոչվել է Շաքարաջուր:

**Ի. Յակովլևա**

## ԿՌՎԱՐԱՐՆԵՐԸ

Երկնքում սահում էր մի մեծ սպիտակ ամպ: Մեկ էլ նրա դիմաց դուրս եկավ մի ուրիշ ամպ:

- Հե՛յ, ճամփա տուր,- բարկացավ երկրորդ ամպը:

- Հա՞, դե լա՛վ: Ես հիմա քեզ ցու՛յց կտամ:

Եվ առաջին ամպը քիչ էր մնում ընկներ, բայց մի կերպ իրեն պահեց և, զայրույթից սևանալով, գոռաց.

- Կռի՞վ ես ուզում անել, հիմա ես քեզ կռի՛վ ցույց կտամ:

Ու սևացա՛վ, մեծացա՛վ, թշերը ուռցրեց, հոնքերը կիտեց:

Առաջին ամպն էլ սևացավ, նա էլ հոնքերը կիտեց ու բարկացած վրա տվեց: Երկու հսկաները, գոռգոռալով, գլուխներն այնպե՛ս իրար խփեցին, որ աչքերից կայծեր դուրս թռան:

- Ա՛յ թե կայծակ է խփում: Ի՛նչ ուժեղ են որոտում ամպերը: Հիմա անձրև կգա,- վերև նայելով՝ ասացին մարդիկ:

Եվ իսկապես, կայծերից հետո կատաղած հաստլիկների աչքերից սկսեց արցունք հոսել: Մարդիկ գլխավերևներում բացեցին անձրևոցները: Իսկ հաստլիկ ամպերը լալիս էին ու լալիս:

Բայց քամին ամպերին այս ու այն կողմ քշեց: Եվ ամպերը այլևս առաջվա հաստլիկները չէին: Նրանք դարձել էին փոքրիկ սպիտակ ամպիկներ:

**Հովհաննես Գրիգորյան**

## ՍՈՆԱՆ ՍԵՎԱՆՈՒՄ

Գնանք Սևան, սևանանք,
Կապույտ ջրում լողանանք,
Տիկնիկիս հետ միասին
Պիտի պառկենք ավազին:
Կսարքենք տուն, փողոց, բակ,
Հետո տուն-տուն կխաղանք:
Բայց երբ հասանք մենք Սևան,
Հայրիկս ասաց.- Վա՜յ, ինչքան
Ջուրը իջել է նորից,
Ետ է քաշվել ափերից...

Ջրի վրա փայտ, մամուռ
Լող են տալիս ամենուր:
Ու ասում եմ.- Հայրիկ, ո՞ւր,
Ո՞ւր է այստեղ կապույտ ջուր,
Կանաչ է, ճիշտ եմ ասում,
Այս գույնն էլ շատ սազում...
Հայրիկս ասաց.- Դե, վերջ տուր,
Նայեց, նայեց ու տխուր
Ասաց.- Զգույշ կլինես
Հենց որ ափին կհասնես,
Ինչքան ջարդված շիշ կա, տես,
Ոտիկներդ չարյունես...

Չորս կողմում ծուխ, խորոված,
Ինչքան քեռի կար սոված,
Ինչքան փնթի մորաքույր,
Ամենուր թերթ, թուղթ ու մուր:
Էլ ի՞նչ տուն-տուն, էլ ի՞նչ բան,
Տպուր դարձանք Երևան:
Հայրիկս լուռ,
Ես էլ լո՜ւռ,
Իսկ տիկնիկս էլ, դե, գիտեք,
Միշտ էլ լուռ է,
Անվերջ լո՜ւռ...

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ԾՈՎՆ ՈՒ ԾԻԱԾԱՆԸ**

Ծովը ծխում է ծուփ-ծուփ,
Ծիածան է ծնվում ծովից,
Ծիծաղում է ծովը ծուփ-ծուփ,
Ծաղիկներ են ծնվում ծովից։

**Յուրի Սահակյան**

**ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ԱՍԱ**

Երեք անգամ ասա՝ գարուն:
Երեք անգամ ասա՝ գարուն,
Ու կարթնանան հազար ծաղիկ,
Հազար դայլայլ, հազար առու...

Երեք անգամ ասա՝ ամառ:
Երեք անգամ ասա՝ ամառ,
Ու կհասնեն մեկիկ-մեկիկ
Ամռան մրգերը քեզ համար...

Երեք անգամ ասա՝ աշուն:
Երեք անգամ ասա՝ աշուն,

Ու քո մտքում կխշխշան
Աշնան հազար շորեր նախշուն...

Երեք անգամ ասա՝ ձմեռ...
Չէ՛, չ՛', պետք չէ ասել ձմեռ,
Քանի դեռ մենք չենք պատրաստել
Ձմռան տաքուկ շորերը մեր...

**Մշակումը՝ Արուսյակ Սահակյանի**

**ԱՆՁՐԵՎ ՈՒ ԱՂԲԵՐ**

Անձրև՜, անձրև՜, ցա'ծ արի,
Բուսնի ցորեն ու գարի.
Ցորենը տանեմ ջաղացին տամ,
Ջաղացն ինձ ալյուր տա,
Ալյուրը տանեմ ջրին տամ,
Ջուրը ինձ խմոր տա,
Խմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրն ինձ գաթա տա,
Գաթան տանեմ հովվին տամ,
Հովիվն ինձ գառ տա,
Գառը տանեմ Աստծու գոտիկին տամ,
Աստծու գոտիկն ինձ աղբեր տա:

Աստծու գոտի՜կ,
Աստծու գոտի՜կ,
Տո՛ւր ինձ նախշուն աղբերիկ:
Աղբե՜ր, աղբերի՜կ նախշուն,
Գոտկի ծայրը աբրեշում.
Աղբե՜ր, աղբե՜ր, ջա՜ն աղբեր,
Իմ թև ու թիկունք, աղբեր:

**Դավիթ Հովհաննես**

**ԱՄՊԻԿԸ**

Ես ամպիկն եմ,
Ամպ-զամպիկն եմ,
Կախարդական մի գորգ եմ,
Հազար տեսակ գույներ ունեմ,
Ուր որ ուզեմ կթռչեմ,
Իսկ թե չուզեմ, կմնամ
Այստեղ,
Այնտեղ,
Ուր որ կամ,
Կուզեմ՝ անձրև կդառնամ,
Կուզեմ՝ կարկուտ, կուզեմ՝ ձյուն՝
Փաթիլ-փաթիլ ու սիրուն:
Բայց այս ամենն ի՞նչ է որ,
Դուք հնարքներն իմ բոլոր
Դեռ չգիտեք
Ա՜յ, տեսե՛ք,
Ձևեր կառնեմ զանազան,
Կդառնամ մարդ
Կամ գազան՝
Քիթը շատ մեծ, մազը ծուխ,
Գույնը՝ մեկ բաց, մեկ էլ թուխ
Մի անսովոր կենդանի,
Որ քսան ոտ, հինգ գլուխ,
Տասական աչք ու ականջ
Եվ նույնքան էլ պոչ ունի:
Բա՜, ամպիկն եմ,
Ամպ-զամպիկն եմ,
Կախարդական մի գորգ եմ,
Ազատ թռչում եմ չորս կողմ,
Ոչ մի բանից վախ չունեմ:
Իսկ իմ միակ թշնամին
Այն գիժ քամին է, քամին,
Որ հենց փչեց անհոգի
Ինձ իր թևի տակ կառնի,
Ուր որ ուզի, կտանի:

**Գոհար Փիլոյան**
**ԿԱԹԻԼԸ**

Գետակն աղմուկով, քչքչալով գլորվում էր՝ թռչկոտելով քարերի ու փոսերի վրայով, բայց սառնամանիքը կաշկանդեց նրան: Գետակը սառցակալեց:

Ագռավը նստեց գետափին, կտցահարեց ամուր սառույցը և ուզում էր թռչել, երբ քարացած Կաթիլը թոթովեց.

- Սպասի՛ր, Ագռա՛վ, ասա՛, ո՞վ կաշկանդեց ինձ, ինչո՞ւ չեմ կարողանում տեղիցս շարժվել:

- Քեզ սառնամանիքը կաշկանդեց և սառույց դարձրեց: Այդ պատճառով տեղիցդ շարժվել չես կարողանում: Բայց մի՛ տանջվիր, այդպես շատ չես մնա: Երկար թափառումներից հետո դու կիջնես, ա՛յ, այն բարձր սարի վրա:

- Ինչպե՞ս, մի՞թե ես կարող եմ հասնել այնտեղ,- զարմացավ Կաթիլը:

Բայց Ագռավն արդեն թռել-գնացել էր:

Կաթիլը գիշեր-ցերեկ մտածում էր. «Ես ոչ թև ունեմ, ոչ ոտք, ինչպե՞ս պետք է բարձրանամ սարը: Երևի Ագռավը սխալվեց»: Մտածեց, մտածեց ու քնեց:

Գարունը եկավ: Գետակը կենդանացավ ու հոսեց: Նրա հետ վազեց նաև Կաթիլը:

Հոսեցին ջրերը, հոսեցին ու թափվեցին ծովը:

- Ահա այսպես,- ուրախացավ Կաթիլը,- ես մեծ ծովին հասա:

Կաթիլն սկսեց ծովի ալիքների հետ բարձրանալ, իջնել, թռչել, խաղալ՝ չնկատելով, որ իրեն հսկում են Արևի ճառագայթները:

Եվ մի անգամ, երբ ալիքը Կաթիլին նետեց օդի մեջ, Արևի ճառագայթները բռնեցին նրան: Կաթիլն սկսեց բարձրանալ:

- Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,- ճչաց Կաթիլը:

Բայց հետո վախը փոխվեց զարմանքի, երբ տեսավ իր քույր կաթիլներին, որոնք ամպ էին դարձել: Կաթիլը վազեց իր քույրիկների մոտ, փարվեց նրանց:

Անցան օրեր, ամպը սև թուխպ դարձավ, կախվեց երկնքից, կախվեց ու վերածվեց փոքրիկ աստղիկների՝ ձնե փաթիլների: Փաթիլները, դանդաղ պտտվելով, սկսեցին իջնել ցած ու երգել տխուր, թախծալի մի երգ:

- Քույրիկնե՛ր,- ձայնեց կաթիլներից մեկը, որը փաթիլ էր դարձել,- հիշո՞ւմ եք, երբ մենք կաթիլ էինք, Ագռավն ասում էր, որ մի օր կիջնենք բարձր սարի վրա:

- Ի՛նչ խելոք է եղել Ագռավը,- զարմանում էին փաթիլները,- բայց մի՞թե մենք հավիտյան պետք է մնանք այս սարի վրա:

Գարունը եկավ, և փաթիլը նորից վերածվեց կաթիլի: Կաթիլը սարից ցած հոսեց, հանդիպեց ուրիշ կաթիլների և գարնանային ուրախ վտակ դարձած՝ վազեց ու թափվեց գետակը:

Հանկարծ Կաթիլի մոտ թռավ-եկավ ծանոթ Ագռավը:

- Ողջու՛յն, Կաթի՛լ,- ձայն տվեց նա,- եղա՞ր սարի վրա:

- Այո՛,- պատասխանեց Կաթիլը և ուզեց Ագռավին պատմել այն ամենի մասին, ինչ իր հետ պատահել էր, բայց չհասցրեց. ջրերը նրան քշեցին-տարան:

## ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ
### Ժողովրդական ավանդություն

Արևը շարունակ պտտվում էր։ Նա երկնքի երեսով գնում, գետնի տակով վերադառնում էր։ Մի անգամ նա իր եղբայր Լուսնին ասաց.

- Ես գիշերները վախենում եմ ման գալ, ցերեկն էլ ամաչում եմ. բոլորն ինձ են նայում։

Լուսինը մի բուռ գնդասեղ է տալիս Արևին և ասում.

- Վերցրո՛ւ։ Ով քեզ նայի՝ աչքերը ծակծկիր և համարձակ շրջիր, իսկ ես գիշերը կշրջեմ։

### Վաչագան Ա. Սարգսյան
## ԵՐԿՆՔԻ ԲՈԼՈՐ ԱՍՏՂԵՐԸ ՃԱՆԱՉՈՒՄ ԷԻՆ ՆՐԱՆ

Հին-հին օրերից մինչև այսօր հայ ժողովուրդը նշանավոր շատ մարդկանց է ծնել, որոնք զարմացրել ու հիացրել են ամբողջ աշխարհին։ Այդպիսի մարդկանցից մեկն էր Վիկտոր Համբարձումյանը։

Հռիփսիմեն՝ այդ մեծ հայի մայրը, ուժեղ բնավորություն ունեցող և միաժամանակ քնքուշ ու գթասիրտ կին էր։

Համազասպը՝ հայրը, եռանդուն մարդ էր, կրակի կտոր, գրող և թարգմանիչ։

Վիկտոր Համբարձումյանը դեռևս հինգ տարեկանում ազատ խոսում էր հայերեն և ռուսերեն, գրում էր ու կարդում։ Դրան մեծապես նպաստել էր հայրը։ Նրանք շատ երկար զբոսնում էին, և երեխան՝ Վիկտորը, կարող էր հարցնել ամեն ինչի մասին ու ստանալ պատասխաններ։ Շատ ու շատ գիտելիքներ հաղորդվում էին փոքրիկ Վիկտորին խաղի ձևով։ Հոր հետ երկխոսությունները մարզում էին նրա միտքը, բորբոքում երևակայությունը, մղում սխրանքների։

1913 թվականին ընդամենը 5 տարեկան Վիկտորը պետք է ընդունվեր գիմնազիա։ Տնօրենն սկսեց հարցուփորձը.

- Ո՞րն է ամենամեծ թիվը։

- Ամենամեծ թիվ չկա։ Ինչ թիվ էլ ասեք, ես նրան կգումարեմ 1 և կստանամ ավելի մեծ թիվ։

- Ինչի՞ վրա է հենված երկրագունդը և քանի՞ անգամ է մեծ արևից։

- Երկրագունդը ոչ մի բանի վրա էլ հիմված չէ։ Եվ արևն է երկրագնդից միլիոն անգամ մեծ։ Նա մի հեռու աստղ է և այդ պատճառով էլ փոքր է երևում։

Շա՛տ ու շատ այլ հարցերի էլ պատասխանեց ապագա գիտնականը, և բոլորը հիացան նրա խելքով, երևակայությամբ, տրամաբանությամբ։

Նա հետագայում հիացրեց ամբողջ աշխարհին, դարձավ աշխարհահռչակ աստղագետ, ապացուցեց, որ տիեզերքում տեղի են ունենում մեծ պայթյուններ և աստղերը սփռվում են տիեզերքում, որ աստղերը տիեզերքում ապրում են առանձին խմբերով, ինչպես կղզիներն օվկիանոսում։

Նա դեռևս 11 տարեկանում գրեց իր գիտական առաջին աշխատանքներն աստղերի մասին ու ապշեցրեց բոլորին։

Իսկ հետո նա պիտի դառնար միջազգային աստղագիտական միության նախագահը: Աշխարհի բոլոր աստղագետները պիտի ձգտեին հանդիպել նրա հետ, լսեին նրան, հիանային նրա հանճարեղ մտքերով:

Նա Արագած լեռան լանջերին պիտի կառուցեր Բյուրականի աստղադիտարանը և բացահայտեր աստղերի գաղտնիքները:

Մեծ աստղագետ Վիկտոր Համբարձումյանը մեծ հայ էր և մեծ հայրենասեր: Նա զարմացրեց ամբողջ աշխարհին, ցույց տվեց, որ հայ մարդը կարող է դառնալ աշխարհի ամենամեծ գիտնականներից մեկը:

**Թեմա 6**

**Դասանյութեր** **Ուսումնական նյութեր**

| **Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում** | |
|---|---|
| Էլմերը | Լքված կատուն<br>Շնիկի նոր անունը<br>Բզեզը և Ճպուռը |
| Թե ինչպես Էլմերը ջունգլիում կորցրեց իր անունը և նորից գտավ | Վ/ֆ Փղերը կարող են դիմակայել սովին/YT/<br>https://www.youtube.com/watch?v=or-itAngAIs<br>10 շատ հետաքրքիր փաստ փղերի մասին/YT/<br>https://www.youtube.com/watch?v=_B5J5UrDO9E |
| Էլմերի «Բարև, ես եմ» օրագիրը | Աուդիո հեքիաթ « Հեքիաթ փղիկի մասին» /YT/<br>https://www.youtube.com/watch?v=Ig3Jpu9BQ6g |
| Փոքրիկի մեծ զարմանքը | Լավ է<br>Լիներ մի կատու ու լիներ մի շուն<br>Փոքրիկի մեծ երազանքը |
| Իրավունքն է ծնում պարտականություն | Մուլտֆիլմ՝ UNICEF ARMENIA «Երեխան երեխա է՝ անկախ ամեն ինչից», «Երեխաների իրավունքներն ու պարտականությունները»<br>Մուլտֆիլմ՝ Քունը կարևոր է<br>https://www.youtube.com/watch?v=w0vB0T_7QUw<br>Մուլտֆիլմ՝ Մաքուր պահենք բնությունը<br>https://www.youtube.com/watch?v=YgluH8PMYVY&t=48s<br>Մուլտֆիլմ՝ Լվացվենք և առողջ սնվենք<br>https://www.youtube.com/watch?v=NXfOvqLCq-w<br>/YT/<br>Շատախոսը |
| Տունը | Ամենից լավ տունը |
| Մի բաց նամակ ամենքին | Անահիտն ու շնիկը<br>Անձնազոհություն<br>Դեղձանիկն ու կատուն<br>Կռունկը<br>Բժիշկ Այբոլիտը<br>Շնիկը |
| Նախադասության սաները | Նախադասության երգը |

| | |
|---|---|
| Դասագրքի հրաժեշտը | Իմ դասագրքերը<br>Գրագետ քամին<br>Կաղամբի դպրոցը |

**Յուրի Սահակյան**
**ԼՔՎԱԾ ԿԱՏՈՒՆ**

Մենք հայրիկից թաքուն,
Մենք հայրիկից թաքուն,
Տուն ենք բերել բակից
Մի զզզված կատու...

Նա սոված է անչափ,
Նա հյուծված է անչափ,
Վայ թե տերը նրա
Չար է եղել անչափ...

Մենք կպահենք նրան,
Կխնամենք նրան,
Համով բաներ կտանք,
Կհետևենք նրան:

Մենք կբուժենք նրա
Վերքերը բազմաթիվ,
Որ նա մարդկանց մասին
Վատ բան չմտածի...

**Հովհաննես Գրիգորյան**

**ՇՆԻԿԻ ՆՈՐ ԱՆՈՒՆԸ**

Խաղաղ քնած է իմ փոքրիկ շունը,
Խեղճը չգիտի, որ որոշել եմ
Փոխել անունը:
Բայց դե գաղտնի եմ պահում ես հիմա,
Թող նոր անունը ոչ ոք չիմանա:

Երբ որ արթնանա, շատ կզարմանա.
Ինքը գիշերով ո՞ւր է գնացել,
Որ իր փոխարեն ուրիշ շնիկ է
Հիմա արթնացել...

**Ղուկաս Սիրունյան**
**ԲԶԵԶԸ ԵՎ ՃՊՈՒՌԸ**

Վարպես բզեզի դուռը բացեց ճպուռը ու ասաց՝ ճճը՞ռռ: Վարպետ բզեզը սիրալիր առաջ եկավ, պատասխանեց՝ բը՞զզ: Ճպուռը կրկնեց իր խոսքը՝ ճը՞ռռ: Բզեզը դարձյալ ջերմագին ասաց՝ բը՞զզ:

Սրանք իրար բոլորովին չհասկացան: Ճպուռը հոգնած նստեց աթոռին: Աթոռը ասաց՝ ճը՞ռռ: - Վերջապես գտնվեց մեկը, որի հետ կարող եմ խոսել,- մտածեց հյուրը: Ու սկսվեց. ճպուռը՝ ճը՞ռռ, աթոռը՝ ճը՞ռռ: Բզեզն էլ դիմեց իր ամենօրյա խոսակցին՝ հոլին: Հոլը պտտեց: Պտտվելու հետ նա երկար բզզում էր: Հոլը միշտ նույն պատմությունն էր անում,

Որից բզեզը հուզվում, արտասվում էր:

Վերջապես ճպուռն ավարտեց իր զրույցն աթոռի հետ, վեր կացավ, բզեզին ասաց ճը՞ռռ ու գնաց: Բզեզը քաղաքավարի կերպով նրան ճանապարհեց՝ բը՞զզ: Այնուհետև վարպես բզեզը սկսեց մտածել՝ ինչպես անի, որ աթոռը անի բը՞զզ, ոչ թե՝ ճը՞ռռ:

**Երվանդ Պետրոսյան**
**ԼԱՎ Է...**

Ինչ լա՞վ է, որ սարդի նման
Ոտքեր չունեմ ես անհաշիվ,
Թե չէ՝ հայրս ինչպե՞ս կառներ
Ամեն ոտքիս մի-մի կոշիկ:

Բա քրո՞ջս, բա եղբո՞ր...
Մեր տանը մարդ, ախր, շատ կա,
Այն ժամանակ պետք կլիներ
Մեզ կոշիկի մի ֆաբրիկա:

Չէ՛, լա՛վ է, որ սարդի նման
Ոտքեր չունենք մենք անհաշիվ,
Թե չէ՝ տանը ո՞նց շարեինք
Մենք կողք-կողքի այդքան
կոշիկ:

**Երվանդ Պետրոսյան**
**ԼԻՆԵՐ ՄԻ ԿԱՏՈՒ ՈՒ ԼԻՆԵՐ ՄԻ ՇՈՒՆ**

Ի՜նչ ծառ է,
Ի՜նչ ծառ,
Ի՜նչ օր է
Պայծառ:

Մի կատու լիներ՝
Ծառն այս բարձրանար,
Մի շունիկ հաչեր
Ու չձանձրանար:

Հաչեր ու հաչեր,
Հաչեր ծառն ի վեր,
Մինչև որ հոգներ,
Պառկեր ու ննջեր:

Ու երբ նա ննջեր,
Կատուն ցած իջներ,

Քնած շունիկի
Վրայով թռչեր,
Խաղ աներ ուրախ,
Ժպտար աջ ու ձախ...

Լիներ այդ կատուն
Ու կողքին՝ մի շուն,
Կդառնար օրը
Ավելի նախշուն:

**Արմեն Շեկոյան**
**ՇԱՏԱԽՈՍԸ**

Շատախոսը
Շատ էր խոսում
Երկար-բարակ:
Շատախոսը
Խոսում էր շատ
Եվ շատ արագ:

Շատ էր խոսում
Շատախոսը,
Չէր նկատում
Ճանապարհի
Դարուփոսը:

Ու մի օր էլ
Շատախոսը
Շատ խոսեց ու
Ընկավ փոսը:

**Հովհաննես Թումանյան**

**ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ**

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
Մի հին խրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:
Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:
Թո՛ղ գնամ շրջեմ աշխարհից աշխարհ,
Ճամփորդեմ լավ-լավ տներ տեսնելու,
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,
Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու
Էս գորշ խրճիթից,
Էս հին խրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Ու գնաց, երկար թափառեց տղան,
Մեծ ու հոյակապ շատ տներ տեսավ,
Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան…
Ու հառաչելով ետ վերադարձավ
Էն գորշ խրճիթը,
Էն հին խրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին։
«Գտա՞ր, զավա՛կս», հարցրեց մայրը,
Ուրախ նայելով իր տղի վրա։
«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»։

**Վաչագան Ա. Սարգսյան**

**ՓՈՔՐԻԿԻ ՄԵԾ ԵՐԱԶԱՆՔԸ**

Ինձ թվում էր՝ շատ բան գիտեմ,
Սակայն պարզվեց՝ միամիտ եմ։
Զարմանալի բաներ կան դեռ,
Որ չգիտեմ, թեև յոթ եմ։
Այ, օրինակ, ասեմ՝ տեսեք։
Երեք բառը դառնում է եռ՝
Երեք անկյուն, բայց՝ եռանկյուն,
Ճիշտ չորս անկյուն, բայց՝ քառանկյուն։
Տեսնես էլ բան մսա՞ց կյանքում,
Որ մսում է ինձնից թաքուն։

**Սուրեն Վարդանյան**

## ԱՆԱՀԻՏՆ ՈՒ ՇՆԻԿԸ

Գիշերը ձյուն տեղաց։ Եվ երբ երեխաներն առավոտյան բակ իջան, նրանց ուրախությանը չափ չկար։ Իրար ձայնելով՝ սկսեցին ձնագնդի խաղալ, ձնեմարդ պատրաստել։ Երեխաների հետ ուրախանում ու թռչկոտում էր մի փոքրիկ շնիկ։

Երեկոյան, երբ գնում էին տուն, Անահիտը տեսավ, որ շնիկը մնալու է դրսում։

- Մայրի՛կ,- տուն մտնելով՝ ասաց Անահիտը,- գիտե՞ս՝ բակում ինչ պատահեց, քիչ էր մնում ընկնեի, լավ է՝ շնիկը ինձ պահեց։

- Իսկապե՞ս,- ժպտաց մայրիկը։

- Իսկապես, մայրի՛կ, հիմա էլ դրսում ցուրտ է։ Շնիկը կմրսի, չէ՞։

-Դու քնի՛ր, իմ բարի՛ աղջիկ։

Առավոտյան, երբ Անահիտն արթնացավ, կարծես երազում լիներ։ Միջանցքում շնիկն էր քնած, իսկ մայրիկն ավելի պայծառ էր ժպտում։

## ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ

**(ավանդություն)**

Մի մարդ ծովով ճամփորդելիս իր հետ վերցրել էր շանը։ Նավի վրա շունն անդադար վազվզում էր տիրոջ հետևից։ Մի անգամ էլ այնպես անզգույշ ցատկեց, որ ընկավ ծովը։

- Շու՛նս, շու՛նս, - աղաղակեց տերը և վազեց նավապետի մոտ։

- Խնդրում եմ նավը կանգնեցնել, շունս ծովն է ընկել, փրկեցե՛ք նրան։

- Շատ եմ ցավում, որ չեմ կարող ձեր ցանկությունը կատարել։ Նավը կենդանիների համար կանգնեցնել չի կարելի։

- Իսկ եթե մա՞րդ ընկներ ծովը, - հարցրեց շան տերը։

- Դա ուրիշ բան է,- պատասխանեց նավապետը։

Քիչ անց նավի վրա աղմուկ բարձրացավ։ «Մա՛րդ է ընկել ծովը, մա՛րդ է ընկել», - աղաղակում էին ամեն կողմից։ Այդ մարդը շան տերն էր, որ շորերով ջուրն էր նետվել՝ իր շանը փրկելու համար։ Իսկույն կանգնեցրին նավը, փրկեցին շանն էլ, տիրոջն էլ։

**Հոբոս-Ապեր**

## ԴԵՂՁԱՆԻԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Դեղձանիկը վանդակում
Լաց էր լինում, բողոքում,
Անիծում էր բախտը չար,
Դուրս ելնելու չկար ճար։

Ցածը նստած մի կատու
Դիմեց նրան. – Մե՞ղք ես դու,
Ե՛կ, վանդակից քեզ հանեմ,
Կերակրեմ, պաշտպանեմ։

Դեղձանիկը թրթռաց,
Դարձավ նրան ու ասաց.
- Լավ է լինեմ վանդակում,
Քան թե լինեմ քո ճանկում։

## ԿՌՈՒՆԿԸ

**(ավանդություն)**

Անտառապահ Սարգիսը որսորդություն շատ էր սիրում: Աշնան մի օր նա վերևից ինչ-որ աղմուկ լսեց. թռչունների երամ էր:

«Բադերն են», - մտածեց Սարգիսը, նշան բռնեց ու կրակեց:

Երամից մի թռչուն վայր ընկավ: Սարգիսը մոտեցավ նրան:

- Ձեռքս կոտրվե՛ր, այս ի՞նչ արեցի: Սա կռունկ է: Խե՜ղճ թռչուն: Ոչի՛նչ, սիրելի՛ս, ես քեզ կբուժեմ,- ասաց նա և վիրավոր թռչունին տարավ տուն:

Աղջկան՝ Նազենիկին, շատ դուր եկավ կռունկը: Նա խղճաց կռունկին և սկսեց խնամել:

Սկզբում կռունկը երկու ոտքի վրա կանգնել չէր կարողանում. վիրավոր ոտքը միշտ վեր էր պահում, երբեմն էլ հենվում էր պատին, որ չընկնի:

Նազենիկի հոգատար վերաբերմունքից կռունկը կամաց-կամաց ոտքի կանգնեց և ընտելացավ բոլորին:

Ձմեռն անցավ: Գարնանային մի օր, երբ Նազենիկը կերակրում էր կռունկին, վերևից՝ շատ մոտ տարածությունից, լսվեց կռունկների ձայնը: Կռունկը բարձրացրեց գլուխը, երկար նայեց նրանց հետևից: Հանկարծ ուժգին թափահարեց թևերը և բարձր ճիչ արձակելով՝ թռավ:

- Թռա՜վ, հայրի՛կ, թռա՜վ կռունկը,- բացականչեց Նազենիկը: Նա գոհ էր, որ կռունկը գտավ իր ընկերներին, բայց տխուր էր, որ բաժանվեց նրանից:

**Կոռնեյ Չուկովսկի**

## ԲԺԻՇԿ ԱՅԲՈԼԻՏԸ

Եղել է, չի եղել, մի բժիշկ է եղել: Նա շատ բարի մարդ էր: Նրա անունը Այբոլիտ էր:

Բժիշկն աշխարհում ամենից շատ գազաններ էր սիրում: Նրա սենյակում նապաստակներ էին ապրում: Պահարանում ապրում էին սկյուռը և ագռավը: Ոզնին ապրում էր բազմոցին, իսկ սպիտակ մկները՝ սնդուկում:

Բայց իր գազանների մեջ բժիշկ Այբոլիտն ամենից շատ սիրում էր Կիկա բադիկին, Ավվա շանը, փոքրիկ Խոզուկ-մոզուկին, Կարուդո թութակին և Բումբաբու բուին:

Բժիշկ Այբոլիտի մոտ աշխարհի բոլոր կողմերից գալիս էին հովիվներ, ձկնորսներ, փայտահատներ՝ իրենց կենդանիների հետ: Այբոլիտը նրանց դեղ էր տալիս, և բոլորն իսկույն առողջանում էին:

Օրերից մի օր բժշկի մոտ եկավ մի տխուր ձի և շշուկով ասաց.

- Լամա, ոնց, ֆիֆի, կուկու...

Բժիշկն իսկույն գլխի ընկավ, որ կենդանիների լեզվով դա նշանակում է. «Աչքերս ցավում են: Խնդրում եմ ինձ ակնոց տաք»:

Բժիշկը վաղուց սովորել էր կենդանիների լեզուն: Նա ձիուն ասաց.

- Կապուկի, կանուկի:

Կենդանիների լեզվով դա նշանակում է. «Խնդրում եմ նստեք»:

Բժիշկը նրան ակնոց տվեց։
- Չակա,- ասաց ձին ու վազեց փողոց։
Բժիշկ Այբոլիտը բուժում էր բոլորին։ Նրանից շուտով ակնոց ստացան վատ տեսողություն ունեցող բոլոր կենդանիները։
Անտառում՝ ծառերի վրա, շուտով այսպիսի հայտարարություն երևաց.
«Թռչունն՝ե՛ր, գազանն՝ե՛ր,
Բացված է բուժարան,
Բուժեցե՛ք ցավը ձեր
Դուք առանց ուշացման»։

**Հենրիկ Սևան**
**ՇՆԻԿԸ**

Զյուն էր գալիս, շնիկները
Խաղում էին դրսում,
Ուտում էին ձյան փաթիլներ,
Կարծես չէին մրսում։

Թռչկոտելիս սև շնիկը
Ոտքը խփեց քարին,
Բայց լաց չեղավ շների մոտ՝
Ամբողջ ճանապարհին։

Զմռան ցրտին նա կաղալով
Հազիվ բույնը հասավ
Ու լաց եղավ հոնգուր-հոնգուր,
Հենց որ մորը տեսավ։

**Սուրեն Մուրադյան**
**ԻՄ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ**

Ճի՛շտ է, գրքերը
Գիտելիքներ են
Ինձ տվել կյանքում,
Թևեր պարգևել
Իմ մտքին, հոգուն,
Բայց թե ինչպես եմ
Սիրել աշխատանք,
Սիրել բնություն,
Հողը, վար ու ցանք,
Սովորեցրել են
Գրքերից էլ լավ
Հորս կոշտացած
Հողոտ ձեռքերը,
Որոնք դարձել են
Իմ ամենալավ
Դասագրքերը։

Ճիշտ է, մանկության
Հեքիաթներով եմ
Բարությամբ սնվել,
Չարի դեմ կռվող
Հերոսներն են ինձ
Արիություն տվել,
Սակայն մայրական
Քնքշանքն ու սերը,
Օրհնանքով օծված
Բարի խոսքերը,
Ջերմությամբ լցված
Գորովանքները
Դարձել են կյանքում
Իմ առաջին սուրբ
Դասագրքերը։

**Հենրիկ Սևան**

## ԳՐԱԳԵՏ ՔԱՄԻՆ

Աշնան քամին բարձրացավ,
Մեր քաղաքով անց կացավ,
Շտապ թերթեց գիրքը բաց՝
Պատուհանի գիրկն ընկած:
- Վա՜յ, քամին էլ է կարդում,
Տեսե՛ք, էջերն է թերթում,-
Ասաց փոքրիկ Ալվարդը,
Ձեռքից գցեց ալ վարդը,-
Թե կարող ես, քամի ջան,
Գիրքը կարդա բարձրաձայն:

**Էդվարդ Միլիտոնյան**

## ԿԱՂԱՄԲԻ ԴՊՐՈՑԸ

Մի ճերմակ կաղամբ
Դասամիջոցին
Խանգարում է շատ
Ամբողջ դպրոցին:

Խփվում է սրան,
Խփվում է նրան,
Չի թողնում խաղան
Եվ ուրախանան:

Եվ իր թերթերի
Խաղ ցողիկներով
Թրջում է սրան,
Թրջում է նրան:

Իսկ երբ պատժում են՝
Չի կանգնում անկյուն,
Գլորվում է նա
Անկյունից անկյուն:

Եվ մի օր էլ մեր
Խեղճ ուսուցչուհին
Խիստ խոսեր ասաց
Այդ քաջ կաղամբին.

- Թե որ չես ուզում
- Ուսում, կրթություն,
- Մենք քեզ կուղարկենք՝
- Պատրաստեն թթու:

Այդպես էլ եղավ,
Այդպես էլ եղավ:

Մի քնկոտ կաղամբ,
Մի ճերմակ կաղամբ
Տակառում քնած
Թթվում է կամաց:

Վաչագան Ա Սարգսյան

## ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ

Ամփոփ միտք է արտահայտում,
Ունի բառեր ու նշաններ,
Մենք նրանով խոսք կառուցում,
Խոհերն ենք մեր իրար բացում։

Եթե գրել նրան ուզենք,
Մեծատառով պիտի սկսենք
Ու ավարտենք վերջակետով,
Որ սկսենք նորը հետո։



## ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐ

18(1, 5, 6) – դասագրքի 18-րդ էջի 1-ին, 5-րդ, 6-րդ առաջադրանքներ
25(Հ-1-6) - դասագրքի 25-րդ էջի 1-ից 6 հարցեր
36(Գ-3) – դասագրքի 36-րդ էջի գլխագրի 3-րդ կետը
15(ԱՊ) – դասագրքի 15-րդ էջի ամփոփման պատուհանիկ
35(ՄՊ) – դասագրքի 35-րդ էջի մուտքի պատուհանիկ
ԴՔԻՊ – դասից քաղած իմ պտուղները
ԲԱՄ – Բառը ափի մեջ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ.**-Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ», 2004, 232 էջ:
2. **Գյուլամիրյան Ջ.**,Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018
3. **Թերզյան Գայանե, Թորոսյան Կարինե, Խաչատրյան Հեղինե**-Խոսք և հաղորդակցություն աշխատանքային տետր 2-րդ դասարանի համար, Երևան, «Զանգակ», 2016, 43 էջ:
4. **Թերզյան Գայանե, Թորոսյան Կարինե, Խաչատրյան Հեղինե**- Խոսք և հաղորդակցություն աշխատանքային տետր 3-րդ դասարանի համար, Երևան, «Զանգակ», 2017, 69 էջ:
5. **Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ. և ուրիշներ**- Մանկավարժական առողջագիտությունը տարրական դպրոցում,-Գիտություն հրտ., Երևան, 2017, 172 էջ:
6. **Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ. և ուրիշներ**-Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, Երևան, 2018, 167 էջ:
7. **Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ. և ուրիշներ-** Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում, Երևան, 2020, 168 էջ:
8. **Խարազյան Ռ.**-Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2016:
9. Դասագրքի, ուսուցչի ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի որակական բնութագրիչների ժողովածու: Կազմող՝ Ս. Հակոբյան, Երևան, «Զանգակ» հրատ., 2021, 96 էջ:
10. **Խաչատրյան Հ.-** Մանկան հոգեբանության դասախոսությունների ժողովածու: Երևան 2022, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 316 էջ:
11. **Խաչատրյան Ս., Դավթյան Մ. -** Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Զանգակ», 2019, 144 էջ:
12. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ: Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան և ուրիշներ, Երևան, «Անտարես», 2006, 124 էջ:
13. **Սարգսյան Վ. Ա. և ուրիշներ-Մայրենի – 1:** [Դասագիրք հանրակրթական դպրոցների համար] /Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Ա. Թադևոսյան, նկ. Խ. Հակոբյան. - Ե.: Մակմիլան-Արմենիա. 2005-2023, 64 էջ:
14. **Սարգսյան Վ. Ա. և ուրիշներ-Մայրենի – 2:** [Դասագիրք հանրակրթական դպրոցների համար] /Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Ա. Թադևոսյան, նկ. Խ. Հակոբյան. - Ե.: Մակմիլան-Արմենիա. 2006-2023, 160 էջ:
15. **Սարգսյան Վ. Ա. և ուրիշներ-Մայրենի – 3:** [Դասագիրք հանրակրթական դպրոցների համար] /Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Ա. Թադևոսյան, նկ. Խ. Հակոբյան. - Ե.: Մակմիլան-Արմենիա. 2007-2023, 160 էջ:
16. **Սարգսյան Վ. Ա. - Խաղագիրք–2 մանուկների համար:** [Խաղերի, լեզվատրամաբանական զանազան առաջադրանքների ժողովածու] Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Ա. Թադևոսյան, նկ. Խ. Հակոբյան. - Ե.: Մակմիլան-Արմենիա, 2008. 40 էջ:

17. **Սարգսյան Վ. Ա. - Նկարազարդ դարձվածաբանական բառարան**: [Դարձվածներ, ուղիղ, փոխաբերական նկարազարդումներ] /խմբագիր՝ Հր. Վարդանյան.- Ե:. ՄՀՄ գրատուն, 2013, 184 էջ:
18. **Սարգսյան Վ. Ա. -Պատկերազարդ հայոց լեզու-2 :** [Հետաքրքրաշարժ հայերեն] /Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Արտ, Թադևոսյան.-Ե:. ՄՀՄ գրատուն, 2017, 78 էջ:
19. **Սարգսյան Վ. Ա., Հր. Վարդանյան - Նկարելուկները հայերենում:** [Լեզվատրամաբանական գլուխկոտրուկների՝ նկարելուկների ստեղծման, կազմման և լուծման ձեռնարկ]. - Ե.: Մակմիլան-Արմենիա, 2001, 128 էջ:
20. **Սարգսյան Վ. Ա. -Հայերենի դասագիրք-1:** [Մեթոդական գրականություն] /Խմբագիր՝ Հր. Վարդանյան. - Ե.: Մակմիլան-Արմենիա, 2006, 248 էջ:
21. **Սարգսյան Վ. Ա. - Զվարթ տրամաբանություն:** [Չափածո լեզվատրամաբանական առաջադրանքներ կրտսեր տարիքի դպրոցականների համար] / Խմբ. Գևորգ Վկա, Հրանտ Վարդանյան.– Ե.: 9-րդ հրաշալիք, 2011.– 64 էջ.
22. **Սարգսյան Վ. Ա. -Խաղ և ուսուցում:** [Մեթոդական գրականություն] / Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Ա. Թադևոսյան.- Ե.: Գայանե-Էդ Յուր, 2012, 288 էջ:
23. **Սարգսյան Վ. Ա. -Այբբենարան: Ուսուցչի ձեռնարկ:** [Մեթոդական գրականություն] / Խմբագիր՝ Հր. Վարդանյան;- Ե.: Մանմար, 2012, 236 էջ:
24. **Սարգսյան Վ. Ա. -Մեծ գիրք փոքրերի համար:** [Մենագրություն] / Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Ա. Թադևոսյան:- Ե.: Մանմար, 2016. 384 էջ:
25. **Սարգսյան Վ. Ա. -Ստեղծարար մտածողություն:** Կաղապարից դեպի գաղափար: [Մենագրություն] / Խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Ա. Թադևոսյան:- Ե.: Քվանտ, 2019. 448 էջ:
26. **Սարգսյան Վ. Ա. և ուրիշներ-Մայրենի – 2: Մեթոդական ձեռնարկ**: [Մեթոդական գրականություն] / Խմբագիր՝ Կ. Չիբուխչյան. - Ե.: 9-րդ հրաշալիք, 2007, 104 էջ:
27. **Սարգսյան Վ. Ա. - Զվարթուն: Բանաստեղծություններ մեծերի և փոքրերի համար:** [Բանաստեղծություններ] /խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Արտ. Թադևոսյան նկ. Խ. Հակոբյան.-Ե:.Արմավ,2021.-124 էջ.
28. **Սարգսյան Վ. Ա. - 180 այբբենական շուտասելուկ**: [Շուտասելուկներ] /խմբագիրներ՝ Հր. Վարդանյան, Արտ. Թադևոսյան .-Ե:.Արմավ,2022.-72 էջ.
29. **Վարդումյան Ս. Տ.-** Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար: Երևան, «Նոյյան տապան», 2005, 405 էջ:
30. **Քեռշկերյան Շ., Ավագյան Ա.** - Մենթորական աջակցության մեթոդաբանություն և գործիքակազմ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամ, Երևան, 2021, 72 էջ:
31. Жан Пиаже "Избранные психологические труды", Москва, 1994. 680 ст.
32. Bruner, J. (1996) The Culture of Education, Cambridge, MA: Harvard University Press. 224 pages.
33. Anderson, L. W., Krathwohl, D. R., Airasian, P. W., Cruikshank, K. A., Mayer, R. E.,

Pintrich, P. R., et al. (Eds.). A taxonomy for learning, teaching, and assessing: A revision of Bloom's taxonomy of educational objectives. New York: Longman. 2001
34. Benjamin S. Bloom. Taxonomy of Educational Objectives: Handbook 1: Cognitive domian, New York, 1956, -206
David R. Krathwohl, Benjamin S. Bloom, Bertram B. Masia.Taxonomy of Educational Objectives: Book 2:Affective Domain, New York, 1956
35. CAST (2018). Universal Design for Learning Guidelines version 2.2. Retrieved from udlguidelines.cast.org
36. Delors J. et al. (1996). Learning: The Treasure Within / UNESCO. http://www.unesco.org/new/en/education/themes/leading-the-international-agenda/rethinking-education/resources/
37. Jonson D., Jonson R. & Holubec E. «Cooperation in the Classroom», Boston, MA: Allen and Bacon).
38. Lai, R. E. and Viering, M., «Assessing 21st Century Sills: Integrating Research Findings»,
39. National Council on Measurement in Education, Pearson, Vancouver, 2012.
40. Heghine Khachatryan, Serob Khachatryan, Naira Movsisyan - Elements of Critical Thinking in the School Standards of "Chess" Subject. International Journal Scientia Paedagogica Experimentalis (SPE), 2021, LVIII, 1, 105-118, ISBN 0582-2351 spe@lotuswebtec.com
41. Mulder M. (2011). The concept of competence: Blessing or curse? / I. Torniainen, S. Mahlamäku-Kultanen, P. Nokelainen, P. Ilsley (eds). Innovations for Competence Management. Lahti: Lahti University of Applied Sciences. P. 11–24.
42. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021 թ., www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (18:05:2023թ.)
43. ՀՀ օրենքը հանրակրթության մասին. 2009 թ. հուլիսի 23, Երևան, ՀՕ-160-Ն https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 (18:05:2023 թ.)
44. Մայրենիի առարկայի ծրագիր
45. Չափանիշներ պետական հանրակրթական ուսումնական հաստատություննե-րի սովորողների գնահատման, 24 փետրվարի 2023 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760 (18:05:2023 թ.)
46. Գնահատումը
47. Վերաիմաստավորելով մեր համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության. ՅՈՒՆԵՍԿՕ, Կրթության հեռանկարների հարցերով միջազգային հանձնաժողովի զեկույց (18:05:2023 թ.)
48. Կլիմայի փոփոխություն. ինչպես իրականացնել ուսումնական նախագծային աշխատանքներ /Ձեռնարկ ուսուցիչների համար /Կ. Հարությունյան, Հ.Խաչա-տրյան և ուրիշներ, ՅՈՒՆԻՍԵՖ 2022, 48 էջ
49. Gold Standard PBL: Essential Project Design Elements. https://www.pblworks.org/blog/gold-standard-pbl-essential-project-design-elements

ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԵԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ 2

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Խմբագիրներ՝ Հասմիկ Մարգարյան
Հրանտ Վարդանյան
Նկարիչ՝ Խորեն Հակոբյան
Սրբագրիչներ՝ Նարինե Գևորգյան
Հրանտ Վարդանյան
Ձևանմուշը՝ Վաչագան Ա. Սարգսյանի